ԱՅՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԿԱՐԻՔԸ ՊՈՒՔ ՈՒՆԵՔ ԵՐԲԵՔ ՉՀԱՆՁՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

ՁՈՆ ԲԻՎԵՐ

«ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅԾԸ» ԳՐՔԻ ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՀԵՂԻՆԱԿ

ԳԻՐՔՆ ԻՐ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ» DVD ՀԱՎԱՔԱԾՈՒ

ԱՅՆ ՔՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ԿԱՐԻՔԸ ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ԵՐԲԵՔ ՉՅԱՆՁՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

«ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅՃԸ» ԳՐՔԻ ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՀԵՂԻՆԱԿ

«Անկոտրում հոգի», հայերեն, Ջոն Բիվեր © 2012 Մեսինջեր Ինտերնեյշնլ
www.MessengerInternational.org
Բնագիրը տպագրված է անգլերենով
Հայերենով կարելի է անվճար լրացուցիչ նյութեր ներբեռնել
www.CloudLibrary.org կայքէջից
Հեղինակի հետ կարող եք կապ հաստատել
JohnBevere@ymail.com էլ. հասցեով
Տպագրված է Հայաստանում

Relentless by John Bevere © 2012 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English
Additional resources in Armenian are available for free download at:
www.CloudLibrary.org
To contact the author: JohnBevere@ymail.com
Printed in Armenia

Այս գիրքը նվիրում եմ որդուս՝

Ալեք Բիվերին

Դու հաղթահարեցիր արգելքները և վեր բարձրացար
ամեն դժվարությունից:
Քո կյանքն արդեն Աստծո բարեհաճության
ու շնորհքի վկայություն է:
Ես այնքան հպարտ եմ քեզանով և սիրելու
եմ քեզ հավիտյան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ — 7

1 Անկոտրում հոգի — 11

2 Թագավորել կյանքում — 23

3 Զորության աղբյուրը — 39

4 Ինչպես Հիսուսը վարվեց — 51

5 Դառնալ ակնառու — 65

6 Տեսնել կամ մտնել — 89

7 Ո՞վ է կանգնած նեղության ետևում — 111

8 Զինի՛ր ինքդ քեզ — 133

9 Զորավոր շնորհքի մեջ — 153

10 Խոնարհության սպառազինությունը — 161

11 Գցի՛ր ծանրությունը — 179

12 Եղե՛ք սթափ և զգոն — 199

13 Հակառա՛կ կանգնեք սատանային — 215

14 Դիմադրության ամենաբարձր ձևը — 233

15 Անկոտրում աղոթք — 251

16 Վազի՛ր մրցանակի համար — 267

17 Մոտ լինել արքային — 285

18 Երբե՛ք չհանձնվես — 295

Հավելված Ա
Աղոթք Աստծո զավակ դառնալու համար — 307

Հավելված Բ
Ինչո՞ւ եմ ես օգտվում աստվածաշնչի բազմաթիվ թարգմանություններից — 309

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երբ նոր էի սկսել գրել այս գիրքը, մի ֆիլմ դիտեցի, որտեղ շատ վառ կերպով արտահայտված էր անկոտրում լինելու կարևորությունը: Ֆիլմը կոչվում էր *«Ուրվականն ու խավարը»*, որում նկարահանվել էին հանրաճանաչ կինոաստղեր Մայքլ Դուգլասն ու Վալ Քիլմերը: Ֆիլմի հիմքում ընկած էր 1800-ական թվականներին տեղի ունեցած իրական մի պատմություն:

Խոստումնալից ռազմական ինժեներ Փեթերսոնին (Վալ Քիլմեր) վարձում են, որպեսզի նա հսկի Ուգանդայի Ցավո գետի կամրջի վրայով կառուցվող երկաթգծի շինարարական աշխատանքները, ինչի շնորհիվ մեծանալու էր «Բրիտանական Արևելք-Աֆրիկա երկաթգիծ» ընկերության փոխադրումների ծավալը: Փեթերսոնի ժամանման պահին արդեն իսկ ծրագիրը ժամանակացույցից բավականին ետ էր մնացել:

Շուտով նա հասկանում է, թե ինչու էին բանվորները հետզհետե անհետանում: Նրանք կարծես հոդս էին ցնդում գիշերվա սավանի ներքո և այլևս չէին հայտնվում: Փեթերսոնը շուտով պարզում է, որ երկու մարդակեր առյուծներ են շրջում աշխատանքային ճամբարների շրջակայքում: Առյուծների կողմից իրականացվող սպանդը կանգնեցնելու համար Փեթերսոնը թակարդներ է պատրաստում և այլ մեթոդներ կիրառում, սակայն այդ մահաբեր զույգը, ասես կանխազգալով Փեթերսոնի քայլերը, մշտապես շրջանցում է թակարդները:

Երբ մահացածների թիվը հասնում է երեսունի, երկաթգծի ղեկավարությունը դիմում է ամերիկացի որսորդ Չարլզ Ռեմինգթոնի (Մայքլ Դուգլաս) օգնությանը: Չնայած այն հանգամանքին, որ վերջինս հայտնի էր որպես հմուտ որսորդ, առյուծները շարունակում են սպանդը: Ամեն գիշեր նրանք նորից ու նորից մահ են սփռում: Բանվորներն արդեն սկսում են հավատալ, որ գիշատիչները չար ոգիներ են, որոնց անհնար է կանգնեցնել: Երբ մահացածների թիվը հասնում է հարյուր երեսունի, ճամբարի աշխատավորների մեջ խուճապի և վախի համաճարակ է սկսվում, իսկ Փեթերսոնն ու Ռեմինգթոնը, հայտնվելով անօգնական վի-

ճակում, տեսնում են, թե ինչպես է ողջ աշխատուժը փախուստի դիմում՝ իրենց նետելով Ցավո գետի վրայով անցնող գնացքի մեջ:

Հենց այս վճռորոշ պահն էր, որ ցնցեց ինձ: Բաժանարար գծերն այստեղ հստակորեն դրսևորվեցին: Մի կողմից տեսնում ես վախկոտ հսկիչի, ով սնուցում է բանվորներին վախով՝ դրդելով նրանց թողնել այն գործը, որը համաձայնել էին ավարտել, մյուս կողմից՝ երեք մարդու՝ Ռեմինգթոնին, Փեթերսոնին և Փեթերսոնի օգնականին, որոնց մտքով անգամ չի անցնում հրաժարվել պարտականությունները կատարելուց. նրանք թույլ չեն տալիս անգամ, որ վախը իրենց պարտության մատնի:

Միայն այս երեքն են մնում, որպեսզի երես առ երես դուրս գան այդ խորամանկ գազանների դեմ: Նրանք փորձում են սպանել առյուծներին, բայց բազմիցս ձախողվում են: Նրանց առջև դրված էր մի խնդիր, որը սարսափազդու էր և չափազանց վտանգավոր: Այն կարող էր նույնիսկ զրկել նրանց կյանքից, բայց երեքն էլ հաստատուն կերպով որոշել են վերջ տալ գիշատիչների դիմադրությանը և ավարտին հասցնել կամրջի կառուցումը: Ասեմ նաև, որ Նրանք զինված են լավագույն զենքերով: Ռեմինգթոնն ու Փեթերսոնը համոզված են, որ վերջ ի վերջո կհաղթեն, եթե վարվեն իմաստությամբ և միշտ լինեն մարտական ու վճռորոշ. կարճ ասած՝ նրանք *հրաժարվում են հանձնվել*:

Ժամանակի սղության և գրքի էջերի խնայողության պատճառով չեմ կարող շատ այլ մանրամասների անդրադառնալ, բայց սա պետք է իմանաք. մարդակեր առյուծներն ի վերջո սպանվում են, սակայն այդ հաղթանակը տրվում է շատ թանկ գնով:

Այս ամենից հետո բանվորները վերադառնում են, և այլևս իրենց ծրագրի ինժեներ Փեթերսոնին ամբողջովին այլ կերպ էին նայում. նա մեկն էր, ով երես առ երես մարտնչել էր մահվան դեմ և չէր նահանջել: Նրանք այնպիսի մեծ ակնածանքով են լցվում Փեթերսոնի հանդեպ, որ սկսում են միաբանվել և ավարտել անհավանական թվացող աշխատանքը: Արդյունքում կամրջի կառուցումն ավարտվում է ժամանակին:

Որպես Աստծո դեսպաններ՝ մենք նույնպես կամուրջներ ենք կառուցում: Սակայն մեր կառուցածները չեն հատում գետերը. դրանք կամրջում են երկնքի ու երկրի միջև առաջացած անդունդը: Եվ մենք էլ նույն կերպով շատ դիմադրությունների ենք հանդիպում. Սուրբ գիրքը մեր

ոսոխ թշնամուն նմանեցնում է առյուծի, որը ցանկանում է մեզ կուլ տալ: Սակայն մեր թշնամին զինված չէ Ցավոյի գետի առյուծների նման, բայց մենք սպառազինված ենք: Նա զինաթափված է, իսկ մենք զինված ենք ամենազորեղ սպառազինությամբ, որ երբևէ հասու է մարդկությանը:

Մեր ճանապարհին դեռ շատ պատերազմներ պիտի հաղթենք և ամրություններ հաղթահարենք: Դրանք հաճախ խորը արմատներ են գցում մեր մտքում, գործելակերպում և պատկերացումներում: Այս ամենը թշնամու ձեռագիրն է. նա է ներշնչում այս աշխարհի մարդկանց: Մեզ դիմադրողը ահարկու է, բայց մենք ավելի զորավոր ենք Քրիստոսում:

Այսպիսով՝ մեր առջև կարևոր երկընտրանք է դրված. *լինել սարսափած ծառայողներ, ովքեր փախուստի են դիմում իրենց կյանքերը փրկելու համար, թե լինել խիզախ և անկոտրում, երբ հետամուտ ենք երկնային առաջադրանքի կատարմանը*: Ես համոզված եմ, որ այս ուղերձի ճշմարտություններն ունեն հզոր ներուժ քո ներսում անկոտրում կեցվածք ձևավորելու համար: Այս ճշմարտությունները ոչ միայն քեզ կզորացնեն, որպեսզի ամուր կանգնես, այլ նաև կզինեն քեզ հաղթական և դրական փոփոխություններ բերող զորությամբ:

Շատ կարևոր է, որ դու ամրանաս այս գիտության մեջ, քանի որ արդեն բավականին տևական ժամանակ է, ինչ Աստծո մարդիկ գերության են գնում և բնաջինջ լինում հենց գիտության պակասից (տե՛ս Եսայի 5.13, Ովսէ 4.6): Ճիշտ գիտությունը ձևավորում է հավատքի ամուր հիմք, իսկ հավատքով մենք փոփոխություններ ենք կերտում այս կորած և խավար աշխարհում:

Դու ստեղծված ես, որ փոփոխություն բերես քո ազդեցության տիրույթում: Ե՛կ աղոթքով միասնաբար ընդունենք մարտահրավերը՝ մեր մեջ բացահայտելով այն անկոտրում զորությունը, որը թույլ չի տա մեզ հանձնվել:

1

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

«Ավարտելն ավելի լավ է, քան սկսելը...»:

Ժողովող 7.8, (NLT)

Կարծում եմ՝ կհամաձայնես ինձ հետ, որ ավելի կարևոր է այն, *թե ինչպես ենք մենք ավարտում, քան այն, թե ինչպես ենք սկսում*: Քրիստոնեական կյանքում վերջնական ավարտն այն է, երբ մեր Տերը կասի մեզ. «Կեցցե՛ս, Իմ բարի՛ ու հավատարի՛մ ծառա»:

Իսկ ի՞նչ կպահանջվի քեզանից ու ինձանից՝ այս հիասքանչ խոսքերը Նրանից լսելու համար, Ով մեզ համար Միակն է ու ամենակարևորը:

Կյանքը լավ ավարտելու համար մեզանից պահանջվում է, որ այն լավ ապրենք: Սա, իհարկե, իր մեջ ներառում է «երբեք չհանձնվելու» ձևն իմանալը, այսինքն՝ *անկոտրում* հոգի ունենալ:

Ինչպե՞ս ենք մենք այն ձեռք բերում: Ինչո՞ւ է այն այդքան կարևոր:

Անկեղծ ասած՝ ես շատ մտահոգ եմ այն բանի համար, որ շատուշատ հավատացյալներ չեն կարող լավ ավարտել: Մի անգամ Աստված ինձ սթափեցնող մի տեսիլք ցույց տվեց, ինչը վերաբերում է այս գրքի ընտրված թեմային[1]:

> Մի մարդ նավակը թիավարում էր գետի ուժգին հոսանքին հակառակ: Նա շատ ջանք էր գործադրում ջրի հոսանքին հակառակ առաջ գնալու համար. ոչ դյուրին մի առաջադրանք, բայց՝ իրագործելի:

---

1. Ես հակիրճ կիսվել եմ այս տեսիլքով նախկին գրքում, որը կոչվում է՝ «Կրակոտ սիրտ» (Նեշվիլ, Թոմաս Նելսոն, 1999): Սակայն հիմա հրատապ եմ համարում վերարտադրել այս պատմությունը և անդրադառնալ դրան ավելի մանրամասն:

Մյուս նավակները, որոնք ավելի մեծ էին ու շքեղ, և որոնց մեջ շատ մարդիկ կային, անցնում էին նրա կողքով՝ լողալով ջրի հոսանքի ուղղությամբ դեպի վար: Այս նավակներում գտնվող մարդիկ անհոգության մեջ հռհռում էին և խմում: Ժամանակ առ ժամանակ նրանք հայացք էին նետում ջրի հոսանքի հետ կռվող մարդու վրա և ծաղրում նրան: Վերջինս ստիպված էր պայքարել առաջընթացի յուրաքանչյուր սանտիմետրի համար, մինչդեռ անհոգության մեջ եղողները բացարձակապես ոչինչ չէին անում:

Որոշ ժամանակ անց այս մարդը հոգնեց հոսանքին հակառակ թիավարելուց: Հոգնած ու հիասթափված՝ նա վայր դրեց թիերը: Մի կարճատև պահ նրա նավակը շարունակեց շարժվել հոսանքն ի վեր, բայց շուտով կանգնեց: Ապա տխուր և շատ ահավոր բան պատահեց. նավակը, ուղղված լինելով դեպի վեր, սկսեց լողալ հոսանքին համընթաց դեպի վար:

Շուտով նա մեկ այլ նավակ նկատեց: Այս մեկը տարբերվում էր մյուսներից. իր նավակի նման այս մեկն էլ էր ուղղված դեպի վեր, մինչդեռ լողում էր հոսանքին համընթաց դեպի վար: Այս նավակը նույնպես փոխադրում էր անհոգության մեջ զրուցող և հռհռացող մարդկանց: Ակնհայտ էր, որ նավավարն ի սկզբանե որոշել էր լողալ հոսանքին հակառակ, սակայն մտափոխվել էր և միացել նավակի մարդկանց: Ի տարբերություն մյուս նավակների, որոնց ուղղությունն ու ընթացքն ուղղված էր վար, այս նավակն ուղղված էր դեպի վեր, սակայն, դժբախտաբար, այն նույնպես հոսում էր հոսանքին համընթաց դեպի վար:

Ո՞րն է այս տեսիլքի մեկնությունը: Գետը աշխարհն է, իսկ նավակը՝ մեր մարդկային մարմինը, որը հնարավորություն է տալիս մեզ ապրել և գործել այս աշխարհում: Նավակում գտնվող մարդը հավատացյալն է, իսկ նրա թիերը խորհրդանշում են Աստծո անսահման շնորհքը: Մյուս ուրախ նավակներն այն մարդիկ են, ովքեր միաբանվել են ունայն նպատակի համար, իսկ գետի հոսանքը ներկայացնում է այս աշխարհի ընթացքը, որը չարի իշխանության տակ է:

Շնորհքի թիերի միջոցով մարդը ունակություն է ձեռք բերում դիմադրել հոսանքին, և դրան հակառակ, վեր ընթանալ իր կյանքում՝ Աստծո արքայությունը կառուցելու համար: Նրա ֆիզիկական ուժը խորհրդանշում է հավատքը: Ցավոք սրտի, այդ ուժը թուլանում է և սկսում է հոգնել պայքարից: Նա այլևս չի կարծում, որ ունի այն ամենն ինչ անհրաժեշտ է, մինչդեռ իրականում նա ունի անհրաժեշտ ամեն ինչ: Հետևաբար վերջին հաշվով նա շարքից դուրս է գալիս և հանձնվում:

Երբ մարդը դադարում է թիավարել, նավակը մի փոքր ժամանակ դեռ

իներցիայով շարժվում է առաջ՝ հոսանքին հակառակ, և սա հենց այն պահն է, որ խաբուսիկ է: Նա դեռևս իր կյանքում տեսնում է որոշ պտուղներ, սակայն այն ուժը, որն արտադրում է դրանք, այլևս նրան առաջ չի մղում: Նա սխալմամբ կարծում է, թե կարող է անհոգության մեջ ապրել՝ չլինելով մարտական ու արթուն, և շարունակել ունենալ հաջողակ քրիստոնեական կյանք:

Ի վերջո, նավակը կանգնում է, ապա սկսում է ետ ընթանալ հոսանքն ի վար՝ սկզբում դանդաղ, իսկ հետո նույն արագությամբ՝ ինչ ջրի հոսանքը:

Այս տեսիլքում ամենակարևորը հետևյալն է. նավակը հոսանքի ուղղությամբ դեպի վար է լողում, չնայած այն բանին, որ նավակի առաջամասն ուղղված է հակառակ կողմը՝ դեպի վեր: Այսինքն՝ այժմ նա քրիստոնյայի կերպարանք ունի՝ գիտի ինչպես շփվել, գիտի երգերը և արքայության վարքագծի կանոնները, բայց իրականում նա կերպարանվում է այս աշխարհի կերպարանքով (տե՛ս Ա Հովհ. 2.15-17):

Վերջ ի վերջո, մեր գլխավոր դերակատարը նկատում է մեկ այլ նավակ՝ իր նման «հավատացյալների» մի խմբի: Վերջիններս իրենց համարում են եկեղեցու մաս, քանի որ նրանց հայացքներն էլ են ուղղված դեպի վեր: Նրանք նույնպես գիտեն երգերը, շփման և վարվելակերպի կանոնները: Մինչդեռ նրանք անհոգության մեջ են, քանի որ ոտք են դրել անպտուղ «քրիստոնեական» կյանքի մեջ և չարի իշխանության տակ են, որն էլ կառավարում է հոսանքը:

Այս «քրիստոնեակերպ նավակն» այլևս անհավատների կողմից չի ենթարկվում հալածանքների և ծաղրի: Նրանք ընդունված են, երբեմն էլ նույնիսկ աշխարհի հզորների կողմից: Նրանք այլևս հետևելու համար ջանք չեն գործադրում, ինչպես Պողոս առաքյալն է քաջալերում վարվել ամեն մի քրիստոնյայի. «[Ես] հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում» (Փիլիպ. 3.14): Իրականում այս նահանջած հավատացյալները շատ թույլ են դիմադրում կամ ընդհանրապես չեն դիմադրում աշխարհի ճանապարհներին:

Տե՛ս, թե ինչ է գրում Հովհաննես առաքյալը.

> «Իրականում այս աշխարհում ձեր արածները՝ ձեր ճանապարհները ցանկանալը, ամեն ինչ ձեզ համար ցանկանալը, կարևոր լինելու ցանկությունը, ոչ մի առնչություն չունեն Հոր հետ: Դրանք միայն բաժանում են ձեզ Նրանից: Աշխարհը և նրա ցանկություններն անցնում են, բայց նա, ով

> Աստծո ցանկությունն է կատարում, հաստատվում է հավիտյան» (Ա Հովհաննես 2.16,17, MSG):

Իմ պատմած տեսիլքը պատկերում է երեք տիպի մարդկանց՝ *հավատացյալի, անհավատի* և *խաբվածի*:

- *Անհավատը* պարզապես ընթանում է հոսանքի ուղղությամբ, այսինքն՝ իր ցանկությունների ետևից:
- *Հավատացյալը* ջանք է անում հավատքի պատերազմում արքայության առաջընթացին հասնելու համար:
- *Խաբվածը* թաքցնում է իր ցանկությունները «քրիստոնյայի կերպարանքի» և Գրվածքը խեղաթյուրելու միջոցով:

Ես գիտեմ՝ այս տեսիլքը ներկայացնում է մերօրյա հավատքի մարդկանց մտահոգիչ վիճակը, բայց այն ստիպում է մեզանից յուրաքանչյուրին՝ ինքներս մեզ հարց տալ. «Սրանցից ո՞րն եմ ես»: Ի վերջո, Աստծո Խոսքը պատվիրում է մեզ.

> «Քննե՛ք ինքներդ ձեզ՝ համոզվելու համար, որ հաստատուն եք հավատքի մեջ: Մի՛ ապրեք այնպես, ասես ամեն ինչ թույլատրված է ձեզ: Կանոնավոր կերպով ստուգեք ձեր անձերը: Դուք պետք է ձեր սեփական վկայությունն ունենաք, որ Քրիստոսը ձեր մեջ է, և ոչ թե ուղղակի հիմնվեք այլոց ասածների վրա: Քննելով պարզե՛ք դա. եթե ձախողեք քննությունը, ապա ինչ-որ բան ձեռնարկեք այդ ուղղությամբ» (Բ Կորնթացիների 13.5, MSG):

Այս տեսիլքը տեսնելուց և մեկնությունը հասկանալուց հետո ես դրանում ավելի համոզվեցի՝ կարդալով եբրայեցի քրիստոնյաներին ուղղված հետևյալ խոսքերը.

> «Բարձրացրե՛ք ձեր հոգնած ձեռքերը և զորացրե՛ք ձեր դողացող ծնկները: Շարունակե՛ք քայլել ուղիղ ճանապարհներով... Հսկե՛ք, որ չնահանջեք Աստծո շնորհքից...» (Եբրայեցիների 12.12,13,15, TEV):

Որպես Աստծո զավակներ՝ Նրա փառքի համար մենք պետք է փափագենք հասնել բարեհաջող ավարտին: Ես և դու երբևէ չպետք է շրջվենք Աստծո շնորհքից՝ հոգնելով, թիերը վայր դնելով և շարժվելով այս աշխարհի համակարգի թելադրած ընթացքով:

Պետք չէ հեռուներում փնտրել. բավական է նայել այն օրինակներին, որոնք ներկայացված են Սուրբ գրքում՝ տեսնելու համար, թե ինչ է պատահում, երբ մարդիկ լավ կամ վատ են ավարտում: Նայենք Սողոմոնին՝

Դավթի որդուն, և իր ժամանակի ամենաիմաստուն, ամենահարուստ և ամենազորավոր մարդուն: Նա հասավ այնպիսի մի բարձունքի, որ ոչ մի մարդ իրենից առաջ կամ իրենից հետո երբևէ նույնիսկ մոտ չի եղել դրան: Մինչդեռ նա սայթաքեց, վայր դրեց թիերը, իր գահակալության վերջին շրջանում իր սիրտը հեռացրեց Տիրոջից՝ տրվելով այս աշխարհի համակարգին:

Իր օտարազգի կանանց պատճառով Սողոմոնը միգուցե լուրջ բախումներ էր ունենում իր ընտանիքում, քանի որ հավատարիմ և հնազանդ էր Եհովային: Սակայն խաղաղությունը պահելու համար նա հավատարիմ չմնաց Եհովային և անգամ զոհասեղաններ կառուցեց՝ երկրպագելով իր սիրելի կանանց օտար աստվածներին:

Արդյունքում՝ իր անմտության պատճառով Սողոմոնը շատ-շատ տառապեց: Նրա զավակներն ու թոռներն էլ ավելի հեռու գնացին: Եվ, ի վերջո, Սողոմոնին վստահված թագավորությունը, որը զորեղ էր իր հայր Դավթի հավատարմության շրջանում և նույնիսկ՝ ավելի զորեղ էր Սողոմոնի հիանալի մեկնարկի ժամանակ, տառապեց, բաժանվեց և սկսեց անկում ապրել՝ բարեհաջող ավարտը ձախողելու պատճառով: Իսրայելի պատմությունը էապես տարբեր կլիներ, եթե Սողոմոնը անկոտրում մնար:

Իսկ այժմ ե՛կ համեմատենք Սողոմոնին Հովհաննես Մկրտչի հետ: Հովհաննեսը վճռական էր և ամուր բռնել էր ճշմարտությունը՝ հերոսաբար ապրելով դրանով և հռչակելով այն: Նա, ինչպես Սողոմոնը, նույնպես հանդիպեց դժվարությունների, բայց Հովհաննեսին հանդիպած դժվարության հնարավոր հետևանքները շատ ավելի ծանր էին. նրա դժվարությունն իր կինը կամ կանայք չէին, այլ Հուդայի թագավորը, ով ամենևին էլ գրկաբաց չէր ընդունում այն ճշմարտությունը, որը հռչակում էր Հովհաննեսը: Սողոմոնը բախվեց կենցաղային հակամարտության, իսկ Հովհաննեսը՝ բանտի, կտտանքների և նույնիսկ՝ մահվան: Այդուհանդերձ՝ դեմ առ դեմ դուրս գալով նման դաժան և ծայրաստիճան լուրջ հետևանքներին՝ Հովհաննեսն անշարժ մնաց ճշմարտության հանդեպ ունեցած իր դիրքում, ինչը դրսևորվեց թե՛ իր ապրելակերպի և թե՛ իր պատգամը հռչակելու մեջ: Արդյունքում Հովհաննեսի ժառանգությունն ավելի գերազանց է, քան Սողոմոնինը:

Միայն Հովհաննեսն ու Սողոմոնը չէին, որ դիմակայության, այսինքն՝ գետի սրընթաց հոսանքի հանդիպեցին. ես և դու նույնպես հանդիպում ենք դրան: Մենք լուրջ պատերազմի մեջ ենք այս աշխարհի ունայն ու մակերեսային արժեքների դեմ: Դրանց ազդեցությունը ուժեղ է, խաբուսիկ և գայթակղիչ: Շատ հեշտ է հոգնել կամ մտածել, որ միանգամայն բնականոն է անհաստատ դառնալը, հանձնվելը և տիրող ընթացքին ենթարկվելը, բայց հաղթական ավարտի իմ և քո միակ ուղին մեր հավատքի մեջ անկոտրում լինելն է: Այս ճանապարհին մենք կդառնանք այնպիսի մարդիկ, ում հետ հաշվի են նստում, մարդիկ, ովքեր իրական սպառնալիք կլինեն խավարի թագավորության համար:

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

Ի՞նչ է նշանակում լինել անկոտրում: Այս բառը բնորոշում է վճռական, համառ և անսասան վերաբերմունք և մոտեցում: Ավելի պարզ ասած՝ չկոտրվող: Կոտրվել նշանակում է դառնալ ավելի փափուկ, թուլանալ, նույնիսկ՝ զիջել: Որոշ հոմանիշներ կօգնեն ավելի լավ բնութագրել *«անկոտրում»* բառը. դրանք են՝ «անդրդվելի, խիստ, կտրուկ, անզիջում, անկասելի, համառ» և, նույնիսկ, «խիստ համառ»: Մյուս հոմանիշներից են՝ «կայուն, ամուր, հաստատակամ, նպատակասլաց, դիմացկուն, համբերատար և կամակոր»:

Անկոտրում լինելը հատուկ է նաև դիվական ուժերին, բայց մեր քննարկման համար այս բնորոշումը կդիտարկենք դրական և աստվածային տեսանկյունից: Այդ իսկ պատճառով մենք այս հասկացությամբ կբնութագրենք այն մարդուն, ով անվեհեր է, քաջ և մտադիր է առաջադրանքը կատարել մինչև վերջ: Լինի այն կարճատև, թե երկարաժամկետ, անկոտրում հոգին վճռական է տրամադրված գործը ցանկանալի ավարտին հասցնելու հարցում: Ոչինչ չի կարող նրան ետ պահել իր նպատակն իրագործելուց:

Անկոտրում հավատացյալն այն մարդն է, ով բացարձակ անզիջում է հավատքի, հույսի և Աստծուն հնազանդվելու հարցում՝ անկախ այն բանից, թե ինչպիսի դժվարությունների է հանդիպում: Հաջող ավարտին նպատակաուղղված անկոտրում հավատացյալը բառացիորեն հանդի-

սանում է պատմություն կերտող, նա Երկնքում հավիտյան կճանաչվի որպես մեկը, ով արժանացավ Տիրոջ սրտաբուխ «կեցցե՛ս»-ին:

Անկոտրում լինելուն վերաբերող այդ խոսքերը միշտ չէ, որ բնութագրել են ինձ (ես ինձ շատ լավ եմ ճանաչում): Իրականում անկոտրում հոգի ունենալու փոխարեն ես հանձնվող հոգի ունեի և հեշտությամբ կիսատ էի թողնում իմ սկսած գործերը:

Ես Աստծո զավակ դարձա 1979 թվականին, երբ սովորում էի Ֆյուրդյուի համալսարանում: Այդ կիսամյակն ավարտելուն պես ես վերադարձա տուն՝ այնպիսի խանդավառությամբ լցված, որ իմ նորահայտ հավատքով անմիջապես կիսվեցի կաթոլիկ ծնողներիս հետ: Մայրս անմիջապես արձագանքեց. «Ձո՛ն, սա քո հերթական քմահաճույքներից մեկն է: Շատ շուտով դու այն կթողնես այնպես, ինչպես մինչև այժմ թողել ես մնացածները»:

Անկոտրում հավատացյալը բառացիորեն պատմություն կերտող մարդ է:

Մորս արձագանքի սուր խայթոցն ամենևին էլ նրա բացասական խոսքերը չէին կամ էլ նվաստացուցիչ մեղադրական եզրակացությունը: Իրականում խայթոցը կայանում էր նրանում, որ, ցավոք, մայրս ճիշտ էր. ես գրեթե միշտ ամեն ինչ անավարտ էի թողնում: Հիշում եմ, թե ինչպես էի վախենում ամուրի մնալուց, որովհետև կարծում էի, թե երբեք չեմ կարողանա մեկ կնոջ հետ երկարատև հարաբերություններ ունենալ և ամուսնական կյանքով ապրել: Ես սովորաբար կորցնում էի աղջկա նկատմամբ հետաքրքրությունն արդեն երկրորդ կամ երրորդ ժամադրությունից հետո: Նրանք հմայիչ էին, շնորհալի՝ օժտված վառ անհատականությամբ, բայց ես հոգնում էի նրանցից: Ուրիշ երիտասարդներ հետագայում սկսում էին հանդիպել այդ նույն աղջիկների հետ և ձևավորել երկարատև հարաբերություններ, այն դեպքում, երբ ինձ հատուկ էր մեկից մյուսին անցնելու սովորությունը:

Միայն ժամադրության հարցերում անկայուն չէի: Պատանեկության տարիներին ես հաճախում էի դաշնամուրի խմբակ, բայց արդեն վեց ամիս անց աղաչեցի, որ այլևս ինձ չտանեն այնտեղ: Բնական է՝ ծնողներս չէին համաձայնում, մինչև որ իմ անտարբերությունը դաշնամուրի հանդեպ ստիպեց իմ ուսուցչին՝ խնդրել ծնողներիս, որպեսզի նրանք

թույլ տան ինձ այլևս չհաճախել դաշնամուրի պարապմունքների: Ի դեպ՝ ես ուսուցչիս միակ աշակերտն էի, ում նա խրախուսեց այլևս չսովորել:

Հետո սկսեցի համոզել ծնողներիս, որպեսզի թույլ տան ինձ հաճախել կիթառի խմբակ: Գնեցինք բավականին թանկ կիթառ, և ես սկսեցի մեծ եռանդով ծնգծնգացնել, սակայն դա էլ տևեց ընդամենը մի քանի ամիս:

Սպորտի բնագավառում դարձյալ նույնն էր կատարվում: Սկզբում սկսեցի բեյսբոլ պարապել, բայց մի քանի տարի անց այն թողեցի: Այնուհետև հերթը բասկետբոլինն էր, որն ընդամենը մեկ խաղաշրջան տևեց: Դրան հաջորդեց գոլֆը, որը մոյնպես մեկ խաղաշրջանով ավարտվեց, ապա թեթև ատլետիկան՝ նույն ելքով:

Այս ցանկը կարելի է անվերջ շարունակել: Միշտ, երբ սկսում էի գիրք կարդալ, այդպես էլ այն չէի ավարտում: Ավագ դպրոցում միակ գիրքը, որ կարդացել եմ ծայրից ծայր՝ Էռնեստ Հեմինգուեյի *«Ծերունին և ծովն»* էր: Ինձ հանձնարարված էր կարդալ այդ գիրքը, և քանի որ այն շատ կարճ էր, իսկ ես էլ սիրում էի ձկնորսությունը, ավարտեցի այն:

Ես հաճախում էի տարբեր խմբակներ, իսկ կարճ ժամանակ անց թողնում էի դրանք: Գտնելով նոր նախասիրություններ՝ ձեռք էի բերում թանկարժեք սարքավորումներ, իսկ խանդավառ մեկնարկից հետո դրանք իջնում էին նկուղ և ժանգոտում:

Կարճ ասած՝ մորս գնահատականը շատ ճիշտ էր: Արդյո՞ք ես իմ սովորության համաձայն կվարվեի: Արդյո՞ք կթողնեի քրիստոնեությունը՝ իմ նորահայտ հավատքն առ Աստված, իմ նոր սերը: Արդյո՞ք իմ Աստվածաշնչերը և ուսումնական գրքերն իրենց վերջնական հանգրվանը կգտնեին նկուղում՝ իմ մյուս կարճատև նախասիրությունների հետ մեկտեղ:

Բայց Բարի լուրն այն է, որ այս նախկին անկայուն մարդն արդեն ավելի քան երեսուն տարի կրակոտ կերպով հետևում է Հիսուս Քրիստոսին: Ես այսօր նույնքան նվիրված եմ և նույնիսկ ավելի, որքան նվիրված էի այն ժամանակ, երբ եկա տուն և ծնողներիս պատմեցի իմ նոր հավատքի մասին: Ամենակարող Աստված՝ իմ Հայրը, փոխեց իմ շուտ հոգնող ու հանձնվող էությունը: Իր Սուրբ Հոգու միջոցով Նա իմ մեջ կառուցեց անկոտրում հոգու զորությունը:

Աստված ինձ դարձրեց *անկոտրում հավատացյալ*:

Եթե դու ընդունել ես Հիսուս Քրիստոսին որպես քո Տեր, այս նույն զո-

րությունը հասու է նաև քեզ: Բայց այն պետք է զարգանա: Հենց սա է այս գրքի նպատակը՝ բացահայտել, թե ինչպես կարող ես դու մեծացնել, ընդարձակել այս կարողությունը, որ Աստված անհատույց տվել է քեզ՝ հաջողակ ապրելու և հաղթական ավարտելու համար:

ԱՍՏՎԱԾ ԳԻՐՔ Է ԳՐԵԼ ՔՈ ՄԱՍԻՆ

Դու հասկանո՞ւմ ես՝ ով ես դու, և՝ թե Աստված ինչքան շատ քո կարիքն ունի, որպեսզի իրականացնես քո կոչումը՝ Իր գործը երկրի վրա տարածելու համար:

Աստված յուրահատուկ կյանքի ուղի է ծրագրել քեզ համար: Քո ողջ կյանքի քարտեզն արդեն գծագրված էր նախքան քո ծնունդը: Սաղմոսերգուն ասում է.

> «Դու տեսար ինձ մինչև իմ ծնվելը: Կյանքիս բոլոր օրերը գրանցված էին Քո Գրքում: Ամեն պահը գրառված էր, երբ որ իմ օրերից ոչ մեկը դեռ չկար» (Սաղմոս 139.16, NLT):

Աստված գիրք է գրել քո մասին նախքան ծնողներդ կմտածեին քեզ կյանք տալու մասին՝ *նախքան օրը կանցներ*: Միայն հանրաճանաչների ու թագավորների մասին չեն որ կյանքի պատմության գրքեր են գրվում: Ամենևին էլ ո՛չ. քո մասին պատմությունը նույնպես գրառվում է, բայց ամենազարմանալի իրողությունն այն է, որ այն մտահղացվել և գրվել էր Աստծո կողմից քո ծնվելուց առաջ:

Դու կարող ես առարկել. «Ձո՛ն, դու պատկերացում անգամ չունես՝ ինչի մասին ես խոսում: Իմ կյանքում ես հանդիպել եմ բազմաթիվ հարվածների, վերքերի և նույնիսկ՝ վթարների՝ իմ սխալ ընտրությունների պատճառով: Մի՞թե Աստված է այդ ամենի հեղինակը»:

Ո՛չ, ո՛չ և հազար անգամ ո՛չ: Աստված գծագրել է մեր կյանքը, բայց մեզանից է կախված ճիշտ ընտրություն կատարելը, որպեսզի քայլենք այն հիասքանչ ճանապարհով, որ Նա ստեղծել է մեզ համար: Սխալ ընտրությունները կարող են մեզ շեղել, բայց անկեղծ ապաշխարությունն ի զորու է ուղղել մեր ընթացքը:

Դու կարող ես կրկին հարցնել. «Բայց ինձ հետ կատարվել են սարսա-

փելի բաներ, որոնք սխալ ընտրության հետևանք չեն եղել: Կյանքն ինձ մի քանի ուժեղ հարվածներ է հասցրել: Մի՞թե Աստված է այդ հիասթափությունների և դժվարությունների հեղինակը»:

Նորից ո՛չ: Մենք ապրում ենք մեղանչական աշխարհում: Դրա համար էլ Հիսուսն ասաց, որ մենք նեղություններ կունենանք և փորձություններով կանցնենք: Սակայն Բարի լուրը այն է, որ Աստված մինչև քո ծնվելը գիտեր, թե ինչ տեսակ չար բաներ պիտի քեզ գրոհեն ապագայում, ուստի Իր իմաստությամբ ճանապարհներ պատրաստեց, որպեսզի դրանցից խուսափես և անգամ այդ ամենից հաղթող դուրս գաս: Ահա թե ինչու Աստված Իր Խոսքում անկոտրում հավատացյալներին անվանում է հաղթողներ:

Եբրայեցիների 12.1-ին խոսքը հորդորում է յուրաքանչյուրիս. «…Համբերությամբ վազենք մեր առջև դրված ասպարեզի ընթացքը»: Աստված ասպարեզ է դրել քո, իմ և Իր բոլոր զավակների առջև: Ընթացքդ հաջողությամբ ավարտելու համար դու պետք է վազես համբերությամբ ու վճռականությամբ: Այլ կերպ անկարելի է դա անել: Ընդ որում՝ ուշագրավ է, որ այս սուրբգրային համարում շեշտադրվում է միայն մի առաքինություն: Հեղինակը չի ասում. «Եկե՛ք վազենք ուրախությամբ» կամ «Եկե՛ք վազենք նպատակասլացությամբ» կամ էլ՝ «Եկե՛ք վազենք լրջությամբ»: Ինձ ճիշտ հասկացեք՝ ուրախությունը, նպատակասլացությունը, լրջմտությունը, ինչպես նաև մյուս առաքինությունները շատ կարևոր են քրիստոնեական ընթացքի համար, սակայն առանցքային առաքինությունը անկոտրում լինելն է:

Անկոտրում հոգի է հարկավոր բարեհաջող ավարտ ունենալու համար: Լավ ավարտը պահանջում է համառություն և համբերատարություն (դիմացկունություն): Ինձ դուր է գալիս Եբրայեցիների 12.1-ին խոսքի «Մեսիջ» աստվածաշնչյան տարբերակը. «Պատրաստվի՛ր, սկսի՛ր վազել ու երբեք կանգ մի՛ առ» (MSG): Մեր ընթացքն ավարտելը կարևոր է ոչ միայն մեզ, այլ նաև նրանց համար, ում վրա մենք կանչված ենք ազդեցություն թողնելու: Կարևոր է չնահանջել և ոչ էլ շեղվել այն ճանապարհից, որն Աստված դրել է մեր առջև: Եթե դու Աստծո զավակ ես, նշանակում է դու ունես այն ամենն, ինչ հարկավոր է: Քո ներսում ապրում է Սուրբ Հոգին, Ով զորացնող ուժ է տալիս քեզ: Եթե անսասան մնաս, ապա ի զորու կլինես Պողոս առաքյալի պես հայտարարել. «Ընթացքս ավարտեցի և հավատարմությունս պահեցի» (Բ Տիմոթ. 4.7, NLT):

Դու կարող ես խնդիրների հանդիպել ամուսնական կյանքում, ընտանիքում, աշխատավայրում, բիզնեսում, դպրոցում, ֆինանսական, առողջական և այլ հարցերում: Քո իրավիճակը հնարավոր է երևա բոլորովին անհուսալի ու անլուծելի, ինչն իր հերթին կարող է քեզ վախեցնել և ուժասպառ անել՝ փորձելով դրդել քեզ հանձնվել և հոսանքի ուղղությամբ դեպի վար իջնել: Բարի լուր ունեմ ձեզ համար. «…Մարդկանց կողմից անկարելի է, բայց ոչ թե Աստծո կողմից, որովհետև ամեն բան կարելի է Աստծո կողմից» (Մարկ. 10.27): Նշանակություն չունի, թե որքան ծանր են քո հանգամանքները, քանի որ դրանք լուծելի են Աստծո համար: Սակայն Հիսուսը մի կարևոր ճշգրտում է ավելացնում այս խոստմանը. «*Եթե կարող ես հավատալ*, ամեն բան կարելի է *հավատացողին*» (Մարկ. 9.22): Իսկ որպեսզի տեսնես, թե ինչպես է անհնարինը դառնում հնարավոր, պետք է լինես *անկոտրում հավատացյալ*: Ահա հենց այս մասին է իմ ամբողջ պատգամը՝ բախվելով մարդկային ուժերը գերազանցող իրավիճակներին՝ ականատես լինել, թե ինչպես է Աստծո զորությամբ և շնորհքով անհնարինը դառնում հնարավոր:

Լսի՛ր ինձ: Աստված փափագում է քեզ կոչել «մեծ՝ Տիրոջ առջև» (տե՛ս Ղուկ. 1.15): Նա քո կողմից է, և ոչ ոք Աստծուց առավել չի ցանկանում, որ դու կյանքում հաջողակ լինես: Նա քեզ համար պատրաստել է անհավանական կյանք և նախատեսել է հրաշալի ավարտ, որպեսզի դու քեզանից հետո թողնես հավատքի նշանակալի և մեծ գործերի ժառանգություն ի օգուտ ուրիշների: Բայց այդ ամենը կախված է նրանից, թե որքան *անկոտրում* հավատացյալ կլինես:

> Աստծուց առավել ոչ ոք չի ցանկանում, որ դու կյանքում հաջողակ լինես:

Միգուցե դու մտածես. *«Ջո՛ն, անկեղծ ասած, ես չեմ պատկանում վճռական մարդկանց տեսակին և չունեմ դժվարին իրավիճակները հաղթահարողի կենսագրություն»:*

Եթե անգամ դա քեզ է վերաբերում, ապա բարի լուրերն այսքանով չեն վերջանում: Քո պատմությունը բոլորովին կարևոր չէ: Հիսուս Քրիստոսի շնորհքի պատճառով դու հնարավորություն ունես չկրկնել քո անցյալը: Իրականում դա հնարավոր է, դու կարող ես դառնալ անկոտրում հավատացյալ և ընթացքդ հաջող ավարտել: Դու մեծ ուրախության հավակնորդ ես, որպեսզի տեսնես ցանկալի վերջը: Անկախ այն բանից՝ դա վերաբե-

րում է քո կյանքի որևէ համառոտ պատմությանը, թե՝ ինքնին ամբողջ կյանքին, քեզ վիճակված է լինել մեծ՝ Աստծո առջև. սա Նրա խոստումն է:

Իհա՛րկե, հետևելով Հիսուսի ճանապարհին՝ մեզանից ոչ մեկն էլ չի կարող խուսափել սպասվող դժվարություններից: Բայց խաղաքարտին դրված արժեքը բարձր է, իսկ հավիտենական վարձքը՝ անգին: Դու ունես չար ոսոխ, ով ամեն վայրկյան ցանկանում է վերացնել քո ազդեցությունը և վնասել Աստծուց սահմանված քո առաքելությունը: Սատանան մտահոգված է քեզանով, որովհետև դու սպառնալիք ես նրա համար: Նա ցանկանում է կանգնեցնել քեզ, ուստի՝ իրականում երջանիկ կլինի տեսնել քեզ «անկենդան»: Սակայն խաչի վրա կատարված գործի շնորհիվ սատանան պարտված թշնամի է: Ամեն մի ճակատամարտ, որ մենք մղում ենք նրա դեմ, արդեն պսակված է հաղթանակով: Մեզ մնում է միայն *անկոտրում կերպով* պայքարել սատանայի, նրա զորքերի և դրանց ազդեցության դեմ: Եվ մենք միասին կպարզենք, թե ինչպես կարող ենք դա անել:

Դու ստեղծվել ես այս աշխարհում եղանակ ստեղծելու համար: Դու Թագավորի զավակ ես, ով կանչված է թագավորել Նրա անունից: Արքայության բանալիները քո ձեռքում են: Եթե մտերմություն անես Տիրոջ հետ և նվիրես անձդ՝ անկոտրում լինելով հավատքիդ մեջ, ապա Աստված կտա քեզ ողջ զորությունն ու առաջնորդությունը, որ անհրաժեշտ է քեզ հաղթահարելու հակադիր հոսանքների ուժը:

Մինչ կշարունակենք, ե՛կ այս ճամփորդությունը միասին հանձնենք Տիրոջը.

Թանկագի՛ն Աստված, այս գիրքը կարդալու ընթացքում թող Քո Սուրբ Հոգին սովորեցնի և լուսավորի ինձ: Ես ցանկանում եմ ավելին, քան պարզապես տեղեկատվությունն է կամ քաջալերանքը: Ես ցանկանում եմ հասկանալ այն կոչման հարստությունն ու մեծությունը, որ Դու սահմանել ես իմ կյանքի համար: Ես ցանկանում եմ ճանաչել այն զորությունը, որ Դու դրել ես իմ մեջ՝ իրականացնելու համար այն, ինչ նախասահմանել ես ինձ համար:

Այս պատգամի միջոցով զորացրո՛ւ ինձ, որպեսզի հաստատ մնամ ճշմարտության մեջ և անկոտրում լինեմ ցանկացած դժվարության դեմ պայքարում, որն առաջանում է այն ամենը խոչընդոտելու համար, ինչը Դու կամենում ես իրականացնել իմ միջոցով: Դու ես ինձ առաջնորդել մինչև այս պահը, ուստի ես աղոթում եմ, որ այս պատգամը սպառազինի և օգնի ինձ՝ կատարելու Քո աստվածային ծրագիրը, որը կփառավորի Քո անունը և ուրախություն կպարգևի Քո սրտին: Հիսո՛ւս Քրիստոսի անունով ես բարձրացնում եմ Քեզ այս խնդրանքը: Ամե՛ն:

2

ԹԱԳԱՎՈՐԵԼ ԿՅԱՆՔՈՒՄ

«Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է և զորավոր...»

Եբրայեցիների 4.12

Եթե Աստծո Խոսքը կարդայինք այնպես, ինչպես որ այն կա, ապա մեզանից շատ շատերն էապես տարբեր կլինեին, քան հիմա են:

Երբեմն մեր ամենամեծ խնդիրը լինում է այն, որ ուղղակի պետք է հավատալ Աստծո Խոսքին՝ չնայելով մեր առկա իրավիճակներին: Եթե ներկա դրությամբ քո գործերը բարեհաջող չեն ընթանում, դու հաստատ գիտես, որ այդ իրավիճակը կարող է փոխվել, քանի որ դրանով ամեն բան դեռ ավարտված չէ: Միակ բանը, որ երբևէ փոփոխման ենթակա չէ, դա Աստծո Խոսքն է: Հիսուս Քրիստոսը դարեր առաջ ազդարարեց. «Երկինքն ու երկիրը կանհետանան, բայց Իմ Խոսքերը կմնան հավիտյան» (Ղուկ. 21.33, NLT): Նայի՛ր վերև և զննի՛ր արևը, որ լույս և ջերմություն է տալիս մեր երկրագնդին որքան ժամանակ, որ մարդը կա: Այն ավելի շուտ կանհետանա, քան Աստծո Խոսքը կստի. Աստծո Խոսքը մնում է հավիտյան:

Մեր Ամենակարող Հայրը հռչակում է. «...Ես պիտի հսկեմ Իմ Խոսքերի համար, որ կատարեմ այն» (Երեմիա 1.12): Ուշադրությո՛ւն դարձրու, որ Նա պատրաստ է: Ե՞րբ կկատարի Նա Իր Խոսքը: Պատասխանը շատ պարզ է. երբ ինչ-որ մեկը կհավատա Նրան: Հիսուսը հաստատում է, որ «...ամեն բան կարելի է հավատացողին» (Մարկ. 9.22): Այնպես որ, ե՛կ անկոտրում կերպով հավատանք:

ՄԵՆՔ ԿԱՆՉՎԱԾ ԵՆՔ ԱՅՍ ԿՅԱՆՔՈՒՄ ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հաջորդ չորս գլուխներում մենք ուսումնասիրելու և զարգացնելու ենք բացառիկ կարևորության մի ճշմարտություն, որը որոշիչ նշանակություն ունի որպես անկոտրում հավատացյալներ մեր բարեհաջող ավարտի համար: Ցանկանում եմ զգուշացնել, որ *միգուցե* քեզ կթվա, թե փոքրինչ շեղվում ենք գլխավոր թեմայից, բայց շարունակի՛ր շարժվել ինձ հետ համընթաց: Հավատացնում եմ քեզ, որ այդ բոլորը գալու են միմյանց լրացնելու, որպեսզի ամբողջական դարձնեն մեր ճամփորդությունը:

Սա նկատի ունենալով՝ այժմ ե՛կ քննենք Նոր կտակարանի ամենազորավոր սուրբգրային համարներից մեկը.

> «Բոլորը, ովքեր ընդունում են Աստծո առատ շնորհքը և ձրիաբար արդարանում Նրա առջև, կիշխեն կյանքում Քրիստոսի միջոցով» (Հռոմեացիների 5.17, TEV):

Ուշադրությո՛ւն դարձրու *կթագավորեն կյանքում* արտահայտությանը: Աստվածաշնչի թարգմանության «Վեյմաութ» տարբերակում ասվում է «կթագավորեն կյանքում որպես թագավորներ»: Մենք՝ որպես Աստծո զավակներ, կանչված ենք կառավարելու թագավորների և թագուհիների պես: Այս խոսքերն ուղղակի մարդկային խոսքեր չեն, քանի որ մենք գիտենք՝ «ամեն Գիրք աստվածաշունչ է (ներշնչված՝ Աստծո կողմից)…» (Բ Տիմոթ. 3.16): Հետևաբար Աստված բառացիորեն ազդարարում է, որ մենք *կթագավորենք կյանքում* Իր Որդու իշխանությամբ: Նկատի՛ր, որ Նա չի ասում. «Դու մի օր կթագավորես Երկնքում» կամ «Դու կթագավորես գալիք կյանքում»: Ո՛չ, Նա պարզորոշ հրահանգում է, որ մենք պետք է թագավորենք *այս* կյանքում որպես թագավորներ կամ թագուհիներ՝ Քրիստոսի միջոցով:

Իմ անձնական բառարանի թագավոր կամ թագուհի բառերի առաջնային բնորոշումներից մեկը հետևյալն է՝ «մարդ, ով տիրապետող կամ գերազանցող է որոշակի բնագավառում»: *Թագավորել* բառի իմաստն է «գերակայություն կամ լայնատարած ազդեցություն»: Տիրել որպես թագավոր կամ թագուհի նշանակում է ունենալ տիրապետող գերակայություն կամ ազդեցություն որոշակի բնագավառում: Իսկ այդ ո՞ր բնագա-

վառում մենք պետք է լինենք անգերազանցելի կամ գերակայող: Դե՛, իհարկե, կյանքի բնագավառում:

Մեկ այլ խոսքով՝ կյանքն այս երկրի վրա չպետք է տիրապետի մեզ, այլ մենք պետք է կառավարենք այն: Սա Աստծո Խոսքն է, Նրա խոստումը մեզ համար: Ես քաջալերում եմ քեզ հիմնավոր կերպով տեղավորել այն քո սրտում:

ԻՆՔՆԱԲՈՒԽ ՊՆԴՈՒՄ

Ե՛կ քննենք այն ինքնաբուխ պնդումը, որ տարիներ շարունակ լսել ենք: Երբ իրավիճակները դառնում են դժվար, անցանկալի, վնասակար կամ, անգամ, կյանքը վտանգող, ապա մարդիկ բարի ցանկություններից ելնելով՝ հաճախ ինքնաբուխ կերպով ազդարարում են, որ «Աստված տիրում է»: Սա նշանակում է, որ իրավիճակը շտկելու համար կարիք չկա որևէ բան ձեռնարկել, քանի որ Աստված Իր սիրառատ և բարի էությունից դրդված՝ ինչ-որ կերպ այդ անախորժ իրավիճակը կպտտի դեպի բարին, որովհետև Նա այն Մեկն է, Ով վերահսկում է ամեն ինչ:

Ճշմարտությունն այն է, որ *Աստված կարգեց մեզ, որ տիրենք*: Այժմ այս գիրքը մի կողմ նետելուց առաջ կխնդրեմ, որ մինչև վերջ լսես ինձ:

Սաղմոսներում կարդում ենք. «Երկինքները Տիրոջ երկինքներն են, բայց երկիրը Նա տվեց մարդկանց որդիներին» (Սաղմ. 115.16, AMP): Աստվածաշնչի «Մեսիջ» տարբերակում այսպես է ասվում. «Երկինքների երկինքը Աստծունն է, բայց *Նա մեզ դրեց, որ իշխենք* երկրի վրա» (MSG):

Ովքե՞ր են կարգված երկրի վրա իշխելու համար. իհա՛րկե, մենք:

Ամենակարող Աստված ինքնիշխան Արարիչն է, և Նա ինքնիշխան ընտրություն կատարեց՝ երկրի և դրանում տիրող իրավիճակների կառավարումը տալով մարդկանց: Եթե Աստված երկրին տիրելու իշխանությունն իրեն պահած լիներ, ինչպես շատերն են կարծում, ապա երբ Ադամն իր բերանն էր տանում արգելված պտուղը, Աստված կմիջամտեր և խփելով՝ նրա ձեռքից ցած կգցեր այն: «Ի՞նչ է կատարվում քեզ հետ, Ադա՛մ,- կբացականչեր Նա: - Մի՞թե չես գիտակցում հետևանքների մասին, երբ մտադիր էիր դա անել: Մի՞թե չես գիտակցում այն ամբողջ ցավերը, տառապանքները, հիվանդությունները, խոցերը, սովերը, քաղցը,

աղքատությունը, սպանությունները, գողությունները և մյուս չարիքները, որոնք կգան քո և քո սերունդների վրա, չհաշված երկրաշարժերը, պտտահողմերը, փոթորիկները, համաճարակները, երաշտն ու վայրի գազանների վտանգը: Արդյոք չե՞ս հասկանում, որ ամբողջ բնությունը կկորցնի իր անաղարտությունը: Եվ ամենակարևորը, որ Ես ստիպված կլինեմ ուղարկել Իմ միածին Որդուն, որպեսզի Նա չարչարվի և մահանա մարդկությանը փրկագնելու համար»:

Բայց Աստված Ադամին ետ չպահեց, քանի որ Նա երկիրը կտակել էր մարդկանց: Մեր սիրառատ Արարիչ Աստված նման չէ շատերին, ովքեր իշխանություն են տալիս և հետո ետ վերցնում այն, եթե իրենց դուր չի գալիս, թե ինչպես է այն գործադրվում: Երբ Աստված ինչ-որ բան է տալիս, այն մշտական նվեր է դառնում: Նրա Խոսքն է այդպես ասում. «Որովհետև Աստծո պարգևները և Նրա կոչումը երբեք չեն կարող չեղյալ արվել» (Հռոմ. 11.29, NLT):

Ինչ-որ մեկը կարող է չհամաձայնել՝ ասելով. «Բայց Աստվածաշունչը պնդում է, որ «Տիրոջն է երկիրը և նրա լիությունը…» (Սաղմ. 24.1): Որպես պատասխան՝ թո՛ւյլ տվեք օրինակ բերել այն, ինչը տեղի է ունեցել մեր ընտանիքի հետ վերջին տարիներին:

Երբ Աստված ինչ-որ բան է տալիս, այն մշտական նվեր է դառնում:

Տարիներ առաջ Լիզայի մայրը՝ Շիրլին, ով արդեն 70-ն անց է, միայնակ ապրում էր Ֆլորիդայում՝ իր կողքին չունենալով որևէ մոտ ազգական: Ես և Լիզան շատ էինք ցանկանում, որ նա մոտ լինի մեզ: Մի օր կինս ասաց, որ մեր տանից քիչ հեռու հարմարավետ մի առանձնատուն է վաճառվում և ասաց, որ մեզանից հինգ րոպե է պահանջվում այնտեղ հասնելու համար: Դրանք իրոք հրաշալի էին: Այնպես որ, մենք դիմեցինք Շիրլիին՝ առաջարկով, որպեսզի այդ առանձնատներից մեկը գնենք իր համար՝ հրավիրելով նրան միանալ «Մեսինջեր Ինտերնեյշնլ» թիմին: Նա ուրախությամբ ընդունեց դա: Մենք գնեցինք առանձնատունը, և որպեսզի կնոջս մայրն անկախության զգացումը չկորցնի, որոշեցինք խորհրդանշական ամսական վճար սահմանել տան վարձակալության համար: Արդեն մի քանի տարի է, նա տեղափոխվել է այստեղ, և այժմ իր կյանքի բոլոր բնագավառներում նա ծաղկում է:

Որպես տան սեփականատեր՝ այս ամբողջ ժամանակաընթացքում ես ոչ մի անգամ նրան չեմ ասել, թե ինչպես նա զարդարի իր տունը կամ դասավորի կահույքը: Ես չեմ ասել նրան, թե ինչպես վարի իր տնային տնտեսությունը, թե ինչ պատրաստի նախաճաշի, ճաշի կամ ընթրիքի համար, կամ՝ ինչպիսի տնային սարքավորումներ գնի: Լիզայի մայրն է պատասխանատու ամենօրյա կենցաղային հարցերի համար: Ես այդ տան սեփականատերն եմ, բայց ես այն վարձով տվել եմ Շիրլիին, և նա պետք է զբաղվի այդ սեփականության հարցերով այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Իհարկե, ամեն ժամանակ նա կարող է դիմել իմ օգնությանը, բայց ես չեմ պատրաստվում միջամտել առանց նրա խնդրանքի:

Նույն կերպ էլ երկիրն է Տիրոջինը: Աստված սեփականատերն է, բայց Նա վարձով այն տվել է մարդկությանը: Լսի՛ր, թե ինչ ասաց Նա, երբ ստեղծեց մարդուն և մեզ տվեց Երկիր «առանձնատունը».

> «Աստված արարեց մարդկանց Իր պատկերով և նմանությամբ: Արու և էգ ստեղծեց նրանց, օրհնեց և ասաց. «Շատ զավակներ ունեցեք, որ ձեր սերունդներն ապրեն ողջ երկրի վրա և *իրենց հսկողության տակ պահեն այն: Ես ձեզ իշխանություն եմ տալիս*»» (Ծննդոց 1.27,28, TEV):

Աստված մեզ իշխանություն տվեց Իր մեծ տան վրա: Ուստի՝ ոչ թե Աստված, այլ ես և դու ենք հսկում, թե ինչպես է կյանքն ընթանում այս մոլորակի վրա:

ՆՈՐ ՏԵՐ

Մեծ խնդիր ծագեց Եդեմի պարտեզում, երբ սատանան օձի կերպարանքով եկավ և համոզեց Ադամին ու Եվային չհնազանդվել Աստծո Խոսքին և ընդունել իր սուտը: Մեկ անգամ թույլ տված Ադամի անհնազանդության պատճառով, մենք մեր անձերը տվեցինք նոր տիրոջը, որի անունն է սատանա: Տվեցինք ոչ միայն մեր անձերը, այլև այն ամենն, ինչը գտնվում էր մեր տիրապետության ներքո: Մարդկության բոլոր սերունդները, ինչպես նաև բնությունը, հայտնվեցին բանսարկուի իշխանության տակ:

Այս էական փոփոխության հետևանքով ի հայտ եկած նոր տիրոջ

հանգամանքով է բացատրվում հետագայում սատանայի և Հիսուսի միջև տեղի ունեցած հանդիպումը: Սատանան Հիսուսին բարձրացրեց մի բարձր սար և ցույց տվեց Նրան աշխարհի բոլոր թագավորություններ-ը: Նա առաջարկեց. «Քեզ կտամ այս բոլոր իշխանությունը, զորությունը և փառքը (դրանց ողջ մեծափառությունը, գերազանցությունը, տիրապետությունը, պատիվն ու հաճությունը), *քանի որ դա անցել է իմ իշխանության ներքո*, և ես կարող եմ այն տալ նրան, ում կամենամ» (Ղուկ. 4.6, AMP):

Այդ ե՞րբ աշխարհի բոլոր թագավորություններն անցան սատանայի իշխանության ներքո: Դա տեղի ունեցավ հազարավոր տարիներ առաջ Եդեմի պարտեզում, երբ Ադամը հրաժարվեց երկրին տիրելու իրավունքից, ինչն Աստված վստահել էր իրեն: Այն ամենը, ինչ Աստված տվել էր մարդուն, այժմ գտնվում է Նրա վաղեմի թշնամու ձեռքերում: Ահա թե ինչու է Սուրբ գիրքն ասում մեզ. «Գիտենք, որ մենք Աստծունն ենք, և ամբողջ աշխարհը չարի իշխանության տակ է» (Ա Հովհ. 5.19, AMP):

ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Աստված ցանկանում էր մարդկությանը վերադարձնել այն, ինչն Ադամը հանձնեց թշնամուն: Այդուհանդերձ, Նա չէր կարող գալ աստվածության կերպարանքով և ուղղակի ուժով վերցնել այն. այդ իշխանությունը Նա տվել էր Ադամին, որից վերջինս պաշտոնապես հրաժարվել էր: Մարդը կորցրեց իշխանությունը, ուստի մարդն էլ պետք է վերականգներ այն: Այս պատճառով է, որ Հիսուսը ստիպված էր գալ որպես «Մարդու Որդի»: Հիսուսը ծնվեց կնոջից, և դա նշանակում էր, որ Նա 100 տոկոսանոց մարդ էր: Նա ծնվեց նաև Սուրբ Հոգուց, ինչն էլ նշանակում էր, որ Նա 100 տոկոսանոց Աստված էր (ուստի և ազատ էր մեղքի անեծքից): Սուրբ գրքում պարզորոշ ասվում է, որ «Երբ ժամանակը լրացավ, Նա [Հիսուսը] հրաժարվեց աստվածային կերպարանքի առավելություններից և ստանձնեց ծառայի կարգավիճակը՝ դառնալով մարդ» (Փիլիպ. 2.7, MSG): Ու թեև Աստված էր, թողեց Իր աստվածային կերպարանքը և երկրի վրա վարվեց որպես մարդ:

Հիսուսն ապրեց՝ կատարյալ հնազանդ լինելով Հորը: Իր անմեղու-

թյան և կամովի խաչի մահն ընտրելու շնորհիվ Նա կարողացավ Իր արյունով ետ գնել այն ամենն, ինչ Ադամը կորցրել էր: Աստվածաշնչում ասվում է, որ Նա «իշխանություններին և պետություններին մերկացնելով՝ հայտնապես խայտառակեց և նրանց հաղթանակեց Իրենում» (Կողոս. 2.15):

Այժմ միայն Նա է տիրապետում այն իշխանությանը, որից Ադամը հրաժարվեց: Ահա թե ինչու Հիսուսը հստակորեն ազդարարում է. «…Ամեն իշխանություն [թագավորելու ողջ իշխանությունը] Ինձ տրվեց Երկնքում և երկրում» (Մատթ. 28.18):

> Մի օր Նա կվերադառնա և կվերականգնի ամբողջ բնությունը՝ դարձնելով այնպիսին, ինչպիսին որ կար Եդեմի պարտեզում մինչև Ադամի մեղանչելը: Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև արարչությունը [բնությունը] ենթարկվեց ունայնության (ապականության)՝ ոչ իր դիտավորյալ մեղքի պատճառով, բայց… այն կազատվի քայքայման և ապականության կապանքից՝ Աստծո որդիների փառավոր ազատության մեջ մտնելով» (Հռոմեացիների 8.20,21, AMP):

Բնությունը տակավին ենթակա է ապականության. մեր ֆիզիկական մարմինները դեռևս ծերանում և մահանում են, ֆիզիկական աշխարհը դեռևս քայքայվում և ապականվում է, գիշատիչները շարունակում են որսալ և ուտել տկար կենդանիներին, օձերը շարունակում են պահպանել իրենց թույնը, հիվանդությունները շարունակում են ահագնանալ, պտտահողմերն ու փոթորիկները շարունակում են ավերածություններ գործել: Այդուհանդերձ, կա Մեկը, Ով իշխանություն ունի այդ ամենի վրա և կարող է ամեն բան շրջել: Եվ Նրա անունն է Քրիստոս:

Ո՞Վ Է ՔՐԻՍՏՈՍԸ

Այժմ հարց է ծագում՝ Ո՞վ է *Քրիստոսը*: Հենց այստեղ է, որ Աստծո զավակների չնորոգված միտքը նրանց թույլ չի տալիս ըմբռնել ճշմարտությունը: Քրիստոսի մասին խորհելիս շատերը Նրան ընկալում են զուտ Հիսուս Քրիստոս՝ մտածելով, որ *Քրիստոսը* Նրա ազգանունն է: Այս թանկագին մարդիկ Նրան չեն պատկերացնում այլ կերպ, քան որպես մեր Մեծ Թագավոր, Ով մահացել է խաչի վրա և հարություն առել: Այո՛, *Քրիս-*

տոս անունն անշուշտ վերաբերում է մեր Տիրոջն ու Փրկչին, բայց եկ տեսնենք, թե ինչ է ասում Աստծո Խոսքը:

Պողոսը գրում է. «Հիմա դուք բոլորդ Քրիստոսի մարմինն եք, և ձեզանից յուրաքանչյուրը մարմնի առանձին և պիտանի անդամն է» (Ա Կորնթ. 12.27, NLT): Մենք՝ հավատացյալներս, միասին կազմում ենք Քրիստոսի մարմինը: Մեզանից ամեն մեկը մարմնի կարևոր մասն է: Հիսուսը գլուխն է, մենք՝ մարմինը. որքա՜ն պարզ է:

Դու ունես գլուխ քո ուսերին, բայց նաև ունես ձեռքեր, ոտքեր, ծնկներ, բազուկ, կուրծք, որովայն, լյարդ, երիկամներ և այլն: Երբ մտածում ես քո մասին, արդյո՞ք պատկերացնում ես, որ քո գլուխն անջատ է քո մարմնից: Արդյո՞ք դու քո գլուխը և մարմինը կոչում ես երկու տարբեր հատուկ անուններով: Իհարկե, ո՛չ: Դու մեկ անձ ես: Եթե տեսնեիր միայն իմ գլուխը, կհամարեի՞ր, որ տեսնում ես Ջոն Բիվերին: Կամ՝ եթե գլուխս անհետանար, և դու տեսնեիր միայն մարմինս, կհամարեի՞ր, որ տեսնում ես Ջոն Բիվերին: Ո՛չ, որովհետև գլուխս և մարմինս մեկ են:

Նմանապես Քրիստոսի գլուխը և Նրա մարմինը մեկ են: Հիսուսը գլուխն է, իսկ մենք՝ Նրա մարմնի տարբեր մասերը, ուստի մենք մեկ ենք Քրիստոսի հետ: Այնպես որ, երբ դու Նոր կտակարանում կարդում ես Քրիստոս, դու կարիք ունես տեսնելու ոչ միայն Նրան, Ով մահացավ խաչի վրա, այլ նաև քեզ: Ահա թե ինչու է Սուրբ գիրքը հաստատում. «Որովհետև թե՛ Սրբողը և թե՛ սրբվողները՝ ամենը Մեկից են…» (Եբր. 2.11): Հիսուսն Ինքն աղոթեց. «Բայց ոչ թե միայն նրանց համար եմ աղաչում, այլ նրանց համար էլ, որ նրանց խոսքով կհավատան Ինձ, որ ամենքը մեկ լինեն, ինչպես Դու, Հա՛յր, Ինձանում, և Ես՝ Քեզանում, որ նրանք էլ *Մեզանում մեկ լինեն*…» (Հովհ. 17.20,21):

Դու մեկ ես Հիսուսի հետ. բառացիորեն՝ *մեկ*:

Պարզապես, որպեսզի դու վստահ լինես, որ ես մեկ կամ երկու սուրբգրային համար չեմ առանձնացնում համատեքստից, թո՛ւյլ տուր ինձ արագորեն ներկայացնել քեզ աստվածաշնչյան այլ խոսքեր, որոնք կամրապնդեն այս ճշմարտության հանդեպ քո հավատքն ու հասկացողությունը: Խնդրո՛ւմ եմ, ուշադիր ընթերցի՛ր և խորհի՛ր այս սուրբգրային համարների շուրջ այնպես, ասես նախկինում երբեք ո՛չ լսել, և ո՛չ էլ կարդացել ես դրանք.

- Պետրոսը գրում է, որ մենք «վերստին ծնվել ենք Աստծո Խոսքից», որպեսզի «հաղորդակից լինենք աստվածային բնությանը» (տե՛ս Ա Պետր. 1.23, Բ Պետր. 1.4): *Բնություն* (էություն) բառը բնութագրվում է որպես «անձի խորունկ կամ անքակտելի հատկությունները կամ բնավորությունները»: Ինչպես որ իմ ձեռքը միևնույն գենետիկ կազմվածքն ունի, ինչ գլուխս (որովհետև ես ոչ թե երկու, այլ մեկ ամբողջական անձ եմ), այնպես էլ ես և դու ունենք միևնույն անքակտելի հատկությունները, ինչ՝ Հիսուսը:
- Հովհաննես առաքյալը գրում է. «Եվ Նրա *լիությունից* մենք ամենքս առանք (ստացանք)…» (Հովհ. 1.16): Լսեցի՞ր արդյոք *լիություն* բառը: Երբ համադրում ենք Հովհաննեսի և Պետրոսի խոսքերը՝ պարզում ենք, որ մենք ընդունել ենք Քրիստոսի անքակտելի հատկությունների կամ հոգևոր գենետիկ կազմվածքի *լիությունը*:
- Ապա իր առաջին թղթում Հովհաննես առաքյալը գրում է. «…որովհետև ինչպես Նա է [Հիսուսը], այնպես էլ մենք ենք այս աշխարհում» (Ա Հովհ. 4.17): Այս հատվածում նա նկատի չունի գալիք կյանքը: Ո՛չ, նա գրում է ներկա ժամանակով. ինչպես *Հիսուսն է*, այնպես էլ *մենք ենք*: Ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն է, այդպես էլ մենք ենք՝ ներկա պահին, այսո՛ր:
- Պողոսը գրում է. «Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներ են…» (Ա Կորնթ. 6.15): Այն, թե ինչպես է նա ազդարարում սա, նշանակում է, որ այս իմացությունը պետք է լինի հիմքային: Արդյո՞ք դու տեղյակ էիր այս տարրական իրողությանը: Արդյո՞ք մենք՝ որպես եկեղեցի, իսկապես հավատում ենք այս խոսքերին:

ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ իմանալով, որ երբ լսում ենք *Քրիստոս* բառը, պատկերացնում ենք նաև մեզ՝ ե՛կ տեսնենք, թե ինչ է նշանակում այս հայտնությունն այն իշխանության և զորության մակարդակի առումով, որ մենք ունենք Նրանում: Եփեսացիներին ուղղված իր թղթում Պողոսը ջերմեռանդորեն աղոթում էր, որպեսզի Քրիստոսի ամեն մի հետևորդ կարողանա հասկանալ, թե «…ի՞նչ է Նրա զորության անչափ, անսահման և գերազանց մեծությունը…» (Եփես. 1.19, AMP):

Ինչպիսի՜ բնութագրիչ բառեր: Նկարագրվող ինչպիսի՜ մեծություն: Համաձա՞յն ես արդյոք, որ փառքի Տերն ունի անչափելի, անսահման իշխանություն: Համոզվա՞ծ ես արդյոք, որ Նրա իշխանությունն անհամեմատ գերազանցում է ցանկացած մեծություն կամ որևէ մեկ այլ իշխանություն կամ որևէ մեկ այլ զորություն ողջ տիեզերքում: Վստահ եմ, որ դու կհաստատես այս պնդումն առանց մեկ վայրկյան անգամ հապաղելու:

Բայց արդյո՞ք նույն բանը դու կասես *քո* մասին: Իսկ որ ավելի կարևոր է՝ արդյո՞ք դու իրականում հավատում ես դրան: Եթե ոչ, ապա անգիտակցաբար դու տարանջատում ես քեզ Քրիստոսից: Մի՞թե դու մեկ այլ մարմնի անդամ ես: Մի՞թե դու Քրիստոսի մասնիկը չես կամ Նրա մարմնի անդամը: Միգուցե այժմ մտածում ես. *«Ձո՛ն Բիվեր, հիմա դու շատ ես չափն անցնում: Արդյո՞ք այդպես է»*: Համոզվելու համար, որ ես չափը չեմ անցնում, նորից ընթերցիր վերոհիշյալ սուրբգրային համարի հետևյալ հատվածը. «Եվ ի՞նչ է Նրա զորության անչափ, անսահման և գերազանց մեծությունը *մեր մեջ և մեզ համար, որ հավատում ենք*» (Եփես. 1.19, AMP):

Պողոսը վկայակոչում է մեզ բոլորիս: Ինչո՞ւ: Որովհետև որպես հավատացյալ Հիսուս Քրիստոսում՝ դու Նրա մասնիկն ես: Հետևաբար այն նույն իշխանությունը, որ Քրիստոսն ունի, դու էլ ունես: «Ինչպես Նա է, այդպես էլ մենք ենք այս աշխարհում»: Արդյո՞ք թույլ ես տալիս, որ սա արմատ գցի քո սրտում:

Աստվածաշնչի ընդլայնված թարգմանությունում ե՛կ շարունակենք քննել Պողոսի՝ մեզ համար արված աղոթքը.

> «…Որ դրսևորվեց Իր կարող զորության ներգործության մեջ, որը Նա գործադրեց Քրիստոսում, երբ Նրան հարություն տվեց մեռելներից և նստեցրեց Նրան Իր աջ կողմը երկնավորներում» (Եփեսացիների 1.19,20, AMP):

Արդյոք հավատո՞ւմ ես, որ Տեր Հիսուս Քրիստոսը խաչվեց, մահացավ, թաղվեց, հարություն առավ մեռելներից և այժմ նստած է իշխանության ամենաբարձր տեղում: Եթե ճշմարիտ քրիստոնյա ես, ապա միանշանակ հավատում ես: Բայց արդյո՞ք հավատում ես, որ այս ամենը վերաբերում է նաև *քեզ*: Փաստն այն է, որ հավատացյալների մեծ մասն իրեն չի դիտում այս լույսի ներքո: Մինչդեռ Պողոսը գրում է.

> «Կամ չգիտե՞ք, թե քանիսներս, որ Հիսուս Քրիստոսով մկրտվեցինք [ընկղմվեցինք], Նրա մահվան մեջ մկրտվեցինք [ընկղմվեցինք]: Մկրտությունով [ընկղմումով] Նրա հետ թաղվեցինք մահի մեջ, որ ինչպես Քրիստոսը Հոր փառքով մեռելների միջից հարություն առավ, այնպես մենք էլ կյանքի նորոգության մեջ քայլենք» (Հռոմեացիների 6.3,4):

Ուշադրությո՛ւն դարձրու, որ այս հատվածն ուղղակիորեն չի առնչվում ջրի մկրտությանը, այլ՝ Աստծո Հոգու միջոցով Քրիստոսի մարմնի մեջ մեր ընկղմվելուն, երբ մենք վերստին ծնվեցինք (տե՛ս Ա Կորնթ. 12.13): Մենք

Քրիստոսի մարմինն ենք, հետևաբար, այն պահին, երբ ընկղմվեցինք Նրա մեջ, մեր պատմությունը փոխվեց: Մենք մահացանք Նրա հետ, թաղվեցինք Նրա հետ, հարություն առանք Նրա հետ և, որպես նոր արարածներ, ապրում ենք այնպես, ինչպես Նա: Դարձյալ՝ «Ինչպես Նա է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում»: Մենք Քրիստոսում ենք: Մենք միասին Քրիստոսն *ենք*: Մենք Նրա մարմինն ենք: Մենք մեկ ենք Նրա հետ:

Եվ Եփեսացիների 1.20-րդ խոսքի համաձայն՝ քանի որ մենք Քրիստոսի անբաժան մասնիկն ենք, այժմ նստած ենք իշխանության վայրում: Փաստացի՝ ողջ տիեզերքում դա իշխանության ամենաբարձր վայրն է: Հիսուսն ասաց. «…Ամեն իշխանություն Ինձ տրվեց Երկնքում և երկրում» (Մատթ. 28.18): Իսկ Պողոսը շարունակում է.

> «Ամեն իշխանությունից և պետությունից և զորությունից և տերությունից և ամեն անունից վեր (ամեն տիտղոսից, որ կարող է շնորհվել), որ անվանվում է ոչ միայն այս աշխարհում, այլ նաև գալիք աշխարհում» (Եփեսացիների 1.21, AMP):

Արդյոք հավատո՞ւմ ես, որ Տեր Հիսուսը նստած է ամեն իշխանություններից, զորություններից և պետություններից շատ բարձր թե՛ այս աշխարհում, և թե՛ ողջ տիեզերքում: Որպես քրիստոնյա, անկասկած, դու հավատում ես: Բայց ես նորից այդ հարցը կուղղեմ քեզ. արդյոք հավատո՞ւմ ես, որ սա վերաբերում է նաև *քեզ*: Միգուցե դու չես դիտում քեզ այս լույսի ներքո, բայց շատ ավելի հավանական է, որ դու չես հավատում այս իրողությանը: Եթե այդպես է, ապա դու քեզ տարանջատել ես Քրիստոսից քո մտածելակերպի պատճառով: Մի՞թե դու մեկ այլ մարմնի մասնիկ ես: Ո՛չ, դու Քրիստոսի մասնիկն ես: Մենք բոլորս Քրիստոսում ենք: *Մենք միասին* Քրիստոսն ենք: Մենք Նրա մարմինն ենք: Ուշադի՛ր լսիր, թե ինչպես է Պողոսը հաստատում սա.

> Քանի որ մենք Քրիստոսի անբաժան մասնիկն ենք, այժմ նստած ենք իշխանության վայրում՝ երկնավորներում:

> «Եվ ամեն բան հնազանդեցրեց Նրա ոտքերի տակ և Նրան ընդհանրական և գերագույն Գլուխ դրեց եկեղեցուն, որ է Նրա մարմինը, Նրա լիությունը, որ ամենն ամենի մեջ լրացնում է [որովհետև այդ մարմնում բնակվում է կատարյալ լիությունը Նրա, Ով ամեն բան կատարյալ է դարձնում, և Ով լրացնում է Իրենով ամեն ինչ ամենուր]» (Եփեսացիների 1.22,23, AMP):

Մենք Նրա մարմինն ենք, Հիսուս Քրիստոսի լիությունը, կատարելապես մեկ Նրա հետ: Պողոսը պնդում է, որ *ամեն բան* հնազանդեցվեց Նրա ոտքերի տակ: Եթե դու Քրիստոսի մարմնի մասնիկն ես, ում վիճակվել է լինել ոտքի մատը, դու տակավին ոչ թե մի քիչ, այլ անչափ բարձր ես բոլոր իշխանություններից, զորություններից և տերություններից այս աշխարհում և հանդերձյալում: Քրիստոսում քո իշխանությունը վերականգնվել է և անգամ ավելի մեծացել այն իշխանությունից, որն Ադամը կորցրեց:

Գիտակցելով, որ մեզ համար դժվար կլինի ըմբռնել այս ողջ իրողությունը՝ Պողոսը Եփեսացիների երկրորդ գլխում էլ ավելի է հստակեցնում այն՝ չթողնելով կասկածի ոչ մի առիթ: Հիշի՛ր, որ գլուխներն ու համարներն ավելի ուշ են ավելացվել. սա մեկ ամբողջական ուղերձ է՝ շարունակական միտք.

> «Նրա հետ մեզ հարություն տվեց և միասին նստեցրեց [տալով մեզ ընդհանուր նստատեղ Իր հետ] երկնավորներում՝ Քրիստոս Հիսուսում» (Եփեսացիների 2.6, AMP):

Գլուխն անջատ չէ մարմնից: Եվ մենք Քրիստոսի հետ միասին նստած ենք իշխանության, կառավարման և զորության վայրում՝ երկնավորներում: Մեկ ուրիշ խոսքով ասած՝ մենք այնպիսի վայրում ենք, որը *չափազանց վեր* է այս աշխարհի ցանկացած ուժից: *Ո՛չ մի դիվային ոգի, ընկած հրեշտակ կամ, անգամ հենց ինքը՝ սատանան, իշխանություն կամ զորություն չունեն մեզ վրա: Մենք թագավորում ենք ամեն ինչից բարձր՝ Քրիստոսում ունեցած մեր դիրքի և իշխանության շնորհիվ*:

Ալելուիա՜:

ԹԱԳԱՎՈՐԵԼ ԿՅԱՆՔՈՒՄ

Այն ամենի լույսի ներքո, ինչ մենք արդեն լուսաբանեցինք, ե՛կ նորից վերադառնանք այն սուրբգրային համարին, որ այս գլխի սկզբում հիշատակեցինք:

> «Բոլորը, ովքեր ընդունում են Աստծո առատ շնորհքը և ծրիաբար արդարանում Նրա առջև, կիշխեն կյանքում Քրիստոսի միջոցով» (Հռոմեացիների 5.17, TEV):

Ուշադրությո՛ւն դարձրու «կթագավորեն կյանքում Քրիստոսի միջոցով» արտահայտությանը: Որպես Քրիստոսի մարմնի անդամներ՝ մենք պետք է թագավորենք (իշխենք) մեր կյանքում եղած բոլոր հակառակությունների վրա: Մենք մարդիկ ենք, ովքեր կանչված են երկրի վրա տիրելու համար, ուստի, եթե ինչ-որ բան սխալ է ընթանում կամ չի ստացվում, արդյո՞ք դա չի նշանակում, որ մենք հրաժարվում ենք իշխանությունից կամ չենք կիրառում այն:

Շատ տարիներ առաջ իմ հովիվը մեր մեծ եկեղեցական համայնքի առջև հայտարարեց, որ ես մտնելու եմ քարոզչական ծառայության մեջ: Դրանից մի քանի օր անց մի տարեց ծառայող մոտեցել էր կնոջս և ասել. «Լի՛զա, ես Աստծուց խոսք ունեմ ամուսնուդ համար»:

Մենք շատ երիտասարդ էինք և ծարավ էինք աճելու և սովորելու հարցում (ինչպես և հիմա): Լիզան պատասխանել էր. «Ասա՛ ինձ, և ես կփոխանցեմ Ջոնին»:

Տարեց ծառայողն ասել էր. «Փոխանցի՛ր Ջոնին, որ եթե նա չքայլի Աստծուց տրված իշխանությամբ, ապա ինչ-որ մեկը կվերցնի այն իրենից և կօգտագործի իր դեմ»:

Երբ Լիզան ասաց ինձ այդ խոսքերը, դրանք թափանցեցին իմ ներսը, ասես սրի պես կտրեին սիրտս: Տարիների ընթացքում ես ականատես եմ եղել, թե որքան ճշմարիտ էին նրա խոսքերը ոչ միայն ինձ համար, այլև ցանկացած մարդու համար, ով Քրիստոսում է: Ես հաճախ տրտմել եմ՝ տեսնելով շատերին, ովքեր իրականում սիրում են Աստծուն, բայց միաժամանակ կապված են և վերահսկվում են հակառակվող ուժերի և իրավիճակների կողմից: Մեր Տեր Հիսուսը նրանց ազատ արձակելու համար հսկայական գին վճարեց, մինչդեռ նրանք շարունակում են մնալ կապանքների մեջ: Անբարենպաստ եղանակ, բնական աղետներ, հիվանդություններ, դիվական ազդեցություններ, դիմակայող հանգամանքներ. թվարկումը կարելի է անվերջ շարունակել: Այս ուժերը իշխում և տիրապետում են բարի մարդկանց, ովքեր իրականում թագավորներ և թագուհիներ են այս կյանքում, բայց նրանք անտեղյակ են, թե ովքեր են իրենք Քրիստոսում:

Եթե դու այն մարդկանցից ես, ովքեր ավելի շատ կառավարվել են, քան՝ թագավորել, ապա ես բարի լուր ունեմ քեզ համար. եթե սրտիդ մեջ

ընդունես Աստծո Խոսքը, որը մենք պարզաբանեցինք այս գլխում, ապա քո կյանքը կսկսի փոխվել: Այժմ դու գիտես քեզ պատկանող իշխանության և զորության մասին, ուստի կարող ես օգնել նրանց, ովքեր անտեղյակ կամ անօգնական են: Հիմա դու կարող ես արքայության հրաշալի կյանքը բերել այն մարդկանց կյանքի մեջ, ովքեր դրա կարիքն ունեն:

Հովհաննես առաքյալը շատ զորավոր հղում է կատարում նրանց, ովքեր Քրիստոսի մարմնի անդամներն են. «Նրանք, որ ասում են, թե ապրում են Աստծո մեջ, պետք է իրենց կյանքն ապրեն այնպես, ինչպես Քրիստոսն ապրեց» (Ա Հովհ. 2.6, NLT):

Այս նույն խոսքերը Հիսուսը հաստատեց՝ ասելով. «…ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհ. 20.21): Նա ցանկանում է, որ ինչպես Ինքը թագավորեց, այդպես էլ մենք թագավորենք: Երբ փոթորիկ եղավ ծովում, Հիսուսը սաստեց քամուն և ծովին, և դրանք հնազանդվեցին Նրան: Երբ անապատում գտնվող բազմությանը կերակրելու համար սնունդ էր անհրաժեշտ, Հիսուսը բազմացրեց այն քիչը, որ մարդիկ ունեին, և կերակրեց հազարավորների՝ վերջում ունենալով սննդի ավելի շատ մնացորդ, քան սկզբում կար: Երբ Հիսուսը չուներ նավակ ծովի մյուս ափն անցնելու համար, Նա քայլեց ջրի վրայով: Երբ հարսանիքի ժամանակ գինին վերջացավ, Նա ջուրը գինի դարձրեց: Հիսուսն Իր բերանից դուրս եկած խոսքով ստիպեց, որ թզենին չորանա: Նա բժշկեց Իրեն ձերբակալելու եկած հակառակորդի ականջը, որ կտրվել էր սրի հարվածից: Նա մաքրեց նրանց, ովքեր բորոտ էին, կույրին տեսնել տվեց, խուլին՝ լսել, կաղին՝ քայլել: Այս երկրային մարտահրավերներից ոչ մեկը խնդիր չէր Նրա համար, Ով *թագավորում էր կյանքում*:

Դիվային առաջնորդությամբ գործող մարդիկ Հիսուսին չէին վախեցնում. յուրաքանչյուր առճակատման ժամանակ Նա պատասխան ուներ՝ սաստելու նրանց հակառակության խոսքերը: Չար կառավարիչներն ի զորու չէին բռնել Նրան: Բարկացած ամբոխն անկարող էր Նրան ցած հրել անդունդի եզրից. Նա ուղղակի անցավ հենց նրանց միջով: Դիվահարներն ահ չէին ներշնչում Հիսուսին. Նա պարզապես ազատագրում էր նրանց: Այս ցանկը գրեթե անվերջ է: Եվ Հովհաննես առաքյալը, ընդհանրացնելով Հիսուսի գործերի մասին իր պատմությունը, նշում է. «Հիսուսն

ուրիշ էլ շատ նշաններ արեց իր աշակերտների առջև, որ գրված չեն այս Գրքում: …որոնք եթե մեկ-մեկ գրված լինեին, կարծում եմ թե աշխարհն էլ բավական չէր լինի այն գրված գրքերը տանելու» (Հովհ. 20.30, 21.25):

Հիսուս Քրիստոսը թագավորում էր կյանքում: Նա տիրում էր ամեն հակառակվող և դժվար իրավիճակների վրա: Նա Երկինքը բերեց երկիր: Նա օրինակ թողեց մեզ, որ մենք հետևենք: Եվ Նա ակնկալում է մեզանից, որ մենք կանենք անգամ ավելին. «Ճշմարտությունն այն է, որ նա, ով հավատում է Ինձ, կանի այն նույն գործերը, որ Ես արել եմ, և անգամ ավելի մեծ գործեր կգործի» (Հովհ. 14.12, NLT):

Սա հանգեցնում է մեզ հաջորդ տրամաբանական հարցերին. *ինչպե՞ս* ենք մենք թագավորում կյանքում, որտեղի՞ց է գալիս զորությունը:

3

ՁՈՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

«Բոլորը, ովքեր ընդունում են Աստծո առատ շնորհքը և ձրիաբար արդարանում Նրա առջև, *կիշխեն կյանքում* Քրիստոսի միջոցով»:

Հռոմեացիների 5.17, (TEV)

Ինչպես արդեն պարզեցինք, մենք կանչված ենք տիրելու այս կյանքում որպես թագավորներ և թագուհիներ: Կյանքը չպետք է իշխի մեզ, այլ մենք պետք է իշխենք կյանքում: Եվ այստեղ հարց է ծագում՝ *արդյո՞ք ես ունեմ զորություն կամ կարողություն այդ անելու համար*:

Շատ բարի, որպես օրինակ, ե՛կ քննենք Չիխուախուա ցեղատեսակի շան և Գրիզլի արջի վարքագծերը:

Չիխուախուաները փոքրիկ, նուրբ շներ են: Նրանք կարող են լինել համառ և անգամ անդրդվելի: Չգիտեմ՝ երբևէ նկատե՞լ ես այս շան պահվածքը ինչ-որ անծանոթի տեսնելիս: Եթե այդ անծանոթը դու լինես, նա առանց դադարի կհաչի, որպեսզի քեզ հեռացնի իր ենթադրյալ տարածքից: Նա կարող է նույնիսկ քո ոտնաթաթը կծոտել: Եթե դու նրան մեղմորեն մի կողմ հրես, նա համառորեն կշարունակի իր հարձակումը, որպեսզի պարտադրի քեզ հեռանալ: Բայց եթե դու հոգնես շան պահվածքից և սկսես մի լավ հարված հասցնել ու բարձր բղավել, Չիխուախուան վախեցած ու ամոթալի պարտություն կրած՝ կփախչի: Ինչո՞ւ: Որովհետև այդ փոքրիկ շունն անզոր է ազդելու չափահաս մարդու վրա:

Իսկ եթե Գրիզլի արջն է ցանկանում քեզ հեռացնել իր տարածքից, և եթե դու քեզ մոտ չունես մեծ տրամաչափի հրազեն, ապա մեծ խնդիր կունենաս: Արջը կարող է հեշտությամբ տապալել քեզ և խլել կյանքդ:

Մենք քաջատեղյակ ենք, որ կան ուժեր, որոնք չեն ցանկանում, որ մենք մեր ընթացքը հաջող ավարտենք: Եվ դրանց դեմ պայքարելիս գի-

տե՞նք արդյոք, որ իշխանություն ունենք այդ ուժերի վրա: Երբ գործը հասնում է այդ գերբնական հակառակորդների դեմ մարտնչելուն, ինչպե՞ս ենք վարվում՝ Չիխուախուայի՞, թե՞ Գրիզլի արջի նման: Որտեղի՞ց է գալիս տիրելու մեր զորությունը:

Պատասխանը կրկին գտնում ենք Հռոմեացիների 5.17-ում, որտեղ գրված է, որ մենք ի զորու ենք թագավորել (իշխել) Աստծո «առատ *շնորհքի*» պատճառով (իմ *«Արտասովոր կյանք»* գրքում ներկայացված է շնորհքի մանրամասն բացատրությունը, ուստի այստեղ ես կանդրադառնամ միայն ամենակարևոր կետերին):

ՄԵԾ ԽՋՈՒՄ

Հենց «առատ շնորհքի» հարցում է, որ Միացյալ Նահանգների ավետարանական քրիստոնյաների միջև գոյություն ունի *մեծ* խզում: 2009 թվականին մեր ծառայությունը հարցում անցկացրեց ԱՄՆ-ի տարածքում, որին մասնակցել էին հազարավոր վերստին ծնված, Աստվածաշնչին հավատացող, կիրակնօրյա եկեղեցական ծառայություններին հաճախող քրիստոնյաներ տարբեր հարանվանություններից և անկախ եկեղեցիներից:

Հարցման ընթացքում մարդկանց խնդրել էին տալ Աստծո շնորհքի երեք և ավելի բնորոշում, նկարագրություն: Հարցվողների ճնշող մեծամասնությունն Աստծո շնորհքը բնորոշել էր որպես՝1) փրկություն, 2) չվաստակած պարգև, 3) մեղքերի թողություն:

Ես անչափ ուրախ եմ, որ ամերիկացի քրիստոնյաները հասկանում են, որ մենք փրկված ենք շնորհքով և միայն շնորհքով: Փրկությունը չի գալիս այն ժամանակ, երբ մենք ցնցուղ ենք ընդունում կամ հաճախում ինչ-որ եկեղեցի, պահում կրոնական օրենքները կամ կատարում բավականաչափ բարի գործեր: Եփեսացիների 2.8,9-ում հստակ գրված է. «Որովհետև *շնորհքով* եք փրկված՝ հավատքի ձեռով, և սա ոչ թե ձեզանից է, այլ՝ *Աստծո պարգևն է*, ոչ թե գործերից, որ մեկը չպարծենա»: Ուրախալի է իմանալ, որ ավետարանական քրիստոնյաները լավ գիտակցում են, որ Աստծո շնորհքը հնարավոր չէ վաստակել կամ դրան արժանանալ, այլ միայն կարելի է ընդունել Գողգոթայում Հիսուս Քրիստոսի

կատարած զոհին հավատալու միջոցով:

Բայց նաև իսկական ողբերգություն է տեսնել, թե ինչպես են բարեպաշտ մարդիկ փորձում *վաստակել* Աստծո բարեհաճությունը: Ես ականատես եմ եղել սիրտ տրտմեցնող շատ ու շատ իրավիճակների, երբ հավատացյալ մարդիկ ապավինել են իրենց սեփական գործերին կամ վարքին, որպեսզի իրենց անձերը Աստծո առջև ճիշտ դիրքում կանգնեցնեն:

Իսկական ողբերգություն է տեսնել, թե ինչպես են բարեպաշտ մարդիկ փորձում վաստակել Աստծո բարեհաճությունը:

Կապ չունի, թե հասարակության համար որքան գովելի և բարի մարդ ես, Եփեսացիների 2.8,9-րդ խոսքերը մատնացույց են անում, որ դու երբեք չես կարող քո սեփական ճիգերով փրկել քեզ մարդկության վերահաս դատաստանից: Փրկությունը հնարավոր է ստանալ միայն հավատքով, քանի որ դա Աստծո պարգևն է մեզ՝ տրված Իր Որդու մահվան և հարության շնորհիվ: Ցավալի է նաև տեսնել մարդկանց, ովքեր հավատքով ընդունել են հավիտենական փրկության Աստծո պարգևը, բայց այնուհետև շարունակում են ապրել այնպես, կարծես իրենք կարող են վաստակել Տիրոջ շնորհքը սեփական գործերի միջոցով: Այս հավատացյալները կարծում են, թե իրենք պետք է անխտիր երկարատև աղոթքներ անեն, հաճախակի ծոմի մեջ լինեն, շատ բարի գործեր կատարեն կամ այլ քրիստոնեական գործունեության մեջ ներգրավված լինեն: Բայց տեսե՛ք, որ Պողոս առաքյալը հարկադրված էր նկատողություն անել Գաղատիայի եկեղեցուն հենց այս վրիպման համար. «Ենթադրում եմ, որ դուք երբեք չեք ձգտել սրան, բայց սա հենց այն է, ինչ կատարվում է: Երբ փորձում եք ապրել ձեր սեփական կրոնական ծրագրերի և մտահղացումների համաձայն, դուք կտրվում եք Քրիստոսից՝ ընկնում շնորհքից» (Գաղատ. 5.4, MSG): Շատ տխուր է տեսնել այդքան շատ բարեպաշտ քրիստոնյաների, ովքեր այսօր հայտնվել են նույն թակարդի մեջ:

Հարցումից պարզվել էր նաև, որ ԱՄՆ-ի քրիստոնյաներն ընդհանուր առմամբ գիտեն, որ Աստծո շնորհքով են մեղքերը ջնջված: Եվ Եփեսացիների 1.7-ը հաստատում է այս հիասքանչ ճշմարտությունը. «Որով ունենք փրկություն, Նրա արյունով՝ մեղքերի թողություն՝ Իր շնորհքի մեծության

չափով»: Աստծո ձրի պարգևն է, որ քավում է մեր մեղքերը հավիտյան: Փա՜ռք Աստծուն:

Տպավորությունն այնպիսին է, որ շատ ամերիկացի հավատացյալներ ամուր հիմնված են հետևյալ հիմնարար ճշմարտությունների վրա՝ Աստծո շնորհքը ներառում է փրկությունը, մեղքերի թողությունը և հանդիսանում է անվաստակելի պարգև: Անկասկած՝ Ավետարանի ծառայողները հրաշալի գործ են կատարել՝ շեշտելու համար շնորհքի այս երեք կարևոր հատկանիշները, և ես հավատում եմ, որ Աստված այս առումով շատ գոհ է:

Սակայն այս նույն հարցման ընթացքում բացահայտվել էր ցավալի իրողություն: Հազարավոր հարցվողների միայն երկու տոկոսն է պատասխանել, որ «շնորհքը Աստծո զորությունն է»: Մինչդեռ, ահա թե ինչպես է Աստված նկարագրում Իր շնորհքը.

> «*Իմ շնորհքն* այն է, ինչը հարկավոր է քեզ, որովհետև *Իմ զորությունը* մեծ է, երբ դու տկար ես» (Բ Կորնթացիների 12.9, TEV):

Եթե դու ընթերցես այս սուրբգրային համարը Աստվածաշնչի այն տարբերակում, որում Հիսուսի խոսքերը նշված են կարմիրով, իսկ մյուս բոլորը՝ սևով, ապա կնկատես, որ վերոնշյալ խոսքերը սև չեն, այլ՝ կարմիր: Ու թեև դրանք վկայակոչվում են Պողոս առաքյալի կողմից, այնուամենայնիվ այդ խոսքերը նրանը չեն. դրանք հենց Տիրոջ խոսքերն են:

Աստված շնորհքը բնութագրում է որպես Իր զորություն: Այն դեպքում, երբ հարցման համաձայն՝ ԱՄՆ-ի քրիստոնյաների միայն 2 տոկոսն է սա իմանում և հասկանում (ճշգրիտ տվյալը 1.9 տոկոս էր, ինչը կազմում է ավելի պակաս, քան երկու հոգի 100 հավատացյալի հաշվարկով): Մեր Ամենակարող և Ամենակալ Աստված շնորհքը նկարագրում է որպես Իր զորություն, մինչդեռ 100 քրիստոնյայից հազիվ երկուսն են գիտակցում դա: Սա չափազանց մտահոգիչ է:

ՇՆՈՐՀՔ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

«*Տկար*» բառը, որն օգտագործված է Բ Կորնթացիների 12.9-րդ խոսքում, նշանակում է «անկարողություն»: Այլ խոսքերով՝ Աստված ասում է. «Իմ շնորհքը (զորությունը) բավական է, երբ դու բախվում ես այնպիսի

իրավիճակների հետ, որոնց հարցերը լուծելը քո կարողությունից վեր է»: Պողոսը սա հաստատում է նաև մակեդոնացի հավատացյալների համար. «Բայց, եղբայրնե՛ր, իմացնում ենք ձեզ *Աստծո այն շնորհքը*, որ մակեդոնացիների եկեղեցիներին տրված է: Որովհետև *իրենց կարողության* չափ վկայում եմ և *կարողությունից էլ ավելի*...» (Բ Կորնթ. 8.1,3): Աստծո շնորհքը Մակեդոնիայի քրիստոնյաներին ընդունակ էր դարձրել գերազանցել իրենց սեփական կարողությունը: Այո՛, դա է շնորհքը՝ Աստծո զորությունը:

Ավելի վաղ Պողոսը միևնույն եկեղեցուն գրել էր. «Մեր հարաբերությունները ձեզ հետ կառուցվել են Աստծուց տրված ազնվության և անկեղծության վրա, *Աստծո շնորհքի զորության*, այլ ոչ թե մարդկային իմաստության վրա» (Բ Կորնթ. 1.12, TEV): Այստեղ դարձյալ շնորհքը ներկայացվում է որպես Աստծո զորություն:

Պետրոսը նույնպես Աստծո շնորհքը բնորոշում է միևնույն ձևով. «Շնորհք և խաղաղություն շատանա ձեզ վրա... Ինչպես որ Նրա աստվածային զորությունը [*շնորհքը*] շնորհեց մեզ այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է...» (Բ Պետր. 1.2,3): Դարձյալ *շնորհքը* նկարագրվում է որպես «Նրա աստվածային զորություն»: Պետրոսն ասում է, որ աստվածահաճո կյանքով ապրելու համար անհրաժեշտ ամեն բան հասու է Աստծո շնորհքի՝ զորության միջոցով, որը մենք ընդունեցինք հավատքի ձեռով:

Ե՛կ այն ավելի խորը հասկանանք՝ դիմելով հունարենի օգնությանը: Նոր կտակարանում շատ հաճախ որպես *շնորհք* գործածված է հունարեն *«charis»* բառը, որը Ջեյմս Սթրոնգն իր հեղինակավոր *«Աստվածաշնչի բացատրական բառարանում»* բնորոշում է որպես «պարգև, օգուտ, բարեհաճություն, ողորմածություն և առատաձեռնություն»: Եթե այս բնորոշումները զուգորդես Հռոմեացիների, Գաղատացիների և Եփեսացիների թղթերի որոշակի սուրբգրային համարների հետ, ապա հստակորեն կտեսնես շնորհքի այն բնորոշումը, որին քաջատեղյակ է ամերիկացի քրիստոնյաների մեծամասնությունը: Մինչդեռ Սթրոնգն այսքանով չի բավարարվում: Նա հաջորդիվ *շնորհքը* բնութագրում է որպես «աստվածային ազդեցությունը սրտի վրա և դրա արտացոլումը կյանքում:

Այս սահմանումից պարզ է դառնում, որ այն, ինչ կատարվում է

սրտում, ստանում է իր *արտաքին արտացոլումը*, որն էլ ընդգծում է շնորհքի զորությունը: Աստվածաշնչում ասվում է մեզ, որ երբ Բառնաբասը եկավ Անտիոքի եկեղեցի «և տեսավ Աստծո շնորհքի *ապացույցը*, ուրախացավ» (Գործք 11.23, NIV): Նա ոչ թե լսեց շնորհքի մասին, այլ տեսավ դրա ապացույցը: Նա տեսավ սրտի ներքին զորացումը, որն արտացոլվել էր այդ մարդկանց ապրելակերպում:

Այդ իսկ պատճառով Հակոբոսը գրում է. «…ցույց տուր ինձ քո հավատքը [շնորհքը] գործերից, և ես էլ ցույց կտամ քեզ իմ հավատքը [շնորհքը] իմ գործերից» (Հակոբ. 2.18): Ես *հավատքը* զուգակցեցի *շնորհք* բառի հետ, որովհետև մենք հավատքով ենք ընդունում Աստծո շնորհքը (տե՛ս Հռոմ. 5.2): Մեկ այլ խոսքով՝ Հակոբոսն ասում է. «Թո՛ւյլ տուր ինձ տեսնել զորության ապացույցը, որը ճշմարիտ ցուցիչն է այն բանի, որ դու իսկապես ստացել ես շնորհք հավատքի ձեռով»:

Աստվածաշնչյան բառերի Զոնդերվանի հանրագիտարանն այս նույնն է պնդում «*charis*» բառի մասին. «Շնորհքը դինամիկ ուժ է, որի ներգործությունն ավելին է, քան Աստծո առջև մեր դիրքի վրա ազդելը՝ մեզ արդարությամբ օժտելով: Շնորհքը ներգործություն ունի նաև մեր փորձառության վրա: Այն Աստծո գործուն աշխատանքն է մեզանում, որն օգնում է հաղթահարել մեր տկարությունը»:

Նոր կտակարանում շնորհքին առնչվող ամեն մի սուրբգրային համարն ամենայն ուշադրությամբ կարդալուց, բոլոր հնարավոր հունարեն բառարանները ժամերով ուսումնասիրելուց և սահուն հունախոս անձանց հետ զրուցելուց հետո *շնորհքի* իմ ընդհանուր սահմանումը մոտավորապես այսպիսին է՝

շնորհքն Աստծո անհատույց զորությունն է, որը մեզ տալիս է ընդունակություն՝ գերազանցելու մեր բնական կարողությունը:

ԻՆՉՈ՞Ւ Է ԴԱ ՑԱՎԱԼԻ

Ցավալի է, որ Միացյալ Նահանգներում քրիստոնյաների միայն երկու տոկոսն է գիտակցում Աստծո շնորհքի զորությունը: Միգուցե հարցնես. «Ինչո՞ւ է դա ցավալի»: Ես ուզում եմ ներկայացնել դա ենթադրյալ մի պատմությամբ:

Ենթադրենք՝ մենք որոշակի հետազոտություն ենք իրականացրել և հայտնաբերել ենք մի ցեղախումբ Աֆրիկայի հասարակածային մասում գտնվող ամայի տափաստանում: Այս ցեղախմբի մարդիկ մոտակա աղբյուրից քաղցրահամ ջուր վերցնելու համար ստիպված են ամեն օր երկու մղոն քայլել և այդ ջրի ծանր տարրաները կրելով՝ ջուր հասցնել իրենց ցեղի ժողովրդին:

Իսկ երբ սննդի կարիք են զգում, ապա այնպես չէ, որ կենդանիներն ուղղակի զբոսնում են նրանց բնակավայրում և ազդարարում. «Մենք ձեր ընթրիքն ենք. տեգահարեք մեզ»: Բնավ՝ ո՛չ. ցեղի որսորդները ստիպված են մեծ տարածություն կտրել-անցնել, որպեսզի որսան դրանց, իսկ այնուհետև վայրի վարազ կամ այծքաղ սատկեցնելուց հետո այդ ծանրաքաշ կենդանու մարմինը քարշ տալ ութից տասը մղոն՝ իրենց փոքր բնակավայրը հասցնելու համար:

Իսկ երբ անհրաժեշտ է լինում լրացնել ապրուստի այն պաշարները, որոնք անհնար է ձեռք բերել իրենց տափաստանային բնակավայրում, ապա ստիպված են լինում քայլել ավելի քան 35 մղոն դեպի մոտակա բնակավայրը և գնել կամ փոխանակել անհրաժեշտ պաշարները և, այդ ամենով հանդերձ, կտրել-անցնել միևնույն տարածությունը:

Բոլոր այս հանգամանքներն ուսումնասիրելուց հետո մենք որոշում ենք նրանց հոգսը թեթևացնելու համար մի լավ նվեր անել: Այո՛, մենք մտադիր ենք *բարեհաճություն* դրսևորել նրանց հանդեպ՝ լինելով *ողորմած* և *առատաձեռն* (շեղագիր բառերը Սթրոնգի թվարկած *շնորհքի* հատկանիշներն են): Եվ որոշում ենք նվիրել նրանց բոլորովին նոր «Լենդ Ռովեր» ամենագնաց մեքենա: Գնելով մեքենան՝ նավով փոխադրում ենք Աֆրիկա և հասցնում դա նրանց բնակատեղի: Գտնելով այդ փոքր ցեղախումբն ու նրա առաջնորդին՝ հրավիրում ենք նրանց տեսնել «Լենդ Ռովեր» ամենագնացը: Եվ, բնականաբար, լայն ժպիտները դեմքներիս հայտարարում ենք.

- Ահա՛, սա մեր նվերն է ձեզ:

Մեզանից մեկը նստում է ղեկին՝ առաջարկելով ցեղախմբի առաջնորդին զբաղեցնել առջևի ուղևորի համար նախատեսված նստատեղը, և սկսում ենք գործարկել մեքենան: Մենք երջանիկ բացականչում ենք.

- Առաջնո՛րդ, այս «Լենդ Ռովերը» հիասքանչ է: Այն ունի օդափոխման համակարգ, ուստի, եթե դրսում 108 աստիճան է, ըստ Ֆարենհեյթի, դուք

կարող եք ընդամենը սեղմել այս կոճակը և ջերմաստիճանի ցուցիչը կարգավորել 72-ի վրա, և վայելել օդի զով ջերմաստիճանը՝ չնայած դրսի կիզիչ արևի և տոթ եղանակի:

Այնուհետև մենք տեղեկացնում ենք նրան.

- Այս «Լենդ Ռովերն» ունի նաև ջեռուցման համակարգ: Ուստի, եթե դրսում ցուրտ լինի, սեղմելով այս կոճակը և ջերմաստիճանի ցուցիչը կարգավորելով 75-ի վրա՝ դուք կվայելեք օդի հաճելի ջերմությունը, անգամ եթե դրսում 40 աստիճանից բարձր ցուրտ լինի: Մենք այս «Լենդ Ռովերում» տեղադրել ենք նաև արբանյակային ռադիոընդունիչ: Գիտե՞ս, թե ինչ է դա նշանակում: Դա նշանակում է, որ դու, գտնվելով մեքենայի մեջ, կարող ես լսել ուղիղ հեռարձակումներ աշխարհի բոլոր ծայրերից: Հնարավոր է ռադիոընդունիչը կարգավորել Անգլիայում տեղակայված «Բիբի-Սի»-ի ուղիղ հեռարձակվող ռադիոալիքի վրա:

Առաջնորդն ուղղակի ապշած է:

- Բայց սա դեռ ամենը չէ, առաջնո՛րդ,- շարունակում ենք մենք: - Այս «Լենդ Ռովերում» կա նաև «DVD» ձայնարկիչ: Հանելով մի քանի տեսասկավառակներ՝ դրանցից մեկը տեղադրում ենք ձայնարկիչի մեջ, սեղմում ենք միացման կոճակը, և առաջնորդը զարմանում է՝ տեսնելով էկրանին ցուցադրվող գունավոր ֆիլմը:

- Սակայն սա էլ դեռ վերջը չէ,- շարունակում ենք մենք: - Այս «Լենդ Ռովերում» կա նաև «CD» ձայնարկիչ:

Մենք տեղադրում ենք փառաբանության մի ձայնասկավառակ, և առաջնորդը հիանում է մեքենայից լսվող փառաբանության գեղեցիկ երաժշտությամբ:

Մենք երկուսով դուրս ենք գալիս «Լենդ Ռովերից», և առաջնորդը հարցնում է.

- Ի՞նչ է հարկավոր տալ ձեզ այս հիասքանչ նվերի դիմաց:

- Ոչի՛նչ,- վստահեցնում ենք նրան: - Դուք երբեք ի վիճակի չեք լինի գնել այն մեզանից: Սա մեր անհատույց նվերն է քեզ և քո ցեղախմբին: Մենք ձեզ շատ ենք սիրում:

Առաջնորդն ու նրա ցեղախումբը հայտնում են իրենց երախտագիտությունը, և մենք հեռանում ենք: Սակայն ամիսներ անց հայտնի է դառնում, որ նրանք շարունակում են ամեն օր 4 մղոն ճանապարհ անցնել

խմելու ջրի համար, շարունակում են որս անելու համար երկար տարածություն կտրել՝ իրենց ուսերի վրա տանելով սպանված կենդանիների ծանրաքաշ մարմինները, ինչպես նաև նախկինի պես 35 մղոն հոգնատանջ ճանապարհ անցնել՝ մոտակա բնակավայրում անհրաժեշտ այլ պաշարներ ձեռք բերելու նպատակով: Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ մենք անտեսել ենք տեղեկացնել նրանց, որ այդ «Լենդ Ռովերի» առաջնային դերը *փոխադրումն* է: Մենք առաջնորդին ցույց ենք տվել ամեն ինչ, բացի ամենակարևոր հատկանիշներից մեկը. այս «Լենդ Ռովերը» կփոխադրի ձեզ ցանկացած վայր, ուր դուք կկամենաք, և ձեր բեռները կտեղափոխի ձեր փոխարեն:

Նմանապես շատ քրիստոնյա առաջնորդներ արևմտյան քրիստոնյաներին անտեսել են տեղեկացնել, որ Աստծո շնորհքի առաջնային ֆունկցիոնալ նշանակությունը *Նրա զորությունն է*:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Միգուցե չհամաձայնես ինձ հետ՝ ասելով. «*Շնորհքի* առաջնային ֆունկցիոնալ նշանակությունը Աստծո զորությո՞ւնն է: Ինչպե՞ս կարող ես նման պնդում անել»:

Վերջերս, երբ աղոթում էի, Տերն ինձ մի հարց ուղղեց, որը մտորելու առիթ տվեց. *«Որդի՛ս, ինչպե՞ս եմ Ես ներկայացնում շնորհքը Նոր կտակարանում»*: Լինելով տասից ավելի գրքերի հեղինակ՝ այդ հարցն, իրոք, ինձ հետաքրքրեց, քանի որ երբ իմ որևէ գրքում մի նոր տերմին եմ ներկայացնում, որին ընթերցողներից շատերը հնարավոր է տեղյակ չլինեն, ապա ես պարտադիր տալիս եմ դրա առաջնային նշանակությունը: Այդ նույն գրքի շարունակության մեջ ես կարող եմ խոսել երկրորդային իմաստների մասին, սակայն չափազանց կարևոր է ցանկի հենց սկզբում ընդգծել տվյալ տերմինի հիմնական նշանակությունը:

Օրինակ՝ եթե «Լենդ Ռովերի» մասին տեղեկացնելու նպատակով ես նամակ գրելիս լինեի այդ առաջնորդին, ապա առաջին իսկ պարբերության մեջ կազդարարեի.

«Հարգելի՛ առաջնորդ, մենք ձեզ նվիրում ենք բոլորովին նոր «Լենդ Ռովեր», որի առաջնային ֆունկցիան փոխադրումն է: Այսուհետև քո ժողովր-

դի մարդիկ ստիպված չեն լինի ամեն օր երկար քայլել և իրենց ուսերին կրել ջրի ծանր տարրաները. ձեզանից որևէ մեկը կարող է մեքենան վարելով հասնել այնտեղ և ջրի անհրաժեշտ պաշարը տեղափոխել բնակատեղի: Այսուհետև քո ժողովրդի մարդիկ հարկադրված չեն լինի բազում մղոններ անցնել և սպանված որսը քարշ տալ բնակավայր. ինչ-որ մեկն ուղղակի կարող է մեքենայով հասնել սպանված որսի վայրը և տեղափոխել այն: Ավելին՝ քո մարդիկ ստիպված չեն լինի քայլել 35 մղոն՝ մոտակա բնակավայրից հարկավոր պաշարները ձեռք բերելու համար, այլ այդ ամենը տասն անգամ ավելի արագ կկարողանաք փոխադրել մեքենայով»:

«Լենդ Ռովերի» առաջնային նշանակության մասին շատ կարևոր է գրել հենց սկզբում, որովհետև առաջնորդը և նրա ժողովուրդը նախկինում երբեք ավտոմեքենա չեն տեսել:

Նամակի հաջորդ պարբերությունում կտեղեկացնեի օդափոխման և ջեռուցման համակարգերի մասին, ապա արբանյակային ռադիոընդունիչի և «DVD», «CD» ձայնարկիչների մասին: Իսկ նամակը կեզրափակեի՝ նշելով, որ դա նվեր է: Ավտոմեքենայի առաջնային ֆունկցիոնալ նշանակության մասին ես առաջնորդին կհայտնեի առաջին իսկ պարբերությունում:

Այժմ սա մտապահելով՝ ե՛կ վերադառնանք Տիրոջ՝ ինձ ուղղված հարցին. *«Ինչպե՞ս եմ Ես ներկայացնում շնորհքը Նոր կտակարանում»*:

Ես Տիրոջը պատասխանեցի՝ չգիտեմ: Ապա նստելով համակարգչիս մոտ՝ բացեցի աստվածաշնչյան համաբարբառը և սկսեցի պարզել, թե ինչպես է Աստված ներկայացնում շնորհքը Նոր կտակարանում: Հովհաննեսի 1.16-ում կարդում ենք. «Եվ Նրա [Հիսուսի] լիությունից մենք ամենքս առանք շնորհք շնորհքի տեղ»:

Ուշադրությո՛ւն դարձրու, որ Հովհաննեսն օգտագործում է «շնորհք շնորհքի տեղ» արտահայտությունը: Ես ունեմ Աթենքում բնակվող հույն ընկեր. նա Աստծո ծառայող է: Բացի նրանից, որ հունարենը նրա մայրենի լեզուն է, նա տարիներ շարունակ ուսումնասիրել է նաև հին հունարենը: Ընկերս պարզաբանեց ինձ, որ առաքյալն իրականում գրում էր, որ Աստված տվել է մեզ «շնորհքի գերազանց առատությունը»: Մեկ ուրիշ խոսքով՝ առաքյալը հայտնում է մեզ, որ շնորհքի ավելցուկը կամ առատությունը կայանում է նրանում, որ այն մեզ տալիս է Հիսուս Քրիստոսի լիությունը: Արդյոք լսեցի՞ր սա: Հենց Իր՝ Հիսուս Քրիստոսի լիությունը: Դա վկայում է կարողության և զորության մասին:

Ցանկանում եմ համոզված լինել, որ դու ըմբռնում ես այն, ինչի մասին խոսվում է այստեղ: Պատկերացրու՝ ես մոտենում եմ միջին կարգի մի թենիսորդի, ով իր տեղական ակումբում ընդամենը երրորդ կարգի խաղացող է: Ես ասում եմ նրան. «Այժմ մենք ունենք գիտական միջոցներ, որոնց օգնությամբ ի վիճակի ենք քեզ տալ Ռոջեր Ֆեդերերի լիությունը՝ նրա ամբողջ ընդունակությունը» (եթե թենիսից այդքան էլ գլուխ չես հանում, ասեմ, որ Ֆեդերերն այս սպորտաձևի պատմության մեջ մեծագույն խաղացողներից մեկն է): Ի՞նչ ես կարծում՝ ինչպիսի՞ն կլիներ այս երրորդ կարգ ունեցող թենիսորդի պատասխանը: Բնականաբար նա կասեր. «Ի՜նչ հրաշալի է: Ես ուզում եմ դա հենց հիմա: Ի՞նչ պետք է անեմ դա ստանալու համար»: Եվ ի՞նչ տեղի կունենար, երբ մենք տայինք նրան Ռոջեր Ֆեդերերի լիությունը: Հավանաբար կռահեցիր՝ նա կհաղթեր իր ակումբի առաջնությունը, ապա կհայտարարվեր և լավագույնը կճանաչվեր Միացյալ Նահանգների «Բաց առաջնությանը», իսկ այնուհետև ուժեղագույնի կոչումը կնվաճեր Ուիմբլդոնի մի քանի մրցաշարերում:

Այժմ ենթադրենք՝ ես մոտենում եմ նահանգային համալսարանի ճարտարապետական ֆակուլտետի նորաթուխ ուսանողի և ասում նրան. «Մենք ունենք գիտական միջոցներ, որոնք կարող են թույլ տալ, որպեսզի քեզ փոխանցենք Ֆրենկ Լլոյդ Ռայթի լիությունը, այսինքն՝ նրա ողջ կարողությունը»: Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ կպատասխաներ մեզ այդ երիտասարդը: Բնականաբար կբացականչեր. «Այո՜, ես ուզում եմ դա հենց հիմա»: Եվ ի՞նչ կկատարվեր այս ուսանողի հետ, երբ մենք այդ միջոցները կիրառեինք. նա կլքեր համալսարանը և անմիջապես ձեռնամուխ կլիներ իր բազմախոստում կարիերային:

Այս ամենը լավ սերտելու համար բերեմ ևս մեկ օրինակ. ենթադրենք՝ ես մոտենում եմ մի ձախողակ գործարարի և ասում նրան. «Մենք ունենք գիտական միջոցներ, որոնց օգնությամբ կարող ենք քեզ տալ Բիլ Գեյթսի լիությունը, այսինքն՝ նրա ողջ ընդունակությունը»: Ի՞նչ ես կարծում՝ ինչպիսի՞ն կլիներ այս ձախողակ գործարարի արձագանքը: Նա կաղաղակեր. «Ես ցանկանում եմ դա: Եկե՛ք կիրառենք դա»: Եվ ինչպե՞ս կվարվեր նա Բիլ Գեյթսի ողջ ընդունակությունը ստանալուց հետո: Իհարկե, կսկսեր մտածել, թե ինչպես ստեղծի նոր արտադրանք և կատարի գործարար ներդրումներ, որոնց մասին նա նախկինում երբևէ չէր խորհել:

Սակայն շնորհքը մեզանից ոչ մեկին չի տվել Ռոջեր Ֆեդերերի, Ֆրենկ Լլոյդ Ռայթի կամ Բիլ Գեյթսի լիությունը: Դա կլիներ անչափ փոքր շնորհք: Ո՛չ, Աստծո շնորհքը մեզ տվել է Հիսուս Քրիստոսի լիությունը: Ի վիճակի՞ ես արդյոք ըմբռնել սա: Դա նշանակում է կարողություն: Դա նշանակում է զորություն:

Աստծո շնորհքը մեզ տվել է Հիսուս Քրիստոսի լիությունը:

Հետևաբար, Աստված Նոր կտակարանում շնորհքը չի ներկայացնում միայն ձրի պարգև, թեև ես հավիտյան երախտապարտ եմ, որ շնորհքը Նրա ձրի պարգևն է: Եվ ոչ էլ Աստված շնորհքը ներկայացնում է որպես մեր մեղքերի քավություն, թեև ես հավիտյան շնորհակալ եմ, որ Նրա շնորհքը ջնջում է մեր մեղքերը: Բայց Աստված շնորհքը ներկայացնում է նաև որպես զորություն, որի միջոցով մեզ տրվում է Հիսուս Քրիստոսի լիությունը:

Նախորդ գլխից դու կարող ես մտաբերել Պետրոս առաքյալի խոսքերը, որ Աստծո շնորհքը մեզ դարձնում է «աստվածային բնության հաղորդակիցներ» (տե՛ս Բ Պետր. 1.2-4): Իսկ բնություն (էություն) բառը բնութագրում է անձի հիմնական հատկությունները: Ուստի՝ Աստծո շնորհքն անհատույց կերպով մեզ տալիս է հենց Հիսուսի հիմնական հատկությունների լիությունը: Եվ սա է պատճառը, որ Հովհաննես առաքյալը գրում է. «…ինչպես Նա է, այդպես էլ մենք ենք այս աշխարհում» (Ա Հովհ. 4.17): Կարո՞ղ ես արդյոք ընկալել այս խոսքերի մեծությունը:

Սա ընդգծում է կյանքում թագավորելու մեր զորությունն ու ներուժը: Աստծո շնորհքը վերստեղծեց մեզ, որ մենք լինենք ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն է: Եվ շնորհքը մեզ զորացրեց, որ մենք ապրենք այնպես, ինչպես Նա ապրեց: Մենք բառացիորեն Քրիստոսում ենք: Մենք Նրա մարմինն ենք: Մենք միասին Քրիստոսն ենք երկրի վրա: Մենք քրիստոնյաներ ենք: Դրա համար էլ Հովհաննեսը համարձակորեն գրում է. «Նրանք, որ պնդում են, թե ապրում են Նրանում, պետք է վարվեն, ինչպես Հիսուսը վարվեց» (Ա Հովհ. 2.6, NIV): Թո՛ւյլ տուր, որ այս խոսքերը թափանցեն սրտիդ խորքը. մենք պետք է ապրենք ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն ապրեց այս երկրի վրա: Սա սուրբգրային առաջարկ չէ, այլ՝ սուրբգրային պատվեր:

4

ԻՆՉՊԵՍ ՀԻՍՈՒՍԸ ՎԱՐՎԵՑ

«Նա, ով պնդում է, թե ապրում է Նրանում, պետք է վարվի այնպես, ինչպես Հիսուսը վարվեց»:

Ա Հովհաննես 2.6, (NIV)

Եթե մենք պետք է վարվենք Հիսուսի պես, ապա մեզ հարկավոր է իմանալ, թե ինչպե՞ս վարվեց Նա: Հիսուսը երկրի վրա վարվեց զարմանալի բարեպաշտությամբ և մաքրությամբ: Այս աշխարհի կրքերը չկառավարեցին Նրան, այլ Նա իշխեց անբնական և պիղծ ցանկությունների վրա: Ինչպես Պողոս առաքյալն է հայտնում մեզ Աստծուն ընդունելի ծառայության մասին.

> «Մաքրենք մեր անձերն *ամեն ինչից*, որ պղծում է մարմինն ու հոգին, և լինենք *կատարելապես սուրբ*» (Բ Կորնթացիների 7.1, TEV):

Լսո՞ւմ ես նրա խոսքերը՝ «մաքրենք մեր անձերը»: Գիտե՞ս նա չի ասում. «Աստված պատրաստվում է մաքրել ձեզ»: Իսկ ավելի հստակ՝ Հիսուսի արյունը մաքրում է մեր բոլոր մեղքերը. դա փրկագնման արդյունքն է: Եվ առաքյալն իր խոսքում շեշտում է մեր սրբացումը: Այսինքն՝ խոսքն այն մասին է, թե մենք՝ որպես հավատացյալներ, ինչպես պետք է ապրենք և վարվենք: Առաքյալը խոսում է արտաքին կերպարանափոխման մասին, որը պետք է տեղի ունենա մեր փրկագնման արդյունքում:

Ես ուզում եմ, որ դու վերոհիշյալ համարում ուշադրություն դարձնես նաև *ամեն ինչ* բառին: Մենք պետք է մաքրենք մեր անձերը ոչ թե *որոշ բաներից* կամ էլ, անգամ, *շատ բաներից*, որոնք պղծում են մեր մարմինն ու հոգին, այլ՝ ամեն ինչից: Մեզանից պահանջվում է այնպես մաքրել մեր անձերը, որ լինենք *կատարելապես սուրբ*: Պետրոսը հաստատում է սա՝ գրելով. «Եղե՛ք սուրբ այն ամենում, ինչ անում եք, ինչպես Աստված,

Ով կանչեց ձեզ, սուրբ է» (Ա Պետր. 1.15, TEV): Եթե չմեղմենք այս խոսքերի իմաստը (ինչպես ոմանք անում և սովորեցնում են), ապա Աստծուն ընդունելի կերպով ծառայել նշանակում է վարվել այն նույն բարեպաշտությամբ, ինչպես Հիսուսը վարվեց: Իսկ ինչպե՞ս մենք կարող ենք դա անել՝ Աստծո շնորհքի միջոցով:

Թո՛ւյլ տուր մի օրինակ բերել: Երբ ես ավագ դպրոցում էի սովորում, շատ «արդյունավետ» մեղավոր էի: Ի՞նչ է դա նշանակում. իմ էությունը ցանկանում էր մեղք գործել, և ես դա անում էի բավականին արդյունավետ կերպով:

Երբ պատանի էի, մի օր հայրս ինձ և փոքրիկ քրոջս հարցրեց, թե արդյոք չե՞նք ցանկանում գնալ քաղաքային կինոթատրոն և դիտել *«Տասը պատվիրաններ»* կոչվող ֆիլմը՝ Չարլտոն Հեսթոնի գլխավոր դերակատարմամբ: Իմ հայրենի քաղաքում, որն ուներ երեք հազար բնակիչ, կար միայն մեկ կինոթատրոն: Այն չէր ցուցադրում միաժամանակ 15 կինոնկար, այլ ցուցադրվում էր միայն մեկ ֆիլմ: Իսկ մենք չունեինք «X box», «Wii» համակարգերի խաղեր, լայնէկրան հեռուստացույցներ կամ մեր օրերում հասանելի հաղորդակցության մնացյալ բոլոր ձևերը. կային միայն հասարակ, փոքր էկրանով գունավոր հեռուստացույցներ: Ուստի, երբ ինչ-որ մեկն առաջարկում էր վճարել իմ փոխարեն մեծ էկրանին որևէ ֆիլմ դիտելու համար, ես միայն ուրախ էի լինում: Այնպես որ ցնծությամբ համաձայնեցինք գնալ:

Երբ կինոթատրոնում նստած դիտում էինք այս ֆիլմը, հանկարծ հայտնվեց այն տեսարանը, երբ գետինը բացվում և կուլ է տալիս Դաթանին ու նրա բոլոր չար համախոհներին, ովքեր հակառակվել էին Մովսեսին: Գետինը նրանց ողջ-ողջ կուլ տվեց՝ իջեցնելով նրանց միանգամից դժոխք: Եվ ես՝ որպես «արդյունավետ» մեղավոր, այս տեսարանը տեսնելուց հետո, սկսեցի խելագարի պես ապաշխարել: Մտաբերելով իմ բոլոր չար և պիղծ արարքները՝ Աստծուց ներողություն էի խնդրում և խոստանում, որ դրանցից ոչ մեկն այլևս չեմ գործի: Ես լքեցի այդ կինոթատրոնը լիովին փոխված: Բայց դա տևեց ընդամենը մեկ շաբաթ, որից հետո ես կրկին վերադարձա իմ նախկին մեղավոր վարքին: Ինչո՞ւ. ես ունեի *ապաշխարություն*, բայց՝ ոչ *շնորհք*:

Տարիներ անց իմ ընկերներից մեկը, ով մեր համալսարանի տղանե-

րի հանրակացարանից էր, ցույց տվեց ինձ ճամբարային հավաքույթների գրքույկը չորս հոգևոր օրենքների մասին:

Չորրորդ հոգևոր օրենքը կարդալուց հետո ես ընդունեցի Հիսուս Քրիստոսին որպես իմ Տեր և Փրկիչ: Այդ պահին ես դարձա Աստծո զավակ: Բայց ես շարունակում էի ապրել այն նույն մեղսալի կյանքով, ինչպես ապրել էի մինչև Քրիստոսին ընդունելը: Դա ուսուցման և աստվածաշնչյան գիտության բացակայության պատճառով էր, քանի որ ես տեղյակ չէի այն զորության մասին, որն այժմ հասանելի է ինձ:

Անցան տարիներ: Մի օր, երբ ընթերցում էի Աստվածաշունչը, սուրբգրային մի համար, որը ես նախկինում կարդացել էի մի քանի անգամ, կարծես դուրս թռավ էջից. «Հետևե՛ք… սրբությանը, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (Եբր. 12.14): Այս խոսքերը հարվածեցին ինձ ասես մեկ տոննա աղյուսի ուժով: «*Օհո՜*,- մտածեցի,- *ես ցանկանում եմ տեսնել Աստծուն, և այս խոսքն ասում է, որ դրա համար ես պետք է ապրեմ սուրբ կյանքով*»: Եվ, դժբախտաբար, սա ճիշտ չընկալելով՝ դարձա օրենքի մոլի կատարող: Սկսեցի շուրջս եղող մարդկանց ճնշել իմ այս մոտեցմամբ: Ես բռնադատում էի նրանց «ապրել սուրբ», բայց չէի կարողանում զորացնել նրանց, որ անեն դա: Ես շարունակում էի սուրբ կյանքը կառուցել մարդկային կարողության և կամքի, բայց՝ ոչ Աստծո զորացնող ուժի վրա: Ես իմ կնոջ, ընկերներիս և, առհասարակ, բոլոր մտերիմներիս կյանքը դարձրել էի անտանելի:

Ավելի ուշ, երբ աղոթքի մեջ էի, Տերը խոսեց ինձ հետ. *«Որդի՛ս, սրբությունը քո մարմնի գործը չէ, դա Իմ շնորհքի արդյունքն է»*: Հենց սա էր խնդիրը: Սա այն էր, ինչը ես բաց էի թողել իմ տեսադաշտից: Ես եկա այն հասկացողությանը, որ շնորհքն Աստծո զորացնող ներկայությունն է իմ կյանքում և դա ինձ տալիս է կարողություն անելու այն, ինչն իմ սեփական ուժերով կատարել չեմ կարող. մաքրել իմ անձն ամեն ինչից, որ պղծում է մարմինը կամ հոգին, և լինել կատարելապես սուրբ: Սա է Աստծուն ծառայելու ընդունելի ձևը: Ահա թե ինչու է Եբրայեցիների թղթի հեղինակն ասում.

> «…Պինդ բռնենք այն *շնորհքը*, որով պաշտում ենք *հաճությամբ* Աստծուն…» (Եբրայեցիների 12.28):

Շնորհքը զորացնում է մեզ, որ Աստծուն պաշտենք հաճությամբ կամ Տիրոջն ընդունելի ձևով ծառայենք: Այն զորացնում է մեզ, որ մաքրենք

մեր անձերը այն ամենից, ինչից չենք կարող մաքրել մեր սեփական կարողությամբ:

Մեր անցկացրած համազգային հարցումից կարող ենք եզրակացնել, որ ԱՄՆ-ի քրիստոնյաների 98 տոկոսը իր սեփական ուժերով փորձում է ապրել բարեպաշտ կյանքով: Եվ միայն երկու տոկոսն է գիտակցում, որ շնորհքն Աստծո զորությունն է: Այսինքն՝ 98 տոկոսը չի կարող հաղորդակից լինել այս զորությանը, որովհետև պարզապես անտեղյակ է դրա առկայությունից: Մենք Աստծուց ամեն բան ստանում ենք հավատքով, բայց մենք չենք կարող հավատալ մի բանի, որի մասին ոչինչ չգիտենք: Պողոսը գրում է. «Ինչպես կարող են հավատալ, եթե նրանք չեն լսել ավետիսը» (Հռոմ. 10.14, TEV): Մենք կարող ենք օգուտ ունենալ միայն այն բանից, ինչի մասին տեղյակ ենք:

Վերադառնալով մեր աֆրիկյան ցեղախմբի պատմությանը՝ կարող ենք ասել հետևյալը՝ եթե ցեղախումբը չգիտի, որ «Լենդ Ռովերի» առաջնային ֆունկցիան փոխադրումն է, ապա նրանք չեն կարող ավտոմեքենան վարել: Նրանք անշուշտ կարող են ցատկոտել մեքենայի մեջ, օգտվել օդափոխման և ջեռուցման համակարգերից, «DVD» և «CD» ձայնարկիչներից, ռադիոընդունիչից, սակայն նրանց մտքով անգամ չի անցնի ավտոմեքենա վարել:

Մեկ անգամ ես գնեցի մի շատ հրաշալի լուսանկարչական ապարատ: Բացելով տուփը՝ հանեցի այն և սկսեցի լուսանկարել այնպես, ինչպես միշտ արել էի նախորդ լուսանկարչական ապարատներով. ես ուղղակի լուսանկարում էի իմ ուզած կադրերը (անկեղծ ասած՝ ինձ թվում է, որ այսպես է վարվում մարդկանց մեծամասնությունը, երբ ձեռք է բերում լուսանկարչական ապարատ):

Մի քանի տարի օգտագործելուց հետո մեկ օր ինձ հետաքրքրեց, թե այդ ինչպես է, որ ընկերս կարողանում է լուսանկարել այդքան գեղեցիկ գիշերվա տեսարան, բնապատկեր, գործողություն կամ էլ խոշորապլան նկարներ: Ես հարցրի նրան և գտա պատճառը. ընկերոջս լուսանկարչական ապարատն օժտված էր շատ հնարավորություններով, ինչպես և իմ լուսանկարչական ապարատը: Սակայն իմ անտեղյակ լինելու պատճառով չէի կարող օգտվել դրա առավելություններից: Գտնելով լուսանկարչական ապարատի ցուցումների ձեռնարկը՝ սկսեցի ուսումնասիրել, թե

ինչպես է պետք կիրառել իմ ֆոտոխցիկի բոլոր հնարավորությունները: Շուտով սկսեցի անհամեմատ ավելի գեղեցիկ կադրեր լուսանկարել:

Նույնը ճիշտ է նաև այն 98 տոկոսի համար: Նրանք չեն քննել «կյանքի ձեռնարկը»՝ Աստվածաշունչը, որպեսզի հայտնաբերեն, թե ինչ է ապահովել շնորհքը իրենց համար: Նրանք ուղղակի հետևում են մեծամասնությանը. վարվում են այնպես, ինչպես մեծամասնությունն է վարվում կամ սովորեցնում: Նրանք անտեղյակ են այն ներուժին, որով օժտված են, և որը հեշտությամբ սահմանափակում են:

Ի՞նչ է կատարվում, երբ մենք փորձում ենք մեր սեփական ուժերով ապրել սուրբ կյանքով: Երկուսից մեկը՝ կա՛մ դառնում ենք կեղծավոր պատվիրան պաշտողներ (խոսելով միակ ճիշտ ձևի մասին, բայց ներքուստ և գաղտնաբար ապրելով բոլորովին այլ կերպ), կա՛մ շարունակում ենք մեր մեղանչական կենսակերպը՝ ամուր կառչելով այն ոչ աստվածաշնչյան համոզմունքից, թե իբրև «շնորհքը ծածկում է բոլոր մեղքերը, որը ես նախընտրել եմ շարունակ գործել»: Այս դեպքում մենք տեսնում ենք, որ «ապրել, ինչպես Հիսուսն ապրեց» պատվերը լոկ գեղեցիկ, բայց անիրատեսական նպատակ է:

Այս մտածելակերպից դրդված՝ որոշ հավատացյալներ և ուսուցիչներ հայտնագործել են մի խելահեղ ուսմունք. «Հիսուս Քրիստոսի փրկագնումը դարձնում է մեզ Աստծո զավակներ, թեև մենք շարունակում ենք մնալ մեղավորներ, որը բնորոշ է մեր մարդկային էությանը»: Սխալմամբ կարծում ենք, թե կապանքների պատճառով մենք ստիպված ենք ապրել այնպես, ինչպես մնացյալ կործանվող մարդկությունը, ուստի և մեր անբարեպաշտ ու ցանկասիրական վարքը ներվում և ծածկվում է: Դա հավատացյալին բերում է խաղաղության կեղծ զգացում:

Բայց սա ճշմարտությունը չէ և սրա մասին չի հռչակում Ավետարանը: Բարի լուրն այն է, որ Հիսուսը ոչ միայն վճարեց պահանջվող գինը՝ մեզ մեղքի պատժից ազատելու համար, այլ նաև Նա հավասարապես վճարեց պահանջվող գինը՝ մեզ մեղքի իշխանությունից ազատելու համար: Սրա մասին են վկայում Պողոսի խոսքերը. «Որովհետև մեղքը չի տիրի ձեզ վրա, որովհետև օրենքի տակ չեք, այլ՝ շնորհքի տակ» (Հռոմ. 6.14): Օրենքը կարող է միայն սահմանափակել մարդկանց: Իսկ շնորհքն այն զորությունն է, որն ազատում է մեզ նրանից, ինչից մենք մեր սեփական ուժերով

չենք կարող ազատվել, այսինքն՝ մեղքից: Ահա թե ինչու է Պողոսը հորդորում Կորնթոսի քրիստոնյաներին. «Աղաչում ենք ձեզ, որ ընդունեցիք Աստծո շնորհքը, թույլ չտաք, որ այն զուր լինի» (Բ Կորնթ. 6.1, TEV):

Պողոսը չի խոսում այն շնորհքի զուր լինելու մասին, որն ուսուցանվել է արևմտյան եկեղեցիներում: Այդ տեսակի շնորհքը նման է հետևյալին. «Ես գիտեմ, որ չեմ ապրում այնպես, ինչպես պետք է ապրեմ, բայց դա խնդիր չէ, որովհետև ես փրկված եմ և Աստծո շնորհքի տակ եմ»: Շատ դեպքերում դա ավելի հեռուն է գնում, ինչպես որ որոշ հավատացյալներ ասում են. «Ես կարող եմ անել՝ ինչ ցանկանամ, որովհետև իմ փրկությունը հիմնված է ոչ թե իմ գործերի վրա, այլ նրա վրա, թե ինչ է Հիսուսն արել ինձ համար: Ես շնորհքի տակ եմ»: Ստացվում է այնպես, որ այս շնորհքի պարագայում չկա բարեպաշտ կյանքով ապրելու դրդապատճառ: Մի՞թե այս շնորհքի մասին է հորդորում Պողոսը՝ զգուշացնելով, որ հանկարծ զուր տեղը չընդունենք: Իհարկե, ո՛չ: Այս մտածելակերպը Աստծո շնորհքի նպատակի և զորության կոպիտ թյուրըմբռնում է:

Մինչդեռ, երբ մենք հասկանում ենք, որ շնորհքը Աստծո զորացնող ներկայությունն է, որը տալիս է մեզ կարողություն անելու այն, ինչը մենք չենք կարող անել մեր սեփական ուժերով, այն է՝ մաքրել մեր անձերն ամեն ինչից, որ պղծում է մարմինը կամ հոգին, և լինել կատարելապես սուրբ: Եվ միայն այդ ժամանակ է հնարավոր ըմբռնել, թե ինչպես մենք կարող ենք այն զուր տեղն ընդունել:

Ենթադրենք՝ մենք որոշում ենք տասը տարի անց գնալ և ստուգել, թե արդյոք ամեն բան կարգին է այդ աֆրիկյան ցեղախմբի հետ: Հասնելով այն նույն վայրը, ուր թողել էինք «Լենդ Ռովերը», զարմանալիորեն պարզում ենք, որ ավտոմեքենան դեռևս կայանված է ճիշտ նույն տեղում: Փոշին և կեղտը ծածկել են այն, և շուրջբոլորը խոտ է աճել: Մենք ուժով բացում ենք դուռը և նկատում, որ մղոնաչափը ցույց է տալիս այն նույն թիվը, ինչ տասը տարի առաջ էր: Մի՞թե այդ ժամանակ մեկս մյուսին չէինք ասի. «Այո՜, նրանք զուր տեղն ընդունեցին այն նվերը, որը մենք տվեցինք նրանց տասը տարի առաջ»:

Այս ցեղախմբի մարդիկ հնարավոր է երգեր գրած լինեն «Լենդ Ռովերի» մասին՝ որպես «ձրի պարգև» կամ նույնիսկ դրա մասին համոզիչ պատգամներ հռչակած լինեն միմյանց: Նրանք միգուցե պատսպարվել են այդ

մեքենայի ներսում, երբ անձրև է հորդացել, երգեր են գրել և համոզիչ ուղերձներ սովորեցրել այն մասին, թե ինչպես են իրենք մեքենայի ծածկի տակ գտնվել: Բայց փաստը մնում է փաստ, որ նրանք այդպես էլ չեն վարել այն: Նրանք զուր տեղն են ընդունել նվերը:

Նույն կերպ Պողոսը չի ցանկանում, որ ես և դու բաց թողնենք Աստծո անպատմելի շնորհքի գլխավոր օրհնությունն ու օգուտը.

> «Աղաչում ենք ձեզ, որ ընդունեցիք Աստծո շնորհքը, թույլ չտա՛ք, որ այն զուր լինի… Ուստի մաքրենք մեր անձերն ամեն ինչից, որ պղծում է մարմինը կամ հոգին, և լինենք կատարելապես սուրբ» (Բ Կորնթացիների 6.1, 7.1 TEV):

Սրանից էլ որքա՞ն պարզ կարող է դա լինել: Ուստի իմ հարցն այսպիսին է՝ ինչո՞ւ սա չի ուսուցանվել և ավելի հստակորեն չի շեշտադրվել մեր եկեղեցիներում:

ՀԻՍՈՒՍԸ ՀՈԳՈՒՄ ԷՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Մի քանի էջ առաջ մենք տեսանք այս պատվերն Աստծո Խոսքից. «Նա, ով պնդում է, թե ապրում է Նրանում, պետք է վարվի այնպես, ինչպես Հիսուսը վարվեց» (խոսք 2.6, NIV): Ուշադրությո՛ւն դարձրեք *«պետք է»* բառին: Ինչպես մենք արդեն նկատեցինք՝ սա առաջարկ չէ, այլ՝ պատվիրան: Աստված *ակնկալում է*, որպեսզի մենք վարվենք այնպես, ինչպես Հիսուսը: Այնպես որ, եկե՛ք պատասխանենք հետևյալ հարցին. «Ինչպե՞ս էր վարվում Հիսուսը»:

Ավետարաններից պարզ երևում է, որ Հիսուսը հոգում էր մարդկանց կարիքները: Նա բժշկում էր հիվանդներին, մաքրում՝ բորոտներին, ազատում էր մարդկանց կապանքներից, կույրերին տեսողություն էր տալիս, խուլերին՝ լսողություն, բժշկում էր կաղերին, բազմացնում սնունդը քաղցածներին կերակրելու համար, և նույնիսկ, հարություն տալիս մեռելներին: Հետո Նա պատվիրեց մեզ. «…Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհ. 20.21):

Ինչպե՞ս մենք պետք է անենք այս գործերը՝ Աստծո շնորհքի՝ ձրի պարգևի միջոցով: Աստվածաշնչում գրված է առաջին եկեղեցու մասին.

«Եվ առաքյալները մեծ զորությունով վկայություն էին տալիս Տեր Հիսուսի հարության համար. և մեծ շնորհք կար նրանց ամենի վրա» (Գործք 4.33):

Ինչո՞ւ է Աստված կապակցում *մեծ զորությունը մեծ շնորհքի* հետ: Որովհետև *շնորհքն* Աստծո զորությունն է:

Միգուցե դու մտածես. «Ձո՛ն, այստեղ գրված է առաքյալների մասին, իսկ ես ո՛չ առաքյալ եմ, ո՛չ հովիվ»: Այդ դեպքում թո՛ւյլ տուր քեզ պատմել մի հասարակ մարդու մասին: Երուսաղեմի եկեղեցում կար մի ռեստորան, և սեղանների սպասավորներից մեկի անունը Ստեփաննոս էր: Նա ո՛չ առաքյալ էր, ո՛չ մարգարե, ո՛չ ավետարանիչ, ո՛չ էլ հովիվ կամ ուսուցիչ: Ո՛չ. նա սպասարկում էր տարեց կանանց սեղանները: Սակայն Աստվածաշնչում ասվում է. «Ստեփաննոսը՝ Աստծո շնորհքով լցված մի մարդ... զարմանալի հրաշքներ և նշաններ էր գործում մարդկանց մեջ» (Գործք 6.8, NLT):

Ինչպե՞ս էր Նա գործում այդ զարմանալի հրաշքները, եթե նա առաքյալ կամ մարգարե չէր. Աստծո շնորհքի զորությա՛մբ: Նա անում էր այն, ինչ Հիսուսը. նա հոգում էր մարդկանց կարիքները շնորհքի՝ ձրի պարգևի զորության միջոցով:

Նույն ձրի պարգևն այժմ հասանելի է յուրաքանչյուր հավատացյալի: Այն քոնն է և իմը: Ահա թե ինչու Հիսուսը պատվիրեց մեզ. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով և քարոզե՛ք Ավետարանը բոլոր մարդկանց... հավատացողներին զորություն կտրվի հրաշքներ գործելու համար... նրանք կդնեն իրենց ձեռքերը հիվանդ մարդկանց վրա, և նրանք կառողջանան» (Մարկ. 16.15,17,18, TEV): Հիսուսը *չասաց*. «Միայն առաքյալներին կտրվի զորություն հրաշքներ գործելու համար», և չասաց. «Միայն առաքյալներին կտրվի զորություն [շնորհք] Աստծո զավակներ լինելու համար»: Ո՛չ. Աստծո Խոսքը պարզ ասում է. «Բայց որոնք որ Նրան ընդունեցին, *իշխանություն* տվեց նրանց Աստծո որդիներ [և դուստրեր] լինելու» (Հովհ. 1.12, KJV): Մենք հավատում ենք սրան առանց որևէ առարկության, այնպես չէ՞: Նույն Աստվածաշնչում ասվում է. «Հավատացողներին [ոչ թե միայն առաքյալներին] զորություն [շնորհքի ձրի պարգևը] կտրվի հրաշքներ գործելու համար», մենք կարող ենք վարվել այնպես, ինչպես վարվում էր Հիսուսը: Աստծո զորությունով մենք կարող ենք իշխել տկարության, հիվանդության և ցանկացած այլ դժվարության վրա, որ կարող է հայտնվել մեր սիրելիների կյանքում:

ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ, ԽՈՐԱԹԱՓԱՆՑՈՒԹՅՈՒՆ, ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Ուրիշ ինչպե՞ս էր վարվում Հիսուսը: Նա վարվում էր զարմանալի իմաստությամբ, հասկացողությամբ, խորաթափանցությամբ, հնարագիտությամբ և ստեղծագործական մոտեցմամբ: Նրա իմաստությունն ապշեցնում էր նույնիսկ ամենակրթված մարդկանց: Որտեղի՞ց Նրան այդ իմաստությունը:

> «Երեխան [Հիսուսը] էլ աճում էր և զորանում հոգով՝ իմաստությունով լցված, և Աստծո շնորհքը Նրա վրա էր» (Ղուկաս 2.40):

Հիսուսի արտասովոր իմաստության աղբյուրը շնորհքն էր:

Սրանից ծագում է հետևյալ հարցը: Եթե Աստծո շնորհքը միայն մեղքերի ներման և Երկինք գնալու համար է (ինչպես սովորեցրել էին բազմաթիվ քրիստոնյաների), ապա ինչո՞ւ Հիսուսը շնորհքի կարիք ուներ: Նա երբեք չէր մեղանչել, ուրեմն և՝ ներման կարիք էլ չուներ: Մենք գիտենք, որ թեև Հիսուսն Աստծո Որդի է, Նա ծնվել էր և ապրում էր երկրի վրա որպես մարդ. Նա թողել էր Իր բոլոր աստվածային արտոնությունները (տե՛ս Փիլիպ. 2.7): Այդ իսկ պատճառով Հիսուսն ուներ շնորհքի զորացման կարիք՝ վարվելու իմաստությամբ, հասկացողությամբ, խորաթափանցությամբ, հնարագիտությամբ և ստեղծագործական մոտեցմամբ, որոնք էլ ձևավորեցին Նրա բնավորությունը:

Ինձ դուր է գալիս այն ստեղծագործական մոտեցումը, որով դրսևորվում էին Նրա իմաստությունը, հնարագիտությունը և շրջահայեցությունը: Հովհաննեսի 8-րդ գլխում գրված է, որ մի քանի կրոնական նախանձահույզներ մի կնոջ էին բռնել բացահայտ շնություն գործելիս: Նրանք քարշ տվեցին նրան տաճարի հրապարակը և հրելով գցեցին Հիսուսի առջև: (Ինձ համար հետաքրքիր է, թե ինչո՞ւ նրանք նույն բանը չարեցին այն տղամարդու հետ, ում հետ նա շնացել էր): Նրանք ասացին. «Մովսեսը պատվիրեց, որ այսպիսիները քարկոծվեն. հիմա Դու ի՞նչ ես ասում»:

Նման իրավիճակում անհրաժեշտ է ստեղծագործական իմաստություն: Հիսուսը կռացավ և սկսեց գետնի վրա գրել: (Անձամբ ես հավա-

տում եմ, որ Նա թաքուն գրում էր այդ առաջնորդների սիրուհիների անունները: Միգուցե Նա գրում էր՝ Հաննա, Ռաքել, Իզաբել և այլն): Երբ առաջնորդները համառեցին, Տերը բարձրացրեց Իր գլուխն ու ասաց. «Լա՛վ, ով որ ձեզանից մեղք չի գործել, թող առաջի՛նը քար գցի նրա վրա»: Եվ Նա շարունակեց գրել գետնի վրա:

Ես պատկերացնում եմ, որ այդ կեղծ բարեպաշտ առաջնորդները հանկարծ կարդացին իրենց սիրուհիների անունները: Սակայն թե՛ այդ և, թե՛ այն պատճառով, որ Հիսուսը խիստ հանդիմանող պահանջ ներկայացրեց, նրանք բոլորը գցեցին իրենց քարերը և արագորեն հեռացան այդ վայրից: Աստվածաշնչում ասվում է. «Երբ նրանք լսեցին սա, բոլորը մեկ առ մեկ հեռացան՝ տարեցներից սկսած» (Հովհ. 8.9, TEV): Երբ Հիսուսը մենակ մնաց այդ կնոջ հետ, Նա գետնից վեր բարձրացավ և հարցրեց նրան. «Որտե՞ղ են նրանք: Մի՞թե քեզ մեղադրողներից ոչ ոք չմնաց»: Նա հասկացավ, որ բոլոր իրեն մեղադրողները գնացել են: Այդ ժամանակ Հիսուսն ասաց. «Ես նույնպես չեմ մեղադրում քեզ: Գնա՛, բայց այլևս մեղք մի՛ գործիր» (խոսք 10,11, TEV):

Նրա իմաստությունը և ստեղծագործական մոտեցումը փրկեցին այդ կնոջ կյանքը: Ուշադրությո՛ւն դարձրեք՝ Հիսուսը չհայտնեց այն դատավճիռը, որին այդ կինն արժանի էր ըստ օրենքի: Սակայն Նա ասաց. «Գնա՛, բայց այլևս մեղք մի՛ գործիր»: Այստեղ գործեց շնորհքը, որովհետև շնորհքը տալիս է մեզ այն, ինչին մենք արժանի չենք, այն դեպքում, երբ ողորմությունը չի տալիս մեզ այն, ինչին մենք արժանի ենք: Ողորմությունը չդատապարտեց այդ կնոջը, իսկ Աստծո շնորհքը զորացրեց նրան, որպեսզի նա կրկին չընկներ շնության մահացու թակարդը:

Աստծո շնորհքը, որը Հիսուսի վրա էր, տվեց Նրան իմաստություն՝ ազատելու այդ կնոջը կրոնական նախանձահույզների դատավճռից: Այն նույնպես զորություն տվեց այդ կնոջը՝ շնությունից ազատ ապրելու համար: Ինչպիսի՛ զորություն կա շնորհքի մեջ:

Ինչպիսի՛ զորություն կա շնորհքի մեջ:

Ներկայացնեմ մեկ այլ իրավիճակ. Հիսուսը Գալիլեայի ծովի ափին ականատես է լինում մի իրավիճակի, որում հայտնվել էր մասնագիտացված ձկնորսական մի ընկերություն: Այդ օրը նրանց ամենավատ օրն էր կազ-

մավորման պահից ի վեր: Նրանք ամբողջ օրվա ընթացքում մեկ ձուկ անգամ չէին բռնել: Պատկերացրեք, որ դուք մանրածախ վաճառքի կետ ունենայիք և ամբողջ օրը ոչինչ չվաճառեիք: Դա կլիներ ձեր ամենավատ օրը: Բայց Հիսուսի մեկ իմաստուն խոսքի շնորհիվ այդ օրը դարձավ նրանց ամենահաջող օրը: Հիսուսը ձկնորս չէր. Նա հյուսն էր, բայց Նա շնորհք ուներ: Ինչպիսի՛ իմաստություն և զորություն: Ներկայացնեմ ևս մեկը. Հիսուսը շնորհքից բխող իմաստությամբ գիտեր, թե որտեղից կարելի է էշ գտնել: Նա նույնիսկ կարիք չուներ փնտրել այն «Craigslist» կամ «eBay» որոնման համակարգերով: Նա գիտեր՝ ինչպես վճարել Իր հարկերը՝ առանց «H&R Block» հարկային ծառայության միջոցով հայտարարագիր լրացնելու: Նա պատվիրեց Պետրոսին գնալ և ձուկ բռնել, բացել ձկան բերանը և այնտեղից վերցնել այն գումարը, որը հարկավոր էր Հիսուսին: Այդ ամենը տեղի ունեցավ շնորհքի միջոցով:

Հիսուսը զարմանալի խորաթափանցություն ուներ: Նա գիտեր, որ սատանան գործում էր Իր աշխատակազմի մեջ, նույնիսկ գիտեր, թե երբ է սատանան իրականացնելու իր նենգավոր ծրագիրը Հուդայի միջոցով: Հիսուսը գիտեր նաև, որ Նաթանայելի մեջ նենգություն չկա և դա մինչև նրա հետ ծանոթանալն էր:

ՓՈԽԵԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ էության՝ Աստծո շնորհքը կարողություն տվեց Հիսուսին փոխել այն հասարակությունը, որում Նա ապրում էր: Նա գնաց Կանա՝ հարսանիք: Ասեմ որ հարսանիքները փոքր միջոցառումներ չէին. ամբողջ գյուղը պետք է ներկա լիներ այդտեղ: Եվ եթե ծանոթ եք պատմությանը՝ հարսանեկան խնջույքը ձախողման եզրին էր, որովհետև տանտիրոջ գինին ժամանակից շուտ էր վերջացել: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպիսի խայտառակություն էր սպասվում այդ ընտանիքին: Մարդիկ անպատճառ հիշելու էին այդ մասին տարիներ շարունակ: Բայց ընդամենը մեկ հանդիպում Աստծո շնորհքի հետ, որը Հիսուսի վրա էր, և հարսանիքը փոխվեց նոր մակարդակի:

Մեկ այլ քաղաքում՝ Նայինում, պետությունը պետք է հոգար մի այրու մասին, ով կորցրել էր իր որդուն: Մինչև նրա կյանքի վերջը պետությու-

նը պետք է նրան հարկ տվողների վճարներից տրամադրեր սնունդ, հագուստ և ապաստան: Սակայն անհրաժեշտ եղավ մեկ հանդիպում Աստծո շնորհքի հետ, որը Հիսուսի վրա էր, և ամեն բան փոխվեց. պետությունն այլևս ստիպված չէր հոգալ այդ կնոջ մասին: Վերականգնված էր նրա արժանապատվությունը, իսկ նրա սերունդն էլ շարունակվելու էր (տե՛ս Ղուկ. 7,11-15):

Իսկ մեկ այլ քաղաքում Հիսուսը հանդիպում ունեցավ կազմակերպված հանցագործության պարագլխի հետ: Մեր օրերում այդ մարդուն հանցագործ խմբավորման կնքահայր կհամարեին: Պահանջվեց ընդամենը մեկ հանդիպում Աստծո շնորհքի հետ, որը Հիսուսի վրա էր, և Զաքեոսը այնպիսի խոստումներ տվեց, որոնք ողջ այդ համայնքն ավելի բարգավաճ և ապահով վայր դարձրին: Զաքեոսը, ով հարկ հավաքող էր, այլևս չէր թալանելու մարդկանց: Բացի այդ՝ նա աղաղակեց. «Իմ ունեցվածքի կեսն աղքատների՛ն կտամ»: Այդ քաղաքի տուժած մարդիկ շահեցին դրանից: Բայց Զաքեոսն արեց ավելին: Նա խոստացավ յուրաքանչյուրին, ում զրկել էր, վերադարձնել 4 անգամ ավելի: Սրանով իսկ նա խթանեց այդ տարածաշրջանի տնտեսությունը (տե՛ս Ղուկ. 19,1-8): Այդ ամենը կատարվեց Աստծո շնորհքի միջոցով:

Եվս մեկ դեպք. մի երիտասարդ, ով լիովին խելագարվել էր, դատապարտված էր միայնության և տառապանքի: Այդ ժամանակ չկային պետական հոգեբուժարաններ, բայց միևնույն է՝ պետությունը հարկադրված էր հոգալ նրա մասին: Պետությունը պետք է ապահովեր նրան սնունդով և հագուստով: Այդ երիտասարդին շատ հագուստ էր պետք, որովհետև նա անընդհատ պատռում էր իր ունեցածը: Սակայն պահանջվեց ընդամենը մեկ հանդիպում Աստծո շնորհքի հետ, որը Հիսուսի վրա էր, և այդ նախկին խելագարը բժշկվեց: Նրա կյանքն այլևս չէր անցնի մենության մեջ՝ առանձին կացարանում, և նա չէր ապրի հարկատուների վճարումների հաշվին: Նա այլևս հոգատարության և պաշտպանության կարիք չէր ունենա, իսկ հարկատուների միջոցները կարող էին ծախսվել այդ բնակավայրի բարելավման համար: Բացի այդ՝ Դեկապոլիսի շրջանում գտնվող տասը քաղաքները լսեցին Աստծո արքայության մասին այդ մարդու միջոցով, ով հանդիպեց Աստծո շնորհքին (տե՛ս Մարկ. 5):

Մտածի՛ր բոլոր խուլերի, կույրերի, կաղերի, հիվանդ և ֆիզիկապես տկար մարդկանց մասին, որոնց համար պետությունն այլևս ստիպված չէր հոգալ Աստծո շնորհքի պատճառով, որը Հիսուսի վրա էր: Բացի դա՝

այդ մարդիկ արդյունավետ քաղաքացիներ դարձան իրենց հասարակության համար: Մենք կարող ենք շարունակել այս թվարկումը, քանի որ Հիսուսը կատարել էր ավելին, քան գրված է Ավետարանների մեջ: Ինչպես մենք արդեն տեսանք՝ Հովհաննեսը գրում է, որ աշխարհում եղած բոլոր գրքերը բավական չեն գրանցելու համար բոլոր այն հրաշքները, որ Հիսուսը գործեց Իր եռամյա հասարակական ծառայության միջոցով:

Հիշե՛ք, թե Հիսուսն ինչ ասաց. «Նրանք, որ հավատում են Ինձ, կանեն այն, ինչ Ես եմ անում. այո՛, նրանք կանեն նույնիսկ ավելի մեծ բաներ» (Հովհ. 14.12, TEV): Ինչպե՞ս: Աստծո շնորհքի՝ ձրի պարգևի միջոցով, որին մենք արժանի չէինք: Մենք պետք է փոխենք մեր հասարակությունը նույն կերպով, ինչպես Հիսուսը փոխեց Իր հասարակությունը՝ Աստծո շնորհքի՝ ձրի պարգևի միջոցով:

ՄԵՐ ՈՐՈՆՈՒՄԸ

Ես լրջորեն հավատում եմ, որ խավարի զորությունների և տերությունների գլխավոր նպատակներից մեկն այս գիտությունը մեզանից թաքցնելն է: Նրանք թեթևությամբ հոգոց են հանում՝ իմանալով, որ Ամերիկայում քրիստոնյաների 98 տոկոսը շնորհքը համարում է ձրի պարգև, որին իրենք արժանի չեն՝ մնալով անտեղյակ դրա անհավատալի զորության մասին: Սա նշանակում է, որ ընդամենը 2 տոկոս քրիստոնյաներն են իրական սպառնալիք ներկայացնում նրանց ամրությունների համար:

Թշնամին չի վախենում մեր գեղեցիկ եկեղեցական շենքերից: Նա չի վախենում, երբ մենք գրքեր ենք հրատարակում, մեծ հավաքույթներ անցկացնում, հեռուստեսային կամ արբանյակային հաղորդումներ թողարկում, քանի դեռ անտեղյակ ենք այն զարմանալի իշխանությունից, որ հասանելի է մեզ: Խավար ուժերը վախենում են միայն մեկ բանից, որ հավատացյալները կարող են հայտնաբերել այն զորությունը, որ ձրի տրվել է մեզ, ինչի հետևանքով մենք կարող ենք համարձակ և ստեղծագործական ձևով փոխել մեր հասարակությունն այնպես, ինչպես դա անում էր Հիսուսը: Նրանք վախենում են, որ մենք կարող ենք զբաղեցնել մեր դիրքը՝ որպես *այս կյանքի իշխաններ*:

Մարտին Լյութերը որոնման մեջ էր, երբ 1517թ.-ի հոկտեմբերի 31-ին, Գերմանիայում՝ Վիտենբերգում, իր «Իննսունինը թեզերը» գամեց Բոլոր Սրբերի Եկեղեցու դռանը: Այս քայլը ռեֆորմացիայի սկիզբ դրեց, ինչի հետևանքով էլ եկեղեցին անդառնալիորեն փոխվեց: Դա Սուրբ Հոգու աշխատանքն էր մեկ մարդու միջոցով: Նրա թեզերի իմաստը հետևյալն էր. *արդարը հավատքից կապրի*: Նա ընդդիմացավ պետական եկեղեցու կամայականություններին, որոնք մարդկանց պահում էին գերության մեջ:

Ես նույնպես որոնման մեջ եմ և գիտեմ, որ միակը չեմ: Մենք ցանկանում ենք ընդգրկել քեզ մեր ցուցակում: Մենք իննսունինը թեզերը գամում ենք ոչ թե հին փայտե դռանը, այլ մեր հավատակիցների սրտերին: Մեր ուղերձը հետևյալն է. *Շնորհքը պարզապես Աստծուց տրված ծածկոց չէ մեր մեղքի համար: Այն զորացնում է մեզ, որպեսզի մենք ապրենք Հիսուսի նման և իշխենք այս կյանքում՝ դրսևորելով Երկնքի իշխանությունը և զորությունը՝ մեր շրջապատը փոխելու համար*:

Ե՛կ որոշում կայացնենք բարձրացնել այդ երկու տոկոսանոց վիճակագրական տվյալը՝ հասցնելով այն 100 տոկոսի: Ե՛կ այնպես անենք, որ հավատացյալները, լսելով *«շնորհք»* բառը, անմիջապես մտածեն. «զորություն, որը գերազանցում է մեր մարդկային կարողությունը»:

5

ԴԱՌՆԱԼ ԱԿՆԱՌՈՒ

«Բոլորը, ովքեր ընդունում են Աստծո առատ շնորհքը և ձրիաբար արդարանում Նրա առջև, *կիշխեն կյանքում* Քրիստոսի միջոցով»:

Հռոմեացիների 5.17, (TEV)

Հռոմեացիների 5.17-ն այն աստիճան մեծ և անասելի է, որ թվում է, թե չի կարող իրական լինել: Այն, ինչ հայտնում է այս խոսքը, պարզապես ապշեցուցիչ է: Միգուցե սա է պատճառը, թե ինչու են շատերն անտեսել այն:

Մեզանից յուրաքանչյուրը, ով ընդունել է Հիսուսին որպես իր կյանքի Տեր, պետք է իշխի այս կյանքում: Բոլորը, ովքեր ընդունել են Աստծո շնորհքը որպես պարգև, ստացել են զորություն, որպեսզի հաղթեն ցանկացած դժվարություն, որ կպատահի նրանց այս աշխարհում: Կյանքի իրավիճակները չպետք է իշխեն մեզ, այլ մենք պետք է իշխենք այս կյանքում: Աստծո շնորհքի զորությունով մենք պետք է փոխենք մեր հասարակությունը ճիշտ այնպես, ինչպես Հիսուսը փոխեց Իր հասարակությունը: Սա մեր հանձնարարությունն է:

ՇՆՈՐՀՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

Այնպես որ, ե՛կ համարձակորեն առաջ գնանք և հասկանանք, թե ինչ է նշանակում իշխել կյանքում Աստծո շնորհքով: Մենք պետք է բարձրանանք կյանքի միջին մակարդակից և դուրս գանք մեր ներկա իրավիճակից: Դա նշանակում է, որ մենք այլևս կյանքը չենք պատկերացնելու որպես աշխատանք՝ առավոտյան ժամը ութից մինչև ցերեկվա ժամը հինգը կամ վեցը, որից հետո պետք է անցնենք թոշակի, մահանանք և, ի վերջո,

գնանք Երկինք: Ինչպիսի՜ ողորմելի պատկերացում այս կյանքի մասին: Անկասկած՝ Աստված չի ցանկանում, որ մեր կյանքն այդպիսին լինի: Մենք ստեղծված ենք շատ ավելիի համար:

Մենք սկսում ենք ազդեցություն թողնել աշխարհում, երբ իմանում ենք, որ Աստված կանչել է մեզ լինել գլուխ, և ոչ թե պոչ, լինել բարձրում, և ոչ թե ցածում (տե՛ս Երկր. Օր. 28.13): Մենք պետք է ոչ միայն վեր լինենք կյանքի ոչ նպաստավոր հանգամանքներից, այլ նույնպես տարբերվենք այն մարդկանց շրջապատում, ովքեր Աստծո հետ ուխտ չունեն: Մենք պետք է առաջնորդներ լինենք այս խավար աշխարհում. գլուխը որոշում է ուղղությունը, ընթացքը և տենդենցները, իսկ պոչը հետևում է դրանց: Մենք մեր հասարակության բոլոր բնագավառներում պետք է լինենք ոչ թե հետևորդներ, այլ՝ առաջնորդներ:

Եթե դու դպրոցի ուսուցիչ կամ ուսուցչուհի ես, ապա շնորհքի պարգևի միջոցով դու քո աշակերտներին կարող ես մշտապես առաջարկել թարմ, ստեղծագործական և նորարար միջոցներ՝ իմաստություն և գիտություն փոխանցելու համար, որոնց մասին ոչ մի ուսուցիչ դպրոցական համակարգում անգամ չի մտածել: Դու հաստատում ես բարձր չափանիշներ և ոգեշնչում քո աշակերտներին այնպես, որ մյուսները զարմանում են: Քո աշխատակիցները շարունակ քննարկում են դա իրար հետ՝ հարցնելով. «Որտեղի՞ց նրան այդ գաղափարները»:

Եթե դու բուժաշխատող ես, ապա շնորհքի պարգևի միջոցով դու առաջարկում ես նոր և ավելի արդյունավետ միջոցներ հիվանդությունները բուժելու համար: Քո աշխատակիցները գլուխ են կոտրում և զարմանում. «Որտեղի՞ց է նա վերցնում այսպիսի նորարար գաղափարներ»:

Եթե դու ոճաբան ես, ապա Աստծո շնորհքի պարգևի միջոցով դու ստեղծում ես թարմ և ստեղծագործական նախագծեր, որոնք մյուսները կրկնօրինակում են: Դու որոշում ես առաջատար ոճերը և տենդենցները, որոնց հետևում է հասարակությունը: Դու պահանջարկ ունես քո որակյալ աշխատանքի պատճառով և հայտնի ես որպես նորաձևության միտումների հեղինակ: Քո նախագծերը ժամանակից մի քայլ առաջ են անցնում, իսկ մյուսներն այդ բնագավառում գլուխ են կոտրում և հարցնում իրար. «Որտեղի՞ց է նա այսպիսի ստեղծագործական գաղափարներ վերցնում»:

Եթե դու քաղաքական գործիչ ես, ապա շնորհքի պարգևն իմաստություն է տալիս քեզ լուծելու այնպիսի հասարակական խնդիրներ, որոնք անլուծելի են համարվում մյուսների համար: Դու առաջատար ես օրենսդրական բնագավառում: Քեզ ընտրում կամ նշանակում են բարձր պաշտոնի ավելի արագ, քան մյուսներին: Քո խորաթափանցությունն ու հնարագիտությունը ստիպում են մյուսներին, ովքեր աշխատում են նույն բնագավառում, գլուխ կոտրել և մտածել. «Որտեղի՞ց է նա ստանում այս իմաստությունն ու արժեքավոր գաղափարները»:

Եթե դու օրինապահ ես, ապա քո կյանքում գործող շնորհքի պարգևի միջոցով դու խաղաղություն ես բերում այնպիսի իրավիճակներում, որոնք անլուծելի են մյուսների համար: Դու գիտես, թե որտեղ գտնել հանցագործներին ճիշտ այնպես, ինչպես Հիսուսը գիտեր, թե որտեղից կարելի էր էշ գտնել: Դու ավելի արագ ի մի ես բերում անհրաժեշտ վկայությունները՝ հանցագործությունները բացահայտելու համար, քան այդ տարածքում գործող ցանկացած այլ դետեկտիվ: Քո խորաթափանցությունը, ունակությունները, իմաստությունը և հարցի դիպուկ լուծումները ստիպում են այդ բնագավառում աշխատող մարդկանց՝ գլուխ կոտրել և մեկը մյուսին հարցնել. «Ինչպե՞ս է նա կարողանում այսպես ըմբռնել իրավիճակը»:

Եթե դու գործարար ես, ապա Աստծո շնորհքի ձրի պարգևի միջոցով դու մշակում ես նոր ապրանքատեսակներ և խելամիտ վաճառքի մեթոդներ, ինչպես նաև արդյունավետ շուկայական նախագծեր, որոնք ժամանակից մեկ քայլ առաջ են անցնում: Դու զգում ես, թե ինչն է եկամտաբեր, իսկ ինչը՝ ոչ: Դու գիտես՝ երբ վաճառել և երբ գնել, երբ մտնել գործարքի մեջ և երբ դուրս գալ գործարքից: Այլ գործարար մարդիկ գլուխ են կոտրում՝ փորձելով հասկանալ, թե ինչու ես դու այդքան հաջողակ:

Այս օրինակներն անիրական չեն: Դրանք ցույց են տալիս՝ ինչպես կատարել մեր առաջադրանքը: Մեզանից յուրաքանչյուրը կանչված է հասարակության տարբեր բնագավառներում գործելու համար, բայց այս կյանքում, որտեղ էլ լինի, պետք է առաջնորդ, առաջատար և հեղինակություն լինի: Մեր ձեռնարկությունները պետք է բարգավաճեն, նույնիսկ այն դեպքում, երբ մյուս ձեռնարկատերերը կորուստներ են ունենում: Մեր բնակավայրերը պետք է ապահով, հաճելի և բարգավաճ լինեն: Մեր աշխատա-

վայրերը պետք է ծաղկեն: Մեր երաժշտությունը պետք է լինի թարմ և ինքնատիպ: Ոչ թե քրիստոնյա երաժիշտները պետք է ընդօրինակեն աշխարհիկ երաժիշտներին, այլ՝ աշխարհիկ երաժիշտները պետք է ընդօրինակեն քրիստոնյա երաժիշտներին:

Այդպես պետք է լինի նաև կոմպյուտերային գրաֆիկայի և ճարտարապետական նախագծի դեպքում: Աստծո ընտանիքի ստեղծագործական մոտեցումը պետք է ոգեշնչի հասարակությանը բոլոր բնագավառներում և պահանջարկ ունենա նրա կողմից: Մեր ձեռքբերումները սպորտի, բեմական ներկայացումների, արվեստի, հեռուստատեսային հաղորդումների պատրաստման կամ ցանկացած այլ բնագավառներում պետք է ակնառու և օրինակելի լինեն: Մեր քաղաքները, երկրները և պետությունները պետք է ծաղկեն, երբ իշխեն արդարները:

Ցանկացած վայրում և բնագավառում, որտեղ կան հավատացյալներ, պետք է առատորեն դրսևորվի նրանց ստեղծագործական մոտեցումը, արդյունավետությունը, խաղաղությունը և խորաթափանցությունը: Մենք պետք է լույս լինենք խավարում: Մենք պետք է աչքի ընկնենք այս խավար հասարակության մեջ Աստծո անհավատալի շնորհքի միջոցով, որը մեզ վրա է:

ԴԱՌՆԱԼ ԱԿՆԱՌՈՒ

Որպես Աստծո շնորհքով զորացած մարդիկ՝ մենք պետք է բացառիկ և աչքի ընկնող լինենք կյանքի բոլոր բնագավառներում: Ուշադի՛ր կարդա Դանիելի վկայությունը.

> Դանիելը կառավարիչների և կուսակալների մեջ իր բացառիկ հատկանիշներով այնպես *աչքի ընկավ* (կամ նախապատվություն ստացավ), որ թագավորը ծրագրում էր նշանակել նրան ամբողջ թագավորության վրա (Դանիել 6.3, NIV):

Սա ուշագրավ է. Դանիելն *աչքի ընկավ* կամ նախապատվություն ստացավ: Ուշադրությո՛ւն դարձրեք՝ գրված չէ. «Աստված նախապատվություն արեց Դանիելին»: Յուրաքանչյուր հեղինակավոր թարգմանության մեջ գրված է, որ այս երիտասարդն *ինքն* աչքի ընկավ կամ նախա-

պատվություն ստացավ: Աստծո Խոսքի «Մեսիջ» թարգմանությունը վերծանում է սա ժամանակակից լեզվով՝ ասելով, որ Դանիելն «իր ետևում թողեց բոլոր» առաջնորդներին:

Ինչպե՞ս նա դա արեց: Նա բացառիկ հատկանիշներ ուներ, որովհետև փոխհարաբերություն ուներ Աստծո հետ: Դանիելը մտերիմ և շարունակական շփման մեջ էր Իր Արարչի հետ: Այդպես պետք է լինի նաև ցանկացած մարդու համար, ով ուխտի մեջ է Աստծո հետ:

«Նյու Ամերիքն Ստանդարտ» թարգմանության մեջ գրված է. «Դանիելը սկսեց աչքի ընկնել… որովհետև նա *արտասովոր* հոգի ուներ»: *Արտասովոր* բառը նշանակում է «բարձրանալ կյանքի միջին մակարդակից, դուրս գալ ներկա իրավիճակից, գերազանցել ընդունված սահմանները»: Երբեմն մենք կարող ենք ավելի լավ հասկանալ բառը՝ տեսնելով, թե ինչ այն չի նշանակում: Արտասովորի հականիշներն են՝ *սովորական, հասարակ* կամ *նորմալ*: Այնպես որ նորմալ կյանքով ապրող մարդու կենսաոճը հակառակ է այն մարդու կենսաոճին, ով արտասովոր հոգի ունի:

Այստեղ գրված է, որ արտասովոր էր Դանիելի *հոգին*, ոչ թե միտքը կամ մարմինը: Եթե հոգին արտասովոր է, ապա միտքը, մարմինը, ստեղծագործական մտածելակերպը, հնարագիտությունը, իմաստությունը, գիտությունը և կյանքի մնացած բոլոր կողմերը կհամապատասխանեն դրան: Մեր հոգին է ձևավորում մեր կյանքը: Եթե մենք իրականում ճանաչենք այն շնորհքը, որ տրված է մեզ, ապա կիմանանք, որ չունենք որևէ սահմանափակում, քանի որ «ամեն բան կարելի է հավատացողին» (Մարկ. 9.22): Դանիելը սնվում էր այն աղբյուրից, որը հասանելի էր իրեն՝ Աստծո հետ ունեցած փոխհարաբերությունների շնորհիվ: Դանիելը գիտեր՝ քանի որ ինքը ուխտի մեջ է Ամենակարողի հետ, ուստի պետք է իշխեր հանգամանքների վրա, այլ ոչ թե գտնվեր հանգամանքների իշխանության ներքո. նա պետք է լիներ գլուխ, և ոչ թե պոչ:

Եկե՛ք ավելի մանրամասն քննարկենք սա: Դանիելը և նրա երեք ընկերները բերվել էին Իսրայել կոչվող փոքրիկ պետությունից աշխարհի ամենաազդեցիկ պետությունը: Եթե դու ամերիկացի ես և մտածում ես, որ մեր երկիրը մեծ ազդեցություն է գործել աշխարհի վրա վերջին հիսուն տարիների ընթացքում, ապա թո՛ւյլ տուր ասել, որ Ամերիկան ոչինչ է՝ համեմատած Բաբելոնի մեծության և շքեղության հետ: Բաբելոնը տի-

րում էր ամբողջ աշխարհին: Այն առաջին տեղում էր տնտեսական, քաղաքական, ռազմական, հասարակական, գիտական, ինչպես նաև՝ այլ բնագավառներում: Սակայն գրված է. «Անկախ այն բանից՝ ինչ հարց էր տալիս թագավորը կամ ինչ խնդիր էր բարձրացնում՝ այս չորսը [Դանիելը, Անանիան, Միսայելը և Ազարիան] գիտեին *տասն անգամ ավելի*, քան թագավորության այլ առաջնորդները» (Դանիել 1.20, TEV): Այլ թարգմանություններում գրված է, որ այս չորսը տասն անգամ ավելի լավն էին, տասն անգամ ավելի իմաստուն և տասն անգամ ավելի խելացի: Նրանք առաջարկում և իրականացնում էին այնպիսի գաղափարներ, որոնց մասին բաբելոնացիները երբեք չէին մտածել ու չէին էլ իրականացրել, և այդ գաղափարները գործում էին:

ԱՎԵԼԻ ՄԵԾ, ՔԱՆ ԴԱՆԻԵԼԸ. ԱՎԵԼԻ ՄԵԾ, ՔԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԸ

Մտաբերելով սա՝ կարդացե՛ք Հիսուսի Խոսքերը. «Հովհաննեսն ավելի մեծ է, քան ցանկացած մարդ, որ երբևէ ապրել է» (Ղուկ. 7.28, TEV): Սա նշանակում է, որ Հովհաննեսն ավելի մեծ էր, քան Դանիելը: Մի՛ փորձեք համեմատել նրանց իրենց գործերով, որովհետև Հովհաննեսը ծառայող էր, իսկ Դանիելը՝ քաղաքական գործիչ: Այնուամենայնիվ՝ Հիսուսը պարզ ասում է, որ Հովհաննեսն «ավելի մեծ» է: Սակայն Նա շարունակում է՝ ասելով. «Բայց նա, ով փոքրագույնն է Աստծո արքայության մեջ, ավելի մեծ է, քան Հովհաննեսը» (Ղուկ. 7.28, TEV):

Ինչո՞ւ է փոքրագույնն Աստծո արքայության մեջ ավելի մեծ, քան Դանիելը կամ Հովհաննեսը: Հիսուսը դեռ չէր խաչվել մարդկությանն ազատելու համար, այնպես որ Հովհաննեսի հոգին վերստին ծնված չէր: Նա Քրիստոսի մարմնի մասը չէր: Հովհաննեսի մասին չի կարելի ասել. «Ինչպես Հիսուսն է, այնպես էլ Հովհաննես Մկրտիչն այս կյանքում»: Հովհաննեսը Քրիստոսի հետ չի նստել երկնավորներում: Սակայն բոլոր այս պնդումները ճշմարիտ են մեզ համար: Ահա թե ինչու փոքրագույնն Աստծո արքայության մեջ ավելի մեծ է, քան Հովհաննեսը:

Համարվում է, որ Հիսուսի հարությունից մինչև օրս երկրի վրա ապրել է մոտավորապես երկու միլիարդ քրիստոնյա: Թեև դա քիչ հավանական

է, բայց եթե դու այդ երկու միլիարդից «փոքրագույնն» ես (այսինքն՝ «մեծության հերթականությամբ» դու երկումիլիոներորդ տեղում ես), ապա դու դեռևս ավելի մեծ ես, քան Հովհաննես Մկրտիչը: Սա նշանակում է, որ դու նույնպես ավելի մեծ ես, քան Դանիելը: Այստեղից ծագում է մի հարց. *«Արդյո՞ք դու աչքի ես ընկնում»*:

Արդյո՞ք դու տասն անգամ ավելի խելացի, ներըմբռնող, արդյունավետ և իմաստուն ես, արդյո՞ք տասն անգամ ավելի նորարար ես, քան մյուս մարդիկ, ովքեր ուխտի մեջ չեն Աստծո հետ Հիսուս Քրիստոսի միջոցով: (Ես դեռ չեմ խոսում այն մասին, որ դու տասն անգամ ավելի համբերատար, սիրող, կարգապահ, բարի, հյուրասեր, գթասիրտ և առատաձեռն ես, քան մյուս մարդիկ): Եթե ոչ, ապա ո՞րն է պատճառը: Ինչո՞ւ վերստին ծնված քրիստոնյաների ճնշող մեծամասնությունը տասն անգամ չի գերազանցում աշխարհի մարդկանց: Միգուցե պատճառն այն է, որ մեզանից միայն երկու տոկոսն է հասկանում, որ շնորհքն Աստծո զորությունն է, որը կարողություն է տալիս մեզ գերազանցել մեր մարդկային կարողությունները, որպեսզի մենք կարողանանք իշխել կյանքում և լինենք ակնառու, ինչպես Դանիելը: (Նշում. Աստվածաշունչը պատվիրում է եկեղեցում կրել թույլերի բեռը: Սակայն Աստվածաշունչը չի ասում, որ նրանք պետք է թույլ մնան մինչև իրենց կյանքի վերջը: Նրանք նույնպես պետք է ստանան այս տեսիլքը և աչքի ընկնեն իրենց շրջապատում):

Հիսուսն ասում է, որ մենք «աշխարհի լույսն ենք» (տե՛ս Մատթ. 5.14): Նոր կտակարանում Աստված շատ է խոսում Իր զավակների մասին՝ որպես լույս խավարի մեջ: Հետևյալ հատվածները հաստատում են Քրիստոսի արած փոխաբերությունը. Մատթեոս 5.14-16, Ղուկաս 12.3, Հովհաննես 8.12, Գործք 13.47, Հռոմեացիների 13.12, Եփեսացիների 5.8,14, Կողոսացիների 1.12, Փիլիպեցիների 2.15, Ա Թեսաղոնիկեցիների 5.5, Ա Հովհաննես 1.7, 2.9,10: Կարծում եմ՝ դուք համոզվեցիք, որ այս խավար աշխարհում լույս լինելն անչափ կարևոր է նրանց համար, ովքեր Քրիստոսի մեջ են:

Դուք երբևէ խորհե՞լ եք, թե ինչ է նշանակում լինել լույս աշխարհում: Դժբախտաբար՝ շատերը մտածում են, որ լինել «լույս» նշանակում է լինել սիրալիր, մշտապես Աստվածաշունչ ունենալ ձեռքի տակ և հաճախ մեջբերել Հովհաննես 3.16-ը: Իսկ ի՞նչ կլիներ, եթե Դանիելն այդպես

մտածեր: Ի՞նչ կլիներ, եթե նա մտներ Բաբելոնի կառավարական գրասենյակներ, սիրալիր լիներ մարդկանց հետ և ասեր իր աշխատակիցներին. «Լսե՛ք, Բաբելոնի առաջնորդներ, Սաղմոս 23-ում գրված է. «Տե՛ր է իմ Հովիվը, ես կարոտություն չեմ ունենա...»»:

Ի՞նչ կխոսեին այդ կուսակալները և կառավարիչները, երբ ճաշի ժամին Դանիելը գնար գրասենյակ աղոթելու: Կարո՞ղ եք պատկերացնել: Համոզված եմ՝ նրանք կասեին. «Այնքան լավ է, որ այս մոլեռանդը գնաց այստեղից: Հուսով ենք՝ նա կաղոթի ողջ ցերեկվա ընթացքում: Նա մի փոքր ցնորված է»:

Ինչո՞ւ նրանք օրենք ընդունեցին, որն արգելում էր Դանիելին՝ աղոթել (տե՛ս Դանիել 6.6-8): Միակ տրամաբանական պատճառն այն է, որ Դանիելը տասն անգամ ավելի խելացի և իմաստուն էր, տասն անգամ ավելի գիտուն, նորարար և ստեղծագործող էր, քան նրանցից յուրաքանչյուրը: Նրա պաշտոնն ավելի արագ էին բարձրացնում, քան իր գործընկերներինը, և արդյունքում, նա դարձավ նրանց բոլորի ղեկավարը: Նրանք շփոթված էին: Պատկերացնում եմ, թե ինչպես էին նրանք տրտնջում. «Մենք պարզապես չենք հասկանում: Մենք սովորել ենք ամենահեղինակավոր, տաղանդավոր և իմաստուն ուսուցիչների, գիտնականների և առաջնորդների մոտ ամբողջ աշխարհում: Նա մի աննշան, փոքր երկրից է: Որտեղի՞ց է նա վերցնում այս գաղափարները: Ինչպե՞ս է նա կարողանում շատ ավելի արդյունավետ լինել, քան մենք: Երևի պատճառը նրա անդադար աղոթքներն են: Նա աղոթում է Աստծուն օրը երեք անգամ: Եկե՛ք օրենք ընդունենք դրա դեմ, որպեսզի այլևս չմնանք նրա ստվերի տակ»:

Դանիելը շողացող լույս էր այդ խավար մշակույթի մեջ, որովհետև նա արտասովոր անհատ էր: Դա դուր չէր գալիս իրեն շրջապատող մարդկանց: Նրանք նախանձում էին Դանիելին: Սակայն ես կարող եմ պատկերացնել, թե ինչպես շատերը՝ ներառյալ թագավորը, տեսնում էին կենդանի Աստծուն Դանիելի կարողությունների պատճառով: Դանիելի գերազանցությունը գրավիչ էր և առաջնորդներին դրդում էր՝ պատվել Դանիելի Աստծուն: Նա չէր առանձնանում այն պատճառով, որ քաջ գիտեր Աստվածաշունչը, սիրալիր վարք ուներ կամ օրը երեք անգամ աղոթում էր: Պատճառն այն էր, որ նա լավագույնն էր իր աշխատանքի բնագավառում:

Այժմ, մտապահելով այս ճշմարտությունը, լսե՛ք Հիսուսի Խոսքերը լույսի մասին. «Այսպես լուսավորի ձեր լույսը մարդկանց առջև, որ ձեր բարի գործերը տեսնեն և փառավորեն ձեր Հորը, որ Երկնքում է» (Մատթ. 5.16): Հիսուսը հատկապես խոսում է այն մասին, որ անհավատները պետք է տեսնեն մեր գործերը: Ինչպե՞ս է պատահել, որ մենք մեղմացրել ենք այս պատվերը՝ մարդկանց հետ ընդամենը սիրալիր լինելով և Աստվածաշնչյան խոսքեր մեջբերելով:

ՄԵՐՕՐՅԱ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ես մի ընկեր ունեմ Բեն անունով, ով աշխարհի ամենամեծ մեքենաշինական ընկերություններից մեկի փոխտնօրենն է: Մի երեկո ընթրիքի ժամանակ նա պատմեց ինձ, որ մինչև փոխտնօրեն դառնալն աշխատում էր իրենց խոշոր մրցակից ընկերություններից մեկի լավագույն ինժեներական թիմում: Նա ասաց. «Ձո՛ն, ես կարդում էի Դանիելի գիրքը, որտեղ գրված էր, որ նա և նրա երեք ընկերները տասն անգամ ավելի արդյունավետ էին, քան իրենց աշխատակիցները»: - «Այնպես որ ես աղոթեցի. «Տե՛ր, եթե Դանիելը և նրա ընկերները, ովքեր ապրում էին Հին ուխտի մեջ, տասն անգամ ավելի արդյունավետ էին, քան իրենց աշխատակիցները, ապա ես նույնպես պետք է ամենաքիչը տասն անգամ ավելի արդյունավետ լինեմ, քան իմ աշխատակիցները, որովհետև ես Նոր ուխտի մեջ եմ և ապրում եմ շնորհքի մեջ»»: Ընկերս շարունակեց. «Ձո՛ն, այդ խոշոր ընկերությունն ամեն տարի գնահատում էր այդ գլխավոր դիզայներական կամ ինժեներական թիմի անդամներին՝ որոշելու համար, թե որքանով են նրանք խնայում ընկերության միջոցները և որքան արդյունավետ է նրանց աշխատանքը»: Այլ խոսքերով՝ նրանց հետազոտությունը ցույց էր տալիս աշխատակիցների ստեղծագործ լինելը, արդյունավետությունը, և՝ թե որքան առաջադեմ գաղափարներ ունի յուրաքանչյուր անդամը: «Երկրորդ տեղում գտնվող մեր թիմի աշխատակիցը ընկերությանը բերել էր 35 միլիոն դոլարի օգուտ՝ իր խնայողություններին և աշխատանքի արդյունավետության շնորհիվ: Գիտե՞ս, թե որքան էր իմ թիվը»:

Ես ժպտացի՝ անհամբերությամբ լցված. «Եվ որքա՞ն»:

Նա պատասխանեց. «Ես ընկերության համար վաստակել էի 350 միլիոն դոլար խնայողությունների և արդյունավետ աշխատանքի միջոցով»: Հասկանալի է, թե ինչպես Բենը բարձրացավ՝ դառնալով Ամերիկայի ամենախոշոր ընկերություններից մեկի փոխտնօրենը:

Ես ցանկանում եմ պատմել մի ամուսնական զույգի մասին, ովքեր մեր «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության աշխատակիցներն են: Մեկ անգամ նրանք իրենց երկու որդիներին բերեցին մի ծառայության, որտեղ ես սովորեցնում էի այս սկզբունքները: Ծառայությունից հետո նրանց կրտսեր որդին՝ Թայլերը, ով նոր էր դարձել տասնմեկ տարեկան, ասաց իր հորը. «Ես պետք է լինեմ շատ ավելի լավը, քան ցանկացած այլ ֆուտբոլիստ մեր քաղաքային լիգայում:

Հաջորդ ֆուտբոլային մրցաշրջանում Թայլերի հաջողությունների մասին պատմելու փոխարեն թո՛ւյլ տվեք մեջբերել այս նամակը, որ գրել են նրա հայրն ու մայրը.

Ջո՛ն,

Սիա Թայլերի տվյալներն աշնանային մրցաշարի ժամանակ (ինը խաղ՝ ներառյալ եզրափակիչները և վերջին խաղը չեմպիոնի տիտղոսի համար): Նա խաղում է Կոլորադո Սփրինգսի 11-12 տարեկան երեխաների քաղաքային լիգայում:

Մեր որդու հասակը 152 սմ է, քաշը՝ 47 կգ: Նա 11 տարեկան է: Նայելով լուսանկարներին, որտեղ նա իր թիմի այլ երեխաների հետ է՝ ես կասեի, որ նա սովորական կառուցվածք ունի (չունի արտասովոր տվյալներ):

Մրցաշարի սկզբում իր ֆուտբոլային լիգայի ղեկավարը (խոսքն ամերիկյան ֆուտբոլի մասին է) դիտում էր, թե ինչպես էր Թայլերը մարզվում ամենամյա ֆուտբոլային ճամբարում: Նա ասաց. «Զարմանալի է: Թվում է, թե Թայլերը տասն անգամ ավելի արագաշարժ է դարձել, քան անցյալ տարի էր»:

Թայլերը գնդակով վազել է 270 մետր և փոխանցել գնդակը 78 անգամ: Երկրորդ տեղում գտնվող մարզիկի տվյալներն են 158 մետր վազք և 70 փոխանցում: Եվ սա այն դեպքում, երբ մարզիչը թույլ չի տալիս նրան դաշտ դուրս գալ յուրաքանչյուր խաղի 1/2-ի ընթացքում՝ մտածելով, որ նրան այսպես օգտագործելը հակասում է սպորտային էթիկային: Թայլերը 17 միավոր է վաստակել 78 փոխանցումից: Երկրորդ տեղում գտնվող մարզիկը վաստակել է 7 միավոր 70 փոխանցումից:

Մրցաշարի մոտավորապես կեսից մրցակից թիմերի մարզիչները սկսեցին կառուցել իրենց պաշտպանությունը Թայլերի շուրջ: Խաղերի ընթացքում մենք լսում էինք, թե ինչպես էին մարզիչները գոչում. «Զգու-

շացե՛ք 68 համարից», «Կարո՞ղ է ինչ-որ մեկը կանգնեցնել 68 համարին», «Այդ ի՞նչ եք անում: Նա անցնում է ձեզանից»: Վաթսունութ համարի խաղացողը Թայլերն էր:

աղից հետո մարդիկ, ում Թայլերը չէր ճանաչում, մոտենում էին նրան, ողջունում և զրուցում նրա հետ: Նա մի փոքր զարմացած էր և անհարմար էր զգում իրեն, բայց մենք ասացինք նրան, որ Աստծո շնորհքի միջոցով նա ազդեցություն է թողնում շրջապատի վրա, ասացինք նաև, որ նա պետք է շարունակի վստահել այդ շնորհքին և պետք է սովորի ճիշտ ձևով վարվել դրա հետ:

Հարգանքներով՝ Ջիմ և Քելլի Տ.

Զարմանալի է, թե որքան հեշտությամբ են բազմաթիվ պատանիներ հավատում Աստծո Խոսքին և ըստ դրա գործում: Թայլերը մեծ օրինակ է բոլորիս համար:

ՄԵՐ ՄԵՋ ԵՂԱԾ ՇՆՈՐՀՔԸ

Ինչո՞ւ մենք պարզապես չենք հավատացել այն բանին, որ Աստված ասում է Իր Խոսքում: Այն ուխտի մեջ, որ մենք կնքել ենք Նրա հետ, գրված է. «Բայց Նրան, որ կարող է առատությամբ անել ամեն բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության [շնորհքի] չափով, որ մեզանում ներգործում է» (Եփես. 3.20): Ոչ թե այն զորության չափով, որը պարբերաբար իջնում է Երկնքից, ո՛չ էլ այն զորության չափով, որը գալիս է, երբ դու գտնում ես ինչ-որ մեկին, ում կյանքում ծառայության պարգև կա: Ո՛չ, այլ այն *զորության չափով, որ մեզանում ներգործում է*:

Ուշադրությո՛ւն դարձրու հատկապես այս խոսքի սկզբին. Աստված կարող է: Պատկերացրու, որ աշխարհի ինչ-որ մասում խիստ սով է սկսվում: Սակայն մի շատ առատաձեռն և բարեգործ ազգ, որն ապրում է երկրագնդի հակառակ կողմում, իր զինվորներին այդտեղ է ուղարկում մեծ նավերով և բեռնափոխադրող ինքնաթիռներով, որոնք լի են թարմ բանջարեղենով, մրգերով, հացահատիկով, մսով և խմելու ջրով: Այդ ռազմական միավորման գեներալը սովից տուժած տարածքի բնակիչներին հայտարարում է. «Մենք կարող ենք տալ այնքան սնունդ, որքան դուք կարող եք տանել»: Մի մարդ գալիս է զբոսախնջույքի զամբյուղով և տանում երկու օրվա սնունդ՝ երկու հոգու համար: Մեկ այլ մարդ գա-

լիս է մեծ պարկով և տանում այնքան սնունդ, որը հինգ օր կբավականացներ իր ընտանիքին: Իսկ մեկ այլ մարդ էլ գալիս է թեթև բեռնատարով և տանում այնքան սնունդ, որը կբավականացնի մեկ ամիս՝ իր ընտանիքի և մի քանի քաղցած հարևանների համար:

Այն մարդը, որ գնացել էր զբոսախնջույքի զամբյուղով, տեսնում է իր տան մոտով անցնող մեքենան, որի թափքում մեկ տոննայից ավելի սնունդ կար: Վրդովմունքը չափազանց թույլ է նրա վիճակը նկարագրելու համար. նա լցվում է կատաղությամբ: Նա բողոքում է ոչ միայն իր հարևաններին, այլև նրանց, ովքեր հանդիպում էին իրեն: Վերջապես նրա բողոքները հասնում են գեներալին: Գեներալը կանչում է նրան և հարցնում. «Լսի՛ր, չէ՞ որ մենք ասացինք, որ *կարող* ենք տալ ձեզ այնքան սնունդ, որքան դուք կարող եք տանել: Ինչո՞ւ դու եկար այդքան փոքր կոնտեյներով: Ինչո՞ւ չբերեցիր քո թեթև բեռնատար մեքենան այնտեղ, ուր բաժանվում էր սնունդը:

Մեր կոնտեյները միակ բանն է, որ սահմանափակում է Աստծուն:

Ինչպիսի՞ն է քրիստոնյայի կոնտեյները, երբ խոսքն Աստծո շնորհքի մասին է: Ըստ Եփեսացիների 3.20-ի՝ այնքան, որքան մենք կարող ենք *խնդրել կամ մտածել*: Աստված ասում է. «Իմ շնորհքը [զորությունը] քեզանում շատ ավելի գերազանցում է այն կոնտեյներին, որ դու կարող ես բերել»: Այլ խոսքերով՝ մեր կոնտեյներն է որոշում, թե որքան ենք մենք ստանալու այն անսահման պաշարներից, որոնք հասանելի են մեզ: Կոպիտ ասած՝ մեր կոնտեյները միակ բանն է, որ սահմանափակում է Աստծուն: Ես հավատում եմ, որ Աստված հարցնում է ինձ և քեզ. «Ինչո՞ւ ես դու մտածում միայն այն բաների մասին, որոնք անհրաժեշտ են մի կերպ ապրելու համար: Ինչո՞ւ ես դու մտածում միայն քո և քո ընտանիքի մասին: Ինչո՞ւ չես օգտվում այն ամբողջական ներուժից, որ Ես դրել եմ քեզանում և ազդեցություն չես թողնում քո ողջ շրջապատի վրա, ինչպես Դանիելը»:

Ահա թե ինչու է Պողոսը ջանասիրաբար աղոթում, որ մենք գիտենանք և հասկանանք, թե «որն է Նրա զորության անչափ, անսահման և գերազանց մեծությունը *մեզանում* և *մեզ համար*, որ հավատացինք» (Եփես. 1.19, AMP):

Ուշադրությո՛ւն դարձրու, թե ինչպես է Պողոսը շարադրում բառերը. *անչափ, անսահման, գերազանց մեծություն*: Մտածի՛ր Աստծո զորության մասին. ի՞նչ է նշանակում այս բառերից յուրաքանչյուրը քեզ համար: Ուշադրությո՛ւն դարձրու՝ Պողոսը խոսում է այն զորության մասին, «որ *մեզանում* է»: Նա չի խոսում այնպիսի զորության մասին, որը մենք պարբերաբար ստանում ենք որևէ ընտրյալ ծառայողից, և որն Աստված կարող է երբեմն տալ, իսկ երբեմն՝ ոչ: Այս զորությունը նույնպես «*մեզ համար*» է: Այն զորացնում է մեզ, որպեսզի մենք իշխենք այս կյանքում: Այն օգնում է մեզ բարձրանալ և աչքի ընկնել, որպեսզի մարդիկ կարողանան տեսնել Հիսուս Քրիստոսի հարության զորությունը մեր միջոցով: Այս զորությունն օգնում է մեզ շողալ որպես պայծառ լույս այս խավար աշխարհում:

Այժմ մենք պետք է տանք հետևյալ հարցը. արդյո՞ք մենք ապրում ենք շատ ավելի ցածր մակարդակի վրա, քան այն մակարդակի, որի համար Հիսուսն այդքան մեծ գին է վճարել: Եթե մենք անկեղծ լինենք, ապա մեր պատասխանը դրական կլինի: Այն միջակությունը, որ մենք ընդունել ենք որպես կյանքի ոճ, ողբերգական հետևանքներ է ունեցել: Դրա պատճառով մենք չենք կարողացել ազդեցություն ունենալ մեր շրջապատի մարդկանց վրա՝ նրանց Աստծո արքայություն բերելու համար:

Ինչո՞ւ ենք մենք այդքան հաճախ տրվում աշխարհի առաջարկած ճանապարհներին, որոնք անհավատության ճանապարհներ են: Օրինակ՝ երբ ճգնաժամ է սկսվում, ինչո՞ւ են քրիստոնյաները վախենում և տատանվում մյուսների հետ: Երբեմն ես մտածում եմ, որ մենք պետք է փոխենք Փիլիպեցիների 4.19 խոսքը և գրենք. «Եվ իմ Աստված լրացնի ձեր ամեն կարոտությունը «Ուոլ Սթրիթ» բորսայի, բանկային համակարգի և տնտեսության վիճակի չափով: Մի՞թե քրիստոնյաների մեծամասնությունը հենց այսպես չվարվեց վերջերս տեղի ունեցած ֆինանսական ճգնաժամային իրավիճակում: Բայց համաձայն այն ճշմարտության, որը մենք գտնում ենք Աստծո Խոսքում, հենց դժվար ժամանակներում է, որ մենք պետք է շողանք ավելի պայծառ, քան երբևէ: Ճգնաժամին պաշարները չեն լքում մեր մոլորակը: Գաղափարները չեն արգելվում, ստեղծագործական առաջարկները չեն պակասում, և նորարարությունն ու քրտնաջան աշխատանքը չեն անհետանում: Նման խավար ժամանակներում Աստծո ժողովուրդը պետք է քայլ անի և Աստծուց շնորհք խնդրի, և Նրա զորությունը մեզ կտա միլիոնավոր դոլարների արժողություն

ունեցող գաղափարներ, որոնք մեծապես կօգնեն մարդկանց: Ճգնաժամն ընդամենը նշանակում է, որ ֆինանսական հոսքի սովորական ճանապարհներն այլևս չեն գործում, և անհրաժեշտ են նոր ստեղծագործական ճանապարհներ ու թարմ գաղափարներ: Այդ ճանապարհներն ու գաղափարները պետք է առաջարկենք ես և դու, որովհետև մեր ստեղծագործական զորության աղբյուրը երբեք չի վերջանում:

1920-ականներին ինչ-որ մեկը պետք է էմի Սեմփլ Մակֆերսոնին ասեր, որ այդ ժամանակ կնոջ համար անհնար էր Լոս Անջելեսում հինգ հազար նստատեղ ունեցող դահլիճ կառուցել: Նրան նույնպես պետք էր ասել, որ Մեծ դեպրեսիայի ժամանակ անհնար էր հոգալ այդ չափի շինության մասին: Սակայն նա արեց դա: Այսօր այդ դահլիճում մի շատ զորավոր եկեղեցի է հավաքվում: Ես անձամբ քարոզել եմ այդտեղ: Հայտնի փաստ է, որ հոլիվուդյան պրոդյուսերները թաքուն այցելում էին էմիի կիրակնօրյա երեկոյան ծառայություններին, որպեսզի գաղափարներ վերցնեին այն բեմանկարներից, որ նա պատրաստում էր: Նրանք օգտագործում էին այդ գաղափարները Հոլիվուդում՝ բեմական ձևավորումների մեջ: Էմին ազդում էր ամբողջ աշխարհի վրա՝ լույսի պես շողալով:

Ես համեմատում եմ էմիի ծառայությունը մի հեռուստատեսային հաղորդման հետ, որը պատահաբար դիտեցի որոշ ժամանակ առաջ: Մի մարդ երգում էր «Զարմանալի շնորհք» երգը մեծ լսարանի առջև: Լսարանի առջևի մասում երեք հոգի նստած էին «Ժյուրիի» սեղանին: Երբ նա վերջացրեց իր երգը, ժյուրիի անդամները սկսեցին գնահատել նրա կատարումը: Ես ցնցված էի, երբ նրանք ասացին. «Դու լա՛վ երգեցիր, բայց քո ձայնը կարող էր մի փոքր բարձր և հնչեղ լինել…»:

Ոտքերս թուլացան: Ես աղաղակեցի. «Տե՜ր, Դու ստեղծեցիր տիեզերքը: Դու ստեղծեցիր միգամածությունները և գերպայծառ աստղերը, վիթխարի Ժայռոտ սարերն ու զարմանալի ծովային արարածներին: Դու ապրում ես մեր մեջ, իսկ մենք դիտում ենք «Ամերիկյան կուռք» հեռուստաշոուն ոգեշնչման համա՞ր»: Մտածե՛ք այդ մասին. էմին ազդեցություն էր թողնում Հոլիվուդի վրա իր ստեղծագործական մոտեցմամբ, իսկ շնորհքը չօգտագործելու պատճառով մեր ստեղծագործական ուժն այնքան աննշան է, որ մենք դարձել ենք սահմանափակ և ինքներս ենք սկսել գաղափարներ վերցնել Հոլիվուդից:

Ես լցված էի տխրությամբ: Ես շատ երկար եմ մտածել այդ մասին և, ի վերջո, եկել հետևյալ եզրակացությանը. *«Իհա՛րկե, եթե մենք միայն սովորեցնենք, որ շնորհքը ներում է մեր մեղքերը և տալիս է մեզ Երկինք մտնելու հնարավորություն, ապա մենք աչքի չենք ընկնի և չենք լուսավորի այս աշխարհը»*: Այնպիսի տպավորություն է, որ Աստված թույլ է տվել, որ մենք ծաղրանքի առարկա դառնանք աշխարհի առջև: Ցանկանալով ստեղծել այնպիսի ուղերձ, որը հեշտ և հարմարավետ է, որի դեպքում կարիք չկա անկոտրում հավատք ունենալ կամ պատերազմել հավատքի համար, մենք վշտացրել ենք Աստծուն, և Նա ցավով ասում է. *«Ես թույլ կտամ ձեզ կրել ձեր մարդկային իմաստության ամոթը»*:

Ինչո՞ւ մենք պարզապես չենք հավատացել Նրա խոստումներին և Նրա պայմաններին: Ինչո՞ւ ենք մենք փորձել հարմարեցնել Նրա իմաստությունը մեր կենսաոճին, փոխարենը չենք ձգտել վերափոխման, որը տեղի է ունենում, երբ մենք որոշում ենք կայացնում ապրել Նրա ճշմարտությունով:

ՇՆՈՐՀՔԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Ամենադժվար դպրոցական առարկան ինձ համար անգլերենն էր: Ես հատկապես չէի սիրում շարադրություն գրել և խուսափում էի բոլոր այն առաջադրանքներից, որոնք կապված էին գրելու հետ: Սովորաբար պահանջվում էր երեքից չորս ժամ, որպեսզի կարողանայի մեկ կամ երկու էջ գրել: Ես նստում էի և նայում մաքուր թղթին՝ փորձելով ինչ-որ կերպ սկսել: (Այդ ժամանակ չկային համակարգիչներ կամ «iPad»-ներ): Ի վերջո ես ինչ-որ նախադասություն էի կազմում, երկար զննում էի այն և պատռում ու դեն նետում թուղթը: Քիչ անց ես գրում էի ևս երկու նախադասություն, և կրկին որոշում, որ դրանք սարսափելի են և նորից դեն էի նետում թուղթը: Արդյունքում ես պատռում էի մի քանի թերթ և վատնում ժամանակս: Մոտավորապես մեկ ժամ անց ինձ հաջողվում էր մեկ կամ երկու պարբերություն գրել: Եվ այս ամենից հետո, թեև ինձ թվում էր, թե հաջող աշխատանք եմ կատարել, այնուամենայնիվ շատ ցածր գնահատական էի ստանում:

Երբեմն ես մտածում էի, որ իմ անգլերենի ուսուցչուհիները փոխադրում են ինձ հաջորդ դասարան, որպեսզի ստիպված չլինեն տեսնել ինձ

հաջորդ տարի: Կարծում եք՝ ես չափազանցո՞ւմ եմ: Ես անգլերեն բանավոր քննական թեստ հանձնեցի պետական ընդունելության քննությունների ժամանակ և 800-ից հավաքեցի ընդամենը 370 միավոր: Դա ընդամենը քննական թեստի 46 տոկոսն էր, ինչը կարելի էր «փայլուն ձախողում» համարել: Բարեբախտաբար՝ ես ընդունակություններ ունեի ճշգրիտ գիտությունների և մաթեմատիկայի բնագավառում, ինչի շնորհիվ էլ դարձա Փյուրդյուի համալսարանի ինժեներական բաժնի ուսանող:

Այնպես որ 1991թ.-ին, երբ Աստված աղոթքի մեջ ինձ ասաց. *«Որդի՛ս, ես ցանկանում եմ, որպեսզի դու գրես»*, ես մտածեցի, որ Նա շատ մեծ սխալ էր գործում: Ես մտածեցի. *«Միգուցե Աստված այնքան երեխաներ ունի այս երկրի վրա, որ շփոթում է ինձ մեկ ուրիշի հետ»*:

Ամոթ է խոստովանելը, բայց Նրա ասածը ծիծաղելի թվաց ինձ և ես ոչինչ չարեցի: Այդ ժամանակ ես ոչինչ չգիտեի Աստծո անհավատալի, զորացնող շնորհքի մասին, որի մասին հիմա պատմում եմ քեզ:

Տասն ամիս անց, երկու շաբաթվա տարբերությամբ, երկու կին երկու տարբեր նահանգներից եկան ինձ մոտ: Այդ կանանցից մեկը Տեխասից էր, իսկ մյուսը՝ Ֆլորիդայից: Երկուսն էլ փոխանցեցին նույն ուղերձը. «Զո՛ն Բիվեր, եթե դու չգրես այն ուղերձները, որոնք Աստված տալիս է քեզ, Նա կտա դրանք մեկ ուրիշին, իսկ դու կդատվես քո անհնազանդության համար»:

Երբ ես լսեցի, թե ինչպես երկրորդ կինն ինձ նույն բանն ասաց, ինչ լսել էի ընդամենը երկու շաբաթ առաջ, Աստծո երկյուղը համակեց ինձ. *«Ավելի լավ է՝ հնազանդվեմ: Ավելի լավ է՝ գրեմ»*: Բայց ես իսկապես մտածում էի, որ Աստված մեծ սխալ էր գործում: Ես չէի կարողանում անգամ մի էջ գրել: Ինչպե՞ս ես պետք է գիրք գրեի: Լինելով հուսահատ վիճակում՝ Աստծո հետ ես պայմանագիր կնքեցի նոթատետրի թղթի վրա: Ես գրեցի. *«Ես Քո շնորհքի կարիքն ունեմ: Ես չեմ կարող անել դա առանց Քո կարողության»*: Ես ստորագրեցի այդ պայմանագիրը և նշեցի ամսաթիվը:

Որոշ ժամանակ անց սկսեցի գրել: Ես չսկսեցի գրքի նախագիծը կազմելուց, որովհետև գաղափար անգամ չունեի, թե ինչպես անել դա, ինչպես նաև վերջնականորեն չգիտեի, թե ինչ էի գրելու: Ես միայն գիտեի,

թե ընդհանուր առմամբ ինչի մասին է լինելու այդ գիրքը: Հանկարծ ես ստացա այնպիսի մտքեր, որոնց մասին երբեք չէի մտածել, չէի սովորեցրել և չէի լսել որևէ ուսուցչից: Ես ուղղակի գրում և գրում էի: Վերջապես ինձ մոտ մեկ գրքի չափ նյութ հավաքվեց: Հետո ես գրեցի երկրորդ գիրքը, իսկ հետո՝ երրորդը: Մինչև օրս ես հինգ գրքի հեղինակ եմ, որոնք վաճառվել են միլիոնավոր օրինակներով և հրատարակվել են ամբողջ աշխարհում ավելի քան վաթսուն լեզուներով: Գրքերից մեկը, որը կոչվում է «Մոտենալ Աստծուն», 2004թ.-ին շահել է «Ռիթեյլերս Չոյս» («Մանրածախ վաճառողների ընտրությունը») մրցանակը: Եվս մի քանի գրքեր դարձել են հանրաճանաչ թե՛ Ամերիկայում, թե՛ ամբողջ աշխարհում:

Ես չեմ կարող պարծենալ այս գրքերը գրելով, որովհետև դրանք իմ կարողություններով չեմ գրել: Ես արել եմ դա միայն Աստծո շնորհքով:

Եվրոպայում ես կանգնած էր հոկեյի մարզադաշտում, որտեղ ավելի քան ութ հազար մարդ կար: Նրանց մեծամասնությունը քրիստոնյա առաջնորդներ էին: Ես հարցրի՝ քանի՞սն են կարդացել իմ գրքերից որևէ մեկը և, ի զարմանս ինձ, գրեթե բոլորը բարձրացրին իրենց ձեռքերը: Արևելյան Եվրոպայում անցկացվող մի միջազգային կոնֆերանսի ժամանակ, որտեղ ներկա էին ավելի քան վաթսուն երկրներից ժամանած վեց հազար առաջնորդներ, կազմակերպիչը հարցրեց, թե արդյոք նրանք կարդացե՞լ են իմ գրքերից գոնե մեկը՝ հրատարակված իրենց մայրենի լեզվով: Որքան հաճելի էր ինձ համար տեսնել, թե ինչպես ներկաների մոտ 90 տոկոսը ձեռք բարձրացրեց: Այս գիրքը գրելու ժամանակ իրանցի հրատարակիչներն ինձ ասացին, որ իմ գրքերից յոթը թարգմանվել են պարսկերեն՝ Իրանի պետական լեզվով: Նրանք ասացին. «Դու ամենաընթերցվող քրիստոնեական հեղինակն ես ամբողջ Իրանում»: Ես շարունակում եմ ստանալ նման տեղեկություններ: Սակայն ցանկանում եմ ասել հետևյալը. *որքա՜ն հրաշալի է Աստծո շնորհքը*:

Ես կկիսվեմ ձեզ հետ իմ երազանքով: Ես ցանկանում եմ գտնել իմ ավագ դպրոցի անգլերենի ուսուցչուհիներին և ցույց տալ նրանց իմ հինգ գրքերը, որ ես գրել եմ Աստծո շնորհքով: Ես պատկերացնում եմ, թե ինչպես նրանք ուշագնաց կլինեն, երբ տեսնեն դրանք, իսկ ուշքի գալուց հետո ես նրանց կբերեմ Քրիստոսին: Այս «պտուղը» կգրավի նրանց

ուշադրությունը և ցույց կտա մեր Տեր Հիսուս Քրիստոսի զարմանալի շնորհքը:

Ահա թե ինչու է Պողոսը համարձակ հայտարարում. «Բայց Աստծո շնորհքով եմ ինչ որ եմ...» (Ա Կորնթ. 15.10): Լսի՛ր ինձ, սիրելի՛ ընթերցող: Քո ինքնությունը չի որոշվում քո ծննդավայրով, դաստիարակությամբ, ազգությամբ, սեռով կամ կրթությամբ: Դու այն ես, ինչ կաս Աստծո շնորհքով:

Անցյալում ես չէի կարողանում հրապարակային ելույթներ ունենալ: Այն բանից հետո, երբ Լիզան և ես ամուսնացանք, իմ առաջին քարոզներից մեկի ընթացքում նա խորը քուն մտավ քարոզի սկզբից տասը րոպե հետո: Նրա լավագույն ընկերուհին՝ Էմին, նստած էր նրա կողքին: Նա նույնպես այնքան խորն էր քնել, որ ես տեսնում էի, թե ինչպես էր թուքը թափվում նրա լայն բացված բերանից: Նրանք երկուսով քնած մնացին մինչև իմ քարոզի ավարտը:

Մի քանի տարի առաջ Լիզան գտավ 1984թ.-ի մի տեսաերիզ, որտեղ ես քարոզում էի: Նա միացրեց այն, և մի քանի վայրկյան անց ես գոչեցի. «Լի՛զա, դե՛ն նետիր սա»: Նա խլեց այդ տեսաերիզը, երկու ձեռքով ամուր գրկեց և սկսեց ուժգին ծիծաղել. «Ո՛չ մի դեպքում»,- ասաց նա:

- «Սա արտակարգ նյութ է քեզ շանտաժի ենթարկելու համար»:

Այսօր միայն Աստծո զորացնող շնորհքով ամբողջ աշխարհում բազմաթիվ բեմահարթակներից ես քարոզել եմ հինգ հազար, տասը հազար և նույնիսկ՝ քսան հազար մարդկանց առջև: Մարդիկ հարցնում են ինձ. «Դու նյարդայնանո՞ւմ ես քարոզելուց առաջ»:

Ես պատասխանում եմ. «Բնավ, ո՛չ»:

Նրանք սովորաբար վրդովվում են իմ պատասխանից. «Ինչպե՞ս դու կարող ես կանգնել այդքան մարդկանց առջև առանց նյարդայնանալու»:

Ես ծիծաղում եմ և ասում. «Ես գիտեմ, որ չեմ կարող անել դա, և եթե Աստծո շնորհքը չդրսևորվի, ապա մենք բոլորս մեծ խնդիրներ կունենանք»: Հիմա, երբ ես ճանաչում եմ Աստծո շնորհքը, ես կարող եմ ասել, որ այն երբեք չի վերջանում. այն միշտ կա:

Ահա թե ինչու է Պողոսն ասում. «Հենց ձեր կոչմանը մտիկ արեք, եղբայրնե՛ր, որ ոչ թե շատ իմաստուններ մարմնի կողմից, և ոչ թե շատ զո-

րավորներ, և ոչ թե շատ ազնվականներ» (Ա Կորնթ. 1.26): Ինչո՞ւ Աստված կանչեց հենց այսպիսի մարդկանց: Որովհետև իմաստուն, զորավոր և ազնվական մարդիկ իրենց հույսը կդնեին իրենց սեփական կարողության վրա, ոչ թե շնորհքի:

Անցյալում Պողոսը նույնպես իմաստուն և ազնվական էր: «Ես կարող էի վստահ լինել ինձանում, եթե մեկ ուրիշը կարող էր»,- խոստովանում էր նա Փիլիպեցիների 3.4-ում (NLT): Բայց Պողոսը որոշում կայացրեց կախված լինել շնորհքից. «Մի ժամանակ ես մտածում էի, որ այս ամենը [իմաստությունը, զորությունը, ազնվականությունը] անչափ կարևոր են, բայց այժմ անարժան եմ համարում դրանք (Փիլիպ. 3.7, NLT): Ինչո՞ւ էին այս մարդկային հատկանիշներն անարժան: Որովհետև Պողոսը ցանկանում էր ապրել ձրի տրված շնորհքի մեջ ավելի, քան ապրել իր կարողությամբ, որ «ճանաչեմ Նրան և Նրա հարության զորությունը» (խոսք 10): Սա չի նշանակում, որ Պողոսը ջանք չէր գործադրում: Նա ջանասիրաբար սովորում էր՝ հաստատ մնալու համար, ջերմեռանդորեն աղոթում էր, որպեսզի լցվեր Աստծո կամքի գիտությունով, բոլոր իմաստությունով և հոգևոր հասկացողությունով: Պողոսը ջանք էր գործադրում, ինչպես մենք բոլորս պետք է վարվենք, բայց նա հավատում էր, որ Աստծո շնորհքն աստվածային զորություն կհաղորդեր իր մարդկային ջանքերին:

Եթե դու ուսանող ես, ապա պետք է ջանասիրաբար սովորես: Սակայն դու պետք է մշտապես հավատաս, որ Աստծո շնորհքը կբարձրացնի քեզ այնպիսի մտավոր մակարդակի վրա և կտա այնպիսի ձեռքբերումներ, որոնք անհասանելի են քո սեփական հասկացողության համար: Եթե դու բժիշկ ես, ապա պետք է տեղեկացված լինես ժամանակակից բժշկության բոլոր հայտնագործություններով: Սակայն դու չպետք է վստահես քո կարողություններին կամ կրթությանը: Դու պետք է վստահես Աստծո շնորհքի գերբնական իմաստությանը և ստեղծագործ կարողությանը, որը կօգնի քեզ իմանալ այն, ինչը դեռ ոչ ոքի հայտնի չէ: Եթե դու պրոֆեսիոնալ մարզիկ ես, ապա պետք է ջանասիրաբար աշխատես և մարզվես: Բայց սրա հետ մեկտեղ դու պետք է վստահես Աստծո շնորհքին, որը կօգնի քեզ գերազանցել քո բնագավառում գտնվող անհավատ մարդկանց:

Հիշի՛ր, թե ինչպես առաջին գլխում մենք պարզեցինք, որ մեզ սիրող Արարիչ Աստված մեզանից յուրաքանչյուրի կենսագրությունը գրել է

մինչև մեր ծնվելը: Մենք տեսանք Դավթի փառաբանության խոսքերը. «Դու տեսար ինձ մինչև իմ ծնվելը: Կյանքիս բոլոր օրերը գրանցված էին Քո գրքում: Ամեն պահը գրառված էր, երբ որ իմ օրերից ոչ մեկը դեռ չկար» (Սաղմ. 139.16, NLT):

Թո՛ւյլ տուր ասել հետևյալը Աստծո մեջ ունեցած քո կյանքի մասին: Դու չես կարող կատարել Աստծո կամքը քո սեփական կարողությամբ. դա պարզապես անհնար է: Եթե Աստված այնպես աներ, որ դու կարողանայիր կատարել Իր կամքը քո սեփական ուժերով, ապա Նա ստիպված կլիներ կիսվել քեզ հետ Իր փառքով: Իսկ Նա երբե՛ք դա չի անի: Նա պարզ ասում է. «Ես չեմ տա Իմ փառքը ոչ մեկին» (Եսայի 42.8, NLT): Այնպես որ Աստված մտածված քո կյանքը ծրագրել է այնպես, որ այն գերազանցի քո մարդկային կարողությունները: Դու պետք է կախված լինես Նրա շնորհքից, որպեսզի կարողանաս կատարել Նրա կամքը: Այս դեպքում Աստված կստանա ամբողջ փառքը:

Ահա թե ինչ եմ ասում մարդկանց այն գրքերի մասին, որ ես գրել եմ. «Ես շատ լավ գիտեմ, թե ով է այս գրքերի իրական հեղինակը: Դրանք գրված չեն իմ կարողությամբ: Իմ անունը գրված է այդ գրքերի վրա զուտ այն պատճառով, որ ես առաջին մարդն եմ, ով կարդացել է դրանք: Ես գիտեմ, որ Աստծո շնորհքով և Աստծո կարողությունով եմ, ինչ որ եմ, և դա ինձանից չէ, դա Աստծո ձրի պարգևն է:

Սակայն այսօր մենք կանգնած ենք տագնապալի իրականության առջև: Ամերիկացի հավատացյալների ընդամենը երկու տոկոսը գիտեն, որ շնորհքի զորությունը կարողություն է տալիս իրենց՝ ապրել այն կյանքով, որ Աստված նախասահմանել է իրենց համար: Ինչպե՞ս կարող են մնացած 98 տոկոսը կատարել իրենց կոչումն իրենց իսկ սեփական կարողությամբ: Փաստ է, որ նրանք չեն կարող դա անել: Միգուցե սա՞ է պատճառը, որ ազդեցություն չենք թողնում մեր շրջապատի մարդկանց վրա:

ՄՏՆԵԼ ՇՆՈՐՀՔԻ ՄԵՋ

Շնորհքը ձրի պարգև է:

Այն զորությունը, այսինքն՝ Աստծո շնորհքը, որի մասին ես գրում եմ, անկարելի է վաստակել: Դու նույնպես չես կարող արժանանալ դրան քո

ջանքերով: Պողոսը հաստատում է, որ այն կարելի է ընդունել *միայն* հավատքով: «Որովհետև շնորհքով եք փրկված *հավատքի* ձեռով, և սա ոչ թե ձեզանից է, *այլ Աստծո պարգևն է, ոչ թե գործերից,* որ մեկը չպարծենա» (Եփես. 2.8,9): Նա գրում էր Հռոմի հավատացյալներին. «Որով *ընդունեցինք հավատքով* այս շնորհքի մեջ մտնելն էլ, որ նրանում կանգնած ենք…» (Հռոմ. 5.2): Ինչպե՞ս ենք մենք մուտք գործում Աստծո շնորհքի մեջ. ո՛չ ջանասիրաբար աշխատելով, ո՛չ լավ կյանքով ապրելով, ո՛չ օրը երկու ժամ աղոթելով կամ ամիսը երկու անգամ ծոմ պահելով՝ ոչնչով, ինչը կապված է մարդկային ջանքերի հետ: Մենք մտնում ենք Նրա շնորհքի մեջ միայն հավատքով:

Ուրեմն ինչո՞ւ մենք պարզապես չենք հավատում: Թո՛ւյլ տուր այսպիսի օրինակ բերել. եթե քո ջրհորը չորանում է, ապա դու խնդիր ունես: Առանց խմելու ջրի դու և քո ընտանիքը կմահանաք մի քանի օրից: Բայց ձեր քաղաքում՝ հենց այն փողոցի վրա, որտեղ քո տունն է, կա մի հսկայական ջրամբար, որտեղ միլիոնավոր լիտրերով խմելու ջուր կա: Ի՞նչ պետք է դու անես: Դու պետք է գնաս քաղաքապետարան և թույլտվություն ստանաս… դրանից հետո պետք է գնաս շինանյութի խանութ և ջրատար խողովակներ գնես, այնուհետև վերադառնաս տուն և միացնես տան ջրատար խողովակները ջրամբարի գլխավոր խողովակին, որը գտնվում է քո տանից քիչ հեռու: Այժմ քո տան ջրատար խողովակները *միացած են* խմելու ջրի ջրամբարին, որտեղ միլիոնավոր լիտրերով խմելու ջուր կա քո և քո ընտանիքի համար: Մի խոսքով՝ հավատքը շնորհքի խողովակաշարն է: Ե՛կ կարդանք Հռոմեացիների 5.2-ը այս լույսի ներքո. «Հավատքի խողովակաշարով մենք *մուտք* ունենք դեպի շնորհքի բոլոր ջրերը, որ հարկավոր են մեզ» (մեջբերումն արված է ըստ հեղինակի): Սա այնքան պարզ է. զորացնող շնորհքը ստանալու միակ ճանապարհը հավատքն է: Ահա թե ինչու է Եբրայեցիների թղթի հեղինակն ասում. «Որովհետև մենք էլ ենք ավետիքն առել, ինչպես և նրանք, բայց նրանց օգուտ չբերեց ավետիքի քարոզության խոսքը, որովհետև *չխառնվեց հավատքի հետ լսողների մեջ*» (4.2):

Նա խոսում է Աբրահամի սերնդի մասին, ովքեր Աստծո խոստումների ժառանգներն էին: Փոխաբերական իմաստով ասած՝ ողջ Երկնքի զորությունը կամ մատակարարումը նրանց տների կամ վրանների մոտ էր:

Սակայն նրանք չօգտվեցին այն բանից, որ Աստված ձրի տրամադրեց, որովհետև չմիացրեցին իրենց «հավատքի խողովակները» Աստծո Խոսքի խոստումները ստանալու համար:

Նույն կերպով ամերիկացի հավատացյալների ընդամենը երկու տոկոսը գիտի, որ շնորհքն Աստծո այն զորությունն է, որը կարողություն է տալիս մեր մարդկային կարողությունից ավելին անելու և մեր զարմանալի գործերով փայլելու այս խավար աշխարհում: Այդ դեպքում, ինչպե՞ս կարող են նրանք հավատալ և մասնակից լինել այդ շնորհքին: Պողոսն ասում է հետևյալը. «Ինչպե՞ս կարող են նրանք հավատալ, եթե չեն լսել այս ուղերձը: Եվ ինչպե՞ս կարող են նրանք լսել, եթե այս ուղերձը չի քարոզվել (Հռոմ. 10.14, TEV):

Մենք չենք կարող հավատալ այն բանին, ինչը չգիտենք:

Եթե մենք՝ քրիստոնյաներս, տեղյակ չենք, թե ինչ է ասում Աստծո Խոսքը զորացնող շնորհքի մասին, ապա ինչպե՞ս կարող ենք հավատալ: Մենք չենք կարող հավատալ այն բանին, ինչը չգիտենք: Եթե մենք չունենք «խողովակաշար» այս շնորհքը ստանալու համար, ապա շնորհքի խոստումը, որը գրված է Նրա Խոսքում, օգուտ չի բերի մեզ:

Անկասկած՝ սա ցավեցնում է Աստծո սիրտը: Հիսուսն ահռելի գին վճարեց, որպեսզի մենք գերազանցենք Դանիելին ու Հովհաննես Մկրտչին և լինենք այն կյանքի կենդանի օրինակները, որ Նա տալիս է ավելցուկով: Սակայն մենք պարզեցրինք շնորհքի մասին ուղերձը՝ թողնելով միայն ներումը և դժոխքի կրակից ապահովագրությունը: Թեև այս պարգևներն իսկապես անչափ կարևոր և հրաշալի են, բայց մենք չարեցինք հաջորդ քայլը. մենք այս կյանքի համար չվերցրեցինք Աստծո շնորհքի զորությունը: Այդ իսկ պատճառով մենք անկարող ենք անել Աստծո գործերն այս խավար աշխարհում և առանց նահանջելու տարածել Նրա փառքը:

Հիսուսի հետևորդներն ի վերջո աղաղակեցին. «Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի անենք այն, ինչ Աստված է ցանկանում մեզանից» (Հովհ. 6.28, TEV): Նրանք նույնպես ցանկանում էին օգնել տառապյալ մարդկանց Աստծո կարողությամբ: Չէ՞ որ Հիսուսը պատվիրեց նրանց հետևել

Իր օրինակին: Հուսահատված՝ նրանք ի վերջո աղաղակեցին. «Ինչպե՞ս անենք այն, ինչ Դու ես անում»: Եվ ո՞րն էր Հիսուսի պատասխանը. «Հավա՛տք ունեցեք» (Հովհ. 6.29, CEV):

Ահա՛ պատասխանը: Պարզապես Աստծո «շնորհքի խոսքին» հավատալը միակ բանն է, որն անհրաժեշտ է Աստծո շնորհքը ստանալու համար: Ահա թե ինչու Պողոսը կարող էր քաջալերել Եփեսոսի հավատացյալներին՝ ասելով. «Եվ հիմա ձեզ Աստծուն եմ հանձնում, եղբայրներ, և *Նրա շնորհքի խոսքին*, որ նա կարող է շինել և ամեն սրբվածների հետ ձեզ *ժառանգություն* տալ» (Գործք 20.32):

Պողոսը սիրում էր այդ մարդկանց և գիտեր, որ այս կյանքում նրանք այլևս չէին հանդիպելու: Երբ դու գիտես, որ վերջին խոսքերդ ես ասում, դու զգուշորեն կընտրես այն բառերը, որ պետք է ասես քո սիրելիներին: Պողոսը հանձնեց նրանց ոչ միայն Աստծուն, այլ նաև «Նրա շնորհքի խոսքին»:

Այսօր ես լսում եմ, թե ինչպես են բարի կամեցողություն ունեցող քրիստոնյաներն ասում. «Դու պետք է վստահե՛ս Աստծուն», «Այս կյանքում քեզ պետք է միայն Աստված» կամ «Պարզապես մոտեցի՛ր Աստծուն»: Թեև այս խորհուրդը մարդկանց դնում է ճիշտ ճանապարհի վրա, բայց այն ամբողջական չէ: Պողոսը հանձնեց իր հավատակիցներին ոչ միայն Աստծուն, այլ նաև «Նրա շնորհքի խոսքին»: Աստծո շնորհքը շինություն է տալիս մեզ և փոխանցում է մեր *ժառանգությունը*: Իսկ ո՞րն է քո ժառանգությունը: Դա այն կյանքն է, որ Աստված գրել է քեզ համար մինչև քո ծնվելը:

Շնորհքի մասին թերի ուսմունքի պատճառով բազմաթիվ քրիստոնյաներ (ավելի ստույգ՝ 98 տոկոսը) կարծում են, որ Աստծո անհավատալի զորությունը հասանելի է միայն այն դեպքում, եթե մենք բավարար քանակությամբ ծոմ պահենք, աղոթենք, ծառայենք կամ ապրենք սրբության որոշակի չափանիշներով: Այս թերի ուսմունքի խնդիրը հետևյալն է. անկարելի է որոշել այն չափը, որը *բավարար* է Աստծո շնորհքը ստանալու համար: Այս պատճառով Պողոսը հակառակվում է Գաղատացիներին՝ ասելով.

> «Պատասխանե՛ք այս հարցին. արդյո՞ք Աստված, Ով շռայլորեն տալիս է ձեզ Իր ներկայությունը, այսինքն՝ Սուրբ Հոգուն, Որն անում է ձեր կյանքում այնպիսի բաներ, որ դուք երբեք չեք կարող ինքնուրույն անել, անում է սա ձեր բարեպաշտական ձգտումների պատճառով, թե՞ այն պատճա-

ռով, որ դուք հավատում եք, որ Նա կանի այդ բաները ձեզանում» (Գաղատացիների 3.5, MSG):

«Բարեպաշտական ձգտումը» ոչ մի տեղ չի տանի մեզ Աստծո մեջ, որովհետև այն կապված է մեր սեփական զորության և ջանքերի հետ: Այն դասը, որ մենք պետք է քաղենք այս գլխից, հետևյալն է. մենք կարող ենք ստանալ Աստծո ձրի, զորացնող շնորհքը միայն մեկ պայմանով. մենք պետք է հավատանք ու վստահենք Աստծուն, և հավատքով էլ ընդունենք Նրա շնորհքը:

Դա ոչնչով չի տարբերվում քո փրկությունից: Ահա թե ինչ է ասում Պողոսը փրկության մասին. «Թո՛ւյլ տվեք տալ ձեզ այս հարցը. ինչպե՞ս սկսվեց ձեր նոր կյանքը: Մի՞թե դուք օրուգիշեր աշխատում էիք Աստծուն հաճեցնելու համար, թե՞ պարզապես պատասխանեցիք Աստծո այն խոսքին, որն ուղղված էր ձեզ» (Գաղատ. 3.2, MSG):

Ինչպես որ մենք փրկվեցինք շնորհքով՝ պարզապես հավատալով և պատասխանելով փրկության ուղերձին, այնպես էլ պետք է շնորհքով շարունակենք զարմանալի գործեր անել՝ ազդեցություն թողնելով մեր շրջապատի վրա:

ՉԻԽՈՒԱԽՈՒԱ՞, ԹԵ՞ ԳՐԻԶԼԻ ԱՐՋ

Այս պնդումը վերադարձնում է մեզ այն հարցին, որ տվեցինք 3-րդ գլխի սկզբում: Արդյո՞ք մենք զորություն և կարողություն ունենք, որպեսզի *առանց նահանջելու* պահպանենք մեր համոզմունքները և իրականացնենք մեր նպատակները: Արդյո՞ք մենք Չիխուախուաներ ենք, թե՞ Գրիզլի արջեր:

Հուսով եմ, որ այս գլխում մեջբերված աստվածաշնչյան հատվածներն ուսումնասիրելուց հետո դու ուրախությամբ և վստահությամբ կհամաձայնես ինձ հետ, որ ես և դու Գրիզլի արջեր ենք, ոչ թե Չիխուախուաներ: Պահելով այս վստահությունը մեր մտքերում և սրտերում՝ ե՛կ շարունակենք խոսել չնահանջող, անկոտրում հոգու մասին:

6

ՏԵՍՆԵԼ ԿԱՄ ՄՏՆԵԼ

«Բոլորը, ովքեր ընդունում են Աստծո առատ շնորհքը և ձրիաբար արդարանում Նրա առջև, *կիշխեն կյանքում* Քրիստոսի միջոցով»:

Հռոմեացիների 5.17, (TEV)

Հուսով եմ, որ եթե դու հաճախ կարդաս Հռոմեացիների 5.17-ը, ապա համոզված եմ, որ ինչպես Հովհաննես 3.16-ն է, այս խոսքը նույնպես կդառնա քո էության մասը: Միգուցե դու ի վերջո նույնիսկ կրկնես այս խոսքը քնի մեջ՝ խորապես գիտակցելով, որ Աստծո կամքն է, որ դու թագավորես այս կյանքում: Եթե դու հաստատուն կերպով հավատաս այս խոսքին, ապա այդ հավատքը կդարձնի քեզ հաղթող և անկոտրում հոգի ունեցող հավատացյալ: Այդ հավատքը նաև քո ընթացքի զորավոր ավարտի նախապայմանն է:

Մինչև շարունակելը թո՛ւյլ տուր կրկնել այն հիմնարար ճշմարտությունը, որը մենք բացահայտելու ենք. *Բոլորը, ովքեր ձրիաբար ստացել են Աստծո շնորհքը, զորացված են, որպեսզի այս կյանքում բացառիկ լինեն:* Մենք պետք է լինենք գլուխ, և ոչ թե պոչ: Մենք պետք է լինենք բարձր դիրքում, որպեսզի իշխենք կյանքի հանգամանքների վրա, և ոչ թե հակառակը: Մենք պետք է լինենք օրինակելի մարդիկ, ովքեր տարածում են Աստծո արքայության «ազդեցությունը»՝ բերելով Աստծո կենսառաձն այս երկրի վրա:

ԻՆՉՈ՞Ւ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԻՇԽՈՒՄ ԿՅԱՆՔՈՒՄ

Ինչո՞ւ քրիստոնյաները չեն ապրում այս կերպով: Ինչո՞ւ է հավատացյալների մեծամասնությունը *այս կյանքում իշխելու* փոխարեն գտնվում *կյանքի իշխանության ներքո*:

Մենք արդեն տվել ենք առաջին և ամենաակնհայտ պատասխանը: Ազգային հարցումը, որ անցկացվեց 2009թ.-ին, ցույց է տալիս, որ ամերիկացի հավատացյալների 98 տոկոսը տեղյակ չէ, որ Աստծո շնորհքը Նրա զորությունն է: Ես հավատում եմ, որ դժբախտաբար այս վիճակագրությունը մեզ ցույց է տալիս Արևմուտքի եկեղեցու ընդհանուր պատկերը: Քանի որ հավատացյալները չգիտեն, որ Աստված շնորհքի միջոցով տալիս է Իր գերբնական զորությունը, նրանց ճնշող մեծամասնությունն անկարող է ապրել համաձայն Աստծո կամքի: Նրանք ոչնչով չեն տարբերվում այն աֆրիկյան ցեղից, որը «Լենդ Ռովեր» ունի, բայց չգիտի, որ այն նախատեսված է փոխադրումների համար: Նրանք շարունակում են ապրել նույն սահմանափակ կյանքով, քանի որ մեքենայից օգտվելու փոխարեն ծանր բեռներ են կրում իրենց ուսերի վրա և ոտքով անցնում են մեծ տարածություններ:

Երկրորդ պատճառը, թե ինչու հավատացյալները չեն իշխում այս կյանքում, կդառնա մեր գրքի մնացած մասի գլխավոր թեման: Մենք կսկսենք ուսումնասիրել Հիսուսի խոսքերը, որ ասաց հրեա առաջնորդ Նիկոդեմոսին, ով գաղտնաբար եկավ Տիրոջ հետ խոսելու: Հիսուսը նախ՝ ասաց նրան. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը *տեսնել*» (Հովհ. 3.3):

Հիսուսը խոսում է Աստծո արքայությունը *տեսնելու* մասին: Սակայն հաջորդ խոսքը, որ Նա ասաց Նիկոդեմոսին, բոլորովին այլ բան է ասում մեզ. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, նա չի կարող Աստծո արքայությունը մտնել» (Հովհ. 3.5): Ինչո՞ւ է Հիսուսը փոխում Իր շեշտադրումը՝ խոսելով նախ՝ արքայությունը *տեսնելու* (խոսք 3), իսկ հետո՝ արքայության մեջ *մտնելու* (խոսք 5) մասին: Եթե մենք փորձենք վերլուծել Սուրբ գիրքը՝ հիմնվելով մեր մայրենի լեզվի վրա, ապա հաճախ չենք ըմբռնի տեքստի իրական նշանակությունը: Անդրադառնալով բնագրի լեզուներին՝ մենք կարող ենք ավելի լավ հասկանալ այն, ինչ Աստված ցանկանում է հայտնել մեզ:

Երբ Հիսուսը խոսում է Աստծո արքայության մասին, Նա նկատի ունի «Աստծո իշխանությունը»: Այն հունարեն բառակապակցությունը, որն ամենից հաճախ թարգմանվում է Ավետարաններում որպես *«Աստծո արքայություն», «բասիլեա դե Թեոսն»* է: *«Թեոս»* բառը նշանակում է Աստված,

իսկ *«բասիլեան»*՝ *«թագավորական իշխանություն»*: *«Բասիլեան»* առաջացել է հունարեն բառից, որը նշանակում է *«հիմք»*: Որոշ աստվածաբաններ հավատում են, որ *«բասիլեա դե Թեոս»* արտահայտության լավագույն թարգմանությունն է «Աստծո մենիշխան կառավարում» կամ «Աստծո տիրույթ»: Ինձ դուր է գալիս *«մենիշխան»* բառը: Այդ բառի սահմանումներից մեկը «գերագույն զորություն ունեցող» արտահայտությունն է:

Օրինակ՝ Տերունական աղոթքի մեջ Հիսուսը պատվիրում է աղոթել այսպես. «Մեր Հա՛յր, որ Երկնքում ես, Քո անունը սուրբ լինի, Քո արքայությունը գա, Քո կամքը լինի, ինչպես Երկնքում, այնպես էլ երկրի վրա» (Ղուկ. 11.2): Նա բառացիորեն ասում է. «Մեր երկնային Հա՛յր: Դու Ամենակարող Աստվածն ես: Թող Քո գերագույն, զորավոր իշխանությունը գա: Թող Քո կամքը կատարվի երկրի վրա, ինչպես Երկնքում»: Բայց կա մի խնդիր. շատերը կարծում են, որ այս խոսքերը վերաբերում են ապագային, այն դեպքում, երբ Աստծո արքայությունն արդեն եկել է: Ճիշտ է այն դեռ չի եկել ֆիզիկական աշխարհ, ինչպես մարգարեանում էր Եսային, քանի որ այդ ժամանակ կսկսի Հիսուսի հավիտենական իշխանությունը, և սատանան այլևս չի կարողանա ազդեցություն թողնել այս երկրի վրա: Սակայն հոգևոր իրականության մեջ Աստծո արքայությունն արդեն եկել է: Այն *մեր*՝ Աստծո ուխտի ժողովրդի *մեջ է*, որովհետև Հիսուսն ասում է. «Աստծո արքայությունը չի գալիս տեսանելի ձևով: Ոչ ոք չի ասի. «Նայի՛ր, այն այստեղ է» կամ էլ «այնտեղ է», որովհետև Աստծո արքայությունը ձեր մեջ է»» (Ղուկ. 17.20,21, TEV):

Այժմ արքայությունը Քրիստոսի յուրաքանչյուր հետևորդի մեջ է այն աշխատանքի շնորհիվ, որ Հիսուսը կատարեց Գողգոթայում: Մենք պետք է տարածենք այդ արքայության սահմանները մեր շրջապատում և ամեն տեղ, ուր որ գնանք: Մենք պետք է իշխենք կյանքում Աստծո շնորհքի զորավոր պարգևով, որը ձրի տրվել է մեզ Հիսուս Քրիստոսի կողմից:

Եկե՛ք կարդանք այլ խոսքեր, որտեղ Հիսուսն օգտագործում է «Աստծո արքայություն» արտահայտությունը և փոխարինենք այն «*Աստծո գերագույն, զորավոր իշխանություն*» արտահայտությամբ: Զարմանալի է, թե որքանով այս փոխարինումը կարող է պարզեցնել ստորև բերված հատվածների իմաստը ժամանակակից հավատացյալների համար:

Օրինակ՝ Հիսուսի ուսմունքը Մատթեոսի 12.28-ում կարելի է կարդալ

այսպես. «Բայց եթե Ես Աստծո Հոգով եմ հանում դևերին, ուրեմն *Աստծո գերագույն, զորավոր իշխանությունը* հասել է ձեզ վրա»: Աստծո Հոգին, Ում մասին խոսում է Հիսուսը, Սուրբ Հոգին է՝ Աստվածության Անձերից Մեկը, Ով գործադրում է Աստծո շնորհքը (զորությունը), որը մեզ վրա է: Նոր կտակարանում Նա կոչվում է «Շնորհքի Հոգի» (տե՛ս Եբր. 10.29):

Կրկին կարդանք Հիսուսի խոսքերը. «Բայց դարձյալ ասում եմ ձեզ. ավելի հեշտ է, որ մի ուղտ ասեղի ծակով անցնի, քան թե մի հարուստ մտնի *Աստծո գերագույն, զորավոր իշխանության մեջ*» (Մատթ. 19.24):

Հարուստ մարդը նա է, ով ասում է. «Հաջողության հասնելու համար ես ունեմ անհրաժեշտ նախադրյալներն ու կարողությունը»: Նա հավատում է, որ իր գիտելիքի, փողի, ֆիզիկական ուժի, խելամտության, կապերի և ունեցվածքի շնորհիվ նա կարող է ամեն ինչի հասնել ինքնուրույն: Բայց Հիսուսը տեսնում է, թե ինչ կա այդ թվացյալ մշուշի ետևում: Նա ասում է. «Երանի աղքատներիդ, որ ձերն է *Աստծո գերագույն, զորավոր իշխանությունը*» (Ղուկ. 6.20):

Հիսուսը չի խոսում ֆինանսապես աղքատների մասին. Նա օրհնում է նրանց, ովքեր կախված են Աստծո շնորհքից: Հիսուսն ասաց, որ Աստծո Հոգին Իր վրա է Ավետարանն *աղքատներին* քարոզելու համար, սակայն Նա հաճախ էր մտածված կերպով հանդիպում հարուստ մարդկանց և ծառայում նրանց բնակավայրերում: Նա բերեց ուղտի օրինակը, որը չի կարող անցնել ասեղի ծակով, անմիջապես հարուստ երիտասարդ իշխանին հանդիպելուց հետո, ով որոշեց վստահել ոչ թե Աստծուն, այլ իր հարստությանը:

Ահա ևս մեկ խոսք, որ Հիսուսն ասաց Աստծո արքայության մասին: Մտածե՛ք սրա շուրջ. «Ձեզ տրված է *Աստծո գերագույն, զորավոր իշխանության* խորհուրդը գիտենալ, բայց նրանց, որ դրսի են, ամեն բան առակներով է լինում» (Մարկ. 4.11): Այն իշխանությունը և զորությունը, որ հասանելի է մեզ Աստծո շնորհքի միջոցով, իսկապես որ ծածուկ ճշմարտություն է, որ միայն Սուրբ Հոգին կարող է հայտնել: «Ինչ որ աչք չտեսավ և ականջ չլսեց և մարդու սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար: *Բայց մեզ հայտնեց Աստված Իր Հոգով*…» (Ա Կորնթ. 2.9,10): Այն փաստը, որ մենք կարող ենք իշխել կյանքում Աստծո շնորհքով, ծածկված էր, քանի դեռ Սուրբ Հոգին չհայտնեց

դա մեզ առաքյալների միջոցով, ովքեր գրեցին Նոր կտակարանը: Մենք ընդամենը պետք է հավատանք:

Ահա մեկ այլ հավաստում Հիսուսի կողմից Աստծո արքայության վերաբերյալ. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, թե այստեղ կանգնածներից ոմանք կան, որ մահ չեն ճաշակի, մինչև որ չտեսնեն *Աստծո գերագույն, զորավոր իշխանությունը* զորությունով եկած» (Մարկ. 8.39): Այս խոսքերը դուրս եկան անձամբ Մեսիայի շուրթերից, ինչը պետք է հաստատի մեր համոզմունքն այն մասին, որ Աստծո արքայությունն *այսօր հասանելի է ճիշտ այնպես, ինչպես և լինելու է ապագայում*: Աստծո գերագույն, զորավոր իշխանությունն այն մարդկանց ներսում էր, ովքեր որոշեցին հետևել Հիսուսին՝ սկած այն օրվանից, երբ շնորհքի Հոգին իջավ նրանց վրա Պենտեկոստեի օրը: Նույն կերպով Հիսուսն ասաց այն դպիրին, ով իմաստուն պատասխան տվեց նրան. «Դու հեռու չես *Աստծո գերագույն, զորավոր իշխանությունից*» (Մարկ. 12.34):

Իմ բերած այս մի քանի օրինակներից կարող ես տեսնել, որ Աստծո արքայությունը շատ ավելի զորավոր և հասկանալի իմաստ է ստանում, երբ մենք կարդում ենք այդ արտահայտությունն ըստ հունարեն տեքստի: Փորձի՛ր Նոր կտակարանում *«Աստծո արքայություն»* արտահայտությունն ամենուր փոխարինել *«Աստծո գերագույն, զորավոր իշխանություն»*-ով: Դա և՛ կխրախուսի քեզ, և՛ կօգնի ավելի լավ հասկանալ տեքստը:

Սակայն մենք պետք է հիշենք Աստծո գերագույն, զորավոր իշխանության մի շատ կարևոր կողմ. Նա լիազորել է Իր իշխանությունը մեզ: «Երկինքների երկինքը Տիրոջն է, և Նա երկիրը մարդկանց որդիներին տվեց» (Սաղմ. 115.16): Հիսուսը՝ որպես Մարդու Որդի, ետ վերցրեց այն, ինչից զրկվեց Ադամը: Հիսուսը հայտարարեց. «Ամբողջ իշխանությունը (իշխանության ողջ զորությունը) Երկնքում և երկրի վրա տրվեց Ինձ» (Մատթ. 28.18, AMP): Բայց Քրիստոսը՝ մեր Տերը և Թագավորը, այլևս երկրի վրա չէ, այնպես որ մենք, այսինքն՝ Քրիստոսի մարմինը, պետք է կիրառենք *Աստծո գերագույն, զորավոր իշխանությունը*: Եթե մենք չկիրառենք այդ իշխանությունը, ապա այս աշխարհի ուժերը կպահպանեն իրենց դիրքերը և կյանքը կիշխի մեզ վրա: Սա Աստծո ծրագիրը չէ: Մենք զորացված ենք Նրա շնորհքով, որպեսզի իշխենք կյանքում Քրիստոսի միջոցով:

ՏԵՍՆԵ՞Լ, ԹԵ՞ ՄՏՆԵ՞Լ

Այժմ ե՛կ շարունակենք ուսումնասիրել այն խոսքերը, որ Հիսուսն ասաց Նիկոդեմոսին: Դու կհիշես, որ նախ՝ Տերն ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը *տեսնել*» (Հովհ. 3.3): Իսկ քիչ անց Նա ասաց հետևյալը. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, նա չի կարող Աստծո արքայությունը *մտնել*» (Հովհ. 3.5):

Տեսնելով, թե ինչ է նշանակում Աստծո արքայությունը հունարենում, մենք կարող ենք ավելի լավ հասկանալ, թե ինչու է Հիսուսը Երկնքի արքայություն *տեսնելը* և Երկնքի արքայություն *մտնելը* հակադրում միմյանց հետ: Եթե մենք դիտարկենք Աստծո արքայությունը որպես ֆիզիկական վայր, այսինքն՝ որպես երկինք, ապա 3-րդ խոսքը կնշանակեր, որ Երկինք գնալու համար վերստին ծնունդը բավական չէ. այն բավական է միայն այդ արքայությունը *տեսնելու* համար: Իհարկե՝ սա ճշմարիտ չէ: Երբ դու հասկանում ես, որ Հիսուսը խոսում է Աստծո գերագույն, զորավոր իշխանության կամ արքայության իշխանության մասին, այս խոսքերը բոլորովին այլ իմաստ են ստանում և շատ ավելի հեշտ են հասկացվում:

Տեսնել բառը 3-րդ խոսքում հունարեն *«էյդո»* բառն է: Դրա հիմնական նշանակությունն է «տեսնել, ընկալել, տեղյակ լինել կամ ծանոթ լինել»: Հիսուսն ասում է մեզ, որ բոլորը, ովքեր վերստին ծնված են, կարող են *տեսնել, ընկալել, տեղյակ լինել և ծանոթ լինել* Աստծո գերագույն, զորավոր իշխանությանը, այսինքն՝ Աստծո արքայությանը:

Իր հաջորդ արտահայտության մեջ Նա այլևս չի օգտագործում *տեսնել (էյդո)* բառը: Նա օգտագործում է մտնել բառը՝ նկատի ունենալով, որ պետք է մտնել Աստծո իշխանության մեջ: Մտնել բառը հունարենում *«էյզերխոմայ»* բառն է: Այս բառի հիմնական սահմանումն է *«կանգնել և մուտք գործել»* կամ *«կանգնել և մտնել»*: Այնպես որ այս երկու արտահայտությունների միջոցով Հիսուսն անցում է կատարում Աստծո գերագույն, զորավոր իշխանության մասին տեղյակ լինելուց դեպի կանգնելը և դրա մեջ մտնելը: Հասկանո՞ւմ ես արդյոք տարբերությունը:

Օրինակ՝ ես նստում եմ ինքնաթիռ ինչ-որ տեղ թռչելու համար: Ես

քաջ տեղյակ եմ, որ ինքնաթիռը կարող է հաղթահարել ծգողությունը, բարձրացնել ինձ մեծ բարձրության վրա և բերել որոշակի նշանակված վայր: Որպես ուղևոր՝ ես կարող եմ և՛ տեսնել, և՛ վերապրել ինքնաթիռով թռչելու առավելությունները:

Բայց մեկ օր իմ ընկերներից մեկը տարավ ինձ թռիչքի դասերի՝ վճարելով իմ փոխարեն: Մի քանի նախնական հրահանգ ստանալուց հետո ես նստեցի մեկ շարժիչ ունեցող փոքր ինքնաթիռի մեջ: Հրահանգիչն ասում էր ինձ, թե ինչ պետք է անեի: Քիչ անց ես արդեն քաշում էի ձգանը և ինքնաթիռ էի վարում: Այդ վերապրումը գրեթե անիրական էր: Իմ թռիչքի ընթացքում գերակշռող մտքերից մեկն այն էր, որ ես կարող էի վարել այդ ինքնաթիռը՝ ուր ցանկանայի և ինչպես ցանկանայի: Չկար ոչ մի ճանապարհ կամ արահետ: Ես էի ստեղծում ճանապարհը և ուղղությունը: Ես այլևս հասարակ ուղևոր չէի, ով *տեղյակ է* ինքնաթիռի գործառույթներին և օգուտ է ստանում դրա առավելություններից: Այժմ ես օդաչու էի և վարում էի ինքնաթիռը՝ ուր կամենայի: *Ես մտել էի* թռչելու ազատության մեջ:

Հիսուսի խոսքերը ցույց են տալիս, որ կան երկու տեսակի հավատացյալներ: Մենք կարող ենք համեմատել առաջին խմբին ինքնաթիռի ուղևորների հետ, ովքեր տեսնում, ընկալում և վերապրում են թռչելու առավելությունները: Երկրորդ խմբի մարդիկ բարձրանում և մտնում են օդաչուի խցիկը՝ որպես օդաչուներ: Նրանք են վարում այդ ինքնաթիռը և որոշում, թե՝ ուր, ինչ արագությամբ և ինչ բարձրությամբ թռչել: Թեև ուղևորները կարող են օգուտ ստանալ թռիչքից, այնուամենայնիվ նրանք գտնվում են այն մարդկանց տրամադրության տակ, ովքեր կարողանում են ինքնաթիռ վարել:

Որպեսզի մենք ավելի պատկերավոր կերպով հասկանանք, թե որքան մեծ է Աստծո արքայությունը տեսնելու և դրա մեջ մտնելու տարբերությունը, մեզ անհրաժեշտ է պատկերացնել մարդկանց մի փոքր խումբ, ովքեր նավաբեկության ենթարկվելուց հետո հայտնվել են մի կղզու վրա: Այդ կղզին վտանգավոր է: Այն լցված է կատաղի մարդակեր կենդանիներով, թունավոր օձերով, սարդերով և կարիճներով: Ասես դա բավական չէ, այդ կղզում բնակվում է նաև մարդակերների վայրի մի ցեղ: Այդ փոքր խմբին մեծ վտանգ է սպառնում: Սակայն կա մի լավ նորություն: Այդ կղզու վրա կա թռիչքային ուղի և մի ինքնաթիռ, որը սարքին վիճակում է:

Այդ ինքնաթիռը լի է վառելիքով և կանգնած է թռիչքային ուղու վրա: Այն հեշտությամբ կարող է տանել այդ մարդկանց որևէ ապահով վայր: Բայց կա մի մեծ խնդիր. այդ խմբում ոչ ոք չի կարողանում ինքնաթիռ վարել: Բոլորը փորձառու ուղևորներ են, բայց նրանցից ոչ ոք չի բարձրացել մինչև օդաչուի կարգավիճակը և չի կարող ինքնաթիռ վարել: Թեև ինքնաթիռը կարող է նրանց տանել այնտեղ, որտեղ նրանք փրկված և ազատ կլինեն, սակայն չեն կարող գնալ, որովհետև նրանք նույնիսկ չգիտեն, թե ինչպես միացնել շարժիչները, էլ ի՞նչ խոսք կարող է լինել կղզուց թռչելու մասին:

Այս օրինակը ցույց է տալիս երկու հավատացյալի միջև տարբերությունը, որոնցից մեկը ընդամենը *տեսել կամ վերապրել է* Աստծո գերագույն, զորավոր իշխանությունը, իսկ մյուսը *կանգնել և մտել* է Աստծո ինքնիշխան, զորավոր իշխանության մեջ:

Հսկայական տարբերություն կա, այդպես չէ՞: Իսկ ինչպիսի՞ հավատացյալ ես դո՛ւ ցանկանում լինել:

ՄՏՆԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սրան հետևում է տրամաբանական հարց. ինչպե՞ս է Աստծո զավակն անցնում *տեսնելուց* դեպի *մուտք գործելը*: Այլ խոսքերով՝ ինչպե՞ս ենք մենք դադարում հոգևոր ուղևորներ լինելուց և դառնում հոգևոր օդաչուներ: Պողոս առաքյալն օգնում է մեզ՝ խոսելով այս մասին:

Սուրբ Հոգու անմիջական առաջնորդությամբ Պողոսը և Բառնաբասը իրենց տեղական եկեղեցուց գնացին և ձեռնարկեցին իրենց առաջին առաքելական ճանապարհորդությունը (տե՛ս Գործք 13.1-4): Անցնելով մեծ տարածություններ և լինելով Ասիայի բազմաթիվ քաղաքներում՝ նրանք սկսեցին երկար ճանապարհորդություն դեպի տուն՝ կրկին այցելելով այն մի քանի քաղաքները, որոնցում նոր եկեղեցիներ էին սկսել: Իհարկե, այդ ժամանակ ճանապարհորդելն ավելի դժվար էր, քան այսօր: Ես կարող եմ ինքնաթիռ նստել և հեշտությամբ գնալ աշխարհի ցանկացած քաղաք՝ սովորաբար ամենաշատը քսանչորս ժամվա ընթացքում: Երբ հեռանում եմ ինչ-որ վայրից, ես չեմ մտածում թե՝ *ճանապարհորդությունը երկար ժամանակ կխլի ինձանից, և ի՞նչ գիտեմ, միգուցե, այլևս*

չտեսնեմ այդ մարդկանց: Սակայն Պողոսը կարող էր մտածել այդ մասին: Նա գիտեր, որ այդ եկեղեցիներից գնալով, միգուցե այլևս հնարավորություն չունենար տեսնել այն թանկագին մարդկանց, ում նա ծնել էր Աստծո արքայության մեջ, մինչև որ նրանք կրկին չհանդիպեին Երկնքում: Հետևաբար կարելի է պատկերացնել, որ Պողոսը զգուշորեն էր ընտրում իր խոսքերը՝ խոսելով այդ նորահավատների հետ: Եվ այն խոսքը, որը նա թողնում է նրանց, անմիջականորեն կապ ունի մեր հարցի հետ՝ ոչ միայն *տեսնել* իշխանությունը, այլ նաև *մտնել* դրա մեջ:

> «...Եվ ապա ետ դառան Լյուստրա և Իկոնիոն և Անտիոք: Աշակերտների սրտերը հաստատեցին և հորդորեցին, որ հաստատ կենան հավատքի մեջ, և թե շատ նեղություններով պետք է մեզ մտնել Աստծո արքայությունը» (Գործք 14.20,21):

Պողոսը չանցկացրեց սեմինար ֆինանսների մասին, կոնֆերանս եկեղեցու աճի վերաբերյալ, առաջնորդների մարզման համաժողով և անգամ չքարոզեց հույսով լցված խրախուսական ուղերձ, թեև բոլոր այս թեմաներն իրենց տեղն ունեն: Ո՛չ, նա նրանց այնպիսի խոսքեր ասաց, որոնք կզորացնեին երիտասարդ հավատացյալներին աննահանջ կյանքով ապրելու և բարեհաջող ավարտ ունենալու համար: Նրա նպատակն էր պատրաստել նրանց իշխելու համար:

Պողոսի խոսքերը ճշմարիտ են նաև այսօր: Այս խոսքերը պետք է միահյուսվեն մեր մտքի և սրտի հետ. *Մենք պետք է անցնենք շատ նեղություններով Աստծո գերագույն, զորավոր իշխանության մեջ մտնելու համար:* Շարունակի՛ր կարդալ այս գիրքը. սա հավատքի և հույսի ուղերձ է, այլ ոչ թե տրտմության: Մտածի՛ր այսպես. նեղությունները լինելու են: Դա անխուսափելի է: Հիսուսը պարզ ասում է, որ Իր հետևորդների կյանքում լինելու են նեղություններ: Նա հավաստիացնում է մեզ. «...Աշխարհում *նեղություն* կունենաք, բայց քաջացե՛ք, Ես հաղթել եմ աշխարհին» (Հովհ. 16.33): Նա հաղթել է, իսկ սա նշանակում է, որ մենք իշխանություն և զորություն ենք ստացել այն ամենի վրա, ինչին որ կհանդիպենք այս աշխարհում: Մենք Նրա մարմինն ենք. մենք միասին Քրիստոսն ենք երկրի վրա: Մենք հաղթե՛լ ենք այս աշխարհը Քրիստոսի մեջ:

Նեղություն բառը սահմանվում է որպես «դժվարություն կամ մեծ փորձանք»: Սա հունարեն թլիփսիս բառն է: *Աստվածաշնչյան խոսքերի*

հանրագիտարանը սահմանում է *թլիփսիսը* հետևյալ կերպով. «Մեծ զգացմունքային կամ հոգևոր ճնշվածություն, որը կարող է առաջանալ արտաքին կամ ներքին ճնշումների պատճառով: Այս բառը Նոր կտակարանում օգտագործվում է հիսունհինգ անգամ, որոնցից հիսուներեքը՝ փոխաբերական իմաստով է»: Այդ ճնշումը կարող է գալ թշնամիներից, անբարենպաստ հանգամանքներից, սխալ որոշումներից կամ անկառավարելի զգացմունքներից:

Ջեյմս Սթրոնգը սահմանում է *թլիփսիսը* որպես «ճնշում (բառացիորեն կամ փոխաբերական իմաստով). վիշտ, տառապանք, բեռ, հալածանք, նեղություն, փորձանք»: Վ. Է. Վայնը սահմանում է այս բառը որպես «ցանկացած բան, որ ճնշում է շունչը կամ հոգին»:

Իմ սեփական պարզագույն սահմանումը *նեղություն* կամ *թլիփսիս* բառի համար «անապատն» է:

Աստվածաշնչի «Թըդեյս Ինգլիշ» թարգմանությունն այսպես է թարգմանում Գործք 14.22-ը. «Մենք պետք է անցնենք *շատ փորձանքներով*, որպեսզի մտնենք Աստծո արքայության մեջ»: Ե՛կ պատկերացնենք, որ դու ծառայում ես մի մեծ թագավորի, ով մի ամբողջ երկիր է գրավել: Նա մտել է այդ երկրի մայրաքաղաքը և գահընկեց արել այն տիրոջը, ով տիրում էր այդ երկրին երկաթե բռունցքով: Պարտված իշխանը դաժանությամբ էր վարվում մարդկանց հետ: Նա թունավորում էր նրանց մտքերը սխալ քարոզչությամբ, և թշնամություն, ատելություն ու արհամարհանք սերմանում արդար թագավորի հանդեպ և նրա ճշմարիտ ճանապարհներին:

Բարի թագավորը հանձնարարում է իր ծառաներին գնալ այդ երկիր և կիրառել իր հաղթանակը՝ խլելով բոլոր տարածքները, որ թշնամին զավթել է, և այն ամրոցները, որ դեռ չեն գրավվել: Ամբողջ երկրով պատսպարվում են չար տիրակալի տեղակալները, ովքեր դեռևս վերահսկում են տարբեր բերդեր և ամրոցներ: Նրանք շարունակում են իշխել իրենց նախկին թագավորի պես: Հետևաբար դեռ շատերն են գտնվում այդ չար տիրակալի իշխանության ներքո: Թեև պատերազմն ընդհանուր առմամբ ավարտվել է հաղթությամբ, բայց դեռ շատ աշխատանք է պետք կատարել՝ վերջնական հաղթանակին հասնելու համար:

Դու ճանապարհ ես ընկնում՝ թշնամու տարածքում նրա ամրոցներից մեկը գրավելու համար:

Դու ճանապարհ ես ընկնում՝ թշնամու տարածքում նրա ամրոցներից մեկը գրավելու համար: Ճանապարհին շատ վտանգներ կան, որովհետև դու պետք է հակառակվես և տապալես քո թշնամիներին ողջ այն տարածքում, որը նրանք զավթել են: Քո թշնամիները շատ ծուղակներ են դրել, որպեսզի թույլ չտան քեզ գրավել այդ տարածաշրջանը: Դու պետք է պատերազմես՝ մեկ առ մեկ հաղթահարելով այս նեղությունները: Եվ հասնելով ամրոցին՝ դու կբախվես ամենադժվար փորձությանը, որը թշնամու ամրությունը տապալելն է: Բայց կա մի բարի լուր. որքան ավելի շատ թշնամական ծուղակներ ես հաղթահարում ճանապարհին, այնքան ավելի փորձառու և հնարագետ ես դառնում պատերազմի մեջ: Եթե դու գրավես այդ ամրոցը, ապա կդառնաս ողջ այդ տարածքի իշխանը: Բացի այդ՝ դու կդառնաս այնքան հմուտ և վստահելի զինվոր, որ կլինես ամենահարմար մարդը, ում արժե վստահել այն տարածքը, որը դու գրավել ես քո թագավորի համար:

Մեր պատմության մեջ բարի թագավորը մեր Տեր Հիսուսն է: Նա հանձնարարել է մեզ՝ Իր հավատարիմ զինվորներին, գնալ և կիրառել Իր հաղթանակը խավարի ուժերի վրա, որոնք դեռևս իշխում են այս աշխարհում: Մեր ճանապարհին մենք կհանդիպենք դժվարությունների, բայց, ի վերջո, կազատագրենք այն մարդկանց, ովքեր դեռ գերիներ են թշնամու վարած մարտավարության և քարոզչության պատճառով:

Մենք պետք է շատ նեղություններով անցնենք իշխանության դիրքի մեջ մտնելու համար: Բայց, ինչպես որ ասում է Հիսուսը, մենք կարող ենք ուրախ լինել, որովհետև Նա արդեն հաղթել է աշխարհին: Իր շնորհքի միջոցով մենք զորություն և իշխանություն ենք ստացել տապալելու ցանկացած խոչընդոտ, որ աշխարհը նետում է մեզ վրա:

Մենք *զորացված* ենք շնորհքով, բայց դա դեռ ամենը չէ: Եթե մենք հավատում ենք, որ Քրիստոսը մեր Փրկիչն ու Տերն է, մենք նույնպես առանձնահատուկ *դիրք* ունենք Աստծո շնորհքի մեջ: Ուրախությամբ կարդա Պողոսի խոսքերը, որոնք ուղղված են Հռոմի քրիստոնյաներին.

> «Նույն Ինքը՝ Հոգին, վկայություն է տալիս մեր հոգու հետ, որ մենք Աստծո որդիներ ենք: Եվ եթե որդիներ, ապա *ժառանգներ* էլ, Աստծո ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ, որ *եթե Նրա* չարչարանքներին կցորդ ենք, փառքին էլ մասնակից լինենք: Որովհետև այնպես եմ դատում, որ այս ժամանակվա չարչարանքներն արժանի չեն *բաղդատվելու* այն գալու փառքի հետ, որ մեզանում պիտի հայտնվի» (Հռոմեացիների 8.16-18):

Որպես հավատացյալներ՝ մենք Աստծո ժառանգներն ենք. մենք Աստծո ժառանգներն ենք և Քրիստոսի ժառանգակիցները: *Ժառանգ* բառը հունարեն *«կլերոնոմոս»* բառն է, որը սահմանվում է այսպես. «նա, ով տիրում կամ ժառանգում է. շեշտադրումն արվում է տիրելու իրավունքի վրա»: Անգլերեն բառարանը «ժառանգ» բառը սահմանում է այսպես. «Նա, ով ժառանգում է և շարունակում է տնօրինել իրեն նախորդողի ունեցվածքը»: Կա ևս մեկ սահմանում. «Այն մարդը, ով օրինապես իրավասու է զբաղեցնել մեկ այլ մարդու դիրքը»: Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ է սա նշանակում մեզ համար: Աստված դարձրել է մեզ այն ամենի ժառանգները, ինչը որ պատկանում է Իրեն: Մեզ պատկանում է այն, ինչ պատկանում է Նրան: Ուրեմն մենք պետք է իշխենք այնպես, ինչպես որ Նա է իշխում:

Ամեն ինչ պատկանում է Աստծուն, այդ իսկ պատճառով ամեն ինչ պատկանում է մեզ: «Ո՛չ ոք թող չպարծենա այն բաներով, որ մարդիկ կարող են անել»,- գրում է Պողոսը հավատացյալներին: - «Իրականում ամեն ինչ պատկանում է ձեզ» (Ա Կորնթ. 3.21, TEV): Ամեն ի՛նչ: Մենք իսկապես որ Աստծո ժառանգներն ենք: «Քընթեմփըրըրի Ինգլիշ» թարգմանության մեջ գրված է այսպես. «Ամեն ինչ ձերն է՝ ներառյալ այս աշխարհը, կյանքը, մահը, ներկան և ապագան: Ամեն ինչ պատկանում է ձեզ»: Մի պահ կա՛նգ առ և մտորիր այս մասին մեկ կամ երկու օրվա ընթացքում: Քրիստոսի մեջ մենք շատ ավելի հարուստ ենք, քան աշխարհի ամենահարուստ մարդը:

Բայց կա մի նախապայման, որն անչափ կարևոր է: Վերևում, Հռոմեացիների 8-րդ գլխից մեջբերված հատվածում պարզ գրված է՝ *եթե…* Կա պայման մեր ժառանգության համար: Այլ խոսքերով՝ այն մեքենայաբար չի հայտնվում յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում: Ո՞րն է այդ պայմանը. մենք պետք է չարչարվենք Նրա հետ: Կրկին կարդա այս հատվածը: Քրիստոս Հիսուսի հետ ժառանգակից լինելու համար մենք պետք է հաղթահարենք այն նեղություններն ու հակառակությունները, որոնք կկանգ-

նեն այն ճանապարհին, որը պատկանում է Աստծուն: Մենք պետք է վարվենք ճիշտ այնպես, ինչպես Նա վարվեց: Ուշադրությո՛ւն դարձրու *Նրա չարչարանքներին կցորդ բառերին*: Հակառակությունը հաղթահարելը նման չէ այգում զբոսնելուն կամ կակաչների միջով թռչկոտելուն: Դա պատերազմ է, իսկ պատերազմի ժամանակ միշտ էլ չարչարանք կա:

Բայց մենք չենք չարչարվում որպես պարտվողներ: Հռոմեացիների 8.18-ում Պողոսը հավաստիացնում է, որ նեղություններին բախվելը կարող է ունենալ իր դրական արդյունքը. «Որովհետև այնպես եմ դատում, որ այս ժամանակվա չարչարանքներն արժանի չեն *բաղդատվելու* այն գալու փառքի հետ, որ մեզանում պիտի հայտնվի»: Ես ցանկանում եմ, որպեսզի դու հասկանաս և ամուր բռնես այս բանալի սկզբունքը.

> Կարևոր չէ, թե *թլիփսիսի* (նեղության) ինչպիսի ճնշման հետ դու կբախվես: Այդ դժվարությունը ոչինչ է՝ համեմատած այն իշխանության մակարդակի հետ, որի մեջ դու կքայլես այն բանից հետո, երբ նեղությունն ավարտվի:

Մենք չարչարվելու ենք, եթե ապրենք ճշմարիտ քրիստոնեական կյանքով: Բայց յուրաքանչյուր հաղթական պայքարի հետ մեզանում կդրսևորվի ավելի մեծ փառք, զորություն և իմաստություն: Պողոսը միայն փառքի մասին չի խոսում, որը կտրվի մեզ Երկնքում՝ դատաստանի գահի առջև: Դրա հետ մեկտեղ նա խոսում է նաև այն առավելությունների մասին, որոնք ձեռք ենք բերում այս աշխարհում: Երբ մենք անցնում ենք նեղություններով և հաղթահարում դրանք, մենք կարողանում ենք դրսևորել մեզ լիազորված իշխանությունն ավելի բարձր մակարդակի վրա:

ՉԱՐՉԱՐՎԵԼ ՆՐԱ ՀԵՏ

Խոսելով *Նրա հետ չարչարվելու* մասին՝ մենք պետք է հարցնենք. «Ինչպե՞ս էր Հիսուսը չարչարվում»: Ահա թե որտեղ են շատերը շփոթվում, որովհետև կա երկու տեսակի չարչարանք: Մեկն այս աշխարհի չարչարանքն է, իսկ մյուսը՝ հանուն արդարության չարչարանքն է: Թո՛ւյլ տուր բացատրել սա:

Չարչարանքի առաջին տեսակը գոյություն ունի, որովհետև այս աշխարհի ողջ համակարգը չարի իշխանության տակ է (տե՛ս Ա Հովհ. 5.19):

Որպես արդյունք՝ ամեն օր դաժան և չար բաներ են պատահում մարդկանց հետ: Երեխաներին արհեստականորեն հեռացնում են կամ բռնության ենթարկում, աղջիկ երեխաներին բռնի ուժով ներգրավում են սեռական ստրկության մեջ, հիվանդությունները խլում են մարդկային կյանքերը շատ վաղ տարիքից, աղքատությունը և սովը շատանում են, անկարգ վարքն ու վեճերը պառակտում են ընտանիքները, մարդկանց կախվածությունները կործանում են նրանց, և սա դեռ ընդամենը մի փոքր մասն է: Այս տեսակի չարչարանքի մեջ ոչ մի լավ կամ օգտակար բան չկա: Ցավալի և ողբերգական է, բայց սա տեղի է ունենում, քանի որ Ադամը մեղանչեց և իր իշխանությունը հանձնեց մի շատ դաժան տիրոջ:

Մենք կուսումնասիրենք երկրորդ չարչարանքը, որն արդարության համար է, քանի որ հենց այս չարչարանքի մասին են խոսում Հիսուսը և Պողոսը: Արդարության համար կրած ցանկացած չարչարանք, որը մարդը համբերում է Աստծո զորությունով, օգուտ է բերում: Եվ դրա արդյունքները մշտապես փառավոր են: Չարչարանքներին համբերելով, մենք՝ որպես իշխաններ, մեր կոչման մեջ ավելի ենք զորանում և հաստատվում:

Հիսուսը ցույց է տալիս սա Իր ողջ ծառայության ընթացքում: Հիշի՛ր՝ մենք պետք է չարչարվենք Նրա հետ, եթե ցանկանում ենք իշխել Նրա հետ: Այդ դեպքում, ինչպե՞ս էր Նա չարչարվում: Հիսուսը ծառայության համար պատրաստվել էր երեսուն տարի, իսկ հետո մկրտվել Հորդանան գետում հայտնի մարգարե Հովհաննեսի կողմից:

Անմիջապես մկրտությունից հետո Երկինքը բացվեց, և Սուրբ Հոգին մարմնավոր տեսիլքով՝ աղավնու պես իջավ Հիսուսի վրա: Հայր Աստված խոսեց Երկնքից այնպես, որ բոլորը լսեցին. «...Դո՛ւ ես Իմ սիրելի Որդին. Ես Քեզ հավանեցի» (Ղուկ. 3.22): Պատկերացրե՛ք, որ դուք գտնվում էիք այդ մարդկանց բազմության մեջ, ովքեր ականատես էին Հիսուսի կյանքում այդ զարմանալի, երկնային հաստատմանը: Այդտեղ ներկա էին նաև բազմաթիվ քաղաքական և հոգևոր առաջնորդներ:

Եթե մենք լինեինք Հիսուսի փոխարեն, ապա կմտածեինք. *«Սա կատարյալ պահ է Իմ ծառայությունը սկսելու համար: Ես պետք է քարոզեմ Իմ առաջին ուղերձը բոլոր այս մարդկանց: Ի վերջո Ես պատրաստվել եմ այս ծառայությանը երեսուն տարի: Միգուցե Ես պետք է մարկետինգային և գովազդային թի՞մ վարձեմ, որպեսզի օգտագործեմ այս պահն*

առավել արդյունավետ կերպով: Այստեղ գտնվող բոլոր մարդիկ գիտեն, որ Ես նշանակված եմ Աստծո կողմից»:

Սա տրամաբանական, մարդկային արձագանք էր, քանի որ մարդիկ մշտապես ձգտում են հանրահայտ դառնալ: Սակայն ահա թե ինչ արեց Հիսուսը դրա փոխարեն. «Եվ Հիսուսը Սուրբ Հոգով *լցված* Հորդանանից ետ դառավ և Հոգով տարվեց անապատը: Քառասուն օր սատանայից փորձվեց…» (Ղուկ. 4.1,2): Բազմաթիվ քրիստոնյաներ մտածում են, որ Հիսուսը փորձվել է միայն անապատում քառասուն օր անցկացնելուց հետո: Սակայն դա այդպես չէ: Թեև Ավետարանները խոսում են երեք առանձնահատուկ փորձությունների մասին, որոնցով անցավ Հիսուսը, ակնհայտ է, որ Նա փորձվում էր (այսինքն՝ նեղություն էր կրում) ողջ քառասուն օրվա ընթացքում:

Ուշադրությո՛ւն դարձրու, թե ով Նրան անապատ տարավ: Սատանան չէր, որ տարավ Նրան: Ո՛չ. այլ՝ Նրա Հայրը՝ Սուրբ Հոգու միջոցով: Ինչ-որ մեկը կարող էր մտածել. *«Ինչո՞ւ Աստված պետք է տաներ Իր Որդուն անապատ, երբ Նա գիտեր, որ Հիսուսը պետք է հանդիպեր չարչարանքի և հակառակության»*: Մի բանում մենք կարող ենք հատատ համոզված լինել. Աստված երբեք չի առաջնորդի մեզ դեպի այն փոթորիկը, որը հաղթահարելու համար Նա զորություն չի տվել մեզ: (Ես կհաստատեմ և կզարգացնեմ այս սկզբունքը հաջորդ գլխում): Այստեղ մենք պետք է հասկանանք մի բան. Աստված նեղության հեղինակը չէ: Նա գիտի, որ մենք ապրում ենք մեղավոր աշխարհում, և եթե մենք պատրաստվում ենք նվաճել այս աշխարհը և իշխանություն հաստատել դրա վրա, ապա հանդիպելու ենք չար ուժերի հակառակությանը: Այդ իսկ պատճառով Աստված մարզում է մեզ այնտեղ, որտեղ գիտի, որ կարող ենք հաղթել: Սրանով իսկ Նա պատրաստում է մեզ ավելի մեծ նվաճումների համար:

Հիսուսը գնաց անապատ անմիջապես այն բանից հետո, երբ մկրտվեց և լցվեց Սուրբ Հոգով, և հաջորդ քառասուն օրերի ընթացքում բախվեց նեղության հետ: Հիշի՛ր, որ Նա թողել էր Իր աստվածային արտոնությունները, որպեսզի գործեր մեր մեջ ինչպես Մարդ, Ով լցված է շնորհքով

Աստված մարզում է մեզ այնտեղ, որտեղ գիտի, որ կարող ենք հաղթել: Սրանով իսկ Նա պատրաստում է մեզ ավելի մեծ նվաճումների համար:

(տե՛ս Փիլիպ. 2.7 և Ղուկ. 2.40): Նա պատերազմեց ամբողջ փորձության ընթացքում, հաղթահարեց բոլոր դժվարությունները և ոչ մի անգամ չտրվեց սատանայի գայթակղություններին: Դրանից հետո՝ քառասուն օր անց, «Հիսուսը Հոգու զորությունով ետ դարձավ Գալիլեա, և Նրա համբավը դուրս գնաց այն գավառի ամեն կողմերը» (Ղուկ. 4.14):

Նա Սուրբ Հոգով լցված գնաց անապատ այն բանից հետո, երբ հաղթահարեց դժվարին փորձությունը, և հետո միայն վերադարձավ այնտեղից շնորհքի Հոգու *զորությունով*: Հիշի՛ր Պողոսի խոսքերը Հռոմեացիների 8.18-ում. «Որովհետև այնպես եմ դատում, որ այս ժամանակվա չարչարանքներն արժանի չեն *բաղդատվելու* այն գալու *փառքի* հետ, որ մեզանում պիտի հայտնվի»: Այս հատվածը կարելի է կարդալ հետևյալ կերպ. «Որովհետև այնպես եմ դատում, որ այս ժամանակվա չարչարանքներն արժանի չեն բաղդատվելու այն *իշխանության և զորության* հետ, որ մեզանում պիտի հայտնվի»: Հիսուսը մտավ իշխանության ավելի բարձր մակարդակ այն բանից հետո, երբ բարեհաջող անցավ *նեղության* միջով:

Հակոբոս առաքյալը խոսում է այս մասին հետևյալ կերպ. «Երանի՜ այն մարդուն, ով դիմանում է [անկոտրում կերպով մնում է ճշմարտության մեջ] փորձությանը, որովհետև, եթե անցնի այդ փորձությունը, կստանա *կյանքի թագը*, որ Աստված խոստացել է նրանց, ովքեր սիրում են Իրեն» (Հակոբ. 1.12, NIV):

Ուշադրությո՛ւն դարձրու՝ երբ դու հաղթահարում ես որևէ փորձություն այնպես, ինչպես Հիսուսը (երբ Նա քառասուն օր անցկացրեց անապատում), դու ստանում ես «կյանքի թագը կամ պսակը»: Ես գիտեմ՝ դու կարող ես ասել, որ այս պսակը տրվում է Երկնքում՝ դատաստանի գահի առջև: Եվ դա ճշմարիտ է: Բայց ես հավատում եմ, որ Հակոբոսը խոսում է ոչ միայն նյութական պսակի կամ թագի մասին, որը տրվում է Երկնքում, այլ նույնպես՝ *այս* կյանքում իշխանության ավելի բարձր մակարդակի վրա բարձրանալու մասին: Թագը խորհրդանշում է իշխանություն: Իսկ ի՞նչ է գալիս իշխանության հետ. զորություն: Հիսուսը գնաց անապատ Հոգով *լցված*, իսկ վերադարձավ *զորությամբ*: Հիշի՛ր, որ մենք մտնում ենք իշխանության դիրքի մեջ, *եթե* չարչարվում ենք Նրա հետ: Այնպես որ, երբ մենք կրում ենք *նեղությունը* և անցնում փոր-

ծությունը, երբ չենք հանձնվում, այլ անկոտրում կերպով հնազանդվում ենք Աստծո Խոսքին այն ժամանակ, երբ ողջ դժոխքը մեր դեմ է դուրս եկել, մենք անմիջապես ինչ-որ բան ենք ստանում. մենք ստանում ենք ավելի մեծ իշխանություն կյանքի այն բնագավառում, որտեղ մենք հաստատ կանգնած ենք:

ԻՄ ՁՈՔԱՆՉԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Լիզայի մայրն այս խոստմունքի տիպիկ օրինակն է: 1979թ.-ին Շիրլիի բժիշկն Ինդիանայում կրծքի քաղցկեղ հայտնաբերեց նրա մոտ: Պարզվեց, որ քաղցկեղը ուշ էր հայտնաբերվել, և այն արդեն տարածվել էր նրա ավշահանգույցներում: Նրա կուրծքը հեռացվեց ավշահանգույցների 30 տոկոսի հետ, և նրա բժիշկն ասաց, որ շուտով նա մահանալու է:

Շիրլին ցանկանում էր հանդիպել մեկ այլ բժշկի հետ, այնպես որ, նա գնաց «MD Anderson» կլինիկա, որը գտնվում էր Հյուսթոնում՝ Տեխասում: Այն, Միացյալ Նահանգներում համարվում է լավագույն կլինիկաներից մեկը, որը զբաղվում է քաղցկեղներ բուժելով: Նրա բուժող բժիշկն այդ կլինիկայի օնկոլոգիայի բաժնի վարիչն էր: Նրա պատասխանը նույնպես դրական չէր: Հայտնելով նրան մոտավորապես նույն բանը, ինչ նրա առաջին բժիշկն էր ասել, նա ավելացրեց. «Դուք խիստ ախտորոշում եք ստացել, այնպես չէ՞»: Նա կարծում էր, որ եթե Շիրլին ճշտորեն կատարի իր ասածները, նա կարող էր ապրել երկու, միգուցե ամենաշատը՝ երեք տարի: Սա բժշկության վերջին խոսքն էր:

Նշանակվեց հետևյալ բուժումը. նա պետք է ինտենսիվ ճառագայթում անցներ, վերադառնար տուն՝ Ինդիանա, որպեսզի երկու կամ երեք շաբաթ հանգստանար, ինչից հետո պետք է վերադառնար Հյուսթոն՝ քիմիաբուժության համար:

Երբ Շիրլին դեռ Հյուսթոնում էր, նա աղոթքի համար զանգահարեց Ամերիկայում հայտնի մի հեռուստատեսային ծառայություն: Պատահաբար պարզվեց, որ այն մարդը, ով պատասխանել էր իր զանգին, ճանաչում էր մի զույգի, ովքեր «MD Anderson» կլինիկայի ամբուլատոր բաժնի պատասխանատուներն էին: Նա զանգեց այդ զույգին և խնդրեց նրանց՝ հանդիպել Շիրլիին և ծառայել նրան: Այդ զույգը կապ հաստա-

տեց Շիրլիի հետ: Նրանք տարան նրան իրենց եկեղեցի, բացօթյա խաղերի, հրավիրեցին ընթրիքի՝ ողջ այդ ընթացքում պատմելով նրան այն խոստումների մասին, որոնք գրված են Աստծո Խոսքում. և այդ խոստումները կառուցում էին նրա հավատքը:

Շիրլին նորահավատ էր: Մինչև իր քաղցկեղի մասին իմանալը մի ծառայողի կին ծանոթացրել էր նրան հավատքի հիմքերին: Ինդիանա վերադառնալուն պես նա այդ կնոջ հետ ընթրիքի գնաց, և վերջինս ասաց նրան, որ Աստված չի բժշկում բոլորին: Նրա ընկերուհին մի քանի օրինակ պատմեց քրիստոնյաների մասին, ովքեր ծանր առողջական վիճակում են եղել, սակայն չեն բժշկվել: Երբ Շիրլին կիսվեց Աստծո Խոսքում գրված խոստումներով, որոնք Հյուսթոնում ապրող ամուսինները ցույց էին տվել իրեն, այդ կինը զայրացավ, և Շիրլին մերժեց նրա խորհուրդը:

Շիրլին շփոթված էր: Երբ նա վերադարձավ Հյուսթոն՝ քիմիաբուժության համար, այդ զույգը շարունակեց հանդիպել նրա հետ ամեն օր՝ Աստծո Խոսքով խրախուսելով նրան: Ի վերջո Շիրլիի սրտում մեծ հավատք ծնվեց: Նա համոզված էր, որ այն, ինչ Աստծո Խոսքն ասում է իր մասին, ճշմարիտ է: Նա այլևս չէր կակածում այն խոստումներին, որ Աստված տալիս է Իր Խոսքում: Նա հավատում էր, որ բժշկվելու է:

Երբ Շիրլին որոշեց դադարեցնել քիմիաբուժությունը, նրա բժիշկը մտածեց, որ նա խելքը թռցրել է: Երբ նա հեռանում էր կլինիկայից, այդ բժիշկը գնաց նրա հետ մինչև վերելակը՝ զգուշացնելով, որ նա ճակատագրական սխալ է գործում: Բայց Շիրլին անդրդվելի էր: Նա հեռացավ «MD Anderson»-ից և այլևս չվերադարձավ այդտեղ: Նա վերադարձավ տուն և շարունակեց լցվել Աստծո Խոսքով՝ գրքերի, լսաժապավենների և Աստվածաշունչն ուսումնասիրելու միջոցով:

Այսօր՝ երեսունմեկ տարի անց, նա առողջ է և ապրում է նույն փողոցում, որտեղ մենք ենք: Թեև նա յոթանասունհինգ տարեկան է, բայց մեր եկեղեցիների հետ ծառայում է կապի բաժնում, որը բաղկացած է յոթ անդամներից: Նրանք ապահովում են մեզ գրքերով և դասընթացներով ավելի, քան քսան հազար եկեղեցիներ Միացյալ Նահանգներում: Նա օգնել է շատ հովիվների և եկեղեցիների աշխատողների՝ գտնել այն նյութերը, որոնց կարիքը նրանք ունեն:

Իմ ծառայության տարիների ընթացքում ես շատ քիչ մարդկանց եմ

հանդիպել Շիրլիի պես, ում համար այնքան հեշտ է աղոթել, երբ խոսքը վերաբերում է բժշկվելուն: Մեկ անգամ, երբ ես և Լիզան նոր էինք ամուսնացել, Շիրլին հյուր էր եկել մեզ. նա շատ ուժեղ հարբուխ ուներ: Երբ աշխատանքից վերադարձա տուն, տեսա, որ Շիրլին հազիվ էր աստիճաններով բարձրանում, քանի որ ցանկանում էր պառկել: Նա քայլելու ուժ չուներ: Երբ նա տեսավ ինձ, ասաց. «Ջո՛ն, դու պետք է աղոթես ինձ համար, որպեսզի ես ազատվեմ այս հարբուխից»:

Երբ ես աղոթում էի նրա համար, Աստծո զորությունն այնքան ուժեղ էր, այնքան շոշափելի, որ իմ զոքանչը բառացիորեն ընկավ հատակին: Հետո նա վեր թռավ, սկսեց թռչկոտել տնով մեկ և ասաց. «Լսե՛ք, ես ցանկանում եմ ճաշ պատրաստել ձեզ համար», և մեզ համար կերակուր պատրաստեց: Ես ծիծաղեցի ներսումս և մտածեցի. *«Ա՜յ քեզ բան: Չէ՞ որ նույնը կատարվեց Պետրոսի հետ»*: Նրա զոքանչը հիվանդ էր: Հիսուսը բժշկեց նրան, նա ոտքի ելավ և կերակուր պատրաստեց բոլորի համար (տե՛ս Մատթ. 8.14,15):

Շիրլին ոչ միայն հեշտությամբ ընդունում է աղոթքները, այլ նաև զորությամբ աղոթում է նրանց համար, ովքեր բժշկության կարիք ունեն: Եթե նա հանդիպում է ինչ-որ մեկին, ով պայքարում է հիվանդության դեմ կամ որևէ վնասվածքներ ունի, ապա Շիրլին խրախուսում է նրան Աստծո Խոսքով և աղոթում բժշկության համար:

Շիրլին ազատվել է քաղցկեղից: Նա առողջ է արդեն երեսունմեկ տարի և շարունակում է ապրել: Շիրլին անկոտրում պայքար մղելով իր խիստ *հեղության* դեմ՝ Աստծո Խոսքի օգնությամբ բժշկության բնագավառում կյանքի պսակ ստացավ: Նա դիմացավ այդ դժվարությանը և հաղթահարեց այն: Այժմ Շիրլին իշխում է կյանքի այն բնագավառում, որտեղ հաղթանակ է տարել:

ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Կան այլ մարդիկ, ովքեր նույն վկայությունն ունեն: Օրինակ՝ Օրալ Ռոբերտսը: Այժմ նա Երկնքում է, բայց նրա կյանքի պտուղները դեռևս այս երկրի վրա են: Տասնյոթ տարեկանում Օրալը հիվանդ էր տուբերկուլյոզով և պետք է մահանար: Սակայն նա անկոտրում կերպով հակա-

ռակվեց հիվանդությանը Աստծո Խոսքի և աղոթքի օգնությամբ: Որոշ ժամանակ անց նրա բժիշկը հաստատեց, որ նա բժշկված է: Ինչպես և Շիրլիի դեպքում՝ Օրալը ստացավ կյանքի պսակը բժշկության բնագավառում, ինչի հետևանքով միլիոնավոր մարդիկ զորացան ու բժշկություն ստացան նրա ծառայության շնորհիվ:

Ես մի ընկեր ունեմ, ում անունը Ջիմի է: Նա հովիվ է արդեն տարիներ շարունակ, և նրա ծառայությունը փոխել է շատ կյանքեր: Երբ նա դեռ երիտասարդ էր, բժիշկները մահացու հիվանդություն էին ախտորոշել նրա մարմնում: Սակայն նրան տարան Օրալ Ռոբերտսի ծառայությանը: Այն բանից հետո, երբ Օրալն աղոթեց Ջիմիի համար, նա հրաշքով բժշկվեց:

Ի՞նչ կլիներ, եթե Օրալը կենդանի չմնար: Որտե՞ղ կլիներ իմ ընկերը, ով այսօր հովիվ է, ինչպես նաև այն միլիոնավոր մարդիկ, ովքեր բժշկություն ստացան Օրալ Ռոբերտսի ծառայության միջոցով: Ի՞նչ կլիներ բոլոր այն մարդկանց հետ, ում հովիվ Ջիմին Աստծուն է բերել. որտե՞ղ կլինեին նրանք: Օրալը մտավ իշխանության դիրքի մեջ: Նրա անկոտրում հավատքի ամբողջական պտուղը կերևա միայն դատաստանի գահի առջև:

Ե՛կ խոսենք Քենեթ Հեգինի մասին: Նա ծնվել է 1917թ.-ին, ՄակՔինիում՝ Տեխասում, դեֆորմացված սրտով: Նրա մոտ հայտնաբերել էին հազվագյուտ արյան անբուժելի հիվանդություն: Նա անկողնային հիվանդ դարձավ տասնվեց տարեկանում և պետք է որ մահանար դեռահաս տարիքում: 1933թ.-ի ապրիլին նա մահացավ երեք անգամ և տեսավ դժոխքը: Յուրաքանչյուր անգամ Քենեթը հրաշքով ետ բերվեց: Քենեթը տվեց իր կյանքը Հիսուսին՝ ընդունելով Նրան որպես Տեր: Նա անկոտրում կերպով հավատաց և պայքարեց այդ հիվանդության դեմ Աստծո Խոսքի միջոցով: Մի հովիվ, ով եկել էր տեսակցելու և մխիթարելու նրան, ասաց. «Մի քանի օր դիմացի՛ր, տղա՛ս, և ամեն ինչ կվերջանա»: Մեկ տարի անց Քենեթը ոտքի կանգնեց իր «մահվան մահճից» և կարճ ժամանակ անց սկսեց քարոզել:

Քենեթ Հեգինի ծառայությունը հայտնի է ամբողջ աշխարհում: Նրա գրքերը տպվել են ավելի քան վաթսունհինգ միլիոն օրինակով: Նրա Աստվածաշնչյան ուսումնական կենտրոնն ավարտել է ավելի քան երեսուն հազար մարդ, որոնց մեծամասնությունն այժմ ամբողջովին

ընդգրկված է ծառայության մեջ: Վաթսունհինգ տարի Տիրոջը ծառայելուց հետո Քենեթն այժմ Երկնքում է՝ Աստծո հետ, բայց նրա ազդեցությունը շարունակվում է: Նա ստացավ կյանքի պսակը բժշկության բնագավառում և, որպես արդյունք, անասելի քանակությամբ մարդիկ բժշկություն ստացան և շատերի կյանքը փոխվեց նրա հավատարիմ ծառայության շնորհիվ:

Ի՞նչ կլիներ, եթե Քենեթ Հեգինը մահանար: Ի՞նչ կլիներ այն միլիոնավոր մարդկանց հետ, ում վրա նա ազդեցություն թողեց:

Այս երեքը, ում մասին ես պատմեցի ձեզ՝ իմ զոքանչը, Օրալ Ռոբերտսը և Քենեթ Հեգինը, մի ընդհանուր բան ունեն: Երեքն էլ ենթարկվել են հարձակումների, նրանց մասին ստել են և նրանց չարախոսել են: Շիրլիի ընկերուհու ամուսինը դադարեց խոսել նրա հետ այն բանից հետո, երբ նա որոշեց հավատալ Աստծուն բժշկության համար: Իրենց կյանքի ընթացքում և՛ Օրալ Ռոբերստին, և՛ Քենեթ Հեգինին մեղադրել էին մոլորության, ծայրահեղության ու հերձվածության մեջ: Անգամ ասել էին, որ նրանք ոգեշնչված են դևերից: Բայց ի՞նչ ասաց Հիսուսն այս մասին: «Վա՜յ ձեզ, երբ բոլոր մարդիկ ձեզ բարի ասեն, որովհետև այդպես էին անում սուտ մարգարեներին նրանց հայրերը» (Ղուկ. 6.26):

Հետաքրքիր է, որ կան ծառայողներ և հավատացյալներ, ովքեր թեթևացրել են Աստծո արքայության ուղերձը և լայնացրել դրա սահմանները, որպեսզի բոլորը հարմարավետ զգան իրենց: Նրանք վախեցել են, որ կարող են վիրավորել ոմանց կամ պիտակվել որպես «անհանդուրժողական» կամ «ծայրահեղական»: Այս մարդիկ դադարել են պատերազմել հավատքի բարի պատերազմը: Ըստ նրանց՝ այն ամենն, ինչ տեղի է ունենում, Աստծո կամքն է, և դա պետք է պասիվորեն ընդունել: Նրանք հեռացրել են «գայթակղեցնող» հատվածներն Ավետարանից, սակայն Հիսուսի մասին գրված է, որ Նա «գայթակղության վեմ» է: Սուրբ գիրքը Հիսուսին անվանում է նաև «գլորման քար», բայց նրանք վերածել են Նրան փոքրիկ խճաքարի, որի վրա անհնար է սայթաքել կամ գլորվել:

Թվում է՝ այս հովիվները, ծառայողները և հավատացյալները ցանկանում են, որ բոլորը լավ խոսեն իրենց մասին: Նրանց երբեք չեն մեղադրել՝ անվանելով ծայրահեղ, հերձված կամ դևերից ոգեշնչված: Սակայն այս ամենն ասել են Հիսուսի մասին: Նա անկոտրում էր ճշմար-

տության հարցում: Նա բացահայտեց այն մարդկանց խաբվածությունը, ովքեր ցանկանում էին բարի համբավ ունենալ բոլորի մոտ: Հիսուսն ասաց. «Ձեզ օրհնվա՛ծ համարեք ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը երես է թեքում ձեզանից կամ մերժում է ձեզ, ամեն անգամ, երբ ինչ-որ մեկն ա-րատավորում կամ սևացնում է ձեր անունը» (Ղուկ. 6.22, MSG): Սա բարի համբավի ճիշտ հակառակն է, համաձա՞յն ես: Հետո Նա ասում է դրա պատճառը. «Սա նշանակում է, որ այդ ճշմարտությունը խոսողի պատ-ճառով մյուսներն իրենց անհարմար են զգում»:

Իրականում, եթե դու որոշում կայացնես լինել անկոտրում հավա-տացյալ, ով իշխում է այս կյանքում, ապա շատ հավանական է, որ քո մասին կչարախոսեն, կստեն, քեզ սխալ կհասկանան և նույնիսկ կդա-դարեն շփվել քեզ հետ: Այդպես կվարվեն այն մարդիկ, ովքեր դավանում են, որ հետևում են Հիսուսին, սակայն բավարարված են իրենց հարմա-րավետ կյանքով: Նրանք կձգտեն վարկաբեկել քեզ, որպեսզի արդա-րացնեն իրենց անտարբերությունը: Նրանք վարվեցին այսպես Հին կտակարանի ժամանակներում ապրող ճշմարիտ մարգարեների հետ, Հովհաննես Մկրտչի հետ, Հիսուսի հետ և Նոր կտակարանի ծառայողնե-րի հետ: Այսօր նրանք վարվում են նույն կերպ: Քո մեծագույն հակառա-կությունն ամենից հաճախ կգա այն մարդկանց կողմից, ովքեր պնդում են, թե ճանաչում են Աստծուն: Նման հակառակությունը կարող է տա-տանվել ստերից և չարախոսությունից մինչև իսկ վտարումը: Եվ դա մի-գուցե ավելի վատթարանա, ինչպես որ նախապես ասել էր Հիսուսը. «Ժամանակը կգա, երբ նրանք, ովքեր սպանում են ձեզ, կմտածեն, որ դա անելով՝ նրանք ծառայում են Աստծուն» (Հովհ. 16,2, TEV):

Արդյո՞ք դու ցանկանում ես իշխել կյանքում Աստծո փառքի համար: Արդյո՞ք դու ցանկանում ես հավիտյան փոխել մարդկանց կյանքերը՝ բե-րելով նրանց Աստծո արքայության մեջ: Արդյո՞ք դու ցանկանում ես լսել, թե ինչպես է Տերն ասում. «Ապրե՛ս, Իմ բարի՛ և հավատարի՛մ ծառա»: Եթե այո՛, ապա հաստատ իմացիր, որ դու կբախվես *նեղության* հետ, եր-բեմն էլ չափազանց ուժգին կերպով: Ուստի՝ պետք է դիմանաս այդ նե-ղությանը և հաղթահարես դա:

Եթե դու դեռ իրոք ցանկանում ես մտնել իշխանության դիրքի մեջ և պատրաստ ես համբերել փորձություններին, ապա շարունակի՛ր կար-դալ. լավագույնը դեռ առջևում է:

7

Ո՞Վ Է ԿԱՆԳՆԱԾ ՆԵՂՈՒԹՅԱՆ ԵՏԵՎՈՒՄ

«Եվ ձեզ Աստծուց այդ շնորհքը եղավ Քրիստոսի համար, ոչ միայն հավատալ Նրան, այլ Նրա համար չարչարվել էլ»:

Փիլիպեցիների 1.29

Փիլիպեցիների 1.29-ը սկսվում է այսպես. «Եվ ձեզ Աստծուց այդ շնորհքը եղավ...»: Եթե մենք լսենք միայն այս խոսքի սկիզբը՝ առանց կարդալու մնացած մասը, ապա կհարցնենք. «Ի՞նչ է շնորհվել ինձ: Ի՞նչ խոստում է սպասվում ինձ»:

Պատասխանը հետևյալն է. «չարչարվել Նրա համար»: Ի՞նչ: Մարդկային մտքի համար անսովոր է, որ չարչարանքը կարող է շնորհվել որպես արտոնություն: Բայց Աստված չի խաբում մեզ, քանի որ Նա չի կարող ստել: Ոչ իմաստուն մարդը կմտածի, որ սա խաբեություն է, սակայն իմաստուն մարդը գիտի, որ սա իսկապես ոգեշնչող խոստում է: Նրանք, ովքեր Քրիստոսի մեջ են և աճում են Նրանում, իրենց սրտի խորքում գիտեն հետևյալ ճշմարտությունը. *որքան մեծ է պայքարը, անքան մեծ է հաղթանակը*:

Հավատարիմ զինվորը եռանդուն կերպով մարզվում է մարտի համար: Նա շատ լավ տեղյակ է, թե որքան կարևոր է մարտը. այն լավ հնարավորություն է հաղթելու համար: Զինվորն իր սրտում նվաճող է և ձգտում է կատարել իր թագավորի մտադրությունները: Երբ հայտարարում են, որ հերթական մարտը մոտ է, նա և իր զինակիցներն ուրախանում են այդ հնարավորության համար, որովհետև հաղթելով՝ նրանք փառք ու պատիվ կբերեն իրենց թագավորին և օգուտ՝ իրենց ժողովրդին: Այդ զինվորին շնորհված է չարչարվել պատերազմի դաշտում հանուն իր թագավորի և իր ժողովրդի, որպեսզի նա կարողանա հաղթել: Տեսնո՞ւմ ես զուգահեռը Փիլիպեցիների 1.29-ում:

Միգուցե դու առարկես. «Բայց ես զինվոր չեմ: Ես չունեմ նվաճողի էություն կամ աշխարհայացք»: Եթե դու Քրիստոսի մեջ ես, ապա դու իսկական զինվոր ես, որովհետև Քրիստոսի սերմը փոխանցվել է քո հոգու մեջ: Հիսուսը բոլոր ժամանակների մեծագույն պատերազմողն է: Լսի՛ր, թե ինչ է Աստվածաշնչում ասվում Նրա մասին. «…արդարությունով է դատաստան անում և պատերազմում: Եվ Նրա աչքերը՝ կրակի բոցի պես է… Եվ Նրա բերանից դուրս է գալիս սրած սուր…» (Հայտն. 19.11,12,15): Դու վերստեղծվել ես Նրա պատկերով և նմանությամբ: Դու ունես Նրա էությունը: Քանի որ Քրիստոսը պատերազմող է, դու նույնպես պատերազմող ես: Այդ իսկ պատճառով Նոր կտակարանը շարունակաբար հիշեցնում է մեզ, որ մենք պատերազմի մեջ ենք: Պողոսը գրում է.

> «Սա ցերեկային սպորտային մրցույթ չէ, որտեղից կարելի է գնալ և մոռանալ այդ մասին մի քանի ժամից: Սա կյանքի և մահու պայքար է մինչև վերջ սատանայի և նրա հրեշտակների դեմ» (Եփեսացիների 6.12, MSG):

Ինձ դուր է գալիս, թե ինչպես է «Մեսիջ» թարգմանությունը փոխանցում Պողոսի զգուշացումը: Մենք կյանքի և մահու պայքարի մեջ ենք մինչև վերջ, և այս պատերազմից անկարելի է փախչել: Նա նույնանման ուղերձ գրեց Կորնթոսի եկեղեցուն. «Մենք մարդիկ ենք, բայց մենք մեր պատերազմը չենք վարում մարդկային ծրագրերով կամ մեթոդներով: Մենք օգտագործում ենք Աստծո զորավոր զենքերը» (Բ Կորնթ. 10.3,4, NLT): Պարզ է, որ մենք հոգևոր զինվորներ ենք պատերազմի դաշտում: Եվ դու ստեղծված ես այս պայքարի համար: Քո սրտում դու պատերազմող ես: Պողոսը հորդորում է մեզ. «Մասնակցությո՛ւն ունեցիր չարչարանքի մեջ՝ որպես Քրիստոս Հիսուսի հավատարիմ զինվոր: Ծառայության մեջ գտնվող զինվորը ցանկանում է հաճեցնել իր հրամանատար սպային» (Բ Տիմոթ. 2.3,4, TEV): Թող որ այս ճշմարտությունը հաստատվի քո սրտում և մտքում որպես փաստ. Քրիստոսի մեջ դու զինվոր ես:

Լինելով զինվոր՝ դու կարող ես վարվել վախկոտի պես՝ խուսափելով կամ փախչելով կռվից, կամ կարող ես ընտրել հերոսի ճանապարհը՝ պատրաստակամորեն քայլ անելով և հաղթելով պատերազմը: Եթե դու ընտրես առաջինը, ապա, ցավոք, քեզ հիշելու են որպես դասալիքի: Բայց եթե դու ընտրես խիզախների ճանապարհը, ապա քեզ կներկայացնեն թագավորի առջև որպես հերոսի:

Թանկագի՛ն ընկեր Քրիստոսի մեջ, ես գիտեմ, որ դու սրտանց ցանկանում ես հաճեցնել մեր Թագավորին, փառավորել Նրան և ապրել Նրա համար: Միայն քո մարդկային էությունը կարող է քեզ ետ պահել Քրիստոսի չարչարանքներին մասնակցելու արտոնությունից, եթե դու, իհարկե, թույլ տաս:

Հռոմեացիների թղթում գրված է, որ մենք կթագավորենք Հիսուս Քրիստոսի հետ, եթե չարչարվենք Նրա հետ: Ակնհայտ է, որ մենք պետք է բախվենք նեղության և հակառակության հետ և հաղթահարենք այն: Սակայն մենք պետք է վերաբերվենք դրան ուրախալի ակնկալիքով՝ գիտակցելով, որ չարչարանքը շնորհվել է մեզ, և դրանից պետք չէ վախենալ: Որքան մեծ է պայքարը, այնքան մեծ է հաղթանակը, և, հետևաբար, նաև այն փառքը, որ կտրվի մեզ: Եվ ահա իսկապես հրաշալի մի լուր. դու ստիպված չես պարտվել ոչ մի մարտում, քանի որ մենք ունենք խոստմունք. «Բայց շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ հաղթող է անում Քրիստոսում…» (Բ Կորնթ. 2.14):

ԱՍՏՎԱԾ ՉԻ ՏԱՆՋՈՒՄ ԻՐ ՋԱՎԱԿՆԵՐԻՆ

Նախորդ գլխում մենք խոսեցինք այն իրադարձությունների մասին, որ տեղի ունեցավ անմիջապես Հիսուսի մկրտությունից հետո: Սուրբ Հոգին տարավ Նրան անապատ, որտեղ Հիսուսը փորձվեց քառասուն օր ու գիշեր: Աստված էր Հիսուսին անապատ տարել, ոչ թե սատանան: Աստված գիտեր, որ Իր Որդին խստորեն փորձվելու է, բայց Նա տարավ Հիսուսին այդտեղ հատուկ նպատակով: Մենք սովորեցինք հետևյալ սկզբունքը. *Աստված երբեք չի առաջնորդի մեզ դեպի այն փոթորիկը, որը հաղթահարելու համար Նա զորություն չի տվել մեզ*: Մեկընդմիշտ պահի՛ր այս ճշմարտությունը քո սրտում, և այն կզորացնի քեզ, երբ բախվես որևէ դժվարության հետ:

Հիսուսը պարզ ասաց, որ երբեք չէր ասում կամ անում որևէ բան, ինչը չէր բխում Իր Հորից: Նա կատարելապես առաջնորդվում էր Աստծո Հոգով. «Ես չեմ անում ոչինչ Իմ սեփական իշխանությամբ, բայց ասում եմ միայն այն, ինչ Հայրն է կարգադրում Ինձ ասել» (Հովհ. 8.28, TEV):

Մեկ անգամ Հիսուսն ամբողջ օրը քարոզել էր բազմությանը և ամբող-

ջովին ուժասպառ էր եղել: Ինչ-որ առումով ես հասկանում եմ, թե ինչպես էր Նա զգում Իրեն: Մի քանի անգամ ես քարոզել եմ օրը չորս կամ նույնիսկ հինգ անգամ: Մեկ անգամ ես այնքան էի հոգնել, որ երեկոյան հյուրանոց վերադառնալիս չկարողացա արթուն մնալ, որպեսզի զրուցեի այն ծառայողի հետ, ով հրավիրել էր ինձ:

Նույնը, հավանաբար, կատարվում էր Հիսուսի հետ: Արդեն երեկո էր, և Նա պատրաստվում էր մի լավ հանգստանալ գիշերը, սակայն Սուրբ Հոգին դրդեց, որպեսզի Նա պատվիրեր Իր աշակերտներին՝ մտնել իրենց նավակի մեջ և անցնել ծովի մյուս ափը: Ծովի մյուս ափին մի դիվահար մարդ կար, ում պետք էր ծառայել: Նրանք բոլորը մտան նավակի մեջ, և Հիսուսն անմիջապես քնեց: Հանկարծ սարսափելի փոթորիկ սկսվեց: Նրա անձնակազմից չորսը հմուտ նավաստիներ էին, ովքեր անցկացրել էին իրենց կյանքի մեծ մասն այդ ծովում: Նրանք ծանոթ էին ծովի դժվարություններին և գիտեին, թե ինչպես վարվել, բայց այս փոթորիկն անսովոր էր: Ալիքն ալիքի ետևից շարունակ թափվում էր նրանց վրա, և այս հմուտ նավաստիներն արթնացրին Հիսուսին և գոչեցին. «Հոգդ չէ՞, որ մենք կորչում ենք»: Նրանք այդ դժվարին *նեղությունից* ոչ մի ելք չէին տեսնում:

Մի՞թե դու կարծում ես, որ այդ փոթորկի ժամանակ Սուրբ Հոգին և Հայրը տագնապել էին: Միգուցե դու պատկերացնում ես, թե ինչպես են Նրանք խորհրդակցում մեկը մյուսի հետ. «Մեր հավատը չի՛ գալիս: Մենք գաղափար անգամ չունեինք, որ այս մահացու փոթորիկը կհայտնվեր: Ի՞նչ ենք անելու: Եվ ինչո՞ւ Մենք պատվիրեցինք Հիսուսին անցնել ծովի մյուս կողմը: Մենք մե՛ծ սխալ գործեցինք»:

Անգամ ծիծաղելի է այս մասին մտածելը, այնպես չէ՞: Իհարկե նման բան տեղի չի ունեցել: Սուրբ Հոգին գիտեր, որ փոթորիկ էր բարձրանալու, Նա սկզբից գիտի, թե ինչ է լինելու վերջում. «Միայն Ես կարող եմ ասել ձեզ, թե ինչ է տեղի է ունենալու, նույնիսկ մինչև տեղի ունենալը գիտեմ» (Եսայի 46.10, NLT): Նա առաջնորդեց Հիսուսին այդ նավակի մեջ՝ շատ լավ իմանալով, որ Նրան մահացու փոթորիկ էր սպասվում: Սակայն *Աստված երբեք չի առաջնորդի մեզ դեպի այն փոթորիկը, որը հաղթահարելու համար Նա զորություն չի տվել մեզ*: Հենց որ Հիսուսին արթնացրին, Նա գնաց դեպի նավակի առաջամասը և հրամայեց, որպեսզի փոթորիկը

հանդարտվի, այնուհետև շրջվեց դեպի աշակերտները և հարցրեց. «Ինչո՞ւ այդպես վախկոտ եք: Ինչո՞ւ հավատք չունեք» (Մարկ. 4.40):

Ինչո՞ւ Հիսուսն այսպիսի խստությամբ խրատեց այս փորձառու նավաստիներին այն բանից հետո, երբ նրանք ամբողջ ուժով պայքարում էին ողջ մնալու համար: Ինչո՞ւ Նա խստորեն նշեց, որ նրանք «հավատք չունեն»: Մինչև նավարկությունը սկսելը Հիսուսն ասաց նրանց. «Եկե՛ք անցնենք այն կողմը» (խոսք 35): Նա չասաց. «Եկե՛ք անցնենք ճանապարհի կեսը և խորտակվենք»: Նրանք պետք է իմանային, որ Հիսուսի խոսքերի մեջ կար բավարար շնորհք (զորություն) նրանց մյուս ափը հասցնելու համար: Նրանք պետք է կանգնեին այդ նավակի առաջամասի մոտ և գոչեին. «Փոթորի՛կ, դու չե՛ս սպանի մեզ և չե՛ս էլ կանգնեցնի մեզ: Մենք *կհասնե՛նք* մյուս ափը, որովհետև մեր Տերն ասաց. «Գնացե՛ք մյուս ափը»: Այնպես որ կորչի՛ր մեր ճանապարհից»:

Սուրբ Հոգին… գիտի, թե ինչ է լինելու վերջում:

Աստված գիտեր, որ փոթորիկ է բարձրանալու: Նա առաջնորդեց նրանց այդ փոթորկի մեջ, բայց նաև իշխանություն և զորություն տվեց նրանց՝ այդ փոթորկի վրա իշխելու համար: Հենց սա է բանալին: Ո՞րն է կյանքում պարտված մարդկանց և կյանքում իշխող մարդկանց տարբերությունը. նրանք, ովքեր իշխում են կյանքում, գիտեն, որ պայքարներն ու հակամարտություններն անխուսափելի են, և որ, ի տարբերություն այս աշխարհի մարդկանց, մենք ունենք զորություն մեր կյանքում հանդիպած ամեն իրավիճակի վրա: Այնպես որ մենք կարո՛ղ ենք և պե՛տք է պատերազմենք անկոտրում կերպով, քանի դեռ չենք հաղթել: Թող որ Կորնթացիների երկրորդ թղթի 2.14-ի ճշմարտությունը թափանցի քո էության յուրաքանչյուր մասնիկի մեջ.

«Բայց շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ հաղթող է անում Քրիստոսում…»: Եթե այս իրավիճակում վերջին խոսքն աշակերտներինը լիներ, ապա բոլորն այդ նավակի մեջ կխորտակվեին և կմահանային իրենց սահմանափակ մտածելակերպի պատճառով: Սակայն Հիսուսի նպատակաուղղված հնազանդությունը, որով Նա պայքարեց փոթորկի դեմ, ոչ միայն փրկեց նրանց կյանքերը, այլ նաև ազատագրեց այն դիվահարին, որ գտնվում էր ծովի մյուս ափին:

Սակայն ամեն ինչ չավարտվեց սրանով. այդ ազատագրված մարդը հռչակեց Աստծո արքայությունը Դեկապոլիսի տասը քաղաքներում: Ճիշտ է, Սուրբ Հոգին փոթորկի մեջ առաջնորդեց Հիսուսին և Նրա թիմին, և նրանք դժվարություն կրեցին, սակայն Աստծո կամքը չէր, որ նրանք պարտվեին: Ընդհակառակը՝ Աստծո նպատակն այն փառավոր ավարտն էր, որ սպասվում էր աշակերտներին փոթորկից հետո:

Եթե այսօր մենք կարողանայինք հարցնել առաքյալներին. «Արժե՞ր կրել փոթորկի դժվարությունը, որպեսզի տեսնեիք, թե ինչպես այդ մարդն ազատագրվեց», ապա նրանք, անկասկած, կպատասխանեն. «Իհա՛րկե»:

Եկե՛ք դիտարկենք մեկ այլ դեպք: Պողոս առաքյալը Սուրբ Հոգով առաջնորդված գնում էր Երուսաղեմ: Բայց ահա թե ինչ էր սպասում Նրան.

> «Հնազանդվելով Սուրբ Հոգուն՝ ես գնում եմ Երուսաղեմ՝ չիմանալով, թե ինչ կկատարվի ինձ հետ այնտեղ: Ես միայն գիտեմ, որ Սուրբ Հոգին զգուշացրել է, որ յուրաքանչյուր քաղաքում բանտ և նեղություններ են սպասվում ինձ» (Գործք 20.22,23, TEV):

Նեղություններ բառն այս խոսքում հունարեն *թլիփսիսն* է (դուք արդեն այս բառին ծանոթ եք, այնպես չէ՞): Սուրբ Հոգին առաջնորդում էր Պողոսին այնպիսի մի տեղ, որտեղ նա մեծ նեղություն էր ունենալու: Բայց կրկին Աստված շնորհք կտա մեզ, որպեսզի մենք հաղթահարենք ցանկացած խոչընդոտ, որին հանդիպում ենք այնտեղ, որտեղ Նա առաջնորդում է մեզ:

Ի՞նչ կատարվեց, երբ Պողոսը որոշեց դժվարության մեջ անկոտրում լինել: Ոչ միայն Երուսաղեմում բնակվող հրեաները և հեթանոսները լսեցին Ավետարանը, այլ նաև Հռոմեական կայսրության քաղաքացիներից շատերը, անգամ զինվորները, դատավորները, տարածաշրջանների կառավարիչները և, նույնիսկ, անձամբ կեսարը: Այս ամենը կատարվեց մի մարդու միջոցով, ում Սուրբ Հոգին առաջնորդեց փոթորկի մեջ: Աստված չէր այդ փոթորկի կամ չարչարանքի հեղինակը, բայց Նա գիտեր, որ Պողոսը հանդիպելու էր դրան, քանի որ այս կործանվող աշխարհը թշնամաբար է տրամադրված Աստծո ճանապարհներին: Սակայն Քրիստոսի սերը դրդեց Պողոսին հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը, և

Աստված շնորհք տվեց նրան այդ դժվարությունը հաղթահարելու համար: Պողոսն ամփոփեց այդ ճանապարհորդությունը՝ գրելով. «...և ամենից [նեղություններից] ինձ ազատեց Տերը» (Բ Տիմոթ. 3.11): Նրա խոսքերը նման են սաղմոսերգուի հայտարարությանը. «Որովհետև Դու [Աստված] ամեն նեղությունից փրկում ես ինձ» (Սաղմ. 54.7): Ո՛չ թե նեղությունների մի մասից կամ մեծ մասից, այլ *ամե՛ն* նեղությունից: Այսինքն՝ ազատեց նեղություններից 100 տոկոսով:

Այս նույն խոստումը վերաբերվում է քեզ և ինձ:

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Երբ մեր առաջնեկը՝ էդիսոնը, առաջին դասարանում էր, նա խնդիրներ ունեցավ մի քանի կռվարար երեխաների հետ: Մի քանի օր շարունակ նա լացելով գալիս էր տուն և պատմում, որ այդ երեխաները խաղահրապարակում նեղացնում էին իրեն: Համոզված եմ՝ դուք կարող եք գուշակել, թե ինչ էի ես ցանկանում անել որպես հայր: Ես ցանկանում էի գնալ այդ խաղահրապարակ, մի լավ դաս տալ այդ երեխաներին, իսկ հետո խստորեն զգուշացնել. «Այլևս չհամարձակվե՛ք դիպչել կամ անհանգստացնել իմ որդուն»: Սակայն նման մոտեցումը երեք «բայց» ուներ: Առաջինը՝ դա աստվածապաշտ մարդուն վայել քայլ չէր: Երկրորդը՝ նման որոշումը բացասաբար կազդեր էդիսոնի բնավորության ձևավորման վրա: Եվ երրորդը՝ ես չունեի ոչ մի իրավասություն այդ խաղահրապարակում: Խաղահրապարակն իմ իշխանության վայրը չէր: Էդիսոնը պետք է իշխեր այդ վայրում, այսինքն՝ իշխանություն վերցներ այն բաների վրա, որ կատարվում էին այդտեղ:

Երբ ես հանդարտվեցի, Լիզան և ես որոշեցինք, որ լավագույն բանը, որ կարող ենք էդիսոնի համար անել, դա նրան սովորեցնելն էր, թե ինչպես կարող է հաղթահարել այն *թլիփսիսը (նեղությունը)*, որի հետ նա բախվել էր: Ամեն երեկո մենք նրան սովորեցնում էինք իմաստուն վարվել և խորհուրդներ էինք տալիս, որպեսզի օգնեինք նրան հաջողությամբ հաղթահարել այդ կռվարար երեխաների հետ ունեցած բոլոր խնդիրները: Հաջորդ օրը, երբ մենք դպրոց էինք ուղարկում նրան, նա արդեն զինված էր լինում այդ դժվարությունների հետ պայքարելու համար: (Իհա՛րկե, եթե

մենք զգայինք, որ էդիսոնին իրական վտանգ է սպառնում, մենք կապ կհաստատեինք նրա ուսուցչի և դպրոցի տնօրենի հետ): Հետևաբար՝ հաջողությամբ հաղթահարելով այն բոլոր խոչընդոտները, որոնք էդիսոնը հանդիպեց իր մանկության տարիներին, նա սկսեց հեշտությամբ շփվել մարդկանց հետ: 2004թ.-ին նա միացավ մեր ծառայության աշխատակազմին՝ որպես աշխատող՝ չունենալով որևէ աշխատանքային փորձառություն: Այդ ժամանակ մեր աշխատակազմը բաղկացած էր ավելի քան 40 հոգուց, որոնց մեջ կային թե՛ դեռահասներ, թե՛ վաթսունն անց մարդիկ: Ես ծառայության տնօրենների թիմին ասացի, որ էդիսոնը չպետք է որևէ հատուկ վերաբերմունքի արժանանա այն պատճառով, որ իմ որդին է: Վեց ամսվա ընթացքում այդ մարդիկ ասացին ինձ. «Մենք ցանկանում ենք նրան նշանակել Եկեղեցիների հետ կապի բաժնի տնօրեն»: Եկեղեցիների հետ կապը մեր ծառայության ամենակարևոր մասն է, այնպես որ ես հարցրի, թե ինչո՞ւ են ցանկանում այդ պաշտոնը տալ էդիսոնին: Մեր թիմը պատասխանեց. «Որովհետև քո որդին իսկական առաջնորդ է»:

Էդիսոնը գլխավորեց այդ բաժինը, և այն սկսեց բարգավաճել: Նա շահեց իր աշխատողների, ինչպես և ամբողջ ծառայության աշխատակազմի վստահությունը: Նրանք տեսնում էին, որ նա իմաստությամբ էր վարվում, երբ խնդիրներ և ընդհարումներ էին առաջանում: Այսօր քսանհինգ տարեկան հասակում, նա «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության գլխավոր տնօրենն է և շատ մեծ աշխատանք է կատարում: Նա շահել է բոլոր աշխատողների սրտերը՝ անկախ նրանց տարիքից: Նրանք համակրում են էդիսոնին և վստահում նրա առաջնորդությանը:

Այժմ թո՛ւյլ տուր հարցնել. արդյո՞ք ես պետք է հանեի նրան դպրոցից, որտեղ նրա հետ շատ վատ էին վարվում, և նրան կրթության տայի տնային պայմաններում: Մի՞թե դու կարծում ես, որ ես չար և վատ ծնող եմ այն պատճառով, որ կրկին ուղարկում էի նրան այդ դպրոց՝ իմանալով, որ նա ամեն օր հանդիպելու էր այդ կռվարար երեխաներին: Շատերն այլ կերպ կվարվեին: Նույն կերպով Աստված չար և վատ չէ, երբ առաջնորդում է մեզ այնտեղ, որտեղ մենք դժվարություններ կունենանք, այնպիսի վայրերում, որտեղ պետք է ներխուժել և զավթել Նրա արքայության համար: Նա գիտի, որ սա մեր լավի համար է: Եթե մենք ընդունենք այդ դժվարությունն Իր շնորհքի զորությամբ, ապա դա, ի վերջո, փառք կբերի Իրեն և օգուտ՝ Իր ժողովրդին:

ՆԵՂՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Մինչև շարունակելը մենք պետք է պարզ պատկերացում կազմենք *թլիփսիսի (նեղության)* աղբյուրի մասին և հասկանանք, թե որն է Աստծո կամքը, երբ մենք նեղության մեջ ենք: Այս թեմայի մասին խոսելն անչափ կարևոր է, որովհետև սա կարող է գլորման քար դառնալ շատերի համար, հատկապես կյանքի երեք խոշոր բնագավառներում: Քանի որ սա անչափ կարևոր է, ես այս ենթավերնագրի մնացած մասը կտրամադրեմ այս հարցին, որից հետո մենք կրկին կշարունակենք խոսել իշխանության մեջ մտնելու մասին:

Այն օրինակները, որ մենք քննարկել ենք մինչև այս պահը, ցույց էին տալիս, որ Աստված չէ *թլիփսիսի (նեղության)* հեղինակը: Ընդհակառակը՝ *թլիփսիսը* կամ խիստ բախումները, հակառակությունն ու նեղությունը գալիս են այս աշխարհից: Արդյո՞ք սա միշտ է ճշմարիտ: Մենք պե՛տք է տանք այս հարցը, որովհետև, եթե դու թեկուզ մի փոքր կասկած ունենաս, որ քո կյանքում դժվարությունը գալիս է Աստծուց, ապա դու չես ծգտի հաղթել դա այնպիսի եռանդով, ինչպես հարկավոր է:

Այն զինվորը, որ գնում է պատերազմի, շատ լավ գիտի, թե ում հետ է պայքարելու: Իմաստուն զինվորը գիտի իր թշնամու մարտավարությունը: Ոչ մի զինվոր երբեք չի գուշակում, թե ով է իր թշնամին: Սակայն երեսունից ավելի տարիներ տևող իմ ծառայության ընթացքում ես հանդիպել եմ չափազանց շատ հավատացյալների, ովքեր համոզված չեն, թե ով է կանգնած այն դժվարությունների ետևում, որոնց հետ նրանք բախվում են: Դժբախտաբար՝ նրանք չգիտեն իրենց թշնամու մարտավարության և գործողությունների մասին, իսկ Աստծո Խոսքը պատվիրում է մեզ իմաստուն լինել. «…որպեսզի թույլ չտանք սատանային հաղթել մեզ, որովհետև մեզ հայտնի են նրա ծրագրերը» (Բ Կորնթ. 2.11, TEV):

Որտեղի՞ց իմանանք սատանայի մարտավարությունը: Հիսուսն ասում է մեզ այդ մասին: «Գողի նպատակը *գողանալը, սպանելն* ու *կործանելն* է»,- ասում է Հիսուսը: - «*Իմ նպատակն է* տալ *կյանք իր ողջ լիությամբ*» (Հովհ. 10.10, NLT): Քիչ առաջ Հովհաննեսի 10-ում Հիսուսն ասաց, որ այդ «գողը» սատանան: Իսկ ավելի ուշ Հիսուսը նրան անվանում է «այս աշխարհի իշխանը» (Հովհ. 16.11): Պողոսը նրան անվանում

է «այս աշխարհի աստվածը» (Բ Կորնթ. 4.4) և «օդի իշխանության իշխանը» (Եփես. 2.2): Նա է որոշում այս աշխարհի ընթացքը: Սատանան է բախումների և ընդհարումների աղբյուրը: Պողոսն ասում է.

> «Որովհետև մենք չենք պայքարում մարմնից և արյունից շինված մարդկանց դեմ, այլ այն *չար իշխանությունների* և *անտեսանելի աշխարհի պետությունների* դեմ, *խավարի զորավոր աշխարհակալների* դեմ, *որոնք իշխում են այս աշխարհում*, և *չար հոգիների* դեմ, *որոնք երկնային տիրույթներում են*» (Եփեսացիների 6.12, NLT):

Տիրոջ խոսքերը Հովհաննեսի 10.10-ում և Պողոսի խոսքերը Եփեսացիների թղթում (վերևում) ակնհայտորեն ցույց են տալիս, որ ցանկացած դժվարություն, որը կապված է գողանալու, սպանելու և կործանելու հետ, Եփեսացիների 6.12-ում նշված տարբեր տեսակի խավար ուժերի ազդեցության հետևանքն է: Մյուս կողմից՝ Հիսուսի նպատակն է, որպեսզի Հոր կամքը կատարվի: Իսկ Հոր կամքը քեզ համար *կյանքն է իր ողջ լիությամբ*: Ամեն անգամ, երբ բախվես ցանկացած տեսակի ճնշման, դժվարության կամ չարչարանքի, օգտագործի՛ր Հովհաննեսի 10.10-ը որպես «զտիչ»՝ որոշելու համար Աստվա՞ծ է թաքնված դրա ետևում, թե՞ թշնամին: Ե՛կ դիտարկենք ընդհանուր օրինակները՝ տեսնելու համար, թե ինչպես է պետք դա անել:

ԱՄՈԹ, ՄԵՂՔԻ ԶԳԱՑՈՒՄ, ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Եթե անցկացնես ամոթը, մեղքը և դատապարտությունը Հովհաննեսի 10.10-ի «զտիչով», ապա դրանք ակնհայտորեն կհայտնվեն ոչ թե Աստծո, այլ գողի՝ մեր թշնամու դասակարգում:

Բայց որպեսզի լիովին համոզվենք, եկե՛ք ավելի խորությամբ դիտարկենք այս հարցը: Սաղմոսերգուն գրում է. «Օրհնի՛ր (սիրով և գոհությամբ փառաբանի՛ր) Տիրոջը, ով իմ անձ և մի՛ մոռացիր Նրա բոլոր [յուրաքանչյուր] բարիքները, Ով ներում է [յուրաքանչյուրը] քո բոլոր մեղքերը, ով բժշկում է [յուրաքանչյուրը] քո բոլոր հիվանդությունները» (Սաղմ. 103.2,3, AMP):

Հիշի՛ր ամենավստահելի անձնավորությանը, ում երբևէ ճանաչել ես: Միգուցե դա քո ամուսինը կամ կինն է, ծնողներիցդ մեկը կամ քո բժիշկը: Այդ մարդը երբեք չի ստել և չի խաբել քեզ: Հուսով եմ, որ նման մարդ

եղել է կամ էլ կա քո կյանքում: Պատկերացրո՛ւ, որ այդ մարդը խոստանում է քեզ այն, ինչը մենք հենց նոր կարդացինք: Եվ բացի այդ՝ նա նաև կարող է կատարել իր խոստումը:

Հիմա մտածի՛ր այս մասին. Աստված շատ ավելի վստահելի է, քան այն մարդը, ում մասին դու նոր մտածեցիր: Նա պատվիրում է մեզ *չմոռանալ* Իր բարիքներից ո՛չ մեկը: *Ո՛չ մեկը:* Առաջին բարիքն այն է, որ Նա ներել է մեր բոլոր մեղքերը: Որքա՜ն հրաշալի է: Ինչպիսի՜ բարություն: Ինչպիսի՜ ողորմություն: Ինչպիսի՜ սեր: Հաստա՛տ իմացիր քո սրտում, որ *դու ներված ես Քրիստոս Հիսուսում*: Քո կյանքում չկա այնպիսի մեղք, որը Նա ջնջած չլինի Իր թափած արյան շնորհիվ: Այնպես որ, եթե ամոթը, մեղքի զգացումը կամ դատապարտությունը ճնշեն քեզ ինչ-որ հարցի վերաբերյալ, որ դու մտածել ես, ասել կամ արել ես անցյալում, և դրա համար խնդրել ես, որ *Աստված ների քեզ, ապա Աստված չէ այդ զարհուրելի զգացմունքների հեղինակը*: Լսի՛ր Պողոսի խոսքերն այս մասին.

> «Ո՞վ է համարձակվում մեղադրել մեզ, ում Աստված ընտրել է և դարձրել Իրենը: Մի՞թե Աստված: Ո՛չ: Նա է, որ արդարության դիրք է տվել մեզ Իր առջև: Այդ դեպքում ո՞վ է մեղադրում մեզ: Մի՞թե Քրիստոս Հիսուսը: Ո՛չ, որովհետև հենց Նա է մահացել և հարություն առել մեզ համար և նստած է բարձրագույն պատվի վայրում՝ Աստծո կողքին, և բարեխոսում է մեզ համար» (Հռոմեացիների 8.33,34, NLT):

Այստեղ այնքան պարզ է գրված. «Ո՞վ է համարձակվում մեղադրել մեզ… Մի՞թե Աստված: Ո՛չ… Այդ դեպքում ո՞վ է մեղադրում մեզ: Մի՞թե Քրիստոս Հիսուսը: Ո՛չ»: Մտածի՛ր այս մասին. Աստված ուղարկեց Հիսուս Քրիստոսին, որպեսզի Նա մահանար քեզ համար, երբ դու դեռ Նրա թշնամին էիր: Հիսուսը համաձայնեց անել դա, իսկ Սուրբ Հոգին իրականացրեց դա: Ինչո՞ւ Հայր Աստված, Որդին կամ Սուրբ Հոգին պետք է դատապարտեն, ամաչեցնեն և մեղքի զգացում առաջացնեն քեզ մոտ հիմա, երբ դու արդեն թշնամի չես Աստծուն, այլ՝ Նրա զավակներից մեկն ես: Եվ ինչո՞ւ պետք է Նա դատապարտություն բերի քեզ վրա, երբ Իր զոհաբերված Գառն արդեն կրել է ողջ դատապարտությունը: Մի՞թե Հիսուսի զոհը բավական չէ: Մի՞թե այն հավիտենական չէ:

Եբրայեցիների թղթի հեղինակը հավաստիացնում է մեզ.

> «Էլ որքա՞ն ավելի Քրիստոսի արյունը, Ով լինելով անբիծ՝ հավիտենա-

կան Հոգու միջոցով զոհաբերեց Իրեն Աստծուն, կսրբի մեր *խիղճն* այն գործերից, որոնք տանում էին մահվան, որպեսզի մենք կարողանանք ծառայել կենդանի Աստծուն» (Եբրայեցիների 9.14, NIV):

Քրիստոսի զոհը ոչ միայն ոչնչացրեց մեր մեղքն Աստծո առջև, այլ նաև *սրբեց մեր խիղճը* դատապարտությունից, մեղքի զգացումից և ամոթից: Այնպես որ, եթե դու ապրում ես Նրա համար և ձգտում ես հնազանդվել Նրա ցանկություններին, սակայն դեռ վարակված ես այդպիսի մտքերով կամ զգացումներով, ապա դրանք գալիս են թշնամուց, ով փորձում է պարտության մատնել քեզ: Դու պետք է կատաղի կերպով հակառակվես այդ մտքերի հեղինակին: Ինչպե՞ս: Ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն էր պայքարում սատանայի դեմ, ով Աստծո Խոսքով փորձում էր Նրան անապատում: (Ես ավելի մանրամասն կխոսեմ այս մասին հետագա գլուխներում):

Ես կրկնում եմ՝ *եթե* դու ապրում ես անհնազանդության մեջ, ապա քո իսկ սիրտը կդատապարտի քեզ: Հովհաննեսը գրում է. «Եթե մեր խիղճը մեղադրում է մեզ, ապա մենք գիտենք, որ Աստված ավելի մեծ է, քան մեր խիղճը, և որ Նա գիտի ամեն ինչ: Այնպես որ, թանկագի՛ն ընկերներ, եթե մեր խիղճը չի մեղադրում մեզ, ապա մենք համարձակություն ունենք Աստծո ներկայության մեջ մտնելու» (Ա Հովհ. 3.20,21, TEV): *Դատապարտել* բառն այս խոսքում չի նշանակում «դատապարտել որոշակի դատավճռով», ինչպես սովորաբար է լինում: Փոխարենը՝ այս հատվածում գրված հունարեն *կատագինոսկո* բառի սահմանումը հետևյալն է՝ «սխալ գտնել» կամ «մեղադրել»:

Մեր խիղճը պաշտպանում է մեզ և թույլ չի տալիս, որ մենք թողնենք Աստծո հետ շփումը: Եթե մենք մնում ենք մեղքի մեջ և առաջ չենք գնում, ապա Սուրբ Հոգին շտկում է մեզ սիրող Հոր պես. «Իմ զավա՛կ, ուշադրությո՛ւն դարձրու, երբ Տերն ուղղում է քեզ, և մի՛ հուսահատվիր, երբ Նա հանդիմանում է քեզ» (Եբր. 12.5, TEV): Նա ուղղում է մեզ, որպեսզի վերականգնի մեր շփումն Իր հետ և դարձնի մեզ ավելի նման Իրեն: Նա չի անում դա մեզ սպանելու, մեզանից գողանալու կամ մեզ կործանելու համար:

Միշտ հիշի՛ր, որ և՛ դատապարտությունը, և՛ հանդիմանությունը տհաճ ու ցավոտ են: «Եվ ամեն խրատ հենց նույն ժամանակ ուրախություն չի երևում, այլ՝ տրտմություն…» (Եբր. 12.11): Սակայն կա ահռելի տարբերություն այս երկուսի միջև: Դատապարտությունը ցույց չի տա-

լիս ելքը. այն պարզապես թողնում է քեզ ամոթի և մեղքի զգացումի մեջ, որոնք շարունակ տանջում են քեզ: Շտկումը կամ հանդիմանությունը ցույց է տալիս ելքը, որը կոչվում է ապաշխարություն:

Բացի այդ, եթե քո խիղճը գիտի, որ դու անհնազանդության մեջ ես, ապա Աստված նույնպես գիտի դա, որովհետև Նա ավելի մեծ է, քան քո խիղճը: Միշտ հաշվի՛ նստիր Նրա հետ. անմիջապես ապաշխարի՛ր քո անհնազանդությունից և խոստովանի՛ր դա Նրան: Նա կների քեզ: Սա այնքան պարզ է:

Հովհաննեսը գրում է. «Գրում եմ սա ձեզ, իմ երեխանե՛ր, որպեսզի *դուք չմեղանչեք*, բայց *եթե* որևէ մեկը մեղանչել է, ապա կա Մեկը՝ Հիսուս Քրիստոսը, Ով բարեխոսում է մեզ համար Հոր մոտ» (Ա Հովհ. 2.1, TEV):

Ուշադրությո՛ւն դարձրեք՝ Հովհաննեսը չի ասում. «երբ դուք մեղանչեք»: Ո՛չ: Աստծո նպատակն այն է, որ դու չմեղանչես: *Մեղավորության զգացողությունը քեզ ետ* կտանի մեղքի մեջ, իսկ այն գիտակցումը, որ *դու արդար դիրք ունես Աստծո առջև*, կզորացնի քեզ, որպեսզի դու հակառակվես մեղքին: Գիտակցելով սա՝ դու կհասկանաս, որ մեղքի զորությունը քանդված է քո կյանքում, և, որ քեզ շնորհք է տրվել՝ մեղքից լիովին ազատ ապրելու համար. «Որովհետև մեղքը չի տիրի ձեզ վրա, որովհետև օրենքի տակ չեք, այլ՝ շնորհքի» (Հռոմ. 6.14):

Այսպիսով՝ մեր նպատակը մեղք գործելը չէ: Աստծո շնորհքն էլ զորացնում է մեզ այս նպատակին հասնելու համար: Բայց երբ (ես կրկին շեշտում եմ՝ *եթե*) մենք մեղք ենք գործում, ապա կարող ենք անմիջապես բերել դա Աստծո առջև և հավատալ Աստծո Խոսքին, որն ասում է. «Եթե մենք խոստովանենք Նրան մեր մեղքերը, Նա *հավատարիմ* և *արդար* է, որպեսզի ների մեզ և մաքրի մեզ *ամեն* անօրենությունից» (Ա Հովհ. 1.9, NLT): *Հավատարիմ* նշանակում է, որ Նա կների ամեն անգամ՝ անկախ այն բանից, թե քանի անգամ ես դու ձախողվել: *Արդար* նշանակում է, որ Նա կների անկախ այն բանից, թե ինչ ես դու արել: Այնպես որ, երբ Նա մաքրում է քեզ *ամեն* անօրինությունից, նշանակում է, որ դու մաքուր ես Նրա առջև այնպես, ասես երբեք էլ չես մեղանչել: Հիսուսի արյունը հեռացնում է մեղքն այնքան հեռու, որքան արևելքը հեռու է արևմուտքից:

Ամենամեծ խոչընդոտը, որը թույլ չի տալիս հավատացյալներին իշխել այս կյանքում, մեղքի գիտակցությունն է: Երբ մենք ամոթի և դատապարտության զգացում ունենք ինչ-որ մեղքի պատճառով, որի համար

ապաշխարել ենք Աստծո առջև, բայց շարունակ պատերազմում ենք դրա դեմ, ապա այն մեզ թուլացնում է: Ես տեսել եմ, թե ինչպես են շատ մարդիկ հեռացել հավատքից մեղքի կամ ամոթի քայքայիչ զգացումի պատճառով, որը ոչ թե Աստծուց է եղել, այլ՝ սատանայից: Նրանց թվում էր, թե իրենք չափազանց շատ են մեղք գործել կամ աններելի մեղք են գործել: Թեև Աստված չէր դատապարտում նրանց, բայց սատանան օգտագործում էր նրանց չնորոգված միտքը՝ ավելի շատ մեղքի զգացումի, ամոթի և անհուսության մեջ մղելու համար: Այնպես որ կա՛մ նրանք հեռանում էին հավատքից, կա՛մ համակերպվում անպտուղ հավատքի կյանքի հետ և շարունակ մեղադրում իրենց: Փոխարենը, որ նրանք իշխեին այս կյանքում՝ կյանքն էր իշխում նրանց:

Այնպես որ մեկընդմիշտ հաստատվի՛ր այս ճշմարտության մեջ. եթե դու մեղք ես գործել, սակայն անկեղծ սրտով ապաշխարել ես և խոստովանել այն Տիրոջը, ապա դու կանգնած ես Աստծո առջև այնպես, ասես երբեք չես մեղանչել: Աստված Իր զարմանալի շնորհքով այդքան պարզ է դարձրել դա քեզ համար: Դու կարո՛ղ ես հավատալ սրան:

Թո՛ւյլ տվեք շատ կարևոր մի նշում անել. եթե դու իսկապես Աստծո զավակ ես, ապա ամենից շատ դու ցանկանում ես հաճեցնել Նրան, որովհետև Նրա սերմը քեզանում է: Բայց այն մարդը, ով գիտակցաբար շարունակում է ապրել անհնազանդության մեջ, ճշմարտապես ծնված չէ Աստծուց: Եթե դու մեղանչելու թույլտվություն ես փնտրում, ապա գտնվում ես շատ վտանգավոր և խաբուսիկ ուղու վրա: Կոպիտ ասած՝ դու իրականում փրկված չես: Աստվածաշնչում ասվում է այս մասին. «Նրանք, ովքեր շարունակում են մեղք գործել, երբեք չեն ճանաչել Նրան, և ո՛չ էլ հասկացել, թե ով է Նա… Դա ցույց է տալիս, որ նրանք պատկանում են սատանային» (Ա Հովհ. 3.6-8, NLT):

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպիսի՞ զորություն է տալիս մեզ շնորհքը հիվանդության և մարմնական տկարությունների վրա իշխելու համար: Եկե՛ք վերանայենք այն ճշմարտությունը, որ գրել է սաղմոսերգուն.

«Օրհնի՛ր (սիրով և գոհությամբ փառաբանի՛ր) Տիրոջը, ո՛վ իմ անձ, և մի՛ մոռացիր Նրա բոլոր [յուրաքանչյուր] բարիքները: Ով ներում է քո [յուրաքանչյուր] բոլոր մեղքերը, Ով բժշկում է քո [յուրաքանչյուր] բոլոր հիվանդությունները» (Սաղմ. 103.2,3, AMP):

Կրկին մտածի՛ր այն մարդու մասին, ում ամենից շատ ես վստահում, իսկ հետո ընդունիր, որ Աստված շատ ավելի է արժանի քո վստահությանը, քան նա. Նա երբեք չի խախտում Իր խոստումը: Առաջին բարիքը, որ մենք տեսնում ենք այս Սաղմոսում, այն է, որ Աստված հավատարմորեն ներում է մեր մեղքերից յուրաքանչյուրը: Եվ սա դեռ ամենը չէ, որովհետև այս խոսքում մենք միաժամանակ պատվեր ենք ստանում՝ երբեք չմոռանալ Նրա օրհնությունները: Այն Աստված, Ով չի կարող ստել, ասում է. «Ես բժշկում եմ քո յուրաքանչյուր, *բոլոր* հիվանդությունները»: Նա չի ասում՝ հիվանդությունների մեծ մասը կամ դրանց 98 տոկոսը: Ո՛չ, Նա բժշկում է մեր հիվանդությունների 100 տոկոսը: Նրա բժշկությունը Հիսուսի փրկարար աշխատանքի մասն է, և այն հավասար է մեղքերի ներմանը: Եսային կանխավ ասաց այն, ինչ Հիսուսը պետք է կրեր մեր հոգևոր և մարմնական ազատության համար.

> Հիրավի՞ Նա մեր *ցավերը* վեր առավ
> Եվ մեր վշտերը բեռնեց Իր վրա,
> Բայց մենք Նրան պատվահարված էինք համարում,
> Աստծուց զարկված և նկուն եղած:
> Բայց Նա մեր մեղքերի համար *վիրավորվեց*
> Եվ մեր անօրենությունների համար *հարվածվեց*,
> Մեր խաղաղության պատիժը Նրա վրա *եղավ*,
> Եվ Նրա վերքերով մենք բժշկվեցինք (Եսայի 53.4,5):

Այս խոսքում *ցավեր* բառը եբրայերենից թարգմանված *խոլի* բառն է: *Սթրոնգի համաբարբառն* այն սահմանում է որպես «հիվանդություն, տրտմություն, տկարություն»: Անվանի աստվածաբան և Աստվածաշնչի մասնագետ Հենրի Թայերն այն սահմանել է որպես «դժվարություն, հիվանդություն, տրտմություն, տկարություն»: Այս տերմինը Հին կտակարանում օգտագործված է քսանչորս անգամ, որից քսաներկուսը հատկապես հիվանդությունների և տկարությունների վերաբերյալ է: Կարծում եմ՝ պարզ է, որ վերը նշված խոսքում *խոլին* հեշտությամբ կարող էր թարգմանվել որպես «տկարություն» կամ «հիվանդություն»:

Աստված երբեք չի փոխում Իր խոստմունքը

«էմփլիֆայդ» Աստվածաշունչը հաստատում է սա. «Հիրավի Նա վերցրեց մեր ցավերը (հիվանդությունները, տկարությունները և նեղությունները)… Եվ այն վերքերով [որ խոցել էին] Նրան՝ մենք բժշկված ենք *և* առողջ ենք» (Եսայի 53.4,5): «Վորլդ Ինգլիշ» Աստվածաշնչում այսպես է գրված. «Նա բարձրացրեց մեր հիվանդությունները… Որովհետև Նրա վերքերով մենք բժշկվել ենք»:

Պատահական չէ, որ և՛ Եսային, և՛ սաղմոսերգուն խոսում են բոլոր մեղքերի ներման և բոլոր հիվանդությունների բժշկության մասին մեկ նախադասության մեջ: Հիսուսը երբեք չասաց. «Դու պետք է դիմանաս այս հիվանդությանը, որովհետև Իմ Հայրը դրանով ինչ-որ բան է սովորեցնում քեզ»: Սակայն ես լսել եմ, որ հավատացյալները և, նույնիսկ, քարոզիչներն այդպես են ասում: Ե՛կ տրամաբանենք. «Ինչո՞ւ Հիսուսը պետք է փոխեր Իր կարծիքը մե՛ր օրերում: Գրված է, որ Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան (տե՛ս Եբր. 13.8): Նա երբեք չի մերժի մեզ այսօր, ինչպես որ երբեք չէր մերժել որևէ մեկին Իր երկրային կյանքի ընթացքում: Ավելին, եթե դու հավատում ես, որ Աստված ինչ-որ բան է սովորեցնում քեզ հիվանդության միջոցով, ապա ինչո՞ւ ես գնում բժշկի և բուժումներ ստանում: Ինչո՞ւ ես պայքարում այն բանի դեմ, ինչ Աստված ցանկանում է սովորեցնել քեզ: Դու տեսնո՞ւմ ես, թե որքան անտրամաբանական կարող է լինել այս մտածելակերպը:

Գործք առաքելոցում նույնպես չկա դեպք, երբ որևէ մարդ հավատացել է Աստծուն բժշկության համար, սակայն մերժվել է: Առաքյալները ոչ մի անգամ չասացին. «Մենք չգիտենք, թե արդյո՞ք Աստված կամենում է բժշկել քեզ, այնպես որ մենք պարզապես պետք է հուսանք, որ դա Նրա կամքն է»: Փոխարենը՝ բժշկությունը մշտապես երաշխավորված է եղել, և չկա որևէ մարդ, ով ցանկացել է բժշկվել և մերժվել է, որովհետև ըստ Եսայի 53-րդ գլխի և Սաղմոս 103-ի՝ բժշկությունը Հիսուսի փրկագնման մասն է այնքանով, որքանով մեղքերի ներումը: Եթե դուք մերժում եք մեկը, ապա պետք է մերժեք նաև մյուսը:

Այսօր ոչինչ չի փոխվել: Ցանկացած տեսակի հիվանդությունները և

մարմնական տկարությունները պատկանում են գողանալու, սպանելու և կործանելու շարքին: Դրանք նեղություններ են, որոնց մենք կարող ենք վստահաբար հակառակվել՝ իմանալով, որ մենք փրկագնված ենք դրանցից Գողգոթայում Հիսուսի կատարած զոհի շնորհիվ: Դրանք հաստատ Աստծո կամքը չեն մեր կյանքի համար: Հիսուսի փրկագնման փաթեթը դեռևս անփոփոխ և անձեռնմխելի է: Ահա թե ինչու է Պողոսը գրում. «Եվ Ինքը՝ խաղաղության Աստվածը, ձեզ սուրբ անի բոլորովին, և ձեր բոլոր հոգին և շունչը և մարմինն անարատ պահի մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալը» (Ա Թեսաղ. 5.23): Նա միացնում է մարմինը մեր շնչի և հոգու հետ: Նա ցույց է տալիս հետևյալը. որքան Աստված կամենում է, որ քո հոգին ու շունչը ապահով վիճակում լինեն, այնքան էլ Նա ցանկանում է, որ քո մարմինը բժշկված լինի և գործի ըստ Իր նախասահմանության:

Միգուցե ինչ-որ մեկն ասի. «Բայց ես գիտեմ մի մարդու, ով հավատում էր, որ Աստված իրեն կբժշկի, բայց նա մահացել է»: Թո՛ւյլ տուր մի բան հարցնել. Աստծո հանդեպ ունեցած մեր հավատքը պետք է հիմնված լինի մարդու կյանքի փորձառությա՞ն, թե՞ Նրա հավիտենական Խոսքի վրա: Դու պետք է հաստատվես այս ճշմարտության մեջ քո մտքում և սրտում: Պողոսը գրում է. «Ի՞նչ կլինի, եթե ոմանք չհավատացին և մնացին առանց հավատքի: Մի՞թե նրանց անհավատությունը և նրանց անհավատարմությունը կզրոյացնի և անարդյունավետ ու դատարկ կդարձնի Աստծո հավատարմությունը և Նրա նվիրվածությունը [Իր Խոսքին]: Ո՛չ մի դեպքում: Թող Աստված ճիշտ լինի» (Հռոմ. 3.3,4, AMP):

Անկեղծ ասած՝ դու չես կարող հաստատ իմանալ, թե ինչպիսի հավատք կար այն մարդու սրտում, ով մահացավ: Միգուցե նա անընդհատ ասում էր, որ հավատում է Աստծո բժշկությանը, բայց դա կարող էր դիմակ լինել, որը թաքցնում է բժշկություն չստանալու վախը: Ճշմարիտ հավատք ունեցողն իր սրտում չի կասկածում Աստծո խոստմունքին: Մարդը կարող է խոսքով ասել մի բան և ընդունել դա մտքով, սակայն սրտում այլ կերպ հավատալ:

Իսկ ինչպե՞ս վերաբերվել այն մարդկանց փորձառությանը, որը հակառակ է Սուրբ գրքի ճշմարտությանը: Օրինակ՝ երբ որևէ ընտանիքի անդամ կամ ընկեր հիվանդության պատճառով վաղ հասակում մահանում է: Ես մի

շատ արդյունավետ մոտեցում եմ մշակել նման դեպքերի համար: Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ մենք ասպարեզ ենք վազում: Վազքի ժամանակ յուրաքանչյուր մասնակից վազում է իր ճանապարհով: Եթե ինչ-որ մեկի փորձառությունը չի համապատասխանում Աստվածաշնչի հիմնարար ճշմարտություններին, ապա թո՛ղ դա նրա ճանապարհին. դա այդ մարդու և Աստծո գործն է, իսկ Աստված ողորմած և արդար Դատավոր է: Դրանից քո հավատքը չի թուլանա: Սակայն, եթե ինչ-որ մեկի վկայությունը համապատասխանում է Աստծո հավիտենական Խոսքին, ապա ընդունի՛ր այն, որպեսզի զորացնես քո ընթացքը:

Դու պետք է սրտանց համաձայնես Աստծո Խոսքի հետ, որպեսզի խոստմունքն իրականանա քո կյանքում: Հենց դա տեղի ունենա, դու անկոտրում կլինես հավատքի մեջ՝ ինչպես Բարտիմեոսը:

Հիսուսը մեծ ամբոխով շրջապատված՝ Իր աշակերտների հետ, դուրս էր գալիս Երիքովից: Ճանապարհի եզրին մի կույր էր նստած՝ Բարտիմեոս անունով: Երբ նա իմացավ, որ Հիսուսն անցնում է այդտեղով, նա աղաղակեց Տիրոջը: Շատերը կշտամբեցին նրան՝ պահանջելով, որ նա չանհանգստացնի Ուսուցչին: Բայց նա սկսեց ավելի բարձր գոչել: Այս մարդու հավատքի հիմքը ոչ թե նրա մտքում էր, այլ սրտում էր: Եթե Բարտիմեոսն ամբողջ սրտով չհավատար, որ Աստված ցանկանում է բժշկել իրեն, նա չէր համառի, հատկապես այն բանից հետո, երբ իր շուրջը գտնվող մարդիկ կշտամբեցին իրեն: Նա կլռեր և կտրվեր սխալ մտքերի. *«Եթե Հիսուսը չի պատրաստվում գալ և բժշկել ինձ, ապա Աստված ցանկանում է, որ ես կույր մնամ»*: Բայց Բարտիմեոսը չխաբվեց այդ ստով. նրա վճռականությունը չմարեց, իսկ ձայնը չլռեց: Տե՛ս, թե ինչ կատարվեց սրանից հետո.

«Եվ Հիսուսը կանգնեց…» (Մարկոս 10.49):

Որքա՜ն զարմանալի է: Հիսուսը գնում էր Երուսաղեմ՝ կատարելու այն առաքելությունը, որի համար երկիր էր եկել: Նա լիովին կենտրոնացած էր Իր առաջադրանքի վրա: Մարդկանց բազմությունը շրջապատել էր Նրան, և, անկասկած, շատերը բժշկության կարիք ունեին, սակայն նրանց կարիքները չդրդեցին Հիսուսին կանգ առնել և ժամանակավորապես հետաձգել Իր առաքելությունը: Բայց այս կույր մարդն աղաղակեց՝

կանչելով Հիսուսին, և ոչ ոք չկարողացավ լռեցնել նրան. ո՛չ մի հակառակություն, ո՛չ մի հորդորանք չկարողացան լռեցնել նրան: Հիսուսը կանգ առավ նրա ձայնի պատճառով, և ոչ թե մյուսների լռության պատճառով: «Հիսուսն ասաց. «Ասե՛ք նրան, թող այստեղ գա»»: Եվ աշակերտները բերեցին այդ կույրին: «Ուրախացի՛ր»,- ասացին նրանք, «Ե՛կ, Նա կանչում է քեզ»» (Մարկ. 10.49, NLT):

Ակնհայտ է, որ Բարտիմեոսին շրջապատող մարդիկ այնքան էլ չէին խրախուսում նրան: Ավելի ճիշտ՝ նրանք հակառակվում էին նրա ցանկությանը: Սակայն դա չէր հուզում նրան: Դա չազդեց Բարտիմեոսի հավատքի վրա. նա դեն նետեց իր մուրացկանի թիկնոցը, արագ ոտքի ելավ և թո՛ւյլ տվեց, որպեսզի աշակերտները տանեին իրեն Հիսուսի մոտ: Տերը հարցրեց. «Ի՞նչ ես ցանկանում, որպեսզի Ես անեմ քեզ համար»: Մի՞թե Նա լուրջ էր ասում դա: Այս ի՞նչ հարց էր տալիս Հիսուսը: Նա հարցնում էր կույր մարդուն, թե ի՞նչ է ցանկանում: Մի՞թե Նա չգիտեր, թե ինչ կարիք ուներ այդ մուրացկանը: Կամ մի՞թե Հիսուսը ծաղրում էր նրան: Իհա՛րկե, ո՛չ: Տերը ցանկանում էր տեսնել Բարտիմեոսի հավատքի վկայությունը:

Եթե Բարտիմեոսն ասեր. «Ես գիտեմ, որ տեսողություն խնդրելը չափազանցություն է իմ կողմից, բայց կարո՞ղ ես բժշկել այն գլխացավը, որ մի քանի օր է՝ տանջում է ինձ», ապա հենց դա էլ կստանար: Մենք գիտենք, որ այդպես էլ լինելու էր, քանի որ, երբ այդ կույր մարդու աչքերը բացվեցին, Հիսուսն ասաց նրան. «Գնա՝ քո հավատքը բժշկեց քեզ »:

Մարկոսը չգրեց ամբոխի միջի մարդկանց մասին, ովքեր բժշկություն չստացան: Նա գրեց այն մարդու մասին, ով բժշկվեց: Թույլ մի՛ տուր, որ ինչ-որ մեկի բժշկություն չստանալու պատմությունը շեղի քեզ հաստատուն հավատքի ճանապարհից: Ուշադի՛ր լսիր ինձ ևս մեկ անգամ. *Մի՛ քննադատիր և մի՛ դատիր այն մարդկանց, ովքեր չեն ստացել Աստծուց, բայց թույլ մի՛ տուր, որպեսզի նրանց պատմությունները թափանցեն քո սիրտը և վերածվեն համոզմունքների:* Պողոսը հայտարարում է. «Բայց ի՞նչ, եթե ոմանք չհավատացին. մի՞թե նրանց անհավատությունն Աստծո հավատքը կխափանի: Քա՛վ լիցի» (Հռոմ. 3.3): Միակ համոզմունքը, որ պետք է թափանցի մեր սիրտը, այն վկայություններն են, որոնք համապատասխանում են Աստծո Խոսքին:

ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք շնորհքը զորություն է տալիս մեզ պակասության և աղքատության վրա իշխելու համար:

Ինչ-ինչ պատճառներով շատերը հավատում են, որ աստվածապաշտությունը բնութագրվում է պակասությամբ: Կան ծայրահեղ դեպքեր, երբ մարդիկ նույնիսկ աղքատության երդում են տալիս, երբ որոշում են կայացնում ծառայել Աստծուն: Այս մտածելակերպը սխալ է: Փիլիպեցիների 4.19-ի, որտեղ Պողոսը հավաստիացնում է իր քրիստոնյա գործընկերներին. «Իմ Աստված առատությամբ բավարարի (լիքը լցնի) ձեր յուրաքանչյուր կարիքը ըստ Իր հարստության, փառքով՝ Քրիստոս Հիսուսում» (AMP):

Եթե դուք կարդաք այս խոսքը համատեքստով, ապա կտեսնեք, որ Պողոսը խոսում է այս հավատացյալների հետ հատկապես փողի մասին: Մեր կարիքները բավարարված *կլինեն* ոչ թե ըստ տնտեսության կամ բորսայի վիճակի, այլ ըստ Աստծո հարստության և փառքի: Սա հրաշալի է, որովհետև Աստված անչափ հարուստ է, իսկ ավելի ստույգ՝ Նա անսահմանափակ պաշարներ ունի: Հիմնված այս խոստմունքի վրա՝ մենք կարող ենք վստահ լինել, որ Աստծո կամքն է, որպեսզի մենք երբեք ոչ մի բանի պակասություն չունենանք: Սաղմոսերգուն գրում է. «Առյուծի կորյունները կերակուր չունեն և սովահար են լինում, բայց նրանք, ովքեր փնտրում են (տեղեկություններ են որոնում և կարիք ունեն) Տիրոջը [իրենց կարիքների համար և Նրա Խոսքի իշխանության հիման վրա], նրանցից ոչ ոք որևէ օգտակար բանի պակասություն չի ունենա» (Սաղմ. 34.10, AMP): Պակասությունն ու աղքատությունը չեն կարող կյանք համարվել իր ամբողջ լիությամբ: Այդ իսկ պատճառով դրանք չեն կարող Աստծո կամքը լինել քո կյանքի համար: Սուրբ գիրքը հռչակում է, որ բարի անունն ավելի լավ է, քան մեծ հարստությունը կամ նույնիսկ Աստծո թանկարժեք օծությունը (տե՛ս Առակ. 22.1, Ժողով. 7.1): Եթե մենք չենք կարողանում վճարել մեր հաշիվները, ապա վատաբանում ենք մեր անունը: Ինչպե՞ս կարող ես պատմել քո բնակարանի տիրոջը Հիսուսի մասին, երբ չես կարողանում ժամանակին վճարել քո վարձը: Ինչո՞ւ

պետք է այդ մարդը լսի քեզ, եթե քո կյանքը վկայում է, որ դու անկարող ես պահել քո խոսքը: Սակայն, եթե քո բնակարանի տերը տեսնի, թե ինչպես է Աստված մատակարարում քեզ, և, ի վերջո, ստիպված լինի հրաժեշտ տալ քեզ, որովհետև Աստծո մատակարարման շնորհիվ դու կարող ես սեփական տուն գնել և այլևս չապրել վարձով, ապա ինչպիսի՞ վկայություն կարող է դա լինել անհավատ մարդու համար: Աստծո Խոսքը հռչակում է. «Դու փոխ կտաս շատ ազգերի, բայց ինքդ պարտք վերցնելու կարիք չես ունենա» (Երկր. Օր. 28.12, MSG): Ինչպիսի՜ վկայություն է պարտքերից ազատ կյանք ունենալը, երբ մենք չունենք ոչ մի ուշացրած վճարում, երբ տալիս ենք Ավետարանի գործի համար և կիսվելով մեր առատությունից՝ «փոխ ենք տալիս ազգերին»:

Մենք տեսնում ենք, որ Աստված չի ցանկանում միայն *հոգալ* մեր կարիքները: Այս խոսքերից երևում է, որ Նա ցանկանում է, որ մենք *բարգավաճենք*: Նա հայտնում է Իր կամքը Հովհաննես առաքյալի աղոթքի միջոցով. «Սիրելի՛ս, աղոթում եմ, որ *ամեն ինչից առավել* բարգավաճես և լավ առողջություն ունենաս, ինչպես քո անձն է բարգավաճում» (Գ Հովհ. 2, KJV):

Դու նկատեցի՞ր, որ ես ընդգծել էի *ամեն ինչից առավել* արտահայտությունը: Ամեն ինչից առավել Աստված ցանկանում է, որպեսզի դու՝ լինելով Նրա զավակը, բարգավաճես և լավ առողջություն ունենաս: Թո՛ւյլ տուր կրկին ասել սա. *ամեն ինչից առավել*: Եթե առաքյալի աղոթքը չլիներ ըստ Աստծո կամքի, այն չէր կարող գրվել Սուրբ գրքում: Աստված երբեք և ոչ մի դեպքում չի չափազանցում: Նա չի կարող անել դա, քանի որ դա սուտ կլիներ, իսկ Աստված չի կարող ստել: Այնպես որ, իմ ընկե՛ր, դու կարող ես կառուցել քո հավատքն այս ճշմարտության վրա. Աստծո կամքը քեզ համար *ամեն ինչից առավել* այն է, որ դու բարգավաճես և լավ առողջություն ունենաս: Որքա՜ն հրաշալի է:

Ի՞նչ է բարգավաճումը: Դա նշանակում է ունենալ ավելին, քան բավական է, ունենալ այնքան, որ կարող ես բավարարել ոչ միայն քո կարիքները, այլ նաև քո շրջապատում ապրող մարդկանց կարիքները: Այլ խոսքերով՝ փողը երբեք չպետք է որոշի, դու կկարողանա՞ս կատարել Աստծո կամքը, թե՞ ոչ: Միգուցե սա՞ է պատճառը, թե ինչու է Աստծո Խոս-

քում գրված. «Միշտ հիշի՛ր, որ Տերն է՝ քո Աստվածն է, որ տալիս է քեզ զորություն հարուստ դառնալու համար, և Նա անում է սա, որպեսզի կատարի այն ուխտը, որ Նա հաստատել է քո նախահայրերի հետ» (Երկր. Օր. 8.18, NLT):

Բազմաթիվ երիտասարդ և ոչ հասուն հավատացյալներ պայքարի մեջ են կյանքի այն հիմնական բնագավառներում, որոնք մենք քիչ առաջ քննարկեցինք: Սակայն, երբ նրանք իսկապես հաստատվում են այն ճշմարտության մեջ, որ Աստված ամոթի, մեղքի զգացումի, դատապարտության, հիվանդության, մարմնական տկարության, պակասության և աղքատության հեղինակը չէ, նրանք ավելի հեշտությամբ են կարողանում զանազանել թշնամու հարձակումները կյանքի այլ բնագավառներում: Այժմ մենք կարող ենք մտնել այն իրական պայքարի մեջ, որը տեղի է ունենում այս կյանքում: Այդ պայքարի նպատակն է ընդլայնել Աստծո արքայությունը:

Հաստա՛տ իմացիր, որ հակառակությունը որևէ կապ չունի Աստծո հետ. դա սատանայի ռազմավարություններից մեկն է, որով ցանկանում է հուսահատեցնել, պարտության մատնել և կուլ տալ քեզ: Մենք պետք է *անկոտրում* կերպով պատերազմենք դրա դեմ, որպեսզի տեսնենք Աստծո կամքի դրսևորումն այս երկրի վրա այնպես, ինչպես Երկնքում:

8

ԶԻՆԻ՛Ր ԻՆՔԴ ՔԵԶ

«Արդ Քրիստոսը, որ մարմնով մեզ համար չարչարվեց, *դուք էլ* նույն մտքով *զինվորվեք*, որ մարմնով *չարչարվողը* մեղքից դադարեց»:

Ա Պետրոս 4.1

Պատկերացրու, որ մի ժողովուրդ ուղարկում է իր բանակը պատերազմի դաշտ՝ առանց փամփուշտների, հրացանների, թնդանոթների, ռումբերի, տանկերի, ինքնաթիռների, նույնիսկ՝ առանց դանակների: Ինչպե՞ս է այդ ազգն իրեն դրսևորելու պատերազմի ժամանակ: Արդյո՞ք նրանց բանակը կհաղթի: Արդյո՞ք նրանք ընդհանրապես կկարողանան կռվել: Արդյո՞ք նրանք ողջ կմնան: Կարծում եմ՝ այդ բանակի մեծ մասը կսպանվի հենց պատերազմի սկզբում, իսկ մյուսներին էլ գերի կվերցնեն:

Ես պարզապես ենթադրում եմ, որովհետև, որքան գիտեմ, նման զավեշտալի բան երբեք տեղի չի ունեցել: Բայց որքան էլ սա ծիծաղելի թվա, այն հավատացյալը, որը «զինված չէ չարչարվելու համար», գտնվում է ճիշտ նույն վիճակում: Ցավոք՝ մեզանից շատերը զինված չեն: Երբ անսպասելի *թլիփսիս (նեղություն)* է գալիս մեր կյանքում, մենք անակնկալի ենք գալիս, ցնցվում ենք, շփոթվում ենք և զարմանում: Արդյունքում մենք ընդամենը հակազդում ենք ստեղծված իրավիճակին՝ դրա վրա ազդելու փոխարեն:

Իր առաջին նամակում Պետրոսը, ոգեշնչվելով Սուրբ Հոգուց, հորդորում է մեզ՝ չարչարվելու համար զինվորվել կամ զինվել այնպես, ինչպես Քրիստոսը: Իսկ ինչպե՞ս Նա չարչարվեց: Արդյո՞ք Նա մեղքի մեջ էր: Ո՛չ, բայց Նա պետք է հակառակվեր դրան: Արդյո՞ք Նրան տանջում էին հիվան-

դությունները և տկարությունները: Ո՛չ, բայց Նա, հավանաբար, պետք է պայքարեր դրանց դեմ: Մի՞թե Նա փող չուներ Իր հաշիվները վճարելու կամ Իր առաքելությունն իրականացնելու համար: Ո՛չ, սակայն Նա պետք է հավատար, որ Աստված կմատակարարի անհրաժեշտ միջոցները: Հիսուսը փորձվեց ամեն ինչում, սակայն Նա ոչ մի անգամ տեղի չտվեց թշնամու գրոհներից ոչ մեկին: Աստծո Խոսքը պատվիրում է մեզ վարվել այնպես, ինչպես Նա վարվեց. այդ իսկ պատճառով մենք չպետք է տեղի տանք սատանայի հնարքներից ոչ մեկին:

Շարունակելով կարդալ Պետրոսի թուղթը՝ մենք կպարզենք, որ այն հատուկ չարչարանքը, որին Հիսուսը համբերում էր, մարդկանց կողմից անարդար վերաբերմունքն էր, հատկապես՝ Իր ժամանակվա կաշառվող քաղաքական և կրոնական առաջնորդների կողմից: Անձամբ ես հավատում եմ, որ սա չարչարանքի բարձրագույն մակարդակն է, որ հավատացյալը կարող է կրել՝ իշխանության դիրքի մեջ մտնելու համար:

Անարդար վերաբերմունքը նաև Պողոս առաքյալի մեծագույն փորձությունն էր: Նրան քարկոծել են, հինգ անգամ ծեծել մտրակներով, երեք անգամ ծեծել փայտերով, նա գրեթե մշտապես վտանգված էր իր հայրենակիցներից, օտարականներից և կեղծ հավատացյալներից: Պողոսի մասին չարախոսում էին, ստում, նրան վիրավորում էին, հայհոյում, նրա հանդեպ կեղծ մեղադրանքներ էին ներկայացնում: Տիմոթեոսի երկրորդ թղթի 3.12-ում նա մեզ զգուշացնում է այդ նույն հալածանքների մասին. «Ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում, հալածանք պիտի կրեն»:

Եթե դու ապրում ես այնպես, ինչպես այս աշխարհը… դու, ըստ էության, ռազմական գերի ես:

Եթե դու ապրում ես այնպես, ինչպես այս աշխարհը, ապա երբեք չես հանդիպի հալածանքի: Դու, ըստ էության, ռազմական գերի ես: Դու հպատակված ես և գտնվում ես թշնամու ռազմական գերիների ճամբարում: Դու այլևս Աստծո արքայության համար արդյունավետ կերպով տարածքներ չես զավթում և անկարող ես փառք բերել Նրան: Ազատության մեջ ապրող զինվորները գտնվում են կրակի տարափի տակ և պայքարում են՝ գրավելով թշնամու տարածքը:

Այս աշխարհի համակարգն ընթանում է Աստծո Հոգուն հակառակ և նույնիսկ թշնամաբար է տրամադրված Աստծո արքայությանը: Այդ իսկ պատճառով, եթե դու ապրում ես Տիրոջ համար, դու փորձություններ, նեղություններ և հալածանք *կկրես*: Սա քրիստոնեական կյանքի բնութագրի մասն է:

Թանկագի՛ն ընկեր, անկախ նրանից՝ քո կյանքում կհայտնվեն նախորդ գլխում թվարկված դժվարությունները, բնության անբարենպաստ պայմանները, թշնամանքները, միևնույն է՝ *Քրիստոսի մեջ դու հանդիպելու ես հակառակությունների*ի: Ուրեմն, ինչպես ասում է Պետրոսը, դու պետք է պատրաստված լինես: Դու պետք է, ինչպես նա է ձևակերպում, «զինես ինքդ քեզ»:

ԶԻՆՎԱ՞Ծ, ԹԵ՞ ԱՆԶԵՆ

Միգուցե մեզ համար օգտակար կլինի տեսնել, թե ինչպես են վարվում զինված և անզեն մարդիկ անսպասելիորեն առաջացած դժվարությունների դեպքում: Յուրաքանչյուր վեցից տասներկու ամիսը մեկ ավիաուղիներում աշխատող յուրաքանչյուր օդաչու ուղարկվում է ընթացիկ վերապատրաստման: Այդ վերապատրաստման ժամանակի մեծ մասը նա անցկացնում է բարձր տեխնոլոգիական սիմուլյատորի մեջ, որը բարդ կոմպյուտերային համակարգ է: Այն կրկնօրինակում է օդաչուի խցիկը ինքնաթիռի առանձին մոդելների կառավարման համակարգով և տեսողական համակարգով, որն իր հերթին կրկնօրինակում է ինքնաթիռի արտաքին միջավայրը: Այդ ամենն ամրացված է շարժական հարթակների վրա, որոնք տեղաշարժվում են՝ ի պատասխան օդաչուի գործողությունների կամ մեքենայի այն գործառույթների, որոնք կապված են արտաքին միջավայրին նմանակելու հետ: Մի խոսքով, ներսից այդ սիմուլյատորը ոչնչով չի տարբերվում իսկական ինքնաթիռից:

Այն հրահանգիչները, որոնք մարզում են օդաչուներին սիմուլյատորով, նրանց համար առաջացնում են ամեն տեսակ անբարենպաստ իրավիճակներ *(թլիփսիս)*, քանի որ սիմուլյատորը կարող է նմանակել թռիչքային պայմանների և տարատեսակ անսարքությունների բոլոր հնարավոր տարբերակներին: Օդաչուները հանդիպում են ուժգին տա-

տանումների, ոչ համընթաց քամու, ծայրաստիճան եղանակային պայմանների, շարժիչի աշխատանքի դադարեցման և էներգիայի խափանման, վայրէջքի մեխանիզմի անսարքության, և սա դեռ ամենի մի փոքր մասն է: Այս պատրաստվածության նպատակն այն է, որպեսզի օդաչուն, մարզման ժամանակ, շարունակաբար և բարեհաջող կերպով հաղթահարի անսպասելի առաջացած դժվարությունները: Այս մարզումների շնորհիվ նա պատրաստ կլինի լուծել նույն ճգնաժամային իրավիճակներն իրական թռիչքի ժամանակ: Շատ ավիավթարներ հաջողվել է կանխել նման ընթացիկ մարզումների շնորհիվ, որոնցում օդաչուները սովորում են բացահայտել արտակարգ իրավիճակները և կանխել դրանց վնասակար հետևանքները:

Ես հիշում եմ մի ավիավթար, որը տեղի էր ունեցել մինչև 2011թ.-ի սեպտեմբերի 11-ի դեպքը: Վթարի էր ենթարկվել փոքր մարդատար ինքնաթիռը, որի մեջ օդաչուների խցիկը դուռ չուներ դեպի ուղևորների սրահը, ինչպես որ այսօր է: Վթարից կարճ ժամանակ անց վերականգնում և լսում են ինքնաթիռի սև արկղում պահպանված տեղեկությունը: Քանի որ օդաչուների խցիկի և ուղևորների սրահի միջև չկար դուռ, փորձագետները կարողացան լսել և՛ օդաչուների, և՛ ուղևորների արձագանքները: Ուղևորները հիստերիկորեն գոչում էին, երբ ինքնաթիռն ընկնում էր: Սակայն օդաչուները հանգիստ էին և վերահսկում էին իրավիճակը: Նրանք հայտնաբերում էին անսարքությունները և կարգավորում դրանք: Օդաչուները չէին առաջնորդվում վախով, այլ՝ գործում էին ըստ այն գիտելիքների, որ ստացել էին սիմուլյատորով մարզվելու ժամանակ: Գլխավոր օդաչուն հրահանգներ էր տալիս, իսկ նրա օգնականը վթարի ամբողջ ընթացքում կատարում էր դրանք: Օդաչուները զինված էին այդ անսպասելի աղետի համար, իսկ ուղևորները՝ ոչ: Ահա թե ինչու նրանց արձագանքները բոլորովին տարբեր էին: Օդաչուները նպատակաուղղված կերպով *ազդում* էին իրավիճակի վրա, իսկ ուղևորներն ընդամենը կարող էին *հակազդել* վախով:

Մեկ անգամ, որպես ուղևոր, ես թռչում էի իմ ծանոթի սեփական ինքնաթիռով: Մենք մոտ 12 000 մետր բարձրության վրա էինք, երբ ինքնաթիռի դռան փականը կոտրվեց: Բարձր ճնշման տակ գտնվող օդը մեծ արագությամբ դուրս եկավ խցիկից: Օդի ձայնն այնքան բարձր էր, որ ասես աէրոդինամիկ խողովակի ձայն լիներ: Ընդամենը վայրկյաններ

անց մեր խցիկն ապահերմետիզացվեց: Ես բոլորովին հանկարծակիի եկա և չգիտեի՝ ինչ անել: Անկեղծ ասած՝ ես ջանում էի հաղթահարել այն ուժգին վախը, որի պատճառով ամբողջ կրծքավանդակս սեղմվել էր: Ես լարված աղոթում էի: Մեր գլխավոր օդաչուն ռազմական նավատորմի նախկին փորձարկու-օդաչու էր, ով տասնյակ հազարավոր ժամերի թռիչքային փորձ ուներ: Նա նույնպես պատրաստված էր տարատեսակ արտակարգ իրավիճակների համար: Այն պահին, երբ փականը կոտրվեց, նա և նրա օգնական օդաչուն անմիջապես գործի անցան: Նրանք հայտնաբերեցին խնդիրը, հագան թթվածին մատակարարող դիմակները և արձակեցին ևս մեկ դիմակ ինձ համար: Առանց թթվածնի նրանք չէին կարողանա ավարտել իրենց աշխատանքի մնացած մասը:

Օդաչուն սկսեց վթարային վայրէջքը՝ շտապ կարգադրություններ անելով իր օգնականին: Ամբողջ այդ ճգնաժամի ընթացքում նա հանդարտ էր և վստահ: Նրա պատրաստվածության շնորհիվ նա հստակորեն գիտեր, թե ինչ էր անհրաժեշտ անել: Ես գիտեի, որ մենք լուրջ խնդրի ենք բախվել, բայց դժվար թե գուշակեիր դա՝ դիտելով, թե ինչպես էր այդ օդաչուն վերահսկում ստեղծված իրավիճակը: Նա ընդհանրապես վախ չուներ: Նրա գործողությունները կանխամտածված, մշակված և արագ էին: Նա կատարելապես վերահսկում էր այդ իրավիճակը: Հինգ րոպե չանցած նա իջեցրեց ինքնաթիռը մոտ 4000 մետր բարձրության վրա. մենք իջնում էինք րոպեում 2000-2500 մետր/արագությամբ: Որպեսզի անց մենք ապահով վայրէջք կատարեցինք: Երբ այդ տագնապալի իրավիճակն ավարտվեց, ինձ համար պարզ դարձավ, որ այդ օդաչուն «զինված» էր, իսկ ես՝ ոչ: Նա գիտեր, թե ինչ էր պետք անել իր պատրաստվածության և փորձառության շնորհիվ, և նա հաղթահարեց այդ լուրջ ճգնաժամը:

Հենց այս մասին է գրված Պետրոսի առաջին թղթի 4.1-ում: Մենք հոգևոր հակամարտության համար պետք է զինված լինենք ճիշտ այնպես, ինչպես այդ ռազմական նավատորմի նախկին փորձարկու-օդաչուն էր զինված անսպասելի իրավիճակում գործելու համար: Ես ցանկանում եմ, որպեսզի *«Անկոտրում հոգի»* գիրքը դառնա քո սիմուլյատորը: Թո՛ւյլ տուր, որպեսզի այս գիրքը սովորեցնի քեզ գործել այն դժվարությունների ժամանակ, որոնց դու անպատճառ կհանդիպես Քրիստոսի մեջ՝ քո կոչումն իրականացնելու և կյանքում իշխելու ճանապարհին:

ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԳԱՆ

Զինված լինելու համար մենք, նախ և առաջ, պետք է իմանանք, որ նեղությունն անխուսափելի է: Հովհաննեսի 16.33-ում Հիսուսն ասում է. «…աշխարհում նեղություն *կունենաք*…»: Ոչ թե «կարող եք ունենալ», այլ՝ *«կունենաք»*: Պողոսը զգուշացնում է. «…շատ *նեղություններով* պետք է *մեզ մտնել* Աստծո արքայությունը» (Գործք 14.21): Նա կրկին գրում է. «Որ չսասանվեք այս նեղություններում, որովհետև դուք ինքներդ գիտեք, որ հենց սրա համար կանգնած (անգլ.՝ որոշված) եք» (Ա Թեսաղ. 3.3): Մենք «կանգնած կամ որոշված ենք նեղության համար», ինչպես այն զիվորը, որը պատերազմի է գնում: Ոչ մի լավ զինվոր պատերազմի չի գնում պարտվելու համար: Լավ զինվորը հաղթանակ է ակնկալում և վճռականորեն պայքարում հաղթանակի համար՝ անցնելով դժվարությունների (չարչարանքի) միջով: Մենք պատերազմի մեջ ենք: Մի՞թե դու կարծում էիր, որ քո կյանքը պետք է ավելի հանգիստ դառնար փրկվելուց հետո:

Ես բարկանում եմ, երբ նորահավատ քրիստոնյաներին սովորեցնում են, որ ապաշխարելով նրանք մտնում են հանդարտ և կատարյալ կյանքի մեջ: Կարծում եմ, որ այն ծառայողներն ու հավատացյալները, ովքեր այս անհեթեթությունը պատմում են նորահավատներին, կա՛մ իրականում փրկված չեն, կա՛մ շահագրգռված են փրկության «գործն ավարտին հասցնելու» համար, փոխարենը որ մտածեն նորածին քրիստոնյաների ապահովության մասին: Հետաքրքիր է՝ այս «ուսուցիչները» երբևէ մտորե՞լ են այն խոսքերի շուրջ, որ Հիսուսն ասաց «Սերմնացանի առակի» մեջ: Նա սովորեցնում է, որ հենց սերմը ցանվում է մարդու սրտի մեջ, «…խոսքի համար նեղություն կամ հալածանք է լինում…» (Մարկ. 4.17): «Նյու լիվինգ» թարգմանությունն այսպես է վերծանում այս խոսքը. «Նրանք խնդիրներ ունեն և հալածվում են, որովհետև հավատացին խոսքին»: Անկեղծ ասած, երբ դու հավատում ես Աստծո Խոսքին, անպայման խնդիրներ, նեղություն և հալածանք կունենաս. կարող ես չկասկածել դրանում:

Եթե դու դեռ նորահավատ ես և չգիտես այս մասին քո անձնական փորձառությունից, ապա թո՛ւյլ տուր լինել առաջինը, ով կասի քեզ դա. դու

կհայտնվես այնպիսի պայքարների մեջ, որ անցյալում երբեք չեն պատահել քեզ: Սակայն բարի լուրն այն է, որ դու կարող ես պարտություն չկրել դրանցից ո՛չ մեկում. ո՛չ մեկում: Դու շատ անգամ ես պարտություն կրել մինչև փրկվելը, բայց հիմա Սուրբ Հոգու միջոցով, Ով բնակվում է քեզանում, և Աստծո անսահման շնորհքով դու իշխանություն և զորություն ունես ցանկացած նեղության վրա, որ հայտնվում է քո ճանապարհին:

ԴՈՒ ՉԵՍ ԲԱԽՎՈՒՄ ՆՈՐ ԲԱՆԻ ՀԵՏ

Երկրորդ ճշմարտությունը, որ մենք պետք է իմանանք «զինված» լինելու համար, այն է, որ այս աշխարհում բառացիորեն նոր բան չկա: Դու երբեք չես հանդիպի այնպիսի դժվարության, որը մինչև այդ ոչ ոք չի վերապրել: Անկասկած՝ Հիսուսը վերապրել է դա, քանի որ Նա փորձվել է ամեն ինչով: Պողոսը գրում է.

> «Ո՛չ մի փորձություն կամ գայթակղություն, որ գալիս է ձեր կյանքում, չի գերազանցում այն բաները, որոնց հետ բախվել են այլ մարդիկ: Դուք միայն պետք է հիշեք՝ Աստված երբեք թույլ չի՛ տա, որ դուք ձախողվեք: Նա երբեք թույլ չի՛ տա ձեզ կրել ավելին, քան դուք կարող եք: Նա միշտ պատրաստ է օգնել ձեզ՝ անցնել դրա միջով» (Ա Կորնթացիների 10.13, MSG):

Ցանկացած դժվարություն, որի հետ դու բախվել ես, արդեն եղել է ինչ-որ մեկի կյանքում, և ինչ-որ մեկն արդեն հաղթել է այն: Այս խոսքը նաև խոստանում է, որ մենք չենք բախվի որևէ դժվարության կամ հալածանքի հետ, որին մենք չենք կարողանա դիմանալ. Աստված դա թույլ չի՛ տա: Դու կարող ես դեն նետել ամեն տեսակի վախ այն մասին, որ երբևէ կարող ես հանդիպել այնպիսի հակառակության կամ դժվարության, որին չես կարողանա դիմանալ կամ հաղթել: Քո երկնային Հայրը թույլ չի՛ տա, որպեսզի նման բան կատարվի քո կյանքում. Նա կարգելի դա:

Ցանկացած դժվարություն, որի հետ դու բախվել ես, արդեն եղել է ինչ-որ մեկի կյանքում և ինչ-որ մեկն արդեն հաղթել է այն:

«Թղդեյս ինգլիշ» թարգմանության մեջ գրված է. «Աստված պահում է

Իր խոստմունքը, և Նա թույլ չի տա, որպեսզի դուք փորձվեք ձեր՝ հաստատ կանգնելու զորությունից ավելի»: Կա մի հրաշալի, հուսադրող ճշմարտություն. *սատանան ազատ մուտք չունի քո կյանքում:* Նրա հարձակումները նախ պետք է ստանան Ամենակարողի թույլտվությունը: Քո երկնային Հայրն այդ փորձությունների հեղինակը կամ սադրիչը չէ, բայց երբեմն Նա թույլ կտա, որպեսզի դրանք տեղի ունենան քո կյանքում, որպեսզի դու կարողանաս պարտության մատնել թշնամուն և փառք բերել Իրեն՝ Երկնքի արքայության համար տարածքներ զավթելով: Եկեղեցու վերապատվելի հայրերից մեկը՝ Տերտուղիանոսը, որն ապրում էր մ.թ. 160-230թթ.-ին, խորը մեկնություն է տալիս այս հարցի շուրջ:

> Թույլտվություն տալով սատանայի ծրագրերի իրագործման համար, Աստված գործեց հետևողականորեն՝ Իր բարությունը հայտնելու նպատակով: Նա երկարաձգեց սատանայի կործանումը այն նույն պատճառով, որով և հետաձգեց մարդու վերականգնումը, քանի որ Նա թույլ տվեց հակամարտություն, որի ընթացքում մարդը կկարողանար ջախջախել իր թշնամուն նույն ազատ կամքով, որով որ տեղի տվեց սատանային: Դա հնարավորություն է տալիս մարդուն արժանավայել կերպով վերականգնել իր փրկությունը հաղթանակի միջոցով: Այսպես սատանան ավելի դառը պատիժ է ստանում՝ հաղթվելով նրա կողմից, ում անցյալում վնաս է հասցրել: Սրանով իսկ հայտնի է դառնում, որ Աստված շատ ավելի բարի է[1]:

Աստված արտոնություն է տալիս մեզ պարտության մատնել թշնամուն և, այսպես ասած, «մաքրել մեր հաշիվները նրա հետ» այն մեղքերի և ձախողումների համար, որոնք եղել են մեր կյանքում մինչև փրկվելը: Ողջ փառքը պատկանում է Աստծուն: Թշնամին այլևս չի կարողանա ծաղրել մարդուն, ով Աստծո ձեռքի գործն է: Սատանան հենց այդպես էր վարվում այն բանից հետո, երբ Ադամը մեղանչեց Եդեմի պարտեզում, սակայն Հիսուսն եկավ և պատժեց նրան իր իսկ դաշտում: Այժմ Աստված արտոնել է մեզ ավարտին հասցնել սատանային պատժելու գործը:

Պողոսը գրում է. «Ես ուրախ եմ, որ չարչարվում եմ ձեզ համար իմ մարմնում, որովհետև ես լրացնում եմ այն, ինչ մնում է Քրիստոսի չարչարանքներից Իր մարմնի՝ եկեղեցու համար» (Կողոս. 1.24, NLT): Եթե այս խոսքերը կարդացվեն առանց հասկանալու, ապա սխալ տպավորություն

1. Դեյվիդ Վ. Բերկոտի խմբագրությամբ, «Վաղ քրիստոնեական հավատալիքների բառարան» (Փիբոդի Մ.Ա. Հենդրիկսոն, 1998):

կստեղծվի, որ Հիսուսի չարչարանքները բավական չեն մեր փրկությունն իրականացնելու համար: Այս պատճառով շատ քրիստոնյաներ խուսափում են այս խոսքից և չեն մտորում դրա շուրջ: (Իրականում դուք կզարմանաք, եթե իմանաք, թե քանի ծառայողներ, ովքեր աստվածաբանական կրթություն են ստացել, նույնիսկ չգիտեն այս խոսքի մասին): Բայց Պողոսը նման բան չի ասում: Փոխարենը՝ նա նկատի ունի, որ մենք արտոնված ենք ավարտելու այն աշխատանքը, որ անհրաժեշտ է Աստծո արքայության սահմանները մինչև երկրի ծայրերն ընդլայնելու համար: Հիսուսն արտոնություն տվեց մեզ ավարտել Իր առաջադրանքը՝ տարածելով այն, ինչ Նա իրականացրել է մինչև երկրի ծայրերը: Թշնամին հակառակվում է կատաղի վրիժառությամբ, ինչի պատճառով հավատացյալները չարչարանք են ունենում, բայց այդ չարչարանքը փառավոր է: Ինչպես Հիսուսն ասաց. «…դժոխքի դռները չեն հաղթի նրան»: Նա խոսում էր Իր եկեղեցու մասին (Մատթ. 16.18): Մենք պատերազմի դաշտում ենք: Մենք քայլում ենք առաջ և տարածքներ ենք զավթում Աստծո շնորհքի զորությամբ, և ողջ դժոխքը չի կարող կանգնեցնել կամ պարտության մատնել մեզ: Աստծո Խոսքը երաշխավորո՛ւմ է սա:

Հիշի՛ր. ցանկացած դժվարություն, որի հետ դու բախվելու ես քո քրիստոնեական կյանքում, արդեն հաղթահարվել է ինչ-որ հավատացյալի կամ անձամբ Հիսուսի կողմից: Պետրոսը խրախուսում է մեզ. «Եղե՛ք ուժեղ ձեր հավատքի մեջ: Հիշե՛ք, որ ձեր քրիստոնյա եղբայրներն ու քույրերն ամբողջ աշխարհով անցնում են նույն տեսակի չարչարանքներով, ինչ դուք» (Ա Պետր. 5.9, NLT): Այն չարչարանքը, որի մասին նա խոսում է, հանդիպելու է մեզ այն ժամանակ, երբ մենք կատարենք Աստծո կամքը մեր կյանքերի համար: Սակայն մենք հաղթողներ կլինենք, եթե հաստատ կանգնենք Նրա շնորհքի զորության մեջ:

ԴՈՒ ԿԱՐՈ՛Ղ ԵՍ ԵՐԲԵՔ ՉՊԱՐՏՎԵԼ

Մենք մոտենում ենք «զինված» լինելու երրորդ կարևոր կետին. իմացի՛ր, որ դու կարո՛ղ ես երբեք պարտություն չունենալ: Հիսուսի խոսքերին հենց այնպես մի՛ նայիր: Վերցրո՛ւ դրանք քո սրտի մեջ և խորապես մտորի՛ր դրանց շուրջ:

> «Լսե՛ք: Ես իշխանություն եմ տվել ձեզ, որպեսզի դուք կարողանաք… հաղթել թշնամու ողջ զորությանը, և ոչինչ չի վնասի ձեզ» (Ղուկաս 10.19, TEV):

Այնքա՞ն բան է ասված այս խոսքով: Նախ՝ փորձիր զգալ այն ավյունը, որով Նա կոչ է անում մեզ *լսել*: Այս բառը շեշտված է: Եթե թարգմանիչները շեշտել են Հիսուսի խոսքը, ապա մենք պետք է շատ ավելի ուշադիր լինենք դրա հանդեպ: Դա նշանակում է, որ այս խոսքը կարևոր տեղեկություն է հաղորդում մեզ:

Դրանից հետո Նա ասում է, որ դու *իշխանություն* ես ստացել. ո՛չ թե իշխանության որոշ մասը կամ, նույնիսկ, մեծ մասը, այլ՝ ամբողջ իշխանությունը թշնամու զորության վրա: Այսինքն՝ իշխանության 100 տոկոսը: Դու ոչ միայն իշխանություն ունես թշնամու զորության 100 տոկոսի վրա, այլ նաև ունես զորություն, որը շատ ավելի մեծ է, քան բոլոր չար ուժերը, որ սատանան կարող է ուղղել քո դեմ: Աստվածաշնչի դասական թարգմանության մեջ գրված է. «Ահա իշխանությունը տվեցի ձեզ… թշնամու *բոլոր զորության վրա*»: Այս խոսքը համապատասխանում է Պողոսի աղոթքի հետ: Նա աղոթում է, որպեսզի մենք իմանաք, թե՝ «…ինչ է Նրա զորության գերազանց մեծությունը մեզանում, որ հավատացինք…», և այդ զորությունը «ամեն իշխանությունից և պետությունից և զորությունից և տերությունից վեր է, և ամեն անունից, որ անվանվում է…» (Եփես. 1.19-21): Մեզ տրվել է ոչ թե զորության մեծությունը, այլ՝ գերազա՛նց մեծությունը: Մենք ունենք իշխանություն և զորություն, որը շատ ավելին է, քան թշնամու ողջ զորությունը, սակայն սա էլ դեռ ամենը չէ: Կա ևս մեկ զարմանալի փաստ մեր օգտին: Գրված է. «Դուք Աստծո՛ւց եք, որդյակնե՛ր, և հաղթեցիք նրանց, [հակաքրիստոսի ոգիներին], որովհետև ավելի մեծ է Նա, որ ձեզանում է, քան թե նա, որ աշխարհի մեջ է» (Ա Հովհ. 4.4): Բոլոր չար ոգիները հակաքրիստոսի ոգիներն են, և բոլոր նեղություններն առաջանում են նրանց պատճառով: Մենք արդեն հաղթել ենք նրանց, որովհետև Նա, Ով պատժեց նրանց, բնակվում է մեզանում և զորացնում է մեզ:

Ղուկաս 10.19-ում Հիսուսը խոստանում է. «…ոչինչ չի վնասի ձեզ» (TEV): Չկա ոչ մի չար ուժ, որ կարող է վնասել քեզ: Դու չես գնում պատերազմի, որտեղ քեզ վիճակված է պարտություն կրել: Եթե դու անկոտ-

րում կերպով պատերազմես այն զենքերով, որ Աստված տվել է քեզ, ապա դու *միշտ* հաղթող կլինես: Նրա Խոսքը երաշխավորում է դա. «Բայց շնորհակալություն Աստծուն, որ *ամեն ժամանակ* մեզ հաղթող է անում Քրիստոսում…» (Բ Կորնթ. 2.14):

Եթե մենք լսենք Աստծուն, ապա Նա հաղթող կանի մեզ յուրաքանչյուր իրավիճակում և պայքարում: Հովհաննեսը հաստատում է Հիսուսի խոստմունքը.

> «Յուրաքանչյուր մարդ, որ ծնված է Աստծուց, հաղթում է այս աշխարհի ճանապարհները: Այն հաղթող ուժը, որ ծնկի է բերում աշխարհը, մեր հավատքն է» (Ա Հովհաննես 5.4, MSG):

Մեր հավատքը հաղթում է ամեն ինչ, որ այս աշխարհը կարող է ուղղել մեր դեմ: Հիշի՛ր՝ սատանան «այս աշխարհի աստվածն է»: Մենք հաղթում ենք այն ամենը, ինչ նա փորձում է ուղղել մեր դեմ, որովհետև Աստված արդեն ճանապարհ է բացել մեր հաղթության համար:

Հովհաննեսն ասում է, որ մեր հավատքն է ծնկի բերում այս աշխարհը: Ինչո՞ւ հավատքը: Պատճառն այն է, որ շնորհքը (զորությունը), որի կարիքը մենք ունենք հաղթելու համար, հասանելի է մեզ միայն հավատքի միջոցով: Մենք արդեն խոսել ենք այն մասին, թե ինչպես Աստծո շնորհքով պետք է իշխենք կյանքում: Սակայն թեև այդ շնորհքը ձրի է մեզ տրվել, մենք չենք կարող ստանալ այն առանց հավատքի, որովհետև հավատքն այն «խողովակաշարն» է, որի միջոցով գալիս է Նրա շնորհքը (զորությունը) յուրաքանչյուր իրավիճակում, որի հետ մենք բախվում ենք և, որը պետք է հաղթենք: Պողոսն ասում է. «Մենք հավատքով ենք մտնում շնորհքի մեջ, որում մենք կանգնած ենք» (Հռոմ. 5.2, NKJV):

Աստծո շնորհքը ձրի է. այն հասանելի է Իր բոլոր զավակների համար, բայց եթե մենք չենք հավատում (չունենք հավատք) «Նրա շնորհքի խոսքին», մենք կապրենք այնպես, ասես ոչ մի շնորհք էլ չունենք: Հիշի՛ր, թե ինչպես էր Պողոսը խոսում այն առաջնորդների հետ, որոնց, իր կարծիքով, այլևս չէր տեսնելու. «Եվ հիմա ձեզ Աստծուն եմ հանձնում, եղբայրնե՛ր, և *Նրա շնորհքի խոսքին*, որ նա կարող է շինել և ամեն սրբվածների հետ ձեզ ժառանգություն տալ» (Գործք 20.32): Նրանք պետք է իշխեին այս կյանքում՝ Աստծո փառքի համար: Դա նրանց ժառանգությունն

էր: Պողոսը ցույց տվեց, որ նրանք կարող էին ստանալ այդ ժառանգությունը միայն Նրա շնորհքի խոսքի միջոցով:

ՇՆՈՐՀՔԸ ԲԱՎԱԿԱՆ Է ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՑՔԱՐՈՒՄ ՀԱՂԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մենք մոտեցանք չորրորդ ճշմարտությանը «զինված» լինելու մասին. Աստծո շնորհքի զորությունն ավելին է, քան բավական, որպեսզի իշխես ցանկացած դժվարության վրա, որի հետ դու կբախվես:

Մենք կարող ենք տեսնել սա Պողոսի անձնական պայքարի մեջ: Այն հայտնությունները, որ նա ուներ, մեծ վնաս էին հասցնում խավարի թագավորությանը: Այդ ճշմարտությունները, որ նա ստացել էր Սուրբ Հոգուց, մեծապես զորացրել էին իր ժամանակաշրջանում, ինչպես նաև հետագա սերունդներում ապրող հավատացյալներին: Պողոսը գրում է.

> «Եվ որ հայտնությունների առավելությամբ չհպարտանամ *(չափից ավելի չբարձրանամ)*, մարմնիս համար խայթ *(փուշ կամ տատասկ)* տրվեց ինձ, սատանայի հրեշտակ, որ ինձ բռունցքով ծեծի, որ չգոռոզանամ *(չափից ավելի չբարձրանամ)*» (Բ Կորնթացիների 12.7, փակագծերի հավելումները՝ NKJV թարգմանությունից):

Այս իրավիճակը, որում հայտնվել էր Պողոսը, ուսմունքային հակասությունների պատճառ է դարձել: Բայց անկեղծ ասած՝ նման բան չպետք է կատարվեր: Ե՛կ պարզեցնենք բոլոր թյուրըմբռնումները:

Նախ՝ ո՞վ տվեց Պողոսին այդ «մարմնի խայթը»: Մենք հաստատ գիտենք, որ դա Աստված չէր, քանի որ գրված է. «Մի՛ խաբվեք, իմ սիրելի՛ եղբայրներ: Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում՝ լույսի Հորից, որի մեջ բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա» (Հակոբ. 1.16,17): Մենք խաբված կլինենք, եթե մտածենք, որ Աստծուց է գալիս չար և ոչ կատարյալ բաները: Ինչ-որ մեկը կարող է հակառակվել սրան՝ ասելով. «Բայց մյուս կողմից՝ դա բարի էր, որովհետև թույլ չտվեց, որպեսզի Պողոսը հպարտանար»: Հակոբոս առաքյալը ցույց է տալիս, թե ինչու է այս կարծիքը սխալ՝ ասելով. «Աստված անթափանցելի է չարի համար, և Նա չարիք չի դնում ոչ մեկի ճանապարհին» (Հակոբ. 1.13, MSG):

Կարդա՛ Հակոբոսի խոսքը. «Աստված… չարիք չի դնում ոչ մեկի ճանապարհին»: Աստված երբեք չէր կարող ուղարկել այդ սատանայի հրեշտակին, որովհետև, եթե Նա Պողոսին փորձեր չարով, ապա կստեր մեզ Հակոբոսի միջոցով: Իսկ Աստված չի կարող ստել: Այնպես որ մենք կարող ենք միանշանակ եզրակացնել, որ այդ «խայթն» Աստծուց չէր:

Երկրորդը՝ ի՞նչ էր այդ խայթը: Որոշ ուսուցիչներ ասում են, որ դա հիվանդություն էր, աչքերի հետ կապված խնդիր կամ մարմնի ինչ-որ տկարություն: Նրանք եզրակացնում են սա նրա հաջորդ խոսքերից.

> «Սրա համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ նրան հեռացնի ինձանից: Եվ Նա ինձ ասաց. «Բավակա՛ն է քեզ Իմ շնորհքը, որովհետև Իմ զորությունը *տկարության* մեջ է կատարվում: Արդ ավելի հոժարությամբ իմ *տկարություններով* կպարծենամ, որ Քրիստոսի զորությունը բնակվի ինձանում»» (Բ Կորնթացիների 12.8,9):

Ես նշել եմ *տկարություն* բառն այս խոսքում: Ե՛կ կենտրոնանանք այս խոսքի վրա: Շփոթված ուսուցիչները ենթադրել են, որ Պողոսի խայթը մարմնական *տկարություն* է՝ հիմնվելով «իմ *տկարություններով* կպարծենամ» արտահայտության վրա: Այն հունարեն բառը, որ թարգմանվել է որպես *տկարություն, «ասթենիա»* բառն է: Այն Նոր կտակարանում օգտագործվում է տասներկու անգամ: Ընդունված է, որ Ավետարաններում այս բառը հիմնականում նշանակում է մարմնական *տկարություն*: Սակայն առաքյալների նամակներում այն հիմնականում օգտագործվում է մարդկային անկարողությունը ցույց տալու համար, այսինքն՝ երբ մենք անզոր ենք լինում կատարել կամ հաղթել որևէ բան մեր սեփական ուժերով: Նման դեպքերում այս բառը չի վերաբերում մարմնական տկարությանը:

Հռոմեացիների 8.26-ում գրված է. «Այսպես էլ Հոգին օգնում է մեր *տկարություններին*, որովհետև, թե ինչ բանի համար պիտի աղոթք անենք՝ ինչպես արժան է, չգիտենք, բայց Ինքը՝ Հոգին, անբարբառ հառաչանքով բարեխոս է լինում»: Հունարեն բառը, որ թարգմանվել է *տկարություն*, նույն *«ասթենիա»* բառն է: Կարծում եմ՝ մենք հաստատ կարող ենք ասել, որ բոլոր քրիստոնյաները չունեն մարմնական տկարություններ (կամ հիվանդություններ): Ուստի ո՞րն է այն տկարությունը, որն ունի յուրաքանչյուր հավատացյալ, երբ խոսքը վերաբերում է բարեխոսական

աղոթքին: Պատասխանը հետևյալն է. կան դեպքեր, երբ մենք չգիտենք, թե ինչպես աղոթենք, քանի որ որպես մարդ՝ մենք սահմանափակ ենք:

Օրինակ՝ իմ մայրն ապրում է Ֆլորիդայում, իսկ ես՝ Կոլորադոյում: Ենթադրենք՝ նա հայտնվել է դժվար իրավիճակի մեջ և աղոթքի կարիք ունի, բայց նա չի կարողանում կապ հաստատել ինձ հետ: Որպես մարդ՝ ես սահմանափակ եմ և չգիտեմ նրա դժվարության մասին: Բայց Սուրբ Հոգին օգնում է այս իրավիճակի (տկարության) մեջ՝ առաջնորդելով ինձ, որպեսզի ես աղոթեմ իմ մոր համար: Այս իրավիճակում նույնպես *«ասթենիա»* բառը որևէ կապ չունի մարմնական տկարության հետ. այս իրավիճակը մարդկային անկարողության հետ է կապված, որը լիովին բնական է:

Հաջորդ օրինակը Եբրայեցիների 4.15-ն է, որտեղ գրված է. «Որովհետև ոչ թե այնպիսի Քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր *տկարություններին* կարեկից լինել, այլ այնպիսին, որ ամեն բանով փորձված, մեր նմանությամբ, բայց՝ առանց մեղքի»: Հունարեն բառը, որ թարգմանված է *տկարություններ*, նույն *«ասթենիան»* է: Այս հունարեն բառը նույնպես մարմնական տկարություն չի նշանակում. այն ցույց է տալիս մեր մարդկային անկարողությունը՝ Աստծո կարողության հետ համեմատ: Հիսուսը հոժարությամբ վերցրեց այդ մարդկային անկարողությունները, որպեսզի կարողանար նույնանալ մեր դժվարությունների հետ և արդյունավետ կերպով օգներ մեզ Իր շնորհքով: «…ամեն բանով փորձված, մեր նմանությամբ, բայց՝ առանց մեղքի» հատվածն ակնհայտ կերպով չի վերաբերում հիվանդություններին, այլ վերաբերում է մարդկային անկարողություններին, որոնք Նա հոժարությամբ կրեց Իր երկրային կյանքի ընթացքում:

Մտաբերելով այս ամենը՝ ե՛կ վերադառնանք Պողոսի արտահայտությանը, որը ես կրկին մեջբերում եմ.

«Սրա համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ նրան հեռացնի ինձանից: Եվ Նա ինձ ասաց. «Բավակա՛ն է քեզ Իմ շնորհքը, որովհետև Իմ զորությունը *տկարության* մեջ է կատարվում»: Արդ ավելի հոժարությամբ իմ *տկարություններով* կպարծենամ, որ Քրիստոսի զորությունը բնակվի ինձանում»» (Բ Կորնթ. 12.8,9):

Ես կրկին նշեցի *տկարություն* բառը, որը հունարեն *«ասթենիան»* է: Պողոսի խոսքերը կարելի է թարգմանել նաև հետևյալ կերպ.

> «Սրա համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ նրան հեռացնի ինձանից: Եվ Նա ինձ ասաց. «Բավակա՛ն է քեզ Իմ շնորհքը, որովհետև Իմ զորությունը *տկարության* մեջ է կատարվում: Արդ ավելի հոժարությամբ իմ *տկարություններով* կպարծենամ, որ Քրիստոսի զորությունը բնակվի ինձանում»» (Բ Կորնթացիների 12.8,9):

Իրականում որոշ թարգմանություններում այս խոսքը թարգմանված է հենց այսպես: Օրինակ՝ «Քանթեմփրըրի ինգլիշ» թարգմանությունը, որտեղ գրված է. ««Իմ բարությունն այն ամենն է, ինչի կարիքը դու ունես: Իմ զորությունն առավել արդյունավետ է, երբ դու *տկար* ես»: Այնպես որ, եթե Քրիստոսը շարունակում է տալ ինձ Իր զորությունը, ես ուրախությամբ կպարծենամ, թե որքան *տկար* եմ ես»:

Մենք խաբում ենք ինքներս մեզ՝ ենթադրելով, որ այս հատվածում Սուրբ Հոգին խոսում է միայն հիվանդությունների մասին: Այդ դեպքում այս խոսքը կգրվեր հետևյալ կերպ. ««Իմ զորությունն առավել արդյունավետ է, երբ դու հիվանդություն ունես մարմնումդ»: Այնպես որ, եթե Քրիստոսը շարունակում է տալ ինձ Իր զորությունը, ես ուրախությամբ կպարծենամ՝ թե որքան հիվանդ եմ ես»: Մի՞թե սա անմտություն չէր լինի: Զարմանալի է, թե որքան անմիտ են այս բացատրությունները, եթե իրականում մտածես դրանց մասին:

Կարդալով այս հատվածն իր համատեքստով՝ մենք կրկին կհամոզվենք, որ Պողոսը չի խոսում մարմնական տկարության մասին: Նա բացատրում է, թե ինչպես է այդ «սատանայի հրեշտակը» հարձակումներ գործում իր վրա.

> «Հինգ անգամ հրեաներն ինձ 39 մտրակ են տվել, երեք անգամ ինձ մտրակել են հռոմեացիները, և մեկ անգամ ես քարկոծվել եմ: Երեք անգամ ենթարկվել եմ նավաբեկության և մեկ անգամ քսանչորս ժամ անցկացրել եմ ջրում: Իմ բազմաթիվ ճանապարհորդությունների ընթացքում ես վտանգի մեջ եմ եղել գողերից, իմ սեփական ժողովրդից և հեթանոսներից: Ես վտանգների եմ հանդիպել քաղաքներում, անապատ վայրերում, բարձր ծովերում նաև կեղծ ընկերների կողմից: Ես ծանր աշխատանք եմ կատարել: Հաճախ անքուն եմ մնացել: Եղել եմ քաղցած և ծարավ: Հաճախ եղել եմ առանց բավարար սննդի, օթևանի կամ հագուստի… Եթե ես պետք է պարծենամ, ապա կպարծենամ այն բաների համար, որոնք ցույց են տալիս, թե *որքան տկար եմ ես*» (Բ Կորնթացիների 11.24-27,30, TEV):

Պողոսը թվարկում է այս դժվարությունները, որոնք սատանայի հրեշտակը մշտապես սարքում էր իր դեմ: Պողոսն անկարող էր կանգնեցնել այդ անսպասելի դժվարություններն իր սեփական կարողությամբ: Այդ իսկ պատճառով նա հայտարարում է. «ես… կպարծենամ այն բաների համար, որոնք ցույց են տալիս, թե *որքան տկար եմ ես*»: Ակնհայտ է, որ տկարությունները կամ «մարմնի խայթը» կապ չունեն թույլ տեսողության, տկարության, հիվանդության կամ այլ տեսակի մարմնական անկարողության հետ:

Ես ցանկանում եմ շարունակել և ցույց տալ, որ Պողոսի «մարմնի խայթը» (կամ, ըստ անգլերեն թարգմանության՝ փուշը կամ տատասկը) ընդհանրապես ոչ մի կապ չունի հիվանդության հետ: «Մարմնի խայթ կամ տատասկ» արտահայտությունը երեք անգամ էլ գրված է Հին կտակարանում: Երեք դեպքում էլ խոսքը քանանացիների մասին է, ովքեր շարունակաբար հարձակումներ էին գործում իսրայելցիների վրա: Աստված ասաց Իր ժողովրդին. «Եթե այն երկրի բնակիչներին ձեր առջևից չքշեք, այն ժամանակ որին որ նրանցից ողջ եք թողել, ձեր աչքերի համար փշեր և *ձեր կողերի համար տատասկներ կլինեն և ձեզ կնեղեն…*» (Թվոց 33.55): Յուրաքանչյուր դեպքում էլ այս փոխաբերությունը վերաբերում է այնպիսի մարդկանց, ովքեր մշտապես հակառակվում էին և թույլ չէին տալիս արդյունավետ կյանքով ապրել: Հին կտակարանում այս արտահայտությունը ոչ մի անգամ չի օգտագործվում հիվանդության կամ տկարության առումով: Լինելով աստվածաբան՝ Պողոսը պետք է որ նույն կերպով օգտագործեր այն, երբ նկարագրում էր, թե ինչպես էին ամենուր հետապնդում իրեն:

ՄԵԾ ՀԻՄՆԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ես հավատում եմ, որ Պողոսը հուսահատվել էր, թե՛ այն պատճառով, որ նրա ծառայությունը պարբերաբար ընդհատվում էր, թե՛ դժվարությունների և հետապնդումների պատճառով, որոնց նա շարունակ բախվում էր: Դրա համար Պողոսը երեք անգամ աղաղակեց Աստծուն, որպեսզի Նա հեռացնի այն սատանայական ոգուն, որը կանգնած էր այդ ամենի ետևում: Ես հավատում եմ, որ սկզբում Աստված չէր պատասխանում

Պողոսին այն պատճառով, որ նրա խնդրանքը սխալ էր. Պողոսը ճիշտ չէր պատկերացնում իրավիճակը: Նրա երրորդ խնդրանքից հետո Տերը լուսավորեց Պողոսին, որ նա տեսնի պատասխանը, որը ողջ այդ ընթացքում նրա հետ էր եղել.

> «Մի՞թե դու դեռ չհասկացար: Ես տվել եմ քեզ Իմ շնորհքը (զորությունը՝ ոչ ըստ մեր արժանիքների) թշնամու բոլոր ուժերի դեմ: Այնպես որ, Իմ շնորհքը (զորությունը) այն ամենն է, ինչ անհրաժեշտ է քեզ, քանի որ այն դրսևորում է իր զորությունը ցանկացած իրավիճակում, որը դու չես կարող հաղթահարել քո մարդկային կարողությամբ: Այլ խոսքերով՝ որքան մեծ լինի հակառակությունը, այնքան ավելի մեծ կլինի քո կյանքում Իմ շնորհքի (զորության) դրսևորումը, եթե դու պարզապես հավատաս (Բ Կորնթացիների 12.9՝ ըստ հեղինակի):

Հենց որ Պողոսը հասկացավ սա, կատարվեց հրաշալի մի բան: Նրա մեջ հիմնավոր փոփոխություն տեղի ունեցավ, այսինքն՝ նրա մտածելակերպը շրջադարձային կերպով փոխվեց: Նա փոխեց իր վերաբերմունքն այն շարունակական հակառակության հանդեպ, որին նա բախվում էր: Նա այլևս չէր խնդրում, որ դա հեռանար իրենից. փոխարենը՝ խանդավառությամբ գրում էր.

> «Այդ պատճառով ես *հավանել եմ* տկարությունները, թշնամանքները, վշտերը, հալածանքները և նեղությունները Քրիստոսի համար, որ, երբ տկարանում եմ, այն ժամանակ ես զորանում եմ» (Բ Կորնթացիների 12.10):

Այժմ նա պարծենում է. «Ես հավանում եմ իմ մարդկային անկարողությունները ցանկացած *թլիփսիսի* (նեղության) դեպքում, որոնց կարող եմ բախվել այս պահից սկսած»:

Բայց մի՞թե նա իսկապես *«հավանում էր»* իր մարդկային անկարողությունները: Ինչպե՞ս դա կարող է լինել: Մեկ այլ թարգմանության մեջ գրված է. «Ինձ համար անչափ հաճելի է և ես հաճույք եմ ստանում….»: Մեկ ուրիշ թարգմանության մեջ նույնպես գրված է. «Ես հաճույք եմ ստանում…»: Մի՞թե Պողոսը խելքը թռցրել էր: Թե՞ պարզապես չափազանցում էր կամ ստում: Ո՛չ: Ցանկացած մարդ, ով գրել է Աստվածաշնչի գրքերը Սուրբ Հոգու ոգեշնչման ներքո, չի կարող նման բան անել, քանի որ անհնար է, որ Աստված ստի: Այնպես որ ինչպե՞ս կարելի է «հավանել» կամ «հաճույք ստանալ» դժվարություններից, հայհոյանքներից,

հետապնդումներից և այլ տեսակ նեղություններից: Պատասխանը պարզ է.

> Որքան մեծ է հակառակությունը, այնքան մեծ զորություն է անհրաժեշտ
> այն հաղթահարելու համար,
> իսկ մեծ զորությամբ տարած հաղթանակն ավելի փառավոր է:

Շատ քրիստոնյաներ իրենց դժբախտ են զգում՝ մեծ դժվարությունների բախվելու պատճառով: Նրանք անում են ամեն ինչ, որպեսզի չբախվեն թշնամու հետ դժվարին իրավիճակներում: Նրանք գերադասում են ապրել հեշտ, հարմարավետ կյանքով, որտեղ չկան հակամարտություններ: Այն ճշմարտությունը, որ հայտնաբերեց Պողոսը, խորապես արմատացած չէ նրանց սրտում: Նրանք պարզապես չեն գիտակցում, որ այդ հակառակությունն ընդամենը հնարավորություն է, որպեսզի իրենց մեջ դրսևորվի շնորհքի (զորության) ավելի մեծ չափ, և որպեսզի իրենք Հիսուս Քրիստոսով բարձրանան հասունության հաջորդ մակարդակը: Պողոսն էլ դժվարությունների հանդեպ այդպիսի վերաբերմունք ուներ, մինչև որ Աստված ցույց տվեց նրա սխալը, բայց ընդամենը Աստծուց ստացած մեկ խոսքը լիովին վերափոխեց նրա մտածելակերպը: Նա Կորնթացիների երկրորդ թուղթը գրել էր մոտավորապես մ.թ. 56թ.-ին: Մի քանի տարի անց նա գրեց Հռոմեացիների թուղթը: Ուշադրությունդարձրու, թե այս թղթում որքան է փոխվել նրա վերաբերմունքը *թլիփսիի (նեղության)* նկատմամբ.

> «Ո՞վ կարող է բաժանել մեզ Քրիստոսի սիրուց: Արդյոք չարչարա՞նքը, դժբախտությո՞ւնը կամ փորձա՞նքը: Թե՞ որևէ աղետ կամ տառապանք: Թե՞ հալածանք կամ սով կամ զրկանք, վտա՞նգ թե՞ սուր… Սակայն այս ամեն բաների մեջ մենք ավելին ենք, քան հաղթողներ և գերազանց հաղթանակ ենք տանում Նրա միջոցով, Ով սիրեց մեզ» (Հռոմեացիների 8.35,37, AMP):

Պահի՛ր այս խոսքերը քո սրտում, հատկապես սա. «Սակայն այս ամեն բաների մեջ մենք ավելին ենք, քան հաղթողներ և գերազանց հաղթանակ ենք տանում Նրա միջոցով»: Մինչև այդ մեծ հիմնավոր փոփոխությունը՝ Պողոսը խնդրում էր Աստծուն, որպեսզի Նա ազատեր իրեն բոլոր դժվարություններից: Սակայն դրանից հետո նրա միտքը որոշակիորեն փոխվեց. *Աստծո շնորհքն ավելին է, քան բավական ոչ միայն*

դժվարություններին դիմանալու, այլ նաև դրանցում գերազանց հաղթանակ տանելու համար: Պողոսի դիրքորոշումն այժմ հետևյալն է. «Ես չեմ վախենում հանկարծակի դժվարություններից: Թո՛ղ հակառակությունները գան, որպեսզի ես Քրիստոսի համար կարողանամ ավելի մեծ հաղթանակ տանել»: Պողոսը «զինված էր չարչարվելու համար»: Նա զինված էր, որպեսզի պայքարեր մինչև հաղթանակելը և դուրս գար պայքարից ավելի լավ և զորավոր վիճակում, քան մինչև այդ էր:

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՏԱՐԿԻՐ ՈՐՊԵՍ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվ վերջապես՝ մենք «զինված» ենք, երբ հաստատակամ ենք և մեր սրտում ու մտքում դժվարությունների հանդեպ լավատեսորեն ենք տրամադրված: Մենք «զինված» ենք, երբ լավատես ենք պայքարի սկզբում, ընթացքում և պայքարից հետո: Մենք կարող ենք դրական վերաբերմունք ունենալ, որովհետև այլևս չենք դիտարկում փորձությունները որպես խոչընդոտներ: Մենք դիտարկում ենք դրանք որպես հնարավորություններ:

Հակոբոս առաքյալը գրում է. «Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, երբ որևէ փորձանք է պատահում ձեզ, թող այն հնարավորություն դառնա» (Հակոբ. 1.2, NLT): Մենք գիտենք, որ Քրիստոսն արդեն հաղթել է պատերազմը, և Երկնքից մենք ունենք ողջ իշխանությունն ու զորությունը: Եթե մենք չզիջենք և անկոտրում կերպով կանգնենք ու պայքարենք, ապա միշտ հաղթող կլինենք: Սա է Աստծո կամքը և կոչումը մեր կյանքերի համար:

Ինչպես որ Պողոսը համարձակ պնդում է Հռոմեացիների 8.31-ում. «…եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ»:

9

ՔՈՐԱՎՈՐ ՇՆՈՐՀՔԻ ՄԵՋ

«Մենք չենք պայքարում մարդկանց դեմ, այլ՝ չար հոգևոր ուժերի դեմ երկնավոր աշխարհում՝ իշխանությունների, տերությունների և այս խավար աշխարհի տիեզերական զորությունների դեմ»:

Եփեսացիների 6.12 (TEV)

Յուրաքանչյուր Աստծո զավակ պատերազմի մեջ է: Եթե պատերազմի մեջ չենք, ապա մենք այս աշխարհից ենք և խաբված ենք՝ մտածելով, որ պատկանում ենք Աստծուն:

Ես հասկանում եմ, որ այս արտահայտությունը խիստ է հնչում, բայց թո՛ւյլ տուր ցույց տալ, թե որքան իրական է այն: Պատկերացրո՛ւ, որ ապրում ես Գերմանիայում, Ադոլֆ Հիտլերի ժամանակաշրջանում: Այս բռնակալը ցանկանում էր իշխանություն հաստատել Նացիստական Գերմանիայի ամբողջ եվրոպական մայրցամաքում: Նա նախապաշարմունք ուներ այդ բառի իրական իմաստով, և նրա համար ամենաատելի ժողովուրդը հրեաներն էին: Եթե դու խելացի ու առողջ գերմանացի էիր, և քո համոզմունքները չէին հակասում Հիտլերի նպատակին, ապա դու կարող էիր ապրել հանգիստ կյանքով՝ առանց վախենալու, որ ինչ-որ մեկը վնաս կպատճառի քեզ:

Սակայն, եթե դու հրեա էիր, ապա քո կյանքը կդասավորվեր լիովին այլ կերպ: Դու կապրեիր մշտական սպառնալիքի ներքո: Ցանկացած պահին քեզ կարող էին չարախոսել, կարող էին թքել քեզ վրա, վնասել, թալանել, խոշտանգել և սպանել: Դու կլինեիր պատերազմական վիճակում՝ անկախ այն բանից՝ ցանկանո՞ւմ էիր դա, թե՞ ոչ: Իմաստուն և ավելի շրջահայաց հրեաները զինվում էին և անում անհրաժեշտ ամեն ինչ՝ Հիտլերի իշխանությունից փախչելու համար: Մյուսներն, ովքեր

այդպես չէին վարվում, ի վերջո հայտնվում էին համակենտրոնացման ճամբարներում:

Սատանան և նրա դևերը շատ ավելի վատն են, քան Հիտլերը և նրա նացիստական վարչակարգը: Եթե դու սատանայի համախոհն ես, ապա չես դառնա նրա թիրախը: Կարիք չկա պատերազմական դիրք գրավել: Հիսուսն ասաց Իր ժամանակվա կեղծավոր հոգևոր առաջնորդներին. «Դուք այս աշխարհից եք» (Հովհ. 8.23): Հետո շարունակեց. «Դուք ձեր սատանա հորից եք» (Հովհ. 8.44): Թեև այդ առաջնորդները հավատում էին, որ ծառայում են Ամենակարող Աստծուն, սակայն, իրականում նրանք ծառայում էին այս աշխարհի տիրոջը, ով բռնակալ է:

Եթե դու իսկապես Աստծունն ես, ապա դու պետք է աչալուրջ լինես, որովհետև այն աշխարհը, որտեղ դու ապրում ես, թշնամաբար է վերաբերվում այն ամենին, ինչը կապված է Աստծո արքայության հետ: Հիսուսը ցույց տվեց սա՝ ասելով.

> «Եթե դուք այս աշխարհինը լինեիք, ապա աշխարհը կսիրեր իրենը: Բայց ես ընտրեցի ձեզ այս աշխարհից, և դուք աշխարհինը չեք, ահա թե ինչու է *այս աշխարհն ատում ձեզ*» (Հովհաննես 15.29, TEV):

Ուշադրությո՛ւն դարձրու Նրա խոսքերին. *այս աշխարհն ատում է ձեզ*: Այս արտահայտության իմաստն անկարելի է մեղմացնել: Եթե դու այս աշխարհից ես, ապա աշխարհը կընդունի քեզ: Եթե դու Աստծուց ես, ապա այս աշխարհի համակարգը կընդդիմանա և կատի քեզ:

ՇՆՈՐՀՔԻ ԶԵՆՔԵՐԸ

Այնպես որ, մենք խոսելու ենք լավ զինված լինելու և մեկ կողմի մասին. մենք պետք է իմանանք, թե ինչպես օգտագործել այն զենքերը, որ ունենք Քրիստոս Հիսուսում: Այդ զենքերը և՛ զորավոր են, և՛ հոգևոր, որովհետև Պողոսն ասում է մեզ. «Այն զենքերը, որոնցով մենք պատերազմում ենք, այս աշխարհի զենքերը չեն: Ընդհակառակը՝ դրանք աստվածային զորություն ունեն *բերդեր քանդելու* համար» (Բ Կորնթ. 10.4, NIV):

Ո՞րն է այն «աստվածային զորությունը», որ բերդեր է քանդում: Դա

Աստծո զարմանալի շնորհքն է, որը Նրա պարգևն է բոլոր հավատացյալներին և որին մենք արժանի չէինք: Իմանալով սա՝ մենք Պետրոսի առաջին թղթից կկարդանք մի հատված, որն ընդգծում և ավելի մանրամասն է բացատրում այս մեծ ճշմարտությունը: Կարդալով այս հատվածը՝ մտապահե՛ք, որ մենք կարող ենք փոխարինել *շնորհք* բառը *զորություն* և *զորացում* բառերով: Դրանք լիովին փոխարինելի են:

> «…ամենդ իրար հնազանդվելով խոնարհությունը հագեք, որ Աստված ամբարտավաններին հակառակ է կանգնում, բայց խոնարհներին *շնորհք* [զորություն] է տալիս: Խոնարհվե՛ք Աստծո հզոր ձեռքի տակ, որ ձեզ բարձրացնի ժամանակով: Ձեր բոլոր հոգսը Նրա վրա գցեք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար: Արթո՛ւն եղեք, հսկո՛ւմ արեք, որովհետև ձեր ոսոխ թշնամին՝ սատանան, գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կուլ տա: Որին հակառա՛կ կանգնեք՝ հավատքով հաստատված, գիտենալով, որ ձեր եղբայրներն էլ, որ աշխարհի մեջ են, նույն չարչարանքներն են քաշում: Եվ ամեն շնորհքի [զորացման] Աստվածը, որ մեզ կանչեց Իր հավիտենական փառքի մեջ Քրիստոս Հիսուսով, ձեզ, որ մի քիչ չարչարվում եք, կատարյա՛լ անի, հաստատի՛, զորացնի՛, հիմնի՛… կարճառոտ գրեցի, որ հորդորեմ և այս բանի համար վկայեմ, թե *սա՛ է Աստծո ճշմարիտ շնորհքը* [զորությունը], որի մեջ դուք կանգնած եք» (Ա Պետրոս 5.5-12):

Թո՛ւյլ տուր սեղմ կերպով ամփոփել այս անչափ հագեցած հատվածը, իսկ հետո մենք մաս առ մաս կվերլուծենք այն: Այս հատվածի գլխավոր թեման *Աստծո շնորհքն է*: Պետրոսը սկսում է հորդորել մեզ, որ հնազանդ լինենք իրար: Սա կարելի է ասել հետևյալ կերպ. «միաբանվե՛ք մեկ առաքելության շուրջ»: Հետո նա հավաստիացնում է, որ Աստված Իր շնորհքը տալիս է խոնարհներին, և որ մենք խոնարհ ենք համարվում այն դեպքում, երբ ակնկալում ենք, որ մեր կարիքները կբավարարվեն ոչ թե մեր ուժերով, այլ՝ Աստծո շնորհքով (զորությամբ):

Իսկ ինչպիսի՞ հոգսերի մասին է խոսում Պետրոսը. նա խոսում է մեր մտահոգությունների, կարիքների, տարբեր ցանկությունների կամ պատասխանատվության մասին: Մենք կարող ենք ունենալ և՛ ժամանակավոր, և՛, որ ամենակարևորն է՝ հավիտենական մտահոգություններ. մենք պետք է վերապրենք արքայության առատ կյանքը և այդ կյանքով լցված՝ հոգանք մեր շրջապատում գտնվող մարդկանց կարիքները: Չգտելով իրականացնել Աստծո շնորհքի առաքելությունը՝ մենք կբախվենք մեր

գլխավոր թշնամու՝ սատանայի և նրա դևերի հակառակությանը: Նա կարող է կուլ տալ մեզ, բայց դա չէ Աստծո ծրագիրը: Այդ իսկ պատճառով մենք պետք է սթափ միտք ունենանք, շատ լավ իմանանք Աստծո խոստմունքը և արթուն լինենք աղոթքի մեջ: Այս դեպքում մենք մշտապես սպառազինված կլինենք Աստծո շնորհքով, որպեսզի իրականացնենք Նրա արքայության նպատակները և հաջողությամբ հակառակվենք մեր գլխավոր թշնամուն:

Մենք միայնակ չենք այս առաքելության մեջ. մեր հոգևոր եղբայրներն ու քույրերը կատարում են նույն գործն ամբողջ աշխարհով և մասնակցում նույն պայքարին՝ մեր համընդհանուր նպատակն իրականացնելու համար: Այս պայքարների դրական կողմն այն է, որ մենք ձեռք ենք բերում ավելի շատ հասունություն և զորություն: Յուրաքանչյուր հաղթանակի հետ մենք ավելի բարձր իշխանական դիրք ենք գրավում Քրիստոսի մեջ:

Պետրոսը եզրափակում է այս հատվածը ոգեշնչող մտքով. *«Սա է Աստծո ճշմարիտ շնորհքը* (դրա նպատակը)»: Մի՞թե հետաքրքիր չէ, որ մոտավորապես երկու հազար տարի առաջ Սուրբ Հոգին դրդեց Պետրոսին գրել *«սա է Աստծո ճշմարիտ շնորհքը»* բառերը: Սա պատահականություն չէ. Սուրբ Հոգին կանխատեսեց, որ վերջին օրերում «Աստծո շնորհք» հասկացողությունը կկրճատվի՝ վերածվելով (առնվազն Արևմուտքի քրիստոնեական մտածելակերպով) ընդամենը մեղքի ծածկոցի և Երկնքի տոմսի: Անկասկած՝ Աստծո ճշմարիտ շնորհքն ընդգրկում է այս երկուսը, բայց այն շատ ավելին է. շնորհքը նաև զորացնում է մեզ, որպեսզի մենք գերազանցենք մեր բնական կարողությունները և կարողանանք կատարել այն առաքելությունը, որ հանձնարարվել է մեզ: Այս առաքելության գլխավոր մասը հետևյալն է՝ ակնառու դառնալ Աստծուն փառավորելու և Նրա արքայությունը տարածելու համար:

Իմանալով այս ամենը՝ մենք հեշտորեն կարող ենք եզրակացնել, թե ինչու ավելի շատ հավատացյալներ չեն շողում վառ լույսերի պես: Ակնառու դառնալը կամ նախապատվություն ստանալը դժվարին պայքարների հետևանք է, իսկ մեզանից շատերը խուսափում են ցանկացած տեսակի պայքարներից: Թշնամին պարզապես մեզ թույլ չի՛ տա ազդեցություն թողնել այս աշխարհի վրա՝ փառավորելով Հիսուս Քրիստոսի անու-

նը: Նա կտրականապես հակառակ է մեր առաքելությանը: Մենք պետք է ոտքի ելնենք և ինքներս հակառակվենք նրան, որպեսզի իրականացնենք այն նպատակները, որոնք Աստված տվել է մեզ: «Նյու ինտերնեյշնլ» թարգմանության մեջ գրված է. «Սա է Աստծո ճշմարիտ շնորհքը: *Հաստա՛տ կանգնեք* դրանում»: Այս խոսքերը կարդալուց հետո Պողոսի հորդորը Տիմոթեոսին ավելի համոզիչ է դառնում.

> «Արդ դու, իմ զավա՛կ, *զորացի՛ր այն շնորհքով,* որ Քրիստոս Հիսուսում է… Իսկ դու նեղությունները կրի՛ր ինչպես Քրիստոս Հիսուսի բարի զինվոր» (Բ Տիմոթեոսի 2.1,3):

Տիմոթեոսը զորանալու պատվեր է ստանում ոչ թե ֆիզիկապես, սոցիալապես, զգացմունքային կամ մտավոր առումով, այլ՝ նա *շնորհքով* զորանալու պատվեր է ստանում: Սա այս զենքն է, որն անհրաժեշտ է մեզ՝ մեր ընթացքը բարեհաջող ավարտելու համար: Լինելով ծառայության մեջ ավելի քան քսանհինգ տարի՝ ես նկատել եմ, որ մեզանից շատերը չեն օգտագործում շնորհքի զենքերը: Ի վերջո՝ Միացյալ Նահանգների քրիստոնյաների միայն 98 տոկոսն է մասամբ տեղյակ այս ձրի և զորավոր պարգևի մասին: Մենք պարզապես չգիտենք, թե ինչ ունենք:

> Մեզանից շատերը չեն օգտագործում շնորհքի զենքերը:

Տիմոթեոսի երկրորդ թղթի 2-րդ գլխից առաջ Պողոսը հանդիմանում է Տիմոթեոսին, քանի որ նա տեղի էր տվել այն հակառակությանը և հալածանքին, որի հետ բախվել էր: Ակնհայտ է, որ երիտասարդ Տիմոթեոսի թշնամիները վախեցրել էին նրան, իսկ նա՝ թեև կարող էր, բայց չէր հակառակվել և աննկուն կերպով չէր պայքարել, ինչպես Պողոսը: Պողոսը հիշեցնում է Տիմոթեոսին, որ Աստված նրան չի տվել երկչոտության հոգի, այլ տվել է զորության, սիրո և զգաստության Հոգի: Ինչպես և բոլոր հավատացյալները՝ Տիմոթեոսը նույնպես ուներ այն, ինչ անհրաժեշտ էր ցանկացած հակառակություն հաղթահարելու համար, այնպես որ Պողոսը կոչ է անում նրան ոտքի ելնել և զորավոր լինել այն շնորհքի մեջ, որ Քրիստոսում է (տե՛ս Բ Տիմոթ. 1.6,7, 2.1):

Մեր բարձրագույն կոչման մեջ մտնելը նման չէ այգում զբոսնելուն: Մենք կոչման մեջ չենք մտնում թռչկոտելով, և ոչ էլ միացնում ավտո-

մատ արագացման համակարգը՝ ակնառու կյանքին հասնելու համար: Պողոսն ազդեցիկ կերպով հայտարարում է. *«Հետևում* եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչման մրցանակին՝ Քրիստոս Հիսուսում» (Փիլիպ. 3.14): Եթե Պողոսը «հետևում» կամ «ջանում» է, ուրեմն կա ընդդիմություն և հակառակություն:

Հիշի՛ր այն տեսիլքը, որի մասին գրված էր առաջին գլխում: Մեր հերոսը, ով թիավարում էր նավի մեջ, պետք է իսկապես ջանք գործադրեր, որպեսզի ընթանար գետի ուժգին հոսանքին հակառակ: Նրա ուժերը նվազում էին. ինչո՞ւ: Ես կարող եմ միայն պատկերացնել, թե ինչպես էր նա նայում այն մարդաշատ զբոսանավերին, որոնք հանդարտ ընթանում էին հոսանքի ուղղությամբ: Նրանք անկաշկանդ ծիծաղում էին, ապրում թվացյալ հաջողակ կյանքով և գրեթե չէին հանդիպում հակառակությունների: Դա անընդհատ ազդում էր նրա վրա: Ի վերջո նա մի հայտնագործություն արեց, որը թեև պատրանք էր, բայց այնքան իրական էր թվում: Նա կարող էր ապրել անհոգ կյանքով՝ որպես «քրիստոնյա», և որ զարմանալի է, ունենալ ավելի քիչ հակառակություն: Ինչպիսի՜ խաբեություն:

Ահա մեկ այլ օրինակ: Զինվորը կարող է դասալիք դառնալ և ապրել ավելի խաղաղ կյանքով, քան իր ընկերները, ովքեր ռազմաճակատում են: Պատերազմը դեռևս չի ավարտվել: Այդ զինվորը պարզապես նահանջելու պատճառով այլևս պատերազմի դաշտում չէ: Ինչպես այն մարդը, որը նավակի մեջ էր, հոսանքին հակառակ գնացողի տեսք ուներ, այնպես էլ մեր զինվորը, դեռևս մարտի դաշտում կռվողի տեսք ուներ. նա համազգեստով էր, ուներ բոլոր անհրաժեշտ պարագաները և ինքնաձիգ էր կրում. բայց նա ոչ մի հակառակություն չէր զգում:

Մեր նպատակը Քրիստոսին ձևականորեն նմանակելը չէ: Մեր նպատակն է իսկապես լինել Քրիստոսի նման, մեծացնել Նրա արքայության սահմանները և քանդել սատանայի գործերը (տե՛ս Ա Հովհ. 3.8): Եթե մենք անենք սա, ապա կհանդիպենք ընդդիմության և հակառակության:

Մենք պետք է հիշենք, որ Աստծո շնորհքը (զորությունը) այն ամենն է, ինչ մեզ անհրաժեշտ է ցանկացած դժվարություն հաղթելու համար: Սակայն մենք հաստատուն հավատքով պետք է համագործակցենք շնորհքի հետ, իսկ մեր հավատքի վկայությունը պետք է լինի մեր համապա-

տասխան վարքը և գործողությունները: Երբ Պետրոսը քայլեց ջրի վրայով, նա անհնարին և արտասովոր սխրանք գործեց: Հիսուսն ասաց. «Ե՛կ», և այդ մեկ բառի մեջ կար այն ողջ շնորհքը, որն անհրաժեշտ էր Պետրոսին՝ ջրի վրայով քայլելու համար: Բայց երբ նա դադարեց հավատալ, շնորհքը (զորությունը) մարեց, և նա սկսեց խորտակվել: Հիսուսի *«Ե՛կ»* բառի մեջ կար բավարար զորություն, որպեսզի Պետրոսը քայլելով հասներ Հիսուսին և նույնիսկ գնար մինչև Գալիլեայի ծովի մյուս ափը, եթե իհարկե ցանկանար: Բայց շնորհքը մարեց, որովհետև հավատքը մարեց: Մենք անսահման շնորհք ունենք Քրիստոսի մեջ, բայց այդ շնորհքի մեջ կարող ենք մտնել միայն հավատքով: «Մենք հավատքով մուտք ունենք դեպի այն շնորհքը, որում մենք կանգնած ենք» (Հռոմ. 5.2, NKJV):

Խնդիրն այն չէ, որ շնորհքը չի գործում: Խնդիրն այն է, որ հավատքը մարում է: Հետևաբար՝ շնորհքի (զորության) հոսքը դադարում է, և մենք արդեն հարկադրված պայքարում ենք մեր սեփական ուժերով: Հիշի՛ր խողովակաշարի օրինակը: Խողովակաշարն ապահովում է քո տան ջրամատակարարումը: Եթե խողովակներից մեկը ծակվի, ապա ջրի հոսքը կդադարի: Թեև տունը մատակարարվում էր ջրի անսպառ աղբյուրից, բայց այն այլևս չի կարող գալ քո տուն, որովհետև խողովակն այլևս իր ֆունկցիան չի կատարում. այդ խողովակը հավատքն է, իսկ ջուրը՝ շնորհքը:

Ձախողումներից խուսափելու համար մենք պետք է կառուցենք մեր հավատքը: Ինչպե՞ս: Ուսումնասիրելով Աստծո Խոսքը, Հոգով աղոթք անելով, Աստծուն փառաբանելով ու երկրպագելով, Նրանից գոհանալով այն բանի համար, որ Նա կա մեր կյանքում և նույնպես՝ Իր տված շնորհքի համար: Եթե մենք չենք անում այս բաները մեր հավատքը կառուցելու համար, ապա մենք, ի վերջո, կդադարենք հավատալ և Աստծո զորությամբ ապրելու փոխարեն կապրենք մեր սեփական ուժերով: Եվ եթե մենք սկսենք ապրել սեփական ուժերով, ապա ընդամենը ժամանակի հարց է, թե երբ մենք կդադարենք իշխել այս աշխարհում, և թույլ կտանք, որ աշխարհն իշխի մեր կյանքում:

Ահա թե ինչու է Պետրոսը խրախուսում մեզ. «Շարունակե՛ք աճել մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի… շնորհքով» (Բ Պետր. 3.18, TEV): Մենք

պատասխանատու ենք Աստծո զորության մեջ աճելու համար: Մենք անում ենք դա՝ պարզապես կառուցելով մեր հավատքը, ինչը լիովին մեր ուժերի սահմաններում է: Պողոսն ասում է. «Որովհետև Աստծո արդարությունը նրանով հայտնվում է հավատքից հավատքի մեջ, ինչպես գրված է, թե Արդարը հավատքից կապրի» (Հռոմ. 1.17): Մտածի՛ր այսպես. որքան ավելանում է քո հավատքը, այնքան ավելի է մեծանում քո «խողովակը», և հետևաբար՝ այնքան ավելի շատ «ջուր» (շնորհք) հասանելի կլինի քեզ համար: Այդ իսկ պատճառով Աստված կարող է քեզ ավելի մեծ պատասխանատվություն ընձեռել և ուղարկել այնպիսի վայրեր, որտեղ ավելի լուրջ կարիքներ կան, որ պետք է պայքարես և լցնես կյանքով:

Ինչպես Եբրայեցիների թղթի հեղինակը, ես նույնպես սրտանց խրախուսում եմ քեզ.

> «Բարձրացրե՛ք ձեր հոգնած ձեռքերը, և զորացրե՛ք ձեր դողացող ծնկները: Շարունակե՛ք քայլել ուղիղ ճանապարհներով... Զգո՛ւյշ եղեք, որ ետ չդառնաք Աստծո շնորհքից» (Եբրայեցիների 12.12,13,15, TEV):

Ետ դառնալ Աստծո շնորհքից նշանակում է նահանջել թշնամու հակառակությունից, անցնել չեզոք գոտի, դառնալ ինքնաբավ: Արժե՞ արդյոք ետ դառնալ Աստծո անհավատալի, գերբնական զորությունից: Ինչո՞ւ չօգտվել Նրա զարմանալի շնորհքից (զորությունից):

Մենք պատերազմի դաշտում ենք, և զորավոր կերպով ավարտելու միակ միջոցը մեր հավատքի մեջ անկոտրում լինելն է: Այն մարդը, ով անկոտրում հոգի ունի և վայելում է կյանքը Տիրոջ հետ, իրական սպառնալիք է խավարի թագավորության համար: Մենք կանչված և արտոնված ենք, որ ապրենք այսպես՝ ծառայելով մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

10

ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ

«...*ամենդ* իրար հնազանդվելով խոնարհությո՛ւնը հագեք, որ Աստված ամբարտավաններին հակառակ է կանգնում, բայց խոնարհներին շնորհք [զորություն] է տալիս: Խոնարհվե՛ք Աստծո հզոր ձեռքի տակ, որ ձեզ բարձրացնի ժամանակով: Ձեր բոլոր հոգսը Նրա վրա գցեք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար»:

Ա Պետրոս 5.5-7

Բոլորդ հնազա՛նդ եղեք իրար... խոնարհությո՛ւն հագեք... խոնարհվե՛ք:

Պետրոսի խոսքերը վերը նշված հատվածում անչափ կարևոր են կյանքի ցանկացած բնագավառում արդյունավետ և բարեհաջող ավարտ ունենալու համար: Առաքյալը սկսում է այս հատվածը՝ պատվիրելով. «Բոլորդ հնազանդ եղեք իրար»: Այս համատեքստում *«հնազանդ»* լինել նշանակում է «միաբանվել մեկ առաքելության շուրջ»: Ինչպե՞ս է սա հնարավոր այն դեպքում, երբ մարդիկ ունեն տարբեր անհատականություններ, կարողություններ և ցանկություններ: Սա հնարավոր կդառնա խոնարհությունը հագնելու դեպքում: Աստված հակառակվում է հպարտներին, իսկ մենք, անկասկած, չենք ցանկանա, որպեսզի Աստված հակառակվի մեզ: Մյուս կողմից՝ Նա շնորհք (զորություն) է տալիս խոնարհներին:

Ուրեմն, ովքե՞ր են հպարտները և, ովքե՞ր՝ խոնարհները:

ԽՈՆԱՐՀՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀՔԸ

Ճշմարտապես խոնարհ քրիստոնյաները հավատում, վստահում և հնազանդվում են Աստծո Խոսքին ավելի, քան իրենց մտքերին, կարծիքներին, զգացմունքներին կամ ցանկություններին: Հետևաբար՝ նրանք լիովին կախված են Աստծո, այլ ոչ թե իրենց կարողությունից: Նրանք ձգտում են կատարել Աստծո կամքը, ոչ թե իրենց կամ մեկ այլ մարդու կամքը: Նրանք կատարում են Նրա առաքելությունը: Աստծո Խոսքն ասում է մեզ. «Ահա նա *[հպարտը]* գոռոզացել է, նրա հոգին ուղիղ չէ իրենում, բայց արդարն իր հավատքով պիտի ապրի» (Ամբակում 2.4):

Ամբակում 2.4-ում հպարտությունը հակադրվում է հավատքին: Այս խոսքը կարելի էր գրել այսպես. «Ահա նա, ով *խոնարհ չէ*, նրա հոգին ուղիղ չէ իրենում, բայց արդար մարդը կապրի իր *հավատքով*»: Այստեղ խոնարհությունը նույնացվում է հավատքի հետ, ինչպես և հպարտությունը՝ անհավատության: Չհավատալ Աստծուն նշանակում է հայտարարել, որ մենք գիտենք ավելին, քան Նա, և, որ մենք վստահում ենք մեր դատողությանն ավելի, քան Նրա դատողությանը: Անհավատությունն ընդամենը քողարկված հպարտություն է:

Թո՛ւյլ տուր բացատրել սա: Մոտ մեկ տարի անց այն բանից հետո, երբ Իսրայելը դուրս եկավ Եգիպտոսից, Տերը պատվիրեց Մովսեսին. «Մարդիկ ուղարկի՛ր, որ լրտեսեն Քանանի երկիրը, որ *Ես Իսրայելի որդիներին պիտի տամ*» (Թվոց 13.3): Ինչպես միշտ, Աստված պարզ ցուցում տվեց, որտեղ ոչ մի անորոշություն չկար: Մովսեսն ուղարկեց տասներկու մարդ, որոնցից յուրաքանչյուրը մի ցեղի առաջնորդ էր: Սակայն նրանցից տասը «խոնարհ» էին, իսկ երկուսը՝ «հպարտ»: (Եթե դու գիտես այս պատմությունը, ապա շարունակի՛ր կարդալ. ես պարզապես կատակում եմ: Շուտով դու կտեսնես, թե ինչ նկատի ունեմ): Խոստմունքի երկրում քառասուն օր մնալուց հետո լրտեսները վերադարձան: Սկզբում խոսեցին տասը «խոնարհ» մարդիկ՝ ասելով. «Մենք լրտեսեցինք ամբողջ երկիրը, և այն իսկապես որ հոյակապ երկիր է, կաթ ու մեղր բխեցնող երկիր: Ահա թե ինչպիսի պտուղներ ենք մենք բերել այդտեղից: Սակայն այնտեղ կան զորավոր բանակներ, որոնց հետ մենք պետք է կռվենք: Այնտեղ նույնիսկ հսկաներ կան: Նրանք հմուտ պատե-

րազմողներ են, և նրանց զենքերն ավելի կատարյալ են, քան մերը: Մենք պարզապես մի խումբ ստրուկներ ենք, որոնք վերջերս են ազատվել: Մենք պետք է մտածենք մեր կանանց և երեխաների մասին: Ինչպե՞ս մենք կարող ենք թույլ տալ, որպեսզի մեր սիրելիները ենթարկվեն դաժանությունների, խոշտանգումների, բռնության և նույնիսկ՝ մահվան, որը սպասում է նրանց գետի այն կողմում: Մենք պետք է լավ և պատասխանատու հայրեր ու ամուսիններ լինենք և ասենք ձեզ ճշմարտությունը: Այդ երկիրն անհնար է գրավել»: Թեև մարդիկ ցանկանում էին տիրանալ այդ երկրին, սակայն նրանց համար առաջին տեղում ապահովությունն էր: Այնպես որ նրանք գովեցին և ծափահարեցին այս մարդկանց իմաստության և խոնարհության համար: Ես համոզված եմ, որ այն ծնողների մեծ մասը, ովքեր լսում էին նրանց զեկույցը, շնորհակալ էին այս լրտեսների խոնարհ վարքի համար: Իսրայելցիները մխիթարեցին իրար՝ ասելով. «Մենք ուրախ ենք, որ այս մարդիկ գնացին մեզանից առաջ: Ինչպիսի՜ առաջնորդներ են նրանք. առաջին հերթին նրանք մտածեցին մեր, և ոչ թե իրենց մասին, և չվտանգեցին մեզ: Ի՞նչ կլիներ մեզ հետ առանց այս ողջամիտ մարդկանց»:

Բայց դրանից հետո երկու «հպարտ» առաջնորդները՝ Քաղեբը և Հեսուն, ընդհատեցին նրանց և գոչեցին. «Սպասե՛ք: Այս ի՞նչ եք անում: Մենք պետք է գնա՛նք և գրավե՛նք այդ երկիրը: Մենք կարո՛ղ ենք անել դա: Տեր Աստված խոստացե՛լ է այն մեզ: Նրա Խոսքը երաշխավորում է, որ մենք կարո՛ղ ենք անել դա: Մենք կջնջե՛նք քանանացիներին այդ երկրի երեսից: Եկե՛ք անմիջապես համախմբվենք և գնանք»:

Բոլորն ապշել էին նրանց խոսքերից: Նրանք անհավատությամբ նայեցին մեկը մյուսին: Կարո՞ղ ես պատկերացնել, թե ինչպես մյուս տասը լրտեսները պատասխանեցին նրանց անխոհեմ և անշրջահայաց խորհրդին: Ես պատկերացնում եմ, որ սկզբնական զարմանքը հաղթահարելուց հետո նրանք ասացին մոտավորապես հետևյալը. «Ինչի՞ մասին եք դուք խոսում: Դուք ցնորվե՞լ եք: Մենք բոլորս տեսանք նույն բաները. նրանց զորությունը, զենքերը և պարսպապատ քաղաքները: Այդ մարդիկ բարձրահասակ, հմուտ զինվորներ են, իսկ մենք պարզապես մի խումբ ստրուկներ ենք: Մենք չենք կարող հաղթել նրանց: Դուք չեք մտածում մեր կանանց և երեխաների մասին, մեր ազգի բարեկեցության մա-

սին: Դուք ամբարտավան, անմիտ և երազկոտ մարդիկ եք: Դուք պարզապես եսասեր եք, այնպես որ ավելի լավ է լռե՛ք»:

Պատկերացնում եմ, թե ինչպես ամբոխը թեթևացած շունչ քաշեց. «Փա՜ռք Աստծուն, որ մեր իմաստուն առաջնորդները չզիջեցին նրանց: Մեր բախտը բերել է, որ լրտեսների մեծամասնությունը խոնարհ և շրջահայաց է»: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կկատարվեր մեզ հետ, եթե բոլոր լրտեսներն այդպես հպարտ և ամբարտավան լինեին, ինչպես Քաղեբը և Հեսուն»:

Բայց վերջին խոսքն, ինչպես միշտ, Աստծունն էր. «Որքա՞ն ժամանակ են նրանք արհամարհանքով վերաբերվելու Ինձ»,- Նա զայրացած ասաց Մովսեսին: - «Որքա՞ն ժամանակ են նրանք հրաժարվելու *հավատալ*» (Թվոց 14.11, NIV): Աստծուն դուր չեկավ այդ բազմության մտածելակերպը: Այն, ինչ նրանք խոնարհություն էին համարում, ընդհանրապես խոնարհություն չէր: Իրականում նրանց անհավատությունը հպարտության դրսևորում էր: Նրանց կանխատեսումները հիմնված էին իրենց սեփական իմաստության, կարողության և ուժերի վրա:

Ավելի ուշ Հին կտակարանում Աստված ասում է. «Անիծված են նրանք, ովքեր վստահում են հասարակ մարդուն… բայց օրհնված են նրանք, ովքեր վստահում են Տիրոջը և դարձրել են Տիրոջն իրենց հույսն ու ապահովությունը» (Երեմիա 17.5,7, NLT): Տասը լրտեսները տեսան, թե որքան մեծ էին հսկաները և չպատկերացրեցին հաղթանակի ոչ մի հնարավորություն, քանի որ նրանք հենվում էին իրենց սեփական ուժերի վրա: Իսկ Քաղեբը և Հեսուն տեսնում էին, թե որքան մեծ էր Աստված՝ համեմատած թշնամու հետ, և լիովին իրենց հույսը դրեցին Աստծո շնորհքի վրա: Այս երկու լրտեսները՝ Քաղեբը և Հեսուն, ի վերջո, օրհնվեցին, իսկ մյուս լրտեսները ողջ անհավատ ժողովրդի հետ անեծքի տակ ընկան:

Ուրեմն, լրտեսներից որո՞նք էին ճշմարտապես խոնարհ, և, որո՞նք՝ հպարտ: Աստծո աչքերում տասը լրտեսները հպարտ էին, և միայն երկուսը՝ խոնարհ:

Պետք է իսկապես խոնարհ լինել հավատալու համար, որովհետև երբ դու խոնարհ ես, դու վստահում ես Աստծո կարողությանը (շնորհքին) և հավատում, որ ոչ թե քո սեփական կարողությունը, այլ շնորհքը կփրկի

քեզ դժվարին իրավիճակներից: Եթե տասը լրտեսները խոնարհաբար հուսային Աստծո խոստմունքին, ապա նրանք կգնային և կգրավեին այդ երկիրը: Նրանք կհնազանդվեին Տիրոջ Խոսքին, այլ ոչ թե՝ իրենց սահմանափակ զորությանը և մարդկային փաստարկներին: Այսպիսով նրանք կհնազանդվեին մեկը մյուսին՝ միաբանվելով մեկ *առաքելության շուրջ*:

Պետք է իսկապես խոնարհ լինել հավատալու համար:

Եթե նրանք գնային պատերազմի, այն մարդիկ, ովքեր կտեսնեին նրանց, կմտածեին, որ նրանք գործում են իրենց սեփական զորությամբ, բայց իրականում Աստծո շնորհքը՝ Նրա գերբնական զորությունը, կգործեր նրանց միջոցով: Երբեմն, երբ մենք գործում ենք Աստծո շնորհքի զորությամբ, այն կարծես անտեսանելի լինի: Բայց անկախ այն բանից, թե ինչ է թվում այլ մարդկանց՝ մենք գիտենք, որ մեզանում գործում է Նրա զորությունը: Մենք կարող ենք վստահել այդ զորությանը և շարժվել առաջ՝ հիմնվելով Նրա Խոսքի վրա:

Իմ ընկե՛ր, սա կոչվում է անկոտրում հավատք: Բայց այդ հավատքը սկսվում է Աստծո և մեկս մյուսի հանդեպ ունեցած խոնարհությունից:

Խոնարհությունը հագնելու համար մենք պետք է կրենք Նրա՛ սպառազինությունը, այլ ոչ թե մերը: Պետրոսի առաջին թղթի 5.5,6 խոսքերը պատվիրում են. «…խոնարհությո՛ւնը հագեք… Խոնարհվե՛ք Աստծո հզոր *ձեռքի* տակ…»: Սուրբ գրքում Աստծո ձեռքը միշտ խորհրդանշում է Նրա կարողությունը, զորությունը և ուժը. հենց սա է Նրա սպառազինությունը:

Ինչպե՞ս է սա հասանելի գործնականում: Մենք պետք է խոնարհեցնենք մեզ Աստծո զորության և ուժի ներքո: Մենք հրաժարվում ենք թույլ տալ, որպեսզի մարդկային գաղափարները և վերապրումները (թե՛ մեր, թե՛ այլ մարդկանց) Աստծո խոսքից վեր դրվեն: Փոխարենը՝ անկախ մեր դատողությունից կամ տրամաբանությունից, մենք *հավատում ենք* և թույլ ենք տալիս, որպեսզի Նրա Խոսքը թելադրի մեր գործողությունները:

Եգիպտոսում չորսհարյուրամյա հպատակությունը Իսրայելի զավակներին սովորեցրել էր, որ նրանք չէին կարող պաշտպանվել այնպիսի բանակից, որն իրենցից ավելի մեծ էր և ավելի կատարյալ զենքեր ուներ: Եգիպտոսը ստրկացրել էր նրանց: Նրանք չէին կարող ոչինչ անել ազատ-

վելու համար: Աստված ստիպված էր անձամբ միջամտել: Նա փառավոր կերպով ազատեց նրանց Իր *զորավոր ձեռքով*: Ինչպես հիշեցնում էր Մովսեսը. «…որովհետև Եհովան քեզ *զորավոր ձեռքով* հանեց Եգիպտոսից» (Ելից 13.9): Սակայն մենք նաև գիտենք հետևյալը. «Բայց շուտով մոռացան Նրա գործերը…» (Սաղմ. 106.13): Նրանք հուսացին իրենց ստրկության երկարամյա փորձառությանը, այլ ոչ թե Աստծուն, Ով ազատեց իրենց: Այն զորավոր ձեռքը, որ պարտության մատնեց Եգիպտոսին, կարող էր նաև պարտության մատնել քանանացիների բանակները, որոնք, իրականում, շատ ավելի փոքր էին, քան եգիպտական բանակները:

Բայց քանի դեռ զայրույթով չենք լցվել իսրայելցիների հանդեպ, նրանց անհավատության պատճառով, ե՛կ տեսնենք մեզ այս հայելու մեջ: Որքա՞ն հաճախ ենք մենք նույն կերպ վարվում: Մինչև Աստծո ընտանիքի մաս դառնալը մենք ապրում էինք սատանայի բռնակալության ներքո: Մենք ունեինք նրա բնությունը և հույս չունեինք, որ կարող էինք ազատվել նրա ձեռքից: Բայց Աստված զորավոր կերպով «փրկեց մեզ խավարի զորությունից և ապահով կերպով տեղափոխեց մեզ Իր թանկագին Որդու արքայության մեջ» (Կողոս. 1.13, TEV): Եթե Նա կատարեց այս անհավանական արարքը, ապա կարող է հոգալ նաև մեր կյանքերում տեղի ունեցող շատ ավելի հասարակ իրավիճակների մասին: Նա կարող է բժշկել մեզ հիվանդություններից և տկարություններից, հոգալ ցանկացած կարիք, շնորհել իմաստություն և զորացնել մեզ, որպեսզի մենք դառնանք ակնառու մարդիկ և հաղթահարենք անլուծելի թվացող իրավիճակներ: Ե՛կ չկրկնենք Իսրայելի հիմարությունը և «շուտով չմոռանանք Նրա գործերը»: Ե՛կ մշտապես կրենք խոնարհության զրահը, ինչպես Քաղեբը և Հեսուն:

ՍԽԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ցավալի է ասել, բայց խոնարհ մարդուն պատկերացնում են որպես տկար, թուլակամ և անվճռական: Իրականում խոնարհությունը բոլոր այս հատկանիշների հակադիրն է: Եվ հաճախ Աստվածաշնչում ճշմարտապես խոնարհ մարդկանց սխալմամբ հպարտ և ամբարտավան են

համարում: Դավիթը դրա փայլուն օրինակն է: Հայրը հանձնարարել էր նրան այցելել իր ավագ եղբայրներին, ովքեր պատերազմում էին փղշտացիների բանակի դեմ: Հասնելով մարտի դաշտ՝ նա նկատեց, որ բոլոր զինվորները՝ ներառյալ իր եղբայրները, նոր տարօրինակ ռազմական դիրքում էին: Նրանք թաքնվել էին ժայռերի ետևում և վախից դողում էին: Նրանք վախեցած էին փղշտացի հսկայի՝ Գողիաթի հասակի, ուժի և համբավի պատճառով: Դավիթն իմացավ, որ նրանք այդ վիճակում էին արդեն քառասուն օր շարունակ, և նա անհամեստորեն հարցրեց. «…այս անթլփատ փղշտացին ո՞վ է, որ կենդանի Աստծո զորքերին նախատի» (Ա Թագ. 17.26): Դավթի ավագ եղբայրը՝ Եղիաբը, մոլեգնեց նրա վերաբերմունքի պատճառով: Կարո՞ղ ես պատկերացնել, թե ինչ էր մտածում Եղիաբը: *Իմ փոքր եղբայրը ոչ միայն հիմար է, այլ նաև մեծամիտ է*: Նա անմիջապես հարձակվեց նրա վրա. «…Ես *քո հպարտությունը* և քո սրտի չարությունը գիտեմ…» (խոսք 28): Ինչպիսի՜ խիստ հանդիմանություն: «Թըդեյս ինգլիշ» թարգմանության մեջ Եղիաբն ասում է. «Ամբարտավան», իսկ «Նյու ինտերնեյշնլ» թարգմանության մեջ՝ «Ես գիտեմ, թե որքան ինքնահավան ես դու»: Դավթի եղբայրն անմիջապես որոշեց, որ Դավիթն անպարկեշտ, ամբարտավան և հպարտ էր:

Բայց, սպասի՛ր, նրանցից ո՞վ էր իրականում հպարտ: Ընդամենը մեկ գլուխ առաջ Սամուել մարգարեն եկել էր Հեսսեի տուն, որպեսզի օծեր հաջորդ թագավորին: Եղիաբը՝ նրա առաջնեկը, չընդունվեց, չնայած որ և՛ Հեսսեն, և՛ Սամուելը ենթադրում էին, որ Եղիաբն էր ընտրվելու, քանի որ նա առաջնեկն էր, ինչպես նաև ամենաբարձրահասակը և ամենաուժեղը Հեսսեի որդիներից: Բայց Աստված միանշանակ ասաց. «Ես մերժել եմ նրան» (Ա Թագ. 16.7, NIV):

Ինչո՞ւ Աստված մերժեց Եղիաբին: Միգուցե այն հպարտությունը, որում նա մեղադրում էր Դավթին, բնակվում էր նրա սրտում: Ավելի ուշ Աստված գովեց Դավթի խոնարհությունը՝ հայտարարելով, որ Դավիթն Իր սրտի համեմատ մարդ է (տե՛ս Գործք 13.22): Դավիթը խոնարհ էր իր ողջ կյանքում, իսկ մենք բոլորս էլ գիտենք, որ այդ մեծ առաջնորդը բնավ տկար, թուլակամ և անվճռական չէր: Նա գրեց. «Տերն ինձ հետ է, և ես չեմ վախենա, թե մարդն ինձ ի՞նչ կանի» (Սաղմ. 118.6):

Ե՛կ վերադառնանք մարտի դաշտ: Դավիթն անտեսեց Եղիաբի խոսքերը և վստահորեն մարտահրավեր նետեց Գողիաթին՝ ասելով նրան, որ

շատ շուտով նա կորցնելու է իր մեծ գլուխը: Դավիթը վազեց դեպի թշնամու բանակը, սպանեց Գողիաթին պարսատիկի մի քարով և արեց ճիշտ այն, ինչ խոստացել էր. նա կտրեց Գողիաթի գլուխը:

Դավթի ավագ եղբայրները հուսացել էին իրենց ուժերի վրա, ինչպես և տասը լրտեսները: Իսկ Դավիթը հուսացել էր Աստծո զորությանը կամ զորավոր ձեռքին: Նա խոնարհություն էր հագել: Սավուղ թագավորն առաջարկեց Դավթին իր սպառազինությունը, բայց այդ տղան հրաժարվեց. նա վստահում էր Աստծո սպառազինությանը: Բայց կրկին՝ այն մարդիկ, ովքեր վստահում էին իրենց զորությանը, հպարտ և ամբարտավան էին համարում Քաղեբին, Հեսուին և Դավթին:

Ես հավատում եմ, որ թշնամին շատ է աշխատել, որպեսզի աղավաղի մեր պատկերացումը խոնարհության մասին: Շատ քրիստոնյաներ, ովքեր բարի մտադրություններ ունեն, այս աշխարհի պես մտածում են, որ խոնարհ մարդը պետք է լինի կաշկանդված, երկչոտ և չհակառակվի ոչ մի բանի հետ: Բայց սա այնքան հեռու է այդ բառի իրական նշանակությունից: Ե՛կ Աստվածաշնչում դիտարկենք խոնարհ մարդկանց՝ Մովսեսի և Հիսուսի օրինակները:

Թվոց գրքում գրված է. «Եվ Մովսես մարդը շատ հեզ էր երկրի վրա եղած բոլոր մարդկանցից ավելի» (Թվոց 12.3): Ա՜յ քեզ արտահայտություն: Մի՞թե մենք չէինք ցանկանա, որ այն մեր մասին լիներ: Իհա՛րկե, մենք երբեք չէինք համարձակվի ինքներս նման բան ասել մեր մասին, որովհետև միայն ամբարտավան, եսակենտրոն և ինքնահավան մարդը կարող է բոլորին ասել, որ ինքը խոնարհ է, այդպես չէ՞: Բայց գիտե՞ս՝ ով է գրել Թվոց գիրքը. Մովսե՛սը: Այս հրաշալի Աստծո ծառան ասում է, որ ինքը երկրի վրա եղած բոլոր մարդկանցից ամենախոնարհն էր:

Մի՞թե կարելի է այսպես վարվել: Կարո՞ղ ես պատկերացնել մի ծառայողի, ով բեմ է բարձրանում որևէ քրիստոնեական համաժողովի ժամանակ և ասում. «Լսե՛ք, ես շատ խոնարհ եմ, այնպես որ թո՛ւյլ տվեք սովորեցնել բոլորիդ այդ մասին»: Նրան ծաղրուծանակի կենթարկեին և կիջեցնեին բեմից:

Այժմ լսի՛ր, թե ինչ է ասում Հիսուսը. «Եկե՛ք Ինձ մոտ, բոլորդ, ովքեր հոգնած և բեռնավորված եք… և սովորե՛ք Ինձանից, որովհետև Ես… խոնարհ եմ սրտով» (Մատթ. 11.28,29, NIV):

Հիսուսն ասում է. «Լսե՛ք, եկե՛ք Ինձ մոտ: Ես խոնարհ եմ, և Ես ցանկանում եմ սովորեցնել ձեզ այդ մասին»: Ինչպես և Մովսեսի դեպքում՝ Հիսուսի ինքնահռչակ խոնարհությունն այնքան էլ լավ չէր ընդունվի ժամանակակից աշխարհում: Բայց այն, ինչ Մովսեսն ու Հիսուսն արեցին, սխալ չէր. *խնդիրը մեր մեջ է, որովհետև մենք խոնարհությունը ճիշտ չենք ընկալում և հասկանում*: Մենք կորցրել ենք դրա ճշմարիտ նշանակությունը, քանի որ մտածում ենք, որ այն նշանակում է ապրել ինչպես անարժան որդեր և խոսել միայն այն մասին, թե որքան անզոր և խեղճ ենք մենք: Բայց այն խոնարհությունը, որն Աստված նկատի ունի, շատ դրական և ուժեղ բնավորության գիծ է: Ճշմարիտ խոնարհություն նշանակում է բացարձակ հնազանդություն և կախվածություն Աստծուց: Ճշմարիտ խոնարհությունը Աստծուն դնում է առաջին տեղում, մարդկանց՝ երկրորդ, իսկ մեզ՝ երրորդ: Խոնարհությունը որևէ առնչություն չունի կաշկանդվածության և սեփական անձը ստորացնելու հետ, այն անմիջական առնչություն ունի խիզախ, անկոտրում և Աստծո շնորհքի ձրի պարգևի զորությամբ լցված կյանքի հետ:

ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՆՈՒՄ Է ՄԵՋ ԱՆԿՈՏՐՈՒՄ ԼԻՆԵԼ

Հիշի՛ր. նրանք, ովքեր անկոտրում կերպով անցնում են և բարեհաջող ավարտում իրենց ընթացքը, վարձք են ստանում: Պողոսը զգուշացնում է, որպեսզի մենք թույլ չտանք *կեղծ խոնարհությանը*, որն իմաստության կերպարանք ունի, զրկել մեզ այս վարձքից. «Ոչ ոք չզրկի ձեզ մրցանակից՝ ինքնակամ խոնարհությունով...» (Կողոս. 2.18): Տասը լրտեսները և Իսրայելի երկչոտ ժողովուրդը շատ լավ օրինակ են ցույց տալու համար, թե ինչպես կեղծ խոնարհությամբ կարող ենք կորցնել այն վարձատրությունը, որն Աստված նախատեսել է մեզ համար:

Տասը լրտեսները տարհամոզեցին մարդկանց, որպեսզի նրանք չմտնեին Խոստմունքի երկիր: Նրանց պատճառաբանությունները ողջամիտ, տրամաբանական և շրջահայաց էին թվում, բայց նրանց աղբյուրը Բարու և չարի գիտության ծառն էր հանդիսանում, այլ ոչ թե Աստծո խոստմունքն ու իմաստությունը: Նրանք խաբում էին ոչ միայն իրենց,

այլ նաև իրենց ընտանիքներին և միլիոնավոր մարդկանց: Հետևաբար, նրանք այդպես էլ չմտան Խոստմունքի երկիրը: Որքա՜ն մարդիկ չկարողացան մտնել Աստծո կոչման մեջ կեղծ խոնարհության պատճառով: Միայն երկու լրտեսները՝ Քաղեբն ու Հեսուն, ովքեր խոնարհության հոգով զեկուցեցին Խոստմունքի երկրի մասին, միակ չափահաս մարդիկ էին իրենց սերնդից, ում Աստված թույլ տվեց մտնել այդ երկիր: Հեսուի առաջնորդությամբ Իսրայելցիների նոր սերունդը խիզախորեն, խոնարհությամբ և Աստծո զորավոր ձեռքի զորությամբ մտավ Խոստմունքի երկիր և գրավեց այն:

Մեկ անգամ մի մարդ հարցրեց ինձ. «Ձո՛ն, դու կքարոզեիր միլիոնավոր մարդկա՞նց, ովքեր տարբեր ճանապարհներ են անցել իրենց կյանքում, թե՞ ընդամենը տասը առաջնորդների:

«Միլիոններին»,- պատասխանեցի ես:

Նա ասաց. «Քո պատասխանն իմաստուն չէր, քանի որ այն տասը առաջնորդները, ովքեր լրտեսեցին երկիրը, պատասխանատու էին միլիոնավոր մարդկանց համար, ովքեր չմտան իրենց կոչման մեջ»:

Մենք բոլորս կանչված ենք առաջնորդներ լինելու և ազդեցություն թողնելու համար: Իսկ ինչպե՞ս ես դու առաջնորդում: Արդյո՞ք դու զինված ես խոնարհությամբ և խոնարհվում ես Աստծո զորավոր ձեռքի տակ, թե՞ պարզապես արտաքնապես խոնարհ տեսք ունես, սակայն դեռևս վարվում ես քո սեփական զորությամբ:

Պողոսը գրում է. «…մենք ավելին ենք, քան հաղթողներ…» (Հռոմ. 8.37, NKJV), բայց մեր սեփական գաղափարները, ծրագրերը կամ ցուցումները, որոնք Աստծո կամքից դուրս են, կարող են «իմաստուն թվալ, որովհետև դրանք պահանջում են ուժգին նվիրվածություն, խոնարհություն և խիստ կարգապահություն: Բայց դրանք ոչ մի կերպով չեն կարող օգնել մեզ հաղթել» (Կողոս. 2.23, NLT):

Քաղեբի և Հեսուի սերնդի մեջ բոլորը որոշված էին հաղթանակի համար: Եղիաբը և նրա եղբայրները պետք է պարտության մատնեին փղշտացիներին, մինչև Դավիթը կհայտնվեր մարտի դաշտում: Բայց կեղծ խոնարհությունը գողացավ նրանց զորությունը, խոստմունքը, պտուղը, կյանքում իշխելու կարևորությունը և, ի վերջո, նրանց հավիտենական վարձատրությունը: Այս պատճառով Պողոսը խստորեն հորդորում է մեզ.

«Նույն միտքն ունեցեք մեկդ մյուսի հանդեպ: Մի՛ մտածեք բարձր բաների մասին, այլ՝ շփվեք *խոնարհների* հետ: Իմաստուն մի՛ եղեք ձեր կարծիքով» (Հռոմեացիների 12.16, NKJV):

Ես հիշում եմ այն ժամանակը, երբ մի հանրահայտ միջազգային ամսագիր հոդված էր գրում մի հակասական թեմայով: Այդ ամսագրի խմբագիրը զանգահարեց մեր գրասենյակ և խնդրեց իմ մեկնաբանությունն ու կարծիքն այդ հարցի վերաբերյալ: Իմ քարտուղարուհին նրա խնդրանքը փոխանցեց ինձ: Ես քարտուղարուհուս ասացի. «Թո՛ւյլ տուր մտածել այդ մասին»:

Հաջորդ առավոտյան ես անհանգստություն էի զգում հոգումս, բայց չէի կարողանում հասկանալ դրա պատճառը: Ես շարունակ հարցնում էի ինքս ինձ՝ *ի՞նչ է կատարվում*, սակայն չէի կարողանում հասկանալ, թե ինչն էր անհանգստացնում ինձ: Վերջապես ես հարցրի Տիրոջն այդ մասին, և մեկ կամ երկու օր անց հանկարծ հասկացա... Ես խոսեցի Լիզայի հետ և ասացի նրան. «Ես գիտեմ, թե ինչու էի անհանգստություն զգում, երբ մտածում էի այդ ամսագրի խնդրանքի մասին»: Ո՞վ եմ ես իմ կարծիքն ասելու համար: Մի՞թե դեսպանները հրապարակում են իրենց սեփական կարծիքը:

Աստվածաշնչում ասվում է. «Արդ Քրիստոսի կողմից *պատգամավորություն* (կամ՝ դեսպանություն) ենք անում, իբրև թե Աստված է հորդորում մեզանով...» (Բ Կորնթ. 5.20): Եթե Միացյալ Նահանգների նախագահը որևէ դեսպան ուղարկի մեկ այլ երկիր՝ իր ուղերձը փոխանցելու համար, իսկ այդ դեսպանը հայտնի *իր սեփական* կարծիքը կամ մեկնաբանություններ անի նախագահի փոխարեն, ապա նա շատ լուրջ խնդիրներ կունենա: Երբ ես խոսում եմ Հայր Աստծո և իմ Տեր Հիսուս Քրիստոսի փոխարեն, ես պետք է խոսեմ Նրա Խոսքը: Ո՞վ եմ ես, որ ասեմ իմ կարծիքը: Ահա թե ինչումն էր տասը լրտեսների հիմարությունը: Այդ ամսագիրը դիմել էր ինձ՝ Ավետարանի ծառայողին, իմ կարծիքն իմանալու համար: Եթե ես կատարեի նրանց խնդրանքը, ապա դրանով անարգած կլինեի Աստծո շնորհքով տրված պաշտոնը, որը վստահվել է ինձ:

Այս միջադեպը հիշեցրեց ինձ, թե ինչպես տարիներ առաջ Աստված աղոթքի ժամանակ խոսեց ինձ հետ: Մեր ծառայության առաջին չորս տարիների ընթացքում մենք շատ դժվարություններ ունեինք: Կարելի է

ասել՝ մենք անցնում էինք անապատով: Լիզան և ես փոքր «Հոնդա Սիվիկ» էինք վարում, որով կտրում-անցնում էինք Միացյալ Նահանգների ողջ արևելյան մասը: Մեր երեխաները ետևի նստարանին էին, իսկ իրերը՝ ամենուր: Մենք ջերմեռանդորեն աղոթում էինք, որպեսզի մեզ համար դռներ բացվեին: Մեր ծառայությունների մեծ մասը տեղի էր ունենում մոտավորապես հարյուր անդամ ունեցող եկեղեցիներում, որոնք չէին աճում և գրեթե ազդեցություն չունեին իրենց բնակավայրերում:

Նման լարված կերպով ծառայելուց չորս տարի անց, մի առավոտ, երբ ես աղոթում էի, Աստված խոսեց ինձ հետ. *«Ջո՛ն, վերջին չորս տարիների ընթացքում ես ուղարկեցի քեզ այնպիսի եկեղեցիներ և համաժողովների, որոնք գրեթե ազդեցություն չունեին, և դու հավատարմորեն հնազանդվեցիր Ինձ: Ես կշարունակեմ հոգալ նրանց մասին, ում դու ծառայել ես, բայց այժմ Ես պատրաստվում եմ էական փոփոխություն բերել քո կյանքում: Այժմ ես կտամ քեզ այնպիսի առատություն, որի մասին դու նույնիսկ չես երազել: Դու հասանելի կլինես շատերին: Քեզ կհրավիրեն այնպիսի եկեղեցիներ, որոնք էական ազդեցություն են թողնում իրենց քաղաքներում և երկրներում: Դու առատորեն օրհնված կլինես ֆինանսապես, սոցիալապես և հոգևոր առումով: Այն, ինչ կա քո սրտում, Ինձանից է, և ժամանակն է, որպեսզի այն ուղերձը, որը Ես տվել եմ քեզ, լայնորեն տարածվի»*:

(Թո՛ւյլ տուր ընդմիջել կարևոր մի ուղղումով: Կան մեծ եկեղեցիներ, որոնք չունեն ազդեցություն իրենց բնակավայրերում, և, ընդհակառակը՝ կան փոքր եկեղեցիներ, որոնք շատ ազդեցիկ են: Եկեղեցու արդյունավետությունը չի որոշվում նրա անդամների քանակով, այլ որոշվում է այն ազդեցությամբ, որ նրանք ունեն իրենց բնակավայրում, և պտղաբեր ավետարանչական ծառայությամբ:

Ես ցնցված և ոգևորված էի այն ուղերձի պատճառով, որ Աստված այդքան պարզ կերպով խոսեց իմ սրտին: Քիչ անց ես այդ մասին պատմեցի Լիզային, և նա նույնպես հիացած էր: Բայց ընդամենը մի քանի վայրկյան անց Տերը շարունակեց շշնջալ. *«Սա նաև փորձություն է լինելու քեզ համար: Երբ դու գնում էիր փոքրիկ վայրեր, որոնք ազդեցություն չունեին, դու պետք է հավատայիր Ինձ ամեն մի լումայի և յուրաքանչյուր խոսքի համար: Դու մշտապես փնտրում էիր Իմ խորհուրդը, որով-*

հետև գիտեիր, որ եթե չկատարեիր Իմ կամքը քո ծառայության մեջ, ապա լուրջ վնաս կկրեիր: Արդյո՞ք դու կսկսես անփութորեն փող ծախսել, երբ Ես ֆինանսապես օրհնեմ քեզ: Արդյո՞ք դու կփնտրես Իմ խորհուրդն այնպես, ինչպես արել ես չորության ժամանակներում: Արդյո՞ք դու, առանց Իմ առաջնորդությունը խնդրելու, կգնաս այնտեղ, ուր ցանկանաս: Արդյո՞ք կսկսես բեմից քարոզել քո սեփական կարծիքները՝ փոխարենը հավատալու Իմ յուրաքանչյուր խոսքին՝ որպես Իմ պատգամախոս: Որդի՛ս, Իմ զավակները փորձվում են երկու խոշոր բնագավառներում. անապատում և առատության մեջ: Նրանցից շատերն ընկել են ոչ թե անապատում, այլ առատության մեջ լինելով»:

Ես դողում էի: Աղոթքն ավարտելուց հետո ես անմիջապես պատմեցի Լիզային այն, ինչ Աստված ասաց ինձ: Նա պատասխանեց. «Ձո՛ն, երբ ես լսեցի Աստծո ուղերձի առաջին մասը, ես ցանկանում էի խոհանոցով մեկ պարել: Բայց երբ լսեցի այդ ուղերձը մինչև վերջ, ես վախից դողացի»:

«Դա լա՛վ է»,- պատասխանեցի ես,- «դու իմ պատմածն ընդունեցիր *Տիրոջ երկյուղով*, և դա շատ ճիշտ է»:

Շատերը չեն հասկանում, որ Տիրոջ երկյուղը կապ չունի Աստծուց վախ ունենալու հետ. այն նշանակում է վախենալ և նույնիսկ՝ սարսափել, որը կարող է մարդուն հեռացնել Աստծուց: Իսկ Տիրոջ երկյուղն առողջ, իմաստուն, զորավոր և ապահով կյանքի հիմքն է: Հարստությունը լավ է, եթե դրա հետ ճիշտ են վարվում, և այն ճիշտ տեղ է զբաղեցնում մարդու կյանքում: Հիսուսը «հարստության խաբեբայության» մասին զգուշացնում է Մատթեոսի 13.22-ում, բայց այս խաբեբայությունը չի կարող վնասել մեզ, եթե մենք Աստծո երկյուղի մեջ մնանք, այսինքն՝ Աստծո խորհրդի, Խոսքի և իմաստության մեջ:

Տիրոջ երկյուղն առողջ, իմաստուն, զորավոր և ապահով կյանքի հիմքն է:

Եթե ես՝ որպես Քրիստոսի դեսպան, հայտնեմ քեզ իմ սեփական կարծիքը, ապա դա կդիտվի որպես աստվածային երկյուղի պակասություն, այսինքն՝ հպարտություն: Ահա թե ինչու է Պողոսն ասում. «Շփվե՛ք խոնարհների հետ: Իմաստուն մի՛ եղեք ձեր կարծիքով» (Հռոմ. 12.16, NKJV): Քաղեբը և Հեսուն չհամաձայնեցին իրենց սերնդի կար-

ծիքին, քանի որ Աստված արդեն պարզորոշ կերպով հայտնել էր Իր կամքը: Նրանք երկյուղ ունեին Աստծուց և, հետևաբար, բարեհաջող ավարտ ունեցան: Ինչպես գրված է Առակաց 3.34-ում՝ «Նա [Աստված] ծաղրում է ծաղրողներին, ովքեր հպարտ են, բայց տալիս է շնորհք խոնարհներին» (NIV):

Ոչ մի խելամիտ մարդ չի ցանկանա, որպեսզի Աստված ծաղրի իրեն: Սակայն հենց սա է կատարվում ինքնահավան մարդկանց հետ: Փառքի Տերը չի հանդուրժում հպարտությունը: Նա ատում է այն: Լյուցիֆերը մոտ էր Աստծուն: Նա ամենամոտ հրեշտակն էր, բայց չուներ Տիրոջ երկյուղը: Այդ իսկ պատճառով նա բարեհաջող ավարտ չունեցավ: Աստծո Խոսքն ասում է. «Տիրոջ վախը սուրբ է, մնում է հավիտյան…» (Սաղմ. 19.9): Տիրոջ երկյուղը այն մնայուն զորությունն է, որը հնարավորություն է տալիս մեզ բարեհաջող ավարտ ունենալ: Ադամը և Եվան քայլում էին Աստծո փառքի ներկայության մեջ, բայց եթե նրանք վախ ունենային Աստծուց, ապա նրանք կվախենային Նրանից հեռու գտնվել: Որպես արդյունք՝ նրանք հավիտյան չմնացին Եդեմում:

Աստվածային երկյուղը, հավատքը և խոնարհությունը այն եռապատիկ թելն է, որը շուտով չի կարող կտրվել (տե՛ս Ժողով. 4.12): Եթե դու վախենաս Տիրոջից, ապա կհավատաս Նրան, երբ բախվես անլուծելի խնդիրների հետ: Եթե դու վախենաս Նրանից, ապա խոնարհ կլինես, ոչ թե քո կարծիքով՝ իմաստուն: Սակայն հպարտությունը, ապստամբությունը և անհավատությունը խավարի եռապատիկ թելն են, որոնք շուտով չեն կարող կտրվել: Եթե որևէ մեկը թեթևացնում կամ անտեսում է այն, ինչ Աստված ասում է Իր Խոսքում՝ միացնելով այն իր սեփական կարծիքներին, ապա նա մինչև վերջ չի դիմանա: Այդպիսի մարդու միակ հույսը ճշմարիտ ապաշխարությունն ու խոնարհությունն է:

ԹԻԿՈՒՆՔԻ ՍՊԱՌԱՉԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Հպարտությունը շատ խաբուսիկ է: Ես հավատում եմ, որ դա թշնամու ամենաարդյունավետ զենքն է, որի նպատակն է թույլ չտալ մեզ բարեհաջող ավարտել մեր ընթացքը: Հպարտ մարդիկ չեն կարող տեսնել, թե ինչպես է թշնամին մոտենում իրենց, որովհետև նրանք հարվածը ստա-

նում են մեջքից, այսինքն՝ թիկունքից: Որքա՜ն հաճախ ենք մենք լսել այն մարդկանցից, ովքեր կորցրել են ամեն ինչ. «Ես չնկատեցի, թե ինչպես դա վրա հասավ»:

Պատճառը հետևյալն է. եթե մենք Աստվածաշնչում ուսումնասիրենք Աստծո սպառազինությունը, ապա կտեսնենք, որ այն պաշտպանում է մեզ, երբ մենք *առաջ ենք գնում*: Ճշմարտության գոտին, արդարության զրահը, խաղաղության Ավետարանի կոշիկները, հավատքի վահանը, փրկության սաղավարտը և Աստծո Խոսքը, որը մեր սուրն է… Մտածի՛ր սրա մասին. այս ամենը պաշտպանում է մեզ առջևի հարձակումներից: Իսկ ի՞նչն է պաշտպանում մեր թիկունքը: Եսայի մարգարեն հայտնում է մեզ պատասխանը. «…Տիրոջ փառքը պիտի պահի քեզ ետևից» (Եսայի 58.8):

«Նյու լիվինգ» թարգմանության մեջ գրված է, որ Աստծո փառքը «կպաշտպանի քո թիկունքը»: Բայց մենք պետք է մի բան հիշենք. Աստված լրջորեն հավաստիացնում է, որ Իր փառքը չի տա ոչ ոքի (տե՛ս Եսայի 42.8): Երբ մենք մեր կարծիքն ավելի վեր ենք դնում, քան Նրանը, մենք գործում ենք հպարտությամբ և կորցնում մեր թիկունքի պաշտպանությունը, որը Նրա փառքն է, և մեր թիկունքը բաց է մնում:

Երբ ես մտածում եմ, թե որքան անտեղյակ ենք եղել ճշմարիտ խոնարհության և հպարտության մասին, մարմնովս սարսուռ է անցնում: Աստված ասում է. «Իմ ժողովուրդը բնաջինջ եղավ գիտություն չլինելու համար…» (Ովսե 4.6): Մեզանից քանի՞սն են կործանվել կամ պետք է կործանվեն անիրազեկության պատճառով: Եթե տասը լրտեսները և ողջ Իսրայելը շփոթեցին Քաղեբի և Հեսուի խոնարհությունը հպարտության հետ, և եթե Եղիաբը շփոթեց Դավթի խոնարհությունը հպարտության հետ, ապա ի՞նչ ասենք մեր ժամանակվա մասին:

Պատկերացրո՛ւ, թե դու երկար ճանապարհ ես անցնում և չգիտես, որ այդ ճանապարհի որոշ հատվածներում վտանգավոր վայրի կենդանիներ կան: Եթե դու դուրս գաս մեքենայիցդ և որոշես զբոսնել այդ վայրում, ապա քեզ կարող են կտոր-կտոր անել:

Մեկ անգամ Լիզային և ինձ հրավիրել էին Աֆրիկայի սաֆարիներ: Մենք ապրում էինք հրաշալի վայրում՝ հինգաստղանի հյուրանոցում, որտեղ յուրաքանչյուր զույգ իր առանձնատունն ուներ: Ամեն երեկո զին-

ված պահապաններից մեկն ուղեկցում էր մեզ բացօթյա ընթրիքի վայրից դեպի մեր առանձնատունը, որը բավականին հեռու էր: Առաջին օրը երեկոյան պահապանը խստորեն զգուշացրեց մեզ. «Գիշերը ո՛չ մի դեպքում դուրս չգաք, որովհետև ձեզ վրա հեշտությամբ կարող են հարձակվել: Այստեղ կան գիշատիչ գազաններ, որոնք ամբողջ գիշեր որս են անում, և չկան արգելապարիսպներ, որոնք հեռու կպահեն նրանց:

Ի՞նչ կլիներ, եթե մենք չիմանայինք այդ մասին, և ես որոշեի գնալ այնտեղ, որտեղ մենք ընթրել էինք, թեթև կերակուր բերելու համար: Հավանաբար, ես կդառնայի ինչ-որ գազանի կեսգիշերվա կերակուրը: Ես «բնաջինջ կլինեի» գիտություն չունենալու պատճառով: Հիմնվելով այն ճշմարտության վրա, որի մասին մենք խոսեցինք այս գլխում, Ովսեի խոսքերը կարելի է վերծանել այսպես. «Իմ ժողովուրդը բնաջինջ է լինում հպարտության և խոնարհության միջև եղած տարբերությունը չիմանալու պատճառով»:

Ես այնքան ուրախ եմ, որ դու ժամանակ ես տրամադրում, որպեսզի սովորես, թե ինչ է նշանակում զինվել խոնարհությամբ: Բայց կանգ մի՛ առ այստեղ: Քննի՛ր Սուրբ գիրքը և խնդրի՛ր Սուրբ Հոգուն լուսավորել քեզ: Թիկունքից հարված մի՛ ստացիր և մի՛ կործանվիր այս կյանքում գիտություն չունենալու պատճառով: Դու կանչված ես քո ընթացքը բարեհաջող ավարտելու համար: Լսի՛ր Աստծո խոստումը.

> «Խոնարհները նույնպես կավելացնեն իրենց ուրախությունը Տիրոջ մեջ» (Եսայի 29.19, NKJV):

Ինչպիսի՜ հրաշալի խոստմունք: Մենք բոլորս ցանկանում ենք ուրախ լինել: Բայց այս խոստմունքը նույնպես շատ կարևոր է, որովհետև «…Տիրոջ ուրախությունը ձեր զորությունն է» (Նեեմիա 8.10): Զորություն՝ բարեհաջող ավարտի համար. մենք չենք կարող անկոտրում կերպով անցնել մեր ընթացքը և ավարտել այն առանց այս զորության: Աստված խոստանում է, որ մենք կավելանանք ուրախության կամ զորության մեջ, եթե խոնարհություն հագնենք: Նա նաև խոստանում է.

> «Որովհետև այսպես է ասում Բարձրը և Բարձրյալը,
> Հավիտենականության մեջ Բնակվողը, և Որի անունը *Սուրբ է*.
> «Ես բնակվում եմ բարձրում և սուրբ տեղը,
> Բայց լինում եմ *կոտրած և խոնարհ* հոգի ունեցողի հետ,

Որ խոնարհների հոգին կենդանացնեմ,
Եվ կենդանացնեմ սրտով կոտրվածներին»» (Եսայի 57.15):

Երբ Աստված բնակվում է մեր մեջ, մենք անկասկած կարող ենք բարեհաջող կերպով ավարտել մեր ընթացքը: Մենք չպետք է ցանկանանք միայն, որ Աստված այցելի մեզ: Մենք պետք է ցանկանանք, որպեսզի Նա բնակվի մեզ հետ: Այդ դեպքում մենք կունենանք շարունակական զորություն՝ հաստատ մնալու համար:

Այնպես որ, թանկագի՛ն ընթերցող, «խոնարհությո՛ւնը հագեք, որ Աստված ամբարտավաններին հակառակ է կանգնում, բայց խոնարհներին *շնորհք* է տալիս: Խոնարհվե՛ք Աստծո հզոր ձեռքի տակ, որ ձեզ բարձրացնի ժամանակով»:

11

ԳՑԻ՛Ր ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

«...ամենդ իրար հնազանդվելով խոնարհությո՛ւնը հագեք, որ Աստված ամբարտավաններին հակառակ է կանգնում, բայց խոնարհներին *շնորհք* [զորություն] է տալիս: Խոնարհվե՛ք Աստծո հզոր ձեռքի տակ, որ ձեզ բարձրացնի ժամանակով: Ձեր բոլոր հոգսը Նրա վրա գցեք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար»:

Ա Պետրոս 5.5-7

Խոնարհությունը հագնելու գլխավոր դրսևորումը Աստծո առաքելության շուրջ միաբանվելն է, ինչպես վարվեցին Քաղեբն ու Հեսուն: Երբ մենք այդպես ենք վարվում, ապա ցանկացած դժվարություն, որ կանգնած է մեր ներկա վիճակի և մեր աստվածային առաքելության ավարտի միջև, հաղթահարելի է դառնում: Խոնարհությամբ մենք հիմնվում ենք Աստծո զորության վրա կամ Նրա զորավոր ձեռքին: Խոնարհությամբ մենք հավատում ենք Նրա խոսքերին շատ ավելի, քան մեր մարդկային տրամաբանության կամ դատողության թելադրանքին: Խոնարհությամբ մենք քայլում ենք հավատքով, այլ ոչ թե առաջնորդվում մեր զգացմունքներով կամ գիտելիքներով:

Իրականում այսպես ապրելու համար մենք պետք է մեր բոլոր հոգսերը գցենք Նրա վրա. ոչ թե որոշ հոգսերը, այլ՝ *բոլոր* հոգսերը: Ահա թե ինչ արեցին Քաղեբը և Հեսուն՝ մտածելով իրենց կանանց և երեխաների մասին: Որպես հայրեր և ամուսիններ՝ նրանք խորապես հոգում էին իրենց ընտանիքների մասին: Բայց նրանց համար Տիրոջ Խոսքն ավելին էր, քան մարդկային տրամաբանությունը կամ վախը: Նրանք հասկանում էին, որ եթե Տիրոջ կամքն առաջին տեղում դնեին՝ իրենց ընտանիքներն ապահովված և պաշտպանված կլինեին: Քաղեբը և Հեսուն իրականում խոնարհ էին Աստծո առջև, և որպես արդյունք՝ ողջ տիեզերքում նրանց ընտանիքներն ամենաապահով ձեռքերում էին գտնվում:

ԳՑԵԼ ԲՈԼՈՐ ՀՈԳՍԵՐԸ ՆՐԱ ՎՐԱ

Մենք կարող ենք անկոտրում մնալ մեր առաքելության մեջ, եթե գցենք մեր բոլոր հոգսերն Աստծո վրա: Մենք չենք կարող առաջ շարժվել՝ անհարմար և ծանր բեռներ կրելով: Աստվածաշունչը կարգադրում է. «Եկե՛ք *ազատվենք յուրաքանչյուր բեռից, որ դան*դաղեցնում է մեր ընթացքը… Եվ եկե՛ք համբերությամբ վազենք այն ընթացքը, որն Աստված դրել է մեր առջև» (Եբր. 12.1, NLT):

Ծանրությունները (բեռները) դանդաղեցնում են մեր ընթացքը և թույլ չեն տալիս, որ մենք այն բարեհաջող ավարտենք: Կարո՞ղ ես արդյոք մարաթոնյան վազք անցնել, երբ յուրաքանչյուր ազդրիցդ քսան կիլոգրամանոց ծանրություն կախված լինի: Հազիվ թե դու կարողանաս վազել, էլ ի՞նչ խոսք ընթացքն ավարտելու մասին:

Ամենամեծ ծանրությունը, որ թույլ չի տալիս մեզ առաջ գնալ, մեր հոգսերն ու մտահոգություններն են: Հենց սա էր ծանրացրել տասը լրտեսներին, որոնք չկարողացան բարեհաջող ավարտել իրենց ընթացքը: Նրանց ծանր հոգսն այն մասին, որ իրենց կանայք և երեխաները կարող են վտանգի ենթարկվել, թույլ չտվեց նրանց շարժվել դեպի Աստծո խոստմունքը և կատարել Նրա կամքը:

Կարևոր է նշել, որ մեր ընտանիքը ծանրություն չէ մեզ համար. ծանրություն է դառնում այն ժամանակ, երբ մեր ընտանիքի մասին *հոգս ենք* անում: Եթե մենք կասկածում ենք, թե արդյոք Աստված կարող է կամ ցանկանում է ապահովել ու պաշտպանել մեզ, ապա մենք վիրավորում ենք Նրան՝ չվստահելով Նրա անկեղծությանն ու զորությանը: Հետաքրքիր է՝ ի վերջո Քաղեբն ու Հեսուն ապացուցեցին, որ իրենց սերնդակիցները սխալ էին, քանի որ քառասուն տարի անց նրանք իսկապես գնացին պատերազմելու նույն քանանացիների դեմ, և իրենց ընտանիքները որևէ կերպով չվնասվեցին: Փաստորեն, այդ պատերազն օրհնեց իրենց կանանց և երեխաներին, քանի որ նրանք ստացան պտղաբեր երկիրը՝ որպես ժառանգություն:

Մտորի՛ր այս արդյունքների մասին: Տասը լրտեսները Աստծո առաջնորդությանը վստահելու փոխարեն ձգտում էին պաշտպանել իրենց ընտանիքները: Արդյունքում նրանք մնացին անապատում. դա էր նրանց

ժառանգությունը: Անկասկած՝ սա անցանկալի ավարտ էր: Քառասուն տարվա ընթացքում նրանք պակասություն ունեցան և դժվարություն կրեցին: Բայց մյուս երկու առաջնորդները հավատացին և հնազանդվեցին Աստծո Խոսքին: Նրանք իրենց ընտանիքների հոգսը հանձնեցին Աստծուն, և նրանց ընտանիքները ժառանգեցին Խոստմունքի երկիրը՝ այն երկիրը, որ «կաթ ու մեղր էր բխում»: Հենց դա դարձավ նրանց նախասահմանությունը:

Մեր կյանքում գալիս են ժամանակներ, երբ յուրաքանչյուրը պետք է ընտրություն անի ապահովության և Աստծո կոչման միջև: Արդյոք մենք կընտրենք այն ճանապարհը, որն *ակնառու* կդարձնի մե՞զ, թե՞ կփորձենք ապրել հարմարավետ և ապահով կյանքով: Եթե դու ընտրես ինքնապահպանման ճանապարհը, ապա Աստծո կոչումը քո կյանքում չի կատարվի: Միգուցե քեզ հաջողվի ապահովության զգացում ձեռք բերել, բայց ի վերջո՝ Քրիստոսի դատաստանի գահի առջև դու կհասկանաս, որ թողել ես կյանքի առատությունը և լիությունը հանուն ժամանակավոր հարմարավետության:

> Յուրաքանչյուրը պետք է ընտրություն անի ապահովության և Աստծո կոչման միջև:

Աստծո Խոսքը կրկին և կրկին հաստատում է այս փաստը: Եթե դու ցանկանում ես անցնել այն ընթացքը, որ Աստված ծրագրել է քեզ համար, ապա պետք է Նրան տաս քո հոգսերի և մտահոգությունների ծանրությունը: Նրա ճանապարհը լի է արկածներով և հավատքով, իսկ վարձատրությունը շատ ավելին է, քան ապահովության և հարմարավետության զգացումը, որը, հակառակ դեպքում, ձեռք կբերես: Վերցրո՛ւ քո վրայից այն ծանրությունը, որը դանդաղեցնում է ընթացքդ, և հոգսերդ գցի՛ր Նրա վրա:

ՄԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Թո՛ւյլ տուր կիսվել որոշ ծանրություններով, որոնք ես պետք է գցեի վրայիցս իմ ընթացքն անցնելու ժամանակ: Մանուկ հասակից ես սկսեցի հասկանալ, թե որքան կարևոր է, որպեսզի տղամարդը, որպես հայր

և որպես ամուսին, ապահովի իր ընտանիքը: Իմ հայրը սրա հրաշալի օրինակն էր: Նա սովորեցնում էր ինձ, որ խնայված դրամը վաստակած դրամ է: Մանկությունից իմ մեջ ձևավորում էին ամուսնու և հոր դերը, ով ապահովում և պաշտպանում է իր ընտանիքը: Ես ցանկանում էի օդաչու դառնալ, բայց հայրս չխրախուսեց դա, որովհետև այդ ժամանակ օդաչու լինելն ապահով աշխատանք չէր: Հայրս խորհուրդ տվեց ինձ կառուցել ավելի կայուն կարիերա: Ես ճարտարագիտություն սովորեցի և 1981թ.-ին աշխատանքի անցա «Ռոքվել ինտերնեյշնլ» ընկերությունում:

Աշխատելով կրտսեր ինժեների պաշտոնում՝ ես շատ բարձր աշխատավարձ ունեի: Հաճելի էր, որ ես կարող էի պատշաճ կերպով ապահովել իմ կնոջը: Ես հետևում էի այն օրինակին, որ տեսել էի մանկուց: Սակայն ես ներքին պայքար ունեի. ես Աստծուն ծառայելու ուժգին կանչ էի զգում: Ես զգում էի այդ կանչը տարիներ շարունակ, բայց չէի պատկերացնում, թե ինչպես կարող եմ կնոջս և մեր երեխաներին ապահովել ծառայությունից ստացված եկամուտով: Այնպես որ Լիզան և ես մի ծրագիր կազմեցինք:

Ես մեկ այլ աշխատողից իմացա, որ մեր ընկերությունն անչափ մեծ աշխատավարձ է վճարում այն աշխատողներին, որոնք ընկերության համար աշխատում են այլ երկրներում, հատկապես՝ Մերձավոր Արևելքում: Այնպես որ ես գնացի մեր կադրերի բաժնի պետի մոտ և հայտ ներկայացրեցի Սաուդյան Արաբիա տեղափոխվելու համար: Լիզան և ես մտածեցինք, որ մենք կարող ենք մի քանի տարի այնտեղ ապրել, խնայել ավելորդ գումարը, վերադառնալ Ամերիկա, ամբողջովին վճարել մեր համեստ տան համար և անցնել ծառայության:

Խնդիրն այն էր, որ մեր ծրագրերը լիովին հիմնված էին մեր կարողությունների վրա:

Մեկ օր մի երիտասարդ ծառայող, ով մի քանի տարի է ճանաչում էր ինձ և Լիզային, երկու ժամ հանդիմանեց ինձ: Ընդհանուր առմամբ նա ասաց հետևյալը. «Զո՛ն, Աստված կոչում ունի քեզ համար, իսկ դու ոչինչ չես ձեռնարկում այդ ուղղությամբ: Եթե դու մնաս նույն ճանապարհի վրա, որտեղ հիմա ես, ապա պարզապես ծեր ինժեներ կդառնաս, ով բաց է թողել Աստծո նախասահմանությունը: Ես ցնցվեցի նրա խոսքերից, սակայն գիտեի, որ նա ճիշտ է: Այդ օրը ես տուն եկա և ասացի Լիզային. «Ես

Եկեղեցում անցնելու եմ աշխատանքի. անելու եմ ցանկացած գործ, որ կառաջարկեն ինձ: Ես կմտնեմ առաջին իսկ դռնով, որ կբացվի: Դու ինձ հե՞տ ես»:

Նա ասաց. «Ես քեզ հետ եմ»:

Մի քանի ամիս ես ջանասիրաբար աղոթում էի, որպեսզի Աստված դուռ բացեր ինձ համար ծառայության մեջ մտնելու համար: Միևնույն ժամանակ ես հնարավորինս ծառայում էի մեր եկեղեցում՝ որպես կամավորական: Ես դարձա կարգ ու կանոնի ծառայող, միացա եկեղեցու տեղական բանտերի ծառայությանը և նույնիսկ թենիս խաղալ էի սովորեցնում իմ հովվի երեխաներին (քոլեջում սովորելու ընթացքում, ես երեք տարի լողի և թենիսի ակումբում թենիսի մարզիչ եմ աշխատել):

Մի քանի ամիս անց՝ 1983թ.-ին, ինձ համար դուռ բացվեց ամբողջությամբ ծառայության մեջ մտնելու համար: Ես թողեցի իմ աշխատանքը «Ռոքվել» ընկերությունում և սկսեցի աշխատել մեր տեղական եկեղեցում: Իմ նոր աշխատանքի աշխատավարձն այնքան քիչ էր, որ հայրս մտածեց, թե ես ցնորվել եմ (ինչպես նաև «Ռոքվել» ընկերության իմ տնօրենը): Ընկերներս վիճարկում էին իմ որոշումը, իսկ ես պայքարում էի այն մտքերի հետ, թե ինչպես եմ ապահովելու մեր ընտանիքը: Նայելով մեր հաշիվներին՝ ես տեսնում էի, որ մեր ամսական եկամուտն ավելի ցածր էր, քան ընդհանուր ծախսերը:

Բայց ես գիտեի, որ այդ աշխատանքն Աստծո կամքով էր: Այնպես որ Լիզան և ես մեր ապահովության հոգսը հանձնեցինք Աստծուն: Մենք երբեք քաղցած չենք մնացել և միշտ ունեցել ենք բավարար միջոցներ մեր կարիքները հոգալու համար: Ժամանակ առ ժամանակ մենք տեսնում էինք, թե ինչպես է Աստված հրաշքով հոգում մեր կարիքները այն դեպքում, երբ մենք ոչ ոքի չէինք պատմել դրանց մասին: Լիզան և ես մեր կարիքները ծածուկ հայտնում էինք Աստծուն, հակառակվում էինք հուսահատությանը Աստծո Խոսքով, որ գալիս էր թշնամու կողմից, և ընդունում հրաշքը հրաշքի ետևից:

Մեկ անգամ մենք պետք է որոշեինք՝ տասանորդը տա՞լ, թե՞ մթերք գնել: Մենք երկար չմտածեցինք այդ մասին, որովհետև արդեն որոշել էինք, որ մեր կյանքում Աստված ամեն ինչում առաջին տեղում է լինելու: Այնպես որ ես զոհաբերեցի մեր աշխատավարձի տասը տոկոսը, ինչը

նշանակում էր, որ մենք փող չունեինք մթերքի համար, որովհետև մնացած իննսուն տոկոսը պետք է ծախսվեր հաշիվները վճարելու և այլ անկանխատեսելի ծախսերի համար, որոնցից մեկը մեր մեքենան էր:

Այդ ժամանակ մենք ընդամենը մեկ մեքենա ունեինք, որի հոսանքի գեներատորն անսարք էր: Ես այնքան զբաղված էի եկեղեցում, որ այն նորոգելու համար ժամանակ չէի ունենում: Բացի այդ՝ ես վարում էի թեթև «ֆուրգոն», որը եկեղեցունն էր, այնպես որ տրանսպորտային միջոց ունեի աշխատանքի գնալու և տուն վերադառնալու համար: Մեր մեքենան պարզապես անուշադրության մատնվեց այն բանից հետո, երբ հոսանքի գեներատորը դադարեց գործել, և ետևի անվադողը նստեց: Վատն այն էր, որ մեր պահեստային անվադողը նույնպես օգտագործման պիտանի չէր: Մենք ապրում էինք Դալլասում՝ Տեխասում, և այդ ամռանը շատ շոգ էր: Մի օր ես վերադարձա աշխատանքից և տեսա, որ մեր մեքենայի պատուհաններից մեկը կոտրվել է և վերածվել է հարյուրավոր փոքրիկ կտորների: Մեքենայի ներսում ջերմաստիճանն այնքան էր բարձրացել, որ օդն ընդարձակվել էր և կոտրել պատուհաններից մեկը:

Հուսահատությունը գնալով ավելանում էր: Ես դժվար կացության մեջ էի: Ես չէի կարողանա վարել մեքենան, նույնիսկ եթե նորոգեի հոսանքի գեներատորը, որովհետև անվադող չունեի: Մենք ծածկեցինք այդ պատուհանը աղբի տոպրակով և այն ամրացրեցինք կպչուն ժապավենով, բայց ես գիտեի, որ հորդ անձրևի դեպքում այդ ծածկոցը կպոկվեր և մեքենայի մեջ ջուր կլցվեր: Որոշ ժամանակ անց խոնավությունը կարող էր փտեցնել մեքենայի ներսը: Ուստի այլևս չէի կարող հետաձգել այդ մեքենայի նորոգումը: Ես զանգահարեցի մի քանի նորոգման կետեր, բայց նրանց ասած գները չափազանց բարձր էին մեզ համար: Մենք պարզապես փող չունեինք մեր մեքենան նորոգելու համար: Եթե ես դեռ աշխատեի որպես ինժեներ, ապա հեշտությամբ կհոգայի այդ խնդիրը: Ես ինքնախղճահարություն էի զգում և ասես տեսնում էի, թե ինչպես է իմ մեքենան փտում ավտոկայանատեղիում: Ես հասկանում էի, որ պետք է պայքարեմ այդ մտքերի դեմ:

Ի վերջո ես հոգնեցի այդ մտքերից և գտա մի առանձին վայր Աստծո հետ հանիդպելու համար ու գոչեցի. «Տե՛ր, Դու ասացիր, որ ես պետք է իմ բոլոր հոգսերը Քեզ վրա գցեմ: Այնպես որ ես այս մեքենայի հոգսն ամբող-

ջությամբ հանձնում եմ Քո ձեռքերի մեջ: Այդ հոգսն այլևս իմը չէ, այն Քոնն է: Եթե այդ մեքենան փտի, դա իմ մեղավորությունը չի լինի, որովհետև ես արդեն չպետք է մտահոգվեմ դրա համար: Ես ասում եմ սա Քո Խոսքի հիման վրա: Իսկ հիմա շնորհակալություն այս հարցի լուծման համար»:

Ես այնքան բարձր և հաստատուն կերպով էի ասում այդ խոսքերը, որ իրականում նկատի ունեի այն, ինչ ասում էի: Եվ այն ժամանակվանից, ինչ հոսանքի գեներատորը շարքից դուրս էր եկել, առաջին անգամ ես իմ ներսում սկսեցի խաղաղություն զգալ: Աստծո Խոսքը հենց սա է խոստանում.

> «Մի՛ անհանգստացեք ոչնչի համար, փոխարենը՝ աղոթե՛ք ամեն ինչի համար: Պատմե՛ք Աստծուն, թե ինչի կարիք ունեք, և գոհացե՛ք Նրանից ամեն ինչի համար, որ Նա արել է: Եթե դուք անեք սա, ապա կվերապրեք Աստծո խաղաղությունը, որը շատ ավելի հրաշալի է, քան մարդկային միտքը կարող է հասկանալ: Նրա խաղաղությունը կհսկի ձեր սրտերը և մտքերը, քանի որ դուք ապրում եք Քրիստոս Հիսուսում» (Փիլիպեցիների 4.6,7, NLT):

Դրանից հետո ես հարձակվեցի թշնամու վրա: Ես խոսեցի խստորեն և զայրույթով. «Սատանա՛, լսի՛ր ինձ: Իմ Աստված՝ իմ Հայրը, հոգում է իմ բոլոր կարիքներն Իր հարստության չափով: Ես չունեմ ոչ մի կարիք, որովհետև ես նախ՝ փնտրում եմ Նրա արքայությունը և այն ամենը, ինչի կարիք որ ունեմ, և կտրվի ինձ: Այնպես որ ես հակառակվո՛ւմ եմ քեզ Հիսուսի անունով և հրամայո՛ւմ եմ քեզ քաշել քո կեղտոտ ձեռքերը մեր ֆինանսներից և մեր մեքենայից»:

Ես զգացի, որ ինչ-որ բան կոտրվեց: Հանկարծ ես սկսեցի ծիծաղել: Ես մտածում էի. *«Մի՞թե խելքս թռցրել եմ»*: Սակայն այդ ուրախությունն իմ սրտի խորքից էր գալիս: Ես գիտեի, որ դա Տիրոջ ուրախությունն է, որը հենց այն զորությունն էր, որի կարիքը ես ունեի: Ես գիտեի, որ ունենալով այդ զորությունը՝ ես կարող եմ անկոտրում կերպով շարունակել իմ ընթացքը: Այժմ իմ հոգսն Աստծո զորավոր ձեռքում էր, իսկ թշնամին կապված էր: Ես պարզապես սպասում էի, թե ինչպես էր Աստված լուծելու այդ խնդիրը:

Անմիջապես հաջորդ օրը Լիզայի ընկերուհիներից մեկն այցելեց մեզ և տեսավ վնասված մեքենան, որը մեր տան մոտի ավտոկայանատեղիում էր. այն իսկապես որ ողբալի վիճակում էր: Նա ասաց. «Լի՛զա, ես մի ընկեր ունեմ, ով ավտոմեխանիկ է: Կցանկանա՞ս, որպեսզի ես զանգահարեմ նրան և տեսնեմ, թե ինչ կարող է նա անել քո և Ջոնի համար»:

Այդպիսով, նրա ընկերն ամբողջովին նորոգեց մեքենան և մեզանից անչափ փոքր գումար վերցրեց: Մենք տեսանք, թե ինչպես Աստված հոգաց այդ կարիքը զարմանալի կերպով, և դա զորացրեց մեզ:

Բայց քանի որ մենք տվել էինք մեր տասանորդը, մենք փող չունեինք մթերք գնելու համար, իսկ ես հաջորդ գումարը ստանալու էի երկու շաբաթ հետո: Մի երեկո մենք նստեցինք մեր մեքենայի մեջ և միասին լաց եղանք: Մեր արցունքներն անհավատության արցունքներ չէին, այլ՝ հուսահատության: Մենք չէինք հասկանում, թե ինչու պետք է ամեն ինչի համար պայքարենք, երբ մյուսները հանդարտ և ապահով կյանք են վարում: Ինչպես Պողոս առաքյալի դեպքում՝ մենք չէինք տեսնում այն աշխատանքը, որ կատարվում էր մեր փորձությունների ժամանակ: Մենք հոգնել էինք այդ փորձություններից: Դրանք զայրացնում էին մեզ: Մեզ թվում էր, թե դրանք պարզապես ժամանակի կորուստ են: Մենք չէինք գիտակցում, որ Աստված զորացնում էր մեզ Իր շնորհքով, որպեսզի մենք կարողանայինք պայքարել ավելի մեծ դժվարությունների դեմ և ավելի շատ փառք բերեինք Նրան: Մի քիչ արցունք թափելուց հետո ես և Լիզան կրկին հռչակեցինք, որ հավատում ենք Աստծո Խոսքին և շարունակեցինք առաջ քայլել՝ դեպի մեր աստվածային առաքելությունը:

Երկու օր անց, Սան Անտոնիոյից մի զույգ, որն այցելել էր մեր եկեղեցի, ում մենք հանդիպել էինք միայն այդ շաբաթվա ընթացում, մոտեցավ ինձ: Նրանք ասացին. «Ձո՛ն, չգիտենք՝ ինչու, բայց Աստված մեզ շարունակ ասում է, որ սա քեզ տանք»: Նրանք մի ծրար տվեցին ինձ, որի մեջ 200 դոլար էր: Ես և Լիզան ապշել էինք: Բացի Աստծուց՝ ոչ ոք չգիտեր մեր իրավիճակի մասին. Նա մեկ անգամ ևս մատակարարեց մեզ:

ՀՈԳՍԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿ

Տարիներ անց, որոնց ընթացքում մենք հոգևորապես աճում և հասունանում էինք, ես նշանակվեցի որպես երիտասարդական հովիվ Ֆլորիդայի մի շատ մեծ եկեղեցում: Մենք բախվեցինք հերթական դժվարության հետ, քանի որ մեր աշխատավարձը կրկին կրճատվեց: Այդ ժամանակ մեր որդին արդեն տասնութ ամսական էր, այնպես որ մեզ համար ավելի դժվար էր հոգալ կարիքները: Կրկին մենք մեր հոգսն հանձնեցինք Աստ-

ծուն, հակառակվեցինք թշնամուն և հրաշքների ականատես եղանք: Ես շարունակում էի կենտրոնանալ իմ առաքելության վրա, իսկ Աստված մատակարարում էր կրկին ու կրկին, հաճախ ուշագրավ ձևերով:

1988թ.-ի սեպտեմբերին Աստված ցույց տվեց ինձ, որ ժամանակն է անցնել ծառայության հաջորդ փուլին՝ ճանապարհորդող քարոզիչ դառնալու համար: Ես հնազանդվել էի իմ հովվի իշխանությանը, այնպես որ որոշել էի ոչինչ չասել և սպասել, որպեսզի Աստված ցույց տար նրան այն, ինչ պետք է լիներ ինձ հետ: Լիզայից և մի ընկերոջից բացի, ով ապրում էր այլ նահանգում, ուրիշ ոչ ոք չգիտեր, թե Աստված աղոթքի մեջ ինչ է ցույց տվել ինձ:

1989թ.-ի փետրվարին իմ հովիվը եկավ աշխատողների հավաքույթին և ասաց, որ նախորդ երեկոյան տեսիլք է տեսել: Նա պատմեց, որ ես և Լիզան թողնելու ենք աշխատանքը եկեղեցում, որպեսզի ճանապարհորդող քարոզիչներ դառնանք: Լսելով նրան՝ ես սկսեցի լաց լինել: Սուրբ Հոգին հաստատեց Իր կամքը, ինչպես որ Նա արեց Բառնաբասի և Պողոսի դեպքում (տե՛ս Գործք 13.1-5):

Վեց ամիս անց՝ 1989թ.-ի օգոստոսին, երեք շաբաթվա ընթացքում ես հրավերքներ ստացա յոթ եկեղեցիներից, որտեղ պետք է քարոզեի: Ես հայտնեցի այդ մասին իմ հովվին, և նա ժպտաց ու ասաց. «Տերը դա մեզ ցույց էր տվել. դու ճիշտ ճանապարհին ես»: Հետո նա ասաց. «Զո՛ն, ճանապարհորդիր աշնան ընթացքում այնքան, որքան կարող ես. եկեղեցին կշարունակի վճարել քո աշխատավարձը մինչև այս տարվա վերջ: Հունվարի մեկից դու ինքդ կհոգաս քո ֆինանսների մասին»:

Հաջորդ մի քանի ամիսների ընթացքում ես այցելեցի այդ յոթ վայրերը և լավ ծառայություններ անցկացրեցի, բայց նոր հրավերքներ չկային: Շուտով ես պետք է ազատվեի աշխատանքից, բայց ինձ ոչ մի տեղից չէին կանչում: Իմ հովիվը նկատեց դա և աշխատանքից ազատվելուց երկու ամիս առաջ նա ինձ ուշագրավ երաշխավորագիր տվեց, ինչպես նաև Ամերիկայում գտնվող վեց հարյուր եկեղեցիների հասցեներ, որտեղ ինքը քարոզել էր (նա շատ հայտնի ծառայող է և՛ Ամերիկայում, և՛ ամբողջ աշխարհում):

Ես ծրարների վրա անմիջապես սկսեցի լրացնել այն հասցեները, որ նա տվել էր ինձ: Ես պատրաստվում էի ուղարկել նրա նամակը և մեկ

նամակ էլ իմ կողմից՝ բոլոր վեց հարյուր եկեղեցիներին: Ես լրացրել էի մոտ քառասուն ծրար, երբ լսեցի, թե ինչպես Սուրբ Հոգին ասաց ինձ. *«Որդի՛ս, ի՞նչ ես անում»*:

«Ես տեղեկացնում եմ այդ հովիվներին, որ կարող եմ գնալ նրանց եկեղեցիները»,- պատասխանեցի ես:

«Այդպես դու դուրս կգաս Իմ կամքից»:

«Բայց Աստվա՛ծ»,- հանկարծակի ասացի ես,- «ոչ ոք չի ճանաչում ինձ»:

«Ե՛ս եմ ճանաչում քեզ. վստահի՛ր Ինձ»:

Այդ րոպեին ես պետք է որոշում կայացնեի. ես կարող էի ընտրել *խոնարհությունը*՝ հնազանդվելով այն խոսքին, որ լսեցի Աստծուց՝ սրտումս, կամ կարող էի ապահովել ինքս ինձ իմ սեփական մարկետինգային ջանքերով: Այլ խոսքերով՝ արդյո՞ք ես իմ հոգսերն ու մտահոգությունները կտայի Նրան, թե՞ ինքս կփորձեի լուծել դրանք: Ես անմիջապես որոշում կայացրեցի: Մինչև իմ միտքը կամ զգացմունքները կկարողանային տարհամոզել ինձ, ես պատռեցի այդ քառասուն լրացված ծրարները: Ես մտածեցի. *«Կա՛մ ես լսել եմ Աստծո ձայնը, կա՛մ խելքս թռցրել եմ»*:

Ժամանակն անցնում էր: Արդեն դեկտեմբերի կեսերն էր, իսկ ես ընդամենը երկու հրավերք ունեի: Դրանցից մեկը հունվարի առաջին շաբաթվա ընթացքում էր, Հարավային Կարոլինայում՝ մի փոքրիկ եկեղեցում, որը ծառայություններ էր անցկացնում սգո սրահում: Մյուսը փետրվարի վերջում էր Թենեսիի բարձունքներում գտնվող մի փոքրիկ եկեղեցում:

Մեր հովիվն անչափ մտահոգված էր մեզ համար: Նա պատրաստվում էր իր ամենօրյա հեռուստատեսային հաղորդումը սկսել, որը հետագայում հեռարձակվեց ամբողջ աշխարհով: Լիզան աշխատել էր որպես հեռուստատեսային պրոդյուսեր, և մեր հովիվը նրան առաջարկեց պրոդյուսերի աշխատանք իր նոր հաղորդման համար՝ ժամում 45 դոլար աշխատավարձով: Ես և Լիզան այնքա՜ն էինք թեթևացել և ոգևորվել: Այդ աշխատանքը կապահովեր մեզ անհրաժեշտ գումարով, մինչև իմ ճանապարհորդող քարոզչի ծառայությունը կսկսվեր:

Բայց մի քանի օր անց, երբ աղոթում էի, Սուրբ Հոգին ևս մեկ անգամ խոսեց սրտիս հետ. *«Որդի՛ս, եթե Լիզան աշխատի որպես հեռուստատեսային պրոդյուսեր, ապա Ես կկրճատեմ այն գումարի չափը, որը նա վաստակելու է այն զոհաբերություններից, որոնք հավաքվելու են քո ճանա-*

պարհորդային ծառայության համար: Ես չեմ ցանկանում, որպեսզի նա աշխատի հովվի մոտ: Ես ցանկանում եմ, որպեսզի նա լինի քո կողքին»:

Ես ցնցվել էի: Ես այս մասին պատմեցի Լիզային և, ի զարմանս ինձ, նա համաձայնեց: Նա նույնպես խոսք էր ստացել այդ մասին՝ աղոթքի ժամանակ: Մենք սիրով մերժեցինք մեր հովվի առաջարկը, բայց նա շարունակում էր մտահոգվել մեզ համար:

Դեկտեմբերն արդեն ավարտին էր մոտենում, և եկեղեցուց տրվող աշխատավարձը դադարեցվելու էր, իսկ ես միայն երկու հրավերք ունեի: Մեր հովիվը կրկին մոտեցավ ինձ. «Ջո՛ն, կիրակի առավոտյան՝ մեր հեռարձակվող ծառայության ընթացքում, ես կհրավիրեմ քեզ բեմ և բոլոր հովիվներին, ովքեր դիտում են մեզ ամբողջ Ամերիկայում, կհայտարարեմ, որ դու ճանապարհորդող քարոզչի ծառայություն ես սկսում և կարող ես գնալ ու քարոզել նրանց եկեղեցիներում: Ավելին՝ մեր եկեղեցին ամսական օգնություն է տրամադրելու ձեզ»:

Ես կրկին երջանիկ էի: Այս ծառայողը հավանաբար ամենահայտնի հովիվն էր ամբողջ Ամերիկայում: Միլիոնավոր մարդիկ դիտում էին նրա հաղորդումը: Ես համոզված էի, որ Աստծո կամքն էր այդպիսով առաջնորդել ինձ դեպի այն դաշտը, որի համար ես կանչված էի:

Բայց, մի քանի օր հետո, երբ աղոթում էի, Սուրբ Հոգին կրկին խոսեց. *«Որդի՛ս, քո հովիվը չի հայտարարի քո մասին եկեղեցու ծառայության հեռարձակման ժամանակ, և եկեղեցին ամսական գումար չի տրամադրի քեզ»*:

Ես սկսեցի հուսահատվել. «Ինչո՞ւ ո՛չ,- ընդդիմացա ես, - մեր հովիվն ասաց, որ կանի դա»:

Ես անմիջապես լսեցի սրտումս. *«Որովհետև Ես թույլ չեմ տա, որ նա դա անի, իսկ նա հնազանդ է Ինձ»*:

«Իսկ ինչո՞ւ թույլ չես տա, որ անի այն, ինչ խոստացել է ինձ»:

Այդ ժամանակ Տերն ասաց այնպիսի բան, որ ես երբեք չեմ մոռանա. *«Որովհետև, եթե նա դա անի, դժվարությունների հանդիպելիս դու կվազես նրա, այլ ոչ թե Ինձ մոտ»*:

Իհարկե, մեր հովիվն այդպես էլ չներկայացրեց ինձ հեռուստադիտողներին: Նա երբեք չհիշատակեց իմ ծառայության մասին և չտվեց ինձ ֆինանսական աջակցություն: Եվ ես այնքա՜ն ուրախ եմ, որ նա չարեց ո՛չ մե-

կը, ո՛չ էլ մյուսը: Դա ստիպեց ինձ հանձնել հոգսերս Աստծուն և այլ միջոցներ փնտրելու փոխարեն՝ աղոթել ու պայքարել իմ կարիքների համար:

Արդեն հունվարն էր, և եկեղեցին դադարեց վճարել մեր աշխատավարձը: Ես և Լիզան ընդամենը 300 դոլար ունեինք: Մենք արդեն երկու երեխա ունեինք՝ երեքուկես տարեկան Էդիսոնը և ինը ամսեկան Օսթինը: Մենք պետք է ամսական 1000 դոլար վճարում կատարեինք մեր տան համար և 200 դոլար՝ մեր մեքենայի համար: Ես չգիտեի, թե որտեղից էին գալու միջոցները: Ես այնպես էի աղոթում, ասես դա կյանքի ու մահվան հարց լիներ: Այդ աղոթքների շնորհիվ ես ավելի մոտեցա Սուրբ Հոգուն:

Մենք տեսանք, թե ինչպես էին հրաշքով դռներ բացվում մեզ համար: Նախ ես քարոզեցի այն եկեղեցում, որը հավաքվում էր սգո սրահում. մեկը մյուսի ետևից մենք զորավոր ծառայություններ անցկացրեցինք: Դրանք երկարաձգվեցին ևս մեկ շաբաթով: Լուրերը տարածվեցին, և մեկ այլ հովիվ, ով ապրում էր Կոլումբիայում՝ Հարավային Կարոլինայում, այցելեց այդ ծառայություններին: Վերջին ծառայության ժամանակ նա խնդրեց ինձ այցելել իր եկեղեցի: Ես և Լիզան գնացինք նրա եկեղեցի, իսկ այնտեղից՝ հաջորդը: Այդպես տևեց որոշ ժամանակ:

Երկու ամիս անց ես կրկին հրավերքներ չունեի: Մենք մեծ ֆինանսական ճնշման տակ էինք, բայց հասցնում էինք վճարել բոլոր հաշիվները: Մի առավոտ ես դուրս եկա տանից և գնացի աղոթելու: Ես աղաղակեցի. «Աստվա՛ծ, Հա՛յր իմ, ես անում եմ այն, ինչ Դու ասել ես: Եթե Դու չտաս ինձ ծառայություններ և միջոցներ իմ ընտանիքի համար, ապա ես մթերային խանութում փաթեթավորողի աշխատանք կգտնեմ և կպատմեմ մարդկանց, որ Դու չկարողացար ապահովել ինձ: Հա՛յր, ես հրաժարվում եմ վաճառել ինքս ինձ: Եթե Դու ես կանչել ինձ, ապա Դու դռներ կբացես: Ես ամբողջովին հանձնում եմ այս հոգսը քո ձեռքերի մեջ»:

Հետո ես շրջվեցի դեպի հյուսիս և հրամայեցի, որ դռներ բացվեն: Հետո շրջվեցի հարավ, արևելք և արևմուտք՝ ամեն անգամ հրամայելով, որ դռներ բացվեն: Դրանից հետո ես հրամայեցի թշնամուն հեռանալ՝ ասելով, որ նա չի կարող խանգարել մեզ անցնելու այն ճանապարհը, որն Աստված պատվիրել է:

Այդ աղոթքից կարճ ժամանակ անց, Միչիգանում գտնվող մի եկեղեցի հրավիրեց ինձ ծառայությունների, որոնք տևելու էին չորս օր: Այն-

տեղ իսկական Աստծո շարժ սկսվեց: Մարդիկ 150 կիլոմետր հեռավորությունից գալիս էին ծառայությունների: Եկեղեցու դահլիճը լեփ-լեցուն էր ամեն երեկո: Ես զանգահարեցի Լիզային. նա մեր որդիների հետ լողավազանում էր, որը գտնվում էր իմ ծնողների տան մոտ՝ Ֆլորիդայում: Ես պատմեցի նրան, թե ինչպես են ընթանում ծառայությունները, և որ նրանք դեռ շարունակվում են, և ասացի, որ ինքնաթիռի տոմսեր եմ ուղարկում, որպեսզի նա և երեխաները միանան ինձ՝ Միչիգանում:

Երբ ես խոսում էի Լիզայի հետ, նրա կողքին մի հովիվ կար նստած: Նա լսել էր մեր խոսակցությունը, այսինքն՝ այն, ինչ Լիզան էր խոսում: Նա մոտենում է կնոջս և ասում. «Ներողություն եմ խնդրում, բայց ես լսեցի, թե ինչպես էիք դուք խոսում ձեր ամուսնու հետ. Նյու Յորքում ես եկեղեցու հովիվ եմ, և իմ եկեղեցում հազար հինգ հարյուր անդամ կա: Ես այնքա՜ն եմ ցանկանում, որպեսզի մեր եկեղեցում Աստծո շարժ սկսվի: Տերն ասաց ինձ, որ ես հրավիրեմ ձեր ամուսնուն»:

Այնպես որ, Միչիգանում ծառայություններն ավարտվելուց հետո, մենք գնացինք Նյու Յորք: Այս եկեղեցում նույնպես զորավոր ծառայություններ սկսվեցին: Մենք հաճախ էինք վերադառնում այդ եկեղեցի: Այսպես շարունակվեց շաբաթը շաբաթվա ետևից: Փաստորեն մեր ծառայության առաջին չորս տարվա ընթացքում մենք այդպես էլ ոչ մի նամակ չգրեցինք և ոչ էլ զանգահարեցինք որևէ եկեղեցի: Մենք ստանում էինք հրավերք հրավերքի ետևից ճիշտ այնպես, ինչպես ես արդեն նկարագրեցի:

ՇԱՐՈՒՆԱԿԱԲԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Կրկին կասեմ, որ ես դաստիարակվել եմ այնպիսի մտածելակերպով, որ տղամարդու համար ամենակարևոր բանն իր ընտանիքն ապահովելն է: Տիմոթեոսի առաջին թղթի 5.8-ը հաստատում է այս համոզմունքը՝ հայտարարելով, որ եթե ես չապահովեմ իմ ընտանիքը, ապա ես ավելի վատն եմ, քան անհավատ մարդը: Ընտանիքն ապահովելը ճիշտ և աստվածային գործ է: Սակայն եթե ես դարձնեի այդ հոգսն իմ առաջնային խնդիրը, ապա երբեք չէի հնազանդվի Աստծուն և չէի մտնի իմ կոչման մեջ: Այդ մտահոգությունը կամ հոգսը կդառնար այն բեռը, որը մեծապես կխոչընդոտեր իմ ընթացքը:

Մի քանի տարվա ընթացքում ճանապարհորդելով և ծառայելով եկեղեցիներում՝ ես հնարավորություն ունեցա տեսնել ծառայողների, ովքեր այլ կերպ էին վարվել. նրանք իրենց ապահովված լինելու հոգսն ամբողջովին չէին տվել Աստծուն: Ինչպես տասը լրտեսները, այնպես էլ նրանք, ցանկանում էին իրենց ապահովել սեփական ուժերով: Ես տեսել եմ, թե ինչպես են այդպիսի ծառայողները վաճառում իրենց, ակնարկներ անում տարբեր մարդկանց և քաղաքական խաղեր խաղում: Ես տրտմում էի, քանի որ գիտեի, որ նրանք իսկապես կանչված էին Աստծուց, սակայն կարճ ժամանակ անց նրանք վաճառել էին իրենց և հավատարիմ չէին մնացել Նրան: Նույնիսկ այսօր այդ ծառայողներից շատերը դեռ չեն զբաղեցրել իրենց իշխանական դիրքն Աստծո արքայության մեջ: Իմ սիրտը տրտմեց, երբ լսեցի, թե ինչպես մի հովիվ ասաց. «Չգիտե՞ս, որ հավատքն առանց «ակնարկների» մեռած է»:

Մեր ճանապարհորդության առաջին տարվա ընթացքում Աստված հրաշքով մատակարարում էր մեզ: Մեկ անգամ մենք պետք է մոտավորապես 700 դոլար վճարեինք մեր տան համար, և վճարման ժամկետն ավարտվելու էր հաջորդ օրը: Ես գնացի փոստարկղ, որում մի նամակ կար հիպի ընտանիքի անունից, ովքեր ապրում էին Ալաբամայում: Նրանք ութ երեխա ունեին և քնում էին գետնին՝ զսպանակավոր ներքնակի վրա: Նրանք գրում էին. *«Ջո՛ն և Լի՛զա, մենք չգիտենք՝ ինչու, բայց Աստված մեր սրտում դրեց, որպեսզի մենք ուղարկենք ձեզ այս 300 դոլարի չեկը»*:

Այդ երեկո ես քարոզում էի մի եկեղեցում, որտեղ ընդամենը քառասուն մարդ կար: Այդ եկեղեցու հովիվը զոհաբերությունը թղթե փաթեթով ինձ տվեց: Ես տուն եկա և պառկեցի քնելու, բայց հանկարծ հիշեցի, որ զոհաբերությունը չեմ հաշվել: Անկեղծ ասած, ես չէի անհանգստանում մեր տան վճարման համար, որը պետք է կատարվեր հաջորդ օրը, որովհետև ես և Լիզան այդ հոգսն Աստծուն էինք տվել: Ես արթնացա և հաշվեցի զոհաբերությունը. ծրարի մեջ 397.26 դոլար էր: Այս գումարը հիպիների նվիրատվության հետ միասին բավական էր մեր տան վճարման համար. Աստված ևս մեկ անգամ մատակարարեց մեզ:

Ժամանակի ընթացքում ես սկսեցի հասկանալ այն գործընթացը, որն Աստված օգտագործում էր մեզ մարզելու համար: Ես և Լիզան նախ

պետք է սովորեինք մեր հոգսերն Աստծո վրա գցել փոքր հարցերում, ինչպես օրինակ՝ էլեկտրական գեներատորի դեպքում: Շատ կարևոր էր, որ մենք սովորեինք հավատալ Աստծուն, երբ դեռ ցածր աշխատավարձ էինք ստանում: Ինչո՞ւ: Որովհետև, երբ մենք սկսեցինք ճանապարհորդել և քարոզել եկեղեցիներում, մենք ընդհանրապես աշխատավարձ չէինք ստանում: Մենք աճել էինք հավատքի մեջ և պատրաստ էինք ավելի դժվար առաքելության համար: Այն մարտահրավերները, որոնց բախվեցինք ճանապարհորդելու առաջին տարվա ընթացքում, օգնեցին մեզ ավելի շատ աճել և պատրաստեցին մեզ հավատքի հաջորդ մակարդակի համար, որը մեզ անհրաժեշտ էր լինելու:

Հիմա, երբ ես գրում եմ այս գիրքը, մեր ծառայության բյուջեն կազմում է շաբաթական ավելի քան 100 000 դոլար: Եթե ես քայլ առ քայլ չսովորեի հավատալ Աստծուն և իմ հոգսերը տալ Նրան, ապա այսօրվա հոգսերը կտապալեին ինձ: Բայց բարի լուրն այն է, որ *ես նույնիսկ մեկ րոպե չեմ կորցրել իմ քունը՝ մեր ապահովության մասին մտածելու համար*: Աստծո խաղաղությունը, որն ամեն հասկացողությունից վեր է, իսկապես որ հսկել և պահպանել է մեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում:

ՀԱՎԱՏՔԻՑ ՀԱՎԱՏՔ

Այն մարզման ընթացքը, որ Աստված օգտագործում է մեր հավատքը բարձրացնելու համար, հիշեցնում է ինձ բոդիբիլդինգը: Երբ երեսունհինգ տարեկան էի, ես այնքան զբաղված էի ճանապարհորդելով և քարոզելով, որ մարզասրահ գնալն ինձ համար ժամանակի կորուստ էր, ուստի՝ ես մարզված չէի: Դրա պատճառով մեկ անգամ, երբ ես Ատլանտայում էի՝ Ջորջիայում, ես գրեթե ուշագնաց եղա բեմի վրա:

Մեր հարևանը պրոֆեսիոնալ ըմբիշ էր. նա Ըմբշամարտի համաշխարհային ֆեդերացիայից էր: Նա, իր կինը և երեխաները մեր լավ ընկերներն էին դարձել: Նախկինում նա առաջարկել էր ինձ մարզասրահ գնալ, բայց ես մերժել էի: Ատլանտայում տեղի ունեցած միջադեպից հետո իմ վերաբերմունքը լիովին փոխվեց: Ես խնդրեցի, որպեսզի նա օգներ ինձ մարզական վիճակ ձեռք բերելու համար:

Իմ ընկերը լավ մարզված էր: Նրա քաշը 120 կիլոգրամ էր, իսկ ճարպի

քանակը մարմնում ընդամենը 4 տոկոս էր կազմում: Նրա ձեռքի մկաններն ավելի մեծ էին, քան իմ ազդրերը: Մենք սկսեցինք կանոնավոր կերպով մարզասրահ հաճախել: Որոշ ժամանակ առաջ ես հանդիպել էի նրա մարզված ընկերներին և հետևել նրանց մարզմանը: Ես պարզեցի, որ եթե բարձրացնես թեթև քաշ ունեցող ձողը բազմաթիվ անգամ, ապա մկանները չեն աճի: Նրանք ձողի վրա դնում էին այնքան ծանրություն, որը կարող էին բարձրացնել առնվազն երեք կամ չորս անգամ: Ես դիտում էի, թե ինչպես էին նրանք վեր բարձրացնում այդ ծանրությունը երեք անգամ, բայց որոշիչը չորրորդն էր: Այն մարդը, որ պառկած էր նստարանին, իրականում ուժ չուներ չորրորդ անգամ կրկնելու համար: Նրա դեմքը ծամածռվում էր, երակներն՝ ուռչում, մարմինը սկսում էր դողալ, և նրա ընկերները միասին գոչում էին. «Վե՛ր հանիր»: Եվ նա հրում էր այն իր ողջ կարողությամբ, որպեսզի չորրորդ անգամ ձողը վեր բարձրացներ: *Հենց այդ* ժամանակ մարմնի մկաններն արձագանքում են և սկսում աճել:

Առաջին անգամ մարզասրահում ես կարողացա վեր բարձրացնել ընդամենը 40 կիլոգրամ, և այդ քաշով շարունակեցի մարզվել մեկ ամիս: Հետո ես աստիճանաբար հասա 60 կիլոգրամի, վեց ամիս անց՝ 80 կիլոգրամի և ի վերջո՝ 90 կիլոգրամի: Սակայն ես մի քանի տարի չավելացրեցի այդ քաշը:

Դրանից հետո մի նախկին բոդիբիլդեր աշխատանքի ընդունվեց մեր ծառայության մեջ: Երբ մենք զրուցում էինք, նա թարմացրեց իմ հիշողությունն այն մասին, թե ինչ է հարկավոր ուժը և մկանները զարգացնելու համար: Ես մոռացել էի, որ մկանների աճի համար անհրաժեշտ է վարժություններ կատարել առավելագույն քաշով մի քանի անգամ կրկնելու դեպքում: Այնպես որ մենք վերսկսեցինք այդ մարզման ընթացքը: Մեկ անգամ նա ուղեկցեց ինձ մի ծառայողական ճանապարհորդության դեպի Ֆրեզնո՝ Կալիֆոռնիա: Կոնֆերանսի ընդմիջման ժամանակ մեզանից մի քանիսը գնացին մարզասրահ, որտեղ բոլորը հավաքվեցին շուրջս: «Ձո՛ն,- ասաց իմ գործընկերը,- այսօր դու բարձրացնելու ես 100 կիլոգրամ»:

Ես ասացի. «Ո՛չ մի դեպքում»:

«Այո՛, դու կանես դա: Պարզապես պառկիր նստարանին, և մենք կօգնենք քեզ»:

Իհարկե, ես բարձրացրեցի 100 կիլոգրամը: Ես այնքա՜ն էի ոգևորվել,

որ շարունակեցի մարզվել և հասա 110 կիլոգրամի, բայց կրկին դադարեցի ավելացնել քաշը: Իմ նպատակը, որն ըստ իս, անհասանելի էր, 140 կիլոգրամ բարձրացնելն էր:

Ես Դետրոյտում՝ Միչիգանում, գնացի մի եկեղեցի: Այդ եկեղեցու հովիվն ասաց, որ իր անդամներից մեկը մարզում է բոդիբիլդերներին և հայտնի է ամբողջ Ամերիկայում: Այդ հովիվն ասաց, որ վերջերս ինքը 250 կիլոգրամ է բարձրացրել: Մեր կիրակնօրյա ծառայությունների հաջորդ օրը այդ հովիվը և հայտնի մարզիչն ինձ տարան մարզասրահ, և ես վեր բարձրացրեցի 120 կիլոգրամ: Նա ինձ ինտենսիվ մարզման ծրագիր առաջարկեց, որը ես և իմ աշխատակիցը ջանասիրաբար կիրառեցինք հաջորդ մի քանի ամիսների ընթացքում:

Հաջորդ անգամ, երբ ես վերադարձա Դետրոյոտում գտնվող այդ եկեղեցին, ես քարոզեցի Սուրբ Հոգու մասին և՛ կիրակի առավոտյան, և՛ կիրակի երեկոյան ծառայություններին: Երկուշաբթի առավոտյան մենք գնացինք մարզասրահ, և այդ մարզիչն ասաց ինձ. «Ջո՛ն, անցյալ գիշեր ես երազ տեսա, որ դու վեր էիր բարձրացնում 135 կիլոգրամ՝ նստարանին պառկած:

Ես քմծիծաղ տվեցի. «Ո՛չ մի դեպքում»:

Նա նայեց ինձ և ասաց. «Լսի՛ր, երեկ ողջ օրը դու քարոզում էիր այն մասին, թե ինչպես է Սուրբ Հոգին խոսում մեզ հետ: Նա անցյալ գիշեր խոսեց ինձ հետ: Այնպես որ, լռի՛ր և պառկի՛ր նստարանին: Այսօր դու 135 կիլոգրամ ես վեր բարձրացնելու»:

Ես լռեցի և պառկեցի նստարանին: Պատրաստվելուց հետո իմ ընկերը 135 կիլոգրամ դրեց ձողի վրա: Նա նայեց ինձ սևեռուն հայացքով և ասաց. «Պարզապես, երբ ձողն իջնի ներքև, վե՛ր հանիր: Մի՛ մտածիր այդ մասին, պարզապես հրի՛ր»:

Նա և մյուսները, ովքեր մեր շուրջն էին, գոչեցին. «Հրի՛ր: Հրի՛ր: Հրի՛ր»: Ձողն իջավ մինչև իր նվազագույն կետը, և ես հրեցի ամբողջ ուժով: Ես բարձրացրեցի՛ այն: Մինչև վե՛րջ: Նրանք վերցրեցին ձողը, և ես ուրախությունից գոչելով՝ դուրս թռա նստարանից. ես զարմացած էի ինձ վրա:

Իմ ընկերը թույլ տվեց, որպեսզի ես տոնեմ դա մոտ հինգ րոպե, հետո նայեց ուղիղ աչքերիս նույն սևեռուն հայացքով և ասաց. «Այժմ դու բարձրացնելու ես 140 կիլոգրամ»:

«Ո՛չ մի դեպքում. դու դա նո՞ւյնպես տեսել ես անցած գիշեր երա-

զում»,- հարցրեցի ես:

Նա պարզապես ժպտաց և քաղաքավարի ձևով ասաց. «Լռի՛ր և պառկի՛ր այստեղ»:

Քառասունչորս տարեկան հասակում ես կարողացա հրել 140 կիլոգրամը: Ես այնքա՜ն ոգևորված էի: Ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես զանգահարեցի Լիզային Դետրոյտի օդանավակայանից և պատմեցի այդ մասին:

Ավելի ուշ Աստված ցույց տվեց, որ այդ մարզիչները՝ իմ աշխատակիցը, Կալիֆոռնիայի հովիվները և Դետրոյտի հայտնի մարզիչն իմ կյանքում գործում էին Սուրբ Հոգու պես: Հիշի՛ր Պողոսի խոսքերը.

> «Աստված պահում է Իր խոստմունքը, և Նա թույլ չի տա, որպեսզի դուք, հաստատ մնալու համար, ձեր կարողությունից վեր փորձվեք. այն ժամանակ, երբ դուք փորձվում եք, Նա կտա ձեզ զորություն դա հաղթահարելու համար և դրա հետ ելքն էլ ցույց կտա» (Ա Կորնթացիների 10.13, TEV):

Այդ մարզիչները գիտեին, թե ինչին ես կարող էի դիմանալ, իսկ ինչին՝ ոչ: Նրանք գիտեին, որ պետք չէր 180 կիլոգրամ դնել ծողի վրա այն դեպքում, երբ ես կարող էի բարձրացնել ամենաշատը 140 կիլոգրամ: Նրանք հմուտ մարզիչներ էին և կարող էին տեսնել այն ներուժը, որ կար իմ մեջ: Ես այնքան էի տպավորված, որ նրանք կարող էին տեսնել ավելին, քան ես: Նրանք գիտեին, թե որքան ծանրություն կարող եմ վեր բարձրացնել, իսկ ես պատկերացում անգամ չունեի դրա մասին: Նրանք իմ մեջ տեսնում էին այն կարողությունն ու ներուժը, որոնց մասին ես գաղափար չունեի:

Նույնը Սուրբ Հոգու դեպքում է. Նա գիտի, թե ինչին կարող ես դիմանալ, իսկ ինչին՝ ոչ: Եթե իմ պրոֆեսիոնալ ըմբիշ ընկերը 140 կիլոգրամ դներ ծողին առաջին անգամ, երբ ես գնացի մարզադահլիճ, ի՞նչ կկատարվեր: Ձողը մեծ արագությամբ կընկներ վրաս՝ կոտրելով իմ կրծքավանդակը և, հավանաբար, կսպաներ ինձ: Ես պետք է սկսեի 40 կիլոգրամից և աստիճանաբար ավելացնեի ծանրությունը:

Սուրբ Հոգին գիտի, թե ինչին կարող ես դիմանալ, իսկ ինչին՝ ոչ:

Սուրբ Հոգին նույն կերպով էլ գիտեր, թե ինչ է պահված ինձ և Լիզայի համար: «Միայն ես գիտեմ այն ծրագրերը, որ ունեմ ձեզ համար» (Երեմիա 29.11, TEV): Նա պետք է կառուցեր մեր հավատքը, և այդ ընթացքում մենք պետք է սովորեինք, թե ինչպես գցել մեր հոգսերը Նրա վրա: Դա երբեք հարմարավետ չէ, բայց միշտ շահավետ է: Շատ անգամ ես պայքարում էի զգացմունքներիս հետ՝ ցանկանալով թողնել ամեն ինչ և հանձնվել, բայց ես պարզապես չէի կարողանում, որովհետև Հիսուսը երբեք չէր թողել ինձ: Այնպես որ, ես և Լիզան անշարժ կանգնեցինք մեր աստվածային առաքելության մեջ և շարունակեցինք հաղթահարել այն հակառակությունը, որի հետ բախվում էինք:

Ետ նայելով՝ ես տեսնում եմ, որ ցածր աշխատավարձը, անսարք էլեկտրական գեներատորը, ֆինանսական դժվարությունները և այլ փորձություններ, որոնց միջով մենք ստիպված էինք անցնել, ամրացնում և ուժ էին տալիս մեզ, որպեսզի պատրաստ լինեինք մեր ապագային: Եթե մեր ծառայության առաջին տարին մենք սկսեինք հավատալ Աստծուն շաբաթական 100 000 դոլարի համար, ապա դա նման կլիներ մարզասրահ գնալու առաջին օրը 140 կիլոգրամանոց ձողը հրելուն:

Ո՛չ: Սուրբ Հոգին պետք է աստիճանաբար և հետևողականորեն աշխատեր մեզ հետ, մինչև որ մենք կարողանայինք վստահել Աստծուն ավելի մեծ բաների համար:

ՄԻ՛ ՇՐՋԱՆՑԻՐ ՔՈ ՄԱՐՋՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Այն հակառակությունը, որին մենք հանդիպեցինք վաղ տարիներին, երբ Աստված մարզում էր մեզ, կապված էր մեր անձնական կարիքների՝ մեքենան նորոգելու, մթերք գնելու, տան և այլ տեսակի հաշիվները վճարելու հետ: Բայց այն հակառակությունը, որի հետ մենք բախվում ենք այսօր, կապված է ոչ թե մեր անձնական կարիքների հետ, այլ այն բազմաթիվ մարդկանց բարեկեցության, ում Աստված վստահել է մեզ: Եթե մենք սկզբում շրջանցեինք Աստծո մարզման ընթացքը, ապա այսօր զորություն չէինք ունենա հասնելու և օգնելու այն մարդկանց, ում մոտ

ուղարկում է Նա: Նա հարկադրված կլիներ ընտրել մեկ այլ մարդու՝ այդ աշխատանքը կատարելու համար:

Որքա՜ն ծառայողներ չեն կարողանում հասնել այն մարդկանց, ում համար Աստված կանչել է իրենց: Ինչո՞ւ: Որովհետև նրանք չեն անցել Աստծո մարզման ընթացքը: Նրանք չեն օգտագործել իրենց հավատքը 60 կիլոգրամանոց դժվարությունները հաղթահարելու համար, և այսօր նրանք չեն կարողանում հաղթահարել 160 կիլոգրամանոց դժվարությունները: Եվ ցավոք՝ Աստված նրանց առաջադրանքները կատարելու համար պետք է գտնի այլ մարդկանց:

Շատ գործարար մարդիկ մնացել են շատ ավելի ցածր մակարդակի վրա, քան որ Աստված կանչել էր նրանց լինելու, որովհետև նրանք չեն մտել իշխանության դիրքի մեջ այն փորձությունների միջոցով, որոնց հանդիպել են: Փոխարենը որ հավատային Աստծուն՝ նրանք վստահեցին մարդկանց կարողություններին և օգտագործեցին անազնիվ մեթոդներ իրենց փորձությունները հաղթահարելու համար: Եվ որպես արդյունք՝ նրանք չկարողացան օգտագործել այն ներուժը, որն Աստված տվել էր իրենց:

Ես գրեթե համոզված եմ, որ Իսրայելի տասը լրտեսները չէին անցել այն մարզման ընթացքը, ինչ Քաղեբն ու Հեսուն: Հավանաբար նրանք ճանապարհներ էին գտել այդ փորձություններն ու դժվարությունները շրջանցելու համար, փոխարենը որ հաղթեին դրանք հավատքով: Նրանք չէին կառուցել իրենց հավատքը, այնպես որ, երբ եկավ որոշիչ պահը, նրանք չունեին այն զորությունն ու հավատքը, որն անհրաժեշտ էր Աստծուն վստահելու համար:

Մեր Հայրը գիտի լավագույն մարզման ընթացքը մեզանից յուրաքանչյուրի համար: Եվ չնայած որ Նա՛ չէ դժվարությունների հեղինակը, սակայն Նա թո՛ւյլ է տալիս դրանք, որպեսզի զորացնի մեզ այն կոչման համար, որ մենք ունենք:

Մի՛ շրջանցիր քո մարզման ընթացքը: *Այն փորձությունները, որոնց հետ դու բախվում ես այսօր, պատրաստում են քեզ այն մեծ գործերի համար, որ դու պետք է կատարես վաղը: Միշտ հիշի՛ր, իմ ընկե՛ր՝՝ Աստված չի տանի քեզ որևէ դժվարության մեջ, մինչև նախապես չպատրաստի քեզ դա բարեհաջող կերպով հաղթահարելու համար:*

Սովորի՛ր գցել քո հոգսերը Նրա վրա ճշմարիտ խոնարհությամբ, որպեսզի կարողանաս գնալ փառքից փառք, հավատքից հավատք և զորությունից զորություն:

12

ԵՂԵ՛Ք ՍԹԱՓ ԵՎ ԶԳՈՆ

«...Խոնարհությունը հագեք, որ Աստված ամբարտավաններին հակառակ է կանգնում, բայց խոնարհներին շնորհք է տալիս: Խոնարհվե՛ք Աստծո հզոր ձեռքի տակ, որ ձեզ բարձրացնի ժամանակին: Ձեր բոլոր հոգսը Նրա վրա գցեք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար: Արթուն եղեք, հսկում արեք (անգլերեն տարբերակում՝ սթափ և զգոն եղեք), որովհետև ձեր ոսոխ թշնամին՝ սատանան, գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կուլ տա: Որին հակառակ կացեք հավատքով հաստատված...»:

Ա Պետրոս 5.5-9

Մինչև Պետրոսի հորդորանքի ուսումնասիրումը շարունակելը եկե՛ք մի համառոտ ամփոփում անենք: Առաքյալը քննարկում է Աստծո ճշմարիտ շնորհքը: Շնորհքը ոչ միայն մեր փրկության և մեղքերի ներման համար է, այլ նաև մեր զորացման համար է, որ լույս տանք այս խավար և կործանված աշխարհում: Բայց մենք չենք կարող աչքի ընկնել առանց հակառակության հանդիպելու. ուստի պայքարն անխուսափելի է: Այդ պատճառով էլ մենք պետք է զինված լինենք շնորհքի զենքերով:

Մեր հոգևոր սպառազինությունը սկսվում է խոնարհությունից, որովհետև շնորհքը տրվում է խոնարհներին: Պետրոսը մեզ կոչ է անում «խոնարհություն հագնել», իսկ ճշմարիտ խոնարհության կարևոր առանձնահատկությունն այն է, որ մենք մեր հոգսերը, դժվարությունները պետք է տանք Աստծուն, և ոչ թե փորձենք դրանք ինքնուրույն կարգավորել: Մենք չենք կարող անցնել մեր ընթացքը, արդյունավետ պայքար մղել և դիմանալ մինչև վերջ, եթե կենտրոնացած լինենք միայն մեր անձնական հոգսերի վրա: Անհանգստությունը, հոգսերը և վախը մեր ճակատագրի

թշնամիներն են: Միայն դրանց բեռն Աստծուն հանձնելով կկարողանանք ավելի արագ վազել և մեր հոգու սուրն ավելի մեծ զորությամբ գործի դնել:

Արդյունքում ճշմարիտ խոնարհությունը ազատ է արձակում մեզ, որպեսզի մենք առանց որևէ խոչընդոտի ընթանանք այս աշխարհի հոսանքին հակառակ: Իսկ եթե մենք փորձենք խարիսխ գցել անհանգստության տիղմի մեջ, մենք չենք կարող դիմանալ գետի հոսանքին:

Հետո Պետրոսը հորդորում է մեզ լինել սթափ և զգոն:

ԵՂԵ՛Ք ՍԹԱՓ

«Սթափ» բառը կարող է սահմանվել որպես «ծանրակշիռ, խելամիտ և լուրջ»: Հունարեն *«nepho»* բառին տրվում է գինուց հարբած լինելու հակառակ իմաստը: Այսինքն՝ «ունենալ սթափ բանականություն»:

Ես ալկոհոլ էի օգտագործում իմ պատանեկության տարիներին և դա շարունակել եմ անել նաև իմ ավարտական տարվա հանգստյան օրերին: Սակայն համալսարանի առաջին կուրսի ընթացքում սկսեցի զզվել շատ խմիչք օգտագործելուց, քանի որ այլևս չէի գտնվում ծնողներիս անմիջական հսկողության տակ: Համալսարանի ընկերական շրջապատ մտնելը նույնպես չօգնեց, քանի որ ուսանողական կյանքը մեզ համար մեծ խնջույք էր, որը սկսվում էր դասերից հետո: Որոշ ժամանակ անց ես սկսեցի չափազանց շատ խմել: Ես այնքան ուրախ եմ, որ Հիսուսը փրկեց ինձ հաջորդ կուրսում. միայն Աստված գիտի, թե ինչպիսի աղետալի կործանումից ինձ ազատեց:

Մի քանի անգամ ես այնպես եմ հարբել, որ հաջորդ օրն ընկերներիցս եմ իմացել, թե ինչ հիմար ու ծիծաղելի բաներ եմ ասել ու արել նախորդ օրը: Այլ կերպ ասած՝ հարբած մարդը կորցնում է իր զգոնությունը: Մեր ընկերական շրջապատում կային «կատակասերներ», որոնց օգնությամբ մենք իմացանք, թե որքան հեշտությամբ կարելի է վատ վարվել որևէ հարբած ընկերոջ հետ: Մենք այնպիսի բաներ էինք անում մեր հարբած ընկերոջ հետ, որ եթե նա սթափ վիճակում լիներ, դա մեզ վրա էժան չէր նստի:

Վատ «կատակներից» մեկը գողությունն էր: Հարբած ընկերը նույնիսկ չէր էլ իմանում, որ իր արժեքավոր իրերը տանում ենք իր մոտից:

Հաջորդ առավոտյան նրա համար դժոխային քաոս էր սկսվում: «Զոհը» հուսահատորեն սկսում էր փնտրել իր կորած իրերը սենյակով և հանրակացարանով մեկ, քանի որ նա գաղափար անգամ չուներ, թե ինչպես և երբ էր այդ գողությունը կատարվել: Նա խուճապահար վազում էր ողջ հանրակացարանով և սկսում էր նյարդայնանալ, տրտնջալ և նույնիսկ, երբեմն էլ բղավել՝ փնտրելով իր կորած նախագիծը, դրամապանակը, ընկերուհու նկարը կամ որևէ այլ արժեքավոր բան: Բոլորը սկսում էին քթների տակ ծիծաղել՝ դիտելով այդ տեսարանը: Երբ զգում էինք, որ մեր ընկերն արդեն բավականին երկար տառապեց, վերադարձնում էինք վերցրած իրերն ու սկսում բարձր ծիծաղել նրա վրա:

Իհարկե, մենք ընդամենը կատակում էինք, բայց ինչ կլիներ, եթե մեկը լուրջ վերաբերվեր իր թանկարժեք իրերի գողոթյանը: Ո՛չ սթափ վիճակում գտնվելով, նրանք իրոք զոհի կարգավիճակում էին հայտնվում և իսկապես կարող էին որևէ թանկարժեք բան կորցնել:

Հարբած վիճակը հսկայական վնասներ է հասցնում նաև վեճերի ժամանակ: Հիշում եմ խնջույքներից մեկում երկու ընկերներս վեճի բռնվեցին. դա իսկական բռնցքամարտ էր: Ընկերներիցս մեկը հարբած էր, մյուսը՝ սթափ: Հարբած ընկերս սթափ վիճակում կարող էր հեշտությամբ լուծել մյուս ընկերոջս հարցերը, բայց քանի որ նա հարբած էր, լավ ծեծի ենթարկվեց: Բարեբախտաբար ինչ-որ մեկը ստիպված եղավ միջամտել և դադարեցնել այդ կռիվը:

Հիշենք ներածության մեջ բերված իրական պատմությունը, որի հիման վրա նկարահանվել էր «Ուրվականն ու խավարը» ֆիլմը: Ես խոսում էի երկու խիզախ տղամարդկանց մասին՝ ռազմական ինժեներ Փեթերսոնի և ամերիկացի հայտնի որսորդ Ռեմինգթոնի մասին, ով տապալել էր երկու առյուծի, որոնք ավելի քան 130 մարդու կյանք էին խլել: Ես ներածության մեջ չէի ասել այն փաստը, որ վերջում Ռեմինգթոնն իր կյանքը կորցրեց առյուծներից մեկի պատճառով: Մեկ օր՝ որսորդության ժամանակ, երկու տղամարդ հաջողությամբ կրակում և սպանում են առյուծներից մեկին: Այդ երեկո՝ տոնակատարության ժամանակ, Ռեմինգթոնն այնքան է հարբում, որ երկրորդ առյուծի բաժինն է դառնում: Փեթերսոնն այդ դեպքից անմիջապես հետո սպանում է երկրորդ առյուծին, որը հոշոտել էր իր ընկերոջը:

Ռեմինգթոնն աշխարհին հայտնի էր իր որսորդական հմտություններով, բայց դրանք ոչ մի արժեք չունեցան, իսկ նրա կյանքին վերջ տվեց

նրա հակառակորդը՝ նրա իսկ հարբեցողության պատճառով: Նա ուներ մի զենք, որը միանգամայն գերազանցում էր առյուծի հնարավորությունները, բայց սթափ վիճակում չգտնվելու և զգոն չլինելու պատճառով նա չէր կարողացել կենդանու մահացու հարձակումը ետ մղել:

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Նույն բանը տեղի է ունենում հոգևորում: Թշնամին կարող է հեշտությամբ գողանալ կամ ոչնչացնել նրանց, ովքեր իրենց միտքը սթափ վիճակում չեն պահում: Մենք պետք է կարողանանք խորապես հարվածել թշնամուն շնորհքի մեր զենքերով, բայց եթե մենք հարբած վիճակում ենք, ապա կկորցնենք մեր զգոնությունը, որի պատճառով էլ նա կկարողանա կործանել մեզ:

Թշնամին կարող է հեշտությամբ գողանալ կամ ոչնչացնել նրանց, ովքեր իրենց միտքը սթափ վիճակում չեն պահում:

Պետրոսը զգուշացնում է, որ սատանան ման է գալիս և որոնում է, թե որին կարող է կուլ տալ (տե՛ս Ա Պետր. 5.8): Նա կարող է կուլ տալ հպարտներին և նրանց, ովքեր իրենց վրա են վերցնում հոգսերը, բայց նրա համար ամենահեշտ զոհը հարբած հավատացյալն է:

Մի՞թե Պետրոսը նկատի ունի հարբեցողությունը: Գուցե և այո, կամ նույնիսկ՝ ավելին. նա նկատի ունի այն հավատացյալին, ով հարբում է այս աշխարհի գինով:

Հայտնության գրքի վերջում Հովհաննեսը նկարագրում է մեծ պոռնիկի՝ Բաբելոնի դատաստանը: Հրեշտակներից մեկն ասում է նրան.

> «Ե՛կ այստեղ, ես քեզ ցույց կտամ մեծ պոռնիկի դատաստանը, ով նստում է բազմաթիվ ջրերի վրա, ում հետ երկրի թագավորներն են միացած անբարոյականության կապերով, ինչպես նաև նրանք, ովքեր երկրի վրա ապրել և *հարբել են նրա անբարոյականության գինով*» (Հայտնություն 17.1,2, NASB):

Պոռնիկի մեկնաբանման համար գոյություն ունեն տարբեր տեսակետներ: Ոմանք ասում են, որ դա Կաթողիկե եկեղեցին է, մյուսները կար-

ծում են, որ դա վերաբերում է հնագույն քաղաք Բաբելոնին, իսկ որոշներն էլ հավատում են, որ դա Հռոմն է կամ Հռոմեական կայսրությունը:

Անձամբ ես կարծում եմ, որ «մեծ պոռնիկը» համաշխարհային ֆինանսական համակարգն է: Իմ համոզմունքի պատճառներից մեկը նրա ճակատին գրված խորհրդավոր անունն է՝ «Մեծ Բաբելոն, Աշխարհի բոլորի անառակությունների մայրը» (Հայտն. 17.5, NLT):

Այլ թարգմանություններ օգտագործում են *պղծություններ* բառը, բայց ես չեմ կարծում, որ հին Բաբելոնը, Հռոմն ու Հռոմեական կայսրությունը կամ Կաթոլիկ եկեղեցին Աշխարհի բոլորի անառակությունների և պղծությունների մայրն է: Բայց Սուրբ գիրքն ասում է մեզ, որ «Բոլոր չարիքի արմատը արծաթասիրությունն է» (Ա Տիմոթ. 6.10, KJV): Մենք հեշտությամբ կարող ենք *չարիք* բառը փոխարինել *անառակություններ և պղծություններ* բառերով և սրանից խոսքի իմաստը չի փոխվի: Կարիք չկա երկար խոսել սրա մասին, բայց սա կարելի է հաշվի առնել:

Ասածս այն է, որ այս աշխարհի ճանապարհները գրավիչ են և կարող են հարբեցնել մարդուն: Ուշադրությո՛ւն դարձրեք վերը նշված Հովհաննեսի խոսքերին՝ «…նրանք, ովքեր երկրի վրա ապրել և հարբել են նրա անբարոյականության գինով»:

Հարբելով այս աշխարհի հոգսերի, հարստությունների և հաճույքների գինով, կարելի է հեշտությամբ կորցնել Սուրբ Հոգու հետ ունեցած մտերմությունը: Այս վիճակը շատ խաբուսիկ է, քանի որ հավատացյալը կարող է աստվածապաշտության *կերպարանք* ունենալ, և միևնույն ժամանակ հարբած լինել այս աշխարհի ցանկություններով: Կորցնելով հոգևոր զգոնությունը, նա թշնամու համար հեշտությամբ դառնում է գողության, խաբեության, կործանման և նույնիսկ՝ մահվան թիրախ:

Սա այն է, ինչ կատարվեց Սողոմոնի հետ: Նա սկզբում աստվածային իմաստություն խնդրեց և ստացավ: Եվ այդ իմաստությունը Սողոմոնին հարստություն ձեռք բերելու և մեծամեծ հաջողությունների հասնելու հնարավորություն տվեց (տե՛ս Առակ. 8.11-21):

Այնուհետև, ժամանակի ընթացքում, Սողոմոն թագավորը սկսեց հարբել իմաստության բարիքներից և մոռացավ Աստծո մասին, Ով այդ ամենը տվել էր իրեն: Նա հարբեց այս աշխարհի հաճույքներից, կրքերից ու հարստությունից: Լինելով հարբած, նա արեց այնպիսի բաներ, որոնք երբեք չէր անի սթափ վիճակում. նա սկսեց երկրպագել ուրիշ աստվածների:

Ինձ շատ էր անհանգստացնում այն, որ Սողոմոնը տրվեց նման խեղկատակությանը, հատկապես նրանից հետո, երբ երկու անգամ անձամբ տեսել էր Աստծուն: Բայց եթե սրան նայեք այն տեսանկյունից, որը ես նկարագրում էի վերևում, այն ավելի հասկանալի կդառնա: Երբ իմ ընկերները կամ ես անջատվելու աստիճան հարբած էինք լինում, մենք այնպիսի բաներ էինք անում, որոնք երբեք չէինք անի սթափ վիճակում. Սողոմոնի դեպքը նույնն էր:

Ինչպե՞ս կարող ենք հեռու մնալ նման հիմարությունից և սթափ լինել: Պատասխանը պետք է փնտրենք Տիրոջ մեջ, Ով միակն է, որ բավարար պատասխան է տալիս. «Մի՛ հարբեք գինով, որը միայն կկործանի ձեզ»: Պողոսը գրում է. «Դրա փոխարեն լցվեք Հոգով» (Եփես. 5.18, TEV): Ես կարծում եմ, որ նա խոսում է ոչ միայն ֆիզիկական գինու մասին, այլ նաև այն ամենի, որը կարող է հարբեցնել մեզ և մեր ուշադրությունը շեղել Աստծո ճանապարհներից: Դա կարող է լինել չափազանց մեծ ուշադրությունը բիզնեսի, հակառակ սեռի, սպորտի, որևէ նախասիրության, սոցիալական ցանցերի վրա. այս ցուցակը կարելի է շարունակել:

Այդ ամենը կարող է անվնաս լինել, որովհետև մենք գիտենք, որ Աստված «մեզ առատորեն տալիս է ամեն ինչ, որպեսզի վայելենք» (Ա Տիմոթ. 6.17, TEV): Մենք կարող ենք վայելել հանգիստը, ժամանացը, սպորտային միջոցառումները, սնունդը, բնության գեղեցկությունը և նույնիսկ ժամանակակից տեխնոլոգիական միջոցները: Սակայն, եթե մենք այդ ամենին չափից շատ ենք տրվում և բավականություն ստանում դրանցից, փոխարենը որ բավականություն ստանայինք Աստծուց, ապա դրանք դառնում են կախվածություն:

Հիսուսը պետք է լինի մեր առաջին սերն ու փափագը. մենք պետք է հարբած լինենք միայն Նրա Հոգով:

ՔԵԶ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՍՏՈՒԳԻ՛Ր

Այս աշխարհի հարբեցնող և թուլացնող բաները կանխելու և սթափ մնալու համար, յուրաքանչյուր Աստծո զավակ պետք է պարբերաբար ստուգի իրեն: Մենք պետք է ազնվորեն հարց տանք մեզ՝ «Ինչի՞ հանդեպ եմ ես ծարավ կամ քաղց զգում»: Պետք չէ մակերեսորեն վերաբերվել

այս հարցին. եղե՛ք խստագույնս ազնիվ: Ինչի՞ վրա ես ծախսում քո ազատ ժամանակը: Ի՞նչ ես մշտապես մտածում կամ ինչո՞վ ես զբաղված: Եթե դա ֆուտբոլն է, ապա դու չափազանց շատ ես «խմում» դրանից. դու արդեն չարաշահում ես դա, այլ ոչ թե պարզապես վայելում: Միգուցե ձեր սիրելի «խմիչքը» հակառակ սե՞ռն է: Թե՞ քո միտքը կլանված է գումար աշխատելով: Պարզի՛ր, թե ինչն է հարբեցնում քեզ: Այդ պատճառով է մեզ ասվում՝ ուշադի՛ր կարդալ և մտածել Աստծո Խոսքի շուրջ: Ինչը շատ ես խմում, դրա հանդեպ էլ ծարավ ես զգում: Ինչը շատ ես ուտում, դրա հանդեպ էլ քաղց ես զգում:

Հիշում եմ իմ ավագ դպրոցի թենիսի մարզիչին, ով կախվածություն ուներ «Կոկա-Կոլայից»: Նա խմում էր օրական մեկ շիշ, հետո՝ երկու, երեք... և դա շարունակվեց այնքան ժամանակ, մինչև նրա օրգանիզմը սկսեց պահանջել օրական մեկ արկղ «Կոկա-Կոլա»: Հիշում եմ, երբ բացում էինք նրա սառնարանը, այնտեղ տեսնում էինք երկու-երեք արկղ «Կոլա», բայց դա միայն այդքանը չէր. սառնարանի կողքին դրված էր ևս մի քանի արկղ:

Գիտեմ նաև մարդկանց, ովքեր գիրացել են և առողջական խնդիրներ ունեն, քանի որ չափազանց շատ են գազով ըմպելիքներ օգտագործել: Երբ ես երիտասարդ հավատացյալ էի, գիտեի, որ իմ մարմինն Աստծո տաճար է, և որ ես պատասխանատու եմ իմ մարմնի մասին հոգ տանելու համար: Ես այլևս չէի ցանկանում գազով ըմպելիքներ խմել, որովհետև գիտեի, որ դրանք վնասակար նյութեր են պարունակում, ուստի որոշեցի այլևս չօգտագործել դրանք: Իհարկե դա հեշտ չէր. իմ մեջ մեծ ցանկություն կար խմել այդ ըմպելիքները, բայց ես ստիպված էի լինում մերժել ինձ:

Հիսուսն ասում է մեզ. «Եթե մեկը կամենում է Իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա…» (Մատթ. 16.24): Հարբեցողությունից ազատվելու համար մենք պետք է թողնենք այն բաները, ինչից կախվածություն ունենք: Ես սովորեցի գազով ըմպելիքները փոխարինել կիտրոնաջրով: Ես չէի ցանկանում ջուր խմել, ես գազով ըմպելիք էի *ցանկանում*, բայց ես ինձ ստիպում էի օրական երկու լիտր ջուր խմել: Մի քանի ամսվա ընթացքում ես այլևս գազով ըմպելիքի կարիք չէի զգում: Այսօր ես այն օգտագործելու որևէ ցանկություն չունեմ. այսօր ես ջրի կարիք ունեմ:

Սա վերաբերում է նաև Աստծո Խոսքին: Հիսուսի խոսքերը հոգի են, կյանք և ճշմարտություն: Աստծո Խոսքի հանդեպ մեր սերը բոցավառելու համար մենք պետք է հաճախ ուրանանք մեզ, որովհետև մեր ախորժակն ու ծարավը ոչ ճիշտ բաների վրա են ուղղված: Օրինակի համար, եթե տեսնում եմ, որ լրատվամիջոցները շատ են զբաղեցնում իմ մտքերն ու ժամանակը, ապա ես դրանցից ծոմ եմ վերցնում: Ես թողնում եմ դրանք որոշ ժամանակով և այն փոխարինում Աստծո և Նրա Խոսքի հետ որակյալ շփումով: Իմ մի քանի առավել իմաստալից և արդյունավետ ծոմերը եղել են ոչ թե սննդի, այլ՝ լրատվամիջոցների ծոմերը:

Երբ մենք լցվում ենք Աստծո Խոսքով, արդյունավետ ժամանակ անցկացնում աղոթքի մեջ և հնազանդվում ենք Նրա առաջնորդությանը, ապա մենք լցվում ենք Նրա Հոգով: Այդ դեպքում է, որ Բաբելոնի հարբեցողությունը կամ կախվածությունը կորցնում է իր ազդեցությունը մեր վրայից: Մարդիկ կարող են մտածել, որ մենք տարօրինակ ենք, բայց մենք պարզապես փոխել ենք մեր «խմելու» սովորությունները: Հիմա մենք փափագում ենք այն գինին, որը մնայուն է, զորացնող է և իրապես բավականություն է տալիս մեզ:

Հիմա մենք ավելի հստակ ենք մտածում, ճիշտ որոշումներ կայացնում և հեշտությամբ խոցում ենք թշնամուն, երբ նա փորձում է կուլ տալ մեզ: Սատանան չի կարող հաղթել սթափ հավատացյալին, քանի որ մենք գիտենք և հռչակում ենք Աստծո ուխտի խոստումները: Մենք զգոն ենք և լուրջ: Մենք զինված ենք և պատրաստ՝ պայքարելու:

ԵՂԵ՛Ք ԶԳՈՆ

Պետրոսն իր առաջին ուղերձի 5.5-9 խոսքերում պատվիրում է. «Եղե՛ք սթափ և զգոն» (անգլերեն տարբերակ): Դուք չեք կարող զգոն լինել, եթե սթափ չլինեք, բայց սթափ լինելը անպայմանորեն չի ենթադրում զգոնություն:

Զգոն լինելը սթափ միտք ունեցող հավատացյալի գիտակցված արարքն է:

Մեր քննարկման համար *զգոն* բառը կսահմանենք որպես «ուշադրությունը լարված պահել հնարավոր վտանգի կամ դժվարությունների

համար»: Մեկ ուրիշ սահմանմամբ այն նշանակում է նաև՝ «երբևէ զարթուն և արթուն, աչալրջորեն զգույշ լինել»: Յուրաքանչյուր Քրիստոսի հետևորդ պետք է այսպիսին լինի: Զգոնությունը զինված լինելու ևս մեկ կարևոր և անհրաժեշտ գործոն է:

Մի քանի գլուխ առաջ մենք նշեցինք, թե ինչպիսին էր կյանքը Նացիստական Գերմանիայում՝ Հիտլերի օրոք: Ճիշտ այնպես, ինչպես իմաստուն հրեան զգոն վիճակում մնաց այդ սարսափելի տարիների ընթացքում, այնպես էլ հավատացյալը պետք է ամեն վայրկյան պահի իր զգոնությունը: Մեր շուրջը միշտ էլ վտանգ կա, քանի դեռ սատանան գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում՝ թե ում կուլ տա: Բայց հսկայական տարբերություն կա նացիստական պետության և մեր ներկայիս աշխարհի միջև. հրեա ժողովուրդն իշխանություն չուներ Հիտլերի վրա, բայց մենք ունենք իշխանություն մեր թշնամու վրա: Մեր թշնամին տիրում է այս աշխարհում, բայց ոչ մեզ վրա: Սակայն, եթե մենք թույլ տանք, նա կարող է լավ պայքար մղել և, նույնիսկ՝ կարող է կուլ տալ մեզ: Այս պատճառով էլ Պողոս առաքյալը զգուշացնում է մեզ «միշտ հետևել աղոթքին և զգոն (արթուն) լինել նրանում» (տե՛ս Կողոս. 4.2):

Մեր աչալրջությունը պահելու առաջնային պայմանը աղոթքն է: Այն բացում է մեր աչքերը՝ հոգևորում տեսնելու վտանգներն ու հարձակումները, նախքան ֆիզիկական աշխարհում դրանց հայտնվելը: Այս ճշմարտությունը հրաշալի կերպով ներկայացված է Հիսուսի խաչելությունից առաջ անցկացրած Խորհրդավոր ընթրիքի պատմության մեջ:

Մեր աչալրջությունը պահելու առաջնային պայմանը աղոթքն է:

Վերջին ընթրիքի ժամանակ Հիսուսն Իր Հոգում գիտեր, թե ինչպիսի ուժգին փորձության առջև է կանգնելու: Կարծես ոչ մի արտասովոր բան տեղի չէր ունենում, բոլորը լավ և խաղաղ վիճակում էին, բայց Նա գիտեր, թե ինչ է ծրագրվում: Ընթրիքից հետո Հիսուսն Իր աշակերտներին տարավ Գեթսեմանիի պարտեզ աղոթելու: Այնտեղ Նա կիսվեց Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ. «Հոգիս մեռնելու չափ *տրտմած* է: Այստեղ մնացե՛ք և Ինձ հետ *արթուն եղե՛ք*» (Մատթ. 26.38): Նկատե՛ք, որ Հիսուսը հատկապես նշում է՝ «…Ինձ հետ արթուն (անգլերենում՝ զգոն)

եղե՛ք» արտահայտությունը: *Զգոն* բառի բացատրություններից մեկը «ուշադրությունը լարված պահել հնարավոր վտանգների կամ դժվարությունների հանդեպ» արտահայտությունն է: Հիսուսն աչալուրջ և զգոն էր, բայց Նա գիտեր, որ Իր աշակերտներն անտարբեր են սպասվող վտանգի նախազգուշական նշանների նկատմամբ, և հետևաբար, անտեսում են զգուշացումը:

Հիսուսն ասաց, որ Իր հոգին «մեռնելու չափ տրտմած է», և հենց այստեղ է կայանում զգոն մնալու առաջնային խնդիրը: Շարունակական աղոթքի կյանքը պահելը թույլ է տալիս ձեր հոգուն ավելի զգայուն դառնալ այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է հոգևոր աշխարհում: Այս դեպքում մենք կարողանում ենք ճանաչել զգուշացումները, մեկնաբանել դրանք և գործել դրանց համապատասխան: Շատ կարևոր է թշնամու առջևում գտնվելը:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Մեր ամուսնության վաղ տարիներին Լիզան և ես դժվար ժամանակներ ենք ունեցել: Մենք երկուսս էլ նոր էինք քրիստոնյա դարձել, և այնպիսի ընտանիքներից էինք, որտեղ սերունդներ շարունակ խնդիրներ են եղել: Լիզայի ընտանիքում առկա էին ընտանեկան վեճերը, ամուսնալուծություններն ու բազմակի ամուսնությունները: Սատանան չէր ցանկանում հրաժարվել այս ամրությունից, որը տարիներ շարունակ կար այդ ընտանիքում, այնպես որ, Լիզան և ես մեր ամուսնության հետ կապված բազմաթիվ հարձակումներ էինք ունենում:

Ես ամեն օր աղոթում էի առնվազն մեկ ժամ, երբեմն մինչև երկու ժամ, և դրա արդյունքում շատ զգայուն էի դարձել հոգևոր բնագավառում: Ժամանակ առ ժամանակ ես ճնշող *տրտմություն* էի զգում: Ուստի, իմ սրտի խորքում զգում էի, որ սխալ մի բան կա: Այս վիճակը նկարագրելը հեշտ չէ, բայց այն նման էր տանջող բարկության: Դա միանշանակ կարելի է բնութագրել որպես ներսի «տրտում» վիճակ:

Ես չէի կարողանում հասկանալ, թե ինչու է նման բան տեղի ունենում: Կարծես ամեն բան լավ էր, և չկային արտաքին վտանգի նշաններ. Լիզան և ես պարզապես հիանալի հասկանում էինք միմյանց: Սկզբում

տրտմություն էր գալիս ինձ վրա, բայց ես ցավոք անտեսում էի այն: Հետո, ամեն անգամ, կարծես ամբողջ դժոխքն էր դուրս գալիս մեր ամուսնության դեմ: Մենք շարունակ վիճում ու վիճում էինք և այնպիսի բառեր ասում իրար, որոնցից բժշկվելու համար հարկավոր էին լինում օրեր, շաբաթներ և նույնիսկ՝ ամիսներ:

Ժամանակի ընթացքում ես սկսեցի հասկանալ այս ամենը: Ուստի, ամեն անգամ, երբ իմ հոգում տրտմության զգացում էի ունենում, չնայելով, որ արտաքինից ամեն բան լավ է, ես մի հեռու տեղ էի գնում և լրջությամբ աղոթում էի մեր ամուսնության համար:

Իհարկե, սատանան դեռ շարունակում էր հարձակվել, բայց քանի որ ես լրջորեն դիմադրում էի իմ նախապես արված աղոթքներով, նրա հարձակումները սկսեցին արագորեն նվազել և դառնալ անարդյունք:

Այսօր թշնամին մեզ այդքան էլ հեշտությամբ կամ հաճախակի չի հարվածում: Մենք հավատում ենք, որ նա հոգնել է ամեն անգամ «Հոգու սրով» հարվածներ ստանալուց: Ինձ սխալ մի՛ հասկացեք. Լիզան և ես դեռևս զգոն մնալու կարիք ունենք: Մենք չենք կարող գոհ մնալ մեզանից կամ թուլացնել մեր հոգևոր պաշտպանությունը: Մենք դեռ հակառակորդին աղոթքով դիմադրելու կարիք ունենք, բայց ոչ այնքան հաճախակի, որքան մեր ամուսնության վաղ տարիներին էր:

Մենք մի լավ դաս ստացանք այս պայքարներից՝ ճանաչելով սպառնացող թշնամու հարձակումների համար արված նախազգուշացումները: Հիմա մենք գիտենք կյանքի *բոլոր* բնագավառներում զգոն մնալու կարևորությունը՝ հայտնաբերելով մեր սրտի տրտմությունը, նախքան մեր ֆինանսների, առողջության, փոխհարաբերությունների և ծառայությունների դեմ հարձակումները: Ես սովորեցի խնդրել Սուրբ Հոգուն, որպեսզի օգնի ինձ աղոթել հատկապես այն ժամանակ, երբ նախազգուշացում եմ զգում: Նա օգնում է ինձ, և կօգնի նաև ձեզ: Նա ձեր *կողմից* է: Նա կօգնի ձեզ նույնիսկ ձեր միջոցով աղոթելիս, եթե դուք զիջեք Նրան: Աստծո Խոսքում գրված է.

> «Եվ Սուրբ Հոգին օգնում է մեզ մեր դժվարին իրավիճակում, քանի որ մենք չենք իմանում, թե ինչ պետք է աղոթենք, ոչ էլ՝ թե ինչպես պետք է աղոթենք: Սակայն Սուրբ Հոգին աղոթում է մեզ համար *հառաչանքով*, որոնք չեն կարող արտահայտվել բառերով: Եվ Հայրը, Ով գիտի բոլոր

սրտերը, գիտի՝ ինչ որ Հոգին ասում է, քանի որ Հոգին բարեխոս է լինում մեզ՝ հավատացյալներիս համար Աստծո սեփական կամքի համեմատ» (Հռոմեացիների 8.26,27, NLT):

Այս հառաչանքները այն տրտմություններն են, որոնք զգում ենք մեր հոգում, ինչպես Հիսուսն էր զգում պարտեզում՝ Իր խաչելության գիշերը: Հենց որ մենք զգում ենք այդ տրտմությունը, պետք է անմիջապես արձագանքենք դրան: Մենք կարող ենք ծույլ գտնվել և անտեսել տրտմությունը, կամ կարող ենք զգոն լինել և զիջել Աստծո Հոգուն:

Սուրբ Հոգու նպատակն է, որ մենք ոչ միայն աղոթենք անբարբառ հառաչանքներով, այլ նաև ստանանք Նրանից հստակ խոսքեր, որոնք ցույց կտան, թե ինչ է պետք անել ստեղծված իրավիճակում: Պողոսը գրում է. «Ես կաղոթեմ իմ հոգով (Սուրբ Հոգով, որ ինձանում է), բայց ես նույնպես կաղոթեմ (հասկացողությամբ) իմ մտքով և ըմբռնումով» (Ա Կորնթ. 14.15, AMP):

ԱՐԹՈՒՆ ՄՆԱ ԵՎ ԱՂՈԹՔ ԱՐԱ

Գեթսեմանիի պարտեզում Հիսուսը, Իր աշակերտներին հոգու տրտմության և հառաչանքի մասին հայտնելուց հետո, նրանց հանձնարարում է. «…այստեղ մնացեք և Ինձ հետ *արթուն* կացեք» (Մատթ. 26.38): Հետո Նա պարտեզում առանձնանում է այն երեքից, մի քիչ հեռանում է և մեկ ժամ աղոթք է անում: Եվ երբ վերադառնում է, Նա նրանց *քնած* է գտնում: Քնա՛ծ: Ինչո՞ւ էին նրանք քնել: Արդյո՞ք այդքան ուշ էր: Արդյո՞ք նրանք հոգնել էին ողջ օրվա գործերից, կամ, միգուցե շա՞տ էին կերել Վերջին ընթրիքի ժամանակ: Ղուկասի Ավետարանում հստակ գրված է, թե ինչու էին նրանք քնել. «Եվ աղոթքից վեր կացավ եկավ Իր աշակերտների մոտ, և նրանց *քնի մեջ գտավ տրտմությունից*» (22.45):

Նրանց վրա էլ էր հարձակում եկել, և նույն *տրտմությունն* էին զգացել, ինչ որ Հիսուսն էր զգացել: Վերջին ընթրիքի ժամանակ Պետրոսը համարձակորեն հայտարարեց, որ ինքն ավելի շուտ կմեռնի, քան կուրանա Տիրոջը: Պետրոսը հավատում էր իր ունակությանը, որ կարող է անկոտրում մնալ մինչև վերջ: Մյուս աշակերտներն էլ էին նույն բանն

ասում, թե իրենք էլ հավատարիմ կմնան իրենց Վարդապետին: Սակայն Հիսուսը գիտեր, որ ոչ միայն Ինքը պետք է խստորեն փորձվի Հոր հանդեպ ունեցած Իր հավատարմության հարցում, այլ նաև Իր աշակերտները պետք է խստորեն փորձվեն Իր հանդեպ ունեցած հավատարմության հարցում:

Լսե՛ք, թե ինչ է ասում Հիսուսն Իր քնած աշակերտներին.

> «Եվ աշակերտների մոտ է գալիս, և նրանց քնի մեջ է գտնում և ասում է Պետրոսին. «Այդպես մեկ ժա՞մ էլ չկարողացաք Ինձ հետ արթուն մնալ: Արթո՛ւն մնացեք և աղո՛թք արեք, որ փորձության մեջ չընկնեք: Հոգին հոժար է, բայց մարմինը տկար» (Մատթեոս 26.40,41):

Ահա ևս մեկ ճշմարտություն, որը ցույց է տալիս, թե արդյո՞ք մենք անկոտրում կերպով կհնազանդվենք Աստծուն, թե՞ պարզապես կունենանք հնազանդվելու ցանկություն, բայց շուտ կհանձնվենք: Դա ձեռք է բերվում ինքներս մեզ ամրապնդելով, արթուն (զգոն) մնալու և աղոթք անելու միջոցով: Հուդան գրում է. «Բայց դուք, սիրելինե՛ր, ձեր անձերը ձեր սուրբ հավատքի վրա շինեք Սուրբ Հոգով աղոթք անելով» (Խոսք 20): Աղոթքը հանդարտեցնում է մեր մարմինը ու շինություն տալիս մեր ներսի մարդուն: Մեր մարմինը տկար է, և այն մշտապես կընտրի նվազագույն դիմադրության ճանապարհը, որը հաճախ սխալ է: Մեր մարմինը չի ցանկանում պայքարել ներկա աշխարհի հզոր ուժերի դեմ: Մյուս կողմից աղոթքն ամրապնդում է մեր ներքին զորությունը՝ մարմնի ցանկությունները անտեսելու համար և թույլ չի տալիս, որ մենք ձանձրանանք: Հիսուսն ասում է. «Պետք է ամեն ժամանակ աղոթք անել և չձանձրանալ» (Ղուկ. 18.1, KJV): Այլ կերպ ասած՝ մենք կձանձրանանք, եթե չաղոթենք, հատկապես այն ժամանակ, երբ տրտմած ենք (երբ հառաչում ենք):

Պարտեզում, այդ ճակատագրական գիշերը, աշակերտները սկսել էին ձանձրանալ: Այդ մարդիկ քնել էին, այնինչ նրանք պետք է աղոթեին: Թաքնված վտանգի նկատմամբ նրանք աչալուրջ չէին եղել. նրանք ոչ թե զգոն վիճակում էին, այլ՝ ծույլ:

Այսօր մենք Հոգու նախազգուշացումները հանգցնելու կամ ճնշելու այլ միջոցներ ունենք: Մենք կարող ենք միացնել հեռուստացույցը, անցնել կայքերով, գրել ընկերներին կամ ստուգել *«Facebook»*-ը մեր մշտա-

պես հասանելի բջջային հեռախոսներով, խաղալ համակարգչային խաղեր, զբաղվել ինչ-որ բանով կամ մոտենալ սառնարանին և կերակրել մեզ: Եվ այդպես մենք ավելի ու ավելի քիչ ենք զգայուն դառնում Սուրբ Հոգու առաջնորդությանն ու զգուշացումներին: Հետևաբար, մենք կորցնում ենք դժվար իրավիճակներում ամուր կանգնելու մեր ունակությունը: Մենք կորցնում ենք անկոտրում լինելու ուժը, որն ազատորեն հասանելի է մեզ Աստծո շնորհքի միջոցով:

Այսպիսով՝ Հիսուսն Իր անձնակազմի մտերիմ անդամներին ասաց. «Արթո՛ւն մնացեք և աղո՛թք արեք, որ փորձության մեջ չընկնեք» (Մատթ. 26.41): Նա դարձյալ գնում և երկրորդ անգամ աղոթք է անում, և երբ վերադառնում է, կրկին նրանց քնած է գտնում: Այս անգամ Նա չի արթնացնում և չի զգուշացնում նրանց. նրանք արել էին իրենց ընտրությունը:

Շատ անգամ Աստված կզգուշացնի մեզ մեկ, երկու անգամ, բայց եթե մենք անտեսենք Նրա առաջին զգուշացումները, ապա Նա կլռի, մինչև մենք չապաշխարենք: Երբ մենք փորձանքի մեջ ենք ընկնում, հուսահատորեն հարցնում ենք Նրան. «Ո՞ւր ես, Աստվա՛ծ»: Բայց Նա զգուշացրել էր մեզ, իսկ մենք պարզապես չէինք ցանկացել լսել Նրան:

Հիսուսը դարձյալ գնում է երրորդ անգամ աղոթք անելու: Երբ Նա ավարտում է աղոթքը և գալիս Իր աշակերտների մոտ, տեսնում է, որ նրանք դեռևս քնած են: Եվ հենց այդ ժամանակ է, որ դավաճան Հուդան և քահանայապետերի զինվորները գալիս են պարտեզ և ձերբակալում Հիսուսին:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հիսուսին հաջողվեց կատարել Իր անհավանական առաքելությունը՝ մնալով արթուն (սթափ)՝ աղոթքի մեջ և անկոտրում մինչև վերջ: Աշակերտներն էլ իրենց հերթին ցանկանում էին հաստատուն մնալ, նրանք կարծում էին, որ կարող են դա անել, բայց չունեին զորություն դրա համար: Ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն էր կանխատեսել, նրանցից յուրաքանչյուրը ենթարկվեց հարձակման և ձախողման. «Այն ժամանակ բո-

լոր աշակերտները Նրան թողեցին և փախան» (Մատթ. 26.56):

Պետրոսն արեց այն, ինչ ասել էր, որ *չի* անի. նա ուրացավ Հիսուսին: Մեկ դրական բան կարելի է ասել Պետրոսի մասին. նա գոնե գնաց Հիսուսի ետևից մինչև քահանայապետի տուն, որտեղ Նրան դատելու էին: Մյուսները, բացի Հովհաննեսից, անմիջապես լքեցին Նրան և փախան պարտեզից՝ իրենց կյանքը փրկելու համար:

Որքա՞ն հաճախ ենք մենք լսում հավատացյալների բարի մտադրությունների մասին, սակայն տեսնում ենք, որ նրանք չեն իրականացնում դրանք: Ի՞նչն է պատճառը. պարտեզում գտնվող Հիսուսի աշակերտների նման նրանք զգոն (արթուն) չեն աղոթքի մեջ: Նրանց հոգին հոժար է, բայց մարմինը՝ տկար: Պատշաճ կերպով զինված չլինելը նրանց ետ է պահում իրենց ցանկալի ավարտին հասնելուց:

Ո՞վ է Պետրոս առաքյալի պես հորդորում՝ ասելով. «զինվե՛ք»: Ճիշտ է այդ բեկումնային երեկոյի ժամանակ նա համարձակ էր խոսքի մեջ, սակայն նա ձախողվեց գործողություն կատարելու հարցում: Հիսուսը զգուշացրել էր Պետրոսին. «Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա սատանան ձեզ ուզեց, որ մաղի ցորենի պես» (Ղուկ. 22.31, NLT): Բայց Պետրոսը և մյուսները չունեին անկոտրում զորություն, որն անհրաժեշտ էր ամբողջ գիշեր դիմանալու համար: Այդ իսկ պատճառով, հետագայում Պետրոսը զգուշացնում է մեզ՝ զինված լինել թե՛ մեկ երեկոյի, թե՛ որոշ ժամանակի, թե՛ մեր ամբողջ կյանքի համար, որպեսզի մենք ավարտենք մեր ընթացքը զորավոր կերպով:

Պայքարի համար զինվելն իր մեջ ներառում է սթափ և զգոն վիճակում մնալը: Մենք չպետք է թույլ տանք, որ այս աշխարհի հրապուրանքները մարեն մեր վճռականությունը և որոշումը՝ Քրիստոսին նմանվելու հարցում: Ուստի մենք պետք է զգոն և աչալուրջ լինենք ամեն ժամանակ, որովհետև, եթե մենք *անկոտրում* կերպով չհակառակվենք սատանային, ապա նա կկործանի մեզ:

13

ՀԱԿԱՌԱ՛Կ ԿԱՆԳՆԵՔ ՍԱՏԱՆԱՅԻՆ

«Եղե՛ք սթափ և զգոն, որովհետև ձեր ոսոխ թշնամին՝ սատանան, գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կուլ տա: Որին հակառա՛կ կանգնեք հավատքով հաստատված...»:

Ա Պետրոս 5.8,9

Եկ այժմ անդրադառնանք Պետրոսի այս հորդորին, որն ուղղակիորեն վերաբերում է պայքարին: Նա հայտարարում է, որ սատանան (և նրա դևերը) առյուծի նման ման է գալիս, թե ում կուլ տա:

Պարզաբանելու համար ասեմ, որ սատանան *առյուծ* չէ: Սուրբ գիրքը սատանային անվանում է օձ, վիշապ, գող և մի քանի այլ անուններով, բայց ոչ առյուծ: Ճշմարիտ առյուծը Հիսուսն է: Նա է «Հուդայի ցեղի Առյուծը» (տե՛ս Հայտն. 5.5): Սակայն Պետրոսն այստեղ շեշտադրում է, որ սատանան կողոպտող առյուծի *նման* գաղտագողի մոտենում է նրան, ում կարող է կուլ տալ: Եվ նա իսկապես կուլ կտա անողորմաբար, եթե իրեն ընձեռվի այդ հնարավորությունը. կարող ես չկասկածել: Նա պարտված թշնամի է, բայց նա նաև անողոք հակառակորդ է, որին երբեք չպետք է թեթևամտորեն վերաբերվել: Մեր նկատմամբ նա չունի ոչ մի բարեհաճություն և կարեկցանք. նրա առաքելությունը մեկն է՝ սպանել, գողանալ և կործանել:

Եթե դուք երբևէ եղել եք Տանզանիայի հարթավայրերում, որտեղ մարդակեր առյուծներն են բնակվում, ապա այդ վայրով առանց զենքի քայլել չէիք ցանկանա: Հակառակ դեպքում՝ այնտեղից ողջ չէիք վերադառնա: Եթե իմաստուն գտնվեք՝ դուք ձեզ հետ զենք կվերցնեք և կսովորեք այն օգտագործելու ձևը: Եթե զինված եք, սթափ և զգոն, ուրեմն

դուք պատրաստ եք կռվելու և հաղթելու. ձեզ ոչինչ չի վնասի: Ահա սա է Պետրոսի շեշտադրումը:

ՀԱԿԱՌԱ�simՆ ԿԱՆԳՆԵՔ ՍԱՏԱՆԱՅԻՆ

Պետրոսն իր հորդորի 9-րդ խոսքում խստորեն կոչ է անում մեզ հակառակ կանգնել և դիմադրել սատանային: *Դիմադրել* բառը հունարենում *«authistemi»* բառն է, որը «Թայերի բառարանում» սահմանվում է որպես՝ «մեկին դեմ դնել, դիմակայել, ընդդիմանալ»: Իսկ «Սթրոնգի բառարանում» ավելացված է՝ «մեկին դեմ կանգնել»: Իմ բառարանում *դիմադրել* բառը սահմանվում է որպես՝ «կանխարգելել գործողությամբ կամ փաստարկով»: Այսինքն՝ ոչ մի կասկած չկա, որ այս բառը մարմնավորում է հարձակողական հակամարտություն:

Եվ քանի որ մենք պատրաստվում ենք զինված հակամարտության, ուրեմն, լսե՛ք Հիսուսի խոսքերը, որոնք վստահություն են տալիս. «Ահա Ես իշխանություն և զորություն եմ տվել… թշնամու ողջ զորության վրա [որ նա ունի], և ոչինչ որևէ կերպով չի վնասի ձեզ» (Ղուկ. 10.19, AMP): Արդյո՞ք սա քեզ չի ուրախացնում: Աստծո խոստումը քեզ վստահեցնում է, որ եթե դու քայլում ես Աստծո հզոր շնորհքի մեջ, ապա ոչ ոք և ոչինչ չի կարող քեզ վնասել, նույնիսկ՝ սատանան: Սա շատ կարևոր է:

Այնուամենայնիվ, դու պետք է *օգտագործես* քեզ տրված զորությունը: Հակառակ դեպքում խոստումը ուժի մեջ չի մտնի, և դու կարող ես դրանից վնաս կրել: Այդ պատճառով էլ Պետրոսը կոչ է անում մեզ *հակառակ կանգնել* սատանային: Նա չի ասում. «Աղոթե՛ք և խնդրե՛ք Աստծուն, որպեսզի Նա հեռացնի նրան»:

Մենք պետք է անմիջականորեն, նպատակաուղղված և համարձակ կերպով դիմադրենք սատանային:

Նոր կտակարանում չեք գտնի մի տեղ, որում գրված է. «Խնդրե՛ք Աստծուն, որպեսզի հեռացնի սատանային մեր կյանքից»: Փաստն այն է, որ Աստված չի կարող դա անել: Միգուցե մտածում ես, թե ես խելքս թռցրել եմ, երբ խոսում եմ Աստծո մասին՝ օգտագործելով *չի կարող* արտահայտությունը: Բայց դա այդպես է: Աստված երկրի վրա մարդուն տվեց ողջ իշխանությունը, և Նա չի դրժի Իր խոսքը: Ահա թե ինչու պարտեզում Նա չմիջամտեց օձի և Ադամի հանդիպմանը: Դրա համար Հի-

սուսն աշխարհ եկավ որպես Մարդու Որդի, որպեսզի հաղթի սատանային: Եվ դա է պատճառը, որ Քրիստոսի մարմինը պետք է ուղղակիորեն դիմադրեր սատանային և նրա դևերին:

Աստված ողջ իշխանությունը տվեց Հիսուսին, իսկ Նա էլ Իր հերթին այն մեզ տվեց: Որպես Նրա մարմին՝ մենք պետք է պատերազմենք, որն էլ ըստ Սուրբ գրքի՝ «բարի պատերազմ» է (տե՛ս Ա Տիմոթ. 6.12):

Աստված ողջ իշխանությունը տվեց Հիսուսին, իսկ Նա էլ Իր հերթին այն մեզ տվեց:

ՄԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՕՐԻՆԱԿԸ

Եթե մենք ցանկանում ենք սովորել, թե ինչպես հակառակ կանգնել սատանային, ապա էլ ո՞ւմից կարող ենք ավելի լավ սովորել, եթե ոչ Հիսուսից: Մենք շատ բան կարող ենք սովորել անապատում անցկացրած Նրա օրերից:

> «Հիսուսը Սուրբ Հոգով լցված՝ Հորդանանից ետ դարձավ և Հոգով տարվեց անապատ: Քառասուն օր սատանայից փորձվեց…» (Ղուկաս 4.1,2):

Անապատում Նրա փորձությունները տևեցին քառասուն օր: Այսինքն՝ Հիսուսը ստիպված էր հակառակվել կարճ ժամանակով: Եվ առաջին փորձությունը, որի մասին գրված է, տեղի ունեցավ քառասնօրյա փորձության վերջում: Սատանան փորձում էր դրդել Հիսուսին՝ օգտագործել իր աստվածային զորությունը՝ ապացուցելու համար, որ Նա Աստծո Որդին է: Եվ քանի որ Հիսուսը քաղցած էր, թշնամին առաջարկեց Նրան քարը հաց դարձնել: Սակայն Հիսուսը համարձակորեն հակառակվեց. «Գրվա՛ծ է. «Ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»» (Մատթ. 4.4).

Այս փորձություններից մենք երեք դաս ունենք քաղելու: Նախ՝ Հիսուսը ճանաչեց և արագ լուծեց փորձության հարցերը: Նա չսկսեց մտածել կամ գաղափարներ որոնել դրանց շուրջ, ինչն էլ հնարավորություն կտար սատանային բեղմնավորելու իր առաջարկությունները Նրա սրտում: Մենք պետք է հետևե՛նք Նրա օրինակին:

Երկրորդ (և շատ կարևոր) մի դաս՝ Հիսուսն անմիջապես էր պատասխանում սատանային: Նա չէր աղոթում Հորը, որպեսզի Նա հեռացնի այդ փորձությունը կամ փորձչին: Եվ ոչ էլ փորձում էր անտեսել թշնամուն՝ ասելով. «Աստծո կամքը չէ, որ սատանան հաղթի Ինձ, այնպես որ, Ես չեմ տրվի այս փորձությանը»: Ո՛չ, Նա անմիջապես և անկոտրում կերպով վարվեց սատանայի հետ: Եվ մենք նույնպես պետք է այդպես վարվենք, ինչպես գրված է. «Սատանային հնարավորություն մի՛ տվեք» (Եփես. 4.27, TEV):

Եվ երրորդ դասը՝ Հիսուսը միշտ խոսում է Աստծո գրված Խոսքի համաձայն: Նկատեք, որ Նա միշտ ասում է՝ գրված է:

Ինչո՞ւ է սա այդքան կարևոր: Որովհետև Աստծո Խոսքը մեր սուրն է: Պողոսն ասում է. «Եվ առե՛ք Հոգու սուրը, որ Աստծո Խոսքն է» (Եփես. 6.17): Աստծո Խոսքը ֆիզիկական զենք չէ, այլ՝ հոգևոր հրաշալի զենք: Հիսուսը բառացիորեն խոցել է թշնամուն Իր հոգևոր սրով, և անկասկած՝ վերջինս զգալի վնասներ է կրել: Բայց թշնամին չափազանց համառ է. նա չնահանջեց, այլ Նա ընդունեց այդ ցավոտ հարվածը, բայց շարունակեց իր հարձակումները:

Հաջորդ փորձության ժամանակ սատանան Հիսուսին առաջարկեց աշխարհում թագավորություններ ձեռք բերելու ամենակարճ ուղին, որն Ադամի մեղքի պատճառով անցել էր սատանային: Հիսուսն ընդամենը պետք է խոնարհվեր և երկրպագեր սատանային: Բայց Նա պատասխանեց. «Գնա՛ ետս, սատանա՛, որովհետև գրված է, թե քո Տեր Աստծուն պետք է երկրպագություն անես, և Նրան միայն պաշտես» (Ղուկ. 4.8):

Հիսուսը թշնամուն ասաց, որ ետ գնա: Դա նույնն է, ինչ համարձակորեն ասենք՝ հեռո՛ւ քաշվիր: Հետո Հիսուսն օգտագործեց Աստծո Խոսքը, որպեսզի ևս մեկ անգամ հարված հասցնի թշնամուն:

Փորձությունները շարունակվեցին այնքան ժամանակ, մինչև որ թշնամին ստացավ այնքան վերքեր, որքան հնարավոր էր ստանալ մեկ բախման ընթացքում: Ղուկասը գրում է. «Եվ սատանան, երբ որ բոլոր փորձությունը կատարեց, հեռացավ Նրանից որոշ ժամանակով՝ սպասելով ևս մեկ հնարավորության» (Ղուկ. 4.13, MSG):

ՀԱՐՁԱԿՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՎԻՎԸ

Մի քանի տարի առաջ մի հովիվ եկավ իմ գրասենյակ: Ես նրան պայմանականորեն կանվանեմ Կեն: Նա երիտասարդ էր, ուժեղ և գեղեցկադեմ, ուներ լավ կին և երեխաներ: Նախքան հավատացյալ դառնալը, նա զբաղվում էր անօրինական թմրամիջոցներով: Կենն այնքան երախտապարտ էր իր փրկության և ազատագրման համար, որ հաճախ էր արտասվում երկրպագության ժամանակ: Ինձ խորապես հուզեց Հիսուսի հանդեպ ունեցած այդ մարդու սերը: Լինելով սիրալիր և լավ ամուսին նաև հիանալի հայր՝ նա հաստատ գիտեր, թե որքան մեծ էր իր ներման չափը, ուստի դրան համապատասխան էլ նա սիրում էր Հիսուսին:

Ամիսներ շարունակ նա միայնակ դժվարին պայքարների մեջ էր: Ի վերջո, չդիմանալով այդ ճնշումներին՝ որոշեց խոսել ինձ հետ: Եվ երբ մտավ իմ գրասենյակ, նրա դեմքի արտահայտությունն ուղղակի խղճալի էր:

- Ի՞նչ է պատահել,- հարցրի ես:

Կենը սկսեց պատմել ինձ, թե իրենց ընտանիքում տղամարդիկ որքան շատ են տառապում սրտի հիվանդությունից և, որի հետևանքով նրանք մահանում են վաղ տարիքում:

- Զո՛ն, ես կատաղի պայքարների մեջ եմ, որովհետև վախենում եմ, որ կմահանամ սրտի կաթվածից,- ասաց նա: - Ես պետք է այցելեմ բժշկի մոտ և ստուգվեմ: Մինչև օրս թվում էր, թե ամեն բան լավ է, բայց, այնուամենայնիվ, ես սարսափում եմ հանկարծամահ լինելու մտքից: Ես ապրում եմ այդ վախի զգացումով, որը երբեմն ամբողջությամբ կլանում է ինձ: Սկսում եմ այնպես քրտնել, որ հագուստս ամբողջովին թրջվում է: Դա լինում է կա՛մ գիշերը, կա՛մ, երբ մենակ եմ, կա՛մ էլ, երբ եկեղեցում մարդկանց հետ եմ լինում: Այդ վախն այնպես է ինձ համակում, որ կարծես չեմ կարողանում վերահսկել ինձ. այն ինձ պատում է հանկարծակի: Ես ջերմեռանդորեն շատ եմ աղոթել, խնդրել Աստծուն, որպեսզի Նա հեռացնի ինձանից այդ վախը և օգնի՝ չմահանալ այդ ճնշող զգացումից:

Այս ամենը լսելուց հետո ես ասացի.

- Կե՛ն, այդ պատճառով էլ դու ոչ մի արդյունքի չես հասնում: Դու աղոթում ես Աստծուն, բայց Աստծո Խոսքով չես հակառակվում թշնամուն, ինչպես Հիսուսն էր վարվում անապատում: Աստծո Խոսքը հատուկ կոչ է անում մեզ՝ «հակառա՛կ կանգնեք սատանային» (տե՛ս Հակոբ. 4.7), և նա

կփախչի մեզանից. դո՛ւ պետք է հակառակ կանգնես Կեն: Հիսուսը պարտության մատնեց սատանային, հետո Երկինք համբարձվեց և այժմ նստած է Աստծո աջ կողմում:

Բայց գնալուց առաջ Նա մեզ Իր զորությունն ու իշխանությունը տվեց, որպեսզի իրականացնենք Իր կամքը թշնամու հանդեպ, որին Նա արդեն պարտության էր մատնել: Հիսուսն այնքան պարզ ասաց. «...ոգիները ձեզ հնազանդվում են…» (Ղուկ. 10.20): Նրանք *պետք է* հնազանդվեն ձեզ: Իսկ մեզ հանձնարարված է օգտագործել Աստծո Խոսքը և հրամայել թշնամուն՝ հնազանդվելու Աստծո ուխտի խոստմունքին: Ընկերս շատ մեծ ուշադրությամբ լսում էր ինձ, այնպես որ, ես շարունակեցի.

- Կե՛ն, կան ժամանակներ, երբ թշնամին անհանգստացնում է ինձ, և այն սկսում է դուրս գալ վերահսկողությունից: Այդ ժամանակ ես գնում եմ մեկուսանում եմ, որտեղ ինձ ոչ ոք չի լսում, և սկսում եմ բարձրաձայն աղաղակել, քանի որ ինձ համար *ջերմեռանդորեն* բառը նշանակում է ամեն ինչով՝ հոգով, շնչով և մարմնով: Եվ «մարմինը», բնականաբար, նշանակում է իմ ձայնը բարձրացնելը: Այնպես որ, ես ասում եմ. «Շա՛տ լավ, սատանա՛, եթե դու պայքար ես ուզում, ապա կստանաս: Բայց ես նախապես ասում եմ, որ դու պարզապես նորից ենթարկվելու ես հարվածների, որովհետև սուրն ի՛մ ձեռքում է, և ո՛չ թե քո: Այնպես որ, ես պատրաստվում եմ վերցնել Հոգու սուրն ու թրատել քեզ: Եվ այդ ժամանակ, եթե դու դեռևս չես բավարարվել ու փախուստի մատնվել, ապա ես պատրաստվում եմ այն թրատված կտորներդ է՛լ ավելի մասնատել, մինչև որ դու խուճապահար փախչես: Իսկ հիմա, Աստծո Խոսքն ասում է...»:

Կենը լսեց, թե ինչպես եմ ես մեջբերում որոշ աստվածաշնչյան խոսքեր բժշկության, վախից ազատագրվելու և փրկության մասին: Ես ցույց տվեցի նրան, թե ինչպես վերցնել գրված խոստումներն ու դրանք դարձնել կռվի զենքեր: Ես ասացի Կենին, որ նա պետք է ողջ եռանդով անմիջապես խոսի վախի ոգու դեմ: Մենք մի քիչ էլ շարունակեցինք զրուցել, ապա ես աղոթեցի նրա համար, և նա գնաց:

Վեց ամիս անց Կենը վերադարձավ ուրախ դեմքով: Բայց ես դեռևս որոշ ծանրություն էի տեսնում այդ արտահայտության մեջ: Ես հարցրի, թե ինչպես են նրա գործերը, չնայած՝ արդեն գիտեի՝ ինչ էր նա պատրաստվում ասել.

- Ձո՛ն, գործերն ավելի վատ են, քան երբևէ,- ասաց նա: - Հիմա ես վախի դեմ ավելի ջերմեռանդորեն եմ պայքարում, քան վեց ամիս առաջ էր: Բայց թվում է, թե այդ վախն ինձ համակում է գրեթե ամեն օր: Ես առաջվա նման այնքան եմ քրտնում, որ հագուստս ամբողջովին թրջվում է, ես կորցնում եմ խիզախությունս և դժվարանում եմ մարդկանց ծառայել իմ սեփական խնդիրների պատճառով:

Կենը սարսափով ասաց.

- Ձո՛ն, ես ծոմ եմ վերցրել, աղոթել եմ և նույնիսկ՝ ջերմեռանդորեն աղաղակել եմ Աստծուն, որպեսզի օգնի ինձ: Բայց ոչ մի օգնություն և ոչ մի պատասխան չեմ տեսնում. ես կարծես խելագարվում եմ:

Ես կասկածելով հարցրի.

- Կե՛ն, իսկ դու արե՞լ ես այն, ինչ ես ասել էի քեզ ամիսներ առաջ: Դու գնացե՞լ ես մի առանձին վայր և պայքար մղել անմիջապես սատանայի դեմ: Դու ասե՞լ ես նրան Աստծո Խոսքը:

- Դե՜... ոչ այնքան...

Ես ուղղակի բարկացա.

- Կե՛ն, ոչինչ էլ տեղի չի ունենա և ոչ մի փոփոխություն չես տեսնի, քանի դեռ դու հակառակ չես կանգնում հենց թշնամուն՝ Հոգու սրով, որն է՝ Աստծո Խոսքը:

Նա խոնարհեց գլուխը: Ես նկատեցի, թե ինչպես է նա սկսում նահանջել: Չեմ կարծում, որ Կենը համաձայն էր իմ ասածների հետ. նա ուղղակի ետ էր եկել, որովհետև ճանաչում էր մարկանց, ովքեր եկել էին ինձ մոտ և օգնություն էին ստացել: Նա հավատքի մարդ էր և իսկապես վստահ էր, որ Աստված բավականին հզոր է և կարող է պատասխանել իր աղաղակին, բայց նա ոչ մի արդյունք չէր տեսնում իր կյանքում, որից էլ հուսահատվում էր:

Ես բացատրություն էի փնտրում, երբ հանկարծ Սուրբ Հոգին ինձ տվեց համապատասխան օրինակը.

- Կե՛ն, Միացյալ Նահանգների նախագահը ամերիկյան զինված ուժերի պաշտոնական հրամանատարն է: Պարզ ասած՝ նա է ողջ զինվորական անձնակազմի գլուխը, առաջնորդն ու ղեկավարը: Հիմա պատկերացրո՛ւ մեր զինվորներից մեկին Իրաքի պատերազմի դաշտում. թշնամին բոլոր կողմերից կրակ է բացել նրա վրա, իսկ մեր զինվորը պարզա-

պես չի կրակում: Նա խելահեղ ու վախեցած է: Բայց, պատահաբար, նրա ձեռքը ռադիոընդունիչ է հայտնվում՝ մի հնարավորություն, որով կարող է զանգահարել Սպիտակ Տուն: Երբ նախագահը վերցնում է լսափողը, զինվորը սկսում է աղերսել. «Պարո՛ն Նախագահ, ես թեժ կրակոցների տակ եմ հայտնվել: Թշնամին կրակում է ինձ վրա և փորձում է ոչնչացնել: Պարո՛ն Նախագահ, խնդրո՛ւմ եմ, եկե՛ք և սպանե՛ք թշնամուն: Ես հուսահատված ու վախեցած եմ, աղաչում եմ ձեզ՝ օգնությա՛ն հասեք»:

Ես հարցրի Կենին.

- Ճիշտ է, այս զինվորի կյանքը մեծ վտանգի տակ է, բայց, նույնիսկ, եթե դա այդպես է, նախագահն ի՞նչ պատասխան պետք է տար նրա անմիտ խնդրանքին:

Ես իսկույն տվեցի հարցիս պատասխանը.

- Նախագահը կբղավեր զինվորի վրա. «Ինչո՞ւ ես *ինձ* զանգահարել: Ես տվել եմ քեզ երկրագնդի վրա եղող լավագույն ռազմական ուսումը: Ես տվել եմ քեզ լավագույն զենքերը և Ամերիկայի Միացյալ Նահանգների իշխանությունը, որպեսզի կարողանաս ոչնչացնել թշնամուն: Զինվո՛ր, ցա՛ծ դիր լսափողն ու ե՛տ գնա կռվի դաշտ. գնա՛ և կռվի՛ր հակառակորդիդ հետ»: Իսկ հետո Նախագահը կկախի լսափողն այն ակնկալիքով, որ զինվորը կկատարի իրեն տրված հրամանը:

Կենի աչքերում ես լույս նկատեցի:

- Կե՛ն,- շարունակեցի ես,- Քեզ տրված է սուր, իսկ այն թշնամուն, ում դեմ պայքարում ես, ոչինչ տրված չէ: Փաստն այն է, որ նա ամբողջությամբ զինաթափված է, որովհետև մեր Տերը «իշխանություններին և պետություններին մերկացնելով, հայտնապես խայտառակեց նրանց...» (Կողոս. 2.15): Դուք օրինական զենք ունեք, իսկ թշնամին կարող է միայն ահաբեկել: Ձեզ նաև տրված է ողջ զորությունն ու իշխանությունը՝ Հիսուսի անվան շնորհիվ: Մեզ ասված է, որ ամեն ծունկ պիտի ծալվի Նրա անվան առջև և ամեն լեզու պետք է Նրան Տեր դավանի (տե՛ս Փիլիպ. 2.10,11):

- Քեզ տրված է Աստծո սպառազինությունը՝ արդարության զրահը, հավատքի վահանը, փրկության սաղավարտը և այլն: Քո հավատքի վահանը կարող է հանգցնել ոչ թե *որևէ,* այլ *ցանկացած* կրակոտ նետ, որ սատանան ուղղում է քեզ: Աստված Իր Խոսքում ասել է. «Բոլոր քեզ դեմ շինած գործիքները պիտի չհաջողվեն, և ամեն լեզու, որ վեր կենա քո

դեմ դատաստանի, պիտի դատապարտվի. սա է Տիրոջ ծառաների ժառանգությունը...» (Եսայի 54.17): Կե՛ն, Աստված յուրահատուկ ձևով ցույց է տալիս, որ *դու* ես այն մարդը, ով պետք է պայքարի և հեռացնի հարձակումները: Նա քո փոխարեն դա չի անի. *դո՛ւ* պետք է հրամայես սատանային: Դու կարող ես շարունակ աղաղակել Աստծուն, բայց Աստված քեզ այն նույն պատասխանը կտա, ինչ նախագահը. «Կրակի՛ր նրան...» կամ «Հարվածի՛ր նրան սրով...»:

Կենն ուղիղ նայում էր ինձ: Նա Սուրբ Հոգու տված օրինակի մեջ իմաստություն տեսավ: Իսկ վերջում, երբ դուրս եկավ իմ գրասենյակից, արդեն լցված էր հույսով և հավատքով:

Երեք շաբաթ անց նա վերադարձավ իմ գրասենյակ՝ լայն ժպիտը դեմքին: Նրա քայլվածքը թեթև էր, աչքերը փայլում էին, իսկ ձայնի մեջ մի կայծ էր նկատվում. «Ձո՛ն, դու պետք է լսես, թե ինչ է կատարվել»:

Ես առաջ ձգվեցի՝ ակնկալելով լավ նորություն լսել:

- Կիրակի առավոտյան, երբ գնում էի եկեղեցական հավաքույթի, այդ վախն ինձ կրկին համակեց,- ասաց Կենը: - Այնպիսի սարսափելի վախ առաջացավ իմ մեջ, որ ցանկացած պահին կարող էի մահանալ սրտի կաթվածից: Ես նորից սկսեցի քրտնել: Բայց այս անգամ Աստծուն աղաղակելու փոխարեն (այս անգամ զգացի, որ մինչև կոկորդս կուշտ եմ այս ամենից) սկսեցի բարկությունս թափել սատանայի գլխին: Ձայրույթը եռում էր ներսումս, և առանց որևէ բան զգուշացնելու կնոջս, ով նստած էր կողքիս, ես բռունցքով հարվածեցի մեքենայիս կառանիվի թևին: Նա վեր թռավ տեղից: Ես բացականչեցի. «Սատանա՛, բավակա՛ն է: Ես մի կողմ եմ նետում քեզ և քո բերած վախը»: Հետո սկսեցի բարձրաձայն և ջերմեռանդորեն խոսել Աստծո Խոսքը իմ կյանքի համար:

Պատկերացնո՞ւմ ես, Ձո՛ն, երբ ես բռունցքով հարվածեցի մեքենայիս և բղավեցի՝ սատանա՛, բավակա՛ն է, հանկարծ մի տեսիլք տեսա. ես տեսա Հիսուսին՝ Իր երկնային գահին նստած, և այն պահին, երբ ես հակառակ կանգնեցի սատանային, Հիսուսը մեծ ոգևորությամբ կանգնեց և ձեռքերը լայն պարզած՝ բացականչեց՝ այո՜:

Կենը ծիծաղելով ասաց.

- Ձո՛ն, կարծես Հիսուսն ասում էր. «Ես սպասում էի, որ դու կանես դա: Ես այնքան ուրախ եմ, որ դու վերջապես արեցի՛ր դա»:

Կենն այլևս չտրվեց վախին: Նա այլևս չէր պայքարում վախի ճնշման դեմ: Այսօր, ավելի քան քսան տարի անց, այդ սիրելի անձնավորությունը դեռևս ողջ և առողջ է, ունի մեծ եկեղեցի Միացյալ Նահանգների հարավում: Նա իրեն շատ լավ է զգում *թե՛* ֆիզիկապես, *թե՛* հոգեպես:

ԱՆԿՈՏՐՈՒՄ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հիմա մի փոքր ավելի խորը նայենք Պետրոսի խոսքերին.

> «…Եղե՛ք սթափ և զգոն, որովհետև ձեր ոսոխ թշնամին՝ սատանան, գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կուլ տա: Որին հակառա՛կ կանգնեք հավատքով հաստատված...» (Ա Պետրոս 5.8,9):

Եթե առաջին գլխից հիշում եք, *«անկոտրում»* բառի հոմանիշներից մեկը *«հաստատակամ»* բառն է:

Աստվածաշունչը չի սովորեցնում, որ, եթե թշնամուն դիմակայում ենք մեկ անգամ, ուրեմն նրան արգելվում է վերադառնալ և կրկին փորձել: Աստծո Խչի սովորեցնում մեզ, որ թշնամուն հակառակ կանգնելով՝ նա փախչում է և այլևս չի վերադառնում և չի փորձում կրկին հարձակվել: Ո՛չ, ճիշտ հակառակը. նա կարող է գրոհել քեզ վրա կրկին ու կրկին:

Տարիների ընթացքում ես հասկացել եմ մի բան, որ շատ քրիստոնյաներ հենց այստեղ են ընկնում հուսահատության մեջ և պարտվում: Երբ առաջին իսկ գրոհից արդյունք չեն տեսնում, նրանք սկսում են մտածել, որ *դա չի գործում* իրենց կյանքում կա՛մ էլ դա նրանց ճակատագիրն է, այսինքն՝ *այն, ինչ պետք է լինի*: Սա ուղղակի մեծ սուտ է. մենք երբեք չպետք է թույլ տանք ընդունել դրանք:

Մեկ այլ պատմությամբ ցանկանում եմ ցույց է տալ հետևյալը. Լիզան փոքր հասակում ծակոցներ և սուր ցավեր է ունեցել: Պարզվում է, որ դա նորածինների մոտ նորմալ երևույթ է: Սովորաբար դա լինում է մեկ տարեկանից ցածր երեխաների մոտ: Բնականաբար, բոլոր նորածիններն էլ լալիս են, բայց այն երեխան, ով ծակոցներ և սուր ցավեր է ունենում, ավելի երկար է լալիս, քանի որ ոչինչ չի կարող մեղմել այդ ցավը: Նրանք այդ ցավից կարող են անդադար լացել, գրեթե ամեն օր, իսկ դա կարող է տևել երկար ամիսներ: Բժիշկները դեռ չեն բացահայտել այդ սուր ցավերի պատ-

ճառը, բայց նրանցից շատերի կարծիքով դրա պատճառը դեռևս լավ չձևավորված մարսողական համակարգն է:

Մեր անդրանիկ որդին՝ Էդիսոնը, նույնպես սուր ծակոցներ ուներ: Ես հիշում եմ, թե ինչպես էր նա անդադար լալիս. արտաքուստ թվում էր, որ լալիս է առանց պատճառի: Առաջին մի քանի անգամները դա, կարծես, անվերջանալի լիներ: Մենք թփթփացնում էինք նրա մեջքին, օրորում և երգում էինք նրա համար, իսկ նա շարունակում էր ճչալ: Մենք ասես անզոր էիք. նա ոչ մի կերպ չէր հանգստանում: Այդպես անցավ որոշ ժամանակ, և մեկ օր էլ, երբ վերցրի նրան իմ ձեռքերի մեջ, հրամայեցի, որ ցավը դուրս գա նրա մարմնից: Հետո հրամայեցի նրա մարսողական համակարգին, ապա Հոգով բարձրաձայն աղոթեցի, և Էդիսոնը քնեց:

Մի գիշեր, երբ Լիզան լոգարանում էր, իսկ ես արդեն անկողնում էի, հանկարծ մանկական սենյակից լսեցինք մի սարսափելի ճիչ: Իսկ Լիզան լոգարանից բացականչեց. «Ձո՛ն, կրկին ծակոցներ են»:

Ես վեր կացա անկողնուց և հայացքս ուղղեցի ժամացույցին. ժամը 24:11 րոպե էր: Ես շտապեցի մանկական սենյակ, վերցրի Էդիսոնին իր օրորոցից և Հիսուսի՛ անունով հրամայեցի, որ ցավը դուրս գա իմ երեխայի մարմնից: Հետո սկսեցի այնքան աղոթել Հոգով, մինչև Էդիսոնը քնեց: Դա տևեց մոտ տասնհինգ րոպե:

Հաջորդ գիշեր ես և Լիզան կրկին անկողնում էինք, երբ նորից լսեցինք այդ սարսափելի ճիչը: Պետք է խոստովանեմ, որ առաջին միտքը, որ եկավ, սա էր. *«Այս ամենը չի գործում: Դու շարունակում ես աղոթել նրա համար, բայց նա չի լավանում: Քո աղոթքներն արդյունավետ չեն, և դու հավատք չունես»*:

Ես ստիպված էի գիտակցաբար դեն նետել իմ մտքերը, և դրանք փոխարինել Աստծո Խոսքով, որ ասում է մեր աղոթքների պատասխանների մասին: Ես ասացի Լիզային. «Թո՛ւյլ տուր ես զբաղվեմ սրանով»:

Ես կրկին վեր կացա և նայեցի ժամացույցին: Կրկին ժամը 24:11 րոպե էր: Եվ ես մտածեցի, որ *դա պատահականություն է*: Ես շտապեցի դեպի փոքրիկ Էդիսոնի ննջասենյակ, ամուր գրկեցի նրան և Հիսուսի անունով հրամայեցի, որ ցավը հեռանա, ապա աղոթեցի Հոգով այնքան ժամանակ, մինչև փոքրիկը քնեց: Դա կրկին տևեց տասից տասնհինգ րոպե:

Հաջորդ գիշեր, Լիզան զբաղված էր իր դիմահարդարմամբ, իսկ ես

անկողնում էի: Արդեն երրորդ կեսգիշերն էր, որ մենք լսում էինք այդ սարսափելի ճիչը:

Այս անգամ իմ մտքերը մի փոքր ամրապնդում էին իրենց դիրքերը. *«Ձո՛ն, դու արդեն երկու շաբաթ է աղոթում ես էդիսոնի համար: Դու աղոթեցիր անցած և նախանցած գիշերները: Պարզապես ընդունի՛ր այն փաստը, որ դու քո երեխային ոչ մի կերպ չես կարող օգնել: Քո աղոթքները չեն գործում»*: Ես կրկին սկսեցի պայքարել իմ մտքերի դեմ՝ փոխարինելով դրանք Աստծո Խոսքով:

Ես կրկին վեր կացա անկողնուց, աչքերս հառեցի ժամացույցին. ես երկրորդ անգամ նայեցի ժամացույցին: Արդեն երրորդ գիշերն էր, որ ճիչը սկսվում էր ժամը 24:11 րոպեին: Ես սկսում էի զայրանալ: Ես մտա ննջասենյակ, տեսա իմ տառապող երեխային, հասա նրա օրորոցին և ձեռքս դրեցի նրա կրծքավանդակին. նայելով իմ փոքրիկ տղային՝ զգացի, որ ոչ միայն ես եմ նայում նրան՝ իմ որդուն, այլ կարծես Սուրբ Հոգին էլ էր նայում նրան իմ աչքերով:

Մեծ զայրույթով ու իշխանությամբ ես բացականչեցի. «Դո՛ւ, սուր ցավի ու տկարության չար ոգի, բավակա՛ն է որդուս տանջես: Ես քանդում եմ այս անեծքը, որն անցել է Լիզայի ընտանիքից, և հրամայում եմ քեզ Հիսուսի՛ անունով, որ ետ քաշես կեղտոտ ձեռքերդ էդիսոնի վրայից: Դու պետք է հենց հիմա բաց թողնես նրան ու այլևս չվերադառնաս»: Դուք կմտածեք, որ դա կսարսափեցներ երեխային, բայց տեղի ունեցավ ճիշտ հակառակը:

Փոքրիկ էդիսոնն անմիջապես դադարեց լաց լինել, քնքշորեն նայեց ինձ, ապա փակեց աչքերն ու քնեց: Դա վերջին անգամ էր, որ նա երբևէ լաց եղավ սուր ցավերից:

Այդ գիշերվանից հետո նրա մոտ ամեն բան լավ էր. այժմ նա ուրախ մանկիկ էր: Թշնամին բավարարվել էր և հոգնել էր սրի հարվածներից խոցոտվելուց: Նա էդիսոնից փախել էր և չէր ցանկանում վերադառնալ:

Մեր երկրորդ որդին՝ Օսթինը, ընտանիքում հայտնվեց երեք տարի անց: Ծնվելուց մի քանի ամիս հետո նրա մոտ նույնպես սկսվեցին արտահայտվել նույն նախանշանները: Ես գիտեի, թե ինչ էր կատարվում և լիովին պատրաստ էի մեկ այլ պայքարի: Ողջ իշխանությամբ մեկ-երկու անգամ հռչակումներ անելով՝ երեխայի լացը դադարեց, ծակոցները նույնպես դադարեցին և այլևս նրան չանհանգստացրին: Մի քանի տարի անց, երբ

ծնվեց մեր երրորդ որդին՝ Ալեքսը, նա ոչ մի խնդիր չուներ. շղթան քանդված էր: Ես պատկերացնում եմ, թե ինչ է թշնամին մտածում. *«Եթե ես նորից փորձեմ, Աստծո Խոսքի սուրը կրկին ինձ կենթարկի խոցոտման և թրատման»*:

Հարգելի՛ բարեկամ, անկոտրում եղի՛ր սատանային դիմադրելիս: Անմիջապես և հաստատուն կերպով սաստի՛ր նրան այն իշխանությամբ, որը պատկանում է քեզ Տեր Հիսուս Քրիստոսի շնորհիվ: *Գերությունից ազատ լինելու մեր վճռականությունը պետք է ավելի մեծ լինի, քան մեր հակառակորդի վճռականությունը, մեզ գերի վերցնելու հարցում*:

Ես երբեք չեմ մոռանա այն միսիոների վկայությունը, ով ծառայում էր Մեքսիկայի հնդիկներին: Նա հիմնականում աշխատում էր լեռնային փոքր գյուղերում, և այդ գյուղերից մեկում գրեթե բոլորը հավատացյալ էին՝ նրա թիմի ծառայության շնորհիվ:

Մի երեկո գյուղացիները նրան արթնացնում են: Նրանք շատ զայրացած էին. եկեղեցու միսիայում ծառայող զույգերից մեկի երեխան էր մահացել: Ընտանիքի անդամները խնդրել էին միսիոներին շտապ գալ և աղոթել երեխայի համար: Նա անմիջապես վեր է կենում, գնում նրանց տուն և հրամայում է մահվան ոգուն դուրս գալ երեխայի միջից: Ոոպեների ընթացքում փոքրիկը սկսում է հազալ, փռշտալ և շնչել: Ե՛րեխան վերակենդանանում է: Բոլորը սկսում են ուրախանալ, իսկ միսիոները տուն վերադառնալով՝ պառկում է քնելու:

Քիչ ժամանակ անց նույն մարդիկ կրկին թակում են նրա դուռը: Երեխան երկրորդ անգամ էր մահացել: Միսիոները վեր է կենում, սաստում մահվան ոգուն և երեխայի կյանքը կրկին վերադառնում է: Այդ միսիոները պատմում էր, որ ինքն այդ գիշեր ստիպված է եղել դիմադրել մահվան ոգուն մի քանի անգամ, մինչև որ նա բաց է թողել երեխային:

Այդ միսիոները վկայում է, որ երեխան հիմա ողջ է, և նա միակ առողջ երեխան է ողջ գյուղում:

ԱՄՈ՛ՒՐ ԲՌՆԵՔ

Շատ հաճախ ես ականատես եմ եղել ողբերգական կորուստներից տուժած հավատացյալների: Նրանք իսկապես Աստծուց ստացել են օրհնություններ, բժշկություն և հրաշքներ, բայց օրերի, շաբաթների, ամիս-

ների կամ տարիների ընթացքում նրանք կորցրել են իրենց ստացած բարիքները: Ահա թե ինչու է Աստվածաշունչը մեզ կոչ անում. «Լավը ամո՛ւր պահեք» (Ա Թեսաղ. 5.21, NLT):

Յուրաքանչյուր հավատացյալ պետք է խորհի և ամուր հիմնվի այս Խոսքի վրա, որը ես սովորեցի իմ քրիստոնեության վաղ տարիներին:

Դեռահասության ընթացքում ես շատ եմ տառապել գոտկատեղի սարսափելի ցավերից: Հետո, երբ արդեն մեկ տարի էր, ինչ վերստին ծնվել էի, ընկերոջս հետ մասնակցեցի եկեղեցական մի հավաքույթի: Ծառայությունն անցկացնող կինը հայտարարեց. «Այստեղ կա մեկը, ով տառապում է մեջքի ցավից, որը հատկապես զգալի է գոտկատեղի ստորին հատվածում»:

Ես անմիջապես հասկացա, որ նա ինձ նկատի ուներ, բայց որոշեցի խորամանկել. ուզում էի տեսնել, թե ինչ է կատարվելու: Ես կյանքիս մեծ մասը հաճախել եմ կաթոլիկ եկեղեցու պատարագներին, և սովոր չէի, որ ծառայողը ներկայացնում է ինչ-որ մեկի կարիքը: Ես իմ տեղում նստած մնացի, և երբ այդ կինը շարունակեց իր քարոզը, ես հանգիստ շունչ քաշեցի: Տասը րոպե անց նա ասաց. «Ես ներողություն եմ խնդրում, բայց Տերը պարզապես չի թողնում ինձ առաջ անցնել այդ խնդրից: Ինչ-որ մեկն այս հավաքույթում կարիք ունի մեջքի բժշկության»:

Ես կրկին մտածեցի. «*Ես չեմ պատրաստվում այսքան մարդկանց առջև գնալ առաջ: Ես տեղիցս չեմ շարժվի»:* Սակայն այս անգամ զգացի, որ Սուրբ Հոգին էր ինձ քաշում, այնպես որ, մի կողմ վանելով իմ մտքերը՝ որոշեցի արձագանքել կոչին: Այդ կինը և նրա ամուսինը աղոթեցին ինձ համար, և մեջքս անմիջապես բժշկվեց: Ես զարմացած էի. իմ մեջքի ցավը չէր դադարել տարիներ շարունակ: Ես իսկապես երախտապարտ էի Աստծուն նրա համար, թե ինչ արեց Նա իմ մարմնի մեջ այդ երեկո:

Հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում ես վայելում էի իմ մեջքի բժշկությունը: Դա հիանալի զգացողություն էր: Ես սիրում էի կռանալ և լվանալ ատամներս կամ սափրվել՝ միևնույն ժամանակ չզգալով ոչ մի սուր ծակոց իմ մեջքի հատվածում. ես այնքան ուրախ և շնորհակալ էի Աստծուն Իր կատարած հրաշքի համար:

Մոտ մեկ ամիս անց ես պառկած էի իմ անկողնում և գրեթե քնած էի, երբ ինչ-ոչ մի բան մտավ իմ սենյակ: Ես չկարողացա տեսնել դա, բայց

հաստատ զգում էի: Մինչև այդ սենյակս ողողված էր լուսնի լույսով, սակայն տարօրինակ կերպով այն խավարով լցվեց: Այդ անհայտ ներկայության հետ մտավ նաև վախը: Հանկարծ ես այդ նույն ցավը զգացի մեջքիս ստորին հատվածում, որի դեմ պայքարել էի տարիներ շարունակ: Անմիջապես հետևյալ միտքն անցավ գլխովս. *«Դու կորցրել ես քո բժշկությունը: Ցավերից ազատ քո օրերն ավարտվեցին: Դու քո կյանքի մնացած տարիներն անցկացնելու ես մեջքի ցավով»*:

Լինելով երիտասարդ հավատացյալ՝ ես լիովին խորացել էի Աստծո Խոսքի մեջ և բավականին բանիմաց էի հասկանալու համար, որ սա հարձակում էր թշնամու կողմից: Թշնամին փորձում էր ստիպել ինձ՝ ընդունել սուտը, որպեսզի ցավը իշխեր իմ կյանքում: Ես անմիջապես ցատկեցի անկողնուց և արագ քայլելով՝ սկսեցի բղավել. «Սատանա՛, երկու շաբաթ առաջ ես բժշկվել եմ ծառայության ժամանակ: Ես ամուր բռնել եմ դա: Եվ Աստծո Խոսքն ասում է, որ Հիսուս Քրիստոսի վերքերով ես բժշկված եմ: Դու չես կապի այդ ցավն իմ մեջքին: Ես հրամայում եմ քեզ՝ հենց հիմա բա՛ց թողնել իմ մարմինը, իմ սենյակը և իմ բնակարանը Հիսուսի անունով»:

Սենյակս լուսավորվեց: Հարձակմանն ուղեկցող վախն ու ներկայությունը անմիջապես անհետացան, ցավը նույնպես հեռացավ: Եվ մինչև օրս ես չեմ պայքարել այդ ցավի դեմ:

Հիսուսն ասում է. «Պահպանի՛ր այն, ինչ ունես, որպեսզի ոչ ոք չգողանա քեզանից քո հաղթանակի մրցանակը» (Հայտն. 3.11, TEV): Մենք պետք է անկոտրում լինենք՝ պահելով այն, ինչ ստացել ենք Աստծուց:

Ամենատխուր պատմություններից մեկը, որին վկա եմ եղել, մի մարդու մասին է, ով զարմանահրաշ բժշկություն էր ստացել եկեղեցական ծառայություններից մեկի ժամանակ, որտեղ ես էի քարոզում: Ամբոխը մեծ էր, այնպես որ, վերջում ես ընդհանուր աղոթք արեցի: Աղոթքի ընթացքում նկատեցի մի տղամարդու, ով գլուխը խոնարհած՝ լալիս էր մարդկանց շարքերի մեջ կանգնած: Ես մոտեցա նրան, որպեսզի տեսնեմ, թե ինչ է պատահել:

Մենք պետք է անկոտրում լինենք՝ պահելով այն, ինչ ստացել ենք Աստծուց:

Պարզվեց, որ նա մեջքի մի քանի վիրահատություն է տարել և այժմ գտնվում է հաշմանդամի կարգավիճակում:

Նա ունեցել է խրոնիկական ցավեր, սակայն լիովին բժշկվել է: Այդ տղամարդն այնպես էր լացում իր ստացած հրաշալի բժշկության համար. ես երբեք չէի տեսել այդպիսի տարեց մարդու լաց լինելիս: Դա ուրախության լաց էր:

Շաբաթներ անց ռեստորանում մենք հանդիպեցինք միմյանց: Նա ժպտում էր և լի էր կենսուրախությամբ: Այդ մարդը վկայեց, որ նա այլևս հաշմանդամ չէ և վայելում է իր նորահայտ ազատությունը: Ես անչափ ուրախ էի նրա համար:

Մեկ տարի անց, ես կրկին հանդիպեցի նրան: Այս անգամ նա չդիմավորեց ինձ ժպիտով, ինչպես վերջին հանդիպման ժամանակ: Ճիշտն ասած՝ նա ընդհանրապես չմոտեցավ ինձ: Բայց ես մոտեցա նրան և հարցրի՝ ինչպես է իրեն զգում: Նա ասաց, որ կրկին մեջքի ցավեր ունի: Եվ ասաց, որ կասկածում է, թե այն երեկո հավաքույթի ժամանակ արդյո՞ք իր ստացած բժշկությունն իրական է եղել:

Նա փորձում էր հավատացնել ինձ, որ իր հիվանդության կրկնվելը ամբողջովին էլ վատ չէ, որովհետև Աստված նրան կյանքի դասեր էր սովորեցրել այս ցավերի միջոցով: Ես փորձեցի կիսվել նրա հետ Հիսուսի խոսքերից. «Ամո՛ւր պահեք…», բայց նրան ամենևին չէր էլ հետաքրքրում, թե ինչ էի ես ասում, քանի որ նա իրեն մեկ այլ բան էր համոզել:

Մինչև օրս նա լավ մարդ է, լավ հայր և ամուսին, բայց, ցավոք, նա շարունակում է կրել այն բեռը, որից ազատագրվելու համար Հիսուսը մեծ գին վճարեց:

ԱՆՀՆԱՐ Է ՉՍՏԱՆԱԼ

Այն, ինչ պետք է հիմա ասեմ, շատ կարևոր է: Եթե հավատաք և հաստատակամորեն դիմադրեք չարին, դուք *միշտ* կհաղթեք: Ամո՛ւր բռնեք, հռչակե՛ք և համարձա՛կ գործեք՝ ըստ մեզ տրված խոստմունքի. «…Հակառա՛կ կանգնեք սատանային, և նա կփախչի ձեզանից» (Հակոբ. 4.7):

Հունարենում *«փախչել»* բառը *«pheugo»* բառն է, որը նշանակում է «անհետանալ, չքվել, փախչել, հեռու փախչել և փրկվել՝ դիմելով փախուստի»: Ես նույնիսկ գիտեմ, որ «pheugo» բառին տալիս են հետևյալ նշանակությունը՝ «խուճապի մատնված փախչել»: Դա այնքա՜ն լավ է

հնչում: Աստծո Խոսքը չի ասում, որ սատանան *փախչում* է ձեզանից: Ո՛չ, եթե դուք դիմադրեք, հակառակ կանգնեք նրան, նա *կփախչի*: Նա *ատում է* խիզախ, աստվածաշնչյան դիրքով դիմադրությունը:

Իմացե՛ք, որ թշնամին վախենում է ձեզանից: Երբ նա նայում է ձեզ, նա չի տեսնում այն, ինչ տեսնում են ձեր ընկերները, նա ձեզանում տեսնում է Քրիստոսին: Դուք Քրիստոսի մարմինն եք, Աստծո օծյալն եք: Դուք ստեղծված եք Նրա պատկերով, Ով կործանեց սատանային և զինաթափ արեց նրան իր բոլոր զենքերից: Եվ դուք այսօր մեծ վտանգ եք ներկայացնում նրա համար:

Մեզանից շատերը թույլ են տվել իրենց պատկերացումներին ուռճացնել սատանայի զորությունը, բայց նա իրականում ձեզանից ցածր է. նա Քրիստոսի ոտքերի տակ է, իսկ մենք Քրիստոսի մարմինն ենք: Եվ եթե անգամ դու քեզ զգում ես Քրիստոսի մարմնի ամենափոքր անդամը, միևնույն է, թշնամու ողջ զորությունը Քրիստոսի մեջ քո ունեցած դիրքից էլ ցածր է: Աստվածաշունչը հռչակում է.

> «Ինչպե՞ս վայր ընկար Երկնքից, օ՜ առավոտյան ծագող Արուսյակ: Կտրվեցիր՝ գետինն ընկար, ո՛վ ազգեր նկուն անող: Բայց ինքդ ասել էիր քո սրտում. «Վե՛ր ելնեմ Երկինք, Աստծո աստղերից բարձր կդնեմ իմ աթոռը, կնստեմ աստվածների ժողովի սարի վրա հյուսիսի ծայրերում: Վե՛ր կելնեմ ամպերի բարձրությունների վրա, Բարձրյալին կնմանվեմ»: Բայց դու դժոխքն ես իջել, գուբի խորխորատները: Քեզ տեսնողները զարմանալու են քեզ վրա և հարցնելու են. «Սա՞ չէր այն մեկը, որ սարսռեցնում էր երկիրը, դողացնում էր աշխարհի թագավորությունները»» (Եսայի 14.12-16, NLT):

Իրականում Եսային գրում է Բաբելոնի թագավորի մասին: Սակայն մարգարեական գրվածքը հաճախ ունենում է երկու տարբեր կիրառություններ և իրականացումներ. մեկը՝ ֆիզիկական, մյուսը՝ հոգևոր: Ըստ Եսայի մարգարեի՝ այն մեկը, ում ուժը կործանում է անհատների, ընտանիքների և ազգերի, անկասկած, հոգևոր բնագավառում նկատի ունի սատանային: Եվ ըստ մարգարեի՝ նրա վերջը կրակի լճի խորխորատներն են, որտեղ նա և նրա գործակիցները պետք է նետվեն «տառապելու համար օր ու գիշեր, հավիտյանս հավիտենից» (Հայտն. 20.10, NLT):

Անհնար է Աստծուց չստանալ օրհնություններ և փրկություն, եթե հավատում ես և հակառակ ես կանգնում խավարի ուժերին: Դրանք կարող են լինել ֆինանսական, մտքի, իմաստության, առողջության, բիզնեսի,

ծառայության կամ ամենակարևորը՝ ուրիշներին օգնելու ձեր կարողության բնագավառները: Եթե ՛դուք պայքարում եք Հոգու սրով, ապա ամեն անգամ կհաղթանակեք և բարձրում կլինեք, ինչպես Հիսուսն էր վարվում:

ԶԳՈՒՇԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Բայց մինչև այս գլուխն ավարտելը, ցանկանում եմ անդրադառնալ երկու ծայրահեղությունների, որոնց ականատեսն եմ եղել Քրիստոսի մարմնում: Առաջին ծայրահեղությունը սատանային ամեն մի թփի տակ փնտրելն է:

Այս խմբին պատկանող քրիստոնյաներն այնքան են կենտրոնանում դևերի վրա, որ իրենց հայացքը վաղուց կտրել են Վարդապետի հայացքից: Սա ճիշտ չէ:

Եվ երկրորդ ծայրահեղությունն Աստծուն սիրելն է՝ միևնույն ժամանակ լիովին անտեսելով թշնամուն, ինչպես իմ գրասենյակ այցելած հովիվ Կենը: Նման մտածելակերպով քրիստոնյաների մեծամասնությունը կարծում է, որ *եթե ինքը չարին ոչ մի ուշադրություն չդարձնի, այն, ի վերջո, կհեռանա*: Դա սխալ միտք է և հեռու է ճշմարտությունից: Մեզ տրված է պատվեր՝ համառորեն դիմադրել հակառակորդին և շարունակել այնքան, մինչև Աստծո կամքը գերիշխի: Մենք պետք է գիտակցենք, որ ոչինչ չի փոխվի, եթե հակառակ չկանգնենք Հիսուսի անունով: Մի՛ վախեցեք դիմադրելուց: Դա ձեր պարտքն է որպես Արքայության քաղաքացիներ, դա ձեր հնազանդությունն է առ Աստված և դա Աստծո փառահեղ զորությունն է, որ հանգչում է ձեզ վրա Նրա շնորհքի միջոցով:

Աստվածաշունչը մեզ սովորեցնում է, թե ինչպես ապրել հոգևոր առողջ կյանքով: Եվ մենք ունենք կոչ. «Համբերությամբ վազենք մեր առջև դրված ասպարեզի ընթացքը, *մտիկ տանք հավատքի Ջորագլխին և Կատարողին՝ Հիսուսին*...» (Եբր. 12.1,2): Եվ մեր առողջ ապրելակերպի հիմքում ընկած է այն, որ մենք մեր հայացքը պետք է սևեռենք Հիսուսի վրա: Եթե սատանան կամ նրա դևերից որևէ մեկը արգելք է հանդիսանում ձեր ճանապարհին, առանց վարանելու հարձակվե՛ք նրանց վրա: Դիմադրե՛ք նրան և նա կփախչի: Իսկ հետո անմիջապես կենտրոնացրեք ձեր հայացքը Հիսուսի վրա: Նա՛ է միակը, Ով մեզ հավատք է տալիս, և Նա՛ է միակը, Ով մեզ դրանում կատարյալ է անում:

14

ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՁԵՎԸ

«Որին հակառա՛կ կանգնեք հավատքով հաստատված՝ իմանալով, որ ձեր եղբայրներն էլ, որ աշխարհի մեջ են, նույն չարչարանքներն են քաշում»:

Ա Պետրոս 5.9

Եթադրենք թշնամու ռազմական ուժը ներխուժում է ձեր երկիր և այն գերության մեջ պահում տարիներ շարունակ: Ազատություն ձեռք բերելու համար ձեզ հարկավոր է ոչ միայն դիմակայել հակառակորդին ճակատամարտում, այլ նաև կործանել նրա ստեղծած բերդերը: Դրանք կարող են լինել արկեր, հողում թաքցրած ական-ծուղակներ, բունկերներ, ռազմաբազա և այլն: Սակայն այդ բերդերից ամենադժվարը, որը պետք է հաղթահարել, թշնամուն բնորոշ չար մտածելակերպն է, որն աստիճանաբար ներշնչվում է գերի ընկած երկրի քաղաքացիների մտքերում:

Այս տեսակի ընդդիմությանը չի կարելի հակառակվել անմիջական պայքարով, քանի որ այն հոգեբանական է, ոչ թե ֆիզիկական: Բայց եթե դուք չշահեք պատերազմի այս նենգ բնագավառը, ապա անմիջական պայքարի միջոցով ձեռք բերած բոլոր հաղթանակները կկորցնեք:

Այս գլխում ես ցանկանում եմ խոսել այս տեսակի դիմադրության մասին՝ զինելով ձեզ համապատասխան զենքերով: Ինչպես անմիջական պայքարում, այնպես էլ այստեղ, մենք պետք է լինենք հաստատակամ և անկոտրում: Հակառակ դեպքում, պայքարի ինչպիսի տեսակ էլ լինի, ոչ մի էական արդյունք չենք էլ ունենա: Հակոբոս առաքյալը շեշտում է պայքարելու այս սկզբունքը՝ գրելով. «Հնազանդվե՛ք Աստծուն, հակառա՛կ կանգնեք սատանային, և նա կփախչի ձեզանից» (Հակոբ. 4.7):

Այսինքն՝ Հակոբոսը հայտնում է, որ սատանայի դեմ պայքարելու ամենագլխավոր մեթոդն Աստծուն հնազանդվելն է: Իսկ սա նշանակում է, որ հարկավոր է ունենալ լիակատար վստահություն և հնազանդություն Աստծո հանդեպ: Քանի որ միայն այսպես մենք կարող ենք պահել Նրա ուղիները, ունենալ Նրա մտածելակերպն ու սկզբունքները՝ մեզ շրջապատող աշխարհի աղավաղված և ապականված բոլոր բնագավառների համար: *Բացարձակ հնազանդությունը* այն հիմնական միջոցն է, որով կարող ենք թշնամու կառուցած բերդերը քանդել և բարձրանալ հոգևոր նոր իշխանության վրա: Լսե՛ք Պողոսի խոսքերը.

«Որովհետև, թեև մարմնով ենք վարվում, բայց մարմնավորապես չենք զինվորություն անում: Որովհետև մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, այլ՝ Աստծով զորավոր՝ բերդեր քանդելու. *խորհուրդներ* ենք քանդում, և *ամեն բարձրություն*, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ, և գերի ենք բռնում *ամեն միտք*՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար: Եվ պատրաստ ենք վրեժ առնել *ամեն անհնազանդության համար, երբ որ ձեր հնազանդությունը կատարյալ լինի*» (Բ Կորնթ. 10.3-6):

Իսկ սատանայի բերդերը դրանք մտքեր են, դատողություններ, մտավոր տեսանկյուններ, պատկերացումներ և ցանկացած հոգեբանական մոդելներ, որոնք հակառակ են Աստծո գիտությանը ու Նրա կամքին: Այդ բերդերն իրենց մեջ ընդգրկում են խանդ, ագահություն, եսասիրություն, խարդախություն, կիրք, ատելություն, վեճ, գայթակղություն և նախանձ: Եվ ցավոք այս ցուցակը սրանով չի սահմանափակվում: Սրտի և մտքի այս դիրքերը մրցակցում են Աստծո ճշմարտության հետ և ստեղծում հոգևոր իրական հակամարտություն: Սակայն, ինչպես Պողոսն է գրում, մեր հնազանդությունը կարողություն է տալիս մեզ վրեժ առնելու ամեն անհնազանդությունից:

ԱՃԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵՋ

Ինչպես նշել էի նախորդ գլուխներից մեկում, մեր իշխանության և զորության մակարդակն աճում է, երբ մենք հաջողությամբ հաղթահարում ենք դժվարությունները: Այլ կերպ ասած՝ մենք զարգանում և հասունանում ենք՝ մեր իշխանության մեջ մուտք գործելու համար:

Այս դեպքում Պետրոսի հորդորն ինքներս մեզ զինելու մասին ավելի է բացահայտվում մեզ համար.

> «Արդ Քրիստոսը, որ մարմնով մեզ համար չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինվորվեք, որ մարմնով չարչարվողը *մեղքից դադարեց*: Որ այլևս ոչ թե մարդկանց կրքերի [ցանկությունների] պես, այլ՝ Աստծո կամքի պես ապրեք մարմնում մնացած ժամանակը» (Ա Պետրոս 4.1,2)

Նկատեք՝ «…մարմնով չարչարվողը *մեղքից դադարեց*»: Ի՞նչ նկատի ունի Պետրոսը սա ասելով: Նա խոսում է հոգևոր հասունության մեջ մտնելու, Քրիստոսի մեջ հասուն տղամարդ կամ կին դառնալու մասին: «Հոգևոր չափահաս» անձնավորությունն Արքայության մեջ այլևս չի ապրում մարդու ցանկությունների համաձայն, այլ ամբողջովին նվիրված և հնազանդ է Աստծո կամքին:

Նա այլևս չի տրվում աշխարհի համակարգի ճնշումներին, այլ կարողանում է քանդել և կործանել դրանց բերդերը: Պողոսն այս զորության մասին նկարագրում է նաև Կորնթացիների երկրորդ թղթի 10.6-րդ խոսքում. «Եվ պատրաստ ենք վրեժ առնելու ամեն անհնազանդության համար, երբ որ ձեր հնազանդությունը կատարյալ լինի»:

Մենք պետք է հիշենք, որ անկախ մեր ֆիզիկական տարիքից, մենք Աստծո ընտանիքում ծնվում ենք որպես երեխաներ: Սա նշանակում է, որ մենք պետք է մեծանանք Քրիստոսի մեջ: Ինչպես գրված է. «Նորածին երեխաների պես ցանկացեք այն բանավոր անխարդախ կաթին, որ նրանով աճեք…» (Ա Պետր. 2.2): Ճիշտ այնպես, ինչպես մենք անցնում ենք ֆիզիկական աճի տարբեր փուլերը՝ մանկություն, պատանեկություն, չափահասություն, այնպես էլ պետք է անցնենք հոգևոր աճի փուլերը: Պողոսն ասում է. «Եվ ես, եղբայրնե՛ր, չկարողացա ձեզ հետ խոսել ինչպես հոգևորների հետ, այլ՝ ինչպես մարմնավորների հետ, ինչպես *մանուկների հետ Քրիստոսում*» (Ա Կորնթ. 3.1): Կորնթոսի այս քրիստոնյաները, գտնվելով ֆիզիկապես չափահաս տարիքում, դեռ նորածիններ էին հոգևոր կյանքում: Եվ յուրաքանչյուր հավատացյալի համար այս փուլում մնալն ուղղակի ցավալի է:

Մեկ այլ թղթում Պողոսը խոսում է հոգևոր աճի մեկ ուրիշ փուլի՝ մանկության մասին. «Որ այլևս *երեխա* չլինեք՝ երերված ու տատանված վարդապետության ամեն քամուց...» (Եփես. 4.14): Եվ կրկին. «Եղբայր-

նե՛ր, մտքով երեխա մի՛ եղեք, բայց չարության կողմից երեխա եղեք, իսկ մտքով *հասուն* եղեք» (Ա Կորնթ. 14.20, NKJV): Մենք պետք է երեխաների պես միամիտ լինենք միայն այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է չարությանը, իսկ հասկացողության և հաստատակամության հարցում պետք է հասուն հավատացյալ լինել:

Երեխան վարվում է համաձայն իր ստացած դաստիարակության՝ լինի դա լավ թե վատ: Միևնույն ժամանակ նրանք շատ խոցելի են և հեշտությամբ վիրավորվում են: Սակայն չափահաս անձնավորությունը հիմնականում գիտի, թե որտեղ է կանգնած և հեշտությամբ չի տրվում սխալ ուժերի ճնշումներին: Մենք պետք է աճենք Քրիստոսում, որպեսզի կարողանանք ամուր կանգնել ճշմարտության հիմքի վրա և ետ մղել կամ վրեժ առնել ամեն անհնազանդությունից: Ըստ Պողոսի՝ Քրիստոսում հասուն լինելու համար մեզ պետք է հասկացողություն: Բայց կա ավելին, որին անդրադառնում է Պետրոսը. ինչպե՞ս ենք մենք աճում հոգևորում: Դրա համար նախ՝ եկե՛ք քննարկենք ֆիզիկական, իսկ հետո՝ մտավոր աճը: Ո՞րն է ֆիզիկական աճի ֆունկցիան և ինչո՞վ է այն սահմանափակվում. *ժամանակով*: Երբևէ տեսե՞լ եք վեց ամսական երեխայի, որն ունենա վեց ոտնաչափ հասակ: Ո՛չ, հասուն մարդու հասակին հասնելու համար նրան հարկավոր կլինի տասնհինգից տասնութ տարի: Այսպիսով՝ ֆիզիկական աճի ֆունկցիան *ժամանակն* է:

Մտավոր աճը, ի տարբերություն ֆիզիկական աճի, ժամանակով չի սահմանափակվում:

Ես հանդիպել եմ տասնչորս տարեկան մի պատանու, ով արդեն ավարտել էր դպրոցը իր զարմանալի կարողությունների շնորհիվ: Բայց և հանդիպել եմ հիսուն տարեկան մարդու, ով այդպես էլ չէր ավարտել միջնակարգ դպրոցը: Այնպես որ՝ մտավոր կամ գաղափարային աճի ֆունկցիան ոչ թե ժամանակն է, այլ՝ *գիտելիքը*: Ըստ կարգի՝ դու առաջին դասարանից պետք է տեղափոխվես երկրորդ դասարան, հետո՝ երրորդ, ապա՝ չորրորդ, հինգերորդ և այլն: Եվ դու դա կարող ես անել արագ կամ դանդաղ, ինչպես կամենաս:

Այսպիսով՝ արդյո՞ք հոգևոր աճն ու հասունությունը կախված են ժամանակի կատարած ֆունկցիայից և սահմանափակվում են դրանով:

Ես տեսել եմ մարդկանց, ովքեր եղել են ընդամենը մեկ տարվա վերս-

տին ծնված քրիստոնյաներ, բայց աճել են հասունության մեջ: Բայց նաև տեսել եմ մարդկանց, ովքեր արդեն քսան տարի է փրկված են, սակայն մինչև օրս «հոգևոր տակդիրներ» են հագնում, բազմաթիվ խնդիր առաջացնում իրենց քրիստոնյա առաջնորդների, ինչպես նաև հավատացյալ ընկերների համար: Այնպես որ, հոգևոր հասունությունը կախված չէ ժամանակի կատարած ֆունկցիայից:

Իսկ արդյո՞ք հոգևոր աճն ու հասունությունը կախված են գիտելիքի ֆունկցիայից և սահմանափվակում են դրանով:

Փարիսեցիները անգիր գիտեին Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը, բայց նրանք այդպես էլ չկարողացան ճանաչել Աստծո Որդուն, երբ Նա իրենց աչքի առաջ բժշկում էր հիվանդներին և ազատագրում էր կապվածներին դևերից: Նրանց կյանքում կեղծավորությունն էր տիրում: Նրանց հոգևոր կուրությունը թույլ չտվեց նրանց տեսնելու Մեսիայի գալուստն ու ծառայությունը:

Ուրեմն, ո՞րն է հոգևոր աճի ֆունկցիան, և ինչո՞վ է այն սահմանափակվում: Պատասխանը *չարչարանքն* է: Կրկի՛ն նայեք Պետրոսի խոսքերին. «…մարմնով չարչարվողը *մեղքից դադարեց*» (Ա Պետր. 4.1): Այսինքն՝ նա, ով դադարում է մեղք գործելուց, ձեռք է բերում հոգևոր լիակատար հասունություն:

Դու միգուցե հետևություն անես. «Ես գիտեմ մարդկանց, ովքեր չարչարվել են, և է՛լ ավելի դառնացել»: Այո՛, հնարավոր է: Բայց հոգևոր հասունության համար կա ևս մեկ բանալի: Եբրայեցիներին ուղղված թղթում հեղինակը լուսաբանում է դա. «Թեև Որդի էր, սակայն չարչարանքներից հնազանդություն սովորեց» (Եբր. 5.8):

Հոգևոր աճ չենք ունենում այն ժամանակ, երբ մեր կյանքում արևը պայծառ է շողում:

Այս խոսքը շատ պարզ մեկնում է, որ Հիսուսը երկիր գալուց չէր բերել հնազանդությունն Իր հետ: Նա պետք է սովորեր հնազանդվել, և Նա դա արեց կատարյալ ձևով: Նա երբեք մեղք չգործեց և չսխալվեց: Մեր քննարկման *համար հիմնական բանալին սա է. Հիսուսը չարչարանքների միջոցով հնազանդություն սովորեց*: Այս խոսքը կապելով Պետրոսի խոսքի հետ՝ կբացահայտենք, որ հոգևոր աճ չենք ունենում այն ժամանակ,

երբ մեր կյանքում արևը պայծառ է շողում, երբ մեզ հետ լավ են խոսում կամ լավ են վերաբերվում, երբ կյանքում ամեն բան հարթ է ընթանում: Ո՛չ, մենք հոգեպես աճում ենք այն ժամանակ, երբ շարունակում ենք հնազանդվել Աստծուն փորձությունների պահերին: Մենք ավելի շատ ենք աճում, երբ հնազանդվում ենք Աստծո իմաստությանը, երբ մարդիկ զրպարտում են մեզ, բամբասում, չարախոսում են մեր մասին, փորձում վիրավորել ... կամ՝ երբ մենք պարզապես կորցնում ենք մեր աշխատանքը, վատ տեղեկություն ստանում փաստաբանից կամ բժշկից, կամ չենք իմանում, թե որտեղից կգան անհրաժեշտ միջոցները:

Մենք աճելու համար ընտրում ենք Աստծուն հավատալու դժվարին եղանակը, թեկուզ, եթե դա մեզ համար անբարենպաստ է թվում: Մենք ընտրում ենք դիմադրել մեզ վրա հարձակում գործող չարին՝ առաջին հերթին հնազանդվելով Աստծո Խոսքին: Ահա թե երբ է սկսվում իսկական հոգևոր աճը: Հակոբի որդի Հովսեփի կյանքը սրա փայլուն օրինակն է:

ՀՈՎՍԵՓԻ ԵՐԱՋԸ

Աստված Աբրահամի հետ ուխտ կնքեց: Խոստմունքն անցավ նրա որդի Իսահակին, իսկ հետո՝ նրա թոռ Հակոբին: Հակոբն ուներ տասներկու որդի, Հովսեփը տասնմեկերորդն էր: Հովսեփի ավագ եղբայրներն անարգում էին նրան, և Աստվածաշունչը տալիս է դրա բացատրությունը: Երիտասարդ Հովսեփը շատ էր շաղակրատում (տե՛ս Ծննդ. 37.2) և մի քիչ էլ պարծենկոտ էր (տե՛ս 5-րդ խոսք): Բայց նրանց հայր Հակոբը Հովսեփին մյուսներից շատ էր սիրում, իսկ հետո է՛լ ավելի երես տվեց նրան՝ նվիրելով թևքերով պատմուճան: Եվ սրա պատճառով Հովսեփի եղբայրները նրա հանդեպ դարձան անբարյացակամ:

Նրանց հարաբերություններն արդեն իսկ լարվել էին, սակայն բաժակը լցվեց այն ժամանակ, երբ Աստված Հովսեփին երկու երազ ցույց տվեց: Առաջին երազում Հովսեփը տեսավ դաշտում կապված ցորենի հասկեր: Նրա հասկն ուղիղ կանգնած էր, իսկ եղբայրների հասկերը խոնարհվում էին իր հասկի առջև:

Երկրորդ երազում Հովսեփը տեսավ արև, լուսին և տասնմեկ աստղ, որոնք խոնարհվել էին իր առջև:

Միամտաբար և ոգևորված պատմելով այդ երկու երազներն իր եղբայրներին՝ Հովսեփը տվեց իր իսկ մեկնաբանությունը, որ մեկ օր ինքը կիշխի նրանց վրա: Այսքանից հետո զարմանալի չէր, որ եղբայրները չկիսեցին Հովսեփի ոգևորությունը և է՛լ ավելի ատեցին նրան:

Եվ մեկ օր էլ Հովսեփի տասը եղբայրները դուրս եկան իրենց հոր հոտերի համար թարմ արոտավայրեր գտնելու: Որոշ ժամանակ անց Հակոբը Հովսեփին ուղարկեց նրանց ետևից՝ տեսնելու, թե ինչպես են նրանք այնտեղ: Հենց որ եղբայրները տեսան Հովսեփին՝ գաղտնի կերպով միմյանց մեջ համաձայնության եկան. «Ահա գալիս է մեր կրտսեր եղբայրը, Մեծն երազողը, պարոն Առաջնորդը, մեր հռչակավոր Ղեկավարը: Եկե՛ք սպանենք նրան: Հետո կտեսնենք, թե ինչպես կիրականանան նրա երազները» (հեղինակի մեկնաբանմամբ):

Այսպիսով՝ նրանք նետում են Հովսեփին մի փոսի մեջ՝ նրան այնտեղ թողնելու մտադրությամբ, որպեսզի հենց այնտեղ էլ մահանա: Սակայն մի քանի ժամ անց Եգիպտոս գնացող իսմայելացիների մի քարավան է անցնում: Հուդայի՝ Հակոբի չորրորդ որդու գլխով մի պայծառ միտք է անցնում. «Հե՜յ, տղանե՛ր, սպասե՛ք: Եթե սրան փոսում թողնենք, որ հոտի, դա մեզ օգուտ չի բերի: Եկե՛ք վաճառենք սրան որպես ստրուկ և որոշակի գումար ձեռք կբերենք: Նա մեռածի պես կլինի մեզ համար և այլևս չի անհանգստացնի, իսկ գումարը կկիսվենք: Ու ամենակարևորը՝ մեր ձեռքով չենք սպանի նրան» (հեղինակի մեկնաբանմամբ):

Եղբայրներին շատ դուր եկավ գաղափարը, այնպես որ, նրանք վաճառեցին Հովսեփին քսան կտոր արծաթով: Նախանձը, ատելությունն ու չարակամությունը նրանց դրդեցին այնպիսի արարքի, որով նրանք զրկեցին Հովսեփին իր ժառանգությունից և ընտանիքից: Հիշե՛ք, որ այդ անողները նրա հարազատ եղբայրներն էին:

Այսօր դժվար է մեզ հասկանալ Հովսեփի հանդեպ արված անարդարությունը: Ստրկության վաճառելը գրեթե նույնքան դաժան էր, որքան նրա կյանքը խլելը: Այն օրերում շատ կարևոր էր որդի ունենալը, քանի որ նրանք էին հոր անունն ու ժառանգությունը շարունակողները: Հովսեփի եղբայրները նրան զրկեցին այդ պատվից: Նրանք ջնջեցին նրա անունը՝ լիովին վերացնելով նրա ինքնությունը: Այն ժամանակ, երբ մարդուն ստրկության էին վաճառում օտար երկրում, նա ցմահ ստրուկ էր մնում:

Նրա կինն ու երեխաները նույնպես ստրուկ էին լինելու: Հովսեփը կորցրեց այն ամենը, ինչ ուներ և ինչը թանկ էր իր համար: Իհարկե, շատ դժվար է ստրուկ լինել ամբողջ կյանքում, բայց աննկարագրելի ցավոտ է՝ լինել մեծահարուստ մարդու ժառանգ, իսկ հետո զրկվել այդ ամենից հենց սեփական եղբայրների կողմից: Հովսեփն ասես «կենդանի մեռած» լիներ: Ես պատկերացնում եմ, թե ինչպես էր Հովսեփը պայքարում իր մտքերի հետ՝ գերադասելով լինել մեռած, քան՝ ստրկության վաճառված: Հովսեփի եղբայրների արարքն աննկարագրելիորեն դաժան էր և չար:

Երբ քարավանը հասավ Եգիպտոս, Հովսեփին վաճառեցին Փարավոնի սպաներից մեկին՝ Պետափրես անունով մի մարդու: Այժմ նա Պետափրեսի սեփականությունն էր: Հազարավոր տարիներ առաջ տեղի ունեցած այս պատմությունը մենք կարդում ենք Աստվածաշնչում և գիտենք այս պատմության ավարտը: Սակայն հիշե՛ք, որ Հովսեփը չուներ այդ գիրքը: Նա պատկերացում անգամ չուներ, թե ինչ ապագա է սպասվում իրեն՝ լինելով օտար երկրում ստրկության մեջ: Նա մտածում էր, որ այլևս չի տեսնի իր հորը, ընկերներին և հայրենի երկիրը: Եվ նա այլևս չէր էլ պատկերացնում, որ կտեսնի իր երազներն իրականացած. և ինչպե՞ս պետք է դրանք կատարվեին: Նա ստրուկ էր Եգիպտոսում, նա ազատ չէր, այլ պատկանում էր մեկ այլ մարդու մինչև իր կյանքի վերջը:

Բայց մենք քայլում ենք հավատքով, այլ ոչ թե աչքի երևույթով:

Հովսեփը Պետափրեսին ծառայեց տասը տարի: Ոչ մի խոսք չկար տան մասին, իսկ ամեն մի անցնող տարին միայն ավելի էր ուժգնացնում այն ցավալի իրականությունը, որ նրա եղբայրները իր մահվան մասին ասել էին բոլոր նրանց, ում նա սիրում էր: Նա համոզված էր, որ հիմա իր հայր Հակոբը սգում էր իր կորուստն ու շարունակում ապրել առանց իր սիրելի որդու: Ոչ մի հույս չկար հոր կողմից փրկություն ստանալու կամ կրկին նրան հանդիպելու համար:

Բայց ժամանակի ընթացքում Հովսեփը շնորհք է գտնում Պետափրեսի առջև: Նա նշանակվում է նրա տան կառավարիչ և ամեն բան նրա ձեռքի տակ է անցնում: Բայց միևնույն ժամանակ սարսափելի մեկ այլ բան է տեղի ունենում: Պետափրեսի կինն անամոթաբար աչք դնելով Հովսեփի վրա՝ բավականանին համառորեն ամեն օր փորձում է նրան մոտենալ: Լինելով մեծահարուստ կին՝ նա սովոր էր ցանկացած բանի հասնել իր ձևե-

րով: Նա, վճռական լինելով իր որոշման մեջ, հագնում էր գեղեցիկ զգեստներ և օգտագործում անուշահոտ օծանելիքներ, որն, անկասկած, թելադրում էր իրենում եղող գայթակղության ոգին:

Բայց Հովսեփն ամեն անգամ իմաստուն կերպով դիմադրում էր նրա յուրաքանչյուր փորձին. «Դու նրա կինն ես, ուրեմն ինչպե՞ս գործեմ այս մեծ չարությունը նրա վստահության դիմաց և մեղք գործեմ Աստծո դեմ» (Ծնն. 39.9, MSG): Թեպետ Հովսեփի երիտասարդ կյանքը կարծես արդեն կործանվել էր դավաճանության և հիասթափության պատճառով, սակայն նա ճշմարտության մարդ էր՝ հավատարիմ իր Աստծուն, ինչն էլ նրա բնավորության կարևորագույն գիծն էր:

Եվ մեկ օր էլ Հովսեփն ու Պետափրեսի կինը մենակ էին տանը: Դեռևս ցանկանալով գայթակղել Հովսեփին՝ նա բռնում է նրա հանդերձից ու սկսում համոզել նրան. «Խնդրո՛ւմ եմ, ամուսինս շատ հեռու է, ե՛կ անկողին մտնենք միասին: Ոչ ոք չի իմանա դրա մասին և մենք կարող ենք միասին հաճելի և սիրո օր անցկացնել» (հեղինակի մեկնաբանմամբ):

Հովսեփը կրկին հրաժարվում է սեռական անբարոյականություն գործելուց և փախչում է տանից: Նա այնպիսի արագությամբ է դուրս թռչում, որ իր հանդերձը թողնում է տիկնոջ ձեռքերում: Իսկ այդ կնոջ շփոթմունքն անմիջապես վերածվում է կատաղության, և նա սկսում է ճչալ. «Բռնաբարությո՜ւն»:

Այս ամենից հետո Պետափրեսն առանց հապաղելու Հովսեփին նետում է փարավոնի բանտը: Եվ կրկին մեկ օրում ամեն լավ բան քանդվեց Հովսեփի կյանքում:

ՊԱՏԵՐԱԶՄ ԲԱՆՏՈՒՄ

Ամերիկայի բանտերը փարավոնի բանտի համեմատ ոչինչ են: Ես բազմիցս հավաքույթներ եմ անցկացրել մի քանի բանտերում, բայց դրանք, Մերձավոր Արևելքի բանտերի համեմատ իրենց տհաճությամբ հանդերձ, ասես գեղեցիկ հյուրանոցներ լինեն: Նաև այցելել եմ այդ տարածաշրջանի այն բանտերը, որոնք ավելի հին են եղել: Դրանք ցուրտ, խոնավ, մռայլ և արևի լույսից ու ջերմությունից զուրկ խցեր են: Ի տարբերություն ամերիկյան բանտերի՝ այնտեղ չկան մարզադահլիճներ, սրճարաններ, հե-

ռուստացույցներ, զուգարանակոնքեր, լվացարաններ կամ հարմարավետ ներքնակներ: Դրանք պարզապես նեղ սենյակներ են կամ դատարկ ջրամբարներ՝ փորված ժայռերի մեջ: Բանտախցերից մի քանիսն ընդամենը չորս-հինգ ոտնաչափ բարձրություն ունեն, խոնավ են ու մարդու արժանապատվությունը խորտակող:

Այն օրերում բանտարկյալներին տրվում էր միայն բավարար չափով ջուր և ուտելիք՝ իրենց գոյությունը պահպանելու համար և, որպեսզի մահը հեշտությամբ չտրվեր նրանց (տե՛ս Գ Թագ. 22.27): Ըստ Սաղմոս 105.18-ի՝ Հովսեփի ոտքերը երկաթե կապանքների մեջ էին, և նա չարչարվում էր դրանց մեջ:

Պետափրեսը Հովսեփին գցել էր բանտը, որպեսզի նա այնտեղ էլ մահանար: Եվ եթե Հովսեփը եգիպտացի լիներ, միգուցե ազատ արձակվելու հնարավորություն ունենար, բայց լինելով օտարազգի ստրուկ, ով մեղադրվում է թագավորի բարձրաստիճան սպաներից մեկի կնոջը բռնաբարելու համար, Հովսեփը ոչ մի հույս չուներ: Նա այնպիսի վիճակում էր, ինչպիսին մեռած մարդն է:

Կարո՞ղ եք պատկերացնել նրա մտքերն այդ խոնավ ու մութ բանտում:

Ես վստահ եմ, որ թշնամին անողոքաբար հարձակվում էր նրա մտքի ու երևակայության վրա: Կարո՞ղ եք լսել, թե ինչպիսին էին Հովսեփի մտքերը. *«Ես Պետափրեսին ու նրա ողջ տանը ծառայեցի հավատարմորեն, ազնվությամբ ու ողջ նվիրվածությամբ ավելի քան տասը տարի: Ես ավելի հավատարիմ էի նրան, քան նրա կինը: Ես հավատարիմ մնացի իմ Աստծուն և իմ տիրոջը՝ ամեն օր փախչելով սեռական անբարոյականությունից: Եվ ո՞րն էր վարձքն իմ հնազանդության համար: Զնդա՞նը: Ինչո՞ւ ես չվարվեցի այնպես, ինչպես բոլոր նորմալ տղամարդիկ, ու չվայելեցի կյանքի հաճույքն այն կնոջ հետ: Եթե ես նրա հետ սիրով զբաղվեի, երբ մենք տանը մենակ էինք լինում, ոչ ոք չէր էլ իմանա այդ մասին, և ես հիմա չէի լինի այս բանտում»*:

Բայց եթե Հովսեփը ընդուներ այս սուտը, այն դուռ կբացեր թշնամու համար, և նա կհայտնվեր ավելի ցածր մակարդակի վրա՝ մտածելով. *«Ուրեմն, ահա, թե ինչպես է Աստված հոգ տանում Իրեն սիրողների, հավատարիմների և հնազանդների համար: Ինչո՞ւ: Նա ամենևին էլ հավա-*

տարիմ չէ Իրեն հնազանդվողներին, Նա չարաշահում է այն մարդկանց, ովքեր ծառայում են Իրեն: Նա թույլ տվեց, որ չարը բարգավաճի և հաղթանակի այն դեպքում, երբ ես չարչարվում էի իմ հնազանդության համար: Ի՞նչ լավ բան կա Աստծուն հնազանդվելու մեջ: Նա ինձ երազներ տվեց առաջնորդելու մասին, ես էլ պարզապես կիսվեցի եղբայրներիս հետ, և ի՞նչ տվեց դա ինձ. մի փոս և ստրկություն: Հետո ես հնազանդվեցի Աստծուն և փախա սեռական անբարոյականությունից, և ո՞րն էր իմ վարձքը: Այս բա՞նտը: Թվում է՝ որքան շատ եմ հնազանդվում, այնքան կյանքս ավելի է վատանում: Աստծուն ծառայելը պարզապես մի չար կատակ է»:

Բանտում իր ազատության մեջ սահմանափակ լինելով՝ Պետրոսը դեռևս իրավունք ուներ ընտրելու իր հետ կատարվածի պատասխանները: Արդյո՞ք նա դարձել էր դառնասիրտ ու զայրացած, տանջված ու ցինիկ: Եվ արդյո՞ք նա արհամարհում էր Աստծո Խոսքը, ընդունում վրեժխնդրության և ատելության մտքեր, որոնք բախում էին նրա սրտի դուռը: Թե՞ նա հաստատակամորեն դիմադրում էր բացասական մտքերի ու հույզերի հարվածներին, որոնք, անկասկած, ողողում էին նրա հոգին:

Ես համոզված եմ, որ Հովսեփի մտքով անգամ չէր անցնում, որ այս սարսափելի իրադարձություններն իր կյանքում կատարվում են միայն այն նպատակով, որ Աստված պատրաստվում է նրան առաջնորդ կարգել: Հովսեփը, անցնելով չարչարանքների միջով, հնազանդություն էր սովորում: Նրա «հնազանդության մկաններն» առավելագույնս պետք է մարզված լինեին: Դա կարծես նման է 315 ֆունտանոց ծանրաձողի, որը Հովսեփը պետք է բարձրացներ: Նրա ներսում ամեն բան գոչում է՝ հանձնվի՛ր: Արդյո՞ք նա ուշադրությունը կուղղի երկնային կոչին. *«Բարձրացրո՛ւ, բարձրացրո՛ւ, բարձրացրո՛ւ...»*: Թե՞ նա կլսի իր մարդկային տրամաբանությանը՝ ընտրելով չար վրեժխնդրության ամենահեշտ ճանապարհն և կսկսի ճկվել ծանրության ճնշման տակ:

ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏՎԱԾ ՀԱՆԿԱՐԾԱԿԻԻ ԵԿԱՎ

Ամենադժվար բանը Հովսեփի համար իր եղբայրներին չդատապարտելն էր: Եթե նրանք չլինեին, ապա նա երբեք չէր հայտնվի այս սարսափելի վայրում: Երկու տարի անընդմեջ անցկացնելով բանտում՝ վստահ

եմ, որ նրա մտքով շատ անգամներ է անցել, թե որքան հրաշալի կլիներ ամեն բան, եթե իր եղբայրները չդավաճանեին իրեն:

Որքա՞ն հաճախ ենք մենք պայքարում նույն մտքերի դեմ: Որքան հաճախ են պտտվում այդ *եթե*-ով սկսվող մտքերը.

- *«Եթե չլիներ իմ ղեկավարը, պաշտոնս արդեն բարձրացված կլիներ…»,*
- *«Եթե չլիներ իմ նախկին ամուսինը, մենք հիմա չէինք լինի ֆինանսական այս քաոսում…»,*
- *«Եթե չլիներ այն մարդը, ով չարախոսում էր իմ մասին աշխատավայրում, ես չէի կորցնի աշխատանքս և չէի կանգնի բնակարանից վտարվելու վտանգի առջև…»,*
- *«Եթե ծնողներս չամուսնալուծվեին, իմ կյանքը նորմալ կշարունակվեր…», և այդպես շարունակ:*

Հեշտ է մեղադրել բոլորին ձեր անհաջողությունների համար ու պատկերացնել, թե որքան ավելի լավ կլինել ձեզ համար, եթե չլինեին բոլոր նրանք, ովքեր ձեզ դեմ են: Բայց ճշմարտությունն այն է, որ նման մտքերը թուլացնում են մեր դիմադրությունը, որն էլ վնասում է մեզ: *Իսկական սպառնալիքը մեր անբարենպաստ հանգամանքները չեն, այլ՝ սխալ համոզմունքներն ու մտքերը, որոնցով փորձում ենք խուսափել կյանքի դժվար պահերից:* Մենք պետք է անկոտրում կերպով հավատանք, որ ոչինչ չի կարող խանգարել Աստծո ծրագրին և պետք է հաստատակամորեն հակառակվենք ցանկացած փաստարկներին, որոնք հակառակ են Նրա Խոսքին:

Ի վերջո, այս ճշմարտությունը պետք է ամուր հաստատվի մեր սրտում. *ո՛չ մի տղամարդ, ո՛չ մի կին, և ո՛չ էլ սատանան չեն կարող երբևէ մեզ հեռացնել Աստծո կամքից: Միայն Աստված է պահում մեր ճակատագիրը, և ուրիշ ոչ մեկ*: Հովսեփի եղբայրները փորձում էին ամեն կերպ ոչնչացնել այն տեսիլքը, որն Աստված էր տվել նրան: Նրանք կարծում էին, թե դա իրենց հաջողվեց, և նույնիսկ ասացին իրար. «Եվ հիմա եկե՛ք սպանենք նրան և գուբերից մեկի մեջ գցենք նրան… և տեսնենք նրա երազներն ինչ կլինեն» (Ծննդ. 37.20): Նրանք դիտավորյալ որոշել էին կործանել Հովսեփին: Դա պատահականություն չէր, այլ՝ միտումնավոր արարք: Եղբայրների ցանկությունն էր զրկել նրան իր երազների իրականացման հնարավորությունից:

Ի՞նչ եք կարծում՝ Աստված հանկարծակիի՞ եկավ, երբ Հովսեփին վաճառեցին ստրկության:

Արդյոք պատկերացնո՞ւմ եք, թե ինչպես է Հայր Աստված նայում Որդուն և Սուրբ Հոգուն, ապա շփոթված ու խելահեղ տոնով ասում. «Ի՞նչ ենք անելու հիմա: Նայե՛ք, թե ինչ արեցին Հովսեփի եղբայրները: Նրանք կործանեցին նրա կյանքի համար մեր ունեցած ծրագիրը: Մենք պետք է արագ ինչ-որ մի ելք գտնենք: Մենք ունե՞նք ծրագիրն իրականացնելու երկրորդ տարբերակը»:

Եթե հաշվի առնենք, որ շատ քրիստոնյաներին բնորոշ է ճգնաժամային իրավիճակներում այսպիսի վարքի ցուցաբերումը, ապա կարող է տպավորություն ստեղծվել, որ նույնը կատարվում է նաև Երկնքում: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպես է Հայրն ասում Հիսուսին. «Հիսո՛ւս, հովիվ Բոբին հենց նոր վտարեցին համայնքից, քանի որ նա աղոթել էր որևէ մեկի բժշկության համար: Եվ իհարկե, չէր տեսել դրա իրականացումը: Դու մեկ այլ եկեղեցի ունե՞ս նրա համար»: Կամ՝ «Հիսո՛ւս, Սառան և նրա երեխաները ոչ մի եկամուտ չունեն, որովհետև նրա ամուսինը ամուսնալուծվել է և ֆինանսական ոչ մի հատուցում չի վճարում: Հիմա գործերը մի քիչ վատացել են, տնտեսությունը ճգնաժամի մեջ է, իսկ նա չունի բավարար կրթություն, հմտություններ կամ մասնագիտություն: Ի՞նչ կարող ենք անել»:

Սա ուղղակի անհեթեթություն է, սակայն այն փաստը, որ մենք չափազանց հաճախ ենք արձագանքում փորձություններին այս կերպով, ցույց է տալիս, թե ինչպես ենք մենք դիտարկում Աստծուն:

ՀՈՎՍԵՓԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Իսկ ի՞նչ կասեք վրեժխնդրության մասին: Եթե Հովսեփը մեզանից շատերի նման լիներ, գիտե՞ք նա ինչպես կվարվեր. նա վրեժ կլուծեր: Նա իրեն կմխիթարեր Աստծո Խոսքին հակառակ գաղափարներով (տե՛ս Հռոմ. 12.19). *«Երբ ես դուրս գամ այս բանտից, նրանք պատասխան կտան իրենց արածի համար: Ես կվարձեմ լավագույն իրավաբանին, եղբայրներիս քարշ կտամ դատարան և հարցերը կլուծեմ: Կամ էլ ավելին կանեմ՝ ինչո՞ւ ավելորդ գումար և ժամանակ վատնեմ: Ես կսպանեմ նրանց և կանեմ այնպես, որ դա դժբախտ պատահարի հետևանք ունենա, ճիշտ այնպես, ինչպես իրենք վարվեցին ինձ հետ»*:

Բայց եթե Հովսեփն իրականում այսպես մտածեր, Աստված ստիպված կլիներ նրան թողնել բանտում փտելու: Ինչո՞ւ: Որովհետև, եթե նա փորձեր նման ծրագիր իրականացնել, նա կսպաներ իսրայելի տասներկու ցեղերից տասը առաջնորդներին: Իսկ նրանցից մեկը հենց Հուդան էր, ումից էլ սկսվում էր Դավիթ թագավորի ցեղը, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի: Այո՛, սա միանգամայն ճիշտ է՝ նրանք, ովքեր այդպես վատ վարվեցին Հովսեփի հետ, Իսրայելի ցեղերի նախահայրերն էին:

Հովսեփը ստիպված էր անկոտրում կերպով դիմադրել բոլոր այդ դատողություններին, փաստարկներին, մտքերին ու պատկերացումներին, որոնք գոռոզանում էին Աստծո ուղիների դեմ: Նա պետք է ամուր մնար Աստծո խոստմունքի հանդեպ իր ունեցած հավատքի մեջ, քանի որ վստահության և հնազանդության իր ամենավճռական փորձությունը դեռևս առջևում էր:

Այժմ բանտ նետվեցին երկու նոր բանտարկյալներ: Նրանք Փարավոնի գինեգործն ու հացթուխն էին: Նրանցից յուրաքանչյուրը երազ է տեսնում և դրա մասին պատմում Հովսեփին: Ինչո՞ւմն էր կայանում Հովսեփի փորձությունը: *Արդյո՞ք նա այդ երկու մարդկանց կարող էր հռչակել Աստծո հավատարմությունը, երբ արդեն տասը տարուց ավելի էր, որ իր անձնական կյանքում չէր տեսել նույնիսկ դրա մի փոքրիկ ապացույցը:* Մտածե՛ք այս մասին. Հովսեփը երազ էր տեսել, որտեղ նրա եղբայրները ծառայում էին իրեն: Սակայն այդ խոստումից ոչ մի բան դեռևս չէր իրականացել: Եթե Հովսեփը լիներ այնպիսին, ինչպիսին հիմա շատերն են, նա կասեր այդ երկուսին. «Դո՞ւք էիք երազներ տեսել անցյալ գիշեր: Այո՛, ճիշտ է, ես էլ էի երազներ տեսել… Եվ ի՞նչ… Հանգի՛ստ թողեք ինձ»: Եթե այսպիսին լիներ նրա պատասխանը, ապա նա կմահանար բանտում որպես մի դառնահոգի, ով անընդհատ փնթփնթում էր. «Աստված հավատարիմ չէ: Նա Իր խոստումները չի պահում»: Նա կկործաներ իր ճակատագիրը: Անցավ երկու տարի, մինչև որ գինեգործը հայտնեց փարավոնին Հովսեփի երազներ մեկնելու պարգևի մասին: Ի վերջո, Հովսեփը դուրս եկավ բանտից՝ Փարավոնի երազը մեկնելու համար: Սա միակ դեպքն էր, որը Հովսեփին դուրս հանեց բանտի անդունդից: Եվ փարավոնը նստեցրեց նրան իր կողքին. այժմ Հովսեփը Եգիպտոսում երկրորդ մարդն էր իր դիրքով՝ փարավոնից հետո: Այս ամենից հետո անցավ ևս

ինը տարի, և նա տեսավ իր եղբայրներին բառացիորեն իր առջև խոնարհվելիս: Հովսեփը դա տեսավ ճիշտ այնպես, ինչպես և երազով խոստացվել էր իրեն շատ տարիներ առաջ:

Հովսեփը չէր նկատում, թե ինչպես էր Աստծո խոստումն իրականանում քսանմեկ տարվա ընթացքում:

Սակայն դա, իրոք, կատարվեց, քանի որ Աստված հավատարիմ է, և Նա պահելու է Իր խոստումները: Մեզանից քանի՞սն են հանձնվել, երբ չեն տեսել իրենց աղոթքի պատասխանը երեք տարվա, երեք ամսվա կամ, միգուցե, երեք շաբաթվա ընթացքում: Եթե Աստծո մեթոդներն ու ժամկետները տարբերվում են մերինից, ապա մենք հակված ենք դրանց ոչ մի կարևորություն չտալու: Եվ այսպես վարվելով՝ մենք ինքներս ենք ընդհատում մեր երազի իրականացումը և ոչ թե Աստված: Մենք կարիք ունենք տոկունության, անկոտրում հավատքի և հնազանդության: Այն զորությունը, որի կարիքն ունենք, պետք է ստանանք Աստծո շնորհքով: Նրա ձրի պարգևը հասանելի է բոլորին. մենք պարզապես պետք է հավատանք Նրա Խոսքին և ամուր կանգնենք մեր հավատքի մեջ: Եվ անպայման մենք կտեսնենք դրա պտուղները, եթե չթուլանանք:

Ինչպես արդեն ասել եմ, ո՛չ մի տղամարդ, ո՛չ մի կին, և ո՛չ էլ սատանան չեն կարող կանգնեցնել Աստծո ծրագիրը ձեր կյանքում: Եվ եթե դուք հաստատվեք այս ճշմարտության մեջ, դուք կդառնաք Տիրոջ արքայության մեջ անվերջանալի մի ուժ: Սակայն այս ճշմարտության մեջ կա մի բացառություն. *միայն մեկը կարող է կործանել ձեր ճակատագիրը, և դա դո՛ւք եք*:

Ո՛չ մի տղամարդ, ո՛չ մի կին, և ո՛չ էլ սատանան չեն կարող կանգնեցնել Աստծո ծրագիրը ձեր կյանքում:

Մտածե՛ք Իսրայելի ժողովրդի մասին: Աստված Մովսեսին ուղարկեց, որպեսզի նա դուրս հանի նրանց եգիպտական ստրկությունից և առաջնորդի դեպի Խոստմունքի երկիր: Սա էր Աստծո կամքը նրանց համար: Եվ նրանք պետք է Քանան մտնեին Եգիպտոսից դուրս գալուց մեկ տարի անց: Սակայն, անհավատության, սխալ մտքերի, տրտունջի և Մովսեսին մեղադրելու պատճառով նրանք երբեք չմտան իրենց ճակատագրի մեջ:

Փոխարենը այդ ողջ սերունդը մահացավ անապատում, և միայն երկուսը՝ Քաղեբն ու Հեսուն մտան Խոստմունքի երկիր: Իսրայելի ժողովուրդն անդադար փնթփնթում էր, թե Աստված հավատարիմ չէ, սակայն իրականում իրե՛նք հավատարիմ չէին Աստծուն. նրանք անկոտրում չէին իրենց հավատքի և հնազանդության մեջ, և իրենց ձեռքով իսկ կործանեցին իրենց ճակատագիրը:

ԻՇԽԵԼՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հովսեփն իր ընթացքը սկսեց շաղակրատ, պարծենկոտ և մի քիչ էլ գոռոզ բնավորությամբ: Բայց նա չմնաց այդպիսին: Նա հնազանդվել սովորեց՝ անցնելով անհաջողությունների միջով, դրանով իսկ զարգացնելով այնպիսի մի բնավորություն, որն անհրաժեշտ էր իմաստուն առաջնորդ լինելու համար: Նա դարձավ երկրի երկրորդ ամենահզոր մարդը: Եթե նա իր սրտում պահեր դառնություն, վիրավորանք, չներում և ատելություն իր եղբայրների հանդեպ, նա կարող էր հեշտությամբ վրեժխնդիր լինել, երբ նրա եղբայրները եկան Եգիպտոս կերակուր տանելու համար: Ունենալով հզոր դիրք՝ նա կարող էր նրանց ցմահ բանտը նետել կամ խոշտանգել և նույնիսկ՝ սպանել: Սակայն Հովսեփը ճիշտ հակառակն արեց. նրանց պարկերը անվճար լցրեց ցորենով, իսկ հետո նրանց տվեց լավագույն հողը՝ Եգիպտոսում իրենց ընտանիքների հետ ապրելու համար: Նրա եղբայրներն ուտում էին այդ ժամանակվա լավագույն սնունդը: Այսպիսով՝ նա իր անարժան եղբայրներին տվեց Եգիպտոսի լավագույն բարիքները: Հովսեփի սրտում ձևավորվել, ամրապնդվել և հաստատվել էր հասուն՝ քրիստոսանման բնավորություն, քանի որ նա օրհնեց իր եղբայրներին, ովքեր չարախոսել էին իր մասին, և բարիք արեց նրանց, ովքեր ատում էին իրեն (տե՛ս Մատթ. 5.44,45):

Այժմ ե՛կ անդրադառնանք Պետրոսի կոչին.

> «Որին հակառա՛կ կանգնեք հավատքով հաստատված, իմանալով, որ ձեր եղբայրներն էլ, որ աշխարհի մեջ են, նույն չարչարանքներն են քաշում: Եվ ամեն շնորհքի Աստվածը, որ մեզ կանչեց Իր հավիտենական փառքի մեջ Քրիստոս Հիսուսով, ձեզ, որ մի քիչ չարչարվում եք, կատարյալ անի, հաստատի, զորացնի, հիմնի…» (Ա Պետրոս 5.9,10):

Թո՛ղ ամեն շնորհքի Աստվածը... կատարյալ անի, հաստատի, զորացնի, հիմնի ձեզ: Սրանք չորս շատ հզոր և խոստումնալից խոսքեր են մեզ համար: Թո՛ւյլ տվեք մեջբերել Ջեյմս Սթրոնգի սահմանումները նրանցից յուրաքանչյուրի համար.

1. *Կատարյալ անել* - վերականգնել կամ ամբողջական դարձնել նորոգման, սարքելու կամ շտկելու միջոցով:
2. *Հաստատել* - ամրացնել, կանգնեցնել որևէ անդրդվելի ուղղության վրա, ամրացնել, հաստատել, հաստատակամորեն պահել:
3. *Զորացնել* - հաստատել կամ զորացնել հոգևոր գիտելիքների և զորության մեջ:
4. *Հիմնել* - հիմք դնել, այսինքն՝ բառացիորեն կանգնեցնել:

Սրանցից յուրաքանչյուրը նկարագրում է, թե Աստված ինչ արեց Հովսեփի հետ, երբ պատրաստում էր նրան իշխելու համար: Նա հաստատվեց և շտկվեց, այլևս չէր շաղակրատում կամ պարծենում: Նա դարձավ զորավոր և Աստծո անհավատալի շնորհքով զբաղեցրեց այն տեղը, որ Աստված նախասահմանել էր իր համար: Նա դարձավ հոգևոր ուժեղ մարդ, քանի որ օրհնեց և չանիծեց իր եղբայրներին: Նրա անկոտրում հնազանդության շնորհիվ նրանում ձևավորվեցին անժխտելի իմատություն, համարձակություն և ամուր բնավորություն այնպիսի իրավիճակում, որն անհուսալի էր թվում:

Այս գլխում մենք դիտարկեցինք մեր թշնամու դեմ անմիջական պայքարի մեջ մտնելու կարևորությունը՝ Աստծո Խոսքը հռչակելու միջոցով: Սակայն Խոսքը հռչակելը մեր ամենամեծ զենքը չէ: Անմիջական պայքարի ժամանակ մեր ամենահզոր զենքն Աստծո Խոսքին հնազանդվելն է: Դա նշանակում է մտածել, խոսել և ապրել Նրա ճշմարտությամբ: Աստված Երեմիա մարգարեի միջոցով աղաղակում է. «Ո՞ւր են նրանք, ովքեր երկրի վրա քաջ են ճշմարտության համար» (տե՛ս Երեմիա 9.3, հեղինակի մեկնաբանությամբ): Նա փնտրում է մեր սերունդների Հովսեփներին: Եթե մենք անկոտրում ենք մեր հնազանդության մեջ և խիզախորեն հռչակում ենք Աստծո Խոսքը, ուրեմն առատապես կհնձենք խոստումների իրականացում, հասուն բնավորություն, մեծ իշխանություն և խորտակված բարձրություններ:

Մեզ շրջապատող մարդիկ մեծապես կշահեն մեր հաստատակամ հավատքից և հնազանդությունից:

Ինչպիսի մեծ կյանքի է կոչել քեզ Աստված: Քեզ համար Նրա ծրագրերը գծված են եղել նախքան քո մոր արգանդում քո ձևավորվելը: Ինչպես Հովսեփին, այնպես էլ քեզ, Նա կանչել է մեծ գործեր անելու համար:

Պետրոսն իր հորդորման խոսքերն ավարտում է հետևյալ կերպ.

> «…Համառոտ գրեցի, որ հորդորեմ և այս բանի համար վկայեմ, թե սա է Աստծո ճշմարիտ շնորհքը, որի մեջ դուք կանգնած եք» (Ա Պետրոս 5.12):

Անկոտրում կերպով հնազանդվելու զորությունը գտնվում է Աստծո շնորհքի մեջ: Հուսով եմ, որ դու այլևս չես անարգի Աստծո զարմանալի շնորհքը՝ այն ընդունելով միայն մեղքերից մաքրվելու միջոց և Երկինք հասնելու տոմս: Այն շատ ավելին է: Նրա շնորհքի միջոցով մենք պետք է մեզ առանձնացնենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի բացարձակ փառքի համար:

15

ԱՆԿՈՏՐՈՒՄ ԱՂՈԹՔ

«...Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ինչ-որ Հորից խնդրեք Իմ անունով, կտա ձեզ»:

Հովհաննես 16.23

Ա*նկոտրում* լինելու մասին մեր քննարկումը լիարժեք չէ, քանի դեռ չենք անդրադարձել Աստծո հետ ունեցած մեր անձնական փոխհարաբերությանը: Ինչպե՞ս ենք մենք մոտենում Նրան և ինչպե՞ս ենք դիմում Նրան: Արդյո՞ք պետք է Նրան մոտենանք երկչոտությամբ և վախով: Արդյո՞ք մենք պետք է խնդրենք միայն «մեծ» բաներ, սակայն մեր խնդրանքներին վերաբերվենք մակերեսորեն, որպեսզի, եթե հանկարծ չստանանք պատասխանը, մենք չհիասթափվենք: Մեր աղոթքների ո՞ր մասը կարող է պատասխանված լինել. միգուցե փո՞քր մասը, կե՞սը, թե՞ մեծ մասը:

Ես գիտեմ, որ այս հարցերը կարող են անհեթեթ թվալ ձեզ, բայց ավելի քան քսան տարի ճանապարհորդելուց և բազմաթիվ ավագների ու հավատացյալների համար աղոթելուց հետո, նման հարցերն այնքան էլ անբնական չեն: Ես ականատես եմ եղել անհամար աշխարհիկ աղոթքների՝ առանց համոզվածության զորության կամ ջերմեռանդության: Ես հաճախել եմ աղոթքների, որտեղ մարդիկ նայում էին շուրջը, կարդում իրենց Աստվածաշնչերը կամ լսում հավաքույթի երաժշտությունն այն ժամանակ, երբ հարկավոր էր բարեխոսական աղոթք վարել: Ես հաճախ ինձ հարց եմ տալիս, արդյո՞ք այդ քրիստոնյաները կարծում են, որ աղոթքին ներկա գտնվելու համար Աստված կպատասխանի իրենց, թե՞ նրանք վաղուց արդեն հանձնվել են և չեն աղոթում վճռական, անկոտրում հավատքով և Աստծուն ամեն ինչում վստահելով:

Շատ անգամներ սիրտս ցավացել է, երբ լսել եմ, թե ինչպես են առաջնորդները մակերեսային և իմիջիայլոց աղոթքներ վարել: Սկսել եմ մտա-

ծել. *եթե նա մտնի կառավարական մարմիններից մեկի գրասենյակ այնպես, ինչպես հիմա նա գալիս է Աստծո առջև, հավանաբար, պաշտոնյան կպատասխանի. «Ի՞նչ եք ուզում ինձանից: Դուք վատնում եք իմ ժամանակը»*: Այդ քրիստոնյա առաջնորդները կարծես ընտրում են այնպիսի բառեր, որոնք հոգևորում ընդունելի կլինեն, չցանկանալով հուսահատ անել և հիասթափեցնել մարդկանց: Դա շատ ցավալի է, որովհետև այն ցույց է տալիս, թե որքան անհիրատեսական է այսօր հոգևոր բնագավառը շատ քրիստոնյաների համար:

ԵՂԵ՛Ք ՀԱՄԱՐՁԱԿ ԵՎ ՋԵՐՄԵՌԱՆԴ

Ողջ տիեզերքի Աստված մեզ սիրով հրավիրում է «համարձակությունով մոտենալ շնորհքի աթոռին…» (Եբր. 4.16): *Համարձակ* լինել նշանակում է լինել վստահ, պատրաստ, ուժեղ և ամուր: *Համարձակ* բառի հականիշն է՝ *երկչոտ, անվճռական, ամաչկոտ*:

Մտածե՛ք սրա մասին. Աստված հրավիրում և պատվիրում է ձեզ գալ Իր մոտ վստահությամբ, զորությամբ և վճռականությամբ՝ ձեր կարիքների պատասխանն Իրենից ստանաու համար: Սա Նրա ցանկությունն է:

Հակոբոս առաքյալն ասում է մեզ. «Շատ արդյունավետ է արդար մարդու [կամ կնոջ] ջերմեռանդ աղոթքը» (Հակոբ. 5.16): *Ջերմեռանդ* նշանակում է «ունենալ կամ ցույց տալ հոգու մեծ զորություն, ոգևորություն»: Բառարանը սահմանում է, որ դրա հոմանիշներն են *կրքոտ* և *սրտառուչ* բառերը: Հակոբոսն ասում է, որ արդյունավետ աղոթքը ջերմեռանդ աղոթքն է: Մյուս կողմից, անարդյունավետ աղոթքը ճնշված, սառած և ոչ սրտառուչ աղոթքն է:

Երբ լսում եք *ջերմեռանդ* բառը, արդյո՞ք չեք լսում նաև *անկոտրում* բառը: Պետք է որ լսեք: Հակոբոսն ընդգծում է իր տեսակետը՝ մեջբերելով մեծ մարգարե Եղիային.

«Եղիան մարդ էր մեզ պես՝ կրքի ենթակա. և ջերմեռանդ աղոթք արեց, որ անձրև չգա, և անձրև չեկավ երկրի վրա երեք տարի և վեց ամիս: Եվ դարձյալ աղոթք արեց, և երկինքը անձրև տվեց, և երկիրն իր պտուղը բուսեցրեց» (Հակոբ. 5.17,18):

Եղիան աղոթեց համառորեն և անկոտրում կերպով, և հրաշալի արդյունք ունեցավ:

Համառորեն բառը *ջերմեռանդ* բառի հոմանիշն է: Այն սահմանվում է այսպես «լուրջ մտադրություններ ունեցող, նպատակասլաց, ջանասեր, անկեղծ նախանձավորություն ունեցող»: Արդյո՞ք ընկալում եք Աստծո Խոսքն այն մասին, թե ինչպես պետք է արդյունավետ կերպով աղոթել: Պարզ է, որ երբ մենք մոտենում ենք Աստծուն մեր կարիքներով և խնդրանքներով, Նա մեր մեջ փնտրում է սրտառուչ, անկոտրում փափագ:

Ինչպես արդեն ասացինք, Եղիան աղոթք արեց, որ անձրև չգա, հետո աղոթեց, որ անձրև գա: Աստվածաշունչը պատմում է, որ «Եղիան բարձրացավ Կարմեղոսի գագաթը, և ծռվեց մինչև գետինը և երեսը դրեց իր ծնկների մեջտեղը» (Գ Թագ. 18.42):

Երբ մենք մոտենում ենք Աստծուն մեր կարիքներով և խնդրանքներով, Նա մեր մեջ փնտրում է սրտառուչ, անկոտրում փափագ:

«Նյու լիվինգ» թարգմանության մեջ կարդում ենք՝ «…ընկավ գետնին և աղոթեց»: Ես կարող եմ պատկերացնել նրան՝ մեծ փափագով Աստծուն աղաղակելիս: Նա ծնկի իջած կամ նստած դիրքում, ճոճվելով՝ ետ ու առաջ է անում, իսկ գլուխը ծնկների մեջտեղը դրած աղաղակում է. «Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվա՛ծ, Դու խոսեցիր ինձ հետ ասելով, որ Քո ցանկությունն է կրկին անձրև ուղարկելը: Այնպես որ, ես կանչում եմ Քեզ՝ ուղարկի՛ր անձրև, որ հողն իր բերքը տա: Ես խնդրո՛ւմ եմ, որ Դու չուշանաս, և անձրև ուղարկես, որպեսզի Քո ժողովուրդը կարողանա ևս մեկ անգամ ուրախանալ Քո բարությամբ...»: Նա խնդրում էր համարձակորեն, հաստատակամորեն, սրտառուչ փափագով: Հետո Եղիան պատվիրում է իր ծառային. «Վե՛ր գնա, մտիկ արա դեպի ծովակողմը…» (Գ Թագ. 18.43):

Տարիներ առաջ, երբ Իսրայելը միշտ անձրևներ էր ունենում, դրանք գալիս էին Միջերկրական ծովից դեպի արևմուտք: Եղիան պատվիրեց իր ծառային գնալ և նայել այդ ուղղությամբ՝ ստուգելու համար ամպեր կա՞ն, թե՞ ոչ: Նա իր գործողությամբ ցույց էր տալիս, թե ինչին է հավատում: Եթե մենք անկեղծորեն հավատում ենք, ապա պետք է այդպես էլ վարվենք: Եղիայի ծառան վերադառնում և հայտնում է որ՝ «ոչինչ չկա»:

Մեզանից շատերը հենց այստեղ կանգ կառնեին, այդպես չէ՞: Մենք կասեինք. «Դե՛, միգուցե ես սխալ լսեցի: Միգուցե Աստված դեռ շարու-

նակում է պատժել Իսրայելին իր չար գործերի համար: Քանի դեռ Աքաբն է թագավորը, մենք, հավանաբար, երկար ժամանակ անձրև չենք տեսնի»: Մենք չէինք կանգնի ամուր հավատքով, ավելին, մենք կդադարեինք Աստծուն աղոթել և, հետևաբար, բաց կթողնեինք Նրա կամքը: Բայց Եղիան այդպես չվարվեց: Նա գիտեր Աստծո կամքը, ուստի կրկին աղաղակեց և այս անգամ ավելի համարձակորեն ու խանդավառությամբ՝ գոհություն տալով Աստծուն և հավատալով, որ իր աղոթքը լսվեց: Նա երկրորդ անգամ է ուղարկում իր ծառային Կարմեղոսի գագաթը:

Աղոթքն ու հավատքն առանց համապատասխան գործողությունների ոչ այլ ինչ են, եթե ոչ կրոնական արարք և ժամանակի վատնում: Ջերմեռանդ աղոթքն այն է, երբ ձեր սիրտը, միտքը, հոգին և մարմինը վճռականորեն տրամադրված են պատասխանը ստանալուն, իսկ դուք վարվում եք դրան համապատասխան: Քանի որ դուք համոզված եք, որ վարվում եք ըստ Աստծո կամքի, դուք հրաժարվում եք որևէ այլ պատասխան ստանալուց: Դուք գիտեք, որ հանգամանքներն ու պայմանները կարող են և պետք է փոխվեն:

Բայց Եղիայի ծառան վերադառնում է և նորից պատասխանում է. «Ոչի՛նչ չկա»:

Մեզանից շատերը եթե առաջին անգամ չհանձնվեին, ապա կհանձնվեին երկրորդ անգամ: Մենք աստվածաբանական լավ պատճառներ կգտնեինք, թե ինչու Աստված չի պատասխանում այս առանձնահատուկ աղոթքին: Բայց Եղիան այդպես չվարվեց. նա կրկին «փոթորկում է» Երկինքը և երրորդ անգամ ուղարկում իր ծառային Կարմեղոսի գագաթը: Կրկին նույն պատասխանը: Նա դա անում է չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ անգամ (ինչպիսի՜ հոյակապ ծառա. նրան խնդրել էին նույն օրը՝ յոթ անգամ բարձրանալ Կարմեղոս լեռան գագաթը, և նա դա արել էր: Ոչ միայն Եղիան էր ջերմեռանդ, այլ նաև նրա ծառան): Յոթերորդ անգամ գնալուց հետո ծառան հայտնեց, որ. «Ահա՛ մի փոքր ամպ՝ մարդու ձեռքի չափ, բարձրանում է ծովի կողմից»:

Մարդու ձեռքի չափ եղող ամպը, իհարկե, չէր կարող այնպիսի հորդ անձրև տալ, ինչի համար Եղիան էր աղոթում: Բայց հիմա Եղիան պետք է դադարեցներ աղոթքն ու անցներ գործի:

Նա գիտեր, որ իր աղոթքը լսվել է:

Այնպես որ, նա ասաց. «...Գնա՛, ասա Աքաբին. «Կառքդ լծի՛ր և իջի՛ր, որ անձրևը քեզ չբռնի»: Եվ մինչև այս կողմ այն կողմ դառնալը՝ երկինքը մթնեց սև ամպերով և հողմով. և մեծ անձրև եկավ...»» (Գ Թագավորաց 18.44,45):

Նա աղոթեց յոթ անգամ և յոթ անգամ ուղարկեց իր ծառային: Եղիան անկոտրում էր իր խնդրանքի մեջ և վճռական՝ իր պատասխանը ստանալու հարցում: Սա էր Հակոբոսի օրինակը, որը վերաբերում է արդյունավետ, ջերմեռանդ աղոթքին: Այն ջերմեռանդ է հավատքի, խոսքի, հաստատակամության և գործողության մեջ:

ՓՈՔՐ ԱՄՊ Է ԲԱՐՁՐԱՆՈՒՄ

Եղիայի փոքրիկ ամպը հավաստիացման այն նախանշանն է, որը կարող ենք ունենալ, երբ աղոթենք անկոտրում հավատքով: Սուրբ Հոգին վկայում է մեր հոգիներին (տե՛ս Հռոմ. 8.16). դա մեր փոքրիկ ամպն է: Այն երբեմն կարող է լինել մի բառ, ուրախության մի ակնթարթ, իսկ երբեմն էլ՝ վստահություն մեր սրտում, որ Աստված կկատարի մեր խնդրանքը: Հենց որ տեսնում ենք մեր փոքրիկ ամպը բարձրանալիս, Եղիայի պես մենք էլ պետք է սկսենք վարվել դրան համապատասխան:

Հիշում եմ, երբ Լիզան պետք է ծննդաբերեր մեր չորրորդ որդուն. ծնունդը հինգ օր ուշացել էր, և թեպետ Լիզան արդեն երեք որդի էր լույս աշխարհ բերել ու փորձառություն ուներ, սակայն այս անգամ նա զգում էր, որ ինչ-որ բան այն չէ: Երեխան սկսում է հարվածել նրա արգանդում: Նա զանգում է բժշկին և հայտնում իր մտահոգության մասին, որից հետո ստանում է բժշկի հանձնարարությունը. «Վաղն առավոտյան ե՛կ հիվանդանոց և, մենք կարագացնենք ծննդաբերությունը»:

Հաջորդ առավոտյան բժշկի միջամտությամբ Լիզայի պտղաջրերը գնում են, և նա տեղեկացնում է մեզ, որ ծննդաբերությունը կընթանա առանց ուշացման: Նա մեզ ուղարկում է քայլելու՝ կծկումների ընթացքը արագացնելու համար: Լիզան և ես ամբողջ առավոտ անարդյունք քայլեցինք: Կեսօրին նա հոգնեց, և մենք վերադարձանք հիվանդասենյակ՝ հանգստանալու: Լիզան ասաց. «Զո՛ն, խնդրո՛ւմ եմ դուրս գնա և աղոթիր: Եթե ես մոտ ժամանակում չծննդաբերեմ, բժիշկները ստիպված կլինեն ե-

րեխային հանելու համար ուրիշ միջոցների դիմել, իսկ ես դա չեմ ուզում»:

Բժշկական միջամտություններից մեկն այն կլիներ, որ նրան կտային Պիտոցին դեղամիջոցը, որն արհեստական ցավ է առաջացնում և կդիմեին էպիդուրալ անզգայացման:

Նա այս ամենի միջով արդեն անցել էր մեր առաջին երեխան ունենալու ժամանակ, որի հետևանքով ունեցել էր մեջքի երկարատև բարդություն: Կար մեկ այլ ետ պահող գործոն, որը շատ թանկ արժեր: Քանի որ մեր ծառայությունն իր նորաստեղծ փուլում էր, մենք չունեինք բժշկական ապահովագրություն: Մեր ընտանիքի եկամուտը քիչ էր, և մեր միջոցները բավարարում էին միայն հիմնական ծախսերը հոգալու համար:

Կեսօրին ես դուրս եկա հիվանդանոցից և գնացի մոտակա մի մեկուսի վայր, որտեղ կկարողանայի աղոթել Աստծուն: Քառասունհինգ րոպե ջերմեռանդ աղոթելուց հետո ես վերադարձա Լիզայի մոտ և տեսա, որ նա նույն վիճակում է: Մեկ ժամ Լիզայի հետ մնալուց հետո, ես երկրորդ անգամ գնացի աղոթելու: Աստծուն ուղղված իմ աղաչանքն ավելի էր ուժեղանում: Երբ ավարտեցի և վերադարձա հիվանդանոց, արդեն կեսօր էր, Լիզայի մոտ առաջընթաց չկար: Մենք ևս մեկ ժամ անցկացրինք միասին: Լիզան գնալով մտահոգվում էր. ամենից շատ նա անհանգստանում էր փոքրիկի համար: Նա ասաց. «Զո՛ն, խնդրո՛ւմ եմ, գնա և շարունակիր աղոթել: Ես շատ անհանգիստ եմ»:

Ես երրորդ անգամ գնացի աղոթելու: Այս անգամ ես ավելի կրակոտ ու լարված էի: Աղոթքներս վստահ ու բարձր էին, ես որոշել էի լսելի դարձնել դրանք: Ես տեսել էի Լիզայի վախեցած դեմքը և ցանկանում էի մխիթարել նրան: Ես աղոթում էի անգլերենով և հիշեցնում Աստծուն Իր ուխտի խոստմունքը: Հետո ողջ ջերմեռանդությամբ աղոթեցի Սուրբ Հոգով: Մի քանի րոպե անց ես հստակ լսեցի իմ սրտում՝ *ձեր երեխան կծնվի այսօր: Ե՛վ մայրը, և՛ մանկիկը վաղն այս ժամին տանը կլինեն և միանգամայն առողջ*:

Սուրբ Հոգին ինձ խոսք տալով՝ վկայեց իմ հոգուն, որ աղոթքս *լսվեց*: Նա ինձ մարդու ձեռքի չափ մի փոքրիկ ամպ տվեց: Հիմա ես պատրաստ էի գործի անցնելու:

Ես վերադարձա Լիզայի սենյակ ժամը 17^{00}-ին և ասացի նրան. «Մեր փոքրիկ Արդենը կծնվի այսօր և երկուսդ էլ տանը կլինեք վաղն այս

ժամին՝ լիովին առողջ»: Լիզան մխիթարվեց:

Բայց դեռևս ոչ մի փոփոխություն չկար: Խոստումն, իսկապես, անհնարին էր թվում: Ծննդաբերելու կծկումներ չկային: Ինչպե՞ս կարող էր երեխան այդքան շուտ ծնվել: Բայց ես տեսել էի փոքրիկ ամպը:

Երեկոն անցավ, և բժիշկը բուժքույրերի հետ սկսեց քննարկել հետագա քայլերը: Լիզան մի քանի անգամ խնդրեց. «Ձո՛ն, պետք չէ՞, որ դու գնաս և նորից աղոթես»: «Կարիք չկա: Երեխան կծնվի մինչև կեսգիշեր»,- ասացի նրան:

Յուրաքանչյուր ժամի հետ ես մտքի հարձակում էի ունենում, որ հանձնվեմ ու բաց թողնեմ այն խոսքերը, որոնք այնքան պարզորոշ լսել էի իմ սրտում: Սակայն ես համոզված էի, որ Աստված լսել էր ինձ, և որոշեցի մնալ անկոտրում: Վերջապես, ժամը 23^{00}-ից քիչ անց, Լիզայի կծկումները սկսվեցին: Արդենը ծնվեց ժամը 23^{51}-ին: Երբ նա ծնվեց, նրա պորտալարն ամուր փաթաթված էր պարանոցին: Հիշում եմ այն սարսափելի տեսարանը, թե ինչպես էր նրա գլխի գույնը տարբերվում մարմնի գույնից: Նա կարող էր խեղդվել: Բժիշկն անմիջապես կտրեց պորտալարն, ու Արդենին տարան մանրամասն զննելու:

Հաջորդ օրը մենք հիվանդանոցից դուրս գրվեցինք կեսօրին՝ ժամը 15^{30}-ին: Լիզան և Արդենը ժամը 16^{30}-ին արդեն տանն էին: Այն, ինչ Աստված շշնջացել էր ինձ, կատարվեց ճիշտ այնպես, ինչպես որ Նա էր խոստացել:

ԽՆԴՐԵ՛Ք ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԵ՛Ք ԽՆԴՐԵԼ

Մեզանից շատերն են ծանոթ Հիսուսի խոսքերին. «Խնդրե՛ք, և կտրվի ձեզ, որոնե՛ք և կգտնեք, դուռը թակե՛ք և կբացվի ձեզ» (Ղուկ. 11.9, NKJ):

Սակայն Աստվածաշնչի Ընդլայնված տարբերակը բացահայտում է ավելին.

> «Այնպես որ, Ես ասում եմ ձեզ, խնդրե՛ք և շարունակե՛ք խնդրել, և կտրվի ձեզ: Փնտրե՛ք և շարունակե՛ք փնտրել և պիտի գտնեք, թակե՛ք և շարունակե՛ք թակել, և դուռը պետք է բացվի ձեզ: Բոլոր նրանք, ովքեր խնդրում և շարունակում են խնդրել՝ ստանում են, և նրանք, ովքեր փնտրում և շարունակում են փնտրել՝ գտնում են. և նրանք, ովքեր թակում և շարունակում են թակել՝ դուռը պետք է բացվի» (Ղուկաս 11.9,10, AMP):

Դուք կարող եք տեսնել, որ Հիսուսը քաջալերում է մեզ՝ անկոտրում կերպով խնդրելու, փնտրելու և թակելու համար: Ինչո՞ւ: Մի՞թե Աստված ծանր է լսում: Ամենևին՝ ո՛չ. սա մեր ճշմարիտ հավատքի հարցն է:

Ես գիտեմ մարդկանց, ովքեր որոշել են ստանալ, և ովքեր՝ *ձգտում են* ստանալ: Տարբերությունը մեծ է: Եթե որևէ մեկը *որոշել է*, նա համառ է, եռանդուն ու խիզախ: Մյուս տարբերակում, եթե որևէ մեկը միայն *ձգտում է* ստանալ, նա ավելի հակված է հեշտ հանձնվելուն: Եթե մենք իսկապես հավատում ենք՝ պետք է շարունակենք խնդրել և է՛լ ավելի եռանդուն լինենք երկար սպասելու ժամանակ:

Մտածե՛ք խնդրում եմ Վարդապետի տված այս դասի շուրջ.

> «Մի առակ էլ ասաց նրանց՝ նրա վրա, թե պետք է ամեն ժամանակ աղոթք անել և *երբե՛ք չձանձրանալ*: Եվ ասաց. «Մի դատավոր կար մի քաղաքում, որ Աստծուց չէր վախենում և մարդուց չէր ամաչում: Եվ մի որբևայրի էլ կար այդ քաղաքում, և նրա մոտ էր գալիս ու ասում. «Իրավո՛ւնք արա ինձ իմ ոսոխից»: Եվ նա մի ժամանակ չկամեցավ. նրանից հետո իր մտքում ասաց. «Թեև Աստծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, սակայն, որովհետև այս որբևայրին հոգնեցնում է ինձ, իրավունք անեմ նրան, որ վերջապես չգա ինձ ձանձրացնի»: Եվ Տերն ասաց. «Լսե՛ք, թե անիրավ դատավորն ինչ է ասում: Բայց Աստված մի՞թե Իր ընտրյալների համար իրավունք չի անի, որ ցերեկ ու գիշեր աղաղակում են Իրեն, թեև նրանց վրա երկայնամիտ էլ լինի: Ասում եմ ձեզ, թե՝ շուտով իրավունք կանի նրանց համար: Սակայն, երբ մարդու Որդին գա, արդյո՞ք հավատք կգտնի երկրի վրա»» (Ղուկաս 18.1-8, NLT):

Ուշադրությո՛ւն դարձրեք Հիսուսի ասած խոսքերին՝ *պետք է երբեք չձանձրանալ*: Սա ինչ-որ մի լավ գաղափար չէ, այլ՝ կարևոր մի կետ է. այն Աստծո կամքն է ձեզ համար, որպեսզի դուք երբեք չդադարեք աղոթելուց:

Որբևայրու պատմության մեջ այդ կինն այնքան անկոտրում էր իր խնդրանքում, որ նա տեղից շարժեց անիրավ դատավորին: Այլ կերպ ասած՝ նա իր համառությամբ նյարդայնացնում էր նրան: Անաստված դատավորը կնոջն իրավունք արեց, միայն թե ազատվեր նրանից: Ինձ համար զարմանալին այն է, որ Հիսուսն օգտագործում է այս օրինակը՝ ցույց տալու համար, թե ինչպես պետք է մենք դիմենք Աստծուն: Նա ասում է՝ «Դաս առեք սրանից»: Հետո Հիսուսն ասում է նրանց. «Մի՞թե Աստված Իր ընտրյալների համար իրավունք չի անի»: Աստված անար-

դար չէ: Նա մեր կողմից է: Հետևաբար, Նա շուտով կտա մեր խնդրանքները, եթե մենք վճռական լինենք, ինչպիսին այն կինն էր Հիսուսի պատմության մեջ:

Լավ կլինի հիմա մի ճշտում կատարել: Այս առակը սխալ հասկանալու դեպքում կարելի է մի վրիպում թույլ տալ՝ անդադար աղոթքը կարող է վերածվել անգիր արած խոսքերի կամ պարզապես կրկնության:

Հիսուսն իրականում զգուշացնում է սրա մասին. «Երբ աղոթում եք, արտահայտություններ մի՛ դիզեք (բազմաթիվ խոսքեր, նույն բանն անընդհատ կրկնելով), ինչպես հեթանոսներն են վարվում, քանի որ նրանք կարծում են, թե իրենց շատախոսության համար լսելի կլինեն» (Մատթ. 6.7, AMP): Աղոթքի նպատակը հաճախակի և անիմաստ խոսքերը կրկնելը չէ: Երբ մեր խնդրանքներով գալիս ենք Աստծո առջև, մենք պետք է կենտրոնացած լինենք անկոտրում հոգով, ջերմեռանդությամբ և վստահությամբ աղոթելու համար:

Մենք մոտենում ենք Նրան վստահությամբ, որովհետև գիտենք, որ մեր խնդրանքը Նրա կամքի համաձայն է և, հետևաբար, մենք չենք մերժվի: Եղիան երկար ժամանակ չէր ստանում իր պատասխանը: Սակայն նա *որոշեց* տեսնել փոփոխություն՝ իր արած աղոթքի համաձայն: Նա իր որոշման մեջ հաստատ մնաց այնքան ժամանակ, մինչև իմացավ, որ իր աղոթքը լսված է:

ՓՆՏՐԵ՛Լ ԵՎ ԹԱԿԵ՛Լ ԵՌԱՆԴՈՎ

Հիսուսը ոչ միայն պատվիրում է մեզ շարունակել խնդրել, այլ նաև՝ փնտրել և թակել: Ջերմեռանդ աղոթքը միայն մեր ծածուկ սենյակում առանձնանալը չէ, այն պահանջում է նաև կենտրոնացված, լուրջ կերպով փնտրել ու թակել: Այլ խոսքերով՝ մենք ունենում ենք այն, ինչ խնդրում ենք: Սա կարևոր գործոն է արդյունքը տեսնելու հարցում:

Իմ փորձառության մեջ աղոթքի թեմայի վերաբերյալ բազմաթիվ պատմություններ կան, որոնցով կարող եմ կիսվել: Ահա մի քանի թարմ օրինակներ.

Լիզան և ես, նախքան կոնֆերանսի սկսվելը, հնարավորություն ունեցանք երկուսուկես օր միայնակ անցկացնել Հավայան կղզիներում՝

Մաուիում: Ամեն բան հիանալի էր անցնում. մենք բավականին երկար ժամանակ չէինք կարողացել միասին հանգստանալ: Ես հատուկ էի ծրագրավորել, որ այս արտակարգ ժամանակը նրա հետ անցկացնեմ, մտածելով, որ այն որոշ առումով կօգնի Լիզային, քանի որ նրա հայրը նոր էր մահացել:

Մեր ուղևորության օրը մոտենում էր, բայց եղանակի տեսությունն անընդմեջ տեղատարափ անձրևներ էր խոստանում: Վատ եղանակն, անշուշտ, ազդում էր մեր ծրագրերի վրա, այնպես որ, ես մեծ փափագով աղոթում էի, որ անձրևը դադարի, հրամայում էի եղանակին, որ այն փոխվի, և խոսում էի երկնքին, որ հրեշտակներն իրականացնեն այն, ինչի համար, որ ես աղոթում էի:

Լիզան շարունակ կրկնում էր. «Անձրևը դեռ շարունակվում է. այն դեռ գալիս է»: Իսկ ես շարունակ պատասխանում էի. «Եղանակը հիանալի կլինի. ամեն բան լավ կլինի»:

Մենք երեկոյան ժամանեցինք Հավայան կղզիներ, որը ողջունեց մեզ իր մութ ու մռայլ եղանակով: Հյուրանոցում՝ հեռուստացույցով լսեցի եղանակի տեսությունը՝ որ անձրևը չի դադարում: Անձրևային եղանակ էր ոչ միայն Հավայան կղզիներում, այլ նաև Խաղաղ օվկիանոսի մեծ մասում:

Առավոտյան ես բաց արեցի մեր վարագույրներն ու տեսա մութ ամպեր և հորդառատ անձրև: Ես այդ մութ ամպերի մեջ ոչ մի կտոր երկինք չէի կարողանում նշմարել: Անձրևը տեղում էր ճիշտ այնպես, ինչպես կանխատեսված էր: Բայց ես հրաժարվեցի իմ խնդրանքին հակառակ խոսքեր ասել: Ես գոչեցի. «Շնորհակալությո՛ւն, Հա՛յր, գեղեցիկ, արևոտ օրվա համար: Ես ուզում եմ կնոջս տեսնել լողազգեստով, պառկած արևի տակ և հանգիստը վայելելիս»:

Լիզան ծիծաղեց իմ ասածի վրա: Ես նույնպես ծիծաղեցի նրա հետ, բայց ես միանգամայն դա լուրջ էի ասել: Ես անկոտրում էի: Մենք գնացինք նախաճաշելու: Հորդառատ անձրևի պատճառով ռեստորանի աշխատակազմը ստիպված էր եղել դրսում դրված սեղանների կեսը տեղափոխել հյուրանոցի նախասրահ: Հենց որ մեր կերակուրը բերեցին, ես նայեցի անձրևոտ, մութ ամպերին և լուրջ աղոթեցի. «Տե՛ր, շնորհակալությո՛ւն այս կերակուրի համար: Թո՛ղ այն սրբված լինի Հիսուսի անունով: Եվ շնորհակալությո՛ւն արևոտ ու գեղեցիկ օրվա համար»:

Լիզան ժպտաց և կատակով ասաց. «Ձո՛ն, ինչո՞ւ չես աղոթում այն բանի համար, որը գիտենք, որ կպատասխանվի»: Մենք երկուսս էլ ծիծաղեցինք: Նա հաճախ է կատակներ անում:

«Սիրելի՛ս, ես միանգամայն լուրջ եմ դա ասում»,- ասացի նրան,- «Այսօր հիանալի օր կլինի»:

Մեր մատուցողը մոտեցավ մեր սեղանին՝ հերթական անգամ հարցնելու. «Որևէ բան կցանկանա՞ք»: «Այո՛, կարո՞ղ եք անջատել անձրևը»,- խնդրեցի ես:

Բոլորս ծիծաղեցինք: Սակայն, նախքան մեր նախաճաշն ավարտելը, անձրևը դադարեց, մութ ամպերը ցրվեցին: Կապույտ երկինքը բացվեց, իսկ արևը սկսեց շողալ: Մաուիում անցկացրած մեր մնացած ժամանակը մենք այլևս չտեսանք ո՛չ անձրև, ո՛չ էլ նույնիսկ՝ արևը ծածկող ամպի կտոր: Հետո մենք կոնֆերանսի համար Հավայան կղզիների Օահու կոչվող հատվածում եղանք: Մի քանի տեղաբնակներ ասացին, որ այն օրերի ընթացքում, երբ մենք վայելում էինք արևը Մաուիում, անձրևներն իրենց մոտ չեն դադարել: Թեպետ մենք Օահուի չոր տարածքում էինք, բայց ծովափերը փակ էին, քանի որ տեղատարափ անձրևի պատճառով վտանգավոր թափոններ էին լցվել օվկիանոսի մեջ: Տեղաբնակները զարմացած էին Մաուիում ունեցած մեր գեղեցիկ եղանակի վրա:

Ես հավատում եմ, որ մեր զարմանահրաշ Աստված պատասխանեց իմ համառ խնդրանքին և կապույտ մի անցք բացեց այդ մութ ամպերի մեջ:

ԳՐՔԵՐ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԿԱՐԻՔԻ ՄԵՋ ԵՆ

Նախորդ պատմությամբ ես փորձեցի ձեր միջից արմատախիլ անել այն մոլորությունը, թե Աստված շահագրգռված է կատարելու միայն «մեծ խնդրանքները»: Իրականում, Նա մեր կյանքում հոգ է տանում յուրաքանչյուր մանրուքի համար: Նա մեր Հայրն է: Բայց այժմ թո՛ւյլ տուր վկայել այն մասին, թե ինչպես Նա պատասխանեց շատ կարևոր մի խնդրանքի. մենք աղոթում էինք, որպեսզի կարողանայինք օգնել այն

մարդկանց, ովքեր կարիք ունեին:

Իրականում, Նա մեր կյանքում հոգ է տանում յուրաքանչյուր մանրուքի համար:

Լիզան և ես հավատում ենք, որ մեր գրքերն Աստծուց տրված ուղերձներ են Նրա լայնածավալ եկեղեցու համար:

Ես իմ գրքերում հաճախ եմ նշում, որ իմ անունը դրանց վրա գրված է այն պատճառով, որ ես առաջինն եմ դա կարդում: Մենք գիտակցում ենք, որ մեզ շատ լուրջ ծառայություն է տրված: Լիզան և ես աղոթելու համար պատասխանատվություն ենք կրում, որպեսզի ձեռք բերենք միջոցներ այս ուղերձները եկեղեցուց դուրս՝ աշխարհով մեկ տարածելու համար: Իմ գրքերը թարգմանվել են ավելի քան վաթսուն լեզուներով:

Մեր երկարատև, ջերմեռանդ աղոթքն է եղել, որ այդ գրքերը որպես նվեր տանք փակ կամ զարգացող երկրների հովիվներին և առաջնորդներին: Մենք ավելի շատ ցանկանում ենք դրանք նվիրել, քան՝ վաճառել:

Վերջին տասը տարիների ընթացքում մենք տարածել ենք մոտ 250 000 գիրք Չինաստանի, Իրանի, Պակիստանի, Հնդկաստանի, Ֆիջիի, Տանզանիայի, Ռուանդայի, Ուգանդայի և այլ ազգերի հոգևոր առաջնորդների մեջ: Մենք դեռ բավականին հեռու ենք այն նպատակից, որ ավելի շատ գիրք նվիրենք, քան՝ վաճառենք, քանի որ միլիոնավոր օրինակներ արդեն վաճառվել են:

2011թ. սկզբին, երբ մեր առաջնորդների խումբը ծրագրավորում էր ապագա անելիքները, ես պարզեցի, որ 2010թ.-ին մենք ընդամենը 33 000 գիրք ենք բաժանել: Երկար քննարկումից հետո հայտարարեցի. «Այս տարի մեր նպատակը պետք է լինի այն, որ կարողանանք 250 000 գիրք տալ արտերկրների առաջնորդներին»:

Սենյակում լռություն տիրեց: Խմբի անդամներից մեկն ասաց. «Ես կարծում եմ, որ սանդղակը մի քիչ բարձր է: Նախորդ տարվա համեմատ տարբերությունը զգալի կլինի: Հարկավոր է այդ մեծ քանակը ներկայացնել մեր ֆինանսական գործընկերներին՝ շահավետ աճը հիմնավորելու համար. մեզ ժամանակ է հարկավոր: Միգուցե սկսենք 100 000-ից և այն բարձրացնենք հաջորդ տարիների ընթացքո՞ւմ»: «Ո՛չ, մեզ հարկավոր է հավատալ Աստծուն և քայլ անել՝ կարիքավոր հովիվներին ու աշխարհի եկեղեցիներին օգնելու համար»,- ասացի ես: - «Երկու հար-

յուր հիսուն հազարն այդքան էլ մեծ թիվ չէ»:

Բանավեճն ակտիվացավ: Թիմի անդամներն առաջ քաշեցին լրացուցիչ պատճառներ՝ հիմնավորելու համար, թե ինչու է իմ նպատակը չափազանց մեծ: Ի վերջո, խումբը միաձայն կերպով դիտարկեց այն որպես անհիմն նպատակ: Նրանք ճշգրիտ և տրամաբանական էին իրենց դատողություններում, սակայն նրանք հաշվի չէին առնում Աստծո շնորհքը:

Ես ավելի վստահորեն շարունակեցի. «Տղանե՛ր, ոչ մի ծառայություն չի զբաղվում այս գրքերով. Աստված դա վստահել է մեզ: Միայն մե՛նք կարող ենք տալ *«Սատանայի խայծը», «Ծածկոցի տակ», «Երբ արթնանում են կին առյուծները», «Հավիտենականությամբ շարժվողները», «Արտասովոր կյանք»* և մնացած մեր գրքերը: Մենք պատասխանատվություն ունենք՝ այս հարցում Աստծուն հավատալու համար: Մենք պետք է վեր բարձրացնենք մեր հայացքը»:

Դիմադրությունը շարունակվեց: Ես սկսեցի ձայնս բարձրացնել և անդրդվելի մնալ. «Ես չեմ ցանկանում, որ մենք դատաստանի ժամանակ կանգնենք Հիսուսի առջև և ստիպված լինենք բացատրել, թե ինչու ենք այդքան քիչ խնդրել: Ես չեմ ցանկանում, որ հովիվները դատաստանի ժամանակ մեզ հարցնեն. «Ինչո՞ւ մեզ չտվեցիք այն գրքերը, որոնք Աստված ձեզ էր վստահել»: Ուրիշ ծառայությունները չեն կարող սրա պատասխանը տալ, միայն մե՛նք կարող ենք»:

Մթնոլորտը շիկացած էր, և մեր հանդիպումն ավարտվեց լարվածության մեջ: Ես ցավում էի, որ մեր քննարկումը հասավ այն աստիճանի, որ մենք խոսեցինք նման լարվածությամբ: Մեր բաժինների ղեկավարներն անկեղծ և բարեպաշտ մարդիկ են, ովքեր պարզապես փորձում էին ամեն կերպ ծառայության համար լավ բան անել: Բայց իմ հոգու խորքում ես գիտեի, որ չպետք է զիջեմ դիրքերս: Կարևոր էր բարեխոսել քաղց ունեցող հովիվների և կարիքավոր եկեղեցիների համար, որոնք ապրում են աշխարհի զարգացող երկրներում:

Մի քանի օր անց մեր ադմինիստրացիայի ղեկավարը մոտեցավ ինձ. «Ձո՛ն, մենք կանենք այն, ինչ կա քո սրտում: Մենք այստեղ ենք, որպեսզի ծառայենք քեզ և Լիզային՝ ձեր տեսիլքն իրականացնելու գործում: Խնդրո՛ւմ եմ, ասա ինձ՝ դու դեռ հավատո՞ւմ ես, որ պետք է 250 000 օրինակ բաժանենք: Եթե դու աղոթում և հավատում ես սրան, ապա մենք 100 տոկոսով քեզ հետ ենք այս նախաձեռնությունն իրականացնելու հարցում: Մենք

կաղոթենք և ջանասիրաբար կաշխատենք դա իրականացնեու համար»:

Ես կրկին սկսեցի փնտրել Աստծուն՝ հավատալով այն նպատակին, որ պետք է ունենանք 250 000 գիրք: Դռներն արդեն բաց էին Վիետնամի, Լիբերիայի, Չինաստանի, Իրանի, Թուրքիայի, Գանայի, Տաջիկստանի, Լիբանանի, Բուրմայի և այլ երկրների համար: Եվ մենք արդեն հնարավորություն ունեինք գրքեր ուղարկելու այդ երկրների հոգևոր առաջնորդներին: Մենք գիտեինք, որ խնդրանքներ ենք ստանալու ավելի շատ գրքերի համար: Այս քանակությամբ գիրք տպագրելն ու աշխարհով մեկ տարածելը մոտավորապես կարժենար 600 000-700 000 ԱՄՆ դոլար: Սա ահռելի գումար էր մեզ համար, բայց ոչ Աստծո համար:

Երկու շաբաթ անց մեր թիմի անդամները զանգահարեցին ինձ՝ Ֆլորիդայի հյուրանոցային սենյակ:

Նրանք մեծ հուզմունքով հաղորդեցին. «Ձո՛ն, մենք հենց նոր 300 000 դոլարի չեկ ստացանք՝ արտերկրներում ապրող առաջնորդների համար գրքեր տպագրելու համար»: Հյուրանոցային իմ սենյակի պատշգամբում ես բառացիորեն գոռացի ուրախությունից:

Այնպես էր ստացվել, որ մեր աշխատակիցներից մեկը մեր տեսիլքի մասին կիսվել էր Տեխասի գործարարներից մեկի հետ: Նա չեկ էր գրել: Նախորդ քսան տարիների ընթացքում մեր ծառայությանը տված ամենամեծ միանվագ նվիրատվությունը եղել է 50 000 ԱՄՆ դոլարը: Դա իսկական հրաշք էր: Այս գումարով հնարավոր կլիներ տպել մոտ 150 000 գիրք: Ապշեցուցիչ փաստն այն էր, որ մենք այժմ 2011թ.-ի համար ունեցած մեր նպատակի կես ճանապարհին էինք. և դա դեռ փետրվար ամիսն էր: Հեռախոսազանգը վերածվեց տոնախմբության, մենք բոլորս ոգևորված էինք և ուրախ:

Մինչև լսափողը ցած դնելը ես հարցրի. «Տղանե՛ր, դուք հիմա հասկացա՞ք, թե ինչու էի ես այդքան հաստատուն և անդրդվելի երկու շաբաթ առաջ տեղի ունեցած մեր հանդիպման ժամանակ»:

Ադմինիստրացիայի ղեկավարը, ով այդ հանդիպման ժամանակ իմ ամենամեծ հակառակորդն էր, ծիծաղեց և ասաց. «Ես կարծում էի, որ կասես՝ «Ետի՛ս գնա, սատանա՛»: Մենք բոլորս ծիծաղեցինք:

Քիչ ավելի ուշ՝ այդ օրը, Լիզան մեկնաբանեց. «Աստված չի ցանկանում, որ մենք հավատանք Իրեն հնարավորի համար, այլ ցանկանում է, որ

հավատանք անհնարինի համար: Եթե ամուր չպահեինք մեր նպատակը, ապա չեմ կարծում, որ 300 000 դոլարանոց չեկը կընկներ մեր ձեռքը»: Ես համաձայն էի նրա հետ: Ինչպես միշտ Լիզան փայլեց իր իմաստությամբ:

Տարվա վերջում ավելի քան 250 000 գիրք էր բաժանվել քառասունմեկ ազգերի ներկայացուցիչ առաջնորդներին: Այս ամենը չէր կարող տեղի ունենալ առանց մեր գործընկերների և ներգրավված մասնակիցների բարեխիղճ ջանքերի ու աղոթքների: Այս ավետարանչությունների վկայությունները մեծ ծավալների են հասնելու:

Սա մի մեծ առիթ էր, որպեսզի մեր ամբողջ թիմի հավատքը բարձրանար: Այս նպատակին հասնելու համար մենք համառորեն խնդրեցինք, փնտրեցինք և թակեցինք, որպեսզի դուռ բացվեր, և մենք կարողանայինք ազդեցություն թողնել անթիվ մարդկանց վրա: Մենք պետք է միշտ հիշենք, որ Աստված «կարող է առատությամբ անել ամեն բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության չափով, որ մեզանում ներգործում է» (Եփես. 3.20): Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր սահմանափակ մտածելակերպն ու հավատքը սահմանափակեն Աստծուն: Եթե մենք իրոք հավատում ենք, ապա համառորեն կխնդրենք և կշարունակենք թակել այնքան ժամանակ, մինչև տեսնենք Նրա փառքի բացահայտումը:

Ի՞ՆՉ ԵՔ ԱԿՆԿԱԼՈՒՄ

Արքայության առաջընթացը տեղի չի ունենում ֆիզիկական աշխարհում, քանի դեռ այն նախապես տեղի չի ունեցել հոգևոր աշխարհում: Պողոսը պատվիրում է Տիմոթեոսին. «Վազի՛ր հաստատուն և արագ՝ հավատքի մեջ: *Բռնի՛ր հավիտենական կյանքը*, որի մեջ կանչվեցիր. այն կյանքը, որը դու այդքան ջերմեռանդորեն ընդունեցիր» (Ա Տիմոթ. 6.12, MSG): Բռնել հավիտենական կյանքը նշանակում է վերցնել այն ամենը, ինչ Հիսուսը տալիս է մեզ, իսկ մենք, անկասկած, չենք կարող անել դա անվճռականությամբ:

Երբ Աստված Իր զավակների մեջ այսպիսի վճռականություն է տեսնում, Նա սկսում է շարժվել:

Եբրայեցիների 11.6-ում գրված է. «Առանց հավատքի անկարելի է [Նրան] հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, թե

Նա կա, և թե Իրեն *ջանասիրաբար խնդրողներին վարձահատույց կլինի*» (NKJV): Չի ասվում, որ Աստված պարգևատրում է նրանց, ովքեր *իմիջիայլոց* են փնտրում Իրեն, այլ՝ նրանց, ովքեր *ջանասիրաբար* են փնտրում Իրեն: Նրան գրավում են համառ, անկեղծ և անկոտրում մարդիկ:

Աստված խոսում է Երեմիա մարգարեի միջոցով.

«Որովհետև ես գիտեմ այն խորհուրդները, որ ես խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդները և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը: Եվ դուք կկանչեք Ինձ, և կգնաք ու աղոթք կանեք դեպի Ինձ, և ես կլսեմ ձեզ: Եվ դուք Ինձ կորոնեք ու կգտնեք *Ինձ*, որովհետև Ինձ կխնդրեք *ձեր բոլոր սրտով*. Եվ ես կգտնվեմ ձեզ համար,- ասում է Տերը…» (Երեմիա 29.11-14):

Աստծո ծրագրերը ձեր կյանքի համար միայն բարին են: Սակայն, Աստծո առատությունն ընդունելու համար մենք պետք է եռանդով և համառությամբ ձգտենք դրան. սա է ճշմարիտ հավատքը:

Հիշո՞ւմ եք որբևայրու և անիրավ դատավորի առակը. որո՞նք էին Հիսուսի ասած վերջին խոսքերը. «Երբ մարդու Որդին գա, արդյո՞ք հավատք կգտնի երկրի վրա»: Ինչպիսի՜ հարց: Նա կգտնի աշխարհիկ, անտարբեր և կասկածամիտ հավա՞տք, թե՞ ճշմարիտ հավատք: Աստվածաշնչյան «Մեսիջ» թարգմանության մեջ ասվում է. «Որքա՞ն այդ տեսակի *համառ հավատք* կգտնի մարդու Որդին, երբ երկիր վերադառնա»: Հիսուսը խոսում է անկոտրում հավատքի մասին, որի շնորհիվ որբևայրին ստացավ իր խնդրանքը:

Մի՛ ամաչեք Աստծուն մոտենալուց:

Այնպես որ, մի՛ ամաչեք Աստծուն մոտենալուց: Մի՛ վախեցեք ձեր խնդրանքները ներկայացնելուց: Եղե՛ք համարձակ, ուժեղ, հաստատուն և կոնկրետ: Մեր համառությունն առ Աստված գալիս է ոչ թե մեր հուսահատությունից, այլ՝ հաստատուն վստահությունից: Մենք պետք է վստահ լինենք, որ Նա մեր սիրող Հայրն է և մեզ կտա այն, ինչ հաստատուն կերպով խնդրենք Հիսուսի անունով:

Ի՞նչ եք ակնկալում: Ձեզ շրջապատող կարիքները շատ են: Աշխարհում այնքան շատ մարդիկ կան, ովքեր կարիք ունեն, որ դուք համարձակորեն մոտենաք Աստծուն և բարեխոսեք նրանց համար: Եղե՛ք լույս նրանց համար: Մոտեցե՛ք Աստծուն անկոտրում համառությամբ հենց հիմա:

16

ՎԱՂԻ՛Ր ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

«Այնպես վազեք [ձեր ընթացքը], որ վերցնեք [մրցանակը] և դարձնեք այն ձերը»:

Ա Կորնթացիների 9.24 (AMP)

Ինչպես այս գրքում տեսանք, մենք դժվարին ընթացքի մեջ ենք: Եվ ինչպես երևում է Կորնթացիների առաջին թղթից մեջբերված հատվածից, այս մրցավազքն անձնական բնույթ է կրում. Դու անցնում ես քո ընթացքը, իսկ ես՝ իմը:

Մեր մրցակցությունը մեկս մյուսի հետ չէ, այլ այն ուժերի հետ, որոնք չեն ցանկանում, որպեսզի մենք բարեհաջող ավարտենք մեր ընթացքը: Մենք գտնվում ենք կործանվող աշխարհում, որն անխուսափելիորեն հակառակություն է բերում մեր ճանապարհին: Մենք պայքարում ենք. Աստվածաշնչի դասական թարգմանության մեջ այս հատվածն այսպես է գրված. «Դուք այնպես վազեք, որ հասնեք»:

Ուշադրությո՛ւն դարձրու Պողոսի *«այնպես»* բառին: Ինչպե՞ս մենք պետք է վազենք: Մենք պետք է վազենք անկոտրում կերպով: Եբրայեցիների հեղինակն ասում է. «Եկե՛ք վազենք համբերատար *դիմացկունությամբ* և հաստատուն ու գործուն *համառությամբ* մեր մրցավազքի նշանակված ընթացքը, որ դրված է մեր առջև» (Եբր. 12.1, AMP):

Ես ամբողջ կյանքում զբաղվել եմ սպորտով, այնպես որ իմ ընկերներից շատերը սիրողական կամ պրոֆեսիոնալ մարզիկներ են: Լուրջ մարզիկները շատ են մարզվում: Նրանք դիմանում են դժվար և հյուծող մարզանքներին: Պողոսը գրում է. «Յուրաքանչյուր մարզիկ, որ մարզվում է, հնազանդեցնում է իրեն խիստ կարգուկանոնի» (Ա Կորնթ. 9.25, TEV): Ինչո՞ւ են մարզիկները սա անում: Պողոս առաքյալը պատասխանում է այս հարցին.

«Նրանք անում են սա մրցանակը շահելու համար»:

Ֆուտբոլիստի համար (խոսքն ամերիկյան ֆուտբոլի մասին է) մրցանակը Մեծ գավաթն է: Պրոֆեսիոնալ գոլֆ խաղացողի համար դա Պրոֆեսիոնալ գոլֆ խաղացողների միության մրցույթներից մեկում՝ «Մասթերս» մրցաշարում կամ մեկ այլ գոլֆի խոշոր մրցույթում հաղթելն է: Հոկեյ խաղացողի համար դա Սթենլիի գավաթն է, իսկ Օլիմպիական մարզիկի համար՝ ոսկե մեդալը: Նրանց դրդապատճառը մրցանակն է: Այն մարզիկները, որոնց տեսիլքը լիովին կենտրոնացած է մրցանակի վրա, ավելի անկոտրում կերպով կմարզվեն և կդիմանան մեծ դժվարությունների, քան նրանք, ովքեր տեսիլք և մրցանակը շահելու դրդապատճառ չունեն:

Ես տեսել եմ, թե ինչպես է ոտքի կոտրված կոճով հոկեյ խաղացողը խնդրել իր մարզչին՝ պինդ վիրակապ դնել վնասված ոտքին, որպեսզի նա կարողանա շարունակել պայքարը Սթենլիի գավաթի համար: Նա սահում էր՝ զգալով այնպիսի ցավ, որի դեպքում մարդկանց մեծամասնությունն անգամ չէր քայլի: Ես տեսել եմ, թե ինչպես է ֆուտբոլիստը կոտրել իր քիթը, բայց նա վիրակապ է դրել և շարունակել խաղը. Մեծ գավաթը հաղթելու տեսիլքն ավելի մեծ էր, քան այն տանջալի ցավը, որ նա զգում էր: Մենք բոլորս նման բաների ականատես ենք եղել թե՛ սպորտում, թե՛ այլ բնագավառներում: Տեսիլքը մեծ խթանիչ է: Տեսիլք ունեցող մարդիկ աչքի են ընկնում և տարբերվում են մյուսներից: Հենց սա է նրանց չեմպիոններ դարձնում: Միայն նրանք, ովքեր ամբողջովին կենտրոնացած են մրցանակի վրա, կարող են նման տեսակի դժվարություններ կրել:

> Լավ սկսելը կարևոր է, բայց… ավելի էական է, թե ինչպես կավարտենք մեր ընթացքը:

Որպես արքայությանը պատկանող մարդիկ, ովքեր ամեն օր պայքարում են սատանայի զորավոր և կործանարար բանակների դեմ՝ մենք պետք է իմանանք, թե ինչի համար ենք պայքարում: Ո՞րն է բարեհաջող ավարտ ունենալու մեր դրդապատճառը: Ինչո՞ւ է անչափ կարևոր, որպեսզի մենք հավատարիմ մնանք: Ինչպիսի՞ ներդրում ունի մեր կյանքն Աստծո ընտանիքի մեջ: Ինչո՞ւ այն ընթացքը, որ դրված է մեր առջև, այդքան կարևոր է Աստծո արքայության մեծ նպատակի համար:

Պողոսն ասում է մեզ, որ այս հարցերից յուրաքանչյուրի պատասխա-

նը նույնն է, ինչը որ մարզիկի դեպքում է: Մենք ջանք ենք թափում մրցանակի կամ վարձատրության համար. «Այնպես վազեք [ձեր ընթացքը], որ վերցնեք [մրցանակը] և դարձնեք այն ձերը»:

Իր կյանքի վերջում Հովհաննես առաքյալը այսպիսի մի պատվեր գրեց Աստծուց.

> «Զգո՛ւյշ եղեք, որպեսզի չկորցնեք այն *մրցանակը*, որի համար մենք այսքան շատ ենք աշխատել: Եղե՛ք ջանասեր, որպեսզի դուք ստանաք *ամբողջ վարձատրությունը*» (Բ Հովհաննես 8, NLT):

Սողոմոնը որակազրկվեց և չստացավ մեծագույն մրցանակը, քանի որ զորավոր կերպով չավարտեց իր ընթացքը: Նա կենտրոնացած չէր վերջնական նպատակի վրա:

Լավ սկսելը կարևոր է, բայց Աստծո համար շատ ավելի էական է, թե ինչպես մենք կավարտենք մեր ընթացքը: Մեր ընթացքը բարեհաջող կերպով ավարտելու և մրցանակը ստանալու համար մենք պետք է ունենանք անկոտրում համառություն և դիմացկունություն: Այս երկու հատկանիշներն ավելանում են մեզանում մեր դրդապատճառի շնորհիվ: Այնպես որ տեղին է տալ հետևյալ հարցը. *Ո՞րն է այն վարձատրությունը, որի համար մենք գործում ենք, այսինքն՝ այն մրցանակը, որը մենք չպետք է կորցնենք:*

Մեր վարձատրությունը կարելի է բաժանել երկու մակարդակի: Մենք կխոսենք առաջինի մասին այս գլխում, իսկ երկրորդի մասին՝ հաջորդում:

ԱՌԱՋԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին վարձատրությունը կամ մրցանակն առնչվում է այն փաստի հետ, որ մեր կյանքն անմիջական կերպով կապված է Աստծո տան կառուցման հետ, որտեղ մենք հավիտյան բնակվելու ենք[1]:

Աստված Իր համար տուն է կառուցում՝ Իր իսկ նախագծով և փափագում է բնակվել այդ տան մեջ: Նրա ծրագրերը կենտրոնացած են եղել այս տան շուրջ հազարամյակներ շարունակ, և Նա մեծ ոգևորությամբ սպասում է վերջնական արդյունքին:

Ես և Լիզան արտոնություն ունեցանք մեր տունը կառուցել մեր անհատական նախագծով: 1980-ականների վերջում, երբ մենք ապրում էինք

Օռլանդոյում՝ Ֆլորիդայում, Ռոբերտ անունով մի շատ հայտնի մարդ, ով զբաղվում էր անհատական նախագծերով տների կառուցմամբ, մոտեցավ մեզ և ասաց. «Ես սիրում եմ ձեր ծառայությունը,- հետո շարունակեց,- ես ցանկանում եմ տուն կառուցել ձեզ համար»: Այդ ժամանակ մենք ապրում էինք փոքրիկ և համեստ տան մեջ: Մենք մտածեցինք, որ նրա ծառայությունը չափազանց թանկ կլինի մեզ համար: Բայց երբ խուսափեցինք անմիջապես պատասխանել Ռոբերտին, նա ասաց. «Ես կանեմ դա այն գնով, որ Աստված կասի»: Արդյունքում նա կառուցեց մեր տունը՝ առանց որևէ եկամուտ ունենալու:

Մինչև այդ ես և Լիզան երկու տուն ունեինք: Երկուսն էլ փոքրիկ ընդհանուր նախագծով կառուցված տներ էին, և մենք ոչ մի առնչություն չէինք ունեցել դրանց նախագծման ետ: Այնպես որ մենք կարող էինք պարզապես ընտրել սահմանափակ նյութերի տեսակներով և գույներով մի հասարակ հատակագծով տուն: Մենք հնարավորություն չէինք ունեցել կայացնել այնպիսի որոշումներ, որոնք որևէ կերպ կարող էին ազդել մեր տան նախագծի կամ արտաքին տեսքի վրա: Այնպես որ անհատական նախագծով տան կառուցումը խորթ էր մեզ համար:

Ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես մի քանի օր անց Ռոբերտը եկավ մեր տուն, մեզ հետ նստեց մեր խոհանոցի սեղանի շուրջ և խանդավառությամբ ասաց. «Գծագրե՛ք ձեր երազանքի տունը»:

Մենք շփոթվել էինք, որովհետև չէինք պատկերացնում, որ կարելի էր նման բան անել: Լիզան անմիջապես անցավ գործի: Նա սկսեց այնպես գծագրել այն, ասես նախապես մտածել էր այդ մասին (և ինչպես հետո պարզվեց՝ նա մտածել էր այդ մասին): Ես մի փոքր հապաղում էի գաղափարներ առաջարկել իմ աշխատասենյակի և ավտոտնակի համար, իսկ կինս զբաղվեց մնացած ամեն ինչով: Դա այնքան ոգևորիչ էր: Մեր հուզմունքն ավելի էր մեծանում, քանի որ մենք հասկացանք, որ կարող ենք նախագծել մեր նոր տունն այնպես, ինչպես ցանկանայինք. չկային ոչ մի սահմանափակումներ:

Դրանից հետո մեր երազանքը, որը մենք պատկերել էինք այդ մեծ թղթի վրա, փոխանցվեց ճարտարապետներին և գծագրողներին, և մի քանի օր անց Բոբը ցույց տվեց մեզ նախագծերը: Դա այնքան ոգևորիչ էր: Շուտով նրանք սկսեցին փորել հիմքը, իսկ կարճ ժամանակ անց՝ ար-

դեն կառուցել տունը: Կինս և ես ամեն օր, երբեմն էլ օրը երկու անգամ գնում էինք այնտեղ, որտեղ տան շինարարությունն էր ընթանում: Մենք այնքա՜ն անհամբեր էինք: Ես և Լիզան անհամբերությամբ սպասում էինք, տան հերթական մասի կառուցմանը: Այդ մի քանի ամիսները մեզ համար տարիներ թվացին, իսկ օրերը՝ շաբաթներ, որովհետև ամեն օր սպասում էինք, որ կկառուցվեր մեր տան ևս մեկ հատվածը: Բացի այդ՝ մենք մեծ սպասում ունեինք, որ մեկ օր տեղափոխվելու ենք այնտեղ: Մենք զարմացել էինք՝ տեսնելով, թե ինչպես այն երազանքը, որ մենք նախագծեցինք դատարկ թղթի վրա, կյանքի էր կոչվում մեր աչքերի առջև:

Ես հավատում եմ, որ ինչպես մենք, այնպես էլ Աստված ուրախությամբ սպասում է Իր երազանքի տան ավարտին: Բայց ի տարբերություն մեզ՝ Նա չի սպասում մի քանի ամիս, այլ շատ ավելի երկար. Նա սպասում է Իր տան կառուցման ավարտին աշխարհը ստեղծելուց ի վեր:

Երկրի վրա մենք հաճախ հատուկ տներին անուններ ենք տալիս: Օրինակ՝ Անգլիայի թագուհու տունը կոչվում է «Բուքինգհեմյան պալատ»: Ամերիկայի նախագահն ապրում է «Սպիտակ տանը»: Դերասան Մայքլ Դուգլասի տունը, որը գտնվում է Բերմուդյան կղզիներում, կոչվում է «Լոնգլենդս»: «Բիթլս» խմբի անդամ, հանգուցյալ Ջորջ Հարիսոնի տունը կոչվում է «Ֆրայեր փարք»: Դերասան Նիքոլաս Քեյջի տունը կոչվում է «Միդֆորդ Քասլ»: Սակայն շատ մարդիկ չգիտեն, որ Աստված սկսեց տներին անվանում տալ շատ ավելի վաղ, քան իրենք: Նա Իր հավիտենական տունը, որը դեռևս կառուցվում է, անվանում է «Սիոն»: Ինչպես գրում է սաղմոսերգուն.

> «Որովհետև Տերը *Սիոնին* ընտրեց,
> Հավանեց նրան Իրեն բնակարան շինելու համար:
> «Այս է հավիտենական Իմ հանգիստը, այստեղ կբնակվեմ,
> Որովհետև *սրան հավանեցի*»» (Սաղմոս 132.13,14):

Ուշադրությո՛ւն դարձրու, որ Աստված հավանում կամ ցանկանում է այս տունը: Այլ խոսքերով՝ Նա անհամբերությամբ սպասում է այս տան

---

1. Աստծո տան վերաբերյալ ավելի մանրամասն կարող ես կարդալ իմ գրքում, որը կոչվում է «Հավիտենականությամբ շարժվողները» (Նյու Յորք. Faith Words, 2006):

ավարտին, ինչպես և Լիզան և ես անհամբերությամբ սպասում էինք մեր նոր անհատական նախագծով կառուցված տան ավարտին: Աստվածաշնչի այլ հատվածներ մեզ հայտնում են, որ «Սիոն» կոչվող տունն Աստծո սրտում եղել է բոլոր սերունդների ընթացքում. «Որ Տերը շինեց Սիոնը…» (Սաղմ. 102.16): «…Տիրոջը, որ բնակվում է Սիոնում…» (Սաղմ. 9.11): «Սիոնի միջից՝ գեղեցկության կատարելությունից, Աստված փայլում է» (Սաղմ. 50.2):

Տուն կառուցելիս միշտ սկսում են հիմքից: Լսի՛ր, թե ինչ է ասում Եսայի մարգարեն. «Տեսե՛ք, Ես քար եմ դնում *Սիոնում՝* փորձված քար, թանկագին անկյունաքար՝ որպես հաստատ *հիմք*» (Եսայի 28.16, NIV): Ո՞րն է (կամ, ավելի ճիշտ, ո՞վ է) այդ հիմքային անկյունաքարը: Աստծո սիրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսը: Ըստ Եսայի մարգարեի՝ Հիսուսն Աստծո հավիտենական տան՝ Սիոնի «շինանյութերի մասն» է: Փատորեն, որպես անկյունաքար՝ Նա ամենակարևոր մասն է:

Աստծո Խոսքը շարունակում է. «Դուք էլ կենդանի քարերի պես շինվեք հոգևոր տաճար…» (Ա Պետր. 2.5): Այն տաճարը կամ տունը, որի մասին խոսում է Պետրոսը, Սիոնն է: Հիսուսը փոխաբերական իմաստով անվանվում է *«քար»*, ինչպես և մենք: Մենք «կենդանի քարեր» ենք, իսկ Նա մեր անկյունաքարն է: Ինչպես Հիսուսը, այնպես էլ քրիստոնյաները «շինանյութեր են», որոնցից պատրաստվում է այն տունը, որտեղ Աստված հավիտյան բնակվելու է:

> «Աստված տուն է կառուցում: Նա օգտագործում է մեզ բոլորիս Իր կառույցի համար՝ անկախ այն բանից, թե ինչպես ենք մենք հայտնվել այստեղ: Նա օգտագործեց առաքյալներին և մարգարեներին՝ որպես հիմք: Իսկ հիմա Նա օգտագործում է ձեզ՝ շարելով աղյուսն աղյուսի վրա, քարը քարի վրա: Քրիստոսն այդ կառույցի անկյունաքարն է, որը միախմբում է բոլոր մասերը: Մենք տեսնում ենք, թե ինչպես է այն օր օրի ձևավորվում՝ վերածվելով սուրբ տաճարի, որը կառուցում է Աստված, իսկ մենք կառուցվում ենք դրանում՝ մի տաճար, որտեղ Աստված զգում է Իրեն ինչպես տանը» (Եփեսացիների 2.19-22, MSG):

ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

Մենք ոչ միայն այս տան շինանյութն ենք, այլ նույնպես շինարարները կամ գործակիցները (տե՛ս Ա Կորնթ. 3.9): Իսկ ովքե՞ր են այդ գործա-

կիցները: Դրանք ջրմուղագործներն են, էլեկտրագետները, միջնորմեր տեղադրողները, պատշարները, տանիքագործները, կղմինդրներ շարողները, հատակը շարողները և այլոք: Հենց այս մարդիկ են, որ իրականում կառուցում են տունը: Երբ Ռոբերտը կառուցում էր մեր տունը, նա անգամ մեկ մեխ չգամեց կամ մեկ աղյուս չդրեց, ոչ մի տախտակ չսղոցեց և ոչ մի միջնորմ չկտրեց: Ողջ աշխատանքը կատարեցին գործակիցները:

Այնպես որ, եթե շինարարները կամ գործակիցներն են կառուցում տունը, ապա ո՞րն է աշխղեկի աշխատանքը: Նրա աշխատանքը բաղկացած է երեք մասից: Նախ՝ աշխղեկը նախագծում է տունը: Աստված՝ որպես Իր տան աշխղեկ, պատրաստեց Իր նախագիծը շատ վաղուց: Պողոս առաքյալը գրում է. «Շատ ավելի առաջ, քան երբ Նա դնում էր երկրի հիմքերը, մենք Նրա մտքում էինք» (Եփես. 1.4, MSG): Եբրայեցիների թղթում գրված է. «…գործերն աշխարհի սկզբից կատարված էին» (4.3): Աստծո տունը լիովին ծրագրված էր մինչև Ադամի արարումը: Որքա՜ն զարմանալի է:

Երկրորդը՝ աշխղեկը պատվիրում է այն նյութերը, որոնք օգտագործվելու են տան կառուցման համար: Մի՞թե դու ուրախ չես, որ Աստված «պատվիրել է» մեզ: Ահա թե ինչու է Նա ասում. «Ես ընտրեցի քեզ մինչև որ կյանք տվեցի քեզ, և մինչև քո ծնվելը Ես ջոկել էի քեզ» (Երեմիա 1.5, TEV): Պողոսն ասում է մեզ. «Ինչպես որ ընտրեց մեզ Նրանով աշխարհի ստեղծվելուց առաջ…» (Եփես. 1.4):

Աշխղեկի երրորդ պարտականությունը շինարարների աշխատանքը կարգավորելն է: Սա նախագծի ամենակարևոր մասն է, քանի որ հազիվ թե ցանկանաք, որ միջնորմեր տեղադրողը ջրմուղագործից կամ էլեկտրագետից առաջ գար: Հազիվ թե դուք ցանկանաք, որ հատակը շարողները տանիքագործներից կամ ներկարարներից առաջ գան: Եթե շինարարների կամ գործակիցների աշխատանքը համակարգված չէ, ապա խառնաշփոթն անխուսափելի է:

Մեր ժամանակներում չկան գլխավոր շինարարներ, բայց Աստծո տան համար կա այդպիսի անձնավորություն: Ո՞վ է, ըստ ձեզ, գլխավոր շինարարը, որ կառուցում է Աստծո անհատական նախագծով պատրաստվող տունը. ճի՛շտ է, Հիսուս Քրիստոսը: Գաղատացիների 4.4-ում

գրված է. «Երբ ճիշտ ժամանակը վերջապես եկավ, Աստված ուղարկեց Իր Որդուն» (TEV): Աստված, Ով Իր տան աշխղեկն է, «ճիշտ ժամանակին» ուղարկեց Հիսուսին, Ով և՛ անկյունաքարն է, և՛ գլխավոր շինարարը Սիոնի կառուցման համար:

Որպես գլխավոր շինարար՝ Հիսուսը կատարելապես արեց Իր աշխատանքը: Անկասկած՝ Նա բարեհաջող կերպով ավարտեց Իր ընթացքը: Վերջին ընթրիքի ժամանակ Նա կարող էր խոնարհաբար ասել Իր Հորը. «…այն գործը կատարեցի, որ տվեցիր Ինձ, որ անեմ» (Հովհ. 17.4): Հիսուսն ավարտեց Իր աշխատանքը՝ որպես Սիոնը կառուցող գլխավոր շինարար կամ գործակից:

Իսկ մե՞նք: Ի՞նչ է ասում Աստծո Խոսքը մեր մասին՝ որպես Աստծո տան գործակիցներ կամ շինարարներ:

Մեր մասին գրված է. «Որովհետև մենք Աստծո գործակիցներն ենք, որոնք ստեղծված են Քրիստոս Հիսուսում բարի գործեր անելու համար, որոնք Աստված նախապես պատրաստել է, որ մենք անենք» (Եփես. 2.10, NIV): Ուշադրությո՛ւն դարձրեք, որ մենք ստեղծված ենք Քրիստոսում «բարի գործեր անելու համար»: Այլ խոսքերով՝ մենք ստեղծված չենք պարզապես ինչ-որ մեկը *լինելու* համար. մենք ստեղծված ենք Քրիստոսում ինչ-որ բան *անելու* համար: Իսկ հիմա շատ ուշադի՛ր եղիր. վերջին տարիներին Քրիստոսի մարմնում ուսմունքային անհավասարակշռություն կա այս հարցի վերաբերյալ: Մենք ուժեղ շեշտադրում ենք արել այն բանի վրա, թե *ով ենք մենք* Քրիստոսի մեջ, ինչը կարևոր է, բայց մենք շեշտադրել ենք դա՝ անտեսելով այն ճշմարտությունը, թե *ինչպիսի գործերի համար ենք մենք ստեղծված* Քրիստոսում: Այս անհավասարակշռությունն առաջացրել է երկու խոշոր խնդիրներ:

Նախ՝ Արևմուտքի եկեղեցին բավականին թմրել է: Հավատացյալների մեծամասնությունն այցելում է եկեղեցի շաբաթը մեկ անգամ, իսկ նրանցից շատերը նույնիսկ՝ ավելի հազվադեպ: Մենք տարված ենք կարիերայի աճով, մեզ համար բարեկեցիկ հասարակական կյանք ապահովելով, ձեռք ենք բերում վերջին տեխնիկական նորույթները, վճարումներ ենք անում մեր տան համար, դաստիարակում մեր երեխաներին, գումար խնայում նրանց կրթության համար և գումար կուտակում թոշակի համար: Այս ամենը դարձել է մեր դրդապատճառը: Մենք չենք ձգտում իրականաց-

նել այն կոչումը, որն Աստված տալիս է մեզ: Մեզանից շատերն անտեղյակ են այն ճշմարտության մասին, որ մենք հավիտենական «աշխատանք» ունենք, որը պետք է կատարենք:

Մտածի՛ր այս մասին. ինչպե՞ս Պողոսը կարող էր ասել. «…ընթացքը կատարեցի…» (Բ Տիմոթ. 4.7), եթե նա չիմանար, թե որն էր իր ընթացքը: Թո՛ւյլ տուր բացատրել: Եթե դպրոցական տարիներին դու մասնակցել ես մեծ մրցավազքի, ապա պետք է իմանաս, որ բոլոր մասնակիցները մինչև վազքը նայում են վազքուղու քարտեզը: Եթե դու մեծ տարածությունով մրցավազքի ես մասնակցում և չգիտես նախատեսված վազքուղին, ապա կարող ես վազել և վազել, մինչև հոգնածությունից փռվես գետնին այնպես, որ քո դասարանցիները ստիպված լինեն բարձրացնել և տուն տանել քեզ: Բայց միևնույն է՝ դու չես իմանա, ավարտեցի՞ր ընթացքդ, թե՞ ոչ: Կա միայն մեկ միջոց, որ կարող ես հաստատ ասել, թե ավարտել ես այդ ընթացքը. դու պետք է իմանաս նախապես ծրագրված վազքուղին և պետք է ամբողջովին անցնես այն: Ինչպես Հիսուսը, այնպես էլ Պողոսը ասաց. «…այն գործը կատարեցի, որ տվեցիր Ինձ, որ անեմ»:

Ինչպե՞ս մենք կարող ենք ավարտել մեր ուղին, եթե միայն կենտրոնացած ենք մեր առօրյայի վրա: Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ, թե ինչ աշխատանք է Աստված հանձնարարել մեզ, երբ մենք հիմնականում Նրա հետ շփվում ենք շաբաթը մեկ անգամ՝ կարճատև կիրակնօրյա հավաքույթի ժամանակ: Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ Նրա ծրագրերը, եթե մենք ամեն օր ջանասիրաբար չենք փնտրում Նրան:

Երկրորդ խնդիրը, որ առաջացել է մեր անհավասարակշռված ուսմունքի պատճառով, ըստ որի *լինելը* շեշտադրվում է ի վնաս *գործելուն*, հետևյալն է. շատ քրիստոնյաների մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ միայն ամբողջական ծառայության մեջ գտնվող մարդիկ իրական կոչում ունեն իրենց կյանքերում: Սա անհեթեթություն է: Յուրաքանչյուր Աստծո զավակ, թե՛ կին, թե՛ տղամարդ, թե՛ երիտասարդ, թե՛ ծեր երկնային կոչում ունի, և այդ կոչումը հետևյալն է. լինել Աստծո տունը կառուցող պտղաբեր շինարար: Աստվածաշնչի ընդլայնված թարգմանությունը շատ գեղեցիկ կերպով է ցույց տալիս այս ճշմարտությունը՝ հավաստիացնելով, որ մենք ստեղծված ենք Քրիստոս Հիսուսում, «որ-

պեսզի մենք կարողանանք անել այն բարի գործերը, որ Աստված նախասահմանել է (նախօրոք ծրագրել է) մեզ համար [գնանք այն ճանապարհներով, որ Նա նախապես պատրաստել է], որպեսզի մենք քայլենք դրանցով [ապրելով այն բարի կյանքով, որ Նա կանխավ պատրաստել է մեզ համար]» (Եփես. 2.10, AMP):

Աստված արտոնություն է տվել քեզ ծառայել որպես Սիոնի՝ Նրա հավիտենական բնակարանի շինարարներից կամ գործակիցներից մեկը: Այս տունը կառուցված չէ աղյուսներով, շաղախով, տախտակներով և սվաղով: Այս տունը կառուցված է առանց ձեռքերի: Սա մի բնակավայր է, որը պատրաստված է թագավորական որդիներից և դուստրերից: Ինչպես շատ շինարարներ, միգուցե դու էլ այսօր չկարողանաս տեսնել (դեռևս), թե ինչպես է քո կյանքի կոչումը լրացնում Նրա տան ամբողջական նախագիծը, որովհետև որպես գլխավոր շինարար՝ միայն Նա է տեսնում դա: Մեկ օր ապագայում, երբ Աստծո տան կառուցումն ավարտվի, մեր ներդրման ամբողջական իմաստը հայտնի կլինի: Այդ ժամանակ մենք, լինելով այդտեղ, Նրա հետ միասին հավիտյան կվայելենք Նրա ներկայությունը:

Երբ Ռոբերտը մեր տան կառուցման համար կարգավորում էր շինարարների աշխատանքները, նա յուրաքանչյուրին նախագծի և գծագրերի իր մասը տվեց: Նա բացատրեց նրանց ճիշտ այն, ինչ ցանկանում էր նրանցից: Ռոբերտը գիտեր ամբողջ ծրագիրը, իսկ նրանք ընդամենը գիտեին այն մասը, որն իրենց էր վերաբերում: Նրանք չէին եկել շինարարական տարածք, որպեսզի անեին այն, ինչ իրենք կարևոր էին համարում կամ ինչը դուր էր գալիս իրենց: Նրանք հետևում էին այն ծրագրին, որը նախապես պատրաստված էր աշխղեկի կողմից:

Աստված նախապես ծրագրեց լավագույն ճանապարհը քեզ համար, ինձ համար և յուրաքանչյուրի համար, ով վստահում է Հիսուս Քրիստոսին՝ որպես Տեր և Փրկիչ (տե՛ս Եփես. 2.10): Ինչպես այն շինարարների դեպքում, ովքեր կառուցում էին մեր տունը, այնպես էլ մեզանից յուրաքանչյուրն ունի առանձնահատուկ, կարևոր դեր Աստծո հավիտենական տան կառուցման մեջ: Չկան ավելի կամ պակաս կարևոր առաջադրանքներ: Աստված ցանկանում է, որպեսզի Իր տունը կառուցվի ճիշտ այնպես, ինչպես Նա ծրագրել է, և այդ պատճառով մեզանից յուրաքանչյուրը պետք է անի իր մասը, և այն էլ այնպես, ինչպես հարկն է:

ՇԻՆԱՐԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԿՈՐՈՒՍՏԸ

Այժմ կարելի է ավելի լավ հասկանալ, թե ինչու Սուրբ գրքում մենք այդքան հաճախ կոչվում ենք *շինարարներ*: Սաղմոսերգուն գրում է. «Այն քարը, որ շինարարները անարագեցին, նա եղավ անկյունի գլուխ» (Սաղմ. 118.22): Ինչպես մենք արդեն նշեցինք, Պետրոսը պնդում է, որ բոլոր հավատացյալներն Աստծո տան մեջ քարեր են: Բայց հետո նա անցում է կատարում այս փաստից, թե՝ *ով ենք մենք*, դեպի այն ճշմարտությունը, թե՝ *ինչի համար ենք մենք կանչված* Քրիստոսի մեջ՝ փոխաբերական իմաստով անվանելով մեզ Աստծո տան շինարարներ (կամ գործակիցներ). «Դուք էլ կենդանի քարերի պես *շինվեք* հոգևոր տաճար… Արդ ձեզ՝ հավատացյալներիդ, պատվականություն է, բայց անհավատներին՝ այն քարը, որ *շինողներն* անարգեցին, նա անկյունի գլուխ եղավ» (Ա Պետր. 2.5,7):

Պետրոսի խոսքերից մենք տեսնում ենք, որ հնազանդ, հավատարիմ և ճշմարիտ շինարարները կառուցում են Աստծո տունը, իսկ նրանք, ովքեր չեն հնազանդվում Խոսքին (Աստծո ծրագրին կամ նախագծին), իրականում գործում են Աստծո վերջնական նպատակի դեմ:

Մտապահելով սա՝ մենք կուսումնասիրենք, թե ինչպես է Պողոս առաքյալը նկարագրում շինարարության ընթացքը և վարձատրությունը.

> «Աստված *կվարձատրի* յուրաքանչյուրին՝ ըստ կատարած աշխատանքի: Որովհետև մենք գործընկերներ ենք, որ աշխատում ենք Աստծո հետ միասին… Դուք նույնպես Աստծո շինությունն եք [Սիոնը]: Օգտագործելով այն պարգևը, որ Աստված տվեց ինձ՝ ես կատարեցի հմուտ *շինարարի* (գործակցի) աշխատանքը և դրեցի հիմքը, իսկ *ինչ-որ մեկը* (մեկ այլ գործակից) կառուցում է դրա վրա: Բայց *ծեզանից յուրաքանչյուրը* պետք է զգուշանա, թե ինչպես է կառուցում [այսինքն՝ մենք բոլորս՝ որպես գործակիցներ]: Որովհետև Աստված արդեն դրել է Հիսուս Քրիստոսին որպես մեկ և միակ հիմքը, և ոչ մի այլ հիմք չի կարող դրվել» (Ա Կորնթացիների 3.8-11, TEV):

Նախ և առաջ ուշադրությո՛ւն դարձրու, որ առաջին նախադասության մեջ Աստված մեզ հետ խոսում է վարձատրության կամ պարգևատրման մասին: Մտապահի՛ր սա, քանի որ մենք շարունակելու ենք ուսումնասիրել այս հատվածը Կորնթացիների առաջին թղթից:

Պողոսը կառուցեց հիմքը: Նրա նամակները, որոնք գրվել են գրեթե

երկու հազար տարի առաջ, դեռևս օգտագործվում են այսօր՝ որպես արժանահավատ հիմք այն բանի, թե ինչպես պետք է մենք ապրենք Քրիստոսի մեջ: Առաջին շինարարները, ովքեր կառուցում էին մեր տունը Ֆլորիդայում, հիմք դնողներն էին: Հենց որ նրանց աշխատանքն ավարտվեց, մնացած բոլոր շինարարները եկան և սկսեցին տան կառուցումը այն բետոնե շերտի վրա, որ լցրել էին հիմք դնող շինարարները:

Պողոսը շարունակում է. «Ոմանք կօգտագործեն ոսկի կամ արծաթ կամ թանկարժեք քարեր՝ կառուցելով հիմքի վրա. մյուսները կօգտագործեն փայտ կամ խոտ կամ հարդ» (3.12, TEV): Ոսկին, արծաթը և թանկարժեք քարերը հավիտյան մնացող բաներն են, իսկ փայտը, խոտը և հարդը՝ ժամանակավոր բաներն են: Կյանքի յուրաքանչյուր պահին մենք ընտրության հնարավորություն ունենք. կառուցել կա՛մ հավիտենական, կա՛մ ժամանակավոր կյանքի համար: Երբ մենք ձգտում ենք ավելի շատ փող աշխատել, հանրահայտ դառնալ, օգնել մարդկանց զուտ անձնական շահի համար, հաջողության հասնել՝ սեփական անձը բարձրացնելու համար, կամ, եթե կենտրոնացած ենք այլ եսասիրական նպատակների վրա, ապա մենք կառուցում ենք այս ժամանակավոր կյանքի համար: Բայց երբ մենք կենտրոնացած ենք Աստծո արքայությունը և Նրա տունը կառուցելու վրա՝ բերելով հավիտենական Խոսքը և Աստծո մատակարարումը նրանց, ովքեր ունեն դրանց կարիքը, ապա մենք կառուցում ենք հավիտենական կյանքի համար:

Պողոսը շարունակում է. «Եվ յուրաքանչյուր մարդու աշխատանքի որակը կտեսնվի, երբ Քրիստոսի օրը բացահայատի այն: Որովհետև այդ Օրը կրակը կհայտնի յուրաքանչյուրի աշխատանքը. կրակը կփորձի դա և ցույց կտա դրա իրական որակը» (3.13, TEV):

Կրակը կփորձի մեր աշխատանքը, բայց այն նույնպես կփորձի այն դրդապատճառները և մտադրությունները, որոնցով մենք կատարել ենք այդ աշխատանքը (տե՛ս Ա Կորնթ. 4.5): Երբ փայտի, խոտի և հարդի տակ կրակ են վառում, այդ կրակը լափում է դրանք: Բայց եթե նույն կրակի մեջ ոսկի, արծաթ կամ թանկարժեք քարեր դնեն, ապա դրանք ավելի մաքուր և ավելի գեղեցիկ կդառնան. դրանք փորձվում և մաքրվում են: Եվ ահա գալիս է վճարման ժամանակը. «Եթե այն, ինչ կառուցված էր հիմքի վրա, դիմանում է կրակին, ապա շինարարը վարձատրություն կստանա: Սակայն, եթե ձեր աշխատանքն այրվի, ապա դուք կկորցնեք

այն. բայց դուք կփրկվեք, ասես թե ազատվել եք կրակից» (3.14,15, TEV):

Ուշադրությո՛ւն դարձրու, որ դու՝ որպես շինարար, վարձատրություն կստանաս, եթե բարեհաջող ավարտես քո ընթացքը: Սակայն, եթե քո գործը չի համապատասխանում Աստծո Խոսքին, այսինքն՝ եթե քո դրդապատճառները եսասիրությունն էր, անհնազանդությունը կամ հպարտությունը, ապա քո աշխատանքը կայրվի: Որպես Քրիստոսի հավատացյալ՝ դու կգնաս Երկինք, բայց չես ստանա մնայուն աշխատանքի պտուղ: Սրանք խիստ զգուշացման խոսքեր են բոլորիս համար:

Շարունակելով ուսումնասիրել այս հզոր հատվածը՝ հիշի՛ր, որ Պողոսը այս խոսքերը չի ուղղում որևէ անհատի, այլ ամբողջ մի եկեղեցու.

> «Անկասկած՝ գիտեք, որ դուք Աստծո տաճարն եք [ըստ անհատական նախագծի կառուցած տունը], և, որ Աստծո Հոգին ապրում է ձեզանում: Աստված կկործանի յուրաքանչյուրին, ով կործանում է Աստծո տաճարը: Որովհետև Աստծո տաճարը սուրբ է, և դուք ինքներդ եք Նրա տաճարը: Դուք չպետք է խաբեք ինքներդ ձեզ» (3.16-18, TEV):

Կրկին խիստ խոսքեր: Սա պետք է սուրբ երկյուղ առաջացնի յուրաքանչյուր մարդու մեջ, ով կարող է մտածել Աստծո տունը կամ Քրիստոսի հարսնացուի՝ եկեղեցու հետ վատ վարվելու կամ նրան մոլորեցնելու մասին: Սա խիստ զգուշացնում է ցանկացած մարդու՝ նույնիսկ՝ Աստծո տան փոքրագույն «աղյուսի» կամ ինչպես մենք ենք ասում՝ «սրբերից փոքրագույնի» հետ վատ վարվելու համար:

ԳՈՐԾԱԿՑԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Պողոսը եզրակացնում է. «Ոչ ոք իր անձը չխաբի…» (Ա Կորնթ. 3.18): Դժբախտաբար՝ որոշ քրիստոնյաներ զորավոր կերպով չեն ավարտել իրենց ընթացքը, որովհետև շեղվել են ընթացքից եսասիրության պատճառով: Նրանք դադարել են կառուցել Աստծո տունը՝ Նրա փառքի համար, և հետևել են աշխարհի հարստություններին ու ձգտել այն անցողիկ մարդկային փառքին, որը մարելու է:

Մի՛ խաբիր ինքդ քեզ: Մնա՛ կենտրոնացած. դու առաջադրանք ունես Քրիստոսի մեջ, որը պետք է կատարես: Քո աշխատանքը պետք է կա-

տարված լինի այնպես, ինչպես Աստված նախապես ծրագրել էր, հակառակ դեպքում՝ այն, ինչ-որ դու պետք է անեիր, կփոխանցվի մեկ ուրիշին: «Մեսիջ» թարգմանությունը խստորեն ընդգծում է այս անչափ կարևոր փաստը.

> «Թող յուրաքանչյուր հյուսն, ով գալիս է աշխատանքի, հոգ տանի, որպեսզի հիմքի վրա կառուցի: Հիշե՛ք, որ կա միայն մեկ հիմք, որն արդեն դրված է՝ Հիսուս Քրիստոսը: Հատկապես՝ զգուշորեն ընտրեք ձեր շինանյութերը: Վերջում ստուգվելու եք: Եթե դուք օգտագործած լինեք էժանագին կամ ցածրորակ նյութեր, ապա դա կբացահայտվի: Ստուգումը մանրակրկիտ և ճշգրիտ է լինելու: Դուք անպատիժ չեք մնա ցանկացած թերի աշխատանքի համար: Եթե ձեր աշխատանքը դիմանա ստուգմանը՝ շատ լավ. *եթե ոչ՝ ապա շինության ձեր մասը կքանդվի և կրկին կկառուցվի*: Սակայն դուք չեք քանդվի. դուք կմնաք, բայց մի կերպ» (Ա Կորնթացիների 3.10-15, TEV):

Եթե մեր աշխատանքը չհամապատասխանի Աստծո քննության չափանիշին, ապա *«շինության ձեր մասը կքանդվի և կրկին կկառուցվի»*: Ոչ ոք չի ցանկանում, որպեսզի իր աշխատանքը կրկին այրվի, հատկապես, երբ խոսքն այն աշխատանքի մասին է, որը մենք արել ենք տիեզերքի Արարչի համար:

Ես հիշում եմ՝ մեր շինարարներից մեկը լավ չէր աշխատում: Նա իր գործը չկատարեց ըստ գծագրերի, որոնք Ռոբերտն էր տվել նրան: Քանի որ ես և Լիզան ամեն օր շինարարության վայր էինք այցելում, մենք առաջինը նկատեցինք այդ խնդիրը: Ես զանգահարեցի Ռոբերտին, և մենք հանդիպեցինք մեր կառուցվող տան մոտ: Նա շատ զայրացած էր: Այս շինարարը նրա մշտական անձնակազմից չէր, այնպես որ Ռոբերտն անմիջապես ազատեց նրան աշխատանքից: Այդ մարդը կորցրեց իր վարձատրությունը: Նա ոչ միայն կորցրեց իր վճարը. նա ալյև չէր կարող ասել, որ մեր գեղեցիկ տան շինարարական անձնակազմի անդամ էր եղել:

Ես դիտում էի, թե ինչպես Ռոբերտը պատվիրեց քանդել այն աշխատանքը, որն այդ մարդը կատարել էր: Դրանից հետո Ռոբերտը վարձեց մեկ այլ շինարարի, ով եկավ և կատարեց աշխատանքը ճիշտ այնպես, ինչպես նա նշել էր նախագծում: Այս մարդը ստացավ իր վարձատրությունը. նա ստացավ ոչ միայն վճարը, այլ նաև բավականություն նրանից, որ ներդրում էր ունեցել նման գեղեցիկ տան կառուցման մեջ:

Սուրբ գիրքն ասում է մեզ, որ այս սկզբունքն առավել ևս ճշմարիտ է Աստծո տան շինարարության մեջ: Կլինեն այնպիսի մարդիկ, ում սեզոնային աշխատանքը (կամ, նույնիսկ, ողջ կյանքի աշխատանքը) չի մնա: Այն կքանդվի, և Աստծո հավիտենական տան մասը չի լինի:

Թո՛ւյլ տուր օգնել քեզ պատկերացնել, թե որքան լուրջ է սա: Քանի որ ես ամեն օր այցելում էի այն վայրը, որտեղ կառուցվում էր իմ տունը, բոլոր շինարարներն ինձ լավ էին ճանաչում: Նրանք ինձ անվանում էին «քարոզիչ»: Ամեն օր, երբ իմ մեքենան մոտենում էր, նրանց էլեկտրոնային ռոքը դադարում էր: Հենց որ շինարարները տեսնում էին ինձ, արագ մոտենում էին նվագարկչին և անջատում էին այն: Ես ժպտում էի՝ տեսնելով, որ նրանք երկյուղածություն ունեին: Հետո մենք բոլորս զրուցում էինք որոշ ժամանակ: Երբեմն մեր զրույցները շատ հետաքրքիր էին ընթանում: Նույնիսկ լինում էին պահեր, երբ ես կարողանում էի կիսվել նրանց հետ Աստծո Խոսքով:

Ես հիշում եմ՝ մեկ օր շինարարները թվարկում էին այն գեղեցիկ շինությունները, որոնց կառուցմանն իրենք մասնակցել էին: Նրանց աչքերը փայլում էին, երբ նրանք խոսում էին իրենց ներդրման մասին: Կարելի էր տեսնել այն մեծ բավականությունը, որ նրանք ստանում էին նման գեղեցիկ աշխատանքներին մասնակցելու պատճառով:

Ե՛կ մեկ քայլ առաջ գնանք: Կարո՞ղ ես պատկերացնել, թե ինչպիսի բավականություն էին ստանում այն շինարարները, ովքեր կառուցել էին Սպիտակ տունը Վաշինգտոնում՝ Կոլումբիայի շրջանում: Պատկերացրո՛ւ, որ նրանցից մեկի երեխան դպրոցից տուն է գալիս և խանդավառությամբ հայտնում, որ դպրոցական էքսկուրսիայի է գնալու Ամերիկայի ամենահայտնի տունը տեսնելու: Կարո՞ղ ես պատկերացնել, թե ինչպիսի բավականությամբ հայրը իր ոգևորված երեխային կասի, որ ինքը մասնակցել է այդ շինության կառուցմանը: Կարո՞ղ ես պատկերացնել, թե ինչ կվերապրեր այդ հայրը, եթե գնար Սպիտակ տուն իր երեխայի դասընկերների հետ: Ինչպիսի բավականություն նա կստանար՝ տեսնելով, որ իր երեխան հպարտանում է իրենով, իսկ մյուս երեխաներն իմանում են, որ իրենց դասընկերոջ հայրն օգնել էր կառուցել այդ կառավարական շենքը, որտեղ գտնվում է Միացյալ Նահանգների նախագահի նստավայրը: Կարո՞ղ ես պատկերացնել սա:

Նույնը ճշմարիտ է մեր և Աստծո տան դեպքում: Սակայն մենք չենք աշխատում այնպիսի տան համար, որը մի քանի հարյուր տարի հետո կքանդվի և կփոխարինվի մեկ այլ շինությամբ: Մենք աշխատում ենք այնպիսի տան համար, որն ամբողջ տիեզերքի կենտրոնը կլինի հավիտյանս հավիտենից: Լսի՛ր Միքիա մարգարեի խոսքերը.

> «Եվ վերջին օրերը պիտի լինի, որ Տիրոջ տան սարը հաստատուն պիտի լինի սարերի գլխին, և բարձր պիտի լինի բլուրներից, և ժողովուրդները հոսելով նրա մոտ պիտի գնան: Եվ շատ ազգեր պիտի գնան և ասեն. «Եկե՛ք վեր գնանք Տիրոջ սարը և Հակոբի Աստծո տունը, որ Նա մեզ սովորեցնի Իր ճանապարհները, և, որ մենք գնանք Նրա շավիղներով», որովհետև Սիոնից պիտի դուրս գա օրենքը, և Տիրոջ Խոսքը՝ Երուսաղեմից» (Միքիա 4.1,2):

Ողջ տիեզերքի գործունեությունը պտտվելու է այս տան շուրջը: Այս տնից են բխելու ողջ իմաստությունը և բոլոր օրենքները, որոնք կառավարելու են ողջ արարչագործությունը: Եվ միգուցե ամենազարմանալի փաստն այն է, որ Աստծո տունը՝ Սիոնը, նույնքան գեղեցիկ է լինելու երեք տրիլիոն տարի անց, որքան և իր ավարտի օրը:

> Մենք աշխատում ենք այնպիսի տան համար, որը հավիտյան ամբողջ տիեզերքի կենտրոնը կլինի:

Կար մի Ավետարանի ծառայող, ով հավատարիմ մնաց մինչև վերջ: Նա արդյունավետ կերպով ծառայեց ավելի քան վաթսուն տարի և գնաց այս աշխարհից՝ ստանալու իր վարձատրությունը, երբ երկրորդ հազարամյակը մոտենում էր ավարտին: Նրա մահվանից մոտ մեկ տարի անց ես գնացի մի մեծ եկեղեցի, որը գտնվում էր Ամերիկայի Միջին Արևմուտքում: Այդ եկեղեցու փառաբանության ավագն ասաց ինձ, որ Աստված պայծառ երազ է ցույց տվել իրեն: Այդ երազի մեջ նա Երկնքում էր և տեսել էր այդ մեծ ծառայողին, ով բարեհաջող կերպով ավարտել էր իր ընթացքը: Այդ ծառայողը ժպտացել և ասել էր նրան. «Ամեն ինչ շատ ավելի լավ է, քան ես երբևէ պատկերացրել էի»: Նրանք զրուցել էին մի քանի րոպե, իսկ հետո այդ ծառայողը շրջվել էր և ցույց տվել այն աշխատանքը, որը Սիոնի մասն էր կազմում: Այն ահռելի էր: Այդ մարդու հավատարմության ազդեցությունը շատ ավելի բարձր կամ ընդարձակ էր, քան նա կարող էր պատկերաց-

նել, երբ այս երկրի վրա էր, և այն անմիջապես իր առջև էր: Նա կարող էր ցույց տալ իր աշխատանքը, ինչպես այն շինարարները, ովքեր պատմում էին ինձ այն շինությունների մասին, որոնք կառուցվել էին իրենց մասնակցությամբ: Ինչպիսի՜ վարձատրություն: Ինչպիսի՜ մրցանակ:

Կարո՞ղ ես պատկերացնել, որ ամբողջ հավիտենության ընթացքում դու կարողանալու ես Աստծո տան կառուցած քո մասը ցույց տալ ժառանգներիդ, բոլոր ազգերին և միլիոնավոր մարդկանց, ովքեր գալու են, որպեսզի տեսնեն Նրա փառահեղ տունը:

Փառավոր միտք է, այնպես չէ՞: Ինչպիսի՜ անհավատալի վարձատրություն: Որքա՜ն մեծ դրդապատճառ է սա, որպեսզի մենք որոշում կայացնենք բարեհաջող կերպով ավարտել մեր ընթացքը:

Այժմ մտածի՛ր մյուս կողմի մասին: Պատկերացրո՛ւ, որ չկարողանաս ցույց տալ քո գործն այն տան մեջ, որը կոչվում է Սիոն, որովհետև բարեհաջող կերպով չես ավարտել ընթացքդ: Կարո՞ղ ես պատկերացնել, որ քո նախնիները, ժառանգները և բոլոր ազգերը գալու են, որպեսզի տեսնեն, թե ինչ ես արել: Բայց ամբողջ հավիտենության ընթացքում ոչինչ չես կարողանա ցուցադրել, որովհետև քո մասը քանդվել է և հանձնարարվել նրան, ով հավատարիմ է եղել: Ինչպիսի՜ հավիտենական կորուստ, ինչպես Պողոսն է ասում Կորնթացիների առաջին թղթի 3-րդ գլխում.

«Թանկագի՛ն սուրբ: Ես չեմ ցանկանում, որպեսզի դա կատարվի քեզ հետ: Աստված էլ չի ցանկանում, որպեսզի դա կատարվի քեզ հետ: Եվ ցավալին այն է, որ դա կատարվելու է շատ հավատացյալների հետ: Բայց դու հենց հիմա կարող ես որոշել, որ քեզ հետ նման բան *չի* կատարվի»:

Ուշադի՛ր կարդա Հովհաննեսի խոսքերը.

> «Զգո՛ւյշ եղեք, որպեսզի չկորցնեք այն մրցանակը, որի համար մենք այսքան ծանր աշխատել ենք: Եղե՛ք ջանասեր, որպեսզի դուք ստանաք ամբողջ վարձատրությունը» (Բ Հովհաննես 8, NLT):

Տերն անձամբ ճանապարհ է պատրաստել Իր երեխաներից յուրաքանչյուրի համար, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ստանալ ամբողջ վարձքը Աստծո հավիտենական տան շինարարությանը մասնակցելու համար: Քո աշխատանքը երբեք չի մոռացվի, չի հնանա և չի փոխարինվի: Միլիոնավոր մարդիկ և հրեշտակներ հավիտյան կհիա-

նան դրանով:

Եվ սա դեռ ընդամենը առաջին վարձատրությունը կամ մրցանակն է, որը մենք կստանանք, եթե անկոտրում կերպով հնազանդվենք և հավատարիմ մնանք մեր Տիրոջը: Որքան էլ մեծ լինի այս դրդապատճառը, կա ևս մեկ մրցանակ, որը շատ ավելի մեծ է: Մենք կխոսենք դրա մասին հաջորդ գլխում:

17

ՄՈՏ ԼԻՆԵԼ ԱՐՔԱՅԻՆ

«Զգո՛ւյշ եղեք, որպեսզի չկորցնեք այն մրցանակը, որի համար մենք այսքան շատ ենք աշխատել: Եղե՛ք ջանասեր, որպեսզի դուք ստանաք ամբողջ վարձատրությունը»:

Բ Հովհաննես 8, (NLT)

Դժվարություններն անխուսափելի են, բայց ճիշտ դրդապատճառը կօգնի մեզ անկոտրում կերպով անցնել մեր ընթացքը: Այն մարդիկ, ովքեր չունեն ուժգին դրդապատճառ, կարող են թուլանալ կամ նույնիսկ՝ հանձնվել: Դրդապատճառը անչափ կարևոր է մեր ընթացքը բարեհաջող կերպով ավարտելու համար:

Առաջին մրցանակը կամ վարձատրությունն այն է, որ ամբողջ հավիտենության ընթացքում դու հնարավորություն կունենաս վկայել այն աշխատանքի մասին, որ կատարել ես Աստծո տան համար: Դու կիմանաս, որ արժանի ես «Ապրե՛ս, բարի և հավատարիմ ծառա» խոսքերին:

ԱՎԵԼԻ ՄՏԵՐԻՄ ՇՓՈՒՄ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՏ

Տարիներ շարունակ աշխարհով մեկ ճանապարհորդելով և շփվելով հավատացյալների հետ՝ ես երբեմն հարցրել եմ ինքս ինձ. «Միգուցե Արևմուտքի քրիստոնյաների մեծամասնությունը հավատում է, որ Աստված սոցիալի՞ստ է: Շատ հավատացյալներ կարծում են, որ Աստված հավասարաչափ է վարձատրելու բոլորին, և, որ մենք բոլորս կունենանք նույն իշխանությունը, պատասխանատվությունը և պատիվը նոր Երկնքում և նոր երկրում: Սակայն նրանք սխալվում են և չեն հասկանում հետևյալ ճշմարտությունը. թեև Աստծո փրկությունը բոլորի համար հա-

վասար է և հիմնված չէ մեր գործերի վրա, բայց Նրա վարձատրությունը հիմնված է այն բանի վրա, թե ինչպես ենք մենք հնազանդվել, հարատևել մեր ընթացքի մեջ և հավատարիմ մնացել Նրա Խոսքին:

Նախորդ գլխում մենք խոսեցինք առաջին վարձատրության մասին: Սակայն մեծագույն վարձատրությունը՝ ընթացքը բարեհաջող ավարտելու համար, շատ ավելի մեծ է, քան առաջինը: Այս մրցանակը կամ վարձատրությունը որոշելու է, թե որքանով ենք մենք մոտ լինելու Հիսուսին ողջ հավիտենության ընթացքում: Չկա ավելի հիասքանչ բան, քան մոտ և մտերիմ լինել Նրան, ում մենք սիրում և պաշտում ենք: Սուրբ գիրքն անհերքելիորեն ապացուցում է այս ճշմարտությունը: Այս փաստը հաստատող հատվածներից մեկը խոսում է այն արտոնված խմբի մասին, որ «…Գառան ետևից գնում են, ուր որ Նա գնա…» (Հայտն. 14.4): Ինչպիսի՜ արտոնություն և պատիվ է՝ հետևել Հիսուսին՝ ուր որ Նա գնա ամբողջ հավիտենության ընթացքում:

Այս ճշմարտությունն այնքան պարզ է երևում Ավետարաններում: Երբ Հիսուսի ծառայությունն ավարտին էր մոտենում, Նրա երկու աշակերտների մայրը մոտեցավ Նրան մի խնդրանքով. « ո՛նք տուր,- պահանջեց նա Հիսուսից,- որ այս երկու որդիներս, Քո արքայության մեջ կպարգևատրվեն բարձրագույն պատվավոր դիրքերով, մեկը՝ Քո աջ կողմում, մյուսը՝ Քո ձախ կողմում» (Մատթ. 20.21, MSG):

Իհարկե, պատվի բարձրագույն դիրքը Հիսուսի կողքին է, Ով նստած է Հոր աջ կողմում: Դրանից լավ տեղ պարզապես չի կարող լինել: Աստվածաշունչը պատմում է զորավոր հրեշտակների մասին, որոնք կոչվում են սերովբեներ: Նրանք անչափ մոտ են Աստծո գահին (տե՛ս Եսայի 6.16): Նրանք շարունակաբար աղաղակում են մեկը մյուսին. «Սո՜ւրբ, սո՜ւրբ, սո՜ւրբ է Տերը»: Քրիստոնյաները հիմներ են երգում այս բառերով: Սակայն այդ հրեշտակները երգ չեն երգում Աստծուն հաճեցնելու համար: Ո՛չ. նրանք արձագանքում են այն բանին, ինչ տեսնում են: Յուրաքանչյուր վայրկյան հայտնվում է Նրա մեծության ևս մեկ կողմը, և նրանք ընդամենը կարող են գոչել. «Սո՜ւրբ»: Իրականում նրանց գոչյուններն այնքան անզուսպ են, որ ցնցում են Աստծո գահի սրահի դռան հիմքերը, որտեղ կարող են տեղավորվել միլիարդավոր հրեշտակներ և սրբեր:

Այս զորավոր հրեշտակները չեն տրտնջում, որ այսքան երկար ժամանակ գտնվում են նույն տեղում: Նրանք ծածուկ չեն մտածում. *«Մենք արդեն տասը տրիլիոն տարի է այստեղ ենք: Մենք մի փոքր ձանձրացել ենք: Հնարավո՞ր է արդյոք, որ Աստված մեր փոխարեն բերի ուրիշ հրեշտակների, որպեսզի մենք ընդմիջում անենք և հնարավորություն ունենանք ուսումնասիրել Երկնքի և տիեզերքի այլ հատվածները»*:

Ո՛չ մի դեպքում: Այդ երկնային հրեշտակները չեն ցանկանում լինել մեկ այլ վայրում: Ողջ տիեզերքում չկա ավելի լավ վայր, քան այնտեղ, որտեղ Աստված է, որտեղ կարելի է տեսնել Նրա մեծությունը և լսել Նրա իմաստությունը: Պարզ ասած՝ ամբողջ արարչագործության մեջ ոչինչ այդքան տպավորիչ չէ, որքան Արարիչը: Մենք պետք է հիշենք, որ ոչինչ թաքնված չէ Նրա երեսից, այնպես որ, երբ դու մոտ ես Նրան, դու ամեն ինչ նայում ես Նրա տեսանկյունից: Ես մի թույլ օրինակ կբերեմ: Պատկերացրո՛ւ, որ նստած ես Ալբերտ Էյնշտեյնի, Նեյլ Արմսթրոնգի և Իսահակ Նյուտոնի կողքին և աստղադիտակով նայում ես արտաքին տիեզերքին: Ինչպիսի՞ բաներ դու կսովորեիր: Ես հասկանում եմ, որ սա նույնիսկ մոտ չէ ամեն բան Աստծո տեսանկյունից նայելուն, բայց համոզված եմ, որ դու հասկացար այն, ինչ ես ցանկանում էի ասել:

Մի ծառայող, որին ես ճանաչում եմ, հայտնվել էր Երկնքում: Նա պատմում էր, որ այնտեղ անհագ կերպով ձգտում էր մտնել գահի սրահը: Եվ Երկնքում բոլորը զգում էին նույն բանը. նրանք ցանկանում էին Աստծուն այնքան մոտ լինել, որքան հնարավոր է: Իմ ընկերն ասաց, որ Երկինքն ավելի գեղեցիկ էր, քան նա երբևէ պատկերացրել էր, բայց ոչինչ Երկնքում այդքան ցանկալի չէր, որքան Ինքը՝ Տերը:

Ե՛կ վերադառնանք Հակոբոսի և Հովհաննեսի մոր խնդրանքին: Հիսուսը պատասխանեց. «Ինչ վերաբերում է պատվի դիրքեր շնորհելուն, ապա դա Իմ գործը չէ: Իմ հայրն է հոգում այդ մասին» (Մատթ. 20.23, MSG): Այժմ մենք պետք է հարցնենք՝ արդյոք Երկնքում իսկապես պատվի դիրքե՞ր են շնորհվում, թե՞ Հիսուսը պարզապես նկատի ուներ: «Մի՛ մտածիր պատվի դիրքի մասին: Ինչո՞ւ ես մտածում, թե ով ավելի մոտ կլինի Ինձ և Իմ Հորը: Պարզապես ապրի՛ր քո որդիների հետ Աստծո համար: Մեկ օր ամեն բան կկարգավորվի, և Աստված բոլոր քրիստոնյաներին կտա հավասար պատվի դիրքեր: Դա հիմնված է միայն Իմ կատա-

րած աշխատանքի վրա, այլ ոչ թե քո, այնպես որ մի՛ մտահոգվիր այդ մասին»:

Այս հարցին պատասխանելու համար մենք պետք է անդրադառնանք մեկ այլ հարցի, որը հավիտենական կյանքի մասին է: Մեկ օր սադուկեցիներն եկան Հիսուսի մոտ և փորձեցին Նրան աստվածաբանական փակուղու մեջ գցել: Սադուկեցիները սկսեցին՝ ասելով, որ կային յոթ եղբայրներ. ավագ եղբայրն ամուսնացավ մի կնոջ հետ և անզավակ մահացավ: Երկրորդ եղբայրն էլ ամուսնացավ այդ կնոջ հետ, բայց նույնպես անզավակ մահացավ: Եվ այդպես շարունակվեց, մինչև որ յոթ եղբայրներն էլ ամուսնացան այդ կնոջ հետ: Դրանից հետո սադուկեցիները հարցրեցին. «Ուրեմն ասա՛ մեզ, ո՞ւմ կինն է նա լինելու հարության ժամանակ»:

Հիսուսը նրանց պատասխանեց մի փոքր այլ կերպ, քան իր աշակերտների մորը. «Ամուսնությունը վերաբերում է միայն երկրի վրա ապրող մարդկանց»: Նա ասաց.

> «Բայց այդպես չի լինի գալիք աշխարհում: Որովհետև նրանք, ովքեր արժանի են մեռելներից հարություն առնելու, չեն ամուսնանա: Եվ նրանք այլևս չեն մահանա: Այս առումով նրանք նման են հրեշտակներին: Նրանք Աստծո զավակներ են, որոնք հարություն են առել նոր կյանքի համար» (Ղուկաս 20.35,36, NLT):

Հիսուսն ուղղեց սադուկեցիներին, իսկ հետո պատասխանեց նրանց հարցին՝ ասելով, թե ինչպես է ամուսնությունը դիտարկվելու Երկնքում: Սակայն Նա չուղղեց Հակոբոսի և Հովհաննեսի մորը և ցույց չտվեց, որ նրա խոսքերի մեջ որևէ անճշտություն կար: Նա հաստատեց, որ Երկնքում կլինեն ավելի բարձր պատվավոր դիրքեր և կլինեն մարդիկ, ովքեր ավելի մոտ կլինեն Իրեն: Այս դիրքերը շնորհվելու են Դատաստանի ժամանակ Հայր Աստծո կողմից: Այլ հատվածներ ցույց են տալիս, որ այդ պատվավոր դիրքերը շնորհվելու են նրանց, ովքեր բարեհաջող կերպով ավարտեցին իրենց ընթացքը. խոսքը անկոտրում հավատացյալների մասին է:

ԳԱԼԻՔ ԲԱՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐԸ

Այս ճշմարտությունը կարելի է տեսնել նաև Եզեկիելի գրքում: Թեև խոսքն այստեղ Հին կտակարանի քահանաների մասին է, սակայն Եզեկիելը խոսում է մարգարեական կերպով՝ ցույց տալով, թե ինչպիսին է լինելու կյանքը Սիոնի մեծ տաճարում, այսինքն՝ Աստծո հավիտենական տան մեջ:

Եզեկիել մարգարեի միջոցով Աստված խոսում է ղևտացիների մասին, ովքեր Հին կտակարանի քահանաներն էին: Ինչպե՞ս է դա առնչվում մեզ հետ: Հովհաննես առաքյալն ասում է.

> «…Նրան, որ մեզ սիրեց և մեր մեղքերից լվաց մեզ Իր արյունով: Եվ մեզ թագավորներ և *քահանաներ* արեց Աստծո և Իր Հոր համար. Նրան փա՛ռք և զորությո՛ւն հավիտյանս հավիտենից. Ամե՛ն» (Հայտնություն 1.5,6):

Տեսնո՞ւմ ես՝ ես ընդգծել եմ *քահանաներ* բառը: Այն քրիստոնյաները, ովքեր ծնված են Հոգուց, այժմ քահանաներ են մեր Աստծո համար հավիտյանս հավիտենից: Լսի՛ր Աստծո Խոսքերը.

> «Այն ղևտացիները *(քահանաները)*, ովքեր հեռացան Ինձանից և թողեցին Ինձ մնացած բոլորի հետ՝ ամբողջ Իսրայելի հետ, ովքեր հրապուրվեցին բոլոր չաստված կուռքերով, կվճարեն բոլոր սխալների համար, որ գործեցին: Սրանից հետո նրանք կանեն միայն ծառայողական գործեր սրբարանում. կհսկեն դարպասները և կօգնեն Տաճարի ամենօրյա գործերում» (Եզեկիել 44.10,11, MSG):

Այս հատվածում «չաստված կուռքերը» վերաբերում են Իսրայելի կռապաշտությանը: Մեր հասարակության մեջ կռապաշտությունը հաճախ այն ձևով չի դրսևորվում, ինչպես այդ ժամանակ, սակայն դա նույնքան սարսափելի է Աստծո համար: Գրված է. «Ագահություն մի՛ ունեցեք այս կյանքի լավ բաների հանդեպ, որովհետև դա կռապաշտություն է» (Կողոս. 3.5, NLT): Մենք կռապաշտ ենք դառնում, երբ այս աշխարհում ուժեղ ձգտում ենք ունենում այն բաների հանդեպ, որոնք հրապուրում են մեզ: Ժամանակակից արևմտյան մշակույթում կռապաշտությունն արտահայտվում է այն բաներով, ինչն առաջնային է մեզ համար և ինչին մենք ձգտում ենք: Դա կարիերային աճն է, փողը, նյութական բաները, կարգավիճակը, ճանաչելիությունը, հաճույքները, համբա-

վը կամ նախանձի և եսասիրական ձգտումների ցանկացած այլ դրսևորում: Կուռք կարող է համարվել ցանկացած բան, ինչը մենք ավելի ենք սիրում և փափագում, քան սիրում և փափագում ենք Աստծուն: Դա այնպիսի առարկա կամ անձնավորություն է, որին մենք տալիս ենք մեր ուժը և որից ուժ ենք ստանում:

Կռապաշտություն կարելի է տեսնել կյանքի գրեթե բոլոր բնագավառներում:

Կռապաշտություն կարելի է տեսնել կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, նույնիսկ այնպիսի հասարակ հարցում, ինչպիսին է ուտելը: Կան շատ քրիստոնյաներ, ովքեր շատակերության մեջ են: Նրանք ուտում են, երբ տխուր են և ուտում են, երբ ուրախ են: Նրանք ուտում են, քանի որ ուտելիքը համեղ է՝ անկախ այն բանից, թե ինչ որակի ուտելիք է: Նրանք իսկական աղբ են լցնում իրենց ստամոքսները, որովհետև ցանկանում են զգալ համի անցողիկ հաճույքը: Նրանք երբեք իրենց մեքենայի մեջ օգտագործած մեքենայի յուղ կամ կեղտոտ վառելիք չեն լցնի, բայց այն որակի և քանակի ուտելիքը, որ նրանք ընդունում են, բանականությունից դուրս է: Նրանք կուռք են դարձրել ուտելիքը, քանի որ իրենց ուժերը ստանում են համի ժամանակավոր զգացողությունից և լիքը ստամոքսից. նրանք իրենց ուժերը տալիս են այդ զգացողությանը:

Ճանաչված լինելու ձգտումը կռապաշտության ձևերից մեկն է: Կան մարդիկ, ովքեր անում են ամեն ինչ, որպեսզի «պատվավոր» դիրք զբաղեցնեն եկեղեցում, աշխատանքի վայրում կամ հասարակության մեջ: Նրանք բամբասում են, չարախոսում, խաբում և ստում են կամ կեղծավորություն են անում, որպեսզի ճանաչում, դիրք կամ իշխանություն ձեռք բերեն: Նույնիսկ, եթե նրանք նման քայլերի չեն դիմում, միևնույն է, նրանք աստվածացնում են որևէ դիրք զբաղեցնելու իրենց ձգտումը: Նրանք ուժ են ստանում ճանաչելիություն, համբավ կամ որոշակի կարգավիճակ ունենալուց. հետևաբար՝ նրանք իրենց ուժերը տալիս են այդ բաներին:

Կուռքը քեզանից կգողանա անկոտրում հավատարմությունը: Այն կգողանա քո ուժերը, որոնց կարիքը դու ունես հավատարիմ կերպով մինչև վերջ գնալու համար:

Վերը նշված հատվածում Եզեկիելի գրքից Աստված խոսում է այն հավատացյալների մասին, ովքեր դադարել են փնտրել Իրեն՝ հետևելով այնպիսի բաների, որոնք մնայուն բավականություն չեն պատճառում: Այդ կուռքերը կարող են որոշ ժամանակով հաճեցնել մեզ, սակայն դրանք երբեք չեն կարող մնայուն բավականություն պատճառել: Աստված ասում է, որ կռապաշտ մարդիկ կվճարեն իրենց բոլոր սխալների համար, երբ տեսնեն, թե ինչպես է իրենց վարձքն այրվում: Նրանք կփրկվեն, բայց՝ մի կերպ: Նրանք կլինեն Նրա տան մասը, բայց՝ որպես ծառաներ, ովքեր կատարելու են ծառայի աշխատանք և օգնելու են ամենօրյա գործերում:

Մենք պետք է հիշենք, որ Աստված, այստեղ, նաև մեզ հետ է խոսում: Նա չի ցանկանում, որպեսզի մենք կորցնենք այն բոլոր հարստությունները, որոնք պահել է մեզ համար: Երկնքում շատ ավելի լավ է լինելու, քան մենք երբևէ կարող ենք պատկերացնել. ոչինչ այս երկրի վրա չի կարող համեմատվել Երկնքի շուքի հետ: Սակայն Երկնքում կան կարգավիճակներ՝ ավելի պատվավոր և պակաս պատվավոր դիրքեր: Ցանկացած դիրք Աստծո տան մեջ շատ ավելի լավ է, քան ցանկացած դիրք այստեղ՝ երկրի վրա, որովհետև նույնիսկ Դավիթն է հաստատում սա. «Ավելի լավ է ես դռնապան լինեմ և կանգնեմ իմ Աստծո դռան շեմին, քան բնակվեմ [անհոգ կերպով] անօրինության վրաններում» (Սաղմ. 84.10, AMP): «Մեսիջ» Աստվածաշունչը գեղեցիկ կերպով փոխանցում է այս խոսքը.

> «Մեկ օր անցկացրած Քո տանը՝ այս երկրպագության գեղեցիկ վայրում, ավելի լավ է, քան հազարավոր օրեր՝ անցկացրած Հունական կղզիների լողափերում: Ավելի լավ է լվանամ իմ Աստծո տան հատակը, քան պատվելի հյուր լինեմ մեղքի պալատում»:

Դավիթն ասում է. «Ավելի լավ է հասարակ ծառա լինեմ Աստծո տանը, քան լինեմ ցանկացած այլ վայրում»: Չկա ավելի ցանկալի վայր ողջ տիեզերքում, քան Աստծո անհատական նախագծով կառուցված տունը, որը Նրա դրսևորված ներկայության նստավայրն է: Ցանկացած դիրք Սիոնում ավելի լավ է, քան ցանկացած կարգավիճակ ցանկացած այլ վայրում:

Սակայն բաց մի՛ թող այն, ինչ Աստված նշում է այստեղ: Քանի որ Նա անչափ սիրում է մեզ, Նա ցանկանում է, որպեսզի մենք զգոն լինենք և խուսափենք այն տրտմությունից, որը կարող ենք վերապրել, եթե զրկվենք լավագույնից, այն վարձատրությունից, որ կարող ենք ստանալ: Մենք կարող ենք ապրել և գործել ողջ հավիտենության ընթացքում՝ Աստծուն ավելի մոտ լինելով: Հավատացյալների դատաստանի ժամանակ կլինեն արցունքներ, և Աստծո Խոսքը հավաստիացնում է մեզ, որ «…կջնջի Աստված բոլոր արտասուքը նրանց աչքերից…» (Հայտն. 21.4): Բայց այն փաստի գիտակցումը, որ մենք սխալ օգտագործեցինք մեր կարճ ժամանակը, որը որոշում էր մեր դիրքը հավիտենության մեջ, ոչ մի տեղ չի կորչելու: Մենք մշտապես իմանալու ենք, թե ինչ ենք բաց թողել այն պատճառով, որ հետևել ենք ոչ մնայուն բաներին: Սա այն հավիտենական կորուստն է, որի մասին ես երկար խոսում եմ նախորդ գլխում (տե՛ս Ա Կորնթ. 3.12-15):

Մյուս կողմից Աստված շարունակում է ասել. «Բայց այն ղևտացի քահանաները, ովքեր Սադովկի որդիներն են, ովքեր հավատարիմ կերպով հոգացին իմ սրբարանի մասին, երբ մնացած բոլորը հեռացել էին և թողել էին Ինձ, *մտնելու են Իմ ներկայության մեջ և ծառայելու են Ինձ»* (Եզեկ. 44.15, MSG):

Թեև այս հատվածում Աստված խոսում է Հին կտակարանի քահանաների մասին, սակայն գրված է, որ այդ ամենը «գալու բաների ստվերներն են» (տե՛ս Կողոս. 2.17), և, որ «Բոլոր այդ իրադարձությունները, որոնք տեղի ունեցան նրանց կյանքում, մեզ համար ասես օրինակներ լինեն» (Ա Կորնթ. 10.11, NLT): Հին կտակարանի իրադարձությունները, շատ իրավիճակներում, այն բաների խորհրդապատկերները, ստվերներն ու օրինակներն են, որոնք պետք է լինեն հետագա դարերում: Ուշադրությո՛ւն դարձրու *«ծառայելու են Ինձ»* բառերին: Մի բան է լինել տան ծառա, ով լվանում է հատակը, ինչպես որ Դավիթն էր ցանկանում, բայց բոլորովին այլ բան է անձամբ Աստծուն ծառայելը:

1983թ.-ին ես 8000 անդամ ունեցող եկեղեցում էի, երբ սկսեցի իմ ամբողջական ծառայությունը: Այդ եկեղեցին հայտնի էր ոչ միայն մեր քաղաքում, այլ նաև ամբողջ աշխարհում: Կար ժամանակ, երբ մեր աշխատակազմը բաղկացած էր լինում 450 հոգուց: Ինձ աշխատանքի ընդու-

նեցին որպես իմ հովվի և նրա կնոջ օգնական: Ինձ համար պատիվ էր նրանց ծառայելը: Ես ավելի շատ արտոնություն ունեի, քան ծառայողական թիմի այլ անդամները, որովհետև իմ գրասենյակն անմիջապես նրանց գրասենյակի կողքին էր, ես հաճախ նրանց տանն էի լինում և հաճախ ուղեկցում էի նրանց, երբ ճաշում կամ ընթրում էին աշխարհի ամենանշանավոր ծառայողների հետ: Կային ժամանակներ, երբ ես համակվում էի երկյուղածությամբ: Աչքերս լցվում էին արցունքներով, երբ մտածում էի, թե որքան բախտավոր մարդ եմ, քանի որ այդքան մոտիկից շփվում էի նման նշանավոր ծառայողների հետ:

Ես լսում էի այնպիսի իմաստուն մտքեր և գաղափարներ, որ մեր աշխատակազմի այլ անդամներն արտոնություն չունեին լսելու: Ես այդ հանդիպումներից այնպիսի գաղափարներ եմ քաղել, որոնք մինչև օրս առաջնորդում են ինձ: Իմ դիրքն ամենացանկալին էր ամբողջ եկեղեցում: Աշխատակազմի անդամները հաճախ էին ասում ինձ. «Քո բախտն իսկապես որ բերել է, քանի որ դու զբաղեցնում ես այդ պաշտոնը»: Ոմանք նախանձով հարցնում էին. «Ինչպե՞ս դու կարողացար զբաղեցնել այդ պաշտոնը: Ի՞նչ արեցիր այն ստանալու համար»: Մյուսները հաճախ քննարկում էին, թե ով է զբաղեցնելու այդ պաշտոնը, եթե մեկ օր ես թողնեի այն: Ես գիտեի, որ նրանք ճիշտ էին. դա լավագույն պաշտոնն էր մեր ողջ աշխատակազմում:

Պատկերացրու՝ դու կարող ես ունենալ նման արտոնյալ կարգավիճակ անձամբ Աստծո մոտ: Անկոտրում հավատացյալները, ովքեր լավ են կատարել իրենց աշխատանքը և անցել են իրենց ընթացքը մինչև վերջ, մոտ են լինելու Աստծո ներկայությանը գալիք աշխարհում: Նրանք այն մարդիկ են լինելու, ովքեր նստելու են պատվավոր դիրքերում: Ինչպես Աստված ասում է Եզեկիելի 44.28-ում. «Եվ նրանց համար ժառանգություն լինի՝ ես եմ նրանց ժառանգությունը»:

Ա՜յ քեզ խոստմունք: Մի՞թե հնարավոր է ստանալ ավելի լավ վարձատրություն կամ մրցանակ: Այս մարդիկ լինելու են Նրա մոտ, լսելու են Նրա գաղափարները, տեսիլքները և իմաստությունը, օգնելու են Նրան ապագան որոշելու և իշխանության այլ հարցերում: Սրանք այն հավատացյալներն են, ովքեր ջանասիրաբար և հավատարիմ կերպով անցնելու են իրենց ընթացքը: Մենք կնստենք և կիշխենք Նրա հետ հավիտյան:

Մենք կծառայենք անմիջապես Նրան. ինչպիսի՜ զարմանալի խոստմունք:

Այնպես որ կրկի՛ն լսիր Պողոսի հորդորը.

> «Բոլոր մարզիկները խիստ կարգ ու կանոնի են ենթարկում իրենց: Նրանք անում են դա, որպեսզի մրցանակ շահեն, որը կկորչի, բայց մենք անում ենք դա հավիտենական մրցանակի համար: Այնպես որ ես վազում եմ ուղիղ դեպի նպատակը, և իմ յուրաքանչյուր քայլը նպատակաուղղված է» (Ա Կորնթացիների 9.25, NLT):

Պրոֆեսիոնալ մարզիկները ջանասիրաբար մարզվում են և ձգտում Մեծ գավաթին, «Մասթերս» մրցաշարի կանաչ պիջակին, Սթենլիի գավաթին և Օլիմպիական ոսկե մեդալին, բայց այս ամենը ոչինչ է համեմատած այն բանի հետ, ինչին ձգտում ենք մենք: Ահա թե ինչու է Աստծո Խոսքը խրախուսում մեզ. «Եկե՛ք վազենք համբերատար, *դիմացկունությամ*բ և հաստատուն ու գործուն *համառությամբ* մեր մրցավազքի նշանակված ընթացքը, որ դրված է մեր առջև» (Եբր. 12.1, AMP): «Մեսիջ» թարգմանությունը եզրափակում է սա հետևյալ կերպով. «Հանի՛ր ավելորդ հագուստդ, սկսի՛ր վազել և երբե՛ք չդադարես»: Մեկ այլ ժամանակակից փոխաբերություն ավելի պարզ է ասում. «Ուրեմն վազե՛ք այնպես, որ շահեք մրցանակը» (Ա Կորնթ. 9.24, TEV):

Այժմ հարցրո՛ւ ինքդ քեզ. *«Արդյո՞ք այս խոսքերն ավելի մեծ նշանակություն ունեն ինձ համար այժմ, երբ գիտեմ, թե ինչպիսի մրցանակներ են սպասվում ինձ»*:

Կարծում եմ՝ ես գիտեմ քո պատասխանը:

18

ԵՐԲԵ՛Ք ՉՀԱՆՁՆՎԵՍ

«Մի՛ դադարիր: Մի՛ հանձնվիր: Քո բոլոր ջանքերն արժեն այն ամենը, ինչ դու կստանաս վերջում»:

Մատթեոս 10.22, (MSG)

Ոչ ոք չի կարող ստիպել քեզ կանգ առնել. միայն դու կարող ես կայացնել այդ որոշումը:

Այնպես որ չանե՛ս դա:

Հաղթողների վարձքը թե՛ այս կյանքում, թե՛ հաջորդում շատ ավելի մեծ է, քան այն նեղությունն ու դժվարությունը, որ կա այսօր քո կյանքում: Ինչպես Հիսուսն ասաց. «Քո բոլոր ջանքերն արժեն այն ամենը, ինչ դու կստանաս վերջում»:

Մեր Փրկիչը կանխասում է անչափ ցավալի մի փաստ, որը տեղի կունենա վերջին օրերում: «Շատերը կհանձնվեն»,- ասում է Նա Մատթեոս 24.10-ում (CEV): Այս խոսքերն արտասանելուց երևի Նրա սիրտը կոտրվում էր: Այն մարդիկ, ում Նա այնքան շատ է սիրում, ում համար Իր կյանքն է տվել՝ գին վճարելով նրանց ազատության ու հաջողության համար, հանձնվելու են:

Ցավալի փաստն այն է, որ նրանք հանձնվելու պատճառ չունեն: Աստված տվել է մեզ Իր զորավոր շնորհքը ո՛չ միայն մեզ դժվարությունից հանելու համար: Նրա շնորհքը մեզ դարձնում է ավելի ուժեղ, իմաստուն և պտղաբեր նաև դժվարությունը հաղթահարելուց հետո: Շատերը չեն շարունակի իրենց ընթացքը ճիշտ հեռանկար չունենալու պատճառով, քանի որ նրանք զինված չեն:

Մարդիկ դադարում են գնալ Աստծո ետևից տարբեր պատճառներով: Ամենից հաճախ խնդիրը փոխզիջումն է, որն *անկոտրում* բառի հակա-

նիշն է: Մենք պետք է նմանակենք թիավարող մարդուն, որի մասին ես պատմեցի առաջին գլխում. մենք պետք է թիավարենք հոսանքին հակառակ: Եթե մենք ցանկանում ենք քայլել Աստծո հետ, դրսևորել Նրա արքայությունը և ակնառու դառնալ հանուն Նրա փառքի, ապա մենք պետք է հակառակ գնանք այս աշխարհի հոսանքին:

Մենք պետք է անկոտրում կերպով հարենք Աստծո իմաստությանը: Փոխզիջումը տարբերակ չէ մեզ համար:

ԴԺՎԱՐ Է ՔՐԻՍՏՈՆՅԱ ԼԻՆԵԼԸ

Անմիջապես իր նահատակվելուց առաջ Պողոս առաքյալը կանխատեսեց վերջին օրերի փոթորկոտ հոսանքները: «Վերջին օրերում քրիստոնյա լինելը շատ դժվար է լինելու»,- գրեց նա Տիմոթեոսին (Բ Տիմոթ. 3.1, TLB): Պողոսը հինգ անգամ երեսունինը մտրակի հարված էր ստացել, երեք անգամ ծեծվել էր փայտերով, մեկ անգամ քարկոծվել էր և տարիներ շարունակ եղել էր բանտերում: Նա ամենուր բախվել էր թշնամության և հալածանքի: Սակայն նա մարգարեանում է, որ Աստծո համար ապրելն ավելի դժվար է լինելու մեր ժամանակներում: Ինչպե՞ս նա կարող էր այսպիսի բան ասել՝ իր կյանքում այդպիսի դժվարությունների հանդիպելուց հետո: Նա շարունակում է և բացատրում.

> «Մարդիկ կլինեն ինքնասեր, ագահ, սնապարծ ու ինքնահավան: Նրանք կլինեն հայհոյող, անհնազանդ իրենց ծնողներին, անշնորհակալ և ոչ աստվածապաշտ: Նրանք կլինեն անգութ, անողորմ, չարախոսներ, բռնի և կատաղի. նրանք կատեն այն, ինչ բարի է, կլինեն նենգ, հանդուգն և լցված հպարտությամբ: Նրանք կսիրեն հաճույքն ավելի շատ, քան Աստծուն» (Բ Տիմոթեոսի 3.2-4, TEV):

Առաջին հայացքից մենք կարող ենք ասել. «Ի՞նչ է նա ուզում ասել: Մի՞թե այս ամենը, որ առկա է մեր ժամանակաշրջանում, չկար Պողոսի օրերում»: Իհա՛րկե, այդ հասարակության մեջ ապրող մարդիկ նույնպես ունեին այս բնավորության գծերը: Մարդիկ եսասեր էին, արծաթասեր, անսուրբ և չներող… Պետրոսը Պենտեկոստեի օրը նույնիսկ ասաց. «Փրկվե՛ք այս ծուռ (այլասերված, չար անարդար) սերնդից» (Գործք 2.40, AMP):

Այդ դեպքում ինչո՞ւ է Պողոսն առանձնացնում մեր սերունդը: Ինչո՞ւ է նա շեշտադրում այս բնավորության գծերը, երբ նկարագրում է ամենադժվար ժամանակաշրջանը պատմության մեջ՝ Աստծո հետ ապրելու համար: Հաջորդ խոսքը ցույց է տալիս մեզ դրա պատճառը. «Նրանք այնպես կվարվեն, ասես թե կրոնասեր են, բայց կմերժեն այն զորությունը, որ կարող է աստվածապաշտ դարձնել նրանց» (Բ Տիմոթ. 3.5, NLT):

Ըստ Պողոսի՝ տարբերությունն այն է, որ այս դեպքում «հավատացյալներն» են գնում նման փոխզիջման: Ինչպես Նոր կտակարանի այլ հեղինակները, այնպես էլ այս առաքյալը նախապես զգուշացնում է, որ մեր ժամանակաշրջանում այն մարդկանց մեծամասնությունը, ովքեր դավանում են, թե «վերստին ծնված քրիստոնյաներ» են, հաստատ չեն կանգնի Աստծո շնորհքի մեջ: Նրանք կընդունեն, որ փրկված են շնորհքով, սակայն կմերժեն շնորհքի զորությունը, որը կարող է առանձնացնել իրենց՝ որպես արքայության անկոտրում զինվորներ:

Այս մարդիկ ցած են դրել իրենց թիերը: Միգուցե նրանց նավակի առաջամասը վեր է նայում, բայց նրանք հոսում են այս աշխարհի հոսանքի ուղղությամբ: Ամենավատն այն է, որ իմ տեսիլքում կային մեծ զբոսանավեր, որոնք լիքն էին նման մարդկանցով: Այն փաստը, որ նման մարդիկ միաբանվել են իրենց համոզմունքներով, ավելի ուժգին և համոզիչ է դարձնում նրանց խաբեությունը: Նրանք ոչ միայն խաբում են իրենք իրենց, այլև մոլորեցնում են ուրիշներին՝ դրդելով բազմաթիվ անկեղծ հավատացյալների՝ սայթաքել: Ահա՛ թե որ տարբերության մասին է խոսում Պողոսը:

Ես համոզված եմ, որ պատմության մեջ մեծագույն պայքարը, որի մեջ եղել են առաջին եկեղեցու հայրերը, ուղղված էր *օրինապաշտության* դեմ: Օրինապաշտությունը փորձում էր նորահավատներին վերադարձնել դեպի օրենքը: Այն փորձում էր մարդուն փրկել օրենքով, այլ ոչ թե Աստծո շնորհքին հավատալով:

Այսօր մենք ուրիշ պայքարի մեջ ենք: Ես հավատում եմ, որ մեծագույն պայքարը, որի հետ մենք բախվել ենք այս վերջին օրերում, *անօրինությունն* է: Անօրինությունը սովորեցնում է, որ կարելի է փրկվել, սակայն չունենալ փոխված կյանք: Լինելով քրիստոնյա՝ մենք ապրում ենք այնպես, ինչպես մինչև փրկվելը, դրա փոխարեն այժմ մենք ակումբի ան-

դամ ենք, կրում ենք այդ ակումբի կրծքանշանը և խոսում այդ ակումբի լեզվով, սակայն մեր զբոսանավը գնում է հոսանքի ուղղությամբ: Մենք այլևս անկոտրում կերպով չենք հավատում Աստծուն և չենք հնազանդվում Նրա ճանապարհներին:

Ես հավատում եմ, որ մեծագույն պայքարը, որի հետ մենք բախվել ենք այս վերջին օրերում, անօրինությունն է:

Հիսուսը զգուշացնում է, որ վերջին օրերում «Մեղքը կիշխի ամենուր, և շատերի սերը կսառչի: Բայց նրանք, ովքեր *կդիմանան* մինչև վերջ, կփրկվեն» (Մատթ. 24.12,13, NLT): Բայց սպասի՛ր. մեղքն իշխում էր ամենուր, երբ Հիսուսն ասում էր այս խոսքերը: Ինչո՞վ են տարբերվում մեր ժամանակները: Ցնցող իրականությունն այն է, որ Հիսուսը չէր խոսում մեր հասարակության մասին. Նա խոսում էր նրանց մասին, ովքեր ասում են, թե հետևում են Իրեն: Նա վկայում է, որ մեր օրերում մեղքն իշխելու է այն մարդկանց մեջ, ովքեր իրենց քրիստոնյա են կոչելու: Հակառակ դեպքում՝ ինչո՞ւ Նա պետք է ավարտեր Իր խոսքն այսպիսի արտահայտությամբ. «Բայց նրանք, ովքեր *կդիմանան* մինչև վերջ, կփրկվեն»: Անհավատ մարդուն չես ասի. «Եթե դու անցնես քո ընթացքը, ապա՝ կփրկվես», որովհետև նա նույնիսկ իր ընթացքի մեջ չէ: Սակայն այն մարդուն, ով արդեն հավատքի մեջ է և արդեն սկսել է իր ընթացքը, կարելի է ասել. «Եթե դու ավարտես…»:

Այն բանալի բառը, որ Հիսուսն օգտագործում է, *դիմանալն* է: Եթե հարկավոր է *դիմանալ*, ուրեմն լինելու է ընդդիմություն, հակառակություն կամ նեղություն՝ ճշմարտությանը հետևելու ճանապարհին: Մենք պետք է անկոտրում լինենք մեր ընթացքը բարեհաջող կերպով ավարտելու համար:

ԺԱՄԱՆԱԿԸ ԵԿԵԼ Է

Մենք այս լույսի ներքո կշարունակենք քննարկել Տիմոթեոսին ուղղված Պողոսի երկրորդ նամակը: Այն բանից հետո, երբ Պողոսը բացատրում է խնդիրը, նա տալիս է նաև դրա հակաթույնը. « աբեբաները կշարունակեն ավելի վատը դառնալ՝ խաբվելով և խաբելով ուրիշներին:

Բայց դու շարունակի՛ր մնալ այն ճշմարտությունների մեջ, որ քեզ սովորեցրել են և հաստատուն հավա՛տք ունեցիր» (Բ Տիմոթ. 3.13,14, TEV):

Ճշմարտությունը նորաձև չի լինում. այն հաստատուն է ժամանակվա մեջ և չի կրում մարդկային կարծիքների կամ մշակույթի ազդեցությունը: Ուշադրությո՛ւն դարձրու, որ Պողոսը և՛ հորդորում է, և՛ զգուշացնում իր աշակերտին. «Շարունակի՛ր մնալ այն ճշմարտությունների մեջ, որ քեզ սովորեցրել են և հաստատուն հավա՛տք ունեցիր»: Մեր հակաթույնը ճշմարտության մեջ հաստատ լինելն է:

Այս աշխարհը հրապուրում է իր միտումներին հետևելու համար, բայց դա ընդամենը մեզ տանելու է խաբեության: Այնպես որ Պողոսը շարունակում է.

> «Քեզ սովորեցրել են *Սուրբ գրքերը մանկությունից,* և դրանք տվել են քեզ իմաստություն, որպեսզի դու ընդունես այն փրկությունը, որը գալիս է Հիսուս Քրիստոսին վստահելուց: Բոլոր Սուրբ գրքերը ներշնչված են Աստծուց և օգտակար են սովորեցնելու մեզ, թե որն է ճշմարիտը, և օգնելու մեզ գիտակցել, թե որն է սխալ մեր կյանքում: Այն ուղղում է մեր ճանապարհները և սովորեցնում անել այն, ինչ ճիշտ է: Այն Աստծո միջոցն է, որով Նա պատրաստում է մեզ ամեն կերպ, լիովին սպառազինված յուրաքանչյուր բարի գործի համար, որ Աստված ցանկանում է, որպեսզի մենք անենք» (Բ Տիմոթեոսի 3.15-17, NLT):

Ես ընդգծել եմ երկու բանալի արտահայտություն. *Սուրբ գրքերը* և *մանկությունից*: Ամբողջ Սուրբ գիրքը ներշնչված է Աստծուց: Այս Գիրքը Նրա ճշմարտությունն է, որը վեր է ժամանակից և մշակույթից: Սա այն հիմքն է, որի վրա մենք կառուցում ենք մեր կյանքերը: Այս Գիրքը սպառազինում է մեզ գիտությամբ և զորությամբ, որպեսզի մենք ամեն կերպ հաճելի լինենք Աստծուն:

Քանի որ Տիմոթեոսի երկրորդ թղթի 3-րդ գլուխն ավարտվում է, մեզանից շատերը ենթադրում են, որ Պողոսն ավարտեց իր միտքը: Սակայն եկեղեցին մ.թ. 1227թ.-ին Աստվածաշունչը բաժանել է գլուխների և խոսքերի: Պողոսը Տիմոթեոսին գրել էր մեկ ամբողջական նամակ, և անկասկած՝ նրա միտքն այս գլխում անավարտ է մնում: Պողոսի հաջորդ խոսքերը շարունակում են նրա ասելիքը.

> «Այդ պատճառով պատվիրում եմ *քեզ* Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի առջև, Ով դատելու է կենդանիներին և մեռելներին Իր հայտնության և

> թագավորության ժամանակ. Քարոզի՛ր Խոսքը: Պատրա՛ստ եղիր հարմար պահին և ոչ հարմար պահին: Համոզի՛ր, հանդիմանի՛ր, հորդորի՛ր ողջ երկայնամտությամբ և ուսմունքով: Որովհետև կգա ժամանակ, երբ նրանք չեն *հանդուրժի* առողջ վարդապետությանը, այլ կվարվեն ըստ իրենց սեփական ցանկությունների, քանի որ իրենց ականջներն են ձգտում դրան, նրանք իրենց համար կդիզեն ուսուցիչներ, և կդարձնեն իրենց ականջները ճշմարտությունից» (Բ Տիմոթեոսի 4.1-4, NKJV):

«Պատվիրում եմ քեզ Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի առջև»: Պողոսը չէր կարող ավելի ուժեղ պատվեր տալ իր աշակերտին: Ո՞րն է այդ պատվերը: Աստծո Խոսքը հռչակելը և սովորեցնելը: Ո՛չ թե փիլիսոփայությունը, աշխարհիկ առաջնորդության սկզբունքները, հաջողության հասնելու սկզբունքները կամ այլ բաներ, որոնք հատուկ են մեր ժամանակներին: Ո՛չ. պատվերը Սուրբ գիրքը քարոզելն է, որը ժամանակներին չի ենթարկվում:

Պողոսը հաստատում է, որ ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչված է Աստծո կողմից և օգտակար է մեզ առաջնորդելու համար: Դրանից հետո նա պատվիրում է Տիմոթեոսին հռչակել և սովորեցնել այն: Ինչո՞ւ: Որովհետև ժամանակ կգա (և ես հավատում եմ, որ այն արդեն եկել է), երբ նրանք, ովքեր խաբում և խաբվում են, չեն հանդուրժի ողջամիտ վարդապետությանը: Ի՞նչ է վարդապետությունը: Դա պարզապես ուսմունք չէ, այլ՝ Սուրբ գրքի հիմքային կամ էական ուսմունքներն են: Սա այն ուսմունքն է, որն ի մի է բերում մնացած ամեն ինչ:

Ցավոք սրտի, ես ականատես եմ եղել, թե ինչպես են մեր հոգևոր (սուրբգրային) հիմքերը փոխվում՝ հարմարվելով մեր ժամանակվա նորույթներին: Դա այն աստիճան անվերահսկելի է դարձել, որ մի մեծ եկեղեցու հովիվ կարող է կանգնել իր եկեղեցական համայնքի առջև և ասել, որ ինքը համասեռամոլ է՝ ստանալով հոտնկայս ծափահարություններ: Մյուսը կարող է հայտարարել, որ բժշկությունն այլևս Աստծո կամքը չէ, և նրա համայնքը հավատում է նրան՝ փոխարենը հավատալու Աստծո Խոսքին: Մեկ այլ ծառայող կարող է գիրք գրել՝ պնդելով, որ ի վերջո բոլորը Երկինք են գնալու, և ոչ ոք չի այրվելու հավիտենական կրակի մեջ, և «աստղ» դառնալ քրիստոնեական աշխարհում: Եվս մեկ քարոզիչ էլ կարող է վիճարկել Հիսուս Քրիստոսի ծնունդը կույսից, բայց շարունակել քրիստոնեական հավատքի առաջնորդ համարվել: Ամեն օր «քրիստոնյաների» մեջ նորանոր նման սցենարներ են հայտնվում:

Վերջերս կատարած որոշ հետազոտություններ կարող են օգնել մեզ հասկանալ այս զավեշտական անցումները: Ըստ համազգային հարցումներից մեկի՝ «վերստին ծնված քրիստոնյաների» 46 տոկոսը հավատում է բացարձակ բարոյական ճշմարտությանը: «Ավետարանական քրիստոնյաների» ավելի քան 50 տոկոսը հավատում է, որ բացի Հիսուս Քրիստոսից, երկինք գնալու այլ ճանապարհներ կան: «Վերստին ծնված քրիստոնյաների» միայն 40 տոկոսն է հավատում, որ սատանան իրական ուժ է [1]:

Ինչպե՞ս սա կարող է պատահել: Պատասխանը Տիմոթեոսին ուղղված Պողոսի խոսքերում է. «Նրանք չեն *հանդուրժի* առողջ վարդապետությանը»: Այսպիսով՝ մենք անկոտրում կերպով չենք մնում ճշմարտության մեջ:

Մենք ավելի ու ավելի շատ ենք լսում և քարոզում այնպիսի Ավետարան, որը չի փոխում մարդկանց կյանքերը: Դրա կենտրոնական ուղերձը չի համապատասխանում Աստծո Խոսքի վարդապետությանը. այն հետևյալն է. «Հիսուսը մահացավ մեր մեղքերի համար, որպեսզի Երկինք տանի մեզ, սակայն մենք մարդ ենք, և Աստված հասկանում է, որ մեր կյանքում չար բաներ կան, և մենք տարբեր սեռական նախասիրություններ ունենք»: Վերջերս ամենահայտնի դարձած ուսմունքներից մեկը պնդում է, որ կարիք չկա ապաշխարել մեղքերից: Հավատացյալներին ցնծությամբ հայտնում են, որ այլևս կարիք չկա տրտմել անհնազանդության պատճառով կամ խոստովանել այն Աստծուն, որովհետև մեղքն արդեն ծածկված է շնորհքով: Ես լսել եմ, թե ինչպես այն մարդիկ, ովքեր ընդունում են այս ուսմունքը, պարծենում են՝ ասելով, որ այն շատ պարզ, թարմ և ազատագրող ուղերձ է: Սակայն եթե այն ամենը, ինչը որ պարզ, թարմ և ազատագրող է, ճշմարտության ցուցանիշ լիներ, ապա ցանկացած ուսմունք, որ հաճեցնում է մարմնին, ճշմարտություն կլիներ: Եթե այն ուսմունքը, որ՝ քրիստոնյաներն այլևս ապաշխարելու կարիք չունեն ճիշտ է, ապա այդ դեպքում՝ Հիսուս Քրիստոսը շեղվել էր հավատքի հիմքերից, երբ Հայտնության գրքում՝ յոթ եկեղեցիներից հինգին պատվիրեց ապաշխարել (տե՛ս Հայտն. 2.5,16,21,22,3.3,19):

Ճշմարտությունը չի փոխվում՝ զիջելով նրանց, ովքեր ցանկանում են մեղք գործել: Ճշմարտությունը չի հարմարվում մարդկային ցանկութ-

յուններին, հարմարավետությանը կամ այսպես կոչված՝ «քաղաքակա-նորեն ճշգրիտ» դիրքորոշմանը: Ընդհակառակը՝ Աստծո Որդին հռչա-կում է. «…նեղ է ճանապարհը, որ տանում է կյանք…» (Մատթ. 7.14):

Մենք մեզ համար դիզել ենք ուսուցիչներ, ովքեր հեռացել են ողջա-միտ վարդապետությունից: Այս նենգավոր մարդիկ մշակել են այնպիսի Ավետարան, որը հարմարվում է մեր մշակույթի բարոյալքմանը: Ճշմար-տությունն այլևս չի ձևավորում հավատացյալի կյանքը. փոխարենը՝ ճշմարտությունն է վերաձևավորվում և մեկնաբանվում մշակութային միտումների միջոցով: Ինչո՞ւ: Որովհետև մեր ականջները ձգտում են լսել խոսքեր, որոնք թույլ կտան մեզ անկողին մտնել այս աշխարհի հետ, այլ ոչ թե ինչպես գրված է. «…նրանց միջից դուրս գնացե՛ք և բա-ժանվե՛ք…» (Բ Կորնթ. 6.17):

Շատ հավատացյալներ իսկապես զգում են, որ Սուրբ Հոգին փորձում է ետ պահել իրենց, երբ նոր են սկսում սիրախաղ անել փոխզիջման հետ: Սակայն մեծամասնությունը, որը մեծ զբոսանավերի մեջ է և ընթա-նում է հոսանքի ուղղությամբ, ի վերջո հանգցնում է Հոգու ձայնը, փա-կում նրանց ականջները և նրանք, այլևս չեն կարողանում լսել ճշմար-տությունը:

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ՍԵՐՈՒՆԴ

Եվ ինչո՞ւ սա պետք է զարմացնի մեզ: Աստծո Խոսքն ասում է, որ վեր-ջին օրերում մեծ նահանջ է լինելու (տե՛ս Բ Թեսաղ. 2.3):

Սակայն Աստծո Խոսքը պատմում է նաև չեմպիոնների սերնդի մա-սին, որը պետք է բարձրանա նույն ժամանակաշրջանում: Այս զորավոր-ների թվում թե՛ տղամարդիկ կան, թե՛ կանայք, թե՛ երիտասարդներ, և թե՛ ծերեր (տե՛ս Գործք 2.17,18): Մարգարեները և առաքյալներն ասում էին, որ այս հերոսներն անկոտրում են ճշմարտության մեջ: Խավարի դժվա-րությունները և խաբեությունը կդառնան այն հարթակը, որտեղ նրանք հաղթանակներ կունենան: Նրանք ետ չեն նահանջի, այլ իրենց հաստա-տուն համոզմունքների և գործերի շնորհիվ մեծապես կընդարձակեն Աստծո արքայության սահմանները: Նրանք վառ լույսերի պես աչքի կընկնեն համատարած խավարի մեջ: Նրանք կյանքի բոլոր բնագավառ-ներում գերազանց կլինեն, ոչ թե փոխզիջման, այլ՝ Աստծո իմաստության

շնորհիվ, որը տրվում է միայն աստվածային երկյուղի և զորացնող շնորհքի միջոցով. այդպես վարվեց Դանիելը:

Թանկագի՛ն ընթերցող, հուսով եմ, որ դու կլինես այս չեմպիոններից մեկը: Ես աղոթում եմ, որ դու բարձրանաս այս կյանքում՝ ճշմարտությամբ գոտեպնդված և արդարության զրահը հագած: Հուսով եմ, որ դու կպահես հավատքի վահանը և անկոտրում կերպով կանցնես այն ընթացքը, որ դրված է քո առջև՝ վստահորեն պայքարելով հակառակության դեմ մինչև վերջ: Դու հաղթո՛ղ ես. քո մեջ Նրա սերմն է, Ով դիմակայել է այն մեծագույն թշնամանքին, որը եղել է այս երկրի վրա: Նրա զորությունը քո մե՛ջ է: Նրա էությունը քո՛նն է: Դու ստեղծված չես հանձնվելու, նահանջելու, թուլանալու կամ փոխզիջման գնալու համար: Դու օրհնվա՛ծ ես Աստծո զարմանալի շնորհքով:

Կարևոր չէ, թե որքան մեծ հակառակություն կա քո առջև. թող այդ հակառակությունը դառնա այն աստիճանը, որը կբարձրացնի քեզ իշխանության հաջորդ մակարդակի վրա: Ամեն դժվարությունից մի բան սովորի՛ր, ինչպես որ Պողոսը սովորեց.

> «Ամեն ինչ այնքան վատ էր, որ մենք չէինք մտածում, թե կենդանի դուրս կգայինք այդ իրավիճակից: Մենք այնպես էինք զգում, ասես մահվան հերթի կանգնած լինեինք. ամեն ինչ կուտակվել էր մեզ վրա: Սակայն, ինչպես պարզվեց, դա լավագույն բանն էր, որ կարող էր պատահել մեզ հետ: Այդ իրավիճակից դուրս գալու համար մեր սեփական ուժին կամ խելամտությանը վստահելու փոխարեն, մենք ստիպված էինք ամբողջովին վստահել Աստծուն. մեր իրավիճակի համար վատ միտք չէր, քանի որ Նա այն Աստվածն է, Ով հարություն է տալիս մեռելներին: Եվ Նա արեց դա՝ Նա փրկեց մեզ վերահաս կործանումից: Եվ Նա կանի դա կրկին՝ փրկելով մեզ այնքան շատ՝ այնքան, որքան մենք փրկության կարիք կունենանք» (Բ Կորնթացիների 1.8-10, MSG):

Պողոսն այնպիսի խիստ նեղության մեջ էր, որ թվում էր՝ թե՛ նա, թե՛ իր թիմի անդամները չէին կարողանալու կենդանի մնալ: Սակայն նա ասում է. «Դա լավագույն բանն էր, որ կարող էր պատահել մեզ հետ»: Անցնելով հակառակության միջով՝ Պողոսը հայտնվեց իշխանության և զորության ավելի բարձր մակարդակի վրա: Աստծո շնորհքը (զորությունը) միշտ բա-

---

1. www.barna.org/transformation-articles/252-barna-survey-examines-changes-in-worldview-among-christians-over-the-past-13-years:

վական է: Աստված նորից ու նորից դուրս կհանի քեզ ամեն իրավիճակից:

Մենք պետք է ընդամենը դիմանանք և չթողնենք մեր հավատքը, քանի որ մյուս կողմում մեզ սպասվում է մեծ հաղթանակ և բավականություն: Ինչպես գրում է Հակոբոսը. «Աստված կօրհնի ձեզ, *եթե դուք չհանձնվեք*, երբ ձեր հավատքը փորձվում է: Նա կվարձատրի ձեզ փառավոր կյանքով» (Հակոբ. 1.12, CEV):

Քեզանում կան Աստծո էությունը, լիությունը, հատկանիշները և զորացնող շնորհքը: Դու մեկ ես Նրա հետ. դու Քրիստոսի մարմինն ես: Գլուխը (Հիսուսը) ոչ մի անգամ չձախողվեց, ուրեմն մարմինը պետք է վարվի նույն կերպով: «Ամեն կողմից փորձանքները ճնշում էին մեզ,- գրում է Պողոսը,- բայց մենք փշրված և կոտրված չենք: Մենք շփոթված ենք, *բայց չենք հանձնվում և չենք դադարում առաջ գնալ*» (Բ Կորնթ. 4.8, NLT):

«Մենք Քրիստոսի մարմինն ենք»: «Մենք չե՛նք հանձնվում»: «Մենք չե՛նք դադարում առաջ գնալ»: Պողոսը կրկնում է այս խոսքերը նորից ու նորից. «Մենք երբեք չե՛նք հանձնվում» (Բ Կորնթ. 4.1, CEV), և կրկին. «Այնպես որ մենք չե՛նք հանձնվում: Ինչպե՞ս մենք կարող ենք դա անել» (Բ Կորնթ. 4.16, MSG): Դու ստեղծված ես զարմանալի կերպով հաջողության հասնելու համար:

Երբեք չմտածես, որ Աստված որևէ իրավիճակում հանձնվել է և թողել է քեզ:

Երբեք չմտածես, որ Աստված որևէ իրավիճակում հանձնվել է և թողել է քեզ: Նա երբեք այդպես չի վարվի: Լսի՛ր Նրա անխախտ խոստմունքը. «Աստված, Ով դրել է ձեր սկիզբն այս հոգևոր նախաձեռնության մեջ, տալիս է մեզ Իր Որդու և մեր Տիրոջ՝ Հիսուսի կյանքը: *Նա երբեք ոչ մի իրավիճակում չի՛ հանձնվի և չի՛ թողնի ձեզ: Երբե՛ք չմոռանաք այդ մասին*» (Ա Կորնթ. 1.9, MSG):

Մի՞թե սա ուշագրավ խոստմունք չէ: Աստված երբե՛ք ոչ մի իրավիճակում չի՛ հանձնվի և չի՛ թողնի քեզ: Նա անկոտրում կերպով քեզ հետ է: Եվ եթե Նա չի՛ հանձնվի և չի՛ թողնի քեզ, ապա ինչպե՞ս դու կարող ես հանձնվել կամ թողնել Նրան: Մնա՛ անկոտրում:

Ո՞րն է Աստծուն չթողնելու վարձքը: Ահա Տիրոջ բերանից դուրս եկած խոսքը.

«Ահա այն վարձատրությունը, որ ես ունեմ ամեն հաղթողի համար՝ յուրաքանչյուրի, ով շարունակում է առաջ գնալ և հրաժարվում է հանձնվել. *Դուք կիշխեք ազգերի վրա*» (Հայտնություն 2.26, MSG):

Ինչպիսի՜ վարձատրություն: Պողոսը հաստատում է Հիսուսի խոսքերը. «Եթե մենք չհանձնվենք, մենք կիշխենք Նրա հետ» (Բ Տիմոթ. 2.12, CEV): Եվ հիշի՛ր. դա չի վերաբերում միայն գալիք աշխարհին, այլ նաև այս աշխարհին, այս ժամանակվան: «Բոլորը, ովքեր ընդունում են Աստծո առատ շնորհքը և ձրիաբար արդարանում Նրա առջև, *կիշխեն կյանքում* Քրիստոսի միջոցով» (Հռոմ. 5,17, TEV):

Այնպես որ, թանկագի՛ն եղբայր կամ քույր՝ Քրիստոսում, դու իսկապես որ ունես անկոտրում լինելու զորությունը: Դու ունես այն ամենը, ինչ պահանջվում է քո ընթացքը բարեհաջող կերպով ավարտելու համար. դա Աստծո շնորհքն է, որը չի կարող ձախողվել: Այնպես որ վստահորեն գնա՛ դեպի քո մրցանակը: Միգուցե դու պետք է ինչ-որ աստվածային առաջադրանք կատարես, ինչ-որ կազմակերպության մեջ կարևոր դիրք զբաղեցնես կամ Աստծո արքայության մեջ բազմաթիվ փոխհարաբերություններ կարգավորես. քո առաջադրանքը կարող է լինել կարճաժամկետ, երկարաժամկետ կամ կարող է պահանջել քո ողջ կյանքը. ինչ էլ որ լինի, քեզ վիճակված է հաղթել և թագավորել: Դու արտոնված ես, որպեսզի ապրես կայացած և առատ կյանքով, որը կարող ես ստանալ, եթե դիմանաս մինչև վերջ: Իշխանությունը սպասում է քեզ: Դու ակնառու կդառնաս քո Թագավորի փառքի համար: Սա շատ քաղցր պարգև է: Այնպես որ միշտ հիշի՛ր.

Մնա՛ Աստծո հետ:
Եղի՛ր համարձակ: Մի՛ հանձնվիր:
Ես կրկին կասեմ սա.
Մնա՛ Աստծո հետ (Սաղմոս 27.14, MSG):

Հավելված Ա

ԱՂՈԹՔ ԱՍՏԾՈ ԶԱՎԱԿ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպե՞ս ենք մենք դառնում Աստծո զավակ: Նախ և առաջ՝ ոչ թե սեփական գործերի, այլ՝ Հիսուս Քրիստոսի կատարած գործի շնորհիվ: Նա, կատարելապես անմեղ լինելով, տվեց Իր արքայական կյանքը, որպեսզի վերադարձնի քեզ քո Արարչին՝ Հայր Աստծուն: Նրա մահը խաչի վրա միակ գինն էր, որով կարող էր հավիտենական կյանք պարգևել քեզ:

Անկախ քո հասարակական դիրքից, ազգությունից, անցյալից, կրոնից կամ ցանկացած այլ բանից, ինչը բարենպաստ կամ անբարենպաստ է մարդկանց համար՝ դու Աստծո զավակ դառնալու իրավունք ունես: Նա շատ է ցանկանում, որպեսզի դու դառնաս Իր ընտանիքի անդամը: Դա կատարվում է, երբ դու պարզապես հրաժարվում ես ապրել Նրանից անկախ, որը մեղք է, և հանձնում ես քո կյանքը Հիսուս Քրիստոսի իշխանությանը: Երբ դու կայացնես այս որոշումը, դու բառացիորեն կվերածնվես: Դու այլևս խավարի ստրուկ չես լինի, այլ՝ կդառնաս վերստին ծնված Աստծո որդի կամ դուստր: Սուրբ գրքում գրված է.

> «Որովհետև, եթե դուք խոստովանեք ձեր բերանով, որ Հիսուսը Տեր է և հավատաք ձեր սրտով, որ Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, դուք կփրկվեք: Որովհետև ձեր սրտում հավատալով է, որ դուք արդարանում եք Աստծո առջև, և ձեր բերանով դավանելով է, որ դուք փրկվում եք (Հռոմեացիների 10.9,10, NLT):

Այնպես որ, եթե դու հավատում ես, որ Հիսուս Քրիստոսը մահացել է քեզ համար և ցանկանում ես քո կյանքը տալ Նրան, ինչը նշանակում է, որ դու այլևս չես ապրի ինքդ քեզ համար, ապա աղոթի՛ր այս աղոթքն անկեղծ սրտով, և դու կդառնաս Աստծո զավակ:

> *Աստվա՛ծ, որ Երկնքում ես, ես խոստովանում եմ, որ մեղավոր եմ և ընկել եմ քո արդար դիրքից: Ես իմ մեղքի համար արժանի եմ հավիտենական դա-*

տաստանի: Շնորհակալությո՛ւն, որ չթողեցիր ինձ այս վիճակում, որովհետև ես հավատում եմ, որ Դու ուղարկեցիր Հիսուս Քրիստոսին՝ Քո միածին Որդուն, Ով ծնվեց կույս Մարիամից, որպեսզի մահանար ինձ համար և կրեր իմ դատաստանը խաչի վրա: Ես հավատում եմ, որ Նա հարություն առավ երրորդ օրը և այժմ նստած է Քո աջ կողմում՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Այնպես որ այսօր՝ 20_____ թ.-ի _____ -ին, ես իմ կյանքը լիովին հանձնում եմ Հիսուսի իշխանությանը:

Հիսո՛ւս, ես դավանում եմ Քեզ որպես իմ Տեր, Փրկիչ և Արքա: Ե՛կ իմ կյանքի մեջ Քո Հոգու միջոցով և փոխի՛ր ինձ՝ դարձնելով Աստծո զավակ: Ես հրաժարվում եմ այն ամենից, ինչը կապ ունի խավարի հետ և ինչի հետ ես մի ժամանակ կապված եմ եղել, և այսօրվանից սկսած ես այլևս չեմ ապրելու ինձ համար, այլ՝ Քեզ համար, որովհետև Դու տվեցիր Քո կյանքն ինձ համար, որպեսզի ես կարողանամ հավիտյան ապրել:

Շնորհակալությո՛ւն, Տե՛ր. այժմ իմ կյանքը լիովին քո ձեռքերի մեջ է և, ըստ Քո Խոսքի՝ ես երբեք չե՛մ ամաչելու:

Այժմ դու փրկված ես. դու Աստծո զավակ ես: Ամբողջ Երկինքն այս պահին ցնծում է քեզ հետ: Բարի գալո՛ւստ Աստծո ընտանիք: Ես ցանկանում եմ առաջարկել քեզ երեք օգտակար քայլ, որոնք պետք է անմիջապես ձեռնարկել:

1. Այն, ինչ դու հենց նոր արեցիր, պատմի՛ր ինչ-որ մեկին, ով արդեն հավատացյալ է: Սուրբ գիրքն ասում է մեզ, որ խավարը հաղթելու միջոցներից մեկը մեր վկայությունը պատմելն է (Հայտն. 12.11): Ես առաջարկում եմ քեզ կապ հաստատել մեր ծառայության՝ «Մեսինջեր Ինտերնեյշնլ»-ի հետ www.messengerinternational.org կայքէջում: Մեզ համար անչափ հաճելի կլինի լսել քո վկայությունը:
2. Միացի՛ր լավ եկեղեցու, որտեղ սովորեցնում են Աստծո Խոսքը: Դարձի՛ր եկեղեցու անդամ և մասնակցի՛ր նրա գործունեությանը: Ծնողներն իրենց նոր ծնված երեխաներին չեն գցում փողոց և ասում. «Գոյատևի՛ր»: Հիմա դու նորածին ես Քրիստոսում. Աստված՝ քո Հայրը, ընտանիք է տվել քեզ, որպեսզի օգնի քեզ՝ մեծանալ: Այդ ընտանիքը կոչվում է Նոր կտակարանի նմուշով կառուցված տեղական եկեղեցի:
3. Մկրտվի՛ր ջրով: Թեև դու արդեն Աստծո զավակ ես, մկրտությունը հրապարակային դավանություն է և՛ հոգևոր աշխարհում, և՛ այս աշխարհում, որ դու քո կյանքը, Հիսուս Քրիստոսի միջոցով, տվել ես Աստծուն: Դա նույնպես հնազանդության քայլ է, քանի որ Հիսուսն ասում է, որ մենք պետք է մկրտենք նորահավատներին «Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28.19):

Ես ցանկանում եմ քեզ լավագույնը քո նոր կյանքում, որը Քրիստոսի մեջ է: Մեր ծառայությունը մշտապես կաղոթի քեզ համար: Իսկ հիմա սկսի՛ր ապրել և հետևել ճշմարտությանը անկոտրում կերպով:

Հավելված Բ

ԻՆՉՈ՞Ւ ԵՄ ԵՍ ՕԳՏՎՈՒՄ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԲԱԶՄԱԹԻՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Երբեմն ինձ հարցնում են, թե ինչո՞ւ եմ ես այդքան շատ օգտագործում Աստվածաշնչի թարգմանություններ, և երկրորդը՝ ինչո՞ւ եմ ես Սուրբ գրքի խոսքերից օգտագործում միայն որոշ հատվածներ: Թո՛ւյլ տուր պատասխանել այս հարցերին:

1. Աստվածաշնչյան բնագրերում կան ավելի քան 11 000 եբրայերեն, արամերեն և հունարեն բառեր: Սակայն միջին անգլերեն թարգմանությունն օգտագործում է մոտավորապես 6000 բառ: Միայն այս տվյալը հաշվի առնելով՝ ես կարող եմ եզրակացնել, որ թարգմանությունների մեջ կարող են բազմաթիվ իմաստային երանգներ անտեսվել կամ կորսվել: Մի քանի անգլերեն աղբյուրներից օգտվելը օգնում է վերականգնել այն իմաստային բազմազանությունը, որ փոխանցում է մեզ Աստծո Խոսքը:
2. Միայն մեկ թարգմանություն օգտագործելու դեպքում ընթերցողը, ճանաչելով տվյալ հատվածը, պարզապես կարող է չկարդալ՝ այն ծանոթ համարելով: Տարբեր թարգմանություններ օգտագործելը կրճատում է այս հավանականությունը և ընթերցողին կենտրոնացած պահում Սուրբ գրքի վրա:
3. Գիրքը գրելիս ես Աստվածաշնչից ընտրված հատվածն ուշադիր կարդում եմ առնվազն հինգից ութ տարբեր թարգմանություններով և որոշում, թե դրանցից որն է լավագույն կերպով հաղորդում այն իմաստը, որի մասին խոսվում է գրքի տվյալ հատվածում: Օգտվելով Աստվածաշնչի իմաստային թարգմանություններից՝ ես նույնպես պարտադիր կերպով ստուգում եմ, թե արդյո՞ք իմ կողմից ընտրված հատվածը չի տարբերվում հեղինակավոր թարգմանությունից:
4. Ես ամբողջական խոսքերը մշտապես չեմ օգտագործում այն պատճառով, որ գլուխներն ու խոսքերն Աստվածաշնչին ավելացել են մ.թ. 1227թ.-ին: Աստվածաշունչը չի գրվել այդ բաժանումներով: Հիսուսն Ավետարաններում շատ անգամ մեջբերում էր Հին կտակարանի խոսքերի որոշ հատվածներ:

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

ԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՔԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԵՐԲԵՔ ՉՀԱՆՁՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այս գիրքը, որն այժմ քո ձեռքում է, Ջոն Բիվերի **«Անկոտրում հոգի» ուսումնական ծրագրի մի մասն է կազմում: Կարդալով գիրքը և օգտագործելով կից «DVD»-ում և ինտերնետային կայքերում առկա օժանդակող ուսումնական նյութերը, դուք ավելի խորը կուսումնասիրեք այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը:** Պատշաճ ուսումնասիրության արդյունքում կզորանա ձեր քրիստոնեական կյանքի ընթացքը՝ հնարավորություն տալով ձեզ ավելին անել Աստծո համար:

Ամբողջ ուսումնական ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- «Անկոտրում հոգի» գիրք
Այս դասընթացի միակ տպագրված մասը այն գիրքն է, որն այժմ քո ձեռքում է: Գրքի էլեկտրոնային տարբերակն առկա է նաև կից սկավառակում էլեկտրոնային գրքի և «PDF» ձևաչափով:

- «Անկոտրում հոգի» սկավառակ
Կից սկավառակը պարունակում է ծրագրային նյութերի մեծ մասը՝ թվային ձևաչափով:

- «Անկոտրում հոգի» աշխատանքային գիրք և ուղեցույց
Սկավառակում էլեկտրոնային գրքի և «PDF» ձևաչափով տարբերակն է:

- «Անկոտրում հոգի» աուդիոգիրք
«Անկոտրում հոգի» գրքի բոլոր տասնութ գլուխներն ընթերցվում են հայերենով՝ «MP3» ձևաչափով:

- «Անկոտրում հոգի» վիդեոուսուցողական դասընթացներ
«Անկոտրում հոգի» վիդեոուսուցողական դասընթացների օրինակներն այս սկավառակում են: Բոլոր 12 վիդեոդասընթացները կարող եք անվճար ներբեռնել ինտերնետային կայքում:

- «Անկոտրում հոգի» աուդիոուսուցողական դասընթացներ
Բոլոր 12 աուդիոուսուցողական դասընթացները՝ «MP3» ձևաչափով:

- «Երբ արթնանում են կին առյուծները» գիրքը
Սկավառակում էլեկտրոնային գրքի և «PDF» ձևաչափով տարբերակն է:

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀՈԳԻ

ԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՔԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԵՐԲԵՔ ՉՀԱՆՁՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Լրացուցիչ տեղեկատվություն «Անկոտրում հոգի» ուսումնական ծրագրի վերաբերյալ.

«MP3» աուդիոֆայլերը - կարող եք ներբեռնել ձեր աուդիո ձայնարկիչի, սմարթֆոն հեռախոսի կամ համակարգչի մեջ:

«PDF» ֆայլերը - կարող եք ներբեռնել ձեր համակարգչի մեջ: Դրանք կարող եք հեշտությամբ կարդալ, տպագրել կամ կրկնօրինակել: Դուք կարող եք նույնիսկ տեքստից հատվածներ վերցնել և տեղադրել այլ տեղերում (copy and paste):

էլեկտրոնային գիրք - տպագրված գրքի թվային ձևաչափն է: Այն կարող եք ներբեռնել ձեր «iPad»-ի, համակարգչի կամ սմարթֆոնի մեջ:

«DVD» սկավառակ - եթե ինչ-որ պատճառով չեք կարողանում «DVD»-ն օգտագործել ձեր տեսանվագարկչի վրա, ապա փորձեք բեռնել այն ձեր համակարգչի մեջ և բացել առանձին ֆայլերով: Եթե դարձյալ խնդիրներ ունենաք, ցույց տվեք այն որևէ մեկին, ով հասկանում է համակարգչից, և թող նրանք օգնեն ձեզ բացել այդ ֆայլերը, և օգտագործեք դրանք ձեր ուսումնառության ժամանակ:

Այս բոլոր ուսումնական նյութերը նվեր են ձեզ - կարող եք այս սկավառակները, նյութերը բազմացնել և էլեկտրոնային նամակով ուղարկել ձեր ընկերներին: Տեքստը արտատպել և տեղադրել «Word» ֆայլում, ուսումնական նյութերն ուղարկել ձեր եկեղեցի, բեռնել դրանք ինտերնետում՝ ուրիշների օգտագործման համար: Այս նյութերը տարածեք ցանկացած տեղ, որտեղ կա քաղց Աստծո Խոսքի առողջ ուսմունքի և քրիստոնեական կյանքի հզորացման համար:

www. MessengerInternational.org
www.CloudLibrary.org

Ժամանակն է, որ ապրես *արտասովոր* կյանքով



Հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերն այս գրքում բացահայտում է, որ մեզնից յուրաքանչյուրը «նախասահմանված է ավելիի համար», ստեղծված է արտասովոր կերպով եւ կանչված է ոչ սովորական կյանքի համար: Այստեղ դու կգտնես քո կերպարանափոխման ճանապարհորդության քարտեզը: Դու կարող ես ապրել մի կյանք, որը գերազանցում է հաջողության և բավարարվածության մասին սովորական ընկալումները:

Մի՞թե ժամանակը չէ, որ ապրես արտասովոր կյանքով:

Այս գիրքը կարող եք ներբեռնել
www.CloudLibary.org կայքէջից:

Բավարարի՛ր սովորական ընթացքից վեր կանգնելու քո ներքին փափագը:

Մի՞թե ճիշտ չէ, որ ձգտում ենք արտասովոր բաներ տեսնել, վերապրել և անել: Մինչդեռ շատ հաճախ խորասուզվում ենք առօրյա կյանքի մեջ՝ մոռանալով այն արտասովոր կյանքի մասին, որ կա մեր հասկացողության մեջ:

Ինչո՞ւ են մեզ գրավում անհնարին թվացող իրավիճակների նկատմամբ հերոսական հաղթանակների մասին պատմությունները: Մի՞թե արկածային ֆիլմերի, հերոսների և անհավատալի մարդկային սխրանքների մասին պատմությունների միջոցով մեր երևակայության մեջ չենք բացահայտում ավելի մեծ և տարբերվող կյանք ունենալու ցանկությունը: Միգուցե այն, ինչ մտածում ենք, հենց Աստծուց ներշնչված ձգտումն է դեպի արտասովոր կյանքը:

Հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը բացահայտում է, որ մեզնից յուրաքանչյուրը «նախասահմանված է ավելիի համար», ստեղծված է արտասովոր կերպով և կանչված է ոչ սովորական կյանքի համար: Այստեղ դու կգտնես քո կերպարանափոխման ճանապարհորդության քարտեզը: Դու կարող ես ապրել մի կյանք, որը գերազանցում է հաջողության և բավարարվածության մասին սովորական ընկալումները:

Մի՞թե ժամանակը չէ, որ ապրես արտասովոր կյանքով:

«Ջոն Բիվերը հիասքանչ գործ է կատարել, որպեսզի ցույց տա, թե ինչի համար է Աստված ստեղծել մեզ, և ինչպես է դա արտահայտվում մեր կյանքի տարբեր բնագավառներում»:

— ԿՈՒՐՏ ՈՒՈՐՆԵՐ, ԱՄՆ Ֆուտբոլի ազգային առաջնության հենակետային խաղարկող, ով երկու անգամ ճանաչվել է առաջնության լավագույն ֆուտբոլիստ